



Հարգելի՛ ընթերցող.

ԵՊՀ հրատարակչությունը, չհետապնդելով որևէ եկամուտ, ԵՊՀ հայագիտական հետազոտությունների ինստիտուտի համացանցային կայքերում ներկայացնում է իր հայագիտական հրատարակությունները: Գիրքը այլ համացանցային կայքերում տեղադրելու համար պետք է ստանալ հրատարակչության համապատասխան թույլտվությունը և նշել անհրաժեշտ տվյալները:



ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ

ՅՎ. Բ. ԱԳԱՅՆ

ИСТОРИЯ
АРМЯНСКОГО
ЯЗЫКОЗНАНИЯ

(С НАЧАЛА ДО НАШИХ ДНЕЙ)

ТОМ 2

ИЗДАТЕЛЬСТВО ЕРЕВАНСКОГО УНИВЕРСИТЕТА
ЕРЕВАН — 1962

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Էդ. Բ. ԱՂԱՅԱՆ

Հ Ա Յ
ԼԵԶՎԱԲԱՆՈՒԹՅԱՆ
ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

(ՍԿՋՐԻՑ ՄԻՆՁԵՎ ՄԵՐ ՕՐԵՐԸ)

Հ ա ճ ա ռ Թ

ԵՐԵՎԱՆԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՀՐԱՏԱՐԱԿԳՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ — 1962

ԵՐԿՈՒ ԽՈՍՔ

Ինչպես արդեն առաջին հատորում ասված է, սույն աշխատությունը գրվել է տասնհինգ տարի առաջ և այդ ժամանակ բաղկացած է եղել երկու հատորից: Առաջին հատորը, որ ընդգրկում է հայոց լեզվի ուսումնասիրության պատմությունը մինչև սովետական կարգերի հաստատումը, հրատարակված է գրեթե այնպես, ինչպես եղել է 1945 թվականին՝ թեթև շտկումներով ու հավելումներով միայն: Երկրորդ հատորի հետ, սակայն, այդպես վարվել չէինք կարող: Անկարելի էր ներկայացնել սովետական շրջանի հայ լեզվաբանության պատմությունը, բաց թողնելով վերջին 15 տարիները: Այս պատճառով էլ, ահա, այս հատորը հիմնովին վերամշակվել է և վերակառուցվել: Մոտավորապես նույնը կարելի է ասել նաև արտասահմանյան հայերենագիտության մասին. տասնհինգ տարի առաջ հայագիտության մեջ հայտնի լեզվաբանների ուսումնասիրություններն ընդգրկված են առաջին հատորում: Այն ժամանակ կային մի քանի օտարերկրացի հայագետներ, որոնք դեռ նոր էին սկսել զբաղվել հայերենով և, բնականաբար, չէին կարող մեր աշխատության մեջ տեղ գտնել: Այս տասնհինգ տարիների ընթացքում դրանք աճել են և կարևոր հետազոտություններով աչքի են ընկել հայագիտության մեջ. ասպարեզ են իջել նաև նոր լեզվաբաններ, որոնց հետազոտություններն անուշադրության մատնել չի կարելի: Այս վիճակն, ահա, թելադրեց մեզ փոխել մեր աշխատության կառուցվածքը և մի առանձին հատոր էլ (3-րդ հատոր) նվիրել ժամանակակից արտասահմանյան հայերենագիտությանը: Այսպիսով, այս երկրորդ հատորն ընդգրկում է միայն Սովետական Միության մեջ հայերենագիտության զարգացման պատմությունը:

Վերջին տասնհինգ տարիների ընթացքում հայ լեզվաբանության մեջ տեղի ունեցած իրադարձություններին մենք անձամբ գործոն մասնակցություն ենք ունեցել: Սա բնականաբար մեզ պարտավորեցնում է գնահատել պատմական իրողությունները պատմաբանի աչքերով՝ օբյեկտիվ մոտեցմամբ: Մասնագետների ուշադրությանն առաջարկելով սույն հատորը, առաջնորդվել ենք այդ սկզբունքով և յեն ո մեղանչել մեր գիտական համոզմունքների ու խղճի դեմ:

ԵՐՐՈՐԴ ՄԱՍ

ՀԱՅ ԼԵԶՎԱԲԱՆՈՒԹՅԱՆ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ
ԵՐՐՈՐԴ ՇՐՋԱՆ

1. ԼԵԶՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՍՈՎԵՏԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆՈՒՄ

(Համառոտ տեսություն)

Դժվարին, բարդ ու փառահեղ ճանապարհ է անցել սովետական լեզվաբանությունը քառասունհինգ տարվա պատմական համեմատաբար կարճ ժամանակաշրջանում: Պատմական նոր իրադրությունների մեջ, նոր խնդիրների գործնական ու տեսական լուծման պրոցեսում զարգացել է սովետական լեզվաբանությունը պայքարի ու որոնումների ուղիով ու նվաճել ժամանակակից գիտության բարձունքները: Նրա անցած ուղին իր խորդուբորդություններով ու դժվարություններով պայմանավորված էր մեր երկրում նոր՝ սոցիալիստական հասարակարգի ստեղծումով ու նրա զարգացման յուրահատկություններով: Մեր հասարակարգը իր զարգացման տարբեր էտապներում նորանոր հրատապ խնդիրներ էր դնում գիտության բոլոր ճյուղերի, այդ թվում՝ լեզվաբանության առջև: Սովետական լեզվաբանությունը լծվել է այդ նոր խնդիրների լուծմանը և պատվով է կատարել իր դերը. բայց այդ նոր խնդիրներն իրենց հերթին բնականաբար առաջադրում էին նաև բազմաթիվ տեսական հարցեր, որոնց լուծումը միայն հնարավորություն կտար ապահովել գործնական առաջադրանքների ճիշտ կատարումը: Այդ խնդիրների կատարման ճանապարհին սովետական լեզվաբանությունը որոնումների մեջ երբեմն խարխափել, երբեմն նույնիսկ սխալ ուղի է բռնել, բայց և այնպես կարողացել է հաղթահարել առաջընթացի ժամանակավոր դժվարություններն ու սխալները և կանգնել ճիշտ դիրքերում: Քառասունհինգ տարիների ընթացքում անցած ուղու յուրահատկություններն, այսպիսով, պայմանավորված են եղել նոր հասարակարգի ստեղծման ու նրա զարգացման յուրահատուկ բնույթով, այլ կերպ ասած՝ պատմահասարակական այն պայմաններով, որոնց մեջ գործել ու զարգացել է սովետական լեզվաբանությունը: Նշանակում է, մեր երկրում լեզվաբանության

վերջին քառասունհինգ տարիների զարգացման առաջին հիմնական պատմա-հասարակական գործոնն է եղել հենց նոր հասարակարգի, սոցիալիստական հասարակարգի ստեղծումը:

Սոցիալիստական հասարակարգը մեր երկրում, Սովետական Միությունում, բնորոշվում է մեկ միասնական պետության կազմում բազմաթիվ ազգերի ու ժողովուրդների միավորումով: Այս միավորումը սոցիալիստական հասարակարգի պայմաններում նոր հարաբերություններ էր ստեղծում բազմաթիվ ազգերի ու ժողովուրդների միջև, նոր ուղիներ բացում այդ ազգերի ու ժողովուրդների թե՛ տնտեսական-քաղաքական և թե՛ կուլտուրական զարգացման համար: Սովետական Միության մեջ իրականացվող լենինյան ազգային քաղաքականությունը աննախընթաց պայմաններ էր ստեղծում ազգային լեզուների զարգացման, մշակման ու կատարելագործման համար, իսկ սա էլ իր հերթին յուրահատուկ խնդիրներ էր առաջադրում լեզվաբանական գիտությանը, նպաստում նրա զարգացմանը և, միաժամանակ, պայմանավորում այդ զարգացման առանձնահատկությունները: Սովետական լեզվաբանության զարգացման երկրորդ պատմա-հասարակական հզոր գործոնն, այսպիսով, մեկ պետության կազմում բազմաթիվ ազգերի ու ժողովուրդների միավորումն էր, նրանց միջև եղած հարաբերությունների քիմիայի արմատական վերափոխումով և նրանց ազգային կուլտուրաների ու լեզուների աննախընթաց զարգացումով, կամ ինչպես սովորում է, կուլտուրական հեղափոխությամբ հանդերձ:

Մեր երկրի բազմաթիվ ժողովուրդները բնորոշվում էին ոչ միայն տնտեսական-քաղաքական զարգացման տարբեր մակարդակներով, այլև կուլտուրական զարգացման աստիճանի խիստ տարբերություններով: Նույն վիճակն էր ներկայացնում նաև լեզվաբանական գիտությունը: Մի քանի ժողովուրդների մոտ լեզվաբանական գիտությունը կանգնած էր իր ժամանակի եվրոպական լեզվաբանական գիտության մակարդակի վրա, ըստ որում այդ ժողովուրդների մոտ լեզվաբանության որոշ ճյուղերը (բառարանագրություն, քերականագիտություն) զարգացման դարավոր պատմությունն ունեին և սովետական լեզվաբանությանը միացնում էին իրենց հնամենի տրադիցիաները, իսկ որոշ ժողովուրդների մոտ դեռ նոր պետք է սկսվեր իրենց լեզվի ուսումնասիրությունն ու հիմք դրվեր լեզվաբանական գիտության: Մյուս կողմից, թե՛ հին տրադիցիաներ ժառանգած մասնավոր լեզվաբանությունները (ռուս, հայ, վրաց, ուկրաինական, լիտվական, լատիշական, էստոնական և այլն)

և՛ թե նոր սաղմնավորվողները պետք էր մեկ միասնական ուղու վրա բերել ու աստիճանաբար մեկ մակարդակի հասցնել: Այս գործի իրականացման մեջ քնակառարար առաջնակարգ, գլխավորող ու կազմակերպող դերը պատկանում էր ռուս լեզվաբանությանը: Պատահական չէ, որեմն, որ մեր Միության տարբեր տեսպուբլիկաներում լեզվաբանությունը վերջին քառասունհինգ տարիների ընթացքում հիմնականում զարգացման նույն յուրահատկություններն է ունեցել, ինչ-որ ուսական սովետական լեզվաբանությունը, թեև դրա հետ միասին, առանձին դեպքերում դրսևորվել են նաև մասնավոր յուրահատկություններ ու տեղեկանքներ: Համենայն դեպս, անդրանալի է, որ սովետական ռուս լեզվաբանությունն իր անջընջելի ազդեցությունն է թողել մեր երկրի բազմաթիվ ժողովուրդների մասնավոր լեզվաբանությունների վրա և ուղղություն տվել նրանց: Այս տեսակետից էլ, ահա, սովետական լեզվաբանության, որպես մեկ միասնական գիտության, զարգացման պատմա-հասարակական գործոններից մեկը եղել է և է՝ ռուսական լեզվաբանության առաջատար ու ներգործող դերը, որ հանախ գուգորդվում էր մի քանի մասնավոր, զարգացման դարավոր հանապարհ անցած լեզվաբանությունների տրադիցիաների օգտագործման հետ: Դրանցից առանձնապես հիշատակելի են հայերի, վրացիների, ուկրաինացիների ու մերձբալթյան ժողովուրդների հնամենի լեզվաբանական տրադիցիաները, ինչպես և արաբական քերականական տրադիցիաները մի քանի լեզուների համար: Դրան միանում էր ռուսաց լեզվի դերի առավել բարձրացումը Հոկտեմբերյան Սոցիալիստական Մեծ ռևոլյուցիայից հետո՝ սովետական բոլոր ժողովուրդների մոտ ուսուսերենի պարտադիր ուսուցումով:

Այս գործոններով էին պայմանավորված սովետական լեզվաբանության զարգացումն ու դրա յուրահատկությունները:

Պատմական նոր իրադրությունների մեջ, նոր հասարակարգում լեզվաբանությունն իրրև հասարակական գիտություն հանդես էր գալիս ոչ միայն իբրև մի գործնական դիսցիպլին, որ կոչված էր ծառայելու կուլտուրական հեղափոխությանը մեր երկրում, այլև որպես գաղափարական մի հզոր զենք: Թե՛ գործնական խնդիրների լուծումը, թե՛ գաղափարական պայքարը սոցիալիզմին խորթ գաղափարախոսությունների դեմ և թե՛ հենց ինքը՝ նոր հասարակարգը պահանջում էին համեմատաբար կարճ ժամանակամիջոցում մշակել լեզվաբանական ուսումնասիրությունների մարքսիստական հիմունքները, ստեղծել մարքսիստական մի կառ լեզվաբանական տե-

սուբյուն: Մարքսիզմի կլասիկների՝ Մարքսի, Էնգելսի ու Լենինի աշխատություններում թեև բազմաթիվ ասույթներ կան լեզվի վերաբերյալ, որոնք ուղենիշ պետք է հանդիսանային սովետական լեզվաբանության տեսական սկզբունքները մշակելու համար, բայց այդ ասույթներն իրենք իրենց մի ամբողջական լեզվաբանական ուսմունք չէին կազմում: Անհրաժեշտ էր այդ ասույթների վրա հենվելով և դիալեկտիկական ու պատմական մատերիալիզմը լեզվաբանության մեջ ներդնելով ստեղծել լեզվի մարքսիստական ուսմունքը: Այս մեծ ու դժվարին գործը հնարավոր էր կատարել մարքսիզմ-լենինիզմի խոր յուրացումով լեզվաբանական հարցերի լուծմանը ձեռնամուխ լինելով և օգտագործելով հայրենական լեզվաբանության անցյալից ստացած հարուստ ժառանգությունը, ինչպես և իր ուրույն ուղիներով զարգացող արտասահմանյան լեզվաբանության նվաճումները: Իսկ այդ գործի հաջող լուծումը պահանջում էր առաջին հերթին պատրաստի կադրեր, լեզվաբան-տեսաբանների մի ամբողջ սերունդ, որ մարքսիզմ-լենինիզմին խորապես տիրապետելով, կարողանար մշակել լեզվաբանության տեսական, մարքսիստական հիմունքները: Հոկտեմբերյան ռևոլյուցիայից հետո, սակայն, մեր երկրում դեռ այդպիսի պատրաստի կադրեր չկային: Լեզվաբանների այն սերունդը, որ մեր հասարակարգը ժառանգել էր անցյալից, ներկայացնում էր բուրժուական լեզվաբանությունն իր տարբեր ուղղություններով (հոգեբանական-ինդիվիդուալիստական, սոցիոլոգիական, կուլտուր-պատմական, մասամբ նաև՝ նեոֆիլոլոգիական): Լեզվաբանների այդ սերունդը, բացի նրանից, որ տարբեր ուղղություններ էր ներկայացնում, տարբեր խմբերի էր բաժանվում նաև հասակային տեսակետից, որը բոլորովին էլ երկրորդական հանգամանք չէր: Շատերը կային, որ հակառակ իրենց ցանկության, այլևս հնարավորություն չունեին սովորել մարքս-լենինյան ուսմունքը և այն կիրառել լեզվաբանության մեջ: Նրանց մնում էր շարունակել իրենց աշխատանքը և իրենց երկարամյա աշխատանքների վերջին արդյունքները ի սպաս դնել մեր երկրի կուլտուրական շինարարությանը, առանց տեսական վերակառուցում ապրելու: Մեր իրականությունը հնարավորություն էր տալիս նրանց շարունակել իրենց հետազոտությունները, ըստ որում այդ հետազոտություններն իրենց փաստական նյութի հսկայական հարստությամբ, գիտելիքների խորությամբ ու բազմակողմանիությամբ մեծապես նպաստում էին գործնական շատ հարցերի ճիշտ լուծմանը: Այդ լեզվաբաններից կարելի է հիշել Ա. Ա. Շախմատո-

վին (1864—1920), Դ. Ն. Ուշակովին (1873—1942), մեզ մոտ՝ Հ. Ա. Աճառյանին (1876—1953) և այլոց:

Հին սերնդի մյուս ներկայացուցիչները, որոնք համեմատաբար ավելի երիտասարդ էին, լծվեցին մարքսիզմ-լենինիզմը յուրացնելու և լեզվաբանության մեջ այն կիրառելու գործին: Բայց ցանկությունն ու ձգտումը դեռևս ամեն ինչ չէ: Այն հանգամանքը, որ նախքան Հոկտեմբերյան ռևոլյուցիան այդ լեզվաբանները բուրժուական լեզվաբանության այս կամ այն ուղղությանն էին պատկանել և դրա միջոցով համապատասխան փիլիսոփայական ուղղությունների հետ էին կապված եղել, իր յուրահատուկ դրոշմն էր դնում լեզվաբանական տեսական որոնումների վրա, առաջին երկու տասնամյակների ընթացքում: Այսպես, օրինակ, Ն. Յա. Մառը, որ իր գիտական գործունեության մինչսովետական շրջանում սոցիոլոգիական ուղղությանն էր հարում՝ վուլգար մատերիալիզմի որոշ երանգավորումով, մարքսիզմն էլ յուրացնում էր հենց այդ տեսանկյունով, որը հանգեցնում էր մարքսիզմի գոհակացմանն ու աղավաղմանը: Հոգեբանական ինդիվիդուալիզմի հետևորդները, որոնք մարքսիզմը յուրացնում էին սուբյեկտիվ իդեալիզմի դիրքերից ելնելով, բնականաբար, մարքսիզմին էին աշխատում «հարմարեցնել» իրենց լեզվաբանական սկզբունքները: Այս ամենն ստեղծում էր մարքսիզմի անունից հանդես եկող, բայց իրականում ոչ մարքսիստական տեսությունների ուժգին բախում, որ և առաջին երկու տասնամյակների սովետական տեսական լեզվաբանության բնորոշ հատկանիշն է կազմում: Այսպես կարելի է ամենաընդհանուր գծերով բնորոշել գործունեությունը լեզվաբանների այն սերնդի, որ ձևավորվել էր մինչև սովետական կարգերի հաստատումը և շարունակում էր իր գիտական գործունեությունը նոր հասարակարգում: Մենք չենք խոսում, բնականաբար, հին սերնդի այն փոքրաթիվ ներկայացուցիչների մասին, որոնք ռևոլյուցիայի ժամանակ կամ նրանից հետո արտագաղթել էին արտասահման և որոնց գիտական գործունեությունը չի կապվում սովետական լեզվաբանության հետ:

Լեզվաբանների այդ ավագ սերնդի հետ աշխատելու էր գալիս նոր սերունդը, որ իր մասնագիտական ու գաղափարական դաստիարակությունն էր ստանում սովետական հասարակարգում: Այս սերունդը ուներ արդեն բոլոր հնարավորությունները՝ խորապես յուրացնելու մարքս-լենինյան փիլիսոփայությունը և նրանով զինված՝ լեզվաբանության բնագավառը մտնելու: Բայց այս սերնդի ներկայացուցիչների համար էլ մի ուրիշ դժվարություն էր ստեղծ-

վում: Նրանք դաստիարակվում էին ավագ սերնդի մոտ և այդ-
այսպես թե այնպես, իր ազդեցությունը թողնում էր նրանց վրա:
Ըստ որում, առավել անբարենպաստ էր նրանց վիճակը, որոնք
մասնագիտանում էին նրանց մոտ, ովքեր մարքսիստ կամ մարք-
սիստական լեզվաբանական ուսմունք ստեղծող էին համարում
իրենց: Ստացվում էր այնպես, որ ոչ մարքսիստ լեզվաբանների
աշակերտներն ավելի մոտ էին կանգնում մարքսիզմին, քան մարք-
սիզմի անունից հանդես եկող լեզվաբանների աշակերտները: Այս-
պիսի բնորոշումը առերևույթ խիստ տարօրինակ է թվում, բայց
վիճակն այդպիսին էր և ոչ պատահականորեն, այլ միանգամայն
օրինաչափ կերպով: Բանն այն է, որ առաջինների, ոչ մարքսիստ-
ների աշակերտները գիտեին, որ իրենց ուսուցիչներից մարքսիստա-
կան ուսմունք չեն սովորելու, ուստի և՛ յուրացնելով ուսուցչի հա-
րուստ լեզվաբանական գիտելիքներն ու լեզվաբանական հետազո-
տության մեթոդները, տեսական հարցերի լուծման ժամանակ ուղ-
ղակիրեն ելնում էին մարքսիզմից. նրանք մարքսիզմը սովորում
էին հենց իր իսկ՝ մարքսիզմի միջոցով: Մինչդեռ երկրորդները,
օրինակ, Ն. Յա. Մառի աշակերտները, որոնք գիտում էին իրենց
ուսուցչի ուսմունքը որպես մարքսիստական ուսմունք, մարքսիզմն
էլ հարմարեցնում էին այդ ուսմունքին, դիտում այդ ուսմունքի դիր-
քերից: Եվ պատահական չէ, որ հենց այս կարգի լեզվաբանները
այնպիսի ծայրահեղության հասան, որ սկսեցին «շտկել» մարքսիզ-
մի հիմնադիրների որոշ դրույթները Ն. Յա. Մառի «նոր ուսմունքի»
ոգով, այլ կերպ ասած, հանգեցին մարքսիզմի մի շարք դրույթնե-
րի ռեվոլյուցիոն: Այդպիսի փաստերի մանրամասն քննությանը մենք
կանդորադառնանք ստորև:

Ահա, ընդհանուր առմամբ այսպիսի վիճակ էր ներկայացնում
սովետական լեզվաբանությունը մեր երկրում նոր հասարակարգի
հաստատումից հետո, մինչև երկրորդ տասնամյակի կեսերը: Այս
վիճակի անխուտափելի հետևանքը եղավ հետազայում ստեղծված
Ն. Յա. Մառի ուսմունքի պաշտոնական տիրապետությունը և
արակչեկյան ռեժիմի հաստատումը լեզվաբանության մեջ: Այս եր-
կու հանգամանքները լճացման վիճակի հասցրին լեզվաբանությու-
նը մեր երկրում, որ վերացվեց միայն 1950 թ. լեզվաբանական դի-
կուսիայի օգնությունը: Ելնելով այս բնորոշ գծերից, մենք սովետա-
կան լեզվաբանության քառասունհինգամյա պատմությունը բա-
ժանում ենք երեք շրջանի.

1. 1917 — 1936 թվականներ: Այս շրջանի համար

բնորոշ են. լեզվաբանության անմիջական, ակտիվ մասնակցու-
թյունը կուլտուրական հեղափոխության գործին, սովետական հա-
սարակարգի առաջադրած հրատույզ հարցերի լուծում: Տեսության
բնագավառում՝ պայքար բուրժուական լեզվաբանական տեսու-
թյունների դեմ ու դրանց հաղթահարում, որոնումներ՝ մարքսիս-
տական լեզվաբանական ուսմունքի ստեղծման ճանապարհին:

2. 1937 — 1950 թվականներ: Գործնական լեզվաբա-
նության ասարելանում՝ նոր, ավելի բարձր մակարդակի աշխա-
տանքների ծավալում և նորանոր բնագավառների ընդգրկում: Տե-
սության բնագավառում՝ որոնումների հետագա ծավալում, առաջին
շրջանում սկիզբ առած՝ տարբեր հոսանքների միջև պայքարի սրում
և պատմական հայտնի իրադրությունների մեջ Ն. Յա. Մառի «նոր
ուսմունքի» պաշտոնական տիրապետություն, արակչեկյան ռեժիմի
հաստատում և տեսական լեզվաբանության լճացում, որ խոչընդո-
տում էր նաև գործնական լեզվաբանության զարգացմանը:

3. 1950 թվականի հունիսից հետո: Այս շրջանն
սկսվում է 1950 թվականի լեզվաբանական դիսկուսիայով, որ ար-
մատապես հեղաշրջեց լեզվաբանության վիճակը: Տեսության բնա-
գավառում տասնամյակների որոնումները պսակվում են մարքսիս-
տական լեզվաբանական ուսմունքի ձևավորումով: Գա հնարավոր-
ություն է տալիս նոր հիմքերի վրա դնելու ինչպես գործնական,
այնպես էլ տեսական ուսումնասիրությունները, համարձակորեն
քննադատաբար օգտագործելու անցյալի լեզվաբանական ժառան-
գությունը և ժամանակակից արտասահմանյան լեզվաբանության
նվաճումները: Այս բոլորը պայմանավորում են սովետական լեզ-
վաբանության բուն զարգացումը և նրա՝ համաշխարհային մատ-
չտարով առաջավոր դիրքեր գրավելը:

Որպեսզի ավելի լավ կարողանանք լուսաբանել սովետական
լեզվաբանության անցած պատմական դժվարին ուղին, անհրա-
ժեշտ ենք համարում փոքր-ինչ ավելի հանգամանորեն կանգ առնել
այդ շրջաններից յուրաքանչյուրի վրա՝ առանձին-առանձին:

* * *

Առաջին շրջան (1917—1936 թթ.): Սոցիալիստական
ռևոլյուցիան Ռուսաստանում ու դրա հետ կամ դրանից հետո, հա-
ջորդ մի քանի տարիներում, ցարական Ռուսաստանի տիրապետու-
թյան տակ գտնվող մի շարք երկրներում (Ուկրաինա, Բելոռուսիա,

Վրաստան, Հայաստան, Քաջիկստան, Ղազախստան և այլն) և դրանց միավորումը Սովետական Միության կազմում ստեղծեցին նոր հասարակարգ կառուցող մի հզոր պետություն, որի կազմի մեջ մտնում էին բազմաթիվ ազգեր, ժողովուրդներ և էթնիկական խմբեր: Կապիտալիստական հասարակարգը ստեղծել էր հսկայական տարբերություններ այդ ժողովուրդների տնտեսական ու մշակութային զարգացման մեջ: Մի քանի ազգեր, ինչպիսիք էին ռուսները, ուկրաինացիները, բելոռուսները, հայերը, վրացիները և այլն հասել էին տնտեսական ու մշակութային զարգացման բարձր մակարդակի, մինչդեռ բազմաթիվ ժողովուրդներ ու էթնիկական խմբեր գտնվում էին զարգացման խիստ ցածր աստիճանի վրա: Բավական է հիշել, որ Սիբիրի և Հեռավոր Արևելքի ասիական մասի, ինչպես և Հյուսիսային Կովկասի շատ էթնիկական խմբեր, գտնվում էին դեռևս նախնադարյան տոհմատիրական հասարակության մակարդակի վրա: Տնտեսական ու մշակութային զարգացման այսպիսի վիճակը Սովետական պետության առջև խնդիր էր դնում պատմականորեն ամենակարճ ժամանակամիջոցում վերացնել այն անհավասարությունը և հետամնաց ազգերին ու ժողովուրդներին հասցնել առաջավորներին թե՛ տնտեսապես, թե՛ կուլտուրապես: Մեր երկրի առջև կանգնած էին տնտեսական ու կուլտուրական շինարարության հրատապ, իրենց ծավալով վիթխարի խնդիրներ, որոնք պետք է լուծվեին ամենակարճ ժամանակամիջոցում: Այդ վիթխարի խնդիրների լուծման գործում կուլտուրական հեղափոխության բնագավառում առաջնահերթ ու պատասխանատու խնդիրներ ունեն կատարելու լեզվաբանությունը: Մեր երկրի բազմաթիվ փոքր ժողովուրդներ ու էթնիկական խմբեր մինչև սովետական կարգերի հաստատումն իրենց գիրն ու գրականությունը չեն ունեցել: Սովետական պետության առջև անմիջապես ծառայելով այդ վիճակին արմատապես փոխելու և ամենակարճ ժամանակամիջոցում այդ ժողովուրդների համար գիր ստեղծելու խնդիրը: Դա բխում էր այդ ժողովուրդների մոտ դպրոցներ բացելու, գրագիտությունն ու ուսումը տարածելու, մայրենի լեզվով հրատարակություններ ունենալու գրականությունն ու արվեստը զարգացնելու, այդ ժողովուրդների մոտ գիտության ու կուլտուրայի զարգացումն ապահովելու պահանջից: Մյուս կողմից, զարգացման բարձր մակարդակի հասած ժողովուրդները թեև ունեին գիր ու գրականություն, բայց կապիտալիստական հասարակության պայմաններում աշխատավորական հոծ զանգվածները, բանվոր դասակարգն ու շքավոր գյուղացիու-

թյունը հիմնականում անհաղորդ էին գրին, գրված՝ ժաման հնարավորություններից: Սովետական պետության առջև անմիջապես կանգնեց այդ ժողովուրդների մեջ գիրն ու գրականությունը աշխատավորական զանգվածների սեփականությունը դարձնելու, անգրագիտությունը ամենակարճ ժամանակում վերացնելու խնդիրը: Դրանց հետ միաժամանակ սովետական պետության առջև ծառայած էր մատաղ սերնդի դաստիարակության հարցը. բավական չէր գիր ստեղծել բազմաթիվ ժողովուրդների համար, բավական չէր վերացնել անգրագիտությունը մեծահասակների մոտ, անհրաժեշտ էր գրագետ, մայրենի լեզվին տիրապետող, գրագիտության բարձր մակարդակ ունեցող երիտասարդ սերունդ ստանալ դպրոցական ուսուցման միջոցով: Վերջապես, այդ բոլորին զուգընթաց անհրաժեշտություն էր ստեղծվում ազգային դպրոցներում ուսաց լեզվի ուսուցման, որը հետամնաց ժողովուրդներին հնարավորություն կտար ուսերենի միջոցով ժամանակակից առաջավոր գիտությանն ու կուլտուրային հաղորդակից դառնալու:

Այս բոլոր խնդիրների կատարմանը, դրանց գործնական լուծմանը ձեռնամուխ եղավ, ահա, լեզվաբանությունը՝ մեր երկրում սովետական կարգերի հաստատումից անմիջապես հետո: Ծավալեց իր մասշտաբներով վիթխարի մի աշխատանք, որ պետք էր ավարտել ամենասեղմ ժամկետներում: Այդ աշխատանքին լծվեց մեր լեզվաբանների ավագ սերունդը, որ զինված էր լեզվաբանական բազմակողմանի գիտելիքներով, գիտական-հետազոտական ու մանկավարժական աշխատանքի հարուստ փորձով ու խոր հմտությամբ, իր հետ տանելով նաև երիտասարդ սերունդը: Բայց ո՛չ ավագ սերունդը և ո՛չ էլ երիտասարդ սերունդը, որ նոր էր մտնում լեզվաբանության բնագավառը, ի վիճակի չէր կարճ ժամանակամիջոցում գործնականորեն ավարտելու այդ վիթխարի աշխատանքը: Եվ պատահական չէ, որ լեզվաբանների հետ միասին ձեռք-ձեռքի տված՝ աշխատանքի լծվեցին բանասերներն ու պատմաբանները, գրականագետներն ու ազգագրագետները, մաթեմատիկոսներն ու քիմիկոսները, բժիշկներն ու ճարտարապետները, մի խոսքով՝ ամբողջ ազգային մտավորականությունը: Ըստ որում, եթե մի քանի ժողովուրդների մոտ ազգային մտավորականությունն իր որակով ու քանակով կարող էր ապահովել այդ աշխատանքների կատարումը, ինչպես օրինակ, ռուսների, ուկրաինացիների, վրացիների, հայերի մոտ էր, ապա շատ ժողովուրդների համար այդ աշխատանքի ծանրությունն ընկնում էր ռուսների վրա, որոնք տեղական մտավորականների

հետ միասին էին կատարում այդ գործը: Ծավալված աշխատանքները շատ շուտով պսակվեցին ցանկալի արդյունքներով: Շատ կարճ ժամանակում իրենց մայրենի լեզվին հարմարեցված գիր ստացան գրից զուրկ բազմաթիվ ժողովուրդներ, այդ թվում այնպիսիները, ինչպիսիք են գուրերը, տունգուաները, սամոդրյցիները և այլն:

Նույն ժամանակամիջոցում, գիր ունեցող ժողովուրդների մոտ անգրագիտությունը վերացնելու անհրաժեշտությունն ստիպում էր արդեն գոյություն ունեցող գիրն ու ուղղագրությունը բարեփոխել՝ մասսաներին առավել շահով մատչելի դարձնելու համար: Այդպիսի աշխատանք կատարվեց, օրինակ, ռուսերենի, հայերենի և ուրիշ լեզուների համար:

Ավելի մեծ կարևորություն էր ներկայացնում այն ժողովուրդների գրի փոփոխությունը, որոնք օգտագործում էին արաբական այբուբենը (թաթարների, ադրբեջանցիների, ղազախների, կիրգիզների, թուրքմենների, կարակալպոկների, Հյուսիսային Կովկասի մի քանի լեռնային ժողովուրդների, թաջիկների և այլն): Այդ ժողովուրդների մեջ «շարժում սկսվեց հանուն գրի՝ նոր, եվրոպական գրության վրա հիմնված սիստեմին անցնելու: Այդ շարժումը առաջացնող պատճառներից կարևորագույններն էին.

ա) Կուլտուրական հեղափոխության հիմնական պահանջը՝ անգրագիտությունը վերացնելու անհրաժեշտությունը, որ տիրում էր այդ ժողովուրդների մեջ մինչև ռևոլյուցիան, և առավելագույն կարճ ժամանակամիջոցում դրան հասնելու դժվարությունը՝ պահպանելով արարական գիրը, որի բնորոշ հատկանիշն էր բաղաձայնական բնույթը, որ այլ կառուցվածք ունեցող լեզուների բառերի գրությունն արաբական այբուբենով անճիշտ էր դարձնում և ավելորդաբար դժվարացնում:

բ) Աշխարհիկ դաստիարակության անսահմանափակ ծավալման հետ միաժամանակ, կարելիվույն շափ վճռաբար կտրվել թյուրքական ու իրանական ժողովուրդների մոտ մինչև ռևոլյուցիան տարածված կրոնական կրթության սիստեմից, որի հետ անխզելիորեն կապված էր հանդես գալիս արաբական գիրը»¹:

Այս շարժումը ևս կարճ ժամանակում իր գործնական լուծումն ստացավ. արաբական գիրն ամենուրեք մեր Միության մեջ փոխա-

¹ Пути развития советского языкознания (Передовая), ВЯ, 1957, № 5, էջ 4:

րինվեց եվրոպական գրությամբ, ըստ որում սկզբից հիշյալ ժողովուրդների գիրը հիմնված էր լատինական այբուբենի վրա, որ հետագայում փոխարինվեց ռուսական այբուբենի վրա հիմնված գրությամբ: Նույնպես վարվեցին նաև Սովետական Միության այն ժողովուրդները, որոնք օգտագործում էին մոնղոլական գիրը:

Այսպիսով, այս առաջին շրջանում հիմնականում լուծվեց մեր երկրի բազմաթիվ ժողովուրդների լեզուների համար գիր ստեղծելու, իսկ գիր ունեցողների այբուբենն ու ուղղագրությունը առավել հարմար գրով փոխարինելու կամ մասնակիորեն բարեփոխելու խնդիրը: Սովետական լեզվաբանության կարևոր նվաճումներից մեկը հենց այն է, որ նա մոտ 50 լեզվի համար գիր է ստեղծել այս քառասունհինգ տարիների ընթացքում, ըստ որում այդ թվի մեծագույն մասը վերաբերում է 20—30 ական թվականներին:

Կուլտուրական հեղափոխության կարևորագույն խնդիրը՝ կարճ ժամանակում աշխատավոր մասսաների մեջ գրագիտություն տարածելը, բնականաբար, միայն զանազան լեզուների համար գիր ստեղծելով կամ արդեն ունեցած գիրը առավել մատչելի ու դյուրին դարձնելով չէր լուծվում, իհարկե: Գրի ստեղծումը անհրաժեշտ պայման էր. բայց գիրը պետք էր սովորեցնել և, դրա հետ, պետք էր սովորեցնել մայրենի լեզուն: Ահա, հենց գրի ստեղծումն ու մայրենի լեզվի ուսուցումն իրենց հերթին առաջադրում էին գործնականորեն կարևոր մի շարք խնդիրներ: Գրից զուրկ լեզուների համար գիր ստեղծելը և արաբական գիրը նոր, առավել շահով հարմար և լեզուների հնչյունական համակարգի առանձնահատկությունները լավագույնս արտացոլող գրով փոխարինելը պահանջում էին այդ լեզուների հնչյունական համակարգի խոր ու բազմակողմանի ուսումնասիրություն: Եվ բոլորովին պատահական չէ, որ քսանական ու երեսնական թվականներին մեծ թափ է ստանում զանազան լեզուների հնչյունական համակարգի և՛ վերլուծական (անալիտիկ), և՛ համադրական (սինթետիկ) ուսումնասիրությունը: Վերլուծական հետազոտությունները նպատակ ունեին բացահայտել ուսումնասիրվող լեզվի հնչյունների արտասանական ու ձայնային առանձնահատկությունների ամբողջ սիստեմը: Այսպիսի ուսումնասիրությունները հնարավորություն էին տալիս պարզելու յուրաքանչյուր լեզվի արտասանական բազայի առանձնահատկությունները, վերհանելու հնչյունների էական ու ոչ էական արտասանական-ձայնային հատկանիշները: Բայց այս էլ իր հերթին բազմազան լեզուներից քաղած հսկայական նոր նյութ էր մատակարարում հնչյունաբանու-

թյան համար: Հենց այս տեսական հնչյունաբանությունն էլ համա-
գրական (սինթետիկ) մեթոդով ձգտում էր արտասանական-ձայ-
նային առանձնահատկությունների սիստեմի մեջ գտնել, բացահայ-
տել լեզվական տեսակետից էական, հասարակայնորեն արժեքա-
վորված տարբերակիչ տարրերի համակարգը, որ հանգեցնում էր
հնչյութաբանության զարգացմանը: Այդ բնագավառի հաջողու-
թյունների հիմքն էին կազմում մի կողմից՝ ուսումնասիրվող լեզու-
ների բազմազանությունը, մյուս կողմից՝ Ռուսաստանում հնչյունա-
բանության զարգացման յուրահատուկ ուղղությունն ու բարձր մա-
կարդակը: Բողոքն ղե Կուրտենեի տեսությունը՝ հնչյութի և հնչյունի
մասին, սովետական լեզվաբանությունը ժառանգեց Կազանի դըպ-
րոցի ականավոր ներկայացուցիչ Լ. Վ. Շչերբայի միջոցով: Իր բազ-
մաթիվ աշակերտների հետ միասին (Ն. Դ. Պոլիվանով, Ա. Ս.
Ախվլեդիանի, Ս. Ի. Բեռնշտայն և ուրիշներ) Լ. Վ. Շչերբայն հսկա-
յական գործ է կատարել Սովետական Միության մեջ թե՛ գործնա-
կան-փորձառական և թե՛ տեսական հնչյունաբանության զարգաց-
ման ասպարեզում: Ձանազան լեզուների այբուբենի ստեղծման հետ
էր կապվում հնչյութաբանության հարցերի մշակումը մի խումբ
սերիշ լեզվաբանների կողմից 20—30-ական թվականներին: Այս
տեսակետից մեծ դեր են կատարել Ն. Ֆ. Յակովլևը, Լ. Ի. Փիրկո-
վը, Ինչպես և Ն. Ն. Դուրնովոն: Առանձնապես մեծ է Ն. Ֆ. Յակով-
լևի ծառայությունը հնչյութաբանության զարգացման գործում: Այդ
առթիվ «Вопросы языкознания» ժուռնալն իր առաջնորդողում
իրավացիորեն գրում է. «Ն. Ֆ. Յակովլևի «Այբուբենի կառուցման
մաթեմատիկական ֆորմուլան» ուսումնասիրությունը մեզ մոտ
հնչյութաբանության զարգացման նոր շրջան բացեց, ազատելով
այս առարկան Բողոքն ղե Կուրտենեի և նրա դպրոցի հոգեբանա-
կան ուղղությունից: Յակովլևին հետևեցին Մոսկվայի ուրիշ հըն-
չյութաբաններ (Ռ. Ի. Ավանեսով, Վ. Ն. Միգորով, Պ. Ս. Կուզնեցով,
Ա. Ա. Ռեֆորմատսկի)»¹:

Եթե գրի ստեղծումն ու կատարելագործումը մղում էր դեպի
հնչյունաբանության ու հնչյութաբանության զարգացումը, ապա
դպրոցական ուսուցումը պահանջում էր մայրենի լեզվի դասագրքե-
րի անհապաղ ստեղծում: Ըստ որում, այսպեղ էլ քերականության
դասագրքեր էին ստեղծվում առաջին հերթին այն լեզուների համար,
որոնք մինչև ուսուցիչան քերականագիտություն չեն ունեցել: Եվ

1 ВЯ, 1957, № 5, էջ 5:

սա միանգամայն հասկանալի է: Այն ժողովուրդները, որոնք ունեին
զարգացած գիր ու գրականություն և լեզվաբանական-քերականա-
գիտական ավանդություն, նրանց մոտ դպրոցական ուսուցումը
դեռևս բավարարվում էր արդեն եղած քերականություններով, կամ
հենքի օրինակով ու սկզբունքներով կազմվող նոր դասագրքերով:
Այստեղ դեռևս նոր տիպի քերականության, դիալեկտիկական մա-
տերիալիզմի սկզբունքների վրա հիմնված քերականություններ
ստեղծելու հարցը սուր կերպով չէր դրվում մինչև 1928—1930 թթ.:
Մինչդեռ նոր միայն գիր ստացող լեզուների քերականության դա-
սագրքերի ստեղծումը անմիջականորեն արտացոլում էր տեսական
լեզվաբանության մեջ գոյություն ունեցող որոնումների վիճակը:
Այդ լեզուները շունչին լեզվաբանական ուսումնասիրության տրա-
դիցիաներ, և ինչպես հնչյունաբանության, այնպես էլ քերականա-
կան կառուցվածքի ուսումնասիրությունը տարվում էր համաձայն
այն ուղղությունների տեսական դրույթների, որոնք բնորոշ էին այդ
շրջանի սովետական լեզվաբանությանը: Եվ բոլորովին պատահա-
կան չէ, որ այդ շրջանում ստեղծված բազմաթիվ լեզուների քերա-
կանությունները կրում են կամ ֆորմալիզմի դրոշմը՝ առևանգան
քերականությունների ազդեցությամբ, ըստ որում քերականություն-
ների մեծագույն մասի հեղինակները կամ հեղինակակիցները ռուս
լեզվաբաններ էին, և կամ հիմնվում էին Ն. Յա. Մառի «նոր ուս-
մունքի» դրույթների վրա: Պետք է հիշել, որ բազմաթիվ լեզուների,
առանձնապես կովկասյան լեզուների ուսումնասիրողները Ն. Յա.
Մառի աշակերտներն էին, որոնք աշխատում էին իրենց ուսուցչի
դեկավարությամբ և առաջնորդվում նրա տեսությամբ: Ճիշտ է,
արդեն քսանական թվականների երկրորդ կեսին քննադատական
ձայներ են լսվում ավանդական, մասնավորապես հոգեբանական-
ֆորմալիստական քերականությունների դեմ և գնալով այդ ձայները
բազմանում ու հզորանում են, առաջ բերելով որոշակի շարժում
քերականագիտության բնագավառում, բայց տիրապետող դեռևս
մնում են այդ երկու ուղղությունները: Եվ չնայած դրանց տեսական
սխալներին ու թերություններին, այնուամենայնիվ, այս շրջանի
առաջին տասնամյակում ուսումնասիրվում է բազմաթիվ լեզուներ
ի քերականությունը, բառակազմությունն ու հնչյունաբանությունը
և կազմվում են դրանց դասագրքերը ազգային լեզուների համար:
Դպրոցական քերականությունների ստեղծման գործը նոր հիմքերի
վրա է դրվում երեսնական թվականների սկզբներին: ՀամԿ(Բ)Պ
Կենտրոնական Կոմիտեի 1933 թ. որոշումը դպրոցական ուսուցման

մասին, վեր հանելով մատաղ սերնդի կրթութեան ասպարեզում եղած լուրջ թերութիւններն ու սխալները, դատապարտելով մանկավարժութեան բնագավառում տիրապետող ոչ ճիշտ, վնասակար տենդենցները, նշեց սովետական դպրոցի վերակառուցման ու հետագա զարգացման ուղիները: Այդ որոշումը առաջնահերթ խնդիր էր համարում առհասարակ դպրոցական դասագրքերի, մասնավորապես մայրենի լեզուների դասագրքերի ստեղծումը: Կենտրոնական Կոմիտեն պահանջում էր կարճ ժամկետում ստեղծել կայուն դասագրքեր: Այս որոշումն արտացոլում էր մանկավարժութեան, լեզվաբանութեան և մի շարք այլ գիտութիւնների մեջ դեռևս նախորդ տասնամյակի վերջերում սկիզբ առած շարժումը հանուն նոր մեթոդների և գիտական նոր, մարքսիստական դրույթների կիրառման՝ դպրոցական ուսուցման մեջ: Կենտրոնական Կոմիտեի այս որոշումը հզոր խթան հանդիսացավ նոր սկզբունքներով, պսիխոլոգիզմից ու ֆորմալիզմից զերծ քերականութիւններ ստեղծելու գործում: Այստեղ էլ առաջին հերթին կազմվեցին ուսերենի դպրոցական քերականութիւնները ուսական դպրոցների համար: Այդ ասպարեզում աչքի էր ընկնում Լ. Վ. Շչերբայի և Ս. Գ. Բարխուդարովի դասագիրքը, որը հիմք հանդիսացավ նաև մյուս ազգային լեզուների դպրոցական դասագրքերի համար: Շուտով նոր դասագրքեր կազմվեցին նաև ազգային ռեսպուբլիկաներում՝ մայրենի լեզուների համար, և այս շրջանի վերջում արդեն հիմնականում գրեթե ավարտված էր մայրենի լեզուների դպրոցական քերականութիւններ ստեղծելու աշխատանքը: Եվ թեև այդ նոր դասագրքերը դեռևս տառապում էին որոշ պրիմիտիվութեամբ, պարունակում էին առանձին ոչ ճիշտ սահմանումներ ու տարրամ ձևակերպումներ, բայց դրված էր արդեն հաստատուն հիմք և հետագայի վերամշակումներին ու բարեփոխումներին էր մնում այդ թերութիւնների վերացումը: Նշանակալից է, որ Ն. Յա. Մառի ուսմունքը ո՛չ այս շրջանում, ո՛չ էլ հետագայում չկարողացավ թափանցել դպրոցական քերականութեան բնագավառը: Առաջին շրջանի համար այդ բանը բացատրվում էր երկու հանգամանքով. նախ՝ ուսերենի և մի շարք ուրիշ լեզուների դպրոցական քերականութեան բարձր մակարդակն իր հնամենի տրադիցիաներով, որ կարևոր խոչընդոտ էր «նոր ուսմունքի» ներթափանցման առջև, ապա՝ լեզվաբանների մեջ տարբերայնորեն ստեղծված յուրահատուկ աշխատանքի բաժանումով: Ուսերենի, ինչպես և մի շարք այլ լեզուների դպրոցական դասագրքերը կազմում էին ոչ թե Ն. Յա. Մառի աշակերտներն ու

հետևորդները, այլ մանկավարժական աշխատանքի հետ անմիջականորեն կապված լեզվաբանները, որոնք չէին հարում «նոր ուսմունքին», մինչդեռ Ն. Յա. Մառն ու իր աշակերտները զբաղված էին հիմնականում անգիր լեզուների ուսումնասիրութեամբ, և հատկապես քսանական թվականների երկրորդ կեսից սկսած՝ իրենց ուշադրութիւնը կենտրոնացնում էին այսպես կոչված «լեզվաբանական հնէաբանութեան» ու «լեզվաստեղծական պրոցեսի միասնութեան» հարցերի վրա: Ստացվում էր այնպես, որ տեսական հարցերի բնագավառում Ն. Յա. Մառն ու իր հետևորդները երեսները դարձնում էին դեպի անգիր ու նոր միայն գիր ստացած լեզուները՝ մի կողմից, և դեպի գրավոր ավանդված լեզուների նախապատմութիւնը՝ մյուս կողմից: Եվ որովհետև մեր Միութեան գրեթե բոլոր ժողովուրդների համար մայրենի լեզվի դասագրքերի հիմքում զբուրվեցին ուսերենի դասագրքերի տեսական սկզբունքները, ապա «նոր ուսմունքի» դրույթները բնական կերպով մուտք չգործեցին այդ բնագավառը, և դա ապահովեց կայուն, մեծ մասամբ մինչև այժմ էլ գործածութեան մեջ մնացող դասագրքերի ստեղծումը: Այսպիսով, այս շրջանում սովետական լեզվաբանութեան կարևոր նվաճումներից մեկն էլ դպրոցական քերականութիւնների ստեղծումն էր մեր երկրի մի քանի տասնյակ լեզուների համար, իսկ այդ նշանակում է նաև նոր, սովետական քերականագիտութեան հիմնական սկզբունքների մշակումը: Նույն ժամանակաշրջանի նվաճումների թվին է պատկանում օտար լեզուների դպրոցական դասագրքերի ստեղծումը, ինչպես և Մերձավոր ու Հեռավոր Արևելքի մի շարք լեզուների (սեմական, իրանական, չին-տիբեթական, ճապոներեն, մոնղոլական և այլն) ուսումնասիրութիւնը, որ կապված էր Արևելքի ժողովուրդների զարթոնքին նպաստելու՝ Սովետական Միութեան եղբայրական օգնութեան հետ:

Թե՛ այբուբենների և թե՛ դպրոցական քերականութիւնների ստեղծումը գրից զուրկ լեզուների համար սովետական լեզվաբանութեան առջև հաճախ շատ այլ կարգի կարևոր խնդիրներ էլ էր դնում: Գրից զուրկ լեզուները բնորոշվում էին զուգահեռաբար գործունեության մեծ ոլորտ ունեցող երկու և ավելի բարբառների առկայութեամբ: Այբուբեն և մայրենի լեզվի քերականութիւն մշակելու համար ամենից առաջ պետք էր պարզել, թե այդ բարբառներից ո՛րը պետք է ընդհանուր գրական լեզվի հիմքում դնել և դրա հիման վրա միայն մշակել ուղղագրական ու քերականական ընդհանուր նորմաներ՝ նոր սկզբնավորվող գրական լեզվի համար: Այս բանը,

քնականաբար, անհրաժեշտութիւն էր ստեղծում ուսումնասիրելու այդ լեզուների տեղական բարբառները, երևան բերելու նրանց ամենաընդհանուր նորմաները, ինչպես և որոշելու նրանցից յուրաքանչյուրի հասարակական դերն ու կշիռը: Գործնականում այս խիստ կարևոր խնդրի լուծումն, ահա, բարբառագիտական աշխատանքների ծավալման հիմնական գործոնը եղավ՝ գրից զուրկ և քիչ ուսումնասիրված լեզուների ոլորտում:

Բայց բարբառագիտութիւնը զարգանում էր նաև լեզվաբանական պատկանելի տրադիցիաներ ունեցող, գիտութիւն ուշադրութեան կենտրոնում եղած լեզուներով խոսող ժողովուրդների մոտ, ըստ որում այս լեզուների բարբառների ուսումնասիրութեանը խթան էին հանդիսանում երկու հակադիր, իրարամերձ տեսութիւններ: Մի կողմից՝ լեզվաբանների ավագ սերունդը շարունակում էր բարբառագիտական ուսումնասիրութիւնը, ելնելով պատմա-համեմատական լեզվաբանութեան դիրքերից: Դիտելով բարբառները որպես մեկ լեզվի պատմականորեն առաջացած ճյուղավորումները, պատմա-համեմատական լեզվաբանութեան հետևորդները գտնում էին, որ տվյալ լեզվի պատմական զարգացման ամբողջ պրոցեսը լուսաբանելու համար անհրաժեշտ է ուսումնասիրել ոչ միայն գրավոր հուշարձանների լեզուն, այլև այդ լեզվի տեղական բարբառները: Այս տեսանկյունով սկսված էր ուսերեքնի, վրացերեքնի, հայերեքնի և մի քանի այլ լեզուների տեղական բարբառների ուսումնասիրութիւնը Հոկտեմբերյան ռևոլյուցիայից դեռ շատ առաջ, և սովետական կարգերի հաստատումից հետո էլ պատմա-համեմատական լեզվաբանութեան հետևորդները շարունակում էին այդ աշխատանքը: Մյուս կողմից, բարբառների ուսումնասիրութեանը մեծ կարևորութիւն էին տալիս «նոր ուսմունքի» հետևորդները, ելնելով հենց այդ ուսմունքի դրույթներից: Ն. Յա. Մառը և նրա հետևորդները ելնում էին այն վարկածից, թե տեղական բարբառները ներկայացնում են իբր աշխատավոր ժողովրդի լեզուներ՝ ի հակադրութիւն իշխող դասակարգերի լեզվի, որ ծագումաբանորեն բարբառները նույնանում են նախնական շրջանի զանազան ցեղային լեզուների հետ, որոնք դասակարգային հասարակութեան ձևավորման ու լեզուների խաչավորման պրոցեսում բարբառի աստիճանին են իջել: Սրանից ելնելով էլ, ահա, նրանք գտնում էին, որ ուսումնասիրել բարբառները, նշանակում է մի կողմից՝ վեր հանել տարբեր դասակարգերի հասարակական գիտակցութեան, կամ ինչպես իրենք էին սխալ կերպով անվանում՝ լեզվամտածողութեան տարբե-

րութիւնները, իսկ մյուս կողմից՝ լուսաբանել տվյալ ժողովրդի (=դասակարգային հասարակութեան) կազմավորումը: Եվ թեպետ այս ելակետային դրույթը հիմնովին սխալ էր ու հակապատմական, այնուամենայնիւ, նա խթանում էր տեղական բարբառների ուսումնասիրութեանը, զարկ տալիս բարբառագիտութեանը որպես սովետական լեզվաբանութեան կարևոր ճյուղերից մեկի: Այս տեսակետից Ն. Յա. Մառի «նոր ուսմունքի» դերը կարելի է դրական համարել, եթե շմոռանանք, որ այդ ուսմունքի դրույթներին հավատարիմ մնալով, Մառի հետևորդները շատ հաճախ ինչպես լեզուների, այնպես էլ տեղական բարբառների տվյալներն աշխատում էին հարմարեցնել այդ դրույթներին, բարբառային երևույթները ենթարկել «նոր ուսմունքի» սխեմաներին, իսկ սա հաճախ էր հանգեցնում բարբառային երևույթների միտումնավոր աղավաղումներին ու խեղաթյուրումներին:

Այսպիսով, հիշյալ երեք հանգամանքները հիմք հանդիսացան ծավալելու բարբառագիտական աշխատանքները թե՛ նոր գիր ստացող և թե՛ զարգացած գիր ու գրականութիւն ունեցող լեզուների ուսումնասիրութեան պրոցեսում: Եվ որքան էլ մեծ լինեն այդ աշխատանքների մեջ առանձին դեպքերում տեղ գտած սխալներն ու խեղաթյուրումները, այնուամենայնիւ, աշխատանքն ամբողջութեամբ վերցրած դրական էր և անհրաժեշտ հող պատրաստեց հաջորդ շրջաններում ավելի բարձր մակարդակի բարբառագիտական աշխատանքների ձեռնարկելու համար:

Վերջապես, այս շրջանի գործնական պահանջներին բավարարելու տեսակետից կարևոր էր ազգային դպրոցների համար ուսուցիչ լեզվի դասագրքերի ստեղծումը, որ հաճախ պահանջում էր ուսերեքնի և տվյալ ազգային լեզվի համադրական ուսումնասիրութիւնը: Եվ պատահական չէ, որ հենց այս շրջանում էլ սկիզբ է առնում բազմաթիւ ազգային լեզուների ու ուսերեքնի համադրական ուսումնասիրութիւնը, որպես սովետական լեզվաբանութեան կարևոր ճյուղերից մեկը, որն իր ուժգին զարգացումն է ստանում երրորդ շրջանում, 1950 թվականից հետո: Ռուսերեքնի ուսուցմանը նպաստելու և ուսուցիչ լեզվի միջոցով համաաշխարհային գիտութեանն ու գրականութեանը ազգային ռեսպուբլիկանների մտավորականութեանը հաղորդակից դարձնելը հեշտացնելու պահանջով էր պայմանավորված նաև երկլեզվյան բառարանների կազմումն ու հրատարակութիւնը ազգային ռեսպուբլիկաններում: Արդեն այս առաջին շրջանում գրեթե բոլոր ռեսպուբլիկաններում հրատարակվում են ուսերեքնից—

ազգային լեզու և ազգային լեզվից— ուսերեն թարգմանական բա-
նարաններ, ըստ որում այդ աշխատանքը կատարվում է ոչ միայն
տեղերում, այլև Միության կենտրոններում՝ միութենական նշանա-
կություն ունեցող գիտական-հրատարակչական մարմինների կող-
մից:

Սրանք են, ահա, այն հիմնական նվաճումները, որոնք ձեռք
է բերել սովետական լեզվաբանությունն այս առաջին շրջանում՝ մեր
հասարակարգի առաջադրած գործնական պահանջները բավարարե-
լու համար:

Ինչպես վերն ասացինք, ընդհանուր լեզվաբանական-տեսական
հարցերի մշակման բնափակումում այս շրջանի համար բնորոշ էին՝
պայքարը դասական լեզվաբանության իդեալիստական ու գոեհիկ
մատերիալիստական տեսությունների դեմ, և որոնումները՝ հանուն
մարքսիստական լեզվաբանական ուսմունքի ստեղծման: Այս բնա-
գավառում իրար էին բախվում մի կողմից՝ հոգեբանական-ինդիվի-
դուալիզմի և սոցիոլոգիական ուղղությունները, որոնց ներկայա-
ցուցիչներն զգալի ուժ էին ներկայացնում մեր լեզվաբանության
մեջ, մյուս կողմից՝ Ն. Յա. Մառի ուղղությունը, որ հակադրվում
էր այդ երկուսին և առհասարակ բոլոր բուրժուական լեզվաբանա-
կան ուղղություններին, երրորդ կողմից՝ մասնավորապես այս շրջ-
անի վերջին հինգ տարիներում, երիտասարդ լեզվաբանների քրն-
նադատական մոտեցումը հիմնականում մարքսիզմի դիրքերից թե՛
բուրժուական ուղղություններին և թե՛ Ն. Յա. Մառի «նոր ուս-
մունքին»:

Ակ. Ն. Յա. Մառի գիտական գործունեությանն ու տեսությանը
մանրամասնորեն անդրադառնալու ենք սույն հատորի մեջ՝ նրան
նվիրված առանձին հատվածում: Այդ պատճառով էլ այստեղ ան-
հրաժեշտ ենք համարում միայն մի քանի խոսքով բնութագրել նրա
գործունեությունը: Ինչպես վերն ասել ենք, Ն. Յա. Մառը նախա-
ռևոլյուցիոն շրջանում, հատկապես իր գիտական գործունեության
սկզբնական էտապում, հետևում էր պատմա-համեմատական լեզ-
վաբանության սոցիոլոգիական ուղղությանը, բայց աստիճանաբար
հեռացավ այդ ուղղությունից մի կողմից՝ ավստրիական լեզվա-
բան Հուզո Շուխարդտի (1842—1928), մյուս կողմից՝ Լուդվիգ
Նոարեի (1829—1889) և էռնստ Կապպի ազդեցությամբ: Առաջի-
նին հետևելով, նա հարեց այսպես կոչված կուլտուր-պատմական
ուղղությանը, առանձնապես որդեգրելով Շուխարդտի խաչավորման
տեսությունը, իսկ երկրորդների ազդեցությամբ նա հանգեց վուլգար

մատերիալիզմին: Հենց այդ դիրքերից ելնելով էլ նա ռևոլյուցիայից
անմիջապես հետո ծավալեց իր գործունեությունը: Հայտնի է, որ
սովետական կարգերի հաստատումից հետո մեր երկրում պայքար
ծավալվեց բուրժուական զաղափարախոսության դեմ. այդ պայքա-
րը, որի նպատակն էր բուրժուական զանազան իդեալիստական տե-
սությունների հերքումը և մարքսիզմի ներդրումը գիտության, հատ-
կապես հասարակական գիտությունների մեջ, որոշ դեպքերում հան-
գեց բուրժուական գիտության ժխտմանը, նրա նվաճումների քրն-
նադատական օգտագործման բացասմանը: Այսպես եղավ նաև
լեզվաբանության մեջ Ն. Յա. Մառի գլխավորությամբ: Նա, քննադա-
տելով բուրժուական լեզվաբանական զանազան ուղղությունները,
այդ քննադատությունը հասցրեց անցյալի ժառանգության բացար-
ձակ ժխտմանն ու նրա օգտագործման բացասմանը: Մյուս կողմից՝
ձգտելով հիմնադրել լեզվի մարքսիստական, ուսմունք, ներդնել
մարքսիզմը լեզվաբանության մեջ, նա ելնում էր մի կողմից՝ կուլ-
տուր-պատմական, մյուս կողմից՝ վուլգար մատերիալիստական
տեսություններից՝ մարքսիզմն էլ յուրացնելով վուլգար մատերիա-
լիզմի հայեցակետով: Ահա, տեսական այսպիսի դիրքավորումով
նա սկսեց մշակել իր «հաբեթաբանությունը», որ հետո կոչեց լեզվի
«նոր ուսմունք», հավաքելով իր շուրջը մի խումբ երիտասարդ լեզ-
վաբանների (մեծ մասամբ իր աշակերտներին), հնագետների, պատ-
մաբանների ու ազգագրագետների, որոնք զբաղվում էին հատկա-
պես Կովկասի հին ու նոր ժողովուրդների ու նրանց լեզուների
ուսումնասիրությամբ, և պայքար ծավալեց նաև Միության մեջ գոր-
ծող լեզվաբանական ավագ սերնդի ոչ միայն տեսական դրույթների,
այլև գործունեության դեմ: Կարճ ժամանակում նա ստացավ
մարքսիստական լեզվաբանական ուսմունքի՝ հիմնադրի համբավ,
և դրա հետևանքն այն եղավ, որ լեզվաբանության մեջ շատ շուտով
ոչ մարքսիստական լեզվաբանական ուղղությունների դեմ տարվող
պայքարը հիմնականում մղվում էր հենց «նոր ուսմունքի» դիրքե-
րից: Լեզվի «նոր ուսմունքը» առաջին հերթին Ն. Յա. Մառի ու նրա
աշակերտների կողմից հայտարարվում էր մարքսիստական, նույ-
նացվում էր մարքսիզմի հետ, իբրև նրա բաղադրիչը նույնիսկ, իսկ
սա էլ աստիճանաբար հանգեցրեց այն բանին, որ լեզվաբանության
մեջ հանուն մարքսիզմի մղվող պայքարը փոխարինվեց հանուն
«նոր ուսմունքի» ծավալված պայքարով՝ իր բոլոր հետևանքներով
հանդերձ: Այժմ, երբ այդ շրջանից մի քանի տասնամյակով հեռա-
ցել ենք արդեն, ինքնին անհրաժեշտ է դառնում հետադարձ քննա-

կան հայացքով պարզել այն պատճառները, որոնք ստեղծեցին այդպիսի վիճակ:

Մեր կարծիքով, առաջին և հիմնական գործոնը այդ շրջանի սոցիալ-պատմական պայմանների արտահայտությունը հանդիսացող ընդհանուր ձգտումն էր, գիտության, արվեստի, կուլտուրայի ու նույնիսկ կենցաղի մեջ նորը ստեղծելու և արմատավորելու պատմական անհրաժեշտությունը, և հենց այդ անհրաժեշտության թելադրանքով ծագած ու տիրապետող դարձած ընդհանուր ստեղծագործ ոգին: Սոցիալիստական ուղուցիտան, կործանելով կապիտալիստական հասարակարգը, վերացնելով բուրժուական հարաբերությունները մեր երկրում և նոր տնտեսական հարաբերություններ ստեղծելով, պահանջում էր ամենակարճ ժամանակում վերափոխել նաև գաղափարախոսությունը, կուլտուրան, կենցաղը: Անհրաժեշտ էր մարքս-լենինյան աշխարհայացքը դարձնել մասսաների սեփականությունը և արմատավորել բոլոր գիտությունների մեջ, ստեղծել նոր հասարակարգի պրոլետարական կուլտուրան ու արվեստը, վերակառուցել կենցաղը: Այս բոլորը հնարավոր էր իրականացնել հնի, ոչ հարազատի, խորթ գաղափարախոսության բացասմամբ միայն, իսկ սա իր հետ բերում էր զանազան ծայրահեղություններ: Սրանով է բացատրվում այն խիստ բացասական, կարելի է ասել՝ ծայրահեղ ժխտողական վերաբերմունքը, որ դրսևավորվեց քսանական թվականներին, անցյալի ժառանգության նկատմամբ գիտության, արվեստի ու կուլտուրայի գրեթե բոլոր բնագավառներում: Մարքսիզմ-լենինիզմի կլասիկները բազմիցս նշել են, որ սոցիալիստական կուլտուրան չի կարող չլուրացնել այն ամբողջ առաջավորն ու դրականը, որ ստեղծել է մարդկությունը իր ամբողջ պատմության ընթացքում: Այս սկզբունքի վրա է հիմնել իր վերաբերմունքը անցյալի ժառանգության նկատմամբ մեր հասարակությունը: Բայց այդ սկզբունքը կիրառելու համար անհրաժեշտ էր ունենալ, ստեղծել նորը, սոցիալիստականը և դրա սկզբունքներով գնահատել հինը: Ահա, այս նորի ստեղծման ճանապարհին երևան եկան սխալներ, ծայրահեղ «ձախություններ», որոնք, անշուշտ, վնասակար դեր խաղացին մեր իրականության մեջ: Այդպիսի սխալ, բացահայտ նիհիլիզմով բնորոշվող տենդենցներ երևան եկան թե՛ գիտության զանազան ճյուղերի (պատմագիտություն, գրականագիտություն, արվեստի տեսություն և այլն, և այլն), և թե՛ կուլտուրայի, արվեստի ու, նույնիսկ, կենցաղի մեջ:

Այդ նույնը բնորոշում է նաև լեզվաբանության զարգացման ընթացքը քսանական թվականներին:

Երկրորդ գործոնն այն էր, որ սովետական կարգերի հաստատումից անմիջապես հետո մեր երկրում գիտության գրեթե և ոչ մի բնագավառում էլ, բացառությամբ քաղաքատնտեսության ու փիլիսոփայության, չկային մարքսիզմին կատարելապես տիրապետող, հետևողականորեն մարքսիստ մասնագետներ: Նախառևոյուցիտն շրջանում դաստիարակված և բուրժուական գիտության այս կամ այն ուղղությանը հետևող այն առաջավոր ներկայացուցիչները, որոնք ուղուցիտայից հետո երեսները դարձրին դեպի մարքսիզմը և լծվեցին մարքսիզմը գիտության տվյալ ճյուղում կիրառելուն ու նոր, մարքսիստական ուղղություն ստեղծելուն, մարքս-լենինյան փիլիսոփայությունը յուրացնում էին մեծ մասամբ իրենց արդեն ձևավորված աշխարհայացքի պրիզմայով: Դա հանգեցնում էր այն բանին, որ նրանք յուրացնում էին ոչ թե մարքսիզմի ոգին, այլ արտաքին երևույթը միայն, և երբ մարքսիզմի այդպիսի ըմբռնումով փորձում էին կիրառել պատմական ու դիալեկտիկական մատերիալիզմը տվյալ գիտության մեջ, ապա հետևանքը լինում էր մարքսիզմի գոեհկացումն ու խեղաթյուրումը: Այլ կերպ ասած, այդ մասնագետների մեծագույն մասը, ազատագրված շինելով ոչ մարքսիստական շատ դրույթներից, մեխանիկորեն էր յուրացնում մարքսիզմը և մեխանիկորեն էլ այն գործադրում տվյալ բնագավառում: Սրանով պետք է բացատրել մի շարք գոեհիկ-սոցիոլոգիական ու մեխանիստական ուղղությունների երևան գալը սովետական գիտության, գրականության ու արվեստի մեջ՝ քսանական թվականներին: Դրանցից կարելի էր հիշել պրոլետ-կուլտականությունը՝ գրականագիտության, գրականության ու արվեստի մեջ, Պոկրովսկու ուղղությունը՝ պատմագիտության մեջ և այլն:

Վերջապես, կար նաև երրորդ, լեզվաբանությանը հատուկ գործոնը, որ նպաստում էր զարգացման այդ ընթացքին: Դա ոչ լեզվաբան գիտնականների, այդ թվում և իր ժամանակին մեծ համարում ունեցող ու որպես մարքսիստ ճանաչված փիլիսոփաների աշակցությունն էր: Ն. Յա. Մառի 20—30-ական թվականների աշխատությունները կարելի է բնորոշել մի ընդհանուր հատկանիշով՝ մարքսիստական ֆրազաբանությամբ: Նա այդ շրջանի իր բոլոր աշխատությունների մեջ հանդես էր գալիս մարքսիզմի անունից, հաճախ մարքսիզմի կլասիկներից մեջբերումներ կատարելով, և այդ ֆրազաբանությունները փորձում էր հիմնավորել լեզվաբա-

նական տվյալներով ու լեզվական փաստերով: Շատ ու շատ պատմաբաններ, ազգագրագետներ ու փիլիսոփաներ, որոնք չէին կարող մասնագիտորեն ստուգել նրա բերած լեզվական տվյալների և դրանց լեզվաբանական վերլուծությունների ու մեկնաբանությունների ճշտությունը, ընկալում էին միայն մարքսիստական թվացող ձևակերպումները, հայտարարություններն ու բացատրությունները և ընդունում էին «նոր ուսմունքը» իբրև իսկապես մարքսիստական տեսություն: Շատ փաստերից կարելի է իբրև առավել ցայտուն օրինակ հիշել Ա. Մ. Դեբորինի «Новое учение о языке и диалектический материализм» աշխատությունը¹, որի մեջ հեղինակն աշխատում է ապացուցել, թե Մաոի ուսմունքը մարքսիստական ուսմունք է, որ այդ ուսմունքի դրույթներով պետք է առաջնորդվի ոչ միայն լեզվաբանությունը, այլև ազգագրությունն ու պատմագիտությունը՝ հատկապես հասարակության պատմության հնագույն շրջանի ուսումնասիրության բնագավառում, մտածողության զարգացման պատմության ուսումնասիրությունը՝ փիլիսոփայության մեջ և այլն, և այլն: Բանն այնտեղ էր հասնում, որ ոմանք դիտում էին Մաոի ուսմունքը որպես մի տեսություն, որը «լրացնում է» մարքսիզմը և «հիմնավորում» պատմական ու դիալեկտիկական մատերիալիզմի որոշ դրույթներ: Ի վերջո, այդ ոչ լեզվաբան ջատագովների հետ միաբերան հանդես էին գալիս նաև Մաոի աշակերտներն ու հետևորդները, սրոնք կուրորեն կրկնում էին իրենց ուսուցչին և մարտականորեն պաշտպանում նրան: Այս երրորդ գործոնն էր պատճառը, որ լեզվաբանության մեջ այս ոչ մարքսիստական ուղղությունը շատ ավելի երկար ժամանակ իշխեց, քան բոլոր մյուս գիտությունների բնագավառում: Մյուս գիտությունների մեջ հանդես եկած գոեհիկ սոցիոլոգիզմը, մեխանիցիզմը և անցյալի ժառանգության նկատմամբ եղած նիհիլիզմը շատ շուտով Համկոմկուսի Կենտրոնական Կոմիտեի որոշումներով դատապարտվեցին, և սովետական գիտությունը կարողացավ անմիջապես ազատագրվել դրանցից: Քսանական թվականների վերջին և երեսունական թվականների առաջին կեսում արդեն դատապարտվել էին պրոլետ-կուլտականությունը, ՌԱՊՊականությունը, Պոկրովսկու ուղղությունը և այլն: Մինչդեռ լեզվաբանության մեջ այդ բանը տեղի չունեցավ: Մաոի տեսությունը մարքսիստական էր հոչակ-

¹ Сборник «Академия наук СССР академиком Н. Я. Марру», М.—Л., АН СССР, 1935, էջ 21—73:

վել արդեն և իբրև այդպիսին էլ նա անխոցելի ու անքննադատելի էր հայտարարված: Ճիշտ է, երեսունական թվականների սկզբներին որոշ շարժում ստեղծվեց Մաոի ուսմունքի դեմ, և մի խումբ երիտասարդ լեզվաբաններ որոշ բարձրացրին այդ ուսմունքի դեմ, բայց շարժումը շատ շուտով զսպվեց, ու օբյեկտիվորեն այնպես ստացվեց, որ դա էլ փաստորեն նպաստեց «նոր ուսմունքի» հեղինակի ու նրա կողմնակիցների դիրքերի առավել ամրացմանը: Այդ շարժման ամենացայտուն և համեմատաբար հզոր արտահայտությունը կարելի է համարել Բաքվի դիսկուսիան 1929 թվականին և 1932 թվականին հիմնադրված «Язык—Фронт» հանդեսի առաջին համարի հրատարակությունը: Բաքվի դիսկուսիայում Մաոի տեսության մի քանի կարևոր սկզբունքներ շատ խիստ քննադատության ենթարկվեցին մարքսիզմի դիրքերից, և Մաոը հարկադրված եղավ առանձին աշխատությամբ հանդես գալ այդ քննադատության առթիվ: Ինչ վերաբերում է «Язык—Фронт» լեզվաբանական հանդեսին, որ իր լույս տեսած միայն մեկ համարում խիստ հարձակում էր սկսել «նոր ուսմունքի» որոշ սկզբունքների դեմ, ապա՝ նա էլ Մաոի ու նրա կողմնակիցների ջանքերով անմիջապես փակվեց և խմբագրության կազմն ու նրա շուրջը համախմբված լեզվաբանները հայտարարվեցին ոչ մարքսիստներ ու հալածվեցին:

Այս բոլորը, ահա, հանգեցրին այն բանին, որ երեսունական թվականների առաջին կեսում արդեն Ն. Յա. Մաոի ուսմունքը պաշտոնական ճանաչում գտավ: Թե՛ լեզվաբանների հին սերնդի ներկայացուցիչները և թե՛ երիտասարդ, նոր աճող լեզվաբանները առանց այլևայլության Մաոի ու նրա հետևորդների կողմից բուրժուական լեզվաբանության հետևորդներ էին համարվում, եթե փորձում էին որևէ քննադատական խոսք ասել «նոր ուսմունքի» որևէ դրույթի մասին կամ հանդգնում էին պարզապես չհետևել այդ ուսմունքին: Պետք է նկատել, որ այդ բանում փոքր դեր չէր խաղում նաև Ն. Յա. Մաոի դիրքը. նա ՍՍՌՄ Գիտությունների ակադեմիայի փոխպրեզիդենտն էր: Այսպիսով, այս շրջանի վերջին տարիներում սովետական լեզվաբանության մեջ որոշակիորեն ուրվագծվում էին երեք հիմնական հոսանքներ. առաջինը և պաշտոնապես ճանաչվածն էր Ն. Յա. Մաոի ու նրա հետևորդների հոսանքը՝ իր «նոր ուսմունքով» և անցյալի ժառանգության նկատմամբ ժառողական վերաբերմունքով: Երկրորդն էր ձևավորվող, բայց արդեն որոշակի ուժ ներկայացնող հոսանքը՝ իր քննադատական վերաբերմունքով ինչպես բուրժուական լեզվաբանական ուղղությունների, այնպես

էլ «նոր ուսմունքի» նկատմամբ. այս հոսանքը ներկայացնում էին հիմնականում երիտասարդ, մարքսիզմ-լենինիզմով զինված շր- նորհալի լեզվաբանները (Ն. Դ. Պոլիվանով, Տ. Պ. Լոմտե, Ս. Դ. Կացնեխտն և այլք), որոնց միանում էին Ն. Յա. Մառի նախառե- լյուցիոն շրջանի մի քանի աշակերտներ և ավագ սերնդի այն ներ- կայացուցիչները, որոնք դեպի մարքսիզմն էին գալիս յուրովի, առանց «նոր ուսմունքի» հաղորդակից դառնալու կամ որոշ հար- ցերում միայն հարելով նրան (Լ. Ն. Շչերբա, Ի. Ի. Շոր, Վ. Վ. Վի- նոգրադով, Ա. Ս. Չիկոբավա, Գ. Ա. Ղափանցյան և այլք): Վերջա- պես, երրորդ հոսանքն էին ներկայացնում ավագ սերնդի առավել տարիքոտ ներկայացուցիչները, որոնք շարունակում էին իրենց գիտական ուսումնասիրությունները նախկին ուղղությամբ, առանց նոր որոնումների դիմելու (Գ. Ն. Ուշակով, Մ. Աբեղյան, Հ. Աճառ- յան և այլք): Այս իրադրությունների մեջ որոշ շահով մխիթարա- կանը այն էր, որ Ն. Յա. Մառը և նրա հետևորդները դեռևս հան- դուրժում էին իրենց շհետևորդների աշխատությունների հրատարա- կությունը, եթե դրանք ուղղակիորեն «նոր ուսմունքի» քննադատու- թյուն չէին պարունակում: Իսկ սա հնարավորություն էր տալիս մասնավորապես պատմա-համեմատական լեզվաբանության ներ- կայացուցիչներին՝ ոչ միայն արդյունավետ կերպով շարունակելու իրենց ուսումնասիրություններն այդ բնագավառում, այլև երիտա- սարդ մասնագետներ պատրաստել՝ այդ բնագավառում աշխատելու համար:

ԵՐԿՐՈՐԴ շՐՋԱՆ (1937 թ. մինչև 1950 թ. լեզվաբանական դիսկոլոգիան).—1936 թ. նոյեմբերին Սովետների VIII արտակարգ համագումարն ընդունեց ՍՍՌՄ նոր Կոնստիտուցիան, որի մեջ ար- ձանագրվեց սոցիալիզմի հաղթանակը մեր երկրում: Այդ նշանա- կում է, թե Սովետական Միության մեջ հասարակության տնտեսա- կան հիմքն էին կազմում արդեն սոցիալիստական տնտեսաձևն ու արտադրության միջոցների սոցիալիստական սեփականությունը: Միևնույն ժամանակ դա նշանակում էր հակամարտ դասակարգերի վերացում մեր երկրում, մի շարք ժողովուրդների տնտեսական հե- տամնացության վերացում, կուլտուրական հեղափոխության իրա- կանացում: Մեր երկրի բազմաթիվ ժողովուրդների կյանքում բաց- վում էր նոր դարաշրջան՝ սոցիալիզմի դարաշրջանը: Այս նոր դա- րաշրջանը նոր էլ խնդիրներ էր առաջադրում գիտությունը, այդ թվում և լեզվաբանությունը:

Այս շրջանի սկզբում սովետական լեզվաբանությունը հիմնա-

կանում արդեն ավարտել էր ինչպես բազմաթիվ լեզուների այբու- բենների ստեղծման ու մշակման, այնպես էլ մայրենի լեզվի բերա- կանությունից դպրոցական դասագրքերի ստեղծման աշխատանքները: Այժմ լեզվաբանության առջև կանգնած կարևորագույն գործնական խնդիրներից մեկը բուհական դասագրքերի ստեղծումն էր: Եվ այս շրջանում իրոք կազմվում են բազմաթիվ դասագրքեր թե՛ ռուսե- բեն և թե՛ ազգային լեզուներով, ինչպես առանձին լեզուների բու- հական դասընթացների, այնպես էլ ընդհանուր լեզվաբանական առարկաների համար: Իհարկե, այդ տիպի աշխատանքներ կա- տարվել էին նաև առաջին շրջանում, բայց դրանք առանձին երե- վույթներ էին. մինչդեռ այս շրջանում դա լեզվաբանության կարե- վորագույն բնագավառներից մեկն է դառնում: Հստ որում, այս շրջանի համար բնորոշ է միևնույն լեզվի, կամ լեզվաբանական միևնույն առարկայի դասագրքերի սկզբունքների ոչ միասնականու- թյունը: Ինչպես վերը նշեցինք, երեսուցական թվականների առաջին կեսում հիմնականում լուծվեց դպրոցական քերականություններ ստեղծելու խնդիրը: Այդ դասագրքերը՝ զանազան լեզուների համար, հիմնականում կառուցված էին միասնական տեսական սկզբունք- ներով, ըստ որում բոլորի համար էլ իբրև օրինակ էին ծառայում առաջին հերթին ռուսների դպրոցական դասագրքերը՝ Լ. Վ. Շչեր- բայի խմբագրությամբ, իսկ քերականագիտական հին տրադիցիա- ներ ունեցող ժողովուրդների մոտ դրան միանում էր նաև այդ տրա- դիցիայի օգտագործումը: Բուհական դասագրքերը, սակայն, այդ- պիսի միասնական սկզբունքներ չէին ներկայացնում, այլ արտա- ցույում են մեր լեզվաբանության մեջ գոյություն ունեցող տարասե- ոությունը, զանազան ուղղությունների առկայությունը: Այդ են ապացուցում, օրինակ, ընդհանուր լեզվաբանության բուհական դասընթացի համար հրատարակված դասագրքերն ու ձեռնարկները. մի կողմից՝ հրապարակի վրա էին Ն. Յա. Մառի հաբեթաբանության դասընթացը¹, որ ներկայացնում էր Բաբելում կարդացած նրա դա- սախոսությունները, Ի. Ի. Մեշչանինովի «Новое учение о языке», «Общее языкознание» աշխատությունները², որոնք հիմնված էին

¹ Я. Н. Марр, Яфетическая теория, Баку, 1927 (կազմի վրա՝ 1928).
² И. И. Мещанинов. Введение в яфетидологию, Л., 1929; Новое уче- ние о языке, Л., 1936; К вопросу о стадильности в письме и языке, Л., 1931; Общее языкознание, Л., 1940 և այլն.

գլխավորապես «նոր ուսմունքի» սկզբունքների վրա, մյուս կողմից՝ այս շրջանի վերջում լույս տեսած Ռ. Ի. Շորի և Ն. Ս. Չեմոզանովի «Введение в языкознание»-ն, որ «նոր ուսմունքի» որոշ գրույթները որդեգրելով, շատ հերքերում էլ վճռականորեն հեռանում էր նրանցից, Ա. Ս. Չիկոբավաժի՝ լեզվաբանության ներածության և ընդհանուր լեզվաբանության դասընթացների դասագրքերը՝ վրացերեն լեզվով, որոնք իրենց սկզբունքներով որոշակիորեն հակադրում էին «նոր ուսմունքի» գրույթներին, Գ. Ղափանցյանի «Ընդհանուր լեզվաբանությունը» հայերեն լեզվով, որի մեջ հեղինակը որոշ հարցերում պաշտպանելով Ն. Յա. Մառի տեսակետները (լեզուների խաչավորում, լեզուն որպես վերնաշնթրային երևույթ և այլն), շատ հարցերում էլ ուղղակիորեն հակադրում էր «նոր ուսմունքի» սկզբունքներին և իրավացիորեն քննադատում դրանք և այլն, և այլն: Այդպիսի վիճակ էին ներկայացնում նաև առանձին լեզուների պատմության ու տեսության դասագրքերը. հիշենք թեև ուղ հայերենի բուհական դասագրքերից Մ. Աբեղյանի «Հայոց լեզվի տեսությունը», որը լույս է տեսել առաջին շրջանի վերջերին (1931 թ.) և Գ. Սևակի «Ժամանակակից հայոց լեզվի տեսությունը», առաջինը՝ հոգեբանական ինդիվիդուալիզմի սկզբունքներով կառուցված, երկրորդը՝ հիմնականում ճիշտ, մարքսիստական հիմունքներով շարադրված, որոշ չափով միայն «նոր ուսմունքին» մատուցված տուրքով՝ հավուր պատշաճի, Ա. Ղարիբյանի «Հայոց լեզվի պատմության ուսումնասիրության ներածությունը», որ ամբողջապես կառուցված է «նոր ուսմունքի» հիմունքներով ու ներկայացնում է «նոր ուսմունքի» հետևորդների ուղարամական հոսանքը, և Հ. Աճառյանի «Հայոց լեզվի պատմությունը», որ հիմնված էր պատմա-համեմատական լեզվաբանության նվաճումների վրա և այլն: Այսպիսի հակասական սկզբունքներով կառուցված դասագրքերն, իհարկե, ստեղծում էին զգալի դժվարություններ երիտասարդ մասնագետների պատրաստման գործում, բայց դա ուներ նաև այն առավելությունը, որ հնարավորություն էր տալիս ուսանողներին՝ բացի «նոր ուսմունքից», լեզվաբանական ուրիշ ուղղությունների էլ ի մոտ ծանոթանալու:

Եթե առաջին շրջանում սովետական լեզվաբանությունը զբաղված էր բազմաթիվ լեզուների համար այբուբեններ ստեղծելու հրատապ գործով և այդ լեզուների նկարագրական քերականություններ կազմելով, որպես իր առաջնահերթ խնդրով, ապա այս շրջանում արդեն մեծ մասշտաբներով աշխատանք է ծավալում մեր

Միության բազմաթիվ լեզուների գիտական ուսումնասիրության ուղղությամբ: Յյս տեսակետից առաջնահերթ կարևորություն են ստանում գրական լեզուների պատմության ու տեսության հարցերը, և, բնականաբար, առաջին հերթին ուշադրության կենտրոնում կանգնում է ուսաց լեզուն: Սովետական կարգերում ուսաց լեզվի հասարակական դերի բարձրացումն ու ընդարձակումը, նրա, որպես բարձր զարգացած լեզվի՝ նոր հասարակական պայմաններում առավել մշակումն ու կատարելագործումը մեծ թափ հաղորդեցին ուսագիտությանը: Անհրաժեշտություն առաջացավ էլ ավելի բազմակողմանիորեն ուսումնասիրել այդ լեզուն, իսկ սա էլ պայմանավորեց սովետական լեզվաբանության որոշ ճյուղերի զարգացումը կամ նոր ճյուղերի առաջացումը: Այդ նոր զարգացող լեզվաբանական ճյուղերից կարևորագույնն էր գրական լեզվի պատմությունը: Մինչևևսուրջին շրջանում էլ, իհարկե, այս կամ այն չափով շոշափվել են գրական լեզուների պատմության հարցերը լեզվաբանության մեջ, առանձին երևույթներ ուսումնասիրության առարկա էլ են դարձել: Բայց սովետական կարգերի հիմնադրումից հետո և հատկապես այս շրջանում գրական լեզվի պատմության ուսումնասիրությունը ձևավորվեց որպես լեզվաբանական ուսումնասիրությունների հատուկ ճյուղ: Այս բնագավառում նշանավոր գործ են կատարել Վ. Վ. Վինոգրադովը, Ս. Պ. Օբնորսկին, Լ. Ա. Բուլախովսկին, Լ. Պ. Յակուբինսկին, Գ. Օ. Վինոկուրը՝ ուսերենի և սլավոնական ուրիշ լեզուների պատմության բնագավառում, Ա. Ս. Չիկոբավան, Գ. Ս. Ախվիզդիանին, Ա. Շանիձեն վրացերենի պատմության ուսումնասիրության բնագավառում, Հ. Աճառյանը, Գ. Ղափանցյանը և ուրիշներ՝ հայերենի պատմության ուսումնասիրության բնագավառում և այլն, և այլն: Նկատելի է, որ ուսերենի պատմությանը նվիրված ուսումնասիրությունների մեջ ավելի միասնականություն է դրսևորվում, քան մյուս բնագավառներում. ըստ որում Ն. Յա. Մառի ուսմունքը գրեթե չկարողացավ թափանցել ուսագիտության բնագավառը: Լեզուների պատմության ուսումնասիրության հետ միաժամանակ հոկայական աշխատանք է ծավալվում ժամանակակից գրական լեզուների ուսումնասիրության ուղղությամբ: Ինչպես ուսերենը, այնպես էլ մյուս ազգային գրական

¹ Այս բանում, ի թիվս ուրիշ հանգամանքների, չի կարելի չնշել հոկայական դերը ուս լեզվաբանության հոգի տրադիցիայի, որի դեմ Ն. Յա. Մառն ու իր հետևորդներն անզոր էին:

լեզուների սովետական փուլի ուսումնասիրությունը առանձնակի կարևորություն է ստանում այս և հետագա շրջանում: Եվ այս շրջանում է, որ հրատարակվում են այնպիսի նշանավոր աշխատություններ, ինչպիսիք են Վ. Վ. Վինոգրադովի «Современный русский язык»-ը, վրացերենի, ուկրաիներենի, հայերենի և շատ ուրիշ ժամանակակից լեզուների «տեսությունները»:

Այս շրջանում շարունակվում են պատմա-համեմատական ուսումնասիրությունները մի շարք լեզվաընտանիքների բնագավառներում. առանձնապես նշելի են. Ա. Մ. Սելիշևի, Ն. Ն. Գուսնովի, Գ. Ի. Իլյինսկու և այլոց աշխատությունները սլավոնական լեզուների, Ն. Կ. Դմիտրևի, Վ. Ա. Գորդլևսկու և ուրիշների ուսումնասիրությունները՝ թյուրքական լեզուների, Գ. Բ. Բուբրիխի աշխատությունները ուգրո-ֆիննական լեզուների համեմատական ուսումնասիրության բնագավառում: Եվ շնայած այդ հետազոտությունների արդյունավետությանն ու գիտական մեծ արժեքին, այս շրջանի վերջին հինգ տարիներում ստեղծվեց այնպիսի դրություն, որ որոշ ժամանակ այդ կարգի ուսումնասիրությունները բացասական վերաբերմունքի արժանացան և մերժվեցին:

Ինչպես առաջին, այնպես էլ այս շրջանում արդյունավետ կերպով զարգանում է բարբառագիտությունը, նոր թափ են ստանում բարբառագիտական աշխատանքները, ըստ որում «Նոր ուսմունքը» ևս խրախուսում էր այդ կարգի հետազոտությունները:

Նոր փուլի մեջ է մտնում բառարանագրությունը: Հսկայական աշխատանքներ են ծավալվում մեծ բառարանների կազմության ուղղությամբ: Մի շարք լեզուների համար այդ աշխատանքները սկսված էին դեռ շատ վաղուց, և այս շրջանում դրանք ավարտվեցին ու պսակվեցին բառարանների հրատարակությամբ: Դրանցից առանձնապես հիշատակելի են Գ. Ն. Ուշակովի խմբագրությամբ լույս տեսած ռուսերենի քառահատոր բացատրական բառարանը (1935—1940), Ստ. Մալխասյանցի՝ հայերենի քառահատոր բացատրական բառարանը (1941—1944), ինչպես և վրացերենի ակադեմիական բազմահատոր բառարանը, որի հրատարակությունը դեռ ավարտված չէ: Մեծ աշխատանք է ծավալվում նաև ուրիշ լեզուների այդ տիպի բառարաններ կազմելու ուղղությամբ: Սկսվում է ռուսերենի բազմահատոր ակադեմիական բառարանի հրատարակությունը: Պատրաստվում են երկլեզվյան (ռուսերենից—ազգային լեզուներ և հակառակը) մեծածավալ, բազմահատոր բառարաններ, որոնցից մի քանիսը հրատարակվում են այս շրջանում: Լույս են

տեսնում բազմաթիվ բառարաններ (թարգմանական՝ ազգային լեզվից ռուսերեն, կամ՝ բացատրական) բազմաթիվ այնպիսի լեզուների, որոնք միայն ռուսացիայից հետո էին գիր ստացել:

Տեսական լեզվաբանության բնագավառում այս շրջանը բնորոշվում է մի քանի կարևոր պրոբլեմների առաջադամբ և դրանց ուսումնասիրությանը նվիրված մենագրությունների երևան գալով: Այդ պրոբլեմներից առավել մեծ կարևորություն է ստանում լեզվի և հասարակության կապի հարցը: Դեռևս Ն. Յա. Մառը քանակական թվականներին ճիշտ կերպով սովետական լեզվաբանության ուշադրությունը հրավիրեց այդ պրոբլեմի վրա: Այդ պրոբլեմի ուսումնասիրության բնագավառում, բացի Ն. Յա. Մառից, նշանավոր գործ են կատարել Ռ. Օ. Շորը, Ե. Դ. Պոլիվանովը, Մ. Ն. Պետերսոնը և ուրիշներ: Ըստ որում, այս ուղղությամբ տարվող ուսումնասիրությունները, շնայած իրենց լուրջ հետաքրքրությանը, ունեն նաև խիստ արատավոր դրույթներ: Կարևոր նվաճում էր լեզվաբանության մեջ այս կարգի աշխատությունների նորությունը, որ բնորոշվում էր մի կողմից՝ ուսումնասիրվող լեզուների շրջանակների հսկայական ընդարձակումով (զրավոր և անգիր լեզուներ, մեռած և կենդանի լեզուներ, հատկապես Առաջավոր Ասիայի լեզուները) և լեզվական նյութի ուսումնասիրությունը նյութական կուլտուրայի պատմության հետ առնչելը: Այս դրականը, սակայն, կորցնում էր արժեքը, երբ որոշ ճիշտ տվյալների հետ բազմաթիվ տվյալներ էլ արհեստականորեն հորինվում ու վերագրվում էին լեզուներին, իսկ դրանց հիման վրա էլ կառուցվում մտացածին տեսություններ: Այս բանը բնորոշ էր հատկապես Ն. Յա. Մառի դպրոցին:

Կարևոր պրոբլեմներից էր լեզվի և մտածողության հարցը, որ Մառը համարում էր լեզվաբանության ամենաէական խնդիրներից մեկը: Սրա հետ սերտորեն կապվում էր լեզվի ու մտածողության ստադիալականության հարցը, որ «Նոր ուսմունքի» հիմքն էր կազմում: Չնայած առաջադրվող հարցերի կարևորությանն ու հետաքրքրությանը, այս խնդիրներին նվիրված հետազոտությունները հիմնված են «Նոր ուսմունքի» դրույթների վրա և այդ պատճառով էլ տառապում են նրան հատուկ հայեցողականությամբ ու վուլգար մատերիալիզմով: Առավել հաջողված ուսումնասիրությունը, որը, շնայած որոշ սխալ դրույթների, մեծ արժեք է ներկայացնում, Ի. Ի. Մեշչանինովի «Члены предложения и части речи» աշխատությունն է, որը լուրջ ներդրում կարելի է համարել սովետական լեզվաբանության քանձարանում:

Տեսական պայքարն այս շրջանում շարունակվում է նույն հոսանքների միջև, բայց ուժերի խիստ անհավասարակշռության պայմաններում: Ավագագույն սերնդի այն ներկայացուցիչները, որոնք ներկայացնում էին դասական լեզվաբանության զանազան ուղղությունները, ասպարեզից դուրս էին եկել արդեն նախորդ շրջանում կամ դուրս էին գալիս այս շրջանում: Այն մի քանի ներկայացուցիչները, որոնք դեռևս կենդանի էին, առանձնապես մեծ ուժ չէին ներկայացնում, մանավանդ, որ նրանք հասակի պատճառով արդեն մեկուսացած էին և հնարավորություն չունեին մասնակցելու լեզվաբանության առօրյա աշխատանքներին, եռացող կյանքին: Ավագ սերնդի ներկայացուցիչներից նրանք, որ դեռ համեմատաբար երիտասարդ էին, ցած էին դրել զենքերը և զբաղվում էին գիտական-մանկավարժական աշխատանքներով, առանց այլևս պայքարի մեջ մտնելու: Ըստ որում, նրանց մի մասը եթե ոչ ամբողջությամբ, ապա մասամբ ընդունում էր «նոր ուսմունքը» (Ռ. Օ. Շորը, Գ. Ղափանցյանը և այլք): Վերջապես, այն երիտասարդ լեզվաբանները, որոնք Ն. Յա. Մառի ուսմունքի քննադատության դրոշմ էին բարձրացրել, վճռական հարված էին ստացել և լուծված դատապարտվել: Այսպիսով, ըստ էության ասպարեզը մնացել էր «նոր ուսմունքի» հետևորդներին ու կողմնակիցներին: Ն. Յա. Մառի մահվանից հետո սովետական լեզվաբանության ղեկավար պոստերը զբաղեցրին նրա աշակերտներն ու հետևորդները. ՍՍՌՄ ԳԱ Լեզվի և Գրականության բաժանմունքի ակադեմիկոս քարտուղարը և Լեզվի ու մտածողության ինստիտուտի գիրեկտորն էր Ի. Ի. Մեշչանինովը, որ և փաստորեն սովետական լեզվաբանության ղեկավարությունն էր իրականացնում: Տեղերում էլ լեզվաբանական մարմինների ղեկավարները մեծ մասամբ Մառի աշակերտները կամ հետևորդներն էին: Այս հանգամանքը հնարավորություն էր տալիս «նոր ուսմունքի» կողմնակիցներին՝ կազմակերպված ձևով և ամբողջ ճակատով հարձակման անցնել բոլոր այն կարծիքների ու տեսակետների դեմ, որոնք հակադրվում էին «նոր ուսմունքի» դրույթներին: Վերջապես, որոշ տեսակետից «նոր ուսմունքի» դիրքերի ամրապնդմանը և պատմա-համեմատական լեզվաբանության վարկաբեկմանը նպաստեց նաև երկրորդ համաշխարհային պատերազմը: Գերմանական ֆաշիզմն իր ողջ գործունեությունը տեսականորեն ուզում էր «արդարացնել» ռասայական տեսությամբ. ռասիզմը գերմանական ֆաշիզմի դավանանքը դարձավ, իսկ ռասայական տեսությունը հիմնավորելու համար էլ օգտագործվում էին պատմա-համեմատական

լեզվաբանության տվյալները՝ ռասիստական մեկնաբանությամբ: Մառի հետևորդների համար կարևորը այն չէր, թե ռասիզմի «տեսաբանները» ինչպե՛ս են օգտագործում այդ տվյալները, այլ այն, որ օգտագործում են դրանք: Եվ, ահա, սա բավական էր, որպեսզի նրանք պատմա-համեմատական լեզվաբանությունն ամբողջապես հայտարարեն ռասայական տեսությունը ծառայող գիտություն և նույնիսկ պատմա-համեմատական մեթոդը հռչակեն իբրև բուրժուական մեթոդ: Այս բոլորի հետևանքը եղավ այն, որ «նոր ուսմունքը» աստիճանաբար դարձավ բացարձակորեն անքննադատելի, իսկ նրան հակադրվելը՝ քաղաքական հանցագործություն, այսինքն՝ իրականություն դարձավ հենց այն, որին ձգտում էին Մառի հետևորդները, բայց ոչ ինքը՝ Մառը: Բայց սա էլ, իր հերթին, անխուսափելիորեն տանում էր դեպի իր բացասումը: Մառի ուսմունքը վերածվեց դոգմայի, դարձավ պաշտամունք, դադարելով ստեղծագործական գիտություն լինելուց: Չնայած իր ոչ մարքսիստական դրույթներին, Ն. Յա. Մառը ձգտում էր ստեղծագործական ոգի հաղորդել սովետական լեզվաբանությանը, նորանոր պրոբլեմներ էր առաջ քաշում և ընդարձակում լեզվաբանական ուսումնասիրության ոլորտները: Իսկ նրա հետևորդները, որոնց զգալի մեծամասնությունը գիտական ունակությունների տեսակետից միջակությունների մի զանգված էր ներկայացնում, ֆետիշացնում էին «նոր ուսմունքի» դրույթները, և դրանց ամենաթույլ քննադատությունն անգամ ոտնձգություն համարում մարքսիզմի դեմ, սովետական գիտության դեմ, պարտիայի գաղափարական սկզբունքների դեմ: «Նոր ուսմունքի» այն ներկայացուցիչներն էլ, որոնք ստեղծագործական միտք ունեին, այդ հոծ զանգվածի ճնշման տակ հարկադրված էին հետևել այդ ընդհանուր հոսանքին: Այսպիսով, պատերազմի ժամանակ և պատերազմից հետո «նոր ուսմունքը» հաղթականորեն նվաճեց բոլոր բարձունքները: Այժմ արդեն այդ ուսմունքի ներկայացուցիչները դիմեցին առավել վճռական միջոցառումներին՝ սովետական լեզվաբանության բնագավառում բացարձակ տիրապետության հասնելու և բոլոր կարգի հակառակորդներին ծնկի բերելու համար: Այս տեսակետից նշանակալից էին միութենական մամուլում իրար ետևից լույս տեսած հոդվածները, որոնք դատապարտում էին Մառի ուսմունքից կատարվող ամեն մի շեղում, իսկ նրանց, որոնք դեռ չէին ընդունում կամ լիովին, «հետևողականորեն», իսկ այդ նշանակում էր՝ ստրկամտորեն, չէին հետևում այդ ուսմունքին, հայտարարում էին բուրժուական գիտության ներկա-

յացուցիչներ, իսկ որոշ դեպքերում էլ գիտական մեղադրանքը պարզապես փոխարինում էին քաղաքական մեղադրանքով: Շուտով (1948 թ.) ՍՍՌՄ Բարձրագույն կրթութեան մինիստրության կողմից և ՍՍՌՄ Գիտությունների ակադեմիայի նախագահությունը հատուկ որոշմամբ «նոր ուսմունքի» հետ շտանգովոր ամեն մի հետազոտություն արգելեցին: Բարձրագույն կրթության մինիստրության հատուկ հրամանով, որ բխում էր այդ որոշումից, «Լեզվաբանության ներածություն» և «Հնդհանուր լեզվաբանություն» դասընթացները փոխարինվեցին «Լեզվի նոր ուսմունքով»: Ամեն ինչ կարծես արված էր արդեն. մնում էր միայն «հաշիվ տեսներ» նոր ուսմունքի մի քանի հակառակորդների հետ: Բայց իրականում այդպես չէր. «նոր ուսմունքի» հետևորդներն էլ միասնական չէին: Պատմությունից, հայտնի է, որ ամեն մի գավառանք, դոգմայի վերածված ամեն մի ուսմունք իր մեջ կրում է հերձվածողության սաղմերը: Այդպես էր նաև այս դեպքում: «Նոր ուսմունքը» վերածվեց դոգմայի, իսկ սա էլ առաջ բերեց տարբեր հոսանքներ հենց այդ ուսմունքի հետևորդների մեջ: Ոմանք մի քանի հարցերում հետևելով Ն. Յա. Մառին, նահանջում էին մի քանի սկզբունքային դրույթներից և լուծության մատնում դրանք կամ պարզապես հրաժարվում դրանցից. այդպիսի դիրքավորումը բնորոշ էր Ի. Ի. Մեշչանինովին և Լենինգրադի լեզվաբանների ճնշող մեծամասնությանը. ոմանք, ընդունելով Ն. Յա. Մառի որոշ դրույթները, փորձում էին մոտեցնել դրանք մարքսիզմին և հարկադրված էին վերանայել այդ դրույթները մարքսիզմ-լենինիզմի հիմունքներով. այդ գիծն էին ներկայացնում Մոսկվայի լեզվաբաններից ոմանք (Ա. Ա. Ռեֆորմատսկի, Գ. Վ. Բուրբիխ և այլք) և տարբեր ռեսպուբլիկաների մի քանի լեզվաբաններ: Ստեղծված պայմաններում ուժեղ հոսանքը ներկայացնում էր ուղղափառ մառականությունը. այս հոսանքը 1948—50 թթ. գլխավորվում էր ՍՍՌՄ ԳԱ Լեզվաբանության ինստիտուտի կողմից, որի փաստական ղեկավարն էր Գ. Պ. Սերգուլենկոն. ազգային ռեսպուբլիկաների մեծագույն մասում այդ հոսանքը ներկայացնում էին լեզվաբանական ինստիտուտների ղեկավարները: Այս հոսանքի ներկայացուցիչները շուտով կարողացան շեղոքացնել Մառի ուսմունքի հակառակորդներին և հեռացնել ասպարեզից. Մոսկվայում, Համալսարանի ֆիլոլոգիական ֆակուլտետի ղեկանի պաշտոնից հեռացվեց ակ. Վ. Վ. Վինոգրադովը և մի ժողովում ստիպված ևղավ հայտարարել, որ ինքը ցած է դնում գեները և անձնատուր է

լինում¹: Հայաստանում 1949 թ. Համալսարանից հեռացվեցին Հ. Աճառյանը և Գ. Ղափանցյանը. նույնպիսի միջոցառումների դիմեցին նաև ուրիշ ռեսպուբլիկաներում: Մնում էին միայն Վրաստանի մի քանի լեզվաբանները, որոնք Ա. Ս. Չիկոբավայի գլխավորությամբ դեռ շարունակում էին դիմադրել մառականների արշավանքին: 1950 թ. հունվարին Մոսկվայում տեղի ունեցավ Ն. Յ. Մառի մահվան 15-ամյակին նվիրված հանդիսավոր նիստ և գիտական սեսիա՝ համամիութենական մասշտաբով: Թե՛ հանդիսավոր նիստը և թե՛ գիտական սեսիան անցան «չախջախել բոլոր հակամառական շեղումներն ու տենդենցները» նշանաբանով: Մի ամիս հետո, 1950 թ. փետրվարին, ՍՍՌՄ Գիտությունների ակադեմիայի նախագահությունը հրավիրեց հատուկ փակ խորհրդակցություն: Խորհրդակցության նպատակն էր միջոցառումներ մշակել սովետական լեզվաբանության հետագա զարգացման, լեզվաբանության բնագավառում հակամարքսիստական, իսկ դա նշանակում էր՝ հակամառական, տենդենցներին ջախջախել հարված հասցնելու և արմատախիլ անելու նպատակով: Խորհրդակցությանը մասնակցում էին քսաներկու հոգի, Հայաստանից մասնակցում էին տողերիս գրողը և Ա. Ղարիբյանը: Ինչպես ցույց տվեց խորհրդակցությունը, նրա մասնակիցները ներկայացնում էին երկու հոսանք, այսպես կոչված՝ ուղղափառ մառականների և սրանց կողմից նահանջողական հորջորջված, բայց իրականում ստեղծագործական մառիզմի հոսանքները. այս երկրորդ հոսանքը ներկայացնում էին Լենինգրադի երկու ներկայացուցիչները, որոնք հետևում էին ակ. Ի. Ի. Մեշչանինովի գծին (վերջինս խորհրդակցությանը չէր մասնակցում), պրոֆ. Ն. Ս. Չեմոզանովը և տողերիս գրողը²: Այս հոսանքի ներկայացուցիչ-

¹ Մոսկվայում լինելով այդ օրերին, ուսուցիչ Ռաֆայել Մելքոնյանի հետ ներկա եմ եղել մի ժողովի և հիշում եմ հետևյալը. իր ելույթի մեջ մի լեզվաբան պատմեց, որ Մառի աշխատություններից մեկում խոսվում է Օվկիանիայի ցեղերի այսպիսի մի սովորության մասին. երբ կովի մեջ որևէ մեկը գերի է բնկնում թշամու ձեռքը, պարտավոր է նստել թշամու նավակը և երգել նրա երգը, որպես պարտության խոստովանություն: «Ես նստում եմ Մառի նավակը և կաշխատեմ երգել նրա երգը», — ասաց այդ լեզվաբանը, և դրանով ավարտեց իր ելույթը:

² Այդ դիրքավորումը իր որոշակի արտահայտությունն է գտել 1949 թ. լույս տեսած մեր «Լեզվաբանության ներածություն» աշխատության մեջ, որտեղ մենք հիմնականում հետևել ենք Ի. Ի. Մեշչանինովին, որոշ հարցերում՝ Ռ. Օ. Շորին ու Ն. Գ. Պոլիվանովին, իսկ շատ հարցերում էլ ցուցաբերել ինքնուրույն մոտեցում: (Լեզուների համամասնակցություն, ստադիալականություն և այլն):

ները համաձայն էին Ի. Ի. Մեղանինովի այն հայտարարությանը, որ Մառի ուսմունքի որոշ դրույթներ մեռյալ կետի վրա են մնացել և գիտականորեն չեն էլ արդարանում (օրինակ՝ էլեմենտների տեսությունը) և, հետևաբար, դրանցից պետք է հրաժարվել: Հակառակ հոսանքը, որ ներկայացնում էր ճնշող մեծամասնությունը և զբաղավորվում էր Գ. Պ. Սերգյուչենկոյի, Ց. Պ. Ֆիլինի (վերջինս Լենինգրադից փոխադրվել էր Մոսկվա) և Ա. Ս. Ղարբյանի կողմից, մեղադրում էր Ի. Ի. Մեղանինովին և մյուսներին «նոր ուսմունքից» հրաժարվելու և այն ուղիղի ենթարկելու մեջ: Հատկապես խստորեն մեղադրվում էր Ի. Ի. Մեղանինովի այն արտահայտությունը, թե վերջին տարիներում «նոր ուսմունքի» որոշ սկզբունքներ դոփում են իրենց տեղում: Այդ մեծամասնության գիծը պաշտպանություն էր գտնում վերադաս մարմիններում: Խորհրդակցության ընդունած բանաձևում, որ, այնուամենայնիվ, անցավ միաձայն, պահանջվում էր. ա) վերացնել հակամատականության վերջին հենարանը, գրավել հակառակորդի վերջին ամրոցը, որ վերաբերում էր Վրաստանի լեզվաբանությանը, բ) Լենինգրադի (Ի. Ի. Մեղանինովի ու նրա կողմնակիցների) «նետած մառյան դրոշը» բարձրացնել Մոսկվայում, որ նշանակում էր մեկուսացնել Ի. Ի. Մեղանինովին լեզվաբանության ղեկավարման գործից, և գ) Մառի ուսմունքը դնել նաև դպրոցական քերականությունների հիմքում և արմատապես վերափոխել մայրենի լեզուների ուսուցումը դպրոցում՝ «նոր ուսմունքի» համապատասխան:

Այս երեք խնդիրները ի կատար ածելու համար բանաձևում նրշվում էին զանազան միջոցառումներ: Սպասվում էր, որ խորհրդակցության նյութերի հիման վրա վերադաս մարմինները համապատասխան որոշում կընդունեն: Բայց սպասածին հակառակը եղավ: Նույն թվականի մարտին Ա. Ս. Չիկոբավայի բողոքը հասավ ՍՄԿՊ Կենտրոնական Կոմիտեին: 1950 թ. մայիսի 20-ին Ա. Ս. Չիկոբավայի հողվածով «Պրավդա» թերթի էջերում բացվեց ազատ լեզվաբանական դիսկուսիա, որի նպատակն էր հանել սովետական լեզվաբանությունը լճացման վիճակից: Դիսկուսիան տևեց մինչև հունիսի 20-ը, երբ «Պրավդա»-ում հրապարակվեց Ստալինի հողվածը, որի մեջ հիմնովին քննադատվում էին «նոր ուսմունքի» հիմնական դրույթները, մինչև այդ դիսկուսիան մարքսիստական լեզվաբանության հիմնադիր համարված Ն. Յա. Մառը որակվում էր որպես մարքսիզմը գոհակացնող, նրա հետևորդների ստեղծած վիճակը՝ բնորոշվում որպես արակչեկյան ուժիմ: Սկսվեց պայքարը

Մառի ուսմունքի դեմ, այդ ուսմունքից սովետական լեզվաբանությունն ազատագրելու համար: Սովետական լեզվաբանությունը մտավ զարգացման նոր հունի մեջ:

Ս Ե Բ Ե Դ Գ Զ Է Ը Թ Կ Ա (1950 թ. հունիսից մինչև այժմ): Արակչեկյան ուժիմի վերացումը և «նոր ուսմունքից» հրաժարվելը անխաբիթաց հնարավորություններ ստեղծեցին սովետական լեզվաբանության զարգացման համար: Դիսկուսիայի ընթացքում ճիշտ կերպով քննադատվեցին «նոր ուսմունքի» հիմնական դրույթները: Դրա հետ միասին, Մարքսի, Էնգելսի, Լենինի ասույթների հիման վրա ճիշտ լուծում ստացան լեզվաբանության կարևորագույն տեսական խնդիրները: Ճիշտ է, Ստալինի «Մարքսիզմը և լեզվաբանության հարցերը» աշխատության հրապարակումով մի դոգմատիկ ուսմունքին փոխարինելու էր գալիս մի ուրիշը, այսպես կոչված «ստալինյան լեզվաբանական ուսմունքը», որ կարող էր դարձյալ լճացման հասցնել և փակուղու առջև կանգնեցնել մեր գիտությունը՝ անհատի պաշտամունքի պայմաններում, եթե այդ պաշտամունքը չվերացվեր: Բայց, ինչ էլ որ լինի, «նոր ուսմունքի» տիրապետությունից ազատագրվելը վճռական բեկում էր լեզվաբանության մեջ, և դժվար է գերազնահատել այդ բեկման նշանակությունը մեր գիտության համար:

Այս շրջանի առաջին տարիներում գործնական տեսակետից խիստ կարևոր, առաջնահերթ խնդիր էր լեզվաբանական առարկաների բուհական նոր դասագրքերի կազմումն ու հրատարակումը՝ որպես երիտասարդ կադրերի պատրաստումն ապահովելու միջոցներից մեկը: Այս աշխատանքը կատարվեց և հիմնականում ավարտվեց երեք-չորս տարիների ընթացքում: Ռուսերենով և մյուս ազգային լեզուներով լույս տեսան բազմաթիվ բուհական դասագրքեր, որոնք ընդգրկում էին գրեթե բոլոր դասընթացները: Հիմնովին վերակառուցվեցին գիտա-հետազոտական աշխատանքները Միության բոլոր լեզվաբանական կենտրոններում և բուհերում: Առաջնակարգ նշանակություն ստացան պատմա-համեմատական ուսումնասիրությունները և, շնայած համեմատաբար կարճ ժամանակամիջոցին, այժմ արդեն շոշափելի արդյունքներ ունենք այդ բնագավառում. կարելի է հիշել, որպես օրինակ, Գ. Դ. Սանժեկի ուսումնասիրությունները մոնղոլական լեզվաբանության բնագավառում և հատկապես նրա «Сравнительно-историческая грамматика монгольских языков» մենագրությունը, Լ. Ա. Բուլայսովսկու հետազոտությունները սլավոնագիտության բնագավառում, Ա.

Ս. Զիկորբավայի, Գ. Ս. Ախվլեդիանու և ուրիշների ուսումնասիրութիւնները Կովկասագիտութեան բնագավառում, Յա. Մ. Էնձեւիւնի աշխատութիւնները՝ նվիրված լատիշական տեղանուններին, Հ. Աճառլանի, Գ. Ղափանցյանի և ուրիշների ուսումնասիրութիւնները՝ հայերենագիտութեան բնագավառում, Բ. Ա. Սերերբեննիկովի և այլոց աշխատութիւնները՝ ուզբո-Ֆիննական լեզվաբանութեան ասպարեզում և այլն, և այլն: Իհարկե, պատմա-համեմատական լեզվաբանութեան բնագավառում անհրաժեշտ էր շատ ավելին անել, բայց չպետք է մոռանալ, որ այդ բնագավառի ավագագույն ներկայացուցիչները այլևս չկան, իսկ քառասունական թվականներին այդ գծով մասնագետներ պատրաստելը մառականների կողմից արգելված էր: Անցած այս տասը տարիների հիմնական նվաճումներից մեկն այն է, որ պատրաստվել են բազմաթիվ երիտասարդ մասնագետներ այս ճյուղի համար, որոնք արդեն լծվել են եռանդուն և արդյունավետ աշխատանքի:

Մեր երկրի բազմաթիվ լեզուների ուսումնասիրութիւնը վերջին տասնամյակում նշանավորվեց գիտական քերականութիւնների հրատարակութեամբ: Բավական է նշել, որ վերջին տասը տարիների ընթացքում միայն ՍՍՌՄ Գիտութիւնների ակադեմիայի լեզվաբանութեան ինստիտուտը կազմել է մոտ հիսուն գիտական քերականութիւններ, որոնք ընդգրկում են ավելի քան 35 լեզու: Նշանակալից երևույթ է ուսաց լեզվի երկհատոր Ակադեմիական քերականութեան հրատարակութիւնը, որ ներկայացնում է սովետական քերականագիտական մտքի զարգացման նոր աստիճանը: Ազգային ռեսպուբլիկաներում բազմաթիվ մենագրական ուսումնասիրութիւններ արդեն հաստատուն հիմք են ստեղծել այդպիսի ակադեմիական քերականութիւններ կազմելու համար: Այս շրջանի քերականագիտական ուսումնասիրութիւնները բնորոշվում են մեկ ընդհանուր ուղղութեամբ, որ նախորդ շրջանում տիրապետող ուղղութեան հակադրութեանն է ներկայացնում: Նախորդ շրջանում բազմաթիվ լեզուների ուսումնասիրութիւնը հիմնվում էր Մառի ուսմունքի վրա. սրանով էր պայմանավորված այն փաստը, որ գրեթե բոլոր լեզուների ուսումնասիրութիւնների մեջ իշխում էր այսպես կոչված «մերձեցումների» և «տարբերացումների» բացահայտման ընդհանրական տենդենցը: Սա օրինաշարի տեսքով էր Մառի խաչավորման տեսութիւնից և այսպես կոչված «լեզվաստեղծական պրոցեսի միասնութեան» («единство глоттогонического процесса») սկզբունքից: Այդ տենդենցը անխուսափելիորեն հանգեցնում

էր այն բանին, որ լեզուների քերականական կառուցվածքի, և ոչ միայն քերականական կառուցվածքի, յուրահատկութիւնները անտես էին առնվում: Ամեն մի լեզվի քերականական կառուցվածքի ինքնատիպ բնույթը անուշադրութեան էր մատնվում ու մթազնվում, դրա փոխարեն ամեն ինչ հանգեցվում էր խաչավորումների հետեւանքով ստեղծված «մերձեցումների» և «տարբերացումների» երևան բերելուն, «լեզվաստեղծական պրոցեսի միասնութեան» ընդհանուր երևույթները «հայտնաբերելուն»: Իսկ սա տալիս էր խիստ սահմանափակ, ոչ լիարժեք, իսկ ավելի հաճախ՝ պարզապես աղավաղված պատկերացում. աշխարհի բոլոր լեզուներն ուսումնասիրվում էին մեկ համապարփակ սխեմայով, որ բնականաբար մթազնում, աղավաղում էր լեզուների ինքնատիպ կառուցվածքը: 1950 թ. դիսկուսիայից հետո, հրաժարվելով այդ համապարփակ սխեմայից և դրան հիմք ծառայող հակագիտական սկզբունքներից, սովետական լեզվաբանութիւնն իր առաջ խնդիր դրեց ուսումնասիրել յուրաքանչյուր լեզվի կառուցվածքն առաջին հերթին ինքն իր մեջ, որպես մի ինքնատիպ կառուցվածք, և միայն յուրաքանչյուր լեզվի այսպիսի ուսումնասիրութիւնների սովյալների հիման վրա բացահայտել և՛ այն համընդհանուրը, որը կարող է լինել և կա լեզուների, որպես հասարակական յուրահատուկ երևույթի կոնկրետ պատմական դրսևորումների միջև, և՛ այն առանձնահատուկը, որով բնորոշվում է սովյալ լեզվաբանութեան, լեզվաճյուղի կամ լեզվի քերականական կառուցվածքը:

Վերջին տասը տարիների ընթացքում աննախընթաց թափով ու մասշտաբներով է ծավալվել բառարանագրական աշխատանքը: Լեզվի բառային կազմի, որպես լեզվի շինանյութի, ուսումնասիրութիւնները, որոնք այս շրջանում կատարվել ու կատարվում են, տեսական հող ստեղծեցին բառարանների ավելի բարձր մակարդակի համար, բայց իրենց հերթին անհետաձգելի պահանջ առաջադրեցին ստեղծելու մեծածավալ, գիտական, ժամանակակից պահանջները բավարարող բառարաններ, որոնք հիմք կհանդիսանան բառագիտական-տեսական ուսումնասիրութիւնների հետագա զարգացման համար: Բառարանների անհրաժեշտութիւնը թելադրում է նաև գործնական, առօրյա կյանքը. պատմական համեմատաբար այս կարճ ժամանակամիջոցում, որ ընդգրկում է միայն մի քանի տասնամյակ, հսկայական փոփոխութիւնների է ենթարկվել մեծ երկրի լեզուների բառային կազմը: Նոր հասարակարգի ստեղծումը, դրա հետ առաջացած նոր հասարակական երևույթները, նոր հարա-

բերութիւնները, գիտութեան, տեխնիկայի ու կուլտուրայի զարգացումը այնպիսի թափով հարստացրին լեզուների բառային կազմը, որ եղած բառարաններից ոչ մեկն էլ այլևս չէր կարող մոտավորապես արտացոլել այն: Նույնիսկ այնպիսի մեծածավալ բառարաններ, ինչպիսիք են ռուսերենի քառահատոր բառարանը՝ Գ. Ն. Ուշակովի խմբագրութեամբ և Ստ. Մալխասյանցի նույնպես քառահատոր բառարանը, որոնք լույս են տեսել 1935—1945 թթ. ընթացքում, ընդամենը մոտ երկու տասնամյակ առաջ, չեն արտացոլում ռուսերենի ու հայերենի սովետական շրջանի բառային կազմի ողջ հարստությունը: Մյուս կողմից, այդ բառարանները բառահոգվածների մշակման իրենց մակարդակով և հատկապես բացատրությունների ճշգրտության տեսակետից հեռու են այս շրջանի լեզվաբանության պահանջները բավարարելուց: Այս բոլորն, ահա, հանգեցրին բառարանագիտական աշխատանքների ծավալմանը՝ բոլոր ռեսպուբլիկաներում: Այդ աշխատանքների արդյունքներից առայժմ կարելի է նշել. ռուսերենի ակադեմիական բազմահատոր (15 հատորանոց) բառարանը. այս բառարանը պատրաստվել էր և հրատարակվել էր սկսվել դեռևս նախորդ շրջանում (առաջին հատորը լույս է տեսել 1949 թ.), բայց ինչպես լեզվաբանության մյուս բնագավառներում, այնպես էլ բառարանագիտության մեջ «նոր ուսմունքը» իր արատավոր դրոշմն էր դրել: 1950 թ. դիսկուսիայից հետո անհրաժեշտ եղավ գիտական լայն քննարկման ենթարկել այդ բառարանի սկզբունքները: Քննարկումը բացահայտեց բառարանը կազմելու շատ սկզբունքների արատավորությունը: Անհրաժեշտ եղավ ամբողջ աշխատանքը վերակառուցել և հրատարակության պատրաստված հատորները հիմնովին վերամշակել, բացի առաջինից, որ արդեն լույս էր տեսել: Համեմատաբար կարճ ժամանակամիջոցում պատրաստվեց ու հրատարակվեց (1957—1961) ռուսերենի նոր քառահատոր բառարանը և հիմնովին վերամշակվեց ու երեք հրատարակութեամբ լույս տեսավ Ս. Ի. Օժեգովի միհատորանոց բառարանը: Նույնպիսի աշխատանքներ մեծ թափով ծավալվել են նաև ազգային ռեսպուբլիկաներում:

Հսկայական ծավալ է ստացել նաև երկլեզվյան բառարանների հրատարակությունը. կազմվել և հրատարակվել են ռուսերենից—ազգային լեզու բազմաթիվ սովարածավալ բառարաններ, որոնց մեջ նշանավոր է ռուս-հայերեն քառահատոր բառարանը: Այլ լեզուներից—ռուսերեն թարգմանական բառարանների հրատարակությունը, որ դեռ առաջին շրջանում էր սկսվել, այս տասը տարիներին

ընթացքում անհամեմատ կերպով ընդարձակել է իր շրջանակները: Միայն այս վերջին տասնամյակում լույս են տեսել այլ լեզուներից—ռուսերեն թարգմանական բառարաններ մոտ հարյուր լեզվի համար, այդ թվում այնպիսի լեզուների, ինչպիսիք են էրզյա, մոկչա, ուրդու և այլն:

Գրական լեզուների առավել մշակման ու կատարելագործման պահանջն արդեն նախորդ շրջաններում, ինչպես տեսանք, պայմանավորել էր գրական լեզուների ուսումնասիրության, որպես առանձին ճյուղի, զարգացումը սովետական լեզվաբանության մեջ: Այս շրջանում հենց այդ ճյուղի արագ զարգացումը շատ շուտով պայմանավորեց լեզվաբանական ոճաբանության ձևավորումը, որպես լեզվաբանական արդիական, կարևոր ճյուղերից մեկը: Լեզվաբանության սերտ կապը գրականագիտության հետ, գրական լեզվի ընդհանուր բնույթի ուսումնասիրությունը, գրականության միջոցով լեզվական մշակույթի բարձրացումը առաջ բերեցին զեղարվեստական առանձին երկերի և առանձին գրողների ստեղծագործությունների լեզվի բազմակողմանի ուսումնասիրության անհրաժեշտությունը: Այս վերջին տասնամյակում հրատարակված են ռուս նշանավոր գրողներից շատերի մենագրական ուսումնասիրությունները, առանձին երկերի լեզվի ու ոճի հարցերին նվիրված բազմաթիվ հետազոտություններ և ընդհանուր ոճաբանությանը վերաբերող աշխատություններ: Այդ կարգի աշխատանքներ, առավել կամ պակաս հաջողությամբ, ծավալված են ազգային ռեսպուբլիկաներում: Այս բնագավառում, ինչպես գրական լեզվի պատմության, այնպես էլ գրողի լեզվի ուսումնասիրության տեսակետից նշանակալից երկվույթ է ռուս նոր գրական լեզվի հիմնադիր Ա. Ս. Պուշկինի լեզվի ակադեմիական քառահատոր բառարանի կազմումն ու հրատարակությունը:

Ռուսերենի ուսուցման առավել բարձր մակարդակի ապահովումը, ինչպես և օտար լեզուների ուսուցման առավել արդյունավետության անհրաժեշտությունը, զարկ տվեց զուգադրական (сопоставительная) քերականություններ ստեղծելուն: Եվ թեպետ առայժմ այս բնագավառում հրատարակված աշխատությունները համեմատաբար քիչ են, բայց կան արդեն բազմաթիվ լեզուների այդ կարգի ուսումնասիրություններ, որոնք տպագրության պրոցեսում են գտնվում: Այս ուղղությամբ սկսված աշխատանքները ծավալվում են մեծ մասշտաբներով և առաջիկայում անկասկած ցանկալի արդյունքներ կտան: Պետք է նկատել, որ այդ տիպի աշխա-

տանքների ծավալումը այս վերջին տարիներում առնչվում է նաև սովետական լեզվաբանության մեջ ստրուկտուրալ մեթոդի կիրառման հետ:

Վերը խոսեցինք արդեն դեռևս առաջին շրջանում անցյալի ժառանգության նկատմամբ ստեղծված ժխտողական վերաբերմունքի մասին և ցույց տվինք, որ թեև դա ուներ պատմականորեն օբյեկտիվ ու սուբյեկտիվ պատճառներ, բայց սովետական գիտության ու արվեստի գրեթե բոլոր ճյուղերում համեմատաբար հեշտովյամբ հաղթահարվեց: Ըստ որում Կոմունիստական պարտիան ժամանակին բացահայտեց այդ դատապարտելի մտայնության վնասակարությունը և ճիշտ ուղի նշեց անցյալի ժառանգությունն օգտագործելու և յուրացնելու ասպարեզում: Մենք աշխատեցինք պարզել նաև, թե ինչու լեզվաբանությունը երկար ժամանակ, մոտ երեք տասնամյակի ընթացքում, բացառություն կազմեց և այս բնագավառում անցյալի ժառանգության, ինչպես և ժամանակակից արտասահմանյան լեզվաբանության նկատմամբ եղած բացարձակ ժխտողական վերաբերմունքը հարատևեց մինչև 1950 թ. դիսկուսիան: Այդպիսի վերաբերմունքը պայմանավորված էր մառականության տիրապետությամբ, իսկ այդ ուղղությունն առաջացնող և դրան պաշտոնական տիրապետության հասցնող հիմնական գործոնների մասին արդեն խոսել ենք: Անշուշտ, հնարավոր է, որ այդ գործոններին զուգընթաց մասնավոր հանգամանքներ ևս դեր խաղացած լինեն: Կարևորն այստեղ, իհարկե, դա չէ, այլ այն, որ այդ ժխտողական վերաբերմունքը տիրապետող էր նաև երկրորդ շրջանում. դեռ ավելին, այդ շրջանում նա իր գազաթնակետին հասավ: 1950 թ. դիսկուսիան բացահայտեց այդ վերաբերմունքի ամբողջ վնասակարությունը և ցույց տվեց, որ ինչպես ուրիշ գիտությունները, այնպես էլ լեզվաբանությունը չի կարող դեն նետել անցյալի ողջ ժառանգությունը: Ընդհակառակն, սովետական լեզվաբանության զարգացումը անհրաժեշտորեն պահանջում է օգտագործել և՛ այն ամբողջ դրականն ու օգտակարը, որ ստեղծել է անցյալի լեզվաբանությունը, և՛ այն նվաճումները, որոնք ձեռք է բերել արտասահմանյան լեզվաբանությունը վերջին մի քանի տասնամյակների ընթացքում: Եվ ահա, վերջին այս տասը տարիների ընթացքում սովետական լեզվաբանության մեջ զգալի տեղ են գրավում այն ուսումնասիրությունները, որոնք նվիրված են անցյալի ժառանգության գնահատմանը, հայրենական լեզվաբանների ստեղծած լավագույն լեզվաբանական տրադիցիաների վերհանմանը, արտասահմանյան լեզվաբանական

զանազան ուղղությունների բնութագրմանն ու նվաճումների բացահայտմանը: Այս բնագավառում կարևոր նշանակություն ունեն արտասահմանյան լեզվաբանության (թե՛ դասական, և թե՛ նորագույն) խոշորագույն ներկայացուցիչների աշխատությունների թարգմանությունները ուսերենով՝ առանձին գրքերի կամ զանազան ժողովածոների ձևով (քրեստոմատիաներ, թեմատիկ ժողովածոներ և այլն), որոնց օգնությամբ մեր երկրի բոլոր լեզվաբանները հնարավորություն են ստանում ծանոթանալու արտասահմանյան թե՛ հին և թե՛ նորագույն լեզվաբանական գրականությանը: Դրա հետ միասին սովետական լեզվաբանության մեջ կարևոր տեղ է գրավում, իհարկե, բուրժուական լեզվաբանական ուղղությունների զանազան երանգավորումներով երևան եկող իդեալիստական տեսությունների քննադատությունը:

Վերջին տասնամյակում զգալի գործ է կատարված լեզվաբանական նորագույն մեթոդների յուրացման ու նրանց կիրառման գործում: Այդ մեթոդներից առավել արդյունավետ է եղել լեզվաբանական աշխարհագրությունը: Դեռևս նախորդ շրջաններում ծավալված բարբառագիտական աշխատանքներն այս շրջանում ավելի մեծ մասշտաբներ են ընդգրկել: Հսկայական գործ է կատարվել ուսերենի բարբառագիտական ատլասը պատրաստելու ուղղությամբ, կազմվել են ու կազմվում են ռեգիոնալ բառարաններ և այլն: Նույնպիսի աշխատանքներ ծավալվել են նաև ազգային ռեսպուբլիկաներում:

Մյուս մեթոդներից առավել մեծ ուշադրության է արժանացել ստրուկտուրալ մեթոդը, թեև, իհարկե, այդ ուղղությամբ կատարվածը դեռ շատ հեռու է բավարար լինելուց: Առայժմ միայն մասնագիտական մամուլում և առանձին ժողովածոների միջոցով ծավալված դիսկուսիաներն են շոշափելի կերպով երևում, իսկ այդ մեթոդով գրված ուսումնասիրությունները դեռևս շատ սահմանափակ են: Պետք է շեշտել, համենայն դեպս, որ ինչպես ստրուկտուրալ մեթոդի օգտագործման, այնպես էլ դիախրոնիկ ու սինխրոնիկ ուսումնասիրությունների միջև եղած փոխհարաբերության խնդրում սովետական լեզվաբանության մեջ իրար են բախվում հիմնականում երկու հոսանք: Մեկ հոսանքի ներկայացուցիչները գտնում են, որ ժամանակակից լեզվաբանության մեջ հիմնական տեղը պետք է գրավի պատմական ուսումնասիրությունը, իսկ մյուս հոսանքը, ընդհակառակն, առաջնությունը տալիս է սինխրոնիկ հետազոտությանը: Իհարկե, երկու հոսանքներն էլ հայտնի կերպով ծայրահեղ

են. սովետական լեզվաբանների մեծագույն մասը ճիշտ կերպով գտնում է, որ այդ երկու մոտեցումներն էլ (պատմական և սինխրոնիկ) անհրաժեշտ են և իրենց տեղն ու դերն ունեն լեզվաբանության զարգացման մեջ: Ուստի և այդ երկու հոսանքներից յուրաքանչյուրն այս հարցում դատապարտելի է և, մեր կարծիքով, շեղվում է ճիշտ ուղուց:

Վերջին տարիներում մեծ ուշադրություն է դարձվում մեքենական թարգմանության վրա և որոշ բան կատարված է թե՛ գործնական հարցերի և թե՛ դրանց հետ կապված տեսական խնդիրների լուսաբանման ուղղությամբ: Բայց այս բնագավառը դեռ շատ նոր է սովետական լեզվաբանության մեջ և, բնականաբար, արդյունքները դեռ շոշափելի չեն:

Վերջապես, այս վերջին տասնամյակում մեծ թափ են ստացել հին, գրավոր հուշարձաններով (մեծ մասամբ արձանագրություններով) ավանդված մեռած լեզուների (խեթերեն, թոխարերեն, Վրարտերեն և այլն) ուսումնասիրությունները: Այդ բնագավառում, իհարկե, նախորդ շրջաններում էլ որոշ բան կատարվել է. հատկապես պետք է նշել Ի. Ի. Մեղչևինովի, Գ. Վ. Մերեթելու, Գ. Ա. Ղափանցյանի հետազոտությունները՝ Առաջավոր Ասիայի և Անդրկովկասի հնագույն հուշարձաններով ավանդված լեզուների ուսումնասիրության բնագավառում: Բայց վերջին տարիներում այդ հյուսիսը մեր լեզվաբանության մեջ շատ ավելի մեծ զարգացում է ապրում և զգալի արդյունքներ է տալիս (Գ. Ա. Մելիքիշվիլու, Ի. Մ. Դյակոնովի, Յու. Վ. Կնորոզովի և այլոց աշխատանքները):

Այսպիսով, ազատագրվելով Ն. Յա. Մառի «նոր ուսմունքից», դուրս գալով լճացման վիճակից, ազատվելով անհատի կուլտի ստեղծած կաշկանդումներից, սովետական լեզվաբանությունը, մեկ տասնամյակի համեմատաբար շատ կարճ ժամանակաշրջանում նշանակալից հաջողությունների է հասել. այս շրջանը բնորոշվում է թե գործնական և թե՛ տեսական բնագավառների հսկայական ընդարձակումով և այդ բոլոր բնագավառներում էլ ձեռք բերված նվաճումներով:

Սովետական լեզվաբանությունն իր անցած ճանապարհի խորհուրդորդություններով հանդերձ, իր ուրույն տեղն է գրավում համաշխարհային լեզվաբանության մեջ և զարգանում է իրեն հատուկ ուղիներով: Բոլոր հնարավորություններն ու նախադրյալները կան՝ հետագայում է՛լ ավելի մեծ նվաճումների հասնելու և համաշխարհային լեզվաբանության մեջ է՛լ ավելի առաջնակարգ տեղ գրավելու համար:

2. ՀԱՅ ԼԵԶՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՍՈՎԵՏԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Սովետական կարգերի հաստատումը Հայաստանում հայ ժողովրդի վերածնունդը հանդիսացավ: Հայ ժողովուրդը Սովետական Միության մյուս, եղբայրական ժողովուրդների հետ միասին բոլոր հնարավորություններն ստացավ իր դարավոր մշակույթի, գիտության ու արվեստի աննախընթաց զարգացման համար: Այդպիսի հնարավորություններ ստեղծվեցին նաև մեր ազգային լեզվի և այդ լեզուն ուսումնասիրող գիտության՝ հայ լեզվաբանության ծաղկման համար:

Աշխատությանս առաջին մասում մենք տեսել ենք արդեն, որ մինչսովետական շրջանում հայ լեզվաբանության ուշադրության կենտրոնում է եղել գրաբարը: Թե՛ պատմա-համեմատական հետազոտությունները և թե՛ նկարագրական ուսումնասիրությունները հիմնականում նվիրված են եղել հին հայերենին: Ժամանակակից հայերենը առանձին դեպքերում միայն ուսումնասիրության առարկա է դարձել, այն էլ մեծ մասամբ դպրոցական ուսուցման անհրաժեշտության թելադրանքով: Այդ տեսակետից բացառիկ նշանակություն են ստանում Ա. Այտընյանի «Քննական քերականություն աշխարհաբար կամ արդի հայերեն լեզվի» և Ստ. Պալասանյանի «Ընդհանուր տեսություն արևելյան նոր գրական լեզվի» աշխատությունները, որոնք բարձրանում են սովորական, գործնական քերականությունների մակարդակից: Մեր օրերում պատկերն արմատապես փոխվեց. առաջնահերթ կարևորություն ստացան ժամանակակից գրական լեզվի գիտական ուսումնասիրությունը, դպրոցական ու բուհական դասագրքերի կազմումը, ժամանակակից հայերենի մշակման հարցերը, քաղաքական ու գիտա-տեխնիկական հարուստ տերմինաբանության ստեղծումը: Այս խնդիրների հաջող լուծման համար հայ լեզվաբանները պետք է մշակեին ընդհանուր

լեզվաբանական, տեսական սկզբունքներ՝ ելնելով մարքսիզմ-լենինիստիկայից և դրանցով առաջնորդվելին: Նրանց առջև կանգնած էր դժվարին խնդիր: Հայ լեզվաբանությունը բազմադարյան, մեկուկես հազարամյակի պատմություն ուներ և ստեղծել էր իր տրադիցիաները: Անհրաժեշտ էր հաշվի առնել դրանք, քննադատորեն վերանայել անցյալի հարուստ ժառանգությունը, յուրացնելով այն ամբողջ դրականը, որ մեզ ավանդ էր մնացել մինչև ռևոլյուցիոն շրջանից և նոր հետազոտությունների հիման վրա ստեղծել մարքսիստական լեզվաբանությունը՝ իրենց ավանդը մտցնելով սովետական լեզվաբանության ընդհանուր գանձարանի մեջ:

Այս բարդ ու դժվարին խնդիրները լուծելու համար սովետահայ լեզվաբանությունն էլ նույն ճանապարհն է անցել, նույն որոնումները, խարխափումներն ու սխալներն ունեցել, ինչ որ սովետական լեզվաբանությունն ընդհանրապես: Եվ որովհետև թե՛ պատմահասարակական պայմանները և թե՛ լեզվաբանական գիտության բնագավառում դրսևորված տենդենցներն ընդհանուր են եղել մեր Միության մեջ, ապա սովետական հայ լեզվաբանության պատմությունն էլ մենք բաժանում ենք երեք շրջանների, նույն բնութագրությամբ: Այստեղ, ուրեմն, մենք այդ շրջանները համառոտակի նկարագրելու ենք իրենց մասնավոր արտահայտության մեջ՝ Սովետական Հայաստանում, առանց կրկնելու ընդհանուր երևույթների լուսաբանումները:

Առաջին շրջան (1920—1936 թթ.): Այս շրջանի առաջին տասնամյակի կարևոր նվաճումն էր անգրագիտության վերացումը մեր ռեսպուբլիկայում: Այդ գործի առավել արագ և հեշտ լուծման համար անհրաժեշտ էր մեր հնավանդ այբուբենն ու ուղղագրությունը մասնակիորեն վերանայել և հնարավորին չափ պարզեցնել: Այդ խնդիրը լուծվեց 1922 թ. ուղղագրության բարեփոխությամբ, որ վերացնում էր հին ուղղագրության մի շարք դժվարությունները (յ և հ-ի, վ, ռ և ու-ի, է և ե-ի, ո և օ-ի ուղղագրությունը և այլն) և մեր ուղղագրությունը համապատասխանեցնում ժամանակակից հայերենի արտասանությանը: Թեև այդ բարեփոխությունը որոշ կետերում ծայրահեղություններ էր պարունակում, որոնք վերացվեցին հետագայում (1940 թ. մասնակի բարեփոխությամբ), բայց հիմնականում նա արդարացնում էր իրեն և՛ գործնականորեն, և՛ տեսականորեն: Ուղղագրության այդ պարզեցումը հնարավորություն ընձեռեց լայնորեն ծավալելու անգրագիտության վերացման աշխատանքները՝ մեծահասակների խմբակների (լիկկայանների) հրս-

կայական ցանցի միջոցով, և առաջին տասնամյակի վերջում մեր ռեսպուբլիկայում անգրագիտությունը հիմնականում վերացված էր արդեն: Թե՛ այս աշխատանքները և թե՛ դպրոցական ուսուցումը պահանջում էին մայրենի լեզվի հանրամատչելի դասագրքերի ու քերականության ձեռնարկների պատրաստումը: Այս շրջանի առաջին տասնամյակում, բացի ամեն տարի հրատարակվող մայրենի լեզվի դասագրքերից, հրատարակվեցին նաև քերականական մի քանի ձեռնարկներ (օր. Հ. Պետրոսյանի «Գործնական քերականությունը»), որոնք, սակայն, կառուցված էին ֆորմալ քերականության սկզբունքների վրա, ըստ որում, այդ ձեռնարկների հեղինակները Մ. Աբեղյանի աշակերտներն ու հետևորդներն էին: Նույն շրջանում որոշ աշխատանք է կատարվել նաև բուհական դասագրքեր պատրաստելու ուղղությամբ: Այս բնագավառում ամենանշանավոր երևույթը Մ. Աբեղյանի «Հայոց լեզվի տեսություն» աշխատության հրատարակությունն է 1931 թ.: Աշխատությունը, որի մանրամասն քննությանն անդրադառնալու ենք ստորև, ամբողջապես կառուցված է հոգեբանական ինդիվիդուալիզմի սկզբունքների վրա, բայց, շնայած դրան, դարագլուխ կազմող մի գործ է ժամանակակից հայոց լեզվի ուսումնասիրության պատմության մեջ:

Հրատարակվեցին նաև գրաբարի դասագրքեր՝ Երևանի Պետական համալսարանի հրատարակությամբ:

Այս շրջանի վերջին հնգամյակի կարևորագույն նվաճումն է միջնակարգ դպրոցի քերականության նոր դասագրքերի (Ա. Ղարիբյանի՝ հնչյունաբանության ու ձևաբանության և Գ. Սևակի՝ շարահյուսության դասագրքերի) երևան գալը: Առաջնորդվելով նույն շրջանում հրատարակված՝ ուսուցիչների քերականության դասագրքերի սկզբունքներով՝ հիշյալ հեղինակները կարողացան հաղթահարել ֆորմալ քերականության արմատացած տրադիցիաները՝ մեր ռեսպուբլիկայում և ստեղծել քերականության նոր տիպի դասագրքեր:

Այս շրջանում զգալի աշխատանք է կատարվել բառարանագրության բնագավառում, ըստ որում այդ ասպարեզում տարվող աշխատանքները ընթանում էին երկու ուղղությամբ: Մի կողմից՝ բառարանագրական գործը անմիջականորեն կապվում էր կյանքի թելադրած պրակտիկ խնդիրների հետ, իսկ մյուս կողմից՝ հայերենի պատմա-համեմատական ուսումնասիրության հետ: Նոր կարգերի հաստատումը, կուլտուրայի ու կենցաղի բնագավառում կատարված ռևոլյուցիան, գիտության ու տեխնիկայի արագ զարգացումը, քաղաքական կյանքի աշխուժացումը և մասսաներին քաղաքական

կյանքի հետ անմիջականորեն կապելու անհրաժեշտությունը լեզվաբանությունից առաջ մեր կյանքի բազմաթիվ բնագավառների, հատկապես քաղաքական ու գիտական տերմինաբանությունից ստեղծման հրատապ խնդիրն են դնում: Իհարկե, մեր լեզուն մինչև սովետական կարգերի հաստատումն էլ բավականաչափ հարուստ էր գիտական տերմինաբանությամբ. այս տեսակետից նա զրեթե հավասար մակարդակի վրա էր կանգնած ուսերենի, ուկրաիներենի, վրացերենի հետ: Բայց այդ տերմինաբանությունը խիստ աղքատիկ էր բավարարելու համար այն վիթխարի պահանջները, որոնք առաջադրում էր մեր կյանքը: Այդ էր պատճառն, ահա, որ այս շրջանի բառարանագրության ամենակարևոր խնդիրն է դառնում զանազան տերմինաբանների հրատարակությունը: Իսկ դրա արդյունքն էլ լինում է այն, որ իրար ետևից լույս են տեսնում մի շարք տերմինաբանական բառարաններ (շինարարական, իրավաբանական, երկաթուղային, բժշկական, աշխատանքային և այլն), որոնց ստեղծման գործում մեծամեծ վաստակներ ունեն Մ. Աբեղյանը, Հ. Հովհաննիսյանը, Ստ. Մալխասյանցը, Հ. Աճառյանը և այլք: Նույնպիսի գործնական խնդիրների, մասնավորապես ուսերենին տիրապետելու և ուսերենից կատարվող թարգմանությունների արտակարգ ծավալման հետ է կապվում ուս-հայերեն նոր, երկհատոր բառարանի հրատարակությունը (հ. 1, 1933, հ. 2, 1935): Բառարանը, որի հեղինակներն են Թադ. Ավդալբեկյանը, Պող. Սոտնիկյանը, Երվ. Տեր-Մինասյանը և Վարդ. Փոթեյանը, խոշոր ներդրում էր հայ թարգմանական բառարանագրության մեջ: Նրա կարևորագույն արժանիքներն են. ա) բառարանի կազմության գիտականորեն ճիշտ սկզբունքները, բառարանի՝ գիտական ու գործնական տեսակետից իրեն միանգամայն արդարացրած կառուցվածքը: Այս տեսակետից այդ բառարանն ավելի բարձր մակարդակի վրա է կանգնած, քան վերջին տասնամյակում հրատարակված քառահատոր ուս-հայերեն բառարանը, որը այլ կողմերով բացահայտորեն գերազանցում է թե այս, և թե մինչև այդ հրատարակված բոլոր ուս-հայերեն բառարաններին: բ) Բառ-հոդվածների, ընդհանուր առմամբ, ճիշտ մշակումը, բառերի բոլոր իմաստների ճիշտ թարգմանությունը: գ) Բազմաթիվ նորակերտ բառ-տերմինների ստեղծումը, որ զգալիորեն հարստացնում էր մեր լեզուն: Այս տեսակետից նա մեր տերմինաբանությանը նպաստող առաջնակարգ բառարան էր:

Պատմա-համեմատական լեզվաբանության մոտ մեկ հարյուրամյակի արդյունավետ ուսումնասիրություններն այս շրջանում

պատկանում է Հ. Աճառյանի «Հայերեն արմատական բառարանի» հրատարակությամբ: Այդ բառարանը հայագիտության լավագույն կոթողներից մեկն է:

Հայերենի պատմա-համեմատական ուսումնասիրության հետ էր կապված նաև բարբառագիտական աշխատանքների ծավալումը այս շրջանում, և այստեղ էլ Հ. Աճառյանն էր, որ իր բեղմնավոր գործունեությամբ մեկը մյուսի ետևից հրատարակում էր հայերեն բարբառների մենագրական ուսումնասիրությունները: Այս շրջանում են հրատարակված Ագուլիսի, Նոր-Նախիջևանի, Մարաղայի, Նոր-Ջուղայի բարբառներին նվիրված մենագրությունները՝ ապակետիպ:

Ինչպես վերը տեսանք, այս շրջանում սովետական լեզվաբանության համար հատկանշական էր տարբեր լեզվաբանական ուղղությունների բախումը: Այդ նույնը տեղի է ունեցել նաև մեր սեփական պոլիկայում, ըստ որում մեզ մոտ իրար էին հակադրվում չորս ուղղություններ: Դրանցից այս շրջանի համար հիմնականը պետք է համարել Գ. Ղափանցյանի գիծը, որ ներկայացնում էր սովետահայ լեզվաբանության առավել ճշմարիտ դիրքավորումը: Չժխտելով անցյալի հարուստ ժառանգության օգտագործման անհրաժեշտությունը՝ Գ. Ղափանցյանը ձգտում էր քննադատորեն յուրացնել այն ամբողջ դրականը, որ կար այդ ժառանգության մեջ և մարքսիզմ-լենինիզմի կրասիկների տեսական դրույթներից ելնելով ճիշտ կերպով լուծել ընդհանուր լեզվաբանության կարևորագույն հարցերը: Իր հայացքները նա շարադրել է «Հաբեթական լեզվաբանությունն ու տեսությունը» հոդվածում, որ տպագրված է 1926 թ. (ԵՊԳՏ, № 2, էջ 374—397), ապա՝ «Լեզվի և նրա զարգացման դիալեկտիկայի շուրջը» հոդվածում՝ 1931 թ.: Այդ հոդվածների մեջ Գ. Ղափանցյանը գտնում է, որ քննադատելով բուրժուական լեզվաբանության մեկ համար խորթ սկզբունքները, չի կարելի նաև ն. Մառի տեսությունն անվերապահորեն ընդունել. նա ճիշտ կերպով ցույց է տալիս այդ տեսության մի քանի հիմնական սխալները: Շուտով Գ. Ղափանցյանին միացավ նաև երիտասարդ լեզվաբան Գ. Սևակը, որ գտնում էր, թե պայքար պետք է ծավալել երկու ճակատով, մի կողմից՝ բուրժուական իդեալիստական տեսությունների, մյուս կողմից՝ ն. Մառի տեսության ոչ մարքսիստական դրույթների դեմ: Այս ուղղության ամբողջ ուժն ու կենսունակությունը դրսևորվեց 1932 թ. Երևանում, Մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտում տեղի ունեցած դիսկուսիայում, որ կազմակերպվել էր ն. Մառի նախա-

ձեռնությամբ և որին մասնակցում էր նրա աշակերտների «գրոհա-
 յին շոկատը» (ակադեմիկոս Ի. Ի. Մեշչանինով, Զ. Գ. Բաշինջադ-
 յան և այլք)¹։ Դիսկուսիայի ժամանակ Գ. Ղափանցյանը, Գ. Սևակը,
 Հ. Գյուլիքեպիսյանը և ուրիշներ խիստ կերպով քննադատության
 ենթարկեցին «նոր ուսմունքի» մի շարք հիմնական դրույթները՝
 մարքսիզմի դիրքերից։ Դիսկուսիան ըստ էության Ն. Մառի ու նրա
 հետևորդների սպասածին հակառակ արդյունքը տվեց։

Երկրորդ ուղղությունն էր ներկայացնում, ինչպես արդեն նա-
 խորդ շարադրանքից երևաց, Ն. Մառը՝ իր հետևորդներով, որոնցից
 ոչ մեկը Հայաստանում չէր աշխատում և հայագետ չէր։ Այդ պատ-
 ճառով էլ այդ ուղղությունը մեզ մոտ շատ թույլ էր։ Այս շրջանի վեր-
 ջին տարիներին միայն որպես այդ ուղղության մարտնչող հետևորդ
 է հանդես գալիս Ա. Ղարիբյանը։

Երրորդ ուղղությունն էր ներկայացնում Մ. Աբեղյանը՝ իր
 աշակերտներով հանդերձ։ Այս ուղղությունը հանդես է գալիս հատ-
 կապես քերականագիտության բնագավառում և բնորոշվում է հո-
 գեբանական ինդիվիդուալիզմին հատուկ ֆորմալիզմով։ Այս շրջա-
 նում, դպրոցական նոր քերականությունների ստեղծումով և դրան
 զուգընթաց՝ մամուլում ծավալված դիսկուսիայով հիմնականում
 հաղթահարվեց այս ուղղությունը, ըստ որում, քերականագիտու-
 թյան հարցերի մասին տեղի ունեցած վեճերի մեջ Գ. Ղափանցյանի
 և Գ. Սևակի հետ համաձայն էին նաև Հ. Աճառյանը և Ա. Ղարիբ-
 յանը, չնայած որ այս վերջինս ընդհանուր լեզվաբանության հար-
 ցերում սահմանազատվել էր նրանցից և կանգնել «նոր ուսմունքի»
 դիրքերում։

Չորրորդ ուղղությունն էր ներկայացնում Հ. Աճառյանը, որ
 ընդհանրապես հեռու էր կանգնած պայքարից, շարունակում էր իր
 ուսումնասիրությունները պատմա-համեմատական լեզվաբանու-
 թյան սոցիոլոգիական ուղղության դիրքերից ելնելով։

Այսպիսով, այս շրջանում առավել ուժեղ, կենսունակ ուղղու-
 թյուն էին ներկայացնում Գ. Ղափանցյանն ու Գ. Սևակը, որոնց
 դիրքավորումը միանգամայն ճիշտ էր, չնայած, որ առանձին հար-
 ցերի վերաբերյալ արտահայտած նրանց կարծիքների մեջ էլ կային
 սխալներ։

¹ Ա. Ղարիբյանը դիսկուսիայի նախօրյակին մեկնել էր Լենինգրադ, դիրեկ-
 ցիային ուղարկելով մի գրություն, որով հայտնում էր, թե ինքը սահմանազատվում
 է Գ. Ղափանցյանի ու Գ. Սևակի դիրքավորումից և մեկնում է Լենինգրադ՝ Ն. Մա-
 սին աշակերտելու համար։

Երկրորդ շրջան (1937—1950 թ. հունիս ամիսը)։ Այս
 շրջանի սկզբում դպրոցական քերականության ստեղծման հարցը
 լուծված էր արդեն, և ուշադրության կենտրոնում է կանգնում լեզ-
 վաբանական առարկաների՝ բուհական դասագրքեր կազմելու խըն-
 դիրը։ Ժամանակակից հայերենի քերականական կառուցվածքի
 ուսումնասիրության բնագավառում ամենակարևոր երևույթն է Գ.
 Սևակի «Ժամանակակից հայոց լեզվի տեսություն» աշխատության
 հրատարակությունը (գիրք Ա, 1939, գիրք Բ, 1947), որը ծառայում
 էր որպես բուհական դասագիրք։

Բառարանագրության առարկեղում մեծագույն նվաճումը Ստ.
 Մալխասյանցի քառահատոր բառարանի հրատարակությունն է։
 Դրան զուգընթաց հրատարակվել են ուսու-հայերեն և հայ-ուսերեն
 փոքրիկ բառարաններ, ինչպես և դպրոցական ուղղագրական բա-
 ռարան։ Կազմվում է ուսու-հայերեն մեծ բառարանը։

Հայոց լեզվի պատմության ուսումնասիրության բնագավառում
 մեծագույն ներդրումն է Հ. Աճառյանի «Հայոց լեզվի պատմությու-
 նը», որի առաջին հատորը լույս է տեսել 1939 թ.։

Բարբառագիտության բնագավառում իր բեղմնավոր աշխա-
 տանքն է շարունակում Հ. Աճառյանը. բարբառագիտական հետա-
 զոտություններով են զբաղվում նաև Ա. Ղարիբյանը, է. Աղայանը,
 ինչպես և՛ մի քանի երիտասարդ լեզվաբաններ, որոնք գիտական
 աշխատանքի ասպարեզն են իջնում այս շրջանի վերջում միայն։

Մեր ոեսպուլիկայում լեզվաբանության զարգացմանը մեծա-
 պես նպաստում է նոր ինստիտուտների հիմնադրումը (Հայկական
 մանկավարժական ինստիտուտ, Ռուսական մանկավարժական
 ինստիտուտ, Լենինականի մանկավարժական ինստիտուտ), որոնք
 համալսարանի հետ միասին մեծ դեր են կատարում երիտասարդ
 հայագետների պատրաստման և հայերենագիտական ուսումնասի-
 րությունների ծավալման գործում։ Առանձնապես կարևոր երևույթ
 է ՀՍՍՌ Գիտությունների ակադեմիայի ստեղծման օրից՝ Լեզվի
 ինստիտուտի հիմնադրումը։

Նախորդ շրջանում ծավալված պայքարը նոր ընթացք է ստա-
 նում այս շրջանում։ Մ. Աբեղյանն արդեն նոխորդ շրջանի վերջից
 հրաժարվել էր մանկավարժական գործունեությունից, իր կյանքի
 վերջին տարիները նվիրել էր հայ հին գրականության ուսումնասի-
 րությանը և ակտիվ մասնակցություն չէր ունենում լեզվաբանության
 բնագավառում տեղի ունեցող իրադարձություններին։ Հ. Աճառյանը
 շարունակում էր իր գիտական աշխատանքները ի՛ր ուղղությամբ,

հաճախ հարձակումների ենթարկվելով Ն. Մառի հետևորդների կողմից և համբերատար լուծված նայելով դրանց: Երիտասարդ մասնագետները, մասնավորապես տողերիս գրողը և Ս. Ղազարյանը, որոնք ասպարեզ էին իջել այս շրջանի կեսերին (1940—1942 թթ.), տեսական հարցերում համախմբվում էին Գ. Ղափանցյանի և Գ. Սևակի շուրջը: Ա. Ղարիբյանն էր միակ լեզվաբանը, որ հանդես էր գալիս մարտնչող մառականության դիրքերից: Ն. Մառի «նոր ուսմունքի» սկզբունքներով էր առաջնորդվում նա իր ուսումնասիրությունների մեջ (մասնավորապես հայոց լեզվի պատմության և բարբառագիտության բնագավառում) և այդ դիրքերից էր հարձակվում բոլոր նրանց վրա, ովքեր չէին ընդունում «նոր ուսմունքի» թեկուզ և մի որևէ դրույթը: Այս երկու ուղղությունների հակադրությունը, որ արդեն շատ որոշակի կերպով սկիզբ էր առել նախորդ շրջանում, քառասունական թվականներին առավել ևս սրվեց: Ա. Ղարիբյանը, որ ներկայացնում էր ուղղափառ մառականությունը, կարծես թե մենակ էր: Բայց իրականում այդպես չէր: Ամենից առաջ, նրան միացած էին մեր պատմաբաններից մի քանիսը, հատկապես հին շրջանի պատմության մասնագետները. նրա հետ էին նաև մի քանի գրականագետներ (Հ. Մելիքյան և այլք) և տնտեսագետներ (!): Երկրորդ, շատ հաճախ միևնույն դիրքերից էին հանդես գալիս նաև Գ. Ղափանցյանը, Գ. Սևակը և տողերիս գրողը: Սա այժմ թերևս տարօրինակ է թվում, բայց միանգամայն բնական էր: Բանն այն է, որ այս վերջինների վերաբերմունքը «նոր ուսմունքի» նկատմամբ բացարձակորեն ժխտողական չէր: Գ. Ղափանցյանն, օրինակ, ընդունում էր Ն. Մառի այն տեսակետները, որ բնորոշ էին նրա տեսությանը միևնույնուցից շրջանում, ինչպես և «նոր ուսմունքի» մի քանի հիմնական դրույթները (լեզուն որպես վերնաշենքային երևույթ, լեզուների խաշավորում և այլն): Իր այդ դիրքավորումը նա որոշակիորեն արտահայտեց 1943 թ., Համալսարանում Մառի անվան (մառագիտության!) կաբինետ բացելու առթիվ կարդացած զեկուցման մեջ: Գ. Սևակը, տողերիս գրողը, ինչպես և Ս. Ղազարյանը ընդունում էին (կամ գոնե հայտարարում էին), որ Ն. Մառը մատերիալիստական լեզվաբանության հիմնադիրն է, բայց միևնույն ժամանակ գտնում էին, որ Մառի որոշ տեսակետներ պետք է վերանայել, իսկ որոշ դրույթներից էլ՝ հրաժարվել: Ստացվում էր այնպես, որ առերևույթ Մառին հետևում և նրա տեսությունն ընդունում էին նաև իրենք, բայց մյուս կողմից էլ՝ բացատրում էին նրա շատ հիմնական սկզբունքները: Բայց դա էլ իր ժա-

մանակի ընդհանուր վիճակն էր արտացոլում: Վերջիններս ներկայացնում էին ոչ թե ուղղափառ, ավելի ճիշտ՝ դոգմատիկ, այլ այսպես կոչված ստեղծագործական մառականությունը: Այս բանը որոշակիորեն արտահայտվեց հատկապես 1944—1948 թթ., թե՛ բանավոր վեճերի և թե՛ տպագրված գործերի մեջ¹: Ուշագրավ են այդ տեսակետից Գ. Սևակի «Ժամանակակից հայերենի համառոտ պատմությունը» և է. Աղայանի «Ընդհանուր լեզվաբանության դասընթացը» (1947): Բայց հենց այս էլ միանգամայն նպաստավոր պայմաններ էր ստեղծում դոգմատիկ մառականության համար: Չնայած երկու ուղղությունների ներքին խոր հակասություններին, նրանք միասնական ճակատ էին կազմում գոնե արտաքուստ՝ ուրիշ ուղղությունների դեմ մղվող պայքարում: Եվ դոգմատիկ մառականությունը հիանալիորեն օգտագործեց այդ: Նրանց օգնությամբ հաղթելով մյուս ուղղություններին, քառասունական թվականներին արդեն իր զենքն ուղղեց հենց դրանց դեմ: Վերը մենք տեսանք, որ այդպիսի շարժում սկսվել էր նույնիսկ Ն. Յա. Մառի այնպիսի աշակերտի դեմ, ինչպիսին է ակ. Ի. Ի. Մեղանինովը: Մեզ մոտ էլ այդպիսի շարժում եղավ, ըստ որում, դրան զգալիորեն նպաստեց և այն, որ Գ. Սևակը, է. Աղայանը և Ս. Ղազարյանը 1947—1949 թթ., ստեղծված իրադարձությունների մեջ, որոշակի կերպով հեռացել էին իրենց նախկին դիրքերից: Այդ շարժման ամենացայտուն արտահայտությունն էր Գ. Ղափանցյանի «Хаяса—Колымбель армян» (1947) գրքի քննարկումը 1948 թ. մայիսին: Ա. Ղարիբյանը, որ գրքի խմբագիրն էր, հարձակում կազմակերպեց Գ. Ղա-

¹ Այդ տեսակետից նշանակալից է 1945 թ. մայիսի 11-ին, մեր դոկտորական դիսերտացիայի պաշտպանության ժամանակ տեղի ունեցած վիճարկությունը: Մեր դիսերտացիոն աշխատության մեջ («Հայ լեզվաբանության պատմություն») Ն. Մառի դիտական գործունեությունն ու լեզվաբանական տեսությունը բնութագրելով, նրան սովետական-մատերիալիստական լեզվաբանության հիմնադիրն էինք համարել, ընդունել նրա մի քանի դրույթները և, միևնույն ժամանակ, քննադատել լեզվի ծագման, ստացիայականության և շորս տարրերի տեսությունը: Այդ դիրքերից ենելով էլ, Գ. Սևակին նվիրված հատվածում մենք լիովին պաշտպանել էինք նրա «Հանուն մարքս-լենինյան լեզվաբանության» հոդվածի դրույթները, զրույնով, որ նա Մառի ուսմունքը քննադատում է մարքսիզմ-լենինիզմի դիրքերից: Ա. Ղարիբյանը, որ մեր օպոնենտն էր, խստորեն հարձակվեց մեզ վրա. նրան միացավ Զ. Բաշինջաղյանը: Մեր տեսակետը պաշտպանեց Գ. Ղափանցյանը: Գ. Սևակը ելույթ չունեցավ, բայց նա նույն դիրքերում էր կանգնած, ըստ որում իր հոդվածի սկզբունքներից չէր հրաժարվել: Մեր վերջին խոսքում մենք պաշտպանեցինք մեր տեսակետները, հենվելով մարքսիզմ-լենինիզմի կլասիկների ասույթների վրա:

փանցյաճի դեմ՝ մեղադրելով նրան հակամատականության մեջ և օգտագործելով գրքի մեջ մի քանի տեղ ն. Մառի ուսմունքի մասին արված քննադատական դիտողությունները (տե՛ս օրինակ՝ էջ 169—170, ծան.)։ Քննարկումը հիմնականում Ա. Ղարիբջանի ցանկացած ընթացքն ունեցավ, թեև եղան նաև մի քանի անհամարձակ պաշտպանական ելույթներ։ Գեպքերի բնականոն զարգացումը իր գագաթնակետին հասավ 1949 թ., երբ ՀԿՊ Կենտրոնական Կոմիտեն հատուկ որոշմամբ Մառի ուսմունքը գնահատեց որպես մարքսիստական լեզվաբանական ուսմունք և Հ. Աճառյանին ու Գ. Ղափանցյանին համարեց բուրժուական լեզվաբանության ներկայացուցիչներ։ Վերջիններս այդ որոշումից կարճ ժամանակ հետո ազատվեցին համալսարանից։ Դոգմատիկ մառականությունը կատարելապես հաղթանակել էր, արակչեկյան ռեժիմն օրինականացվել։ Գ. Սևակը, տողերիս գրողը և Ս. Ղազարյանը ստեղծված իրադրությունների մեջ անձնատուր էին եղել՝ պե՛ռ ավելին. նրանք հանդես էին գալիս արդեն «նոր ուսմունքի» դիրքերից։ Հատկանշական են այդ տեսակետից է. Աղայանի «Լեզվաբանության ներածություն» մենագրությունը (1949), որ գրված էր «նոր ուսմունքի» ոգով, Գ. Սևակի «Աշխատանք-լեզու-միտք» հոդվածը, որ կառուցված էր ն. Մառի քառատարը վերլուծության մեթոդով և նրա «լեզվաբանական հնէաբանության» սկզբունքներով։ Մի լեզվաբանի պատկերավոր արտահայտությամբ ասած, մենք նստել էինք մառականների նավակը և երգում էինք նրանց երգը։ Այսպիսով, Հայաստանը դարձավ մառականության առաջապահ դիրքերից մեկը²։

Մ Ե Ը Ո Ւ Գ Զ Ը Գ Ղ Ա Ն (1950 թ. հունիսից հետո)։ Լեզվաբանական դիսկուսիան ինչպես ամբողջ սովետական լեզվաբանությունը, այնպես էլ նրա մի մասը կազմող սովետահայ լեզվաբանությունն ազատեց «նոր ուսմունքից», հանեց լծացման վիճակից և վերացրեց արակչեկյան ռեժիմը։ Մառի ուսմունքի հետևորդները հրապարակով ընդունեցին իրենց սխալները և լեզվաբանական ուսում-

նասիրությունների ձեռնամուխ եղան տեսական նոր սկզբունքներով ու նոր մեթոդով։ Հ. Աճառյանը և Գ. Ղափանցյանը վերստին աշխատանքի անցան համալսարանում և, որ կարևորն է, սկսեցին մեկը մյուս ետևից հրատարակել իրենց մեծարժեք ուսումնասիրությունները։ Երիտասարդ լեզվաբանները, որոնք դեռ նոր էին ապարեզ իջել և մառականության տիրապետության վերջին տարիներին ստիպված էին թոթովել Մառի դրույթները, հեշտությամբ ազատվեցին այդ թոթովանքներից և անցան արդյունավետ գիտական աշխատանքի։

Անցած տասը տարիների ընթացքում մեծ աշխատանք է կատարվել ժամանակակից հայոց լեզվի քերականական կառուցվածքի և բառային կազմի ուսումնասիրության ուղղությամբ։ Վերանայվել ու մասնակի բարեփոխություններով վերահրատարակվել են դպրոցական քերականությունները (Գ. Սևակի «Շարահյուսությունը» և Ա. Ղարիբջանի «Քերականությունը»), որպես կայուն դասագրքեր։ Ստեղծված է միջնակարգ դպրոցի 8—10-րդ դասարանների մայրենի լեզվի քերականության դասագիրք¹։ Լույս են տեսել լեզվաբանական առարկաների բուհական մի շարք դասագրքեր²։ Դրանցից մի քանիսը նախկինում հրատարակված դասագրքերի վերամշակված հրատարակություններն են (ինչպես, օրինակ, Գ. Սևակի «Ժամանակակից հայոց լեզվի դպսւնթացը», է. Աղայանի «Լեզվաբանության ներածությունը» և այլն), իսկ մեծագույն մասը՝ վերջին տասը տարիներում միայն պատրաստված դասընթացներ։ Հատկանշական է, որ այդ աշխատանքների մեծ մասը բուհական դասագիրք լինելով՝ կրում է նաև մենագրական, ինքնուրույն ուսումնասիրությունների բնույթ։ Զգալի գործ է կատարված ժամանակակից հայերենի քերականական կառուցվածքի և բառային կազմի ուսումնասիրության բնագավառում։ Լույս են տեսել պատկառելի քանակությամբ մենագրական ուսումնասիրություններ³, որոնք նվիրված են ժամանակակից հայերենի զանա-

1 Ա. Վ. Գրիգորյան, Հայոց լեզվի քերականություն, Երևան, 1953։
 2 Գ. Սևակ, Ժամանակակից հայոց լեզվի դասընթաց, Երևան, 1955, է. Բ. Յղայան, Լեզվաբանության ներածություն, Երևան, 1952, Եղյնը ուսուցիչ, Երևան, 1960, Եղյնի՝ կատիներին լեզվի քերականություն, գիրք Ա, Երևան, 1950, Ս. Ղ. Ղազարյան, Հայոց լեզվի համառոտ պատմություն, Երևան, 1954, Եղյնի՝ Գրաբարի ձեռնարկ, Երևան, 1951, Գ. Բ. Զանուկյան, Լեզվաբանության պատմություն, Երևան, հ. 1, 1960, հ. 2, 1962, Ա. Ա. Աբրահամյան, Գրաբարի ձեռնարկ, Երևան, 1952, Բ. հրատ., հ. 2, ալյն, և այլն։
 3 Հ. Գ. Բարսեղյան, Արդի հայերենի բայի և խոնարհման տեսություն, Երև-

¹ Մեր երկու տաղանդավոր երիտասարդ լեզվաբանները՝ Գ. Զահուկյանն ու Ա. Աբրահամյանը բարեբախտաբար դեռ շատ երիտասարդ էին և հարկադրված չէին ակտիվորեն մասնակցել մառական այդ թռուրտին։
² Այդ պայմաններում էր, որ Հ. Աճառյանի «Հայոց լեզվի պատմության» երկրորդ մասը տպագրվեց, բայց լեզվի ինստիտուտի դիրեկտորի նախաձեռնությամբ և գիտական խորհրդի որոշմամբ ոչնչացվեց և լույս չտեսավ մինչև 1950 թ.։ Լեզվաբանական դիսկուսիայից հետո միայն վերստին տպագրվեց ու լույս տեսավ։

8. (Միայն հոգն.): Դասարան (երեխայական խաղ), դասարանախաղ: 9. (միեւնու.): Աստիճանակարգ, կարգ:

Դժվար չէ նկատել, որ այս ինը թարգմանություններից առաջինը, երկրորդը, ութերորդը՝ համընկնում են մեր դասարան բառին և պետք է միանային իրար (հմմտ. Наш класс идет на экскурсию (1) Մեր դասարանը էքսկուրսիա է գնում: В новом здании школы были устроены светлые большие классы (2) Դպրոցի նոր շենքում պատրաստված էին լուսավոր, մեծ դասարաններ), չորրորդը, վեցերորդը, յոթերորդը, իններորդը պետք էր միացնել և թարգմանել միայն կարգ բառով՝ ինչպես արված է օրինակների թարգմանությունների մեջ (հմմտ. Предприятия были разделены в 2 класса (4) Ձեռնարկությունները բաժանվեցին երկու կարգի: Каюта первого класса (6) Առաջին կարգի նավասենյակ: Первый класс составляют единицы, десятки и сотни (7) Առաջին կարգը կազմում են միավորները, տասնավորները և հարյուրավորները: Чиновник шестого класса (9) Վեցերորդ կարգի աստիճանավոր): Այսպիսով, ինը թարգմանություններից հինգը բոլորովին ավելորդ են: Բայց միայն ավելորդությունը չէ դատապարտելին. այդ ավելորդ թարգմանություններն «արդարացնելու» համար կազմողներն ստիպված են եղել հաճախ բացատրություններ տալ, իսկ որ ավելի վատ է, բոլորովին ավելորդ նորակերտ բառեր հորինել: Այդպիսիք են, օրինակ, միայն հիշյալ բառահոգվածի մեջ՝ դասարանախաղ, դասասենյակ, տարակարգ, աստիճանակարգ բառերը: Ահա, այս բոլորը մենք դիտում ենք որպես արատավոր սկզբունք²: Այս սխալը պետք է ուղղել երկրորդ հրատարակության ժամանակ, և հենց այդ նպատակով էլ մենք խոսե-

¹ Չորրորդ իմաստով խոսակցական լեզվում գործածվում է հենց կլաս բառը (հմմտ. կլաս խաղալ), իսկ եթե անպայման պետք էր թարգմանել, ապա պետք էր տալ միայն դասարան բառով:

² Առաջին հատորի զլխավոր խմբագիր Ռ. Լ. Մելքոնյանը և Է. Բ. Աղայանը, ինչպես և կազմողներից Վ. Ա. Փոթեյանը, այդ բանը խորապես դիտակցելով հանդերձ, շարողացան փոխել սկզբունքը: Այդ պատճառով էլ զլխավոր խմբագիրներն առաջաբանում ստիպված եղան գրել. «Իրենց նշանակությամբ տարբերակված, մեծ մասամբ օրինակներով հիմնավորված թարգմանությունների առկայությունը, ինչպես նաև բառերի ու նրանց առանձին նշանակությունների բացատրության տարբերը բնութագրում են տվյալ ուսուցանողական բառարանը որպես թարգմանական-բացատրական բառարան» (հ. Ա, էջ VII):

ցինք դրա մասին: Եվ շնայած դրան, բառարանը անառարկելիորեն հայ բառարանագրության մեծագույն նվաճումներից մեկն է:

Վերջին տասնամյակում հրատարակվել է նաև հայ-ուսերեն միահատոր բառարան, (Երևան, 1960), որի հեղինակներն են Ա. Ս. Ղարիբյանը, Ե. Գ. Տեր-Մինասյանը և Մ. Ա. Գևորգյանը: Մամուլում ծավալված քննադատությունը, սակայն, որակեց այդ բառարանը որպես արատավոր մի գործ:

1950 թ. հետո զգալիորեն աշխուժացել են նաև տերմինաշինության բնագավառում տարվող աշխատանքները: Լույս են տեսել մի շարք տերմինաբանական բառարաններ, որոնցից առանձնապես պետք է հիշատակել՝ ՀՍՍՌ ԳԱ ակադեմիկոս Լ. Ա. Հովհաննիսյանի «Հատին-ուսու-հայերեն բժշկական բառարանը» (Երևան, 1952), պրոֆ. Վ. Արծրունու «Ռուսերեն-լատիներեն-հայերեն բժշկագիտական տերմինների բառարանը» (Երևան, 1956. ետմահու հրատարակություն), «Ռուս-հայերեն պոլիտեխնիկական բառարանը» (Երևան, 1957), որ կազմել է մասնագետ հեղինակների մի մեծ խումբ, իսկ մշակել ու խմբագրել են Ռ. Տ. Ախշարումովը, Զ. Ա. Հացագործյանը և Վ. Ա. Փոթեյանը:

Բառարանագրության բնագավառում խոշոր երևույթ կլինի հայերենի բացատրական նոր, բազմահատոր բառարանի հրատարակությունը, որ կազմում է ՀՍՍՌ ԳԱ Լեզվի ինստիտուտը:

1950 թ. դիսկուսիան, վերացնելով արակչեկյան ռեժիմը և բացահայտելով Ն. Յա. Մառի լեզվաբանական տեսության ու քառատարր վերլուծության մեթոդի հակագիտական էությունն ու սնանկությունը, պատշաճ գնահատություն տվեց պատմա-համեմատական մեթոդին: Պատմական ու դիալեկտիկական մատերիալիզմով զինված սովետական լեզվաբանությունը, ինչպես վերը ցույց տվեցինք, հսկայական աշխատանքներ ծավալեց լեզուների պատմա-համեմատական ուսումնասիրության ուղղությամբ և զգալի հաջողությունների հասավ այդ բնագավառում: Սովետահայ լեզվաբանությունն էլ վերջին տասը տարիների ընթացքում հսկայական նվաճումներ է ձեռք բերել հայերենի պատմական ու համեմատական ուսումնասիրության բնագավառում³: Հայոց լեզվի պատմու-

³ Հ. Հ. Անադյան, Հայոց լեզվի պատմություն, II մաս, Երևան, 1951, Ա. Ա. Արքանավյան, Հայերենի դերբայները և նրանց ձևաբանական նշանակությունը, Երևան, 1953, Ի. Կ. Կուսկյան, Очерки исторического синтаксиса литературного армянского языка, Москва, 1959, Ս. Ղ. Ղազարյան, Ժամանակակից հայ- 5-285

թյան, նրա քերականական կառուցվածքի և բառային կազմի ու հնչյունական համակարգի պատմական զարգացման ուսումնասիրության համար առավել նշանակալից աշխատություններ են ՀՍՍՌ ԳԱ ակադեմիկոս Հ. Հ. Աճառյանի «Հայոց լեզվի պատմություն» մեծարժեք մենագրությունը, որ հայերենագիտության կոթողներից մեկն է, երիտասարդ տաղանդավոր լեզվաբան, դոցենտ Ա. Աբրահամյանի՝ հայերենի դերբայների ուսումնասիրությանը նվիրված հիանալի մենագրությունը, պրոֆ. Հ. Կ. Կուսիկյանի՝ հայերենի պատմական շարահյուսության ակնարկները, որ, իբր տեսակի մեջ առաջինը լինելով հանդերձ, միանգամայն հաջողված գործ է և լուրջ ներդրում է հայերենագիտության բնագավառում, պրոֆ. Ս. Ղ. Ղազարյանի «Միջին հայերեն» լուրջ մենագրությունը, որի առաջին հատորն է լույս տեսել դեռևս, ՀՍՍՌ ԳԱ ակադեմիկոս Գ. Ա. Ղափանցյանի հայոց լեզվի պատմության հնագույն շրջանին նվիրված հետազոտությունները և այլն, և այլն:

Հայերենի պատմա-համեմատական ուսումնասիրությանը նվիրված և առհասարակ պատմա-համեմատական լեզվաբանությանը վերաբերող աշխատություններից՝ առաջնակարգ նշանակություն ունեն ՀՍՍՌ ԳԱ ակադեմիկոս Հ. Հ. Աճառյանի «Լիակատար քերականություն հայոց լեզվի» բազմահատոր աշխատությունը, — որը ընդհանուր համադրական քերականության և հայերենի պատմա-համեմատական ուսումնասիրության մի կատարյալ հանրագիտարան է, — և երիտասարդ ու տաղանդավոր լեզվաբան պրոֆ. Գ. Բ. Զահուկյանի «Հին հայերենի հոլովման սիստեմը և նրա ծագումը» հիանալի մենագրությունը:

Վերջապես, մեծ թափ են ստացել բարբառագիտական աշխատանքները: Այստեղ էլ առաջին հերթին Հ. Աճառյանն է, որ իբր թե ընդհանուր բնույթի և թե՛ առանձին բարբառներին նվիրված ուսումնասիրություններով հարստացրել է հայ բարբառագիտու-

յոց լեզուն և ուսերենի դերը նրա հարստացման ու զարգացման մեջ, Երևան, 1955, Եռյնի՝ Միջին հայերեն, Երևան, 1960, Գ. Ա. Ղափանցյան. Հայոց լեզվի պատմություն, հին շրջան, Երևան, 1961, (համահյու հրատարակություն), Հ. Զ. Պետրոսյան. Գոյականի ստույնները հայերենում, Երևան, 1960 և այլն, և այլն:

1 Հ. Աճառյան. Լիակատար քերականություն հայոց լեզվի, Ներածություն և հ. 1—4, Երևան, 1952—1961, Է. Բ. Աղայան. Պատմա-համեմատական մեթոդը լեզվաբանության մեջ, Երևան, 1958, Գ. Բ. Զահուկյան. Հին հայերենի հոլովման սիստեմը և նրա ծագումը, Բ. Ղազարյույան, Հին հայերենի խոնարհումը և նրա ծագումը, Երևան, 1961 և այլն:

թյունը բազմաթիվ մեծարժեք մենագրություններով: Հիշատակության արժանի են պրոֆ. Ա. Ս. Ղարիբջանի «Հայ բարբառագիտությունը» և Ա. Վ. Գրիգորյանի «Հայ բարբառագիտության դասընթացը», ինչպես և Վանի, Առտիալի, Մեղրու, Կարնո, Մշո, Կարճևանի և այլ բարբառներին նվիրված մենագրությունները¹: Վերջին տարիներում մեծ ուշադրության են արժանացել հայ բարբառների պատմության ու տեսության կարևորագույն խնդիրները: Այդ տեսակետից նշանակալից է հայերեն բարբառների ծագմանը և դրան սերտորեն առնչվող՝ հայերենի բաղաձայնական համակարգի առաջացման խնդրին նվիրված դիսկուսիան, որ այժմ ծավալված է համաշխարհային մասշտաբով: Դիսկուսիան սկսվեց մեր «Նոր հայերեն բարբառների առաջացման հարցի շուրջը» հոդվածով (ՊՔՀ, 1958, № 2, էջ 225 և շար.), որի մեջ, պաշտպանելով Հ. Աճառյանի տեսությունը ժամանակակից հայերեն բարբառների առաջացման և զրաբարի ու այդ բարբառների հարաբերության մասին, միաժամանակ քննադատում ենք պրոֆ. Ա. Ղարիբջանի² այն տեսությունը, ըստ որի շնչեղծացած ձայնեղներ ունեցող հայերեն բարբառներն, իբր թե, ավելի հին են, քան զրաբարը: Մեր այդ հոդվածին պատասխանեց պրոֆ. Ա. Ղարիբջանը, իսկ նրանից հետո, նրա տեսության քննադատությանը հանդես եկան պրոֆեսորներ Գ. Սևակը, Գ. Զահուկյանը, Ս. Ղազարյանը³: Այնուհետև դիսկուսիան ծավալվեց «Вопросы языкознания» ժուռնալի էջերում 1959 թ. և դեռ շարունակվում է⁴: Դիսկուսիայում

1 Ար. Ղարիբջան, Հայ բարբառագիտություն, Երևան, 1953, Ա. Վ. Գրիգորյան, Հայ բարբառագիտության դասընթաց, Երևան, 1957, Հ. Աճառյան, Քննություն Առտիալի բարբառի, Երևան, 1953, Եռյնի՝ Քննություն Վանի բարբառի, Երևան, 1953, Էդ. Աղայան, Մեղրու բարբառը, Երևան, 1954, Հ. Մ. Մկրտչյան, Կարնո բարբառը, Երևան, 1952, Վ. Ա. Պետրոսյան, Սասունի բարբառը, Երևան, 1954, Ա. Ս. Ղարիբջան, Հայերենի նորահայտ բարբառների մի նոր ճյուղ, Երևան, 1958, Ս. Հ. Բաղդասարյան-Քափալցյան, Մշո բարբառը, Երևան, 1958, Հ. Գ. Մուրադյան, Կարճևանի բարբառը, Երևան, 1960 և այլն:

2 Ա. Ղարիբջան, Հայ բարբառների ծագման հարցի շուրջը, ՊՔՀ, 1958, № 3, էջ 241 և շար.:

3 Գ. Սևակ, Հայ բարբառների ծագման հարցի շուրջը, ՊՔՀ, 1959, № 1, էջ 244 և շար., Գ. Զահուկյան, Հայ բարբառագիտության և հայերենի բարբառների ծագման հարցը, ՊՔՀ, 1959, № 1—2, էջ 305 և շար., Ս. Ղազարյան, Հայերեն բարբառների և նրանց ծագման հարցի շուրջը, ՊՔՀ, 1960, № 3, էջ 172 և շար.:

4 Մինչև այժմ հրատարակված են հետևյալ հոդվածները. А. С. Гарбян. Об армянском консонантизме, ВЯ, 1959, № 5; Ж. Фурке, Генезис системы согласных в армянском языке, ВЯ, 1959, № 6; Э. Б. Агаян, О генезисе ар-

չոշափվում են հայերենի համեմատական քերականության, ինչպես և հնդեվրոպական լեզվաբանության շատ կարևոր հարցեր, և ինչպես էլ որ նա լուծվի, մեծապես նպաստած կլինի հայերենագիտությանը թե՛ մեզ մոտ՝ Սովետական Միության մեջ և թե՛ արտասահմանում:

Այս է, ահա, ընդհանուր բնութագիրը պատմական այն ուղու, որ անցել է սովետահայ հայերենագիտությունը վերջին քառասունամյակում: Այդ համառոտ բնութագիրը պարզ կերպով ցույց է տալիս, որ՝ 1) սովետական կարգերի հաստատումից հետո հայերենի սուսումնասիրությունն աննախընթաց զարգացում է ապրել ու ձեռք է բերել մեծամեծ նվաճումներ. 2) հենց այդ բուռն զարգացումը պայմանավորել է այն փաստը, որ Սովետական Հայաստանն է գարձել հայերենագիտության առաջնակարգ կենտրոնը՝ ամբողջ աշխարհում, մինչդեռ նախկինում, ինչպես տեսել ենք աշխատությանս առաջին հատորում, հայագիտության կարևորագույն կենտրոնները եղել են Հայաստանից դուրս, 3) ստեղծվել են բոլոր նախապայմաններն ու հնարավորությունները՝ առաջիկայում է՛լ ավելի մեծ մասշտաբներ ընդգրկող լեզվաբանական աշխատանքների համար:

Այս համառոտ տեսությունից հետո, ահա, անցնում ենք ավագ սերնդի ներկայացուցիչներից յուրաքանչյուրի լեզվաբանական ժառանգության քննական տեսությանը: Առաջնորդվելով առաջին հատորում շարադրված սկզբունքով, մենք սովետական շրջանի հայերենագիտության մեջ կարող էինք առանձնացնել երկու դպրոց: Մի դպրոցը ներկայացնում են Ն. Յա. Մառը և Գ. Ա. Ղափանցյանը, որոնք հայերենը համարում են երկցեղ (երկբնույթ, երկչերտ) կամ նույնիսկ բազմացեղ, խառնածին լեզու. երկրորդը, որ հայերենի

мянского консонантизма, ВЯ, 1960, № 4; В. И. Георгиев, Передвижение смычных согласных в армянском языке и вопрос этногенеза армян, ВЯ, 1960, № 5; Г. Б. Джаукян, К вопросу о происхождении консонантизма армянских диалектов, ВЯ, 1960, № 6; Э. Бенвенист, Проблемы армянского консонантизма, ВЯ, 1961, № 3; Г. Фогт, Заметки по армянскому консонантизму, ВЯ, 1961, № 3, Ян Отремский, По поводу армянского консонантизма, ВЯ, 1961, № 3; В. Пизани, Об армянских отражениях индоевропейских взрывных, ВЯ, 1961, № 4, У. Ф. Леман, Об армянской системе смычных и ее соотношении с протоиндоевропейской системой, ВЯ, 1961, № 4; Л. Заброцкий, Замечания о развитии армянского консонантизма, ВЯ, 1961, № 5; Ф. Фейди, Заметки по армянскому консонантизму, ВЯ, 1961, № 5; Э. А. Макаев, Передвижение согласных в армянском языке, ВЯ, 1961, № 6.

ցեղակցության հարցում հետևում է Հյուբշմանի տեսությանը, այժմ ներկայացնում են Սովետական Միության բոլոր հայագետները և, առհասարակ, հնդեվրոպաբանները: Այս երկրորդը, որ հայերենի ցեղակցության հարցում գրեթե նույնանում է հայ լեզվաբանության շորրերդ դպրոցի հետ, տեսական հարցերում բաժանվում է նրանից՝ դալով դեպի մատերիալիստական լեզվաբանությունը:

Թեև այդ երկու ուղղությունները որոշակիորեն հակադրվել են իրար, բայց նկատի ունենալով, որ սովետական հայերենագիտության համար առավել կարևորը ոչ թե սոսկ հայերենի ցեղակցության խնդիրն է եղել, այլ տեսական այն բախումները, որոնց մասին վերը խոսեցինք, ուստի և այս հատորում մենք ավելի նպատակահարմար ենք համարում ներկայացնել հայագետ լեզվաբաններին ոչ թե ըստ այդ դպրոցների, այլ առանձին-առանձին՝ իրենց գիտական գործունեության զարգացման ողջ պրոցեսի բնութագրությամբ:

Սեփան Սարգսի Մալխասյանց

Անցյալ դարի 80-ական թվականների վերջերից իր գրական ու գիտական բեղմնավոր գործունեությունն սկսեց մեր ժամանակի ականավոր հայագետներից մեկը՝ Ստեփան Մալխասյանցը: Յուր բազմաթիվ թարգմանություններով, գրախոսականներով, պատմա-բանասիրական ու լեզվաբանական հետազոտություններով և բառարանագրական աշխատանքով Ստ. Մալխասյանցն իր երկարամյա կյանքի ընթացքում գիտնականի անխոնջ գործունեությամբ մեծ ծառայություն է մատուցել հայ կուլտուրային ու գիտությանը և արժեքավոր ծառանգություն թողել սերունդներին:

Ծնվել է Մալխասյանցը 1857 թ., Ախալցխայում: Նախնական կրթությունն ստանալով ծննդավայրում՝ մեկնել է Պետերբուրգ՝ բարձրագույն կրթություն ստանալու: Այստեղ նա սովորել է Պետերբուրգի համալսարանի արևելյան լեզուների ֆակուլտետում, աշակերտելով ժամանակի նշանավոր հայագետ Քերովբե Պատկանյանին: 1889 թ. ավարտելով համալսարանը՝ Ստ. Մալխասյանցը ամբողջապես նվիրվել է մանկավարժական ու գիտական գործունեության: Դեռևս ուսանողական տարիներից թղթակցելով հայկական զանազան թերթերի ու ամսագրերի, Մալխասյանցն արդեն ճանաչվել էր որպես շնորհալի երիտասարդ, որ գիտնականի լուրջ հույսեր էր ներշնչում: Վերադառնալով Անդրկովկաս, նա է՛լ ավելի մեծ հռանդով ծավալեց իր գիտական գործունեությունը՝ յուր սուսումնասիրություններով, գրախոսականներով ու զանազան առիթ-

ներով դրած հողվածներով արձագանքելով իր ժամանակի հայագիտությանը հուզող հարցերին: 1921 թ., 64 տարեկան հասակում Մալխասյանցը հրաժարվեց մանկավարժական գործունեությունից և ամբողջապես նվիրվեց գիտական աշխատանքներին, հատկապես «Հայերէն բացատրական բառարանի» կազմելուն: 1940 թ. Մալխասյանցին շնորհվեց ֆիլոլոգիական գիտությունների դոկտորի աստիճան՝ honoris causa: Խորին ծերության մեջ էլ, հաստատվելով Սովետական Հայաստանում, նա իր հետազոտություններով ակտիվ մասնակցություն էր ցուցաբերում Հայաստանի գիտական կյանքին և իր ծանրակշիռ խոսքն ասում հայագիտության կարևոր հարցերի մասին: Բարձր գնահատելով Ստ. Մալխասյանցի գիտական վաստակները՝ Հայաստանի կառավարությունը 1943 թ. նրան ՀՍՍՌ Գիտությունների ակադեմիայի հիմնադիր կազմի անդամ ընտրեց: 1946 թ. Սովետական կառավարությունը Ստ. Մալխասյանցին արժանացրեց Ստալինյան մրցանակի՝ «Հայերէն բացատրական բառարանի» համար:

Վախճանվել է Մալխասյանցը 1947 թվականին:

Իր գրական-գիտական գործունեությունը Մալխասյանցն սկսել է թարգմանություններով ու պատմա-բանասիրական հետազոտություններով: Ռուսերենից, օտար լեզուներից, ինչպես և գրաբարից նա թարգմանել է ուսուցիչական դասական գրականության և հայ հին մատենագրության բազմաթիվ ընտիր նմուշներ, որոնք սիրով ու երախտագիտությամբ են ընդունվել հայ ընթերցողի կողմից: Առանձնապես մեծ արժեք է ներկայացնում Շեքսպիրի «Մակբեթ» և Էբերսի «Մարդ եմ» ստեղծագործությունների գեղարվեստական թարգմանությունը, որոնք մեր թարգմանական գրականության լավագույն նմուշներից են: Հայ հին մատենագրությունը ժամանակակից ընթերցողին մատչելի դարձնելու գործում անգնահատելի է Ստ. Մալխասյանցի դերը, հատկապես Մովսես Խորենացու և Փավստոս Բյուզանդի գրքերի թարգմանությամբ, որ կատարված է գիտական բարձր մակարդակով:

Իր երկարամյա գիտական գործունեության ընթացքում Մալխասյանցն անդրադարձել է հայագիտության բազմաթիվ կնճռոտ հարցերին և իր հետազոտություններով մեծապես նպաստել դրանց լուծմանը: Նրա պատմա-բանասիրական բազմաթիվ ուսումնասիրություններից առանձնապես կարևոր են «Ռուսմենասիրություն Փավստոս Բյուզանդի պատմության» (Վիեննա, 1896) և «Սեբէոսի պատմությունը և Մ. Խորենացին» (Քիֆլիս, 1899), որոնց մեջ քրն-

նության են առնվում Փավստոսի «Պատմության», Մովսես Խորենացու ու Սեբեոսի գրքերի ուսումնասիրության հետ կապված բազմաթիվ վիճելի հարցեր և, մեծ մասամբ, դրական լուծում ստանում: Իր բազմաթիվ բանասիրական հետազոտությունների մեջ Մալխասյանցը շատ ու շատ ճշտումներ է մտցնում հայ հին մատենագրության հուշարձանների հրատարակությունների մեջ և գիտական ճիշտ լուսաբանություն տալիս զանազան խնդիրների: Սակայն, շնայած հայ հին մատենագրության ուսումնասիրության բնագավառում ունեցած մեծ վաստակներին, Մալխասյանցն իրավամբ ավելի շատ ճանաչվել է որպես լեզվաբան, որպես հայ լեզվի խորահմուտ ուսումնասիրողներից մեկը: Իր բազմաթիվ հետազոտությունների մեջ Մալխասյանցն անդրադարձել է հին հայերենի, հայոց լեզվի պատմության, համեմատական քերականության ու ժամանակակից հայերենի զանազան հարցերին, ինչպես, օրինակ, հայոց լեզվի ցեղակցության, հայերենի ստուգաբանությունների, աշխարհաբարի ուղղագրության, հոլովների և այլ բազմաթիվ խնդիրների, և կանգնած լինելով գիտական անխախտ հիմքերի վրա, իր վճռական ու ժանրակշիռ խոսքն ասել: Առանձին գրքերով լույս տեսած, հայերենին վերաբերող նրա աշխատություններն են.

1. «Գրաբարի հավաքումը, խոսքի և նախադիր և երբ», որ ունեցել է երկու հրատարակություն (Քիֆլիս, 1891 և 1910), և արևելահայ աշխարհաբարով հրատարակված՝ գրաբարի ձևաբանության լավագույն դասագրքերից մեկն է:

2. «Գրաբարի համաձայնությունը» (Քիֆլիս, 1892), որ, ինչպես հեղինակն էլ ասում է, նախորդի երկրորդ մասն է: Այս գիրքը, որ լիովին պարունակում է գրաբարի շարահյուսությունը, քերականագիտական-լեզվաբանական տեսակետից մեծ արժեք է ներկայացնում: Առանց տատանվելու կարելի է ասել, որ նա գրաբարի շարահյուսության միակ ամբողջական ու սիստեմատիկ ուսումնասիրությունն է, որ աչքի է ընկնում թե՛ գրաբար լեզվի հմուտ գիտությամբ և թե՛ նյութի գիտական մշակումով: Այս աշխատության բարձր արժեքը ճիշտ է գնահատել մեծահմուտ հայագետ Անտուան Մեյեն՝ համարելով այն «մի դասական քերականություն»¹:

Մալխասյանցի գլուխ գործոցն է, սակայն, «Հայերէն բացատրական բառարանը», շորս մեծածավալ հատորներից բաղկացած

¹ Տե՛ս MSL, X, էջ 241, ծանոթություն:

մի աշխատություն, որ ոչ միայն հեղինակի բոլոր աշխատությունների պտակն է, այլև մի նշանավոր երևույթ սովետական հայագիտության պատմության մեջ²: Իր տեսակի մեջ առաջինը լինելով՝ այդ բառարանը ներկայացնում է հայոց լեզվի բառապաշարը հինգերորդ դարից մատենագրությունից սկսած մինչև մեր օրերի գրական լեզուն և բարբառները: Նրա ընդգրկած նյութի մասին լրիվ պատկերացում կազմելու համար ավելորդ չենք համարում մեջ բերել հեղինակի խոսքերը՝ յուր բառարանի ծրագրի մասին. ըստ այդ ծրագրի, շորս հատորի մեջ «այս բառարանը պարունակելու է հայերէն լեզվով գրված ու խոսված բոլոր բառերը մեր մատենագրության սկզբից մինչև մեր ժամանակները, այսինքն՝ բառամթերքները գրաբարի, ստորին գրաբարի, ուսմկորենի, արդի գրական լեզվի և գավառական բարբառների՝ իրենց ոճաբանություններով, հին և նոր ժամանակի փոխառյալ բառերը եվրոպական կամ արևելյան լեզուներից, ցույց տալով նրանց ծագումը, գրական լեզվի ու բարբառների բառերի ամեն մի նշանակության համար համապատասխան օրինակներ, փերականական ցուցումներ և այլն» (հատոր Ա, Առաջաբան, էջ է): Այս ընդարձակ ծրագիրն արդեն բավական է, որպեսզի բառարանի մեծ արժեքի մասին գաղափար կազմենք: Հայերենի համար այդպիսի բառարան մինչև այդ չի եղել. նոր Հայկազնաբառարանը, որ լավագույն հայերեն բառարանն է, գրաբարի բառերն է պարունակում միայն, ուրիշ բառարանները նույնպես հայերենի այս կամ այն շրջանն են ընդգրկում: Մալխասյանցի այս բառարանը միակն է, որ ընդգրկում է հայերեն լեզվի բոլոր շրջանները (հարկավ՝ գրերի գյուտից սկսած), որքանով այդ հնարավոր է եղել հեղինակի համար: Այդ մեծ ծրագրի իրականացմանը հեղինակը ձեռնարկել է 1922 թ. հունվարի 1-ից (անդ, էջ՝ ԻԱ) և ավարտել է այն 1935 թ. մայիսի 24-ին: Ուշադիր քննությունը ցույց է տալիս, որ հեղինակը ըստ ամենայնի, կարողացել է հասնել իր նպատակին. թե՛ պարունակած բառամթերքով, թե՛ բառերի բազմաթիվ նշանակությունների բացատրությամբ՝ մանավանդ այդ նշանակությունների փոփոխման ու զարգացման տրամաբանական հաջորդականությունը պահպանելով, և թե՛ բազմաթիվ ոճերի պարունակությամբ գիրքն արդյունք է հեղինակի տքնաջան և հմուտ գիտական ուսումնասիրությունների:

² Երկրորդ, լուսատիպ հրատարակությամբ լույս է տեսել Բեյրութում, 1955—1956 թթ.:

Հեղինակը յուրաքանչյուր բառ բացատրում է իր տարբեր նշանակություններով, ժամանակակից գրական, մասամբ էլ գավառական, բառերի յուրաքանչյուր նշանակության համար իբրև օրինակ հակիրճ կապակցություններ կամ նախադասություններ բերելով. զգալի տեղ են գրավում բառերի ոճային առումները, որոնցով շափազանց հարուստ է բառարանը. վերջապես, արդի լեզվում գործածվող և շարժածվող բառերը տարբերելու համար հեղինակը գործածել է որոշ նշաններ՝ բառերի մոտ. գործնական տեսակետից այդ ևս մեծ նշանակություն ունի: Այս բոլորի շնորհիվ է, ահա, որ բառարանը հայ բառարանագրության նշանավոր գործերից մեկն է դառնում: Բառարանի կառուցվածքի մասին ավելի լավ պատկերացում տալու, ինչպես և նրա սկզբունքները ճիշտ գնահատելու համար, բերում ենք այստեղ, որպես ցուցադրական նյութ (иллюстративный материал), հինգ բառի մշակումը: Այդ բառերից առաջինը (ամիս) հնդեվրոպական ծագումով հայերեն բառ է, որ գործածական է եղել և՛ հին, և՛ միջնադարյան մատենագրության մեջ, գործածական է ժամանակակից հայերենում և բազմաթիվ բարբառներում, երկրորդը (աստէֆ) միայն հին մատենագրության մեջ գործածված բառ է, երրորդը (սալառնորդ) միայն քսաներորդ դարում կազմված և, հետևաբար, նոր հայերենին հատուկ բառ է, չորրորդը (ապրիորի) նոր փոխառություն է, որ հատուկ է միայն ժամանակակից հայերենին և հինգերորդը (ամի) բարբառային բառ է:

Ա) ԱՄԻՍ (ամսոյ, ամսեան), ամսի կմ ամսուայ կմ ամսուն, ամիսներ, Գ. © 1. Սկզբնական նշ՝ լուսնական ամիս (Տ. ներկեր): 2. Տարուայ տասներկու մասերից մէկը, որ բաղկանում է 30 կմ 31 օրից, իսկ փետրուարը 28, նահանջ տարում 29, օրից: Ամիսս 15-ին ձիւն եկաւ: Տ ա Ր Ի ն տ ա ս ն ե Ր կ ու ա մ Ի ս, ամբողջ տարին, շարունակ: 3. Յաջորդաբար իրար հետևող 30 օրուայ ժամանակամիջոց: Բացակայութիւնը տեղց ուղիղ երկու ամիս, յունիսի 4-ից մինչև օգոստոսի 4-ը: Ներկայ սեպտեմբերի 20-ից 3 ամիս ժամանակով, այսինքն միչև դեկտեմբերի 20-ը: Երեք ամսուայ ընթացքում աւարտեց: Առևտրական ամիսը երեք ամիս է հաշվվում: Ա մ ս է ա մ Ի ս, մկ. 1. Իւրաքանչյուր ամիս մի անգամ. յաջորդաբար: Ամսէ ամիս ոռնիկ ստանալ: 2. Ամիս ամսուայ վրա, հետզհետէ: Ամսէ ամիս ջուրը նուազում է: 4. Լ ա ս ն ա կ ա ն ա մ Ի ս, այն ժամանակամիջոցը,

որի ընթացքում լրահինք մի լիակատար շրջան է կատարում երկրի շուրջը, որ հաւասար է 29 օրուան, 12 ժամի և 44 րոպէի: Տ ո մ ա ր ա կ ա ն ամիս, Հայկական տոմարի ամիս, որ հաւասար է 30 օրուան: Քաղաքացիական ամիսներն են՝ Յունուար 31 օր, Փետրուար 28 օր (նահանջ տարում՝ 29 օր), Մարտ 31, Ապրիլ 30, Մայիս 31, Յունիս 30, Յուլիս 31, Օգոստոս 31, Սեպտեմբեր 30, Հոկտեմբեր 31, Նոյեմբեր 30, Դեկտեմբեր 31: Հայկական տոմարի ամիսներն են՝ Նաւասարդ, Հոռի, Սահմի, Տրէ, Քաղոց, Արաց, Մեհեկան, Արեգ, Ահեկան, Մարերի, Մարգաց, Հրտոից—30-ական օր, և Աւելեաց 5 օր:

Բ) ԱՍՏէՔ, (էից), յոգն. գ. Այստեղ եղածները, երկրային բաները՝ արարածները:

Գ) ՍԱԻԱՌՆՈՐԴ, Գ.: Սաւառնակով թռչող՝ ճանապարհորդ: Սաւառնակն քնկաւ ջախջախվեց, բայց սաւառնորդներն անվնաս մնացին: Ռազմական սաւառնորդ:

Դ) ԱՊՐԻՈՐԻ (լատ. a priori, ի յառաջագունէ, ռուս.-ից), մկ. Պնդում, որ հիմնված է միայն նախնական վերացական դատողութիւնների վրայ, և որ հիմնված չէ փորձի և պրակտիկայի վրա: Հկո. Ապոստերիորի, որ նշանակում է փորձից յետոյ, փորձից՝ փաստերից ելնելով: Դիալեկտիկական մատերիալիզմը ժխտում է այն գիտութիւնը, որ հիմնված չէ զգայական փորձի և պրակտիկայի վրայ:

Ե) ԱՄԻ (ամի), ամիի կամ ամու, գ. (արաբ.—տաճկ. amu, հօրեղբայր), 1. Ընտանեկան խօսակցութեան մեջ՝ հօրեղբայր: Ամի՛, ինձ էլ տաւ հետդ: Ամիիս կասեմ: Մ ե ծ ա մ ի, մեծ հօրեղբայր: 2. Յարգական կոչում շափահասների համար, որ տրվում է յատուկ անունից յետոյ: Գասպար ամին եկաւ: 3. Ընտանեկան յարգական կոչում, որով դիմում են ծերունիներին, մանաւանդ անժանօթներին: Ամի՛, նստի՛ր հանգստացի: Քանի՛ տաւեկան ես, ամի:

Այս օրինակները, վերի բացատրութիւնների հետ, բավականաչափ զաղափար տալիս են բառարանի կառուցվածքի մասին, և մենք, դրա վրա հիմնվելով, կարող ենք արդեն քննութեան առնել նրա կազմութեան մի քանի սկզբունքները: Ինչպես ասացինք, բառարանը պարունակում է հին հայերենի (գրաբարի), միջին հայերենի, նոր հայերենի և հայերեն բարբառների բառերը, այն չափով,

որչափով նրանք ընդգրկված են զանազան տիպի բառարաններում: Այս ծրագրով բառարանը կարող էր լինել միայն և միայն պատմական բառարան. բայց մի մարդու կյանքը հազիվ թէ բավական լինի տասնհինգ դարերի բազմաճոխ գրականութեամբ ավանդված լեզվի ու նրա շուրջ հինգ տասնյակ բարբառների բառերը ներկայացնել պատմական քննութեամբ: Այս բանն, իհարկե, խորապես գիտակցել է Ստ. Մալխասյանցը և այդ պատճառով էլ կազմել է ոչ թէ պատմական, այլ սոսկ բացատրական բառարան, պատմականութեան որոշ տարրերով: Սրանով էլ հենց հեղինակը հարկադրված է եղել երկու սկզբունքները (պատմական և սինխրոնիկ) համատեղել միմյանց հետ, որ և բնականաբար իր ոչ նպաստավոր հետևանքն է ունեցել: Պարզէնք մեր ասածները մի օրինակով. առնել (արարի, արա՛) բայը գրաբարում ունի «ստեղծել, արարչագործել, կատարել» ևն իմաստները, միջին հայերենում նա ունի այնն էլ ձևը և իմաստային տեսակետից էլ որոշ չափով փոփոխված է, բարբառներում ունի անէլ, անիլ, ընէլ, էնէլ ևն ձևերը, դարձյալ իմաստային ինչ-ինչ տարբերութիւններով, ժամանակակից հայերենում ունի անել ձևը այժմյան իմաստներով, որոնց մի մասն է միայն համընկնում գրաբարյան առնել բայի իմաստներին: Պատմական բառարանում այս բալորը պետք է առնվելին մեկ բառ-հոդվածի մեջ և գրաբարից սկսեով՝ ձևվերի ու իմաստների հաջորդական փոփոխութիւններով ներկայացնելին առնել բառի պատմութիւնը V դարից մինչև այժմ: Սինխրոնիկ մտեցման դեպքում, որ բացատրական բառարանի հիմքն է կազմում, պետք էր վերցնել դրանցից մեկը. բացատրական (սինխրոնիկ) բառարանը կարող է ընդգրկել միայն լեզվական մեկ համակարգի բառային կազմը, տվյալ դեպքում՝ միայն գրաբարի, միայն միջին հայերենի կամ միայն աշխարհաբարի բառազանձը, իսկ մշտաներինը՝ լոկ այն չափով, որչափով նրանք իրենց արտահայտութեանը գտել են տվյալ համակարգում (օրինակ, գրաբարյան կամ բարբառային բառերը՝ ժամանակակից հայերենում). ինչ վերաբերում է բարբառային բառերին, ապա նրանք կարող են ընդգրկվել կամ համադրական-համեմատական ընդհանուր գավառական բառարանում, և կամ յուրաքանչյուր բարբառի առանձին բառարանում: Ստ. Մալխասյանցի բառարանում, ինչպես ասացինք, համատեղված են երկու (պատմական և սինխրոնիկ-բացատրական) սկզբունքները, որ հանգեցրել է երեք տիպի բառարանների (պատմական, Բացատրական, համեմատական) միացմանը: Սրա հետևանքով է, որ հեղինակն ստիպված է եղել միևնույն բառի

պատմականորեն իրար հաջորդած ձևերը ներկայացնել որպես տարբեր բառեր, տարբեր բառահոդվածներով. այսպես, օրինակ, վերը հիշված առնել բառի համար ունենք երկու բառահոդված՝ առնել և առնել պիտաբառերով: Սա արդեն գիտականորեն չի հիմնավորվում, ըստ որում զուգահեռ, համաժամանակյա աստիճանի վրա են դրվում պատմականորեն իրար հաջորդած և իրար բացառող ձևերը, և առանձին նշումները շատ բան չեն փոխում: Բայց նույնիսկ այդ սկզբունքն էլ հետևողականորեն չի կիրառվել և հնարավոր էլ շէր կիրառել. այդ է պատճառը, որ հեղինակն այդպիսի բառերը մշակում է երբեմն հղումների օգնությամբ, իսկ երբեմն էլ՝ ինքնուրույն բառահոդվածներով. այսպես, օրինակ, առնել և առնել, առնուլ և առնոյլ և բազմաթիվ այլ զույգեր (պատմականորեն իրար հաջորդած ձևեր) ներկայացված են ինքնուրույն, առանձին-առանձին բառահոդվածներով, իսկ առնն և առն, դուռն և դուռ և բազմաթիվ այլ զույգեր էլ ներկայացված են մեկ բառահոդվածներով՝ առն, դուռ և նման ձևերի դիմաց միայն հղում տալով դեպի այդ բառահոդվածները (դուռ տ. դուռն, առն տ. առնն ևն): Բայց չէ՞ որ առնն և առն ճիշտ նույն հարաբերության մեջ են, ինչպիսի հարաբերության մեջ են առնել և առնել բառերը: Այս է, ահա, որ մենք համարում ենք բառարանի հիմնական թերությունը, նրա կառուցվածքի ոչ ընդունելի սկզբունքը: Դրա հետևանքն է եղել նաև այն, որ բարբառային բառերը զրկվել են մշակման յուրահատուկ սկզբունքից. գիտական տեսակետից բարբառային բառերի բառարանային մշակումը երկու սկզբունքներից մեկի վրա պետք է հենվի. ա) Բացատրական բառարանի մեջ մտնում են այն բարբառային բառերը միայն, որոնք գրականության մեջ գեթ մի անգամ գործածված են: Այս դեպքում նրանք մշակվում են հենց այն սկզբունքների համապատասխան, որոնցով կազմված է բառարանը՝ որոշ նշումների զուգորդությամբ (գավառական, անհանձնարարելի, գոհակաբանություն, գավառաբանություն և այլն): Բ) Պատմական կամ գավառական (համադրական-համեմատական) բառարանի մեջ բարբառային բառերը մտնում են յուրահատուկ մշակումով. մեկ բառահոդվածի մեջ տրվում են տվյալ բառի բոլոր բարբառային տարբերակները, թե՛ ձևի և թե՛ իմաստի տեսակետից, հատուկ նշումներով այն մասին, թե ո՞ր ձևը կամ ո՞ր իմաստը ո՞ր բարբառին է հատուկ:

¹ Սխտեմը պահանջում էր, որ միջին հայերենի այնն էլ ներկայացվե՞ր առանձին բառահոդվածով, որ, սակայն, չկա:

Ստ. Մալխասյանցի բառարանում ընդունված է առաջին սկզբունքը, որ միանգամայն ընդունելի է այն բառերի համար, որոնք մեր հին մատենագրության կամ նոր գրականության մեջ թեկուզ մեկ անգամ գործածված են: Բայց բառարանի մեջ ներմուծված են նաև հազարավոր այնպիսի բառեր, որոնք երբեք չեն գործածվել գրականության մեջ. դրանք էլ մշակված են նույն սկզբունքով, որ չի արդարանում: Այդ բառերը ոչինչ չեն տալիս գրաբարի կամ ժամանակակից հայերենի բառակազմի ուսումնասիրությանը և ոչնչով չեն նպաստում բարբառագիտությանը, որովհետև նրանց մշակումը չի կարող թեկուզ և աննշան չափով համապատասխանել բարբառագիտության պահանջներին: Դեռ ավելին, այն բառերը, որոնք քաղված են Հ. Աճառյանի «Գավառական բառարան»-ից և որոնք այդ բառարանում մշակված են երկրորդ սկզբունքով, Ստ. Մալխասյանցի բառարանում անխտիր ներկայացված են առաջին սկզբունքով: Սրա հետևանքն այն է եղել, որ բառարանը ավելորդաբար ծանրաբեռնվել է գիտական տեսակետից որևէ արժեք չներկայացնող շուրջ 10.000 բառով:

Բառարանի լուրջ թերություններից մեկն էլ, վերջապես, ցուցադրական նյութի՝ բառերի կիրառությունների կամ իմաստների յուրահատուկությունները ցույց տալու համար բերված օրինակների, մշակման ոչ խրախուսելի մեթոդն է: Բառարանի մեջ, իբրև ընդհանուր կանոն, հեղինակն ինքն է կազմել օրինակներ, փոխանակ գրականությունից քաղելու դրանք: Իսկ դրա հետևանքը եղել է այն, որ բառարանում տեղ են գտել բազմաթիվ ոչ ճիշտ, հաճախ խիստ պարզունակ ու ճապաղ նախադասություն—օրինակներ, որոնք բնականաբար իջեցնում են բառարանի գիտական մակարդակը:

Ինչ վերաբերում է առանձին բառերի մշակմանը, ապա դրա բնությունը դուրս է մեր աշխատության շրջանակներից:

Այսպիսով, եթե հաշվի առնենք մեր այդ քննադատական դիտողությունները, ապա կարող ենք ասել, թե Ստ. Մալխասյանցի «Հայերէն բացատրական բառարանը» իր բառազանձով մի մեծահարուստ հավաքածու-գանձարան է հայերենի մոտ 120.000 բառերի՝ իրենց բացատրություններով հանդերձ:

Իր գիտական գործունեության երկար տարիների ընթացքում Մալխասյանցն անդրադարձել է ինչպես հայոց լեզվի գործնական, այնպես էլ ընդհանուր տեսական շատ խնդիրների: Ընդհանուր լեզվաբանական-փիլիսոփայական հարցերի մասին առանձին գրքեր նա չի գրել, իհարկե. սակայն հայերենի այս կամ այն խնդրին

նվիրված հողվածների մեջ և հենց հայերենի այս կամ այն հարցը լուսաբանելու համար անդրադարձել է ընդհանուր լեզվաբանության առանձին սկզբունքներին: Այդ սկզբունքներից առաջինն ու զլխավորը լեզվի պատմական զարգացումը որպես անընդհատ պրոցես դիտելը և լեզվի ու նրանով խոսող ժողովրդի (ցեղի, ազգի) մտավոր զարգացման միջև եղած կապն է, որ ճիշտ է նկատել նա: Այսպես, 1910 թ. Թիֆլիսում կարդացել է հայոց լեզվի պատմությանը նվիրված մի դասախոսություն, որի համառոտ բովանդակությունը՝ իր իսկ շարադրանքով, հրատարակված է «Մշակ»-ում: Այդ դասախոսության մեջ նա ուղղակի զարգացնում է այն տեսակետը, որ լեզուն, մասնավորապես բառամթերքը, ներկայացնում է ժողովրդի քաղաքակրթությունը, որ լեզվի բառամթերքի պատմությունն այդ լեզվով խոսող ժողովրդի քաղաքակրթության պատմությունն է. «Բառերի միջոցով մենք կարող ենք հասկացողություն կազմել որևէ ժողովրդի քաղաքակրթության ընթացքի մասին... Եթե հնարավոր լիներ հայոց լեզվի այնպիսի մի բազմահատոր բառարան կազմել, որի յուրաքանչյուր հատորը պարունակելիս լիներ յուրաքանչյուր դարում լեզվի մեջ գործածված բոլոր բառերը, սկսած ութերորդ դարից Քր. առաջ մինչև մեր օրերը, ապա այդ 27 հատորները միմյանց հետ համեմատելիս՝ մենք կկարողանայինք ճշգրիտ գաղափար կազմել, թե ո՞ր դարում ազգը ի՞նչ բանում ի՞նչ առաջադիմություն կամ հետադիմություն է արել և ո՞ր դարում ո՞ր ազգի ազդեցության է ենթարկվել: Բայց այսպիսի բառարան մինչև հինգերորդ դարը Քր. հետո՝ ունենալ չենք կարող... Հինգերորդ դարից հետո արդեն կարելի է դարից-դար բառարաններ կազմել և նրանց միջոցով ուսումնասիրել ազգի քաղաքակրթության և կրած ազդեցությունների ընթացքը» (Մշակ. 1910, № 244):

Ինչպես տեսնում ենք, հեղինակը ճիշտ կերպով լեզվի բառապաշարը և ընդհանրապես լեզուն համարում է ժողովրդի (ցեղի, ազգի) քաղաքակրթության արտահայտիչը: Միաժամանակ, հենց այս սկզբունքից ելնելով էլ նա լեզուն համարում է ոչ թե անհատի, այլ ազգի կամ ցեղի ընդհանուր սեփականությունը՝ հակադրվելով հոգեբանական ինդիվիդուալիզմի ուղղությանը՝ լեզվաբանության մեջ: Ի դեպ, այդ ուղղությանը նա հակադրվել է նաև մի այլ, ավելի մասնավոր, բայց տեսականորեն կարևոր հարցում: «Հայցական հոլովը մեր աշխարհաբարի մեջ» հոդվածում («Նոր-Դար», 1908—9), Մալխասյանցը, հակադրվելով Մամուկ Աբեղյանին, բնորոշում է հոլովն իբրև ձևի ու բովանդակության միասնություն և, քննելով

աշխարհաբարի հոլովները ոչ միայն ձևական կողմով, այլև իրենց բովանդակությամբ, ճիշտ կերպով այն տեսակետն է պաշտպանում, թե աշխարհաբարում հայցական հոլով գոյություն ունի:

Ընդունելով լեզվի պատմական զարգացումը՝ Մալխասյանցն ընդունում է նաև լեզվաբանական անընդհատականությունը, որ, ինչպես գիտենք, երիտքերականների, ինչպես և սոցիոլոգիական ուղղության բնորոշ դրույթներից մեկն է, և պատկերավոր ձևով բացատրում է այդ երևույթը հետևյալ կերպ. «Լեզուն որչափ շատ է գործածվում, կամ այլապես՝ որչափ հին է՝ այնքան ավելի է զարգանում: ... Ինչպես որ ջուրը յուր հունով անցնելով շարունակ զարկվում է հունին և փեղին, տանում է յուր հետ թեթև նյութերը, հալում է կակուղները և հղկում կարծր քարերը՝ նույնպես և գործածությունը մաշում է լեզուն, դուրս է ձգում շատ բառեր ու ձևեր, որոնք ժամանակին համապատասխան չեն, հարթում սղում է բառեր ու քերականական ձևեր» (Գրաբարի համաձայնությունը, էջ 9): Լեզվի այս անընդհատաբար կատարվող փոփոխության համար հեղինակը բազմաթիվ ու բազմատեսակ պատճառներ է թվում և, որ կարևորն է, այդ փոփոխությունները դիտում է ոչ թե որպես «անհատական լեզուների» միջև եղած տարբերությունների, այլ նույն լեզվով խոսող հանրության տնտեսական պայմանների, սովորությունների, ինչպես և ֆիզիոլոգիական առանձնատկությունների ու աշխարհագրական պայմանների արդյունք. «Լեզվի զարգացումը հետևանք է ժողովրդի զարգացման մտավորապես և տնտեսապես...»: «... Բառերն ու քերականական ձևերը... ժամանակի ընթացքում... (ենթարկվում են) ... փոփոխությունների, և ամեն մի ազգի մոտ առանձին եղանակով, նայելով յուրաքանչյուր ժողովրդի պարամունքին, սովորություններին, կազմվածքին, կլիմային և այլն» (անդ, էջ 7—8): Այսպիսի փոփոխությունների շնորհիվ մի լեզվից ժամանակի ընթացքում կարող են առաջանալ տարբեր բարբառներ ու սրանք էլ՝ ավելի հեռանալով միմյանցից՝ դառնալ առանձին լեզուներ. այստեղից էլ, ահա, կստացվեն ցեղակից լեզուներ, որոնք ծագում են մի նախալեզվից. այդպես առաջացել են հնդկարոպական լեզուները մի նախալեզվից: Հեղինակն, այդպիսով, ընդունում է թե՛ նախալեզվի և թե՛ նախացեղի գոյությունը. «Հնդիկ-եվրոպական լեզուներով խոսող ազգերի նախնիները, ինչպես ենթադրում են համեմատական լեզվագիտությունն և ազգագրությունը՝ բնակելիս են եղել միասին ամենահին ժամանակներում և խոսելիս են եղել միևնույն լեզվով, որ այժմ կորել է: Այս հնդիկ-եվրոպական նա-

խալեզուն, հարկավ, դեռ շատ զարգացած չէ եղել, որովհետև լեզվի զարգացումը հետևանք է ժողովրդի զարգացման մտավորապես և տնտեսապես, մինչդեռ այդ լեզվով խոսող ժողովուրդը երևի պարպելիս է եղել խաշնարածությամբ և երկրագործությամբ և հավանորեն չէ հասել բարձր զարգացման: Այս ժողովուրդն այլ և այլ ժամանակներում, բայց դեռ նախապատմական դարերում, զաղթել է այլ և այլ կողմեր, մանավանդ դեպի արևմուտք (Եվրոպայի այժմյան տեղերը) և նոր հասարակական կազմակերպություն ընդունելով՝ ապրել է առանձին ցեղերով և ազգերով (հույները, լատինները՝ հարավային Եվրոպայում, Կելտերը՝ Միջին Եվրոպայում, Սլավոնները՝ արևելյան Եվրոպայում, Արիները՝ Պարսկաստանում, Հայերը՝ Փոքր Ասիայում և այլն), և այսպես առանձնացած այդ նոր ազգերը, որոնք սկզբից նույն լեզվով էին խոսում՝ ժամանակի ընթացքում ինքնուրույն զարգանալով՝ նոցա լեզուներն ևս սկսան ինքնուրույն զարգանալ, միմյանցից անկախ... Այս կերպով մի նախալեզուն ժամանակի ընթացքում այլ և այլ ճյուղեր արձակեց, ինքը դարձավ մայր լեզու, իսկ նորա ճյուղերը դարձան նորա դստերը և քույրերը միմյանց մեջ: Այս քույր-լեզուները սկզբում, երբ նոցա մեջ տարբերությունը դեռ շատ չէր, և նոցանից մինով խոսողը կարող էր հասկանալ մյուսով խոսողին՝ իսկապես բարձրանե՞ր էին մայր լեզվի և միմյանց վերաբերությամբ: Իսկ երբ ժամանակ անցնելով նոքա առանձին զարգանալով բառերի և քերականական ձևերի կողմից՝ միմյանցից շատ հեռացան, այնպես որ նոցա մեջ արտաքին հայացքով նմանություն չէր կարելի գտնել՝ նոքա կոչվեցան առանձին լեզուներ» (անդ, էջ 7—8): Այսպես ընդունելով լեզուների ցեղակցության ու նախալեզվի տեսությունը հատկապես հնդկարոպական լեզուների վերաբերմամբ, հեղինակն անցնում է հայերենին և ընդունում, որ «Հայերեն լեզուն պատկանում է հնդկ-եվրոպական լեզվախմբին» (անդ, էջ 5): Հնդկարոպական լեզուների շարքում հայերենի գրաված դիրքի վերաբերմամբ նա արտահայտվում է հյուբլանյան տեսակետով, այսինքն՝ ընդունում է հայերենը որպես ինքնուրույն, անկախ լեզու. «Այս լեզուներից մեկն է և Հայերենը, որ առաջ է եկել հնդկ-եվրոպական մայր լեզվից և քույր է հունարենին, հին պարսկերենին, կելտերենին, սլավոներենին և այլն» (անդ, էջ 8): Մի այլ տեղ՝ Հյուբլանի մասին գրած յուր հոդվածում, նա նույնպես այդ տեսությունն է պաշտպանում, գտնելով որ այդ բանի հաստատումը Հյուբլանի մեծագույն ծառայությունն է հայերենի ուսումնասիրության գործին.

«Այնքան մեծ է հանգուցյալ գիտնականի (Հյուբլանի—է. Ա.) մատուցած ծառայությունը հայերեն լեզվի ուսումնասիրության գործում, որ առանց չափազանցության մեջ ընկնելու, կարելի է վստահասել, թէ հին և նոր հայագետներից ոչ ոք նրան չէ հավասարվել. նրա ուսումնասիրությունների շնորհիվ՝ հայերենը իբրև անկախ ոստ հնդկ-եվրոպական լեզվաբնի և իբրև միակ ներկայացուցիչ այդ ոստի (որովհետև ուրիշները, օր. սլավո-լիթվանյանը, իտալականը, տասնյակ հյուդավորություններ ունին) մեծ կարևորություն ստացավ... Հայերենի դիրքը վերջնականապես որոշվեց հնդկ-եվրոպական լեզուների շարքում—մի շատ պատվավոր տեղ» (Մշակ, 1908, № 19): Խոսելով հայերենի և մյուս հնդկարոպական լեզուների զարգացման ընթացքի մասին՝ հեղինակը գտնում է, որ հայերենն ամենից ավելի փոփոխված և ամենազարգացած լեզուներից մեկն է. «Հայերենը հնդկ-եվրոպական լեզուների շարքում ամենահին և ամենազարգացած լեզուներից մեկն է: Բառերի սղման և ձայների փոփոխման կողմից, համաձայն խոսող ժողովրդի և նորա երկրի պայմաններին՝ նա հասել է վերին աստիճանի զարգացման, գրեթե այժմյան ֆրանսերենին հավասար, այնպես որ անփորձ աչքը դժվարությամբ կարող է նկատել նմանություն հայերեն բառի և նորա նախատիպ հնդկ-եվրոպական ձևի մեջ... Քերականական ձևերի մեջ հայերենը կորցրել է սեռերը գոյականների, ածականների և դերանունների մեջ (թեպետ հետքերը տեղ տեղ երևում են), որ մյուս հնդկ-եվրոպական լեզուներն ունին, բացի մի երկուսից, որոնք հայերենի նման կորցրել են. կորցրել է երկակի թիվը գոյականների, դերանունների և բայերի մեջ... կորցրել է ածականների բաղդատական և գերադրական աստիճանների ձևերը, որոնք փոխարինել է նոր կազմությամբ, կորցրել է նախնական հարակատարը, որ կազմվում էր արմատի կրկնությամբ (մնացել է միայն առ-առի բայը), որի փոխանակ կազմել է նոր բաղադրյալ հարակատար և այլն: Հոլովների մեջ կորցրել է եզակի ուղղականի և հայցականի վերջավորությունները և ներգոյականը, որ սկզբում հատուկ վերջավորություն ուներ. բայց և այնպես հոլովներն հայերենում ավելի լավ են պահպանվել քան հունարենում, լատիներենում, հին և նոր պարսկերենում և այլն: Այս հնության կամ զարգացման պատճառով է, որ հայերենում բառերն ու քերականական ձևերն ավելի են հեռացել նախնական ձևերից և իրանց ազգային կերպարանքն են ստացել» (Գրաբարի համաձայնությունը, էջ 9—10): Ինչպես տեսնում ենք, հայերենի զարգացման, նրա կրած փոփոխությունների

և իր նախնական վիճակից չափազանց հեռացած լինելու մասին Մալխասյանցը ճիշտ նույն ձևով է արտահայտվում, ինչպես Մեյեն. իհարկե, այս չպետք է դիտել իբրև կրկնություն: Մեյեն, ինչպես վերը հիշեցինք, այդպիսի կարծիք հայտնել է յուր «Esquisse»-ի մեջ, որ լույս է տեսել ավելի ուշ, քան Մալխասյանցի այս գիրքը. այնպես որ, կարող ենք ասել, թե Մալխասյանցն անկախաբար այն եզրակացությունն է հանգել, ինչ որ հետագայում մանրազնին ուսումնասիրությամբ ապացուցել է Մեյեն:

Այդպես ընդունելով հայերենի ցեղակցությունը հնդեվրոպական լեզուների հետ և այդ լեզուների շարքում նրա գրաված անկախ դիրքը, հեղինակը համառոտակի խոսում է նաև մինչմատենագրական շրջանում հայերեն բարբառների գոյության մասին: Ելակետ ունենալով մի կողմից՝ այն սկզբունքը, որ լեզուներն աստիճանաբար զարգանում ու ճյուղավորություններ են տալիս, մյուս կողմից՝ այն հանգամանքը, որ Հայաստանը թե՛ տնտեսապես ու թե՛ քաղաքակա-նապես բաժանված է եղել բազմաթիվ նախարարությունների միջև, որոնք միշտ չէ, որ սերտ համագործակցության մեջ են եղել, իսկ հաճախ էլ և՛ իրարից, և՛ կենտրոնական իշխանությունից անկախ էին ու կտրված, հեղինակը եզրակացնում է, թե մինչմատենագրական շրջանում էլ հայերեն բարբառներ պիտի լինեին. «Ինչպես հնդիկ-եվրոպական լեզուներն սկզբում բարբառներ էին կազմում նախալեզվի վերաբերությամբ՝ այնպես էլ նոքա առանձին լեզուներ դառնալով՝ իրանք եղան մայր լեզու և ավելի իրանց ճյուղերը կամ բարբառները: Հայերենն ևս նախապատմական ժամանակում անշուշտ ունեցել է այլ և այլ բարբառներ, որոնց մասին հիշատակու-թյուն չունինք, որովհետև այդ հին ժամանակից ոչ արձանագրու-թյուններ կան մնացած և ոչ պատմություն: Այդ բարբառների գո-յությունը մենք հետևցնում ենք ընդհանուր օրենքով — չկա լեզու, որ չունենա յուր բարբառները, — և Հայաստանի աշխարհագրական դիրքով, որովհետև երկիրը դժվարանցանելի լեռներով ու գետերով առանձին գավառների բաժանված լինելով՝ արտադրեց ինչպես քա-ղաքականապես կես-անկախ նախարարություններ՝ նույնպես և լեզվի կողմից՝ միմյանցից բավական տարբերվող բարբառներ, որովհետև հզոր իշխանություն գոյություն չունենալով, որ բոլոր երկրի կառավարությունը կենտրոնացներ, չլինելով գիր և գրակա-նություն, որ մի լեզու ընդհանրացներ ամեն հայի համար՝ յուրա-քանչյուր նահանգ և գավառ ապրում էր յուր առանձին կյանքով, զարգանում էր ինքնուրույն պայմանների մեջ, ուրեմն և յուրաքան-

չյուր լեզուն առանձին անկախ ուղղությամբ պիտի զարգանար» (անդ, էջ 10): Շարունակելով յուր դատողությունները, հեղինակը գտնում է, որ հինգերորդ դարում՝ գրերի գյուտի ու մեր մատենագրության սկզբնավորման ժամանակ այդ բարբառներն առաջացնող նախնական հայերեն լեզուն այլևս գոյություն չուներ. կային նրա-նից առաջացած բարբառները միայն. «Նախնական հայերենը, որից այդ բարբառները ծագել էին՝ հավանորեն գոյություն չուներ և. դա-րում. սա ապացուցվում է թե՛ լեզվաբանական հետազոտություններով, և թե՛ այսպիսի տրամաբանական դատողությամբ, որ եթե և. դարում գոյություն ունեցող բարբառը (գրաբարը) հազար տարի էլ գոյություն չունեցավ իբրև բնական, կենդանի լեզու՝ սորանից կարելի է մակաբերել, որ նորա մայր լեզուն էլ (սկզբնական հայե-րենը) դժվարավ կարող էր երկու—երեք հազար տարի գոյություն ունենալ անփոփոխ կերպով. այլ թե նա այդ առնվազն երկու—երեք հազար տարվա ընթացքում ենթարկվել էր ձայնագիտական և քե-րականական բազմաթիվ փոփոխությունների և, այլևայլ բարբառ-ներ առաջ բերելով՝ ինքը մեռել էր» (անդ, էջ 11): Այդ բարբառնե-րից մեկն է, ահա, որ գրերի գյուտից հետո մատենագրության լե-զուն դարձավ և որ կոչվում է գրաբար. այդ բարբառը՝ հեղինակի կարծիքով՝ արարատյան բարբառն է եղել. «Այն լեզուն, որով Ս. Սահակ և Մեսրոպը թարգմանեցին Ս. Գիրքը՝ Հայաստանում գոյու-թյուն ունեցող բարբառներից մեկն էր լինելու, հավանորեն Այրա-րատյան բարբառը, իբրև Հայաստանի ընդարձակագույն և կենտ-րոնական նահանգի լեզուն, որ ամենից շատ խոսող ուներ, ուրեմն և ավելի ընդհանրացած էր, և բացի դորանից իբրև լեզու տիրող իշխանության, որ նստում էր նույն նահանգում, և այդ իշխանու-թյունը շրջապատող ազնվականների՝ ավելի կոկված, մշակված ու հարուստ պետք է լիներ, քան մյուս հայերեն բարբառները» (անդ, էջ 11—12):

Ամփոփելով Մալխասյանցի այն տեսակետները, որոնց մասին խոսեցինք մինչև այժմ, գալիս ենք հետևյալ եզրակացության. Մալ-խասյանցն ընդհանուր լեզվաբանական որոշ հարցերում ընդունում է երիտբերականների սկզբունքները, ինչպես, օրինակ՝ հնչյունական օրենքների անխախտությունը, և լեզվաբանական անընդհատակա-նությունը, բայց ինչպես վերը տեսել ենք, այդ երկու սկզբունք-ներն ընդունում են նաև սոցիոլոգիական դպրոցին պատկանողները (տե՛ս Մեյեն), այնպես որ դրանից չի կարելի հետևցնել, թե նա երիտբերականներին է հետևում: Ավելի հիմնական հարցերում նա

երիտքերականներից բոլորովին հեռանում է. այն ժամանակ, երբ երիտքերականները ընդունում են միայն անհատական լեզուների գոյությունը, Մալխասյանցն ընդունում է ժողովրդի, հանրության (ազգի, ցեղի) լեզուն և, ինչպես մեր մեջքերած հատվածներից պարզորեն երևում է, լեզվի զարգացումը կապում է ժողովրդի պատմության հետ, նրա տնտեսական, քաղաքական պայմանների, ինչպես և աշխարհագրական ու ֆիզիոլոգիական առանձնահատկությունների հետ: Վերջապես, հայերենի զարգացման, ցեղակից լեզուների համեմատությամբ հայերենի շատ ավելի փոփոխված լինելու մասին արտահայտած յուր կարծիքներով նա կանգնած էր, ինչպես տեսանք, հայերենի համեմատական ուսումնասիրության միանգամայն արդիական մակարդակի վրա: Պետք է շեշտել միայն, որ նա հատուկ ուշադրություն է նվիրում աշխարհագրական պայմաններին (նույնիսկ կլիմային) և ֆիզիոլոգիական առանձնահատկություններին՝ լեզվի զարգացման պրոցեսի բացատրման մեջ, որ իհարկե, չի արդարանում: Ո՛չ աշխարհագրական պայմանները, ո՛չ էլ ֆիզիոլոգիական առանձնահատկությունները լեզվի զարգացումը պայմանավորող վճռական գործոններ չեն, և նրանց գերը լեզվի կրած փոփոխությունների մեջ որոշիչ լինել չի կարող:

Ի պատիվ Մալխասյանցի, պետք է ասել, որ իր բոլոր ուսումնասիրությունների մեջ էլ նա առաջնորդվել է պատմականության սկզբունքով, որ և նրա գիտական ժառանգությանը մեծ արժեք է տալիս: Այդ սկզբունքի որոշ արտահայտությունն է նաև իր քառահատոր բառարանի մեջ հատկապես բառերի իմաստների, ըստ հնարավորին, պատմական հաջորդականությամբ դասավորելը, — որ նյութ է տալիս պատմական իմաստաբանությանը, — ինչպես և պատմականության ույն սկզբունքի կիրառումը, որի մասին խոսեցինք: Վերջապես, պատմական հայեցակետով է աշխատել լուծել, և մեծ մասամբ ճիշտ կերպով է լուծել ժամանակակից հայոց լեզվին վերաբերող զանազան վիճելի հարցեր. դրանցից առանձնապես նշելի են հայերենի ուղղագրությանը վերաբերող նրա բազմաթիվ հոգվածներն ու առաջարկները, որոնցից կարևորագույններն ընդունված են Տերմինաբանական կոմիտեի որոշմամբ, ինչպես և աշխարհաբարի հոլովների մասին իր պաշտպանած ճիշտ դրույթները: Մեծ վաստակներ ունի Մալխասյանցը նաև հայոց լեզվի գիտատեխնիկական տերմինաբանության ստեղծման բնագավառում: Հեղինակների տարբեր խմբերի հետ նա մեծ աշխատանք է կատարել զանազան բնագավառների (իրավաբանական, երկաթուղային, շի-

նարարական) հայերեն տերմինաբանության ստեղծման գործում: Իր գիտական բեղմնավոր գործունեությամբ Ստեփան Մալխասյանցն ավելի քան կես դարի ընթացքում մեծապես նպաստել է հայագիտության զարգացմանը և թողել է գիտական մի արժեքավոր ժառանգություն, որ ժամանակակից հայագիտության անկապտելի հարստությունն է կազմում:

Նիկողայոս Մառը ծնվել է, ինչպես ինքն է հաղորդում իր ինքնակենսագրության մեջ, 1864 թ.¹: Հայրը, որ շոտլանդացի էր, հաստատվել էր Կովկասում 1822 թ.: Այդտեղ էլ նա արդեն ծերության հասակում ամուսնացել էր գուրիացի Ազաֆիա Մազուլարիայի հետ, որից և ծնվել է Մառը՝ Քութախում: Մանկությունն անց է կացրել ծննդավայրում, որտեղ իր հայրը՝ Յակով Մառը հիմնադրել էր գյուղատնտեսական դպրոց: 1870 թ. ծնողների հետ տեղափոխվում է Օզուրգետի: Նույն միջոցին նրա հորը հաջողվում է ստանալ նահանգապետի հրամանը՝ որդուն Քութախի գիմնազիայի գիշերօթիկ բաժնի թեկնածու համարելու մասին: 1874 թ., 98-ամյա հոր մահվանից մեկ ամիս հետո, Մառն ընդունվում է հիշյալ գիմնազիայի գիշերօթիկ բաժնի: Ավարտելով գիմնազիան 1884 թ., նույն թվի օգոստոսին Մառը մեկնում է Պետերբուրգ, որպես կովկասյան թոշակառու և ընդունվելով տեղի համալսարանի արևելյան լեզուների ֆակուլտետը, զբաղվում շորս բաժնում (արաբա-պարսկա-թուրք-թաթարական, արաբա-հրեա-սիրիական, հայվրացական և սանսկրիտ-պարսկա-հայկական): Այստեղ, Ստ. Մալխասյանցի դասընկերը լինելով՝ հայագիտության գծով աշակերտում է Ք. Պատկանյանին: Արժաթյա մեդալով ավարտելով համալսարանը 1888 թ., մեկ տարուց հետո (1889 թ., Քերովբե Պատկանյանի մահվանից հետո) ստանում է հայերենի ամբիոնը: 1890 թ. առաջին անգամ գալիս է Հայաստան՝ տեղում ծանոթանալու էջմիածնի և Սևանի ձեռագրերին, ինչպես և ընդհանրապես՝ հայ ժողովրդի կյանքին ու կենցաղին, խոսակցական հայերենին ևն: 1891 թվականին Պետերբուրգի համալսարանում պրիվատ դոցենտ է նշանակվում: Հաջորդ տարին թուլյուվություն է ստանում Հայաստան գալու՝ պեղումներ կատարելու նպատակով և, 1893 թ. կրկին գալով Հայաստան, պեղումներ է կատարում Երևանի, Շիրակի և Բորջալուի գավառներում: Այնուհետև պարբերաբար նա գալիս է Հայաստան

¹ Ուրիշ տվյալների համաձայն՝ 1863 թվականին:

և իր արդյունավետ պեղումներով բազմաթիվ արժեքավոր նորություններ հայտնաբերում: Շատ ուղևորություններ է կատարել նաև գեպի արտասահման՝ դարձյալ գիտա-հետազոտական նպատակներով: Մառի ամբողջ կյանքը լավագույն պատկերն է եռանդուն գիտնականի անխոնջ աշխատանքի. յուր կյանքի մեծ մասը նա նվիրել է հնագիտական ուսումնասիրություններին՝ բազմաթիվ տեղերում պեղումներ կատարելով և հնամենի փլատակների տակից գիտության համար անսպառ նոր նյութեր հայտնաբերելով: Իր խիստ արգասավոր գիտական գործունեությամբ նա թողել է սերունդներին մի հարուստ ժառանգություն: Սակայն նա միայն գիտնական չի եղել բառիս նեղ իմաստով. նա եղել է նաև մի նշանավոր գործիչ գիտության ասպարեզում: Բավական է հիշել նրա վարած պաշտոններից մի քանիսը միայն, որպեսզի պատկերացում կազմենք նրա ակտիվ և ընդարձակ գործունեության մասին: Մառը եղել է փոխնախագահ ՍՍՌՄ Գիտությունների ակադեմիայի, Նյութական կուլտուրայի պատմության Պետական ակադեմիայի նախագահ, Թիֆլիսի Կովկասագիտական ինստիտուտի ղեկավարը և այլն, և այլն: Նա է հիմնադրել «Христьянский Восток» եռամսյա հանդեսը (1912—1920), «Тексты и розыскания по армяно-грузинской филологии» (հ. I—II, СПб, 1900—1910) և «Bibliotheca armeno-georgica» (հ. I—V, 1911—1915) ժողովածուները և այլն: ՍՍՌՄ կառավարությունը, բարձր գնահատելով նրա բեղմնավոր գիտական գործունեությունը՝ շնորհեց նրան գիտության վաստակավոր գործչի կոչում: Վախճանվել է Մառը 1934 թ. դեկտեմբերի 20-ին:

Չափազանց բեղմնավոր ու բազմակողմանի գիտական-հետազոտական գործունեություն է ունեցել Մառը. նրա՝ հրատարակված աշխատանքների (գրքերի և հոդվածների) թիվը հասնում է 523-ի՝ ըստ յուր հինգհատորանոց ժողովածուի առաջին ու հինգերորդ հատորներում՝ տրված ցուցակի. այդ աշխատությունների մի մասը (թվով 109) հրատարակված են «Избранные работы»¹ ժողովածուով՝ հինգ հատորում, որոնցից յուրաքանչյուրն ըստ իր պարունակած ուսումնասիրությունների բովանդակության վերնագրված է.

- I. Этапы развития яфетической теории (Л. 1933). ընդգրկում է 25 աշխատանք, որոնք ներկայացնում են լեզվի «նոր ուսմունքի» հիմնադրման ու զարգացման պատմությունը:

¹ Մեջբերումների համար գործածելու ենք ИР (= Избранные работы) հասկացումը:

- II. Основные вопросы языкознания (Л. 1936). ընդգրկում է 31 աշխատանք, որոնք լուսաբանում են լեզվի «նոր ուսմունքի» հիմնական հարցերը: Այս հատորի մեջ զլխավոր աշխատությունն է Բաքվի համալսարանում 1927 թ. կարդացած դասախոսությունը՝ «Яфетическая теория. Общий курс учения об языке» (էջ 3—135):

- III. Язык и общество (Л. 1934). ընդգրկում է 14 աշխատանք, որոնք նույնպես լեզվի «նոր ուսմունքին» են վերաբերում և հանդիսանում են նախորդի տրամաբանական շարունակությունը, այն տարբերությամբ միայն, որ այստեղ լուսաբանվում են այդ հարցերն ընդհանուր-սոցիոլոգիական տեսանկյունով:

- IV. Единство глоттогонического процесса (Л. 1937). ընդգրկում է 14 աշխատանք, որոնք նվիրված են աշխարհի բոլոր լեզուների միջև եղած փոխադարձ կապի տեսության հիմնավորմանը:

- V. Этно-и глоттогония восточной Европы (Л. 1938). ընդգրկում է 25 աշխատանք, որոնք լուսաբանում են արևելյան Եվրոպայի ցեղերի, ժողովուրդների ու լեզուների կազմավորման ու հնագույն շրջանում նրանց միջև եղած փոխհարաբերությունների հարցերը:

Այս հակիրճ նկարագրությունն էլ ցույց է տալիս, արդեն, թե որքան ընդարձակ է եղել հեղինակի հետազոտությունների ասպարեզը. բայց այս հինգ հատորում ամփոփված է միայն Մառի աշխատությունների մի մասը՝ նրա լեզվաբանական այն աշխատությունները, որոնք կարևորագույններն էին համարվում «նոր ուսմունքի» համար: Մինչդեռ նա ոչ միայն լեզվաբան էր, այլև մեծ քանասեր, հնագետ (археолог) ու պատմաբան, և այդ ասպարեզներում նա յուր մեծահմուտ ուսումնասիրություններով շատ նշանավոր արդյունքների է հասել: Սակայն մեր նպատակն է ծանոթանալ Մառի լեզվաբանական տեսությանը և մասնավորապես՝ նրա հայագիտական հարացքներին:

Չարմանալիորեն անհաստատ, իրար խաչաձևող և հակասական ճանապարհներով է քայլել Ն. Յա. Մառը: Իր առաջին ուսումնասիրությունից սկսած մինչև վերջինը նա ապրում է խարխափումների ու որոնումների պրոցես, այլ տեսությունների հետ հաջորդաբար հերքում նաև իր տեսակետները, որոնք կապվում էին իր գիտական գործունեության այս կամ այն շրջ-

չանի հետ, ձգտելով ստեղծել լեզվաբանական յուր ուսմունքը: Իր գիտական լեզվաբանական ուսումնասիրությունները Մառն սկսում է պատմա-համեմատական լեզվաբանության սկզբունքներով: Այս առաջին շրջանում նա ընդունում է լեզուների ցեղակցությունը, հետևաբար, նաև առանձին լեզվական ընտանիքների գոյությունը: Ճիշտ է, հենց առաջին իսկ հողվածում («Վրացերեն լեզվի բնությունն ու առանձնահատկությունները», 1888 թ. վրացերեն լեզվով, տպված «Իբերիա»-ում) նա արդեն համեմատական լեզվաբանության ընդհանուր սկզբունքից որոշ շահով հեռանում է. ուսումնասիրելով արաբերեն, վրացերեն ու հայերեն լեզուները որպես տարբեր լեզվական ընտանիքների ներկայացուցիչներ, նա գտնում է ցեղակցական կապեր այդ լեզուների միջև ու հենց դրանով էլ հակադրվում առանձին լեզվական ընտանիքների մեկուսացած լինելու տեսակետին. բայց այդ հակադրությունը դեռևս սահմանափակվում է նրանով, որ առաջ է քաշում տարբեր լեզվական ընտանիքների միջև եղած փոխադարձ կապերի տեսակետը, կապեր, որոնք, իբր, լեզուների ավելի հեռավոր անցյալից են գալիս: Այսպիսով, նա միայն ընդարձակում, ավելի ընդլայնում է լեզուների միջև եղած կապերի ու դրանց հիման վրա կատարվող խմբավորումների շրջանակները, բայց դեռևս առանձին լեզվական ընտանիքների գոյությունը չի ժխտում: Հետագայում էլ, 1908 թ. հրատարակած «Основные таблицы к грамматике древнегрузинского языка с предварительным сообщением о родстве грузинского языка с семитическими» աշխատության մեջ նա դարձյալ ընդունում է նույն սկզբունքը՝ որոշ փոփոխությամբ: Նա դեռևս չի մերժում առանձին լեզուների ցեղակցությունը, թեև խուսափում է «ընտանիք» տերմինի գործածումից: Այստեղ էլ նա, խոսելով վրացական ու սեմական լեզուների կապի մասին, գրում է. «Մինչդեռ սեմականները եղբայրորեն ցեղակից են իրար հետ, հաբեթական ճյուղի արդի ներկայացուցիչները, այդ թվում նաև վրացերենը, սեմականների հետ երկու հարազատ եղբայրների, այսինքն նախասեմական ու նախահաբեթական լեզուների որդիների խորթ եղբայրների հարաբերության մեջ են դասվում» (ИР, I, էջ 26): Սեմական ու հաբեթական լեզուների միջև եղած այդ ցեղակցական կապերի վրա հիմնվելով՝ նա գտնում է, որ «վրացական լեզուն ամենից բնորոշ ներկայացուցիչն է հատուկ լեզվաբանական ճյուղի, որը յուր հերթին ծննդաբանական ցեղակցության մեջ է գտնվում լեզուների սեմական ճյուղի հետ: ...նա դիտմամբ գործածում եմ «ճյուղ» տեր-

մինը և ոչ «ընտանիք», որովհետև սեմական լեզուները, ինչպես և հաբեթականները, ինքնըստինքյան առանձնացած մասերը, ճյուղերն են մի ընտանիքի. սեմական ճյուղը հաբեթականի հետ միասին միայն կազմում է մի լեզվաբանական ընտանիք, որի համար դեռևս անուն պետք է ստեղծվի, եթե չենք ուզում հետևողականության համար կոչել այն «նոյական», շարունակելով հիմնվել աստվածաշնչական տերմինաբանության վրա, որից վերցված են «սեմական» և «հաբեթական տերմինները» (անդ, էջ 23): Ինչպես տեսնում ենք, հեղինակը դեռևս սկզբունքորեն ընդունում է համեմատական լեզվաբանության կողմից սահմանված լեզուների ծննդաբանական դասակարգումն ըստ էության. նորությունն այն է միայն, որ նա, ձգտելով կապեր գտնել տարբեր լեզվական ընտանիքների միջև, այն կարծիքին է հանգում, որ սեմական և կովկասյան լեզվական ընտանիքները ոչ թե ինքնուրույն, առանձին ընտանիքներ են, այլ ճյուղերը մի հին, երբեմնի միասնական ընտանիքի: Մառն, իհարկե, առաջինը չէր և ոչ էլ վերջինը, որ փորձում էր տարբեր լեզվաբանական ընտանիքների միջև կապեր գտնել, թեպետև նրա աշակերտներն ու հետևորդները ճգնում էին այնպես ներկայացնել իրողությունը, որ նա, իբր, առաջինն էր այդպիսի փորձ կատարում և դրանով որպես թե իր գործունեության վաղ շրջանում էլ արդեն աշխատում էր «ազատվել» տրադիցիոն պատմա-համեմատական լեզվաբանության «սահմանափակությունից», բայց դա իրականում բոլորովին էլ այդպես չէր: Այդ կարգի փորձեր կատարել են նույնիսկ համեմատական լեզվաբանության հիմնադիրները (Բոպպ, Հումբոլդտ և այլք): Հատկապես XIX դարի վերջում և մեր դարի սկզբներին այդ կարգի ուսումնասիրությունները ծավալվում են հնդեվրոպական-սեմական, հնդեվրոպական-ուրոգիստական, կովկասյան-սեմական և հնդեվրոպական-կովկասյան լեզվական ընդհանրությունների հայտնաբերելու ուղղությամբ. սեմական և հնդեվրոպական լեզուների այդ կարգի ուսումնասիրությունն այնքան առաջ գնաց, որ այս դարի սկզբում, արդեն կուտակված նյութի հիման վրա, կազմվեց այդ երկու ընտանիքների լեզվական ընդհանրությունների համեմատական բառարանը¹: Այնպես որ Մառը ինչ-որ նոր փորձ չէր կատարում, այլ հետևում էր ժամանակին լեզվաբանության մեջ որոշ շահով ճանաչում գտած մտայնությունը, որ թեև նպաստեց տարբեր

¹ Möller, Vergleichendes indogermanisch-semitisches Wörterbuch, Göttingen, 1911.

լեզվաբանականի միջև եղած որոշ ընդհանրությունների բացահայտելուն, բայց մերժվեց՝ իբրև սկզբունք այդ լեզվաբանականի նախնական միասնության մասին¹:

Յուր տեսության՝ հաբեթական լեզվաբանության զարգացման մեջ, ինչպես Մառն է ասում «Классификационный перечень печатных работ по яфетидологии» (М. 1926) գրքի առաջաբանում, բեկում է կատարվում 1910 թվականին: Այս շրջանում, որն ընդգրկում է 1910—1914 թթ., հեղինակի ուսումնասիրությունների առարկա են դառնում՝ գրից զուրկ կենդանի լեզուները և սեպագիր արձանագրությունների մեծած լեզուները: «Այս ժամանակում կատարվում է համեմատական մեթոդի մշակումն ու նրա տեխնիկական կատարելագործումը՝ շնորհիվ ներգրավման մի կողմից՝ սվաներեն, աբխազերեն և ուրիշ, գրից զուրկ, այսինքն՝ կենդանի լեզուների, մյուս կողմից՝ մեծած լեզուներից՝ սեպագրերինը, այսինքն՝ լեզուներ, որոնք հասել են մեզ սեպագիր արձանագրություններով» (անդ, էջ 223): Այս շրջանում նրա ուսումնասիրությունների մեջ ամենաչնչ որոշակիությամբ կենտրոնական տեղ է գրավում խաչավորման տեսությունը: Ուսումնասիրելով հայերենը, Մառն ամենից առաջ այն դրույթն է առաջ քաշում, թե կա ոչ թե մեկ, այլ երկու հայերեն լեզու՝ «Բ» հայերեն և «Ե» հայերեն. այդ երկու լեզուները միմյանց հակադիր լեզվական սիստեմներ են ներկայացնում, որ, նրա կարծիքով, բացատրվում է հնդեվրոպական ու հաբեթական սիստեմների խաչավորմամբ: Թեև այս տեսակետն ըստ էության սխալ է, բայց դա առիթ է դառնում, որպեսզի նա է՛լ ավելի ընդլայնի իր հետազոտությունների շրջանակը՝ մի կողմից, և ինքնին հեղինակին հանգեցնում լեզուների զարգացման մեջ պատմական գործոնի ընդունմանը՝ մյուս կողմից: Որոշելով «հաբեթական լեզվական տարրերը» ոչ հաբեթական լեզուներում՝ Մառն այժմ խոսում է արդեն ոչ թե հաբեթական նախալեզվի, այլ հաբեթական շերտի մասին: Այդ հաբեթական լեզվասիստեմի լրիվ ուսումնասիրման համար էլ, ահա, նա սկսում է հետազոտել հին սեպագիր արձանագրությունների լեզուն՝ հուսալով գտնել նրանց

¹ Այդ կարգի ուսումնասիրություններից առավել լուրջ բնույթ են կրում Ա. Կյունի աշխատությունները (A. Cuny, Etudes prégrammaticales sur le domaine des langues indo-européennes et chamito-semitiques, Paris, 1924; Recherches sur le vocalism, le consonantism et la formation des racines... en «Nostratique», Paris, 1943; Invitation à l'étude comparative des langues indo-européennes et des langues chamito-sémitiques, Bordeaux, 1946 և այլն):

մեջ այն լեզվական երևույթները, որոնք չեն պահպանված ժամանակակից հաբեթական լեզուներում: «Հաբեթական ճյուղի ժամանակակից ներկայացուցիչներից, որոնց հնագույն հուշարձանները հ. Բ. VI, V դարերից ավելի խորքերը չեն գնում, սեպագրությունների լեզուներին, ն. Բ. VI, այլև VIII—IX դարերի, իսկ երբեմն էլ շատ ավելի հին հուշարձանների լեզվին դառնալով, ես սկզբից կարծում էի, թե կգտնեմ նրանց մեջ անաղարտություն, ձևերի ամբողջականություն, շոշափելի հաստատումն տեսականորեն վերականգնվող այն բոլոր թերի օղակների, որոնք չեն պահպանվել, օրվրացներում» (անդ, էջ 56—57): Բայց հակառակ իր սպասածին՝ այդ հնավանդ, սակայն բոլորովին էլ ոչ նախատիպ լեզուների մեջ ես նա չգտավ այդ կորած «օղակները»: այդ բանն ահա, հեղինակին այն եզրակացության բերեց, թե հաբեթական լեզուների «քայքայման» շրջանն սկսված է եղել ն. Բ. X դարից առաջ: «Միայն առկա հաբեթական լեզուների ու նրանց բարբառների համեմատական ուսումնասիրությունը, նրանց կազմության մեջ խորանալը պարզեց, որ հաբեթական լեզուների համար էլ նոր շրջանը, քայքայման շրջանն սկսվել է ն. Բ. մի հազարամյակ առաջ, որ հաբեթական լեզուների ամենաառաջին կուլտուրական ներկայացուցիչներն ավելի են տուժել ձևաբանությամբ, որ նաև այդտեղ երևան եկան այնպիսի փոխհարաբերություններ, ինչպիսին դիտվում է սեմական լեզուների միջև, ուր հին հուշարձանների լեզուները բոլորովին չեն կարող ձևերի հարստությամբ, նրանց անաղարտությամբ մրցել կուլտուրայես այնպիսի երիտասարդ լեզվի հետ, ինչպիսին է արաբերենը: Հաբեթականների մեջ վրացական լեզուն որոշ աստիճանով գտնվում է այն վիճակում, ինչ որ արաբերենը՝ սեմականների միջև» (անդ, էջ 57): Ինչպես տեսնում ենք, այս շրջանում էլ դեռևս հեղինակը համեմատական մեթոդով է կատարում յուր հետազոտությունը և յուր եզրակացությունները հիմնում է համեմատական ժամանակագրության վրա:

Եվ եթե այս շրջանում էլ արդեն բավականաչափ հեռանում է պատմա-համեմատական լեզվաբանությունից, ապա դա արտահայտվում է ոչ թե լեզուների ցեղակցության ժխտումով, այլ երկցեղ (կամ երկբնույթ) լեզուների գոյությունն ընդունելով: Այս դրույթը ինքնին մղում էր նրան դեպի տարբեր ընտանիքների պատկանող լեզուների միջև եղած «ցեղակցան» կապերի որոնումը, իսկ սա էլ, իր հերթին, տանում էր նրան դեպի պատմա-համեմատական մեթոդի հիմնական սկզբունքների անտեսումն ու խեղաթյուրումը:

Սրանով է բացատրվում ստուգաբանությունների ու համեմատությունների այն կամայականությունը, որով բնորոշվում են Մառի լեզվաբանական աշխատանքները թե՛ այս շրջանում, և՛ թե հետագայում: Համեմայն դեպս, այս շրջանի հետազոտությունների մեջ դեռևս չկա ոչ ստադիալ ժամանակագրությունը (стадиальная хронология), ոչ էլ, մանավանդ, լեզուների զարգացման ստադիալ տեսությունը, թեև արդեն որոշ հող պատրաստվել էր դրանց համար: Այն հանգամանքը, որ, նրա կարծիքով, հին լեզուներից ոչ միայն ուրարտերենն ու նոր էլամերենը, այլև սումերերենը չի ներկայացնում այնպիսի «նախնական» ձևեր, ինչպիսիք նա գտնում էր կովկասյան կենդանի լեզուներում, նրան կանգնեցնում էր փակուղու առջև: Մի կողմից՝ նա ընդունում էր, որ սեմական ու հաբեթական լեզուները ցեղակից են, իսկ մյուս կողմից էլ՝ տեսնում էր, որ հնագույն լեզուներն ավելի «նորածե» են, քան Կովկասի գրից զուրկ լեզուները: Իսկ դա նրան անխուսափելիորեն կանգնեցնում էր երկընտրանքի առաջ: Կամ պետք էր բացասել այդ կապերը, իսկ նա հավատում էր «հայտնաբերած ընդհանրություններին», կամ էլ պետք է գտներ ինչ-որ նոր բացատրություն: Այս նոր բացատրությունը գտնելու համար նա դիմում է նյութական կուլտուրայի տվյալներին, իր պեղումներով երևան բերած տվյալների ոչ միայն հնագիտական (արխեոլոգիական), այլև հնէաբանական ուսումնասիրությանը, որ նոր ուղղություն է տալիս նրա հետազոտություններին ու նոր եզրակացությունների հանգեցնում նրան:

Հնէաբանության օգտագործումը հատկապես մեծ նշանակություն է ստանում նրա ուսումնասիրությունների մեջ 1916 թվականից, երբ հաբեթական տեսության մեջ նոր բեկում է կատարվում: Ուսումնասիրելով Պամիրի վերջիկյան լեզուն և «գտնելով» նրա ու հաբեթական լեզուների միջև եղած ինչ-որ կապեր՝ հակառակ այն բանին, որ այդ լեզուները աշխարհագրորեն կտրված են իրարից և պատմականորեն էլ որևէ առնչություն չեն ունեցել իրար հետ, Մառն սկսում է քննության առնել աշխարհի տարբեր մասերում գտնվող զանազան լեզուներ՝ ձգտելով հաբեթական լեզուներ գտնել նաև Կովկասից դուրս: Այդպիսի լեզուներ եղան նրա համար առաջին հերթին էտրուսկերենը և բասկերենը, որոնց ուսումնասիրությամբ էլ նա փորձեց պարզաբանել հաբեթական լեզվի տարածումը: Այստեղից սկսած՝ նա աստիճանաբար ավելի ու ավելի հեռանում է պատմա-համեմատական լեզվաբանությունից, և պատմա-համեմատական մեթոդը փոխարինում կամայական համեմատու-

թյուններով, իսկ լեզուների իրական պատմությունը՝ համապարփակ «լեզվաբանական հնէաբանությամբ»: Այս շրջանի համար բնորոշ աշխատությունն է 1920 թ. հրատարակված «Яфетический Кавказ и третий этнический элемент в соиздании средиземноморской культуры» (ԻՐ, I, էջ 79—124), որ, ըստ հեղինակի, բացատրությունների մեջ տրամաբանորեն հակադրվում է մինչև այդ տրված բացատրություններին: Այս աշխատության մեջ յուր հնէաբանական ուսումնասիրությունների վրա հիմնվելով, Մառը է՛լ ավելի ընդարձակում է հաբեթական լեզվի տարածման շրջանը, սակայն այստեղ էլ դեռևս նա չի հրաժարվում նախալեզվի գոյությունն ընդունելուց և գտնում է, որ հաբեթական լեզվի՝ շատ տեղերում հայտնաբերվելը ցույց է տալիս միայն հաբեթական ցեղերի տարածումը գաղթի միջոցով: Այստեղից էլ նա ընդունում է մի միացյալ նախացեղի գոյությունը, որ կոչում էր «Երուրդ էրնիկական տարր»: Այդ ցեղի նախահայրենիքն է եղել Կովկասը, որտեղից երկու ճանապարհով գաղթել են բասկերն ու իբերները, էտրուսկները, պելասգները և այլն: Շարունակելով յուր ուսումնասիրությունները և լեզուների հնէաբանական վերլուծությունների առավել համապարփակ գործադրությամբ նա հաբեթական տարրը «հայտնաբերեց» նաև այնպիսի լեզվում, ինչպիսին ֆրանսերենն է. Ֆրանսիայի տեղի հատուկ անունների ուսումնասիրությամբ նա հանգում է այն եզրակացության, թե «Ֆրանսիայի վերաբերյալ կարելի է, այնուամենայնիվ, վստահությամբ հաստատել, որ Սենի և Սոնի շրջաններում մենք ունենք ավելի հին, քան լիգուրները, էթնիկական շերտ, այսինքն պելասգյան ու էտրուսկյան» (Сена, Сопа, Лютеция и первые обитатели Галлии, этруски и пеласги, ԻՐ, I, էջ 147): Իսկ քանի որ էտրուսկերենն ու պելասգերենն էլ նա համարում էր հաբեթական, ապա ինքնին այնպես էր ստացվում, որ ֆրանսերենում էլ «հայտնաբերվում էին» հաբեթական տարրեր: Այս ուսումնասիրությունները, վերջապես, հեղինակին բերեցին այն տեսակետին, որ հաբեթականները տարածվել են ամենուրեք, հաբեթականները ներկա են ամեն տեղ: Եվ թեպետ այդ տարածումը նա դիտում էր դեռևս իբրև գաղթականության արդյունք և բոլոր այդ ճյուղավորումների բուն էր համարում հաբեթական նախացեղը, բայց այդ էլ շուտով այլ բացատրություն ստացավ նրա մոտ:

1923 թ. նոյեմբերին ՄՍՍՄ Գիտությունների ակադեմիայի Պատմա-բանասիրական գիտությունների բաժնում կարդացած զեկուցման մեջ նա հայտնում է յուր բոլորովին նոր տեսակետը՝ հենց

նախալեզուների գոյության մասին: Զեկուցումը լույս տեսավ 1924 թ. «Индоевропейские языки Средиземноморья» վերնագրով (ИР, I, էջ 185—186): Այդ փոքրիկ (մեկ ու կես էջ) զեկուցման մեջ հեղինակը հայտնում է, թե յուր ուսումնասիրությունները նոր դրույթների են հանգեցրել իրեն. «Իրենց իսկ հաբեթական լեզուների մեկնաբանված փաստերի ու ոչ հաբեթական լեզուների մեջ նրանցից յուրացված տարրերի վրա հիմնված՝ հնէաբանության վրա կատարված վերջին ամիսների աշխատանքը ինձ համար անսպասելի կերպով երևան հանեց մի դրույթ, որն ավելի հղի է հետևանքներով, քան մինչև այժմ իմ կողմից արտահայտվածները՝ հաբեթականների ու միջերկրածովյան քաղաքակրթության ստեղծման մեջ մինչ-պատմական (доисторический) և նախապատմական (протоисторический) դարաշրջաններում նրանց դերի մասին» (ИР, I, էջ 185): Այդ դրույթն այն էր, որ շեն եղել նախամայր ցեղեր ու նախալեզուներ, որ սկզբից շատ ավելի լեզուներ են եղել, որոնց ձևովմամբ ու խաչավորմամբ էլ կազմվել են հետագայի լեզուները և որ հնդեվրոպական ցեղերը ոչ մի տեղից էլ չեն գաղթել: Այստեղից էլ եզրակացնում է, վերջապես, որ ցեղովին տարբեր հնդեվրոպական ընտանիք գոյություն չունի. «Հաստատում եմ, որ ցեղապես առանձին հնդեվրոպական ընտանիք գոյություն չունի: Միջերկրածովյան հնդեվրոպական լեզուները երբեք ու ոչ մի տեղից չեն հայտնվել ոչ մի հատուկ լեզվական մատերիալով, որը գար ինչ-որ ցեղապես ուրույն ընտանիքի լեզուներից կամ առնվազն ծագեր ցեղապես ուրույն նախալեզվից: Ի դեպ, սկզբում եղել է ոչ թե մեկ (լեզու), այլ բազմաթիվ ցեղային լեզուներ, մի նախալեզուն յուր ծառայությունը մատուցած գիտական պատրանք է» (անդ, էջ 185): Ժխտելով նախալեզվի գոյությունը՝ Մառը հիմնում է յուր տեսությունը լեզուների ստադիալ զարգացման մասին և ըստ այդմ էլ լեզուների միջև եղած ընդհանրությունները դիտում ոչ իբրև լեզուների ծագումաբանական պատմական պրոցեսի հետեվանք, այլ զարգացման աստիճանների (ստադիաների) արտահայտություն: Այսպես ահա, յուր զարգացման այս էտապներն անցնելով, վերջնականապես հիմնադրվում է լեզվի «նոր ուսմունքը»: Այդ սկզբունքներով այնուհետև հեղինակն արդեն քննութիւն է առնում լեզվական բոլոր երևութիւնները (ծագում, զարգացում ևն)՝ ձգտելով ստեղծել մի ամբողջական սիստեմ: Այդ նույն շրջանում նա առանձնապես ուշադրության առարկա է դարձնում լեզվի ու մտածողության հարաբերության հարցը, աշխատելով բառերի իմաստաբա-

նական վերլուծությունների օգնությամբ՝ լեզվաբանական հնէաբանության հիման վրա, բացատրել լեզվի ու մտածողության զարգացման պրոցեսը: Այդ ժամանակից ի վեր, լինչպես ինքն է ասում, արդեն սկսվում է «նոր ուսմունքի» մշակման, նրա դրույթների ճշգրտման շրջանը: Թեպետև, հակառակ նրա ջանքերին, «նոր ուսմունքն» այդպես էլ չդարձավ իրենից որոշ սիստեմ ներկայացնող տեսություն, չազատագրվեց ազադակող հակասություններից, համեմայն դեպս նա արդեն հենվում էր իրար հետ սերտորեն կապված ու միմյանց պայմանավորող մի շարք սկզբունքների վրա, որոնց պետք է ծանոթանալ՝ «նոր ուսմունքը», իսկ դրա հետ նաև Մառի լեզվաբանական ժառանգությունը գնահատելու համար:

Իր ուսումնասիրությունների հիմքում Մառը դնում է այն սկզբունքը, որ լեզուն հասարակական երևույթ է և, իբրև այդպիսին, իր զարգացմամբ պայմանավորված է արտագրական կոլեկտիվի զարգացումով: Այս հիմնական սկզբունքից ելնելով՝ նա գտնում է, որ լեզուն մարդկանց ստեղծագործությունն է, որ երկար հազարամյակների ընթացքում է միայն յուր բարձր աստիճանին հասել. «Լեզուն ստեղծվել է բազմաթիվ հազարամյակների ընթացքում՝ տնտեսական կարիքների ու տնտեսական կազմակերպությունների նախադրյալների վրա հիմնված հասարակության մասսայական բնագավառում: Լեզվի մեջ կարևորն են ոչ այնքան ֆիզիոլոգիական տվյալները, որքան հասարակական աշխարհայացքը և կազմակերպող գաղափարները» (К происхождению языков, անդ, էջ 218): Փորձելով դիտել լեզուն և մտածողությունը անխզելի միասնության մեջ, ինչպես նա սիրում էր հայտարարել, բայց ըստ էության կանգնելով լեզվի ու մտածողության նույնության տեսության դիրքերում, նա թե՛ լեզվի, թե՛ մտածողության բոլոր իրակությունները ձգտում էր անմիջականորեն կապել հասարակության կեցության հետ: Այդ դրույթից ելնելով էլ, նա գտնում է, որ տնտեսական ձևերի ու սոցիալական հարաբերությունների փոփոխություններն իրենց արտահայտությունն են գտնում մարդու գիտակցության մեջ, իսկ այդ էլ յուր հերթին արտահայտվում է լեզվի մեջ բովանդակության ու ձևի միջև եղած փոխազդեցությամբ: Այստեղից հետևում է, որ հենց ձևի ու բովանդակության միասնական զարգացումն ուսումնասիրելու համար անհրաժեշտ է ուսումնասիրել լեզվի զարգացման առաջնակարգ գործոնի՝ սոցիալական կացության ընթացքը: Սոցիալական կացության արտահայտությունը Մառը գտնում է ամենից առաջ հենց բառիմաստների մեջ. այսպես, օրինակ, «սեփականու-

թյուն» բառը քննելով իր «Право собственности по сигнализации языка в связи с происхождением местоимений» (ИР, III, էջ 180—198) հոդվածում՝ նա գալիս է այն եզրակացության, որ այդ բառն իր ծագմամբ կապվում է դերանունների հետ: «Սեփականություն» բառը հնչյունական լեզվում և ըստ հաբեթաբանական վերլուծության՝ հանգում է դերանվան, ավելի ճիշտ՝ օրգանապես կապված է դերանվան, առաջին հերթին այսպես կոչված անդրադարձ (возвратный) դերանվան հետ» (ИР, III, էջ 182): Կապելով սեփականության գոյությունը հասարակական ֆորմացիաների հետ՝ նա եզրակացնում է, որ այդ բառը փոխում է իր իմաստն ըստ սոցիալական հարաբերությունների զարգացման. սկզբում նա արտահայտում էր կոլեկտիվի ունեցվածքը, ապա՝ կոլեկտիվի մի խմբավորման և վերջապես՝ անհատի. «Սեփականությունն իր սկիզբն է առնում մարդկային կոլեկտիվների արտադրա-հասարակական խմբավորումների մինչցեղային վիճակից, բայց այն ժամանակ, մեր ըմբռնումներով, բոլորովին էլ սեփականություն չէր. այդ բացարձակապես տոտեմական սեփականություն է առանց նույնիսկ որևէ պատկերացման այս կամ այն խմբավորման սեփականության մասին և դրա հետ միասին կոմունիստական, հասկանալի է, նախնական կոմունիստական: Եվ այն ժամանակ չկային ոչ միայն դերանուններ, այլև ընդհանրապես հնչյունական լեզու:

Սեփականությունը փոխում է յուր բովանդակությունը՝ դառնալով ընդհանուր կոլեկտիվի այս կամ այն խմբի ստացվածք, և է՛լ ավելի փոխում է իր բովանդակությունը, երբ նա վերածվում է մասնավոր կամ անհատական սեփականության, բայց բոլոր աստիճաններում էլ սեփականությունը շարունակում է պահպանել յուր անվանումը. սկզբից «տոտեմ»... ապա՝ համապատասխանաբար լեզվում ավելանում են (нарастают) դերանունները... այնուամենայնիվ դերանվանական ձևերն առաջանում են ոչ թե սեփականությունից հետո, այլ առաջ՝ կյանքի կոչվելով արտադրության և արտադրական հարաբերությունների այլ պահանջմունքներով» (ИР, III, էջ 197—198): Այսպիսով, հեղինակը հանգում է այն տեսակետին, որ թե՛ դերանունների առաջացումը և թե՛ բայական ձևերի վերջավորությունների գոյացումը, վերջավորություններ, որոնք իրենց ծագմամբ հանգում են դարձյալ դերանուններին, — արդյունք են հասարակության ներսում՝ արտադրական հարաբերությունների վրա հիմնված մասնատումների: Այստեղից էլ, ահա, այն հիմնական եզրակացությունն է հանում, որ լեզուները ստեղծվում

են ոչ թե ինքնին, իրենք իրենց, այլ արդյունք են մարդկանց հասարակական գործունեության և իրենց զարգացմամբ պայմանավորված են հենց այդ իսկ մարդկային հասարակության պատմությունամբ: Հասարակության մեջ կատարվող փոփոխությունները ոչ միայն արտահայտվում են բառերի մեջ, այլև իրենց սոցիալական բնույթին համապատասխան փոփոխություններ են առաջացնում և՛ ձևաբանության, և՛ շարահյուսության, մի խոսքով՝ լեզվի ամբողջ կազմության մեջ: Այստեղից էլ Մառը լեզվի զարգացումը բաժանում է իր տարբեր շրջաններին. յուրաքանչյուր լեզու յուր զարգացման ընթացքում անցնում է հայտնի աստիճաններով. բայց ինչպես որ հասարակության այս կամ այն ֆորմացիայում դեռևս նախորդ ֆորմացիայից իբրև վերապրուկներ կարող են լինել շատ հատկանիշներ, որոնք, այնուամենայնիվ, այնչափ մեծ չեն, որ փոխեն տվյալ ֆորմացիայի էությունը, այդպես էլ լեզվի տվյալ աստիճանում գոյություն են ունենում նախորդ աստիճանի կամ, նույնիսկ, աստիճանների վերապրուկները: Կարող է նաև այնպես լինել, որ այս կամ այն լեզուն մի աստիճանից մյուսին անցնելու ուղին բռնի, բայց այդ զարգացումը յուր վախճանին չհասնի և, դրա հետևանքով էլ, այդպիսի լեզուն մնա զարգացման կես ճանապարհին, ներկայացնելով երկու աստիճանների խառն վիճակը: Այս պատճառով էլ, ահա, յուրաքանչյուր լեզու իր այս կամ այն վիճակով պետք է ուսումնասիրել ստադիալ տեսության հիմունքներով ու պարզել նրա մեջ գոյություն ունեցող երևույթների պատմա-հասարակական արմատները: Այս բոլորը ինքնին հանգեցնում են նրան այն ոչ մարքսիստական ֆորմուլային, թե լեզուն վերնաշենքային երևույթ է, մտնում է հասարակության վերնաշենքի կազմի մեջ և արտահայտելով հասարակության բազիսի փոփոխությունները՝ ինքն էլ զարգանում է այն օրինաչափություններով, որոնք հատուկ են քաղաքական և գաղափարական վերնաշենքի զարգացմանը:

Դիտելով լեզվի ծագման ու զարգացման պրոցեսը որպես հասարակության կեցության ուղղակի արտահայտությունը՝ նա լեզվի ու մտածողության վրա էլ տարածում է հասարակության պատմության միասնական պրոցեսի տեսությունը: Քանի որ հասարակության զարգացման պատմական ուղին միասնական է, քանի որ բոլոր ժողովուրդներն էլ իրենց պատմության ընթացքում պետք է անցնեն միևնույն ֆորմացիաներով, ապա լեզուներն էլ, հասարակության նման, պետք է անցնեն միևնույն լեզվական ֆորմացիա-

ներով», կամ այլ կերպ՝ լեզվի ու մտածողության զարգացման միևնույն ստադիաներով: Սրա վրա էլ, ահա, հենվում էր այսպես կոչված «լեզվաստեղծական պրոցեսի միասնության» (единство глоттогонического процесса) տեսությունը, կամ ինչպես նրա հետևորդները սիրում էին հորջորջել՝ լեզվի պատմության մոնիզմը (монизм языковой истории): Այստեղից էլ, ի վերջո, բխում է նրա հիմնական դրույթը լեզուների դասակարգման մասին. տարբեր լեզուների միջև եղած ծագումաբանական ընդհանրությունները դիտելով ոչ թե իբրև այդ լեզուների մեկ հիմքից առաջանալու հետևանք, այլ ստադիալ զարգացման արդյունք՝ Մառը լիովին ժխտում է նախալեզվի գոյությունը, համարելով այդ «գիտական պատրանք»: Նա սկզբունքորեն մերժում է լեզուների դասակարգման ծագումաբանական սկզբունքը, առաջադրելով յուր տեսությունը, այն է՝ լեզուների դասակարգումն ըստ ստադիալ զարգացման: Նա չի մերժում լեզվական «ընտանիքների» գոյությունը, սակայն լեզվական «ընտանիքը» նրա տեսության մեջ ոչ թե մի նախալեզվի հիմքի վրա առաջացած լեզուների խումբն է՝ հիմնված ծագումաբանական ընդհանրությունների վրա, այլ լեզվական զարգացման միևնույն աստիճանի» վրա գտնվող լեզուների խումբը. «Հնդեվրոպական լեզուները կազմում են ուրույն ընտանիք, բայց ոչ ցեղային, այլ իբրև ծնունդ ուրույն, ավելի բարդ խառնվորման աստիճանի, որ առաջացել է հասարակության մեջ, ըստ հրեությունից, մետաղների հայտնագործման ու տնտեսության մեջ նրանց ընդարձակ գործադրության հետ կապված արտադրության նոր ձևերից կախված հեղաշրջման շնորհիվ... լեզուների հնդեվրոպական ընտանիքը տիպականորեն հանդիսանում է տնտեսական-հասարակական նոր պայմանների ստեղծվածքը...» (Индоевропейские языки Средиземноморья, ИР, I, էջ 185): Այս հիմունքով էլ, ահա, նա քննադատում է հնդեվրոպական լեզվաբանության հիմնական սկզբունքը, գտնելով, որ նրա կողմից կատարված լեզուների ծագումաբանական դասակարգումը և դրա հիմամբ էլ ստեղծված տեսությունը նախալեզուների մասին հիմնված է լեզուների ֆորմալ-համեմատական ուսումնասիրության վրա և հակասում է մարքսիստական լեզվաբանության սկզբունքներին (հիշենք, որ Մառը մարքսիստական լեզվաբանություն էր համարում հենց իր «նոր ուսմունքը»): Մյուս կողմից՝ Մառը, ելնելով այն նույն սկզբունքից, որ բոլոր լեզուներն էլ ապրել են միևնույն լեզվաստեղծական պրոցեսը, գտնում է, որ բոլոր լեզուների բոլոր բառերը բաղադրված են միևնույն շորս լեզվա-

բանական տարրերից. «Բոլոր լեզուների բոլոր բառերը, որքանով նրանք միևնույն ստեղծագործական աշխատանքի արդյունքն են, բաղկացած են ընդամենը շորս էլեմենտներից, յուրաքանչյուր բառը մեկ կամ երկու, հազվադեպ՝ երեք էլեմենտից. որևիցե լեզվի բառամթերքի մեջ չկա բառ, որ պարունակի նույն այդ շորս էլեմենտներից բացի ուրիշ որևէ բան: Այդ շորս էլեմենտները նշանակում ենք լատիներեն մեծատառերով՝ A, B, C, D, նրանք, որ առաջ մեր կողմից կոչված են ցեղային անուններով՝ Sal, Ber, Yon, Rom, — յուրաքանչյուր բառի ձևական հնչաբանական վերլուծության հիմքն են հանդիսանում. առանց նախապես այդպիսի վերլուծություն կատարելու, առանց բառի տարրալուծմանը՝ յուր մեջ եղած էլեմենտների քանակին, մեկ, երկու կամ ավելի, չի կարելի համեմատել, առանց այդպիսի վերլուծության համեմատական մեթոդը գործուն չէ» (Яфетическая теория, ИР, II, էջ 16): Տալով այդ էլեմենտները և գտնելով, որ միայն նրանց օգնությամբ հնարավոր է խոսքի հնչաբանական վերլուծություններ կատարել, Մառը միաժամանակ զգուշացնում է, որ այդ էլեմենտներով համեմատություններ կատարելու համար դեռևս ձևական համապատասխանությունները բավական չեն, այդպիսի համեմատությունները «կարող են ամեն քայլափոխում անսահման մոլորությունների մեջ գցել և իսկապես ամենուրեք գցում են» (անդ, էջ 18): Ուստի և պետք է կատարել այդ վերլուծությունները, երկու կարգով. «Մեկը պարզ որակական, որպես թե ֆիզիկական, վերլուծությունը, երբ նմանաձայնությունը (созвучие) ստուգվում է բառի նշանակությամբ, այսպես կոչված, իմաստային վերլուծությունը ըստ որում նշանակությունը հաստատվում է ոչ թե այն հաստատված պատկերացումներով, որոնք հիմնված են այս կամ այն գրավոր կամ ընդհանրապես դասակարգային լեզվի մեջ ունեցած գործածության վրա, — ինչպես այդ ընդունված է հնդեվրոպական լեզվաբանության մեջ, — այլ խոսքի հնչաբանության օրենքներով: Մյուս վերլուծությունն ավելի բարդ, որպես թե քիմիական, վերլուծությունն է դարձյալ իմաստային, երբ նշանակությունը ստուգվում կամ վավերացվում է ամենից առաջ նյութական կոլտուրայի պատմությամբ, հավասարապես՝ հասարակական ձևերի պատմությամբ և ապա՝ վերնաշենքային սոցիալական կատեգորիաների՝ արվեստի, գեղարվեստի և այլն՝ պատմությամբ» (անդ, էջ 18):

Մառը գտնում է, որ լեզուն իր պատմական զարգացմամբ արտացոլում է ուղղակիորեն մտածողության զարգաց-

ման պրոցեսը, ըստ որում երկուսն էլ իրենց զարգացմամբ անմիջականորեն պայմանավորված են հասարակության կենցուկյամբ: Դրանից ելնելով էլ, նա անհրաժեշտ է համարում լեզուների ուսումնասիրությամբ վեր հանել այն իրողությունները, որոնք կարող են լույս սփռել լեզվի ու մտածողության զարգացման նախնական աստիճանների վրա, իսկ սրանց օգնությամբ էլ հասարակության պատմության հնագույն դարաշրջանները լուսաբանել: Բայց քանի որ մեզ ավանդված լեզուներից և ոչ մեկն էլ չի ներկայացնում մեզ այդ նախնական, լեզվաստեղծական վիճակը, ուստի և ներկա լեզուների, իբրև ամբողջական սիստեմների, համեմատական ուսումնասիրությունն էլ ի վիճակի չէ բացատրելու լեզվի ստեղծման ու զարգացման նախնական վիճակը: Պետք է գտնել լեզուների ամբողջական կառուցվածքի մեջ պահված վերապրուկային հնագույն տարրերը և նրանց ուսումնասիրությամբ թափանցել լեզվի պատմության խորքերը: Այդ բանը նա հնարավոր է համարում իրագործել լեզվի հնէաբանական ուսումնասիրությամբ. «Պատմական հետազոտության մեր մեթոդը տանում է միշտ մոտավորից դեպի հեռավորը, ցեղակցից՝ օտարին, ծանոթից՝ անծանոթին, լեզուների մեջ՝ նորերից—հնին, կենդանի անգիր (լեզուներից)՝ մեռած գրավոր-դասակարգային լեզուներին» (СДВИГИ В ТЕХНИКЕ ЯЗЫКА И МЫШЛЕНИЯ, ИР, I, էջ 427): Այսպես ուսումնասիրելով, ահա, լեզուն իր ոչ միայն ներկա, այլև «նախնական» վիճակներով, նա գտնում է, որ լեզուն իր զարգացման աստիճաններով համապատասխանում է մտածողության զարգացման աստիճաններին: Այնուհետև նա մտածողությունը բաժանում է երկու մեծ ստադիալ հատվածների՝ մինչտրամաբանական մտածողության ստադիայի և ֆորմալ-տրամաբանական դատողության ստադիայի, երբ մարդու մտածողության մեջ ընկալումը կատարվում է տարրալուծված, տարրորշված կերպով: Այս բաժանումն էլ, ահա, լեզվի ստադիալ տարբերակման հիմքն է համարում. «Լեզվի նոր ուսմունքն առաջին տեղն է հատկացնում մտածողության տեխնիկայի հաջորդումների, ստադիալ փոխանցումների հարցին և դրական բացատրությամբ սահմանում է տրամաբանականին նախորդած այսպես կոչված մինչտրամաբանական մտածողությունը՝ որպես մի շարք աստիճաններ՝ օրինաչափությունների ու տեխնիկայի փոխանցումներով հանդերձ» (ЯЗЫК И МЫШЛЕНИЕ, ИР, III, էջ 106): Մտածողության այս «ստադիալ զարգացման միասնության» մեջ դիտելով լեզուն՝ նա լեզվի ծագման ու զար-

գացման ամբողջ ընթացքը ևս բաժանում է ստադիաների: Ըստ իր տեսության՝ հնչյունական լեզվին նախորդել է գծային լեզուն, որ գոյություն է ունեցել ամբողջ հազարամյակների ընթացքում. «Հնչյունական լեզվին, այնուամենայնիվ, նախորդել է շատ հազարամյակների տևողությամբ գծային կամ արտահայտչական լեզուն, ժեստերի ու միմիկայի լեզուն» (К происхождению языков, ИР, I, էջ 217): Բուն հնչյունական լեզուն, որ, իր տեսության համաձայն, ավելի ուշ է ստեղծվել, «ըստ ձևաբանական զարգացման տիպոլոգիայի» բաժանվում է երեք ստադիայի՝ անձև կամ համադրական (ամորֆ կամ սինթետիկ) ստադիա (հեռավոր արևելյան լեզուներ), կցական (ազլյուտինատիվ) ստադիա (հաբեթական լեզուներ), քեֆական կամ պրոմեթեիդյան (ֆլեկտիվ) ստադիա (հնդեվրոպական լեզուներ). «Որոշ լեզուներում ոչ մի ձևաբանություն չկա,—այդ այսպես կոչված ամորֆ, կամ սինթետիկ, լեզուների մեջ, նրանց մեջ է, որոնք կոչվում են նաև մոնոսիլարիկ կամ միավանկային. մյուս լեզուներում կան արդեն զանազան տիպերի զարգացած կազմություններ,—ձևաբանական լեզուներում (в языках морфологических), որոնց մեջ տարբերվում են ձևերի ազլյուտինատիվ և ֆլեկտիվ կազմությունները» (Яфетическая теория, ИР, II, էջ 54): Այս երեք ստադիաներին բաժանելով լեզվի զարգացումը՝ Մաուր հիմունքով էլ դասակարգում է լեզուներն ըստ իրենց սիստեմների. այս սիստեմներն, իհարկե, իրենց ամբողջությամբ ճշտորեն չեն համապատասխանում այս ստադիաներին, քանի որ լեզուների մի մասը գտնվում է «մի ստադիայից մյուսին անցման վիճակում», կամ ներկայացնում է «երկու ստադիաների խաչավորման» արդյունքը. այդպիսով, նա լեզուները բաժանում է յոթ կարգի, որոնցից ամենաբարձրը, «այն, որ տեսականորեն պսակողն է լեզվի զարգացման բոլոր նախորդ ստադիաների՝ ապագայի միասնական, համամարդկային լեզուն է»: Այնուհետև հաջորդաբար գալիս են. ներկա լեզուներից ամենակատարյալը՝ լեզուների «հնդեվրոպական ընտանիքը», որ հեղինակը կոչում է պրոմեթեիդյան սիստեմ. հետո՝ նախորդի զարգացումից հետ մնացած ոստը ներկայացնում են, իբրև վերապրուկ, առկա և պատմական շրջանից հայտնի՝ հաբեթական լեզուները, որոնք գտնվում են տիպոլոգիական զարգացման տարբեր աստիճանների վրա: Նրանցից մի քանիսն, ըստ Մաուր, հնդեվրոպական կառուցվածքին մոտ աստիճանում պահպանել են նախընթաց դարաշրջանների վերապրուկային ձևերը (հայերեն, ալբաներեն): Այնուհետև՝ գալիս է հաբեթական

լեզուների թեքական խմբին մերձավոր ցեղակից ճյուղը (սեմական լեզուներ): Ապա՝ տիպոլոգիական տեսակետից կցական կառուցվածք ունեցող հարեթական լեզուներին ավելի մոտ լեզվական ընտանիքների խմբավորումը (չուվաշերեն, ուրալ-ալթայական, ուգրո-ֆիննական են): Հետո՝ քամյան լեզուների ընտանիքը, որ՝ սեմական լեզուներից ուշ շրջանում ստացած տարրերի գտնումով՝ ներկայացնում է կցական և ավելի շատ համադրական բնույթ: Վերջապես՝ ստորին աստիճանը՝ լեզուների համադրական վիճակը (հեռավոր արևելյան լեզուներ), որոնք վերապրուկային ձևով պահպանված են աբխազերենի տիպի հարեթական լեզուների մեջ (տե՛ս «Родословное дерево» և դրա բացատրությունը, ИР, II, էջ 41—42 և 195—196):

Բնականաբար հարց է առաջանում, թե ինչպե՞ս էր որոշում Մառը այս կամ այն լեզվի ստադիալ վիճակը: Իր «Նոր ուսմունքի» հիմնադրման սկզբնական շրջանում նա գերազանցապես հիմնվում էր լեզուների ձևաբանական կառուցվածքի վրա և իր հորինած ստադիաները գրեթե նույնացնում էր լեզուների ձևաբանական դասակարգումով բնորոշվող տիպերի հետ, որից և առնում էր նաև թեքական, կցական, անձև անվանումները: Հետագայում նա ձևաբանական հատկանիշներին ավելացրեց նաև իմաստաբանական տվյալները, որոնք նա քաղում էր իր իսկ հնէաբանական վերլուծություններից, ապա և՛ հնչյունական ինչ-ինչ երևույթներ, որոնք իբրև թե դրսևորում են հնչյունական համակարգի զարգացման նախնական օրինաչափությունները: Այս բոլոր հատկանիշներին, որոնք նա անվանում էր ստադիալ դասակարգման կոորդինատներ, իր կյանքի վերջում փորձում էր ավելացնել նաև շարահյուսական բնորոշ առանձնահատկություններ, գտնելով, որ լեզուների կառուցվածքի յուրահատկությունները և նրանց ստադիալ վիճակը որոշելու համար ամենահիմնական տեղը պետք է հատկացնել շարահյուսություններ, բայց ինքն այդ հարցով այլևս չկարողացավ զբաղվել:

Վերջապես, լեզուն իր ամբողջ կառուցվածքով, բառային կազմով ու իմաստաբանությամբ, հնչյունական համակարգով ու քերականությամբ հանդերձ անմիջականորեն բխեցնելով հասարակության արտադրական գործունեությունից, նա հանգում էր այն գոհճիկ սոցիոլոգիական դրույթին, թե իբր ամեն մի լեզու դասակարգային է, որ ամեն մի դասակարգ ունեցել է և ունի իր դասակարգային լեզուն: Ըստ որում, նա գտնում էր, որ լեզուն դասակարգային է եղել իր ծագման ժամանակից իսկ, դեռևս նախնադարյան տոհմա-

տիրական հասարակության մեջ: «Երբ աշխատանքա-մոգական պրոցեսում առաջացած շորս հնչյունական կոմպլեքսները (A, B, C, D), դառնալով լեզվաբանական տարրեր, ընկան նոր ստեղծվող հնչյունային հասարակական լեզվի հիմքում, ապա միջավայրն արդեն սոցիալապես տարբերված էր, և հնչյունային լեզուն գոյություն ուներ դասակարգայնորեն, իշխող խավի ձեռքին որպես դասակարգային պայթարի զենք հանդիսանալով, ինչպես հետագայում՝ գիրը» (Яфетидология в Ленинградском государственном университете, ИР, I, էջ 259):

Սրանք են, ահա, Ն. Յա. Մառի լեզվի «նոր ուսմունքի» հիմնական դրույթները:

Այդ դրույթներից ամենաշակունքները խստորեն քննադատության ենթարկվեցին 1950 թ. լեզվաբանական դիսկուսիայի ժամանակ: Մառը գտնում էր, որ լեզուն վերնաշենքային երևույթ է և նրան վերագրում էր քաղաքական վերնաշենքի հատկանիշները: Այդպիսի բնորոշումը ճիշտ չէ և ոչ մի ընդհանուր բան չունի մարքսիզմ-լենինիզմի հետ:

Ենելով լեզվի, որպես վերնաշենքային երևույթի, այդ սխալ ըմբռնումից, Մառն անխուսափելիորեն հանգեց «դասակարգային լեզուների» տեսությանը: Իհարկե, լեզվի դասակարգայնության և «դասակարգային լեզուների» առասպելը, որ մեծազորող ֆրազներով քարոզում էր նա, նորություն չէր լեզվաբանության պատմության մեջ: Ինչպես սույն աշխատության առաջին հատորում (էջ 340—341) տեսել ենք, այդպիսի տեսակետ, մի փոքր այլ գունավորումով, հայտնել է դեռևս Անտուան Մեյեն: Բուրժուական սոցիոլոգիզմի այդ «գյուտն» էր, ահա, որ Մառը յուրացրեց և մարքսիստական ֆրազբանությամբ հրապարակ նետեց, ըստ որում, նա գտնում էր, որ լեզուն դասակարգային է եղել նույնիսկ նախնադարյան տոհմատիրական հասարակարգում: Երբ Բաբվի դիսկուսիայում նրան իրավացիորեն քննադատեցին այն բանի համար, որ նա դասակարգային լեզու է գտնում նաև անդասակարգ հասարակության մեջ, նա պատասխանեց, որ նախնադարյան հասարակության վերաբերյալ նա «դասակարգ» բառը գործածում է պայմանականորեն՝ նկատի ունենալով մոզերի՝ կոլեկտիվից անջատված, մեկուսացած դասը (К бакинскої дискусии о яфетидологии и марксизме, Баку, 1932): Այսպիսի արդարացումն, իհարկե, գիտական ոչ մի հիմք չունի. տոհմատիրական հասարակության մեջ մոզերը ինչ-որ ուրույն սոցիալական դաս կամ դասակարգ չեն կազ-

մում: Ուստի և այդ հասարակարգում դասակարգային կամ դասային լեզու որոնելը «հավկիթի մեջ մազ փնտրել է»,—ինչպես ասում է մեր ժողովուրդը: Ինչ վերաբերում է դասակարգային հասարակութուններին, ապա՝ այստեղ էլ տարբեր դասակարգերին տարբեր դասակարգային լեզուներ վերագրելը խորապես սխալ է և ընդհանուր ոչինչ չունի մարքսիզմի հետ: «Դասակարգային լեզուները» տեսությունն ըստ էության բացասում է ժողովրդի կամ ազգի ընդհանուր լեզվի առկայությունը: Իրոք, եթե միևնույն ժողովրդի կամ ազգի տարբեր դասակարգերը ունեն իրենց ուրույն, դասակարգային լեզուները, ապա դա նշանակում է, թե ժողովրդի կամ ազգի ընդհանուր լեզու գոյություն չունի: Մինչդեռ, ինչպես ցույց է տալիս պատմությունը, չի կարող գոյություն ունենալ ժողովուրդ կամ ազգ առանց ընդհանուր ու միասնական լեզվի: Լեզվի ընդհանրությունը հասարակության բոլոր անդամների համար, անկախ նրանց դասակարգային պատկանելությունից, և միասնությունը՝ ամբողջ հասարակության համար, անկախ հակամարտ դասակարգերի գոյությունից, բխում է հասարակական հաղորդակցման անհրաժեշտությունից:

Այնուհետև տարբեր դասակարգերի դասակարգայնորեն տարբեր լեզուների գոյության տեսությունը և ընդհանուր լեզվի բացասումը անուղղակի կերպով հանգեցնում են նաև ժողովրդի կամ ազգի միասնության ժխտման հակապատմական, հակամարքսիստական տեսակետին: Հիրավի, եթե ժողովրդի կամ ազգի տարբեր դասակարգերը խոսում են տարբեր դասակարգային լեզուներով, ապա դա ինքնին նշանակում է նաև, թե տարբեր դասակարգերի միջև որևէ շփում, որևէ կապ ու հաղորդակցում գոյություն չունի, որ նրանցից յուրաքանչյուրն ապրում է մյուսներից մեկուսացած, ինքն իր համար: Մինչդեռ, ինչպես ժողովրդի, կամ ազգի, այնպես էլ դրանց կազմի մեջ մտնող դասակարգերի գոյությունը պայմանավորված է դրանց փոխադարձ կապով, նրանց միասնությամբ, նրանց համատեղ հասարակական գործունեությամբ: Այդ կապի խզումն ու միասնության խախտումն անխուսափելիորեն կհանգեցնեն հասարակության քայքայմանն ու դասակարգերի կործանմանը:

Վերջապես, «դասակարգային լեզուների» տեսությունը հանգում է լեզվի ու գիտակցության, լեզվական համակարգի ու գաղափարախոսության նույնացման հակագիտական տեսությանը: Իսկապես, ընդունել, թե լեզվի քերականական ձևերը, հնչյունները նույնիսկ, անմիջականորեն արտացոլում են դասակարգային հա-

րաբերությունները, ենթադրել, թե լեզվական միավորներն ինքնին արտահայտում են դասակարգային մտայնությունը, նշանակում է ոչ մի տարբերություն չդնել գաղափարախոսության և դրա հաղորդմանը ծառայող գործիքի՝ լեզվի միջև: Լեզուն միջոց է մտքերի, արտահայտման, հաղորդման համար և դրանով իսկ՝ գաղափարախոսության արտահայտման համար, բայց ինքը՝ լեզուն գաղափարախոսություն չէ:

Այսպիսով, Մառի ու նրա հետևորդների տեսությունը «դասակարգային լեզուների» մասին արմատապես սխալ է: Լեզուն, որպես հասարակական հաղորդակցման միջոց ընդհանուր է հասարակության անդամների համար և միասնական՝ ամբողջ հասարակության համար: Իբրև այդպիսին նա անտարբեր է հասարակության տարբեր դասակարգերի նկատմամբ: Այս չի նշանակում, իհարկե, թե լեզվի մեջ առհասարակ դասակարգային մտայնությունը և դասակարգային վերաբերմունքը բոլորովին չեն գտնում իրենց արտահայտությունը: Հայտնի է, որ հասարակության տարբեր դասակարգեր, հատկապես տիրող դասակարգերի վերնախավերը, ձգտում են լեզվի մեջ էլ որոշ չափով սահմանազատվել աշխատավորական զանգվածներից, ստեղծելով միայն իրենց նեղ շրջանում գործածվող արտահայտություններ, յուրահատուկ դարձվածաբանություն, ոճեր, գործածելով այլ լեզուներից փոխառած որոշ քանակով բառեր՝ ժողովրդի լեզվում գործածվող «գռեհիկ» բառերի փոխարեն և այլն, և այլն: Բայց դա առաջ չի բերում դասակարգային լեզուներ, այլ միայն դասակարգային բարբառներ՝ ժարգոններ ու ծածկալեզուներ՝ գործածության իրենց խիստ նեղ ոլորտով: Այնուհետև, միանգամայն օրինաչափ է դասակարգային մտայնության, գաղափարախոսության, վերաբերմունքի ու փնահատության արտահայտությունը որոշ քանակով բառերի իմաստների, դարձվածաբանության, կայուն բառակապակցությունների, ոճաբանության մեջ. «թե սեպուռն բառից կազմված սեպակալն» > սեփակալն, սեփակալություն բառն ստանում է մասնավոր սեփականության իմաստը, դա բնականաբար ամենից առաջ արդյունք է որոշակի հասարակական հարաբերությունների, հայտնի գաղափարախոսության: Եթե կարմիր և սպիտակ բառերը, որոշ պատմա-հասարակական պայմանների մեջ վերածվելով գոյականների՝ հոգնակի գործածությամբ (կարմիրներ, սպիտակներ) արտահայտում են կոմունիստ, ուսուցիչներին և կոմունիզմի թշնամիներ, հակաուսուցիչներին իմաստ, ապա դա, իհարկե, հասարակական-քաղաքական կյանքի հետ է կապվում անմիջական-

րեն և արտահայտում է որոշ դարաշրջանի դասակարգային գաղափարախոսությունն ու վերաբերմունքը տվյալ լեզվով խոսող հասարակության մեջ: Բայց այս երևույթը, որքան էլ մեծ չափեր ընդունին ևս լեզվի մեջ, չի կարող հասցնել դասակարգային լեզուների առաջացմանն ու լեզվի ընդհանրության ու միասնության խախտմանը, միասնական, ընդհանուր լեզվի, որպես հասարակության ընդհանրական հաղորդակցման միջոցի, բացասմանը:

Ենեկով այն ճիշտ դրույթից, որ լեզուն հասարակական երևույթ է և իր պատմությամբ սերտորեն կապված է իրենով խոսող հասարակության պատմության հետ, Մառն աճն գոեհիլ-մատերիալիստական դրույթին հանգեց, որ լեզուն, իբրև թե, իր կառուցվածքով, հնչյունաբանությամբ, քերականությամբ ու բառապաշարով ուղղակիորեն արտացոլում է հասարակության բազիսի իրողությունները: Այս սխալ տեսակետի վրա կանգնելով, նա հանգեց ստադիալականության հակապատմական տեսությանը և սահմանեց լեզվի ու մտածողության պատմության «ֆորմացիաները» — ստադիաները, որոնք համապատասխանում են հասարակական ֆորմացիաներին: Վերջապես, ընդունելով «ֆորմացիաների» գոյությունը լեզվի պատմության մեջ, նա անխուսափելիորեն առաջ քաշեց այն սխալ դրույթը, թե իբր լեզուն, որպես թե, զարգանում է պայթյունների միջոցով, հնի հանկարծակի ու միանգամայն ոչնչացման և նորի նույնքան հանկարծակի առաջացման ճանապարհով: Ըստ որում այս տեսակետն էլ նա փորձում էր հիմնավորել դիալեկտիկայի բացասման-բացասումի, էվոլյուցիայի և ռևոլյուցիայի փոխհաջորդման օրենքով, բայց ըստ էության նա հենց դրանով աղավաղում էր լեզվի դիալեկտիկայի ըմբռնումը: Հասարակական նոր ֆորմացիայի առաջացումը չի հանգեցնում գոյություն ունեցող լեզվի քայքայմանն ու վերացմանը և նոր լեզվի ստեղծմանը: Պատմությունը ցույց է տալիս, որ միևնույն լեզուն, առանց էական փոփոխությունների, հավասարապես կարող է ծառայել հասարակությանը, որպես հաղորդակցման միջոց՝ և՛ հին հասարակարգի, և՛ նորի, և՛ հին վերնաշնչի, և՛ նորի գոյության պայմաններում: Ըստ որում, դա չի կարող նշանակել, թե լեզվի մեջ որակական անցումներ տեղի չեն ունենում, և դիալեկտիկայի օրենքը չի գործում լեզվի զարգացման պրոցեսում: Իհարկե, լեզվի մեջ էլ տեղի է ունենում հնի մահացում և նորի առաջացում, բայց դա կատարվում է աննկատելիորեն և աստիճանաբար, երկարաձիգ ժամանակի ընթացքում, իբրև լեզվի էվոլյուցիոն զարգացման հետևանք: Ինչ վերաբերում է տար-

բեր լեզվական ստադիաների որոշմանը, ապա, թեև Մառը հաճախ նորանոր կոորդինատներ էր առաջարկում որպես այս կամ այն ստադիայի բնորոշ հատկանիշներ, այդպես էլ չկարողացավ սահմանել և, մանավանդ, հաստատել, թե ինչ է ներկայացնում, օրինակ, հաբեթական ստադիան կամ պրոմեթեիդականը:

Լեզվի ստադիալ զարգացման տեսության հետ անխզելիորեն կապված է նաև այսպես կոչված «լեզվաստեղծական պրոցեսի միասնության» տեսությունը, որի համաձայն՝ ա) բոլոր լեզուների հիմքում ընկած են միևնույն շորս լեզվաբանական տարրերը (հնչյունական կոմպլեքսները), բ) բոլոր լեզուներն անցնում են զարգացման միասնական ուղիով ու միևնույն աստիճաններով («ստադիաներով»): Առաջին դրույթը յուրահատուկ հակասություն էր ստեղծում հենց իր իսկ՝ «նոր ուսմունքի» մեջ: Այսպես, իր շատ հողվածների մեջ Մառը պարզապես հայտարարում է, թե լեզվի ծագման պրոցեսում առաջացել են բազմաթիվ լեզուներ. «Սկզբում ոչ թե մեկ, այլ բազմաթիվ ցեղային լեզուներ են եղել» (Индоевропейские языки Средиземноморья, ИР, I, 185), բայց մյուս կողմից էլ նա ընդունում է, որ բոլոր լեզուները ծագել են միևնույն շորս հնչյունական կոմպլեքսների հիմքի վրա: Լեզուների միջև եղած ընդհանրություններն էլ նա համարում է հենց դրա արտահայտությունը, և միայն դա է նրան հիմք տալիս «ընդհանրություններ» հայտնաբերելու այնպիսի լեզուներում, ինչպիսիք են հայերենը և շինարենը, ֆրանսերենն ու կովկասյան լեզուները, եգիպտերենն ու ուսսերենը և այլն, և այլն, լեզուներ, որոնք պատմականորեն ոչ մի առնչություն ու կապ չեն ունեցել իրար հետ: Այս հակասությունն էր պատճառն, ահա, որ նրան կանգնեցրեց այն սխալ տեսակետի վրա, որի համաձայն սկզբնապես եղել է նախալեզվային վիճակ. «Լեզուներն ունեն մեկ ծագում, բայց սկզբում եղել է ոչ թե նախալեզու, այլ նախալեզվային վիճակ» (Язык, ИР, IV, էջ 135): Այս էլ իր հերթին հանգեցրեց այն բանին, որ վերջ ի վերջո իր հորինած շորս լեզվաբանական տարրերը, որոնք նա իմաստի տեսակետից բազմաբովանդակ, համայնապարփակ էր համարում, իսկ հնչյունական ձևի տեսակետից՝ սահմանափակ (Sal, Ber, Yon, Row), իրական ձևից էլ զրկեց, կոչելով A, B, C, D: Իսկ սա արդեն նշանակում էր թե՛ իրական, նյութականորեն ձևավորված լեզվական միավորների (բառեր, մասնիկներ) բացասում, և թե՛ տարրորոշված իմաստների ժխտում: Գիտական լեզվաբանությունը ելնում է այն սկզբունքից, որ նախապես առաջացել են բազմաթիվ լեզուներ, յու-

րաքանչյուրն իր բառային կազմով ու քերականական կառուցվածքով. լեզուների մեջ գոյություն ունեցող ընդհանրությունները, հետևաբար, պատմականորեն առաջացած ընդհանրություններ են կամ լեզվական փոխազդեցությունների հետևանքով, կամ էլ որպես կոնկրետ լեզուների տվյալ խմբի՝ մեկ հիմք լեզվից (նախալեզվից) առաջանալու պատմական պրոցեսի անխուսափելի արտահայտություն: «Լեզվաստեղծական պրոցեսի միասնություն» մառյան տեսությունն այդ գիտական սկզբունքի բացասումն է:

Իր շատ աշխատություններում Ն. Յա. Մառը հայտարարում է, թե իր ուսմունքի մեջ սկզբունքորեն լուծված է լեզվի ու մտածողության կապի հարցը, քանի որ լեզուն ու մտածողությունն այդ ուսմունքում դիտվում են որպես միասնություն: Սա ճիշտ դրույթ է: Բայց, երբ այս ճիշտ դրույթից ելնելով՝ նա աշխատում էր բացատրել հենց այդ միասնության էությունը, կանգնում էր իդեալիզմի դիրքերում: Ըստ որում, նրա «ուսմունքի» մեջ գտնում ենք և՛ լեզվի ու մտածողության նույնացում, և՛ նրանց միասնության ժխտում, նրանց միջև եղած կապի խզում: Լեզվի ու մտածողության նույնացումն արտահայտվում է հենց «ստադիալականության» տեսության մեջ: Ելնելով լեզուների ձևաբանական կառուցվածքի առանձնահատկություններից, Մառը հանգեց այն սխալ դրույթին, ըստ որի լեզուների տարբեր ձևաբանական կառուցվածքները լեզվի զարգացման տարբեր աստիճանն են ներկայացնում, տարբեր ստադիաները: Այնուհետև, ձևաբանական կառուցվածքը լեզվի զարգացման աստիճանը համարելով, մյուս կողմից էլ՝ նա այդ նույնը շափանիչ էր համարում նաև մտածողության զարգացման համար: Ստացվում էր այն սխալ պատկերացումը, թե իբր լեզվի ձևաբանական կառուցվածքը համապատասխանում է նրանով խոսող հանրության մտածողության զարգացման աստիճանին: Սրանից բխում էր այն հակադիտական հետևությունը, որ եթե, օրինակ, որևէ լեզու իր ձևաբանական կառուցվածքով անշատական է, ապա նա գտնվում է զարգացման «նախնական ստադիայի վրա», նախնադարյան ստադիայում, որին համապատասխան այդ լեզվով խոսող ժողովրդի մտածողությունն էլ իբրև թե գտնվում է նախնադարյան վիճակում: Այդպես էին բնութագրվում, օրինակ, չինարենը և չինական ժողովրդի մտածողությունը: Այս տեսությունը երեք հիմնական սխալ ունի: Նախ՝ այն, որ լեզվի ձևաբանական կառուցվածքը համարում է լեզվի զարգացման աստիճանի շափանիչը, մինչդեռ լեզուների պատմությունը հերքում է այդ վարկածը: Օրինակ, հին անգլերենը

թեքական լեզու է եղել, իսկ ժամանակակից անգլերենը՝ գերազանցապես անշատական է. հին հայերենը բնորոշվում է հիմնականում թեքական կառուցվածքով, մինչդեռ ժամանակակից հայերենը գերազանցապես կցական է: Եթե Մառի այդ վարկածին հավատանք, ապա ստիպված պետք է լինենք ընդունելու, որ անգլերեն, հայերեն և շատ ուրիշ լեզուներ ժամանակի ընթացքում ոչ թե զարգացել, առաջադիմել են, այլ՝ հետադիմել:

Երկրորդ՝ այն, որ լեզվի ձևաբանական կառուցվածքը մտածողության զարգացման՝ շափանիչ համարել, նշանակում է լեզուն ու մտածողությունը նույնացնել:

Երրորդ՝ այն, որ նման տեսակետը հանգեցնում է այն եզրակացության, թե առանձին ժողովուրդների մոտ (օրինակ, անգլիացիների, հայերի ևն) մտածողությունը ոչ թե զարգացել, այլ հետադիմել է, քանի որ նրանց լեզուները թեքական կառուցվածքից անցել են կցական կամ անշատական կառուցվածքի: Հետևաբար, լեզվի ձևաբանական կառուցվածքի ու մտածողության զարգացման միջև հավասարության նշան դնելը, նրանց միջև անմիջական և ուղղակի համապատասխանություն սահմանելը նշանակում է նույնացնել մտածողությունը լեզվի հետ:

Մի ոտքով կանգնելով լեզվի ու մտածողության նույնության սխալ տեսակետի վրա, մյուս ոտքով Մառը կանգնած էր լեզվի ու մտածողության միասնության ժխտման, նրանք իրարից անջատելու, նրանց միջև եղած կապի խզման իդեալիստական տեսության դիրքերում: Դա արտահայտվում էր Մառի այն դրույթով, թե մտածողությունը կարող է գոյություն ունենալ նաև առանց լեզվի: «Լեզուն գոյություն ունի այնքանով միայն, որքանով որ դրսևորվում է հնչյուններով, մտածողության գործունեությունը տեղի է ունենում նաև առանց դրսևորման: ...Լեզուն (հնչյունային) այժմ արդեն սկզբն է զիջել իր ֆունկցիաները նորագույն գյուտերին, որոնք անվերապահորեն հաղթում են տարածությունը, իսկ մտածողությունը վերելք է ապրում իր շօգտագործված կուտակումներով ու նոր նվաճումներով և կարող է տեղադրվել ու ամբողջովին փոխարինել լեզվին: Ապագա լեզուն մտածողությունն է, որն աճում է բնական մատերիայից զերծ տեխնիկայի մեջ: Նրա առջև չի դիմանա ոչ մի լեզու, նույնիսկ հնչյունայինը, որ, այնուամենայնիվ, կապված է բնության նորմաների հետ» (Язык и мышление, ИР, III, էջ 121): Այսպիսով, ստացվում է այնպես, որ մտածողությունը կարող է գոյություն ունենալ առանց լեզվի (կամ նրան փոխարինող ու նրա վրա

հիմնված որևէ համակարգի), իսկ հաղորդակցումն էլ կարող է տեղի ունենալ առանց «բնական մատերիայի» օգնության: Իսկ այս խորապես սխալ, իդեալիստական տեսակետ է:

Խոսելով «նոր ուսմունքի» նվաճումների մասին, Մառը միշտ էլ դրանցից մեկն էր համարում լեզվի ծագման հարցի լուսաբանումը, ըստ որում այդ խնդիրը նա դիտում էր որպես լեզվաբանության առաջնակարգ պրոբլեմներից մեկը. «Առանց դեպի լեզվի ծագումը ցուցաբերվող հետաքրքրության,—ասում է նա,—չի կարող լինել ոչ մի լեզվաբանություն, ամեն մի լեզվի ուսմունք էլ ենթադրում է այս կամ այն դրական վերաբերմունքը դեպի այդ հարցը, լեզվի ծագման այս կամ այն կոնցեպցիան, և միայն այդ դեպքում հատուկ խորացրած զբաղմունքներն առանձին լեզուներով կարող են արդյունավետ լինել, և որքան ավելի ճիշտ է դրված, և հասկանալի է, որքան ավելի շատ ու լավ է լուսաբանված լեզվի ծագման հարցը, այնքան ավելի արգասավոր ու ընդհանրապես ավելի հանգամանորեն է դառնում լեզվի ուսմունքը, նմանապես և լեզուների փոխհարաբերությունների ընդհանուր պատկերացումը: Նրանց ամբողջական կապակցվածություն՝ մեր ուժերը ներածին շափ ճիշտ ընկալումը *conditio sine qua non* է, այսինքն այն պայմանը, առանց որի անհնարին է ճիշտ վերաբերմունքը դեպի ուսմունքի կամ տեսության ամեն մի մասը, անհնարին է կոնկրետ մոտեցումը դեպի լեզվի կառուցվածքն ու սիստեմը, դեպի նրա բոլոր առանձնահատկությունները որպես կենսական երևույթներ, այլ ոչ թե քստրակցիա կամ սխեմա» (Ընտիր երկեր, հ. I, էջ 104—105): Ինչպես տեսնում ենք, Մառը որոշակիորեն առաջ է քաշում լեզվի ծագման հարցը, որպես լեզվաբանության կարևորագույն խնդիրներից մեկը: Բայց խնդրի առաջադրումը դեռ ամեն ինչ չի նշանակում: Կարևորը միայն հարցադրումը չէ, այլև նրա լուծումը. և հենց այստեղ է, որ Մառը, շնայած հարցի հավանորտ առաջադրմանը, ոչ միայն ճիշտ կերպով չի լուծում, այլև ավելի խճճում ու խեղաթյուրում է այն: Եվ դա պատահական չէ: Փոխանակ օգտագործելու լեզվաբանության մեջ արտահայտված բոլոր ճիշտ կոահումները և մարքսիզմ-լենինիզմի լույսով քննելու, լուծելու առաջադրված հարցը, նա ժխտում է բացարձակապես անցյալի լեզվաբանության մեջ եղած ամբողջ դրականը և, որ գլխավորն է, անտեսում մարքսիզմի կլասիկների դրույթները լեզվի, ինչպես և իր իսկ մարդու առաջացման մասին, կամենալով ստեղծել լեզվի ծագման իր «սեփական տեսությունը»: Հասկանալի է, որ մարքսիզմի սկզբունքներն անտեսելով, չի կարե-

լի մարքսիստական տեսություն ստեղծել. ըստ որում դրույթները ոչնչով չի փոխվում, երբ ըստ էության մարքսիզմի հիմունքներին հակասելով, տեղի-անտեղի հիշվում են մարքսիզմի կլասիկների անունները: Մառը հենց այդպես էլ վարվում էր: Լեզվի ծագման մասին Մառի արտահայտած բոլոր հիմնական դրույթներն էլ անհիմն են ու անընդունելի: Այդ հիմնական դրույթներն են. 1. նախապես մարդիկ խոսել են գծային լեզվով. 2. հնչյունական լեզուն երևան է եկել մարդկային հասարակության զարգացման բարձր աստիճանի վրա. 3. հնչյունական լեզուն նախապես գործադրվել է ոչ թե մարդկանց փոխադարձ հաղորդակցման, այլ մոզական գործողությունների համար, տոտեմի հետ հաղորդակցվելու համար. 4. հնչյունական լեզուն ստեղծվել է ոչ թե մարդկային ամբողջ կողեկտիվի, այլ կոլեկտիվից առանձնացած մոզորի դասի կողմից. 5. հնչյունական լեզուն առաջացել է նախնական շորս հնչյունախրմբերից՝ շորս էլեմենտներից:

Անցնենք այդ դրույթների քննությանը:

Գծային լեզվի առաջնությունը կամ, ավելի ճիշտ, նախնականությունը չի արդարանում. նա չի նախորդել հնչյունական լեզվին: Ֆրիդրիխ Հնգելսը, հանգամանորեն լուսաբանելով հողաբաշխ լեզվի ծագումը կապկի՝ մարդու փոխարկվելու պրոցեսում իսկ, լեզուն մեկն է համարում այն գործոններից, որոնք նպաստել են մարդկային ուղեղի զարգացմանը. «Սկզբում աշխատանքը, իսկ այնուհետև՝ հողորոշ խոսքը՝ հանդիսացան այն երկու ամենագլխավոր խթանները,—ասում է Հնգելսը,—որոնց ազդեցության տակ կապկի ուղեղն աստիճանաբար փոխարկվեց մարդկային ուղեղի, որը, կապկի ուղեղի հետ ունեցած իր ողջ նմանությամբ հանդերձ, նրանից շատ է գերազանցում իր մեծությամբ և կատարելությամբ»²:

«Գերմանական գաղափարախոսություն» գրքում Մարքսը և Հնգելսը, լեզուն համարելով նույնքան հին, որքան և գիտակցությունը, հաստատում են նաև, որ հենց սկզբից էլ լեզուն եղել է հրնչյունային. «Ողու վրա հենց սկզբից իսկ ծանրացած է մատերիալով «ծանրացած» լինելու անեծքը, որն այստեղ հանդես է գալիս օդի տատանվող ալիքներով, հնչյուններով, մի խոսքով՝ լեզվով»³:

¹ Քարգմանության մեջ սխալ կերպով տպված է «խոսքերը», ուղղում ենք՝ «խոսքը»—է. Ա.:

² Ֆ. Հնգելս, Բնության դիալեկտիկա, Երևան, 1950, էջ 190:

³ К. Маркс и Ф. Энгельс, Немецкая идеология, Соч., т. IV, էջ 20. Ընդգծումները մերն են—է. Ա.:

ինչպես տեսնում ենք, մարքսիզմի հիմնադիրները այն սկզբունքն են հայտնել, որ մարդկային լեզուն բոլոր ժամանակներում էլ եղել է հնչյունային: Պատմութունից էլ գիտենք, որ մարդկությանը ծանոթ չէ և ոչ մի ժողովուրդ, որը զուրկ լիներ հնչյունաբանական լեզվից: Վերջապես, մարդաբանութունը (անտրոպոլոգիան) մեր դարում հայտնաբերված բրածո կմախքների ուսումնասիրությամբ հաստատել է, որ նեանդերթալյան մարդը, որն ապրել է մեզանից 50—300000 տարի առաջ ընկած դարաշրջանում և նախորդել է «նոր մարդուն» (կրամանյոնյան մարդուն), արդեն կարողանում էր խոսել: Այս բոլորը ցույց են տալիս, որ Մառի տեսությունը գծային լեզվի մասին՝ զուրկ է պատմական հիմքից:

Իսկ գծային լեզուն և ձևը լեզուն. եղև և են դրանք, թե ոչ: Մառի կարծիքով՝ «ձևը լեզուն ինքնին համաշխարհային գործածություն ունեցող գծային լեզվի ստանդարտացված տեսակն է, որ իր տեղը շատ ուշ զիջել է հնչյունային լեզվին պայթարում, կանանց մայրիշխանական կազմակերպության պայթարում. դա կանանց լեզուն է» (Язык и мышление, ИР, III, էջ 107): Այլ կերպ ասած, գծային կամ ձևը լեզուն եղել է մինչև մայրիշխանության դարաշրջանի վերջը և դրանից հետո վերածվել միայն կանանց լեզվի: Այս մոտեցումն, իհարկե, նույնպես զուրկ է պատմական որևէ հիմքից: Գծային կամ կինետիկ կամ ձևը լեզուն երբեք էլ հաղորդակցման ինքնուրույն ու ամբողջական համակարգ չի եղել ու չի կարող լինել: Նա բոլոր ժամանակներում օժանդակ դեր է կատարել, իբրև լրացուցիչ միջոց, հնչյունային լեզվի առկայության պայմաններում: Հավանական է, իհարկե, որ լեզվի ստեղծման պրոցեսում, երբ ինքը հնչյունային լեզուն էլ դեռևս շատ աղքատիկ էր, ժեստերը, առավելապես ձևը լեզուն շարժումները համեմատաբար ավելի մեծ դեր կարող էին ունենալ խոսելու պրոցեսում, քան ունեն այժմ: Բայց ինչքան էլ որ մեծ լինեք այդ դերը, նա չէր կարող հասցնել այսպես կոչված ձևը լեզվի, որպես հաղորդակցման միջոցի, գերակշռությանը հնչյունական լեզվի նկատմամբ, կամ թեկուզ համազոր դարձնել նրան: Ձևը լեզվի, որպես հաղորդակցման օժանդակ միջոցի, որպես հնչյունային լեզվի շատ շնչին դեր խաղացող կցորդի այս բնորոշումը մեզ շփոթություն մեջ չպետք է գցի, իհարկե, երբ պատմական հետազոտ շրջաններում այս կամ այն ժողովրդի մոտ առերևույթ ձևը լեզուն մեծ դեր է կատարում: Այսպես, օրինակ, հայտնի է, որ ամերիկյան բնիկների տարբեր ցեղեր, միմյանց լեզուն չիմանալով, իրար հետ հաղորդակցում էին հենց ձևը լեզվով:

այդպես էր նաև մեզ մոտ՝ Հայաստանում, մինչև սովետական կարգերի հաստատումը, երբ շխտական հարսները հաղորդակցում էին դարձյալ ձևը լեզվով, որը մեզ մոտ կոչվում էր հարսնեվաբ: Առաջին հայացքից թվում է, թե այս դեպքերում ձևը լեզուն իրոք ինչոր ինքնուրույն սխտեմ է հանդիսանում հաղորդակցելու համար և փոխարինում է հնչյունական լեզվին: Բայց այդ միայն թվում է: Բանն այն է, որ հիշյալ ժողովուրդները, որոնց մոտ ձևը լեզուն որոշ հանգամանքներում կարծես թե փոխարինում է հնչյունային լեզվին, դարգացման այնպիսի աստիճանի են հասել, որ ունեն իրենց զարգացած ու հարուստ լեզունները:

Ձևը լեզուն դրանց մոտ հիմնված է հենց հնչյունային լեզվի վրա, պայմանավորված է նրանով և ձևը լեզուն շարժումներով ու միմիկայով պայմանական ձևով ներկայացնում է կամ վերարտադրում հնչյունական լեզուն: Նա մոտավորապես նույն դերն է կատարում, ինչ որ գիրը. ինչպես գրերի միջոցով, պայմանական նշաններով վերարտադրվում է հնչյունային լեզուն, այնպես էլ ձևը լեզվի միջոցով պայմանական նշաններով վերարտադրվում է նույն հնչյունային լեզուն, և առանց հնչյունային լեզվի ինչպես չի կարող լինել գրավոր լեզու, այնպես էլ չի կարող գոյություն ունենալ ոչ ամերիկյան բնիկների ժեստերի լեզուն, և ոչ էլ հայ կանանց հարսնեվաբը: Հետևաբար, այստեղ մենք ունենք պատմական որոշ շրջաններում հասարակական այս կամ այն հանգամանքի շնորհիվ հնչյունական լեզվի վրա հիմնված ու նրանով պայմանավորված ձևը լեզուն ու միմիկայի պայմանական նշանների լեզու և ոչ թե լեզվատեսողական նախնական պրոցեսը ներկայացնող ու նրա վերապրուկը հանդիսացող երևույթ, ինչպես սխալ կերպով պնդում էր Մառը:

Մեզ չպետք է շփոթեցնի նաև այն փաստը, որ խոլուհամբերը խոսում են միայն ժեստերի լեզվով, առանց հնչյունական լեզուն իմանալու: Խոլուհամբերը ժեստերի լեզվով խոսելու առաջին ունակությունները ստանում են իրենց շրջապատից՝ ծնողներից (իսկ հնչյունական լեզվին տիրապետող միջավայրի համար այդ առաջին ունակություններն էլ հիմնված են հնչյունային լեզվի վրա): Ինչպես բոլոր երեխաների, այնպես էլ խոլուհամբ երեխայի ծնողները իրենց երեխաների հետ խոսելիս հաճախ են դիմում ձևը լեզուն շարժումներով այս կամ այն բանը հասկացնելու միջոցին: Առողջ, ֆիզիոլոգիական տեսակետից ոչ արատավոր երեխան, որ այս կամ այն շարժման հետ լսում է նաև որևէ բառ, ժամանակի ընթացքում սովորում է այդ բառը և կարիք չի զգում օգտագործելու շարժումը:

Մինչդեռ խուլուհամբը, որ չի լսում բառը և չի կարողանում սովորել այն, հարկադրաբար ընկալում է միայն շարժումը և ըմբռնում այն որպես այս կամ այն առարկան, երևույթը, գործողությունը և այլն, նշելու միջոց: Իր շրջապատից ընկալած այդ նշաններն էլ, ահա, թեև սակավ, բայց վճռական դեր են կատարում խուլուհամբի կյանքում: Հենց դրանցով էլ նրա ժեստերի լեզվի հիմքն է դրվում: Փորձից իմանալով արդեն, որ այս կամ այն նշանով ինքը կարողանում է շրջապատին հասկացնել, որ ուտել է ուզում, ծարավ է և այլն, նա արդեն ինքնուրույն կերպով զարգացնում է իր հաղորդակցման «սխտեմը», հարստացնում իր պայմանական նշանները: Բայց հենց այն պատճառով, որ խուլուհամբը զուրկ է հնչյունական լեզվից, որ նա մտածում է պատկերացումներով, նա չի կարող իր ժեստերի լեզվով խոսել այնպիսի վերացական գաղափարների մասին, ինչպես «փիլիսոփայություն», «հասկացություն», «հույս», «գաղափար» և այլն, և այլն: Սրանից չի բխում, իհարկե, թե խուլուհամբերի բոլոր շարժումները համապատասխանում են այն պատկերներին ու պատկերացումներին, որ ունեն նրանք առարկաների, երևույթների և այլնի մասին: Ով որ փոքր-ինչ ուշադրությամբ հետևել է խուլուհամբերի «խոսակցությանը», նա նկատած պիտի լինի, որ միայն որոշ շարժումներ իրոք վերարտադրում են այս կամ այն առարկայի ձևը կամ ուղղակի համընկնում են որևէ գործողության ժամանակ կատարվող բնորոշ շարժումներին, մինչդեռ բազմաթիվ շարժումներ ուղղակի պայմանական նշաններ են, որի հետևանքով էլ տարբեր վայրերի խուլուհամբերը, ընդհանուր նշանակությամբ շարժումներ ունենալու հետ միասին, ունեն նաև բազմաթիվ տարբերություններ, իրենց օգտագործած հենց պայմանական նշանների մեջ: Պատկերներով, ընկալումներով ու պատկերացումներով մտածելը չպիտի հանգեցնի նաև այն կարծիքին, թե խուլուհամբերը զուրկ են ընդհանրացման ու արատրահման ունակությունից: Այդպիսի կարծիքը սխալ է. խուլուհամբերը կարողանում են և՛ ընդհանրացնել, և՛ արատրահել: Բայց դրա հետ միասին մենք պետք է ընդունենք նաև, որ որքան էլ նրանք ընդհանրացման և արատրահման ունակություն ունենան, այնուամենայնիվ այդ ունակությունը խիստ սահմանափակվում է հենց հնչյունական լեզվից զուրկ լինելու պատճառով: Խուլուհամբը (եթե նա գրագիտություն սովորելով չի յուրացրել հնչյունային լեզուն) կարող է ընդհանրացում ու արատրահում կատարել այն շափով միայն, որ շափով հնարավորություն են տալիս զգայությունների միջոցով

ձեռք բերած պատկերացումները, և ո՛չ ավելին: Իսկ այս բանում մենք չենք կարող դարձյալ շտեմնել հնչյունական լեզվի բացառիկ և անփոխարինելի դերը մարդկային մտածողության համար:

Այսպես, ուրեմն, Մառի ուսմունքը ձեռք լեզվի առաջնության մասին հիմնովին սխալ է: Բայց եթե այդ դրույթը սխալ է, ապա՝ մյուս շորս դրույթներն էլ ինքնին հերքվում են: Այսպես, եթե ձեռք լեզուն չի նախորդել հնչյունային լեզվին, եթե չի եղել մի ժամանակ, երբ մարդիկ խոսած լինեն միայն ձեռք լեզվով, ապա անհեթեթություն է ասել, թե հնչյունային լեզուն ստեղծված է մարդկային հասարակության զարգացման ուշ շրջաններում: Իսկ եթե այդպես է, ապա ինքնին անհեթեթություն են դառնում նաև հաջորդ երկու դրույթները այն մասին, թե իբր հնչյունային լեզուն հորինվել է նախապես միայն մոգական արարողությունների համար և ստեղծվել է մոգերի առանձնացած խավի կողմից: Ինչ վերաբերում է հինգերորդ դրույթին, որի համաձայն բոլոր լեզուները ծագել են նախնական շորս հնչյունական էլեմենտներից, ապա դրա մասին արդեն խոսել ենք:

Մենք կանգ առանք «նոր ուսմունքի» ամենահիմնական դրույթների վրա, ցույց տալով, որ դրանք բոլորն էլ հակասում են գիտության սկզբունքներին և զուրկ են պատմական հողից: Բնական է, որ սխալ սկզբունքների վրա հենվելով ու դրանցով առաջնորդվելով անկարելի է ուսումնասիրել լեզվի, որպես հասարակական երևույթի, էությունը, լուսաբանել նրա պատմական զարգացման օրինաչափությունները: Եվ իրոք, Մառի այն բոլոր հետազոտությունները, որոնք գրված են «նոր ուսմունքի» ոգով և նրա դրույթները հիմնավորելու համար, մեծ մասամբ զուրկ են գիտական արժեքից, ըստ որում կոնկրետ լեզվական նյութի ուսումնասիրության ժամանակ էլ նա ելնում էր իր ուսմունքի պատրաստի սխեմաներից և լեզվական իրողությունները հարմարեցնում դրանց: Արատավոր էր նրա լեզվաբանական վերլուծությունների մեթոդը, այսպես կոչված քառատարր վերլուծության մեթոդը: Իսկ արատավոր մեթոդով գիտականորեն հիմնավորված ու ճշգրտված արդյունքների հասնել չի կարելի:

Ի վերջո, Մառի ուսմունքի մեջ կարևոր տեղ է գրավում նաև խաչավորման տեսությունը, ըստ որում այս էլ իր էվոլյուցիան է ապրել: Այն ժամանակ, երբ նա դեռ ընդունում էր լեզուների ցեղակցությունը որպես պատմական երևույթ, լեզուների խաչավորում ասելով հասկանում էր լեզուների փոխադարձ ներթափանցումը և

գրա հիման վրա մի նոր, խառնածին լեզվի առաջացումը: Հետագայում, երբ ժխտեց լեզուների ցեղակցությունը, նա լեզուների խաչավորում ասելով գերազանցապես հասկանում էր տարբեր դասակարգային լեզուների խաչավորումը, նրանց փոխադարձ ներթափանցումները, որոնք առաջ են բերում որոշ (և միայն որոշ!) ընդհանրություններ դասակարգայնորեն տարբեր լեզուների միջև: Այս վերջին դրույթն ինքնին հերքվում է հենց նրանով, որ դասակարգային լեզուների տեսությունը, ինչպես տեսանք, հիմնովին սխալ է: Ինչ վերաբերում է առաջին դրույթին, ապա թեև լեզվաբանության մեջ մեր դարում էլ կան խաչավորման տեսության կողմնակիցներ (Ն. Ս. Տրուբեցկոյ, Ջ. Բոնֆանտե, Վ. Պիզանի և այլք), բայց և այնպես նա չի արդարանում: Խաչավորումը ոչ այլ ինչ է, եթե ոչ լեզվական փոխազդեցությունների կամ ազդեցությունների մի տեսակը, և խաչավորման հետևանքով խառնածին լեզուներ չեն առաջանում, ըստ որում այդպիսի լեզուներ գոյություն էլ չունեն:

Այսպես, ուրեմն, լեզվի «նոր ուսմունքի» տեսական սկզբունքներից և ոչ մեկը ընդունելի չէ:

Այժմ համառոտակի ծանոթանանք Մառի հայագիտական հայացքներին. այստեղ նախ և առաջ պետք է նշենք, որ նա հայագետ է եղել ոչ միայն իբրև լեզվաբան, այլև միաժամանակ և՛ բանասեր, և՛ պատմաբան, և՛, մանավանդ, հնագետ (археолог). այս վերջին բնագավառում իր արդյունավետ պեղումների շնորհիվ Մառն այնպիսի մեծ ծառայություն է մատուցել հայոց պատմությանը և հայ կուլտուրայի պատմությանը, որ հազիվ թե հնարավոր լիներ գերագնահատել նրա վաստակները: Մառի հայագիտական գլխավոր աշխատություններն են.

1) Сборники притч Вардана (СПб, I, 1899, II, III, 1894): Վարդան Այգեկցու առակների ժողովածուն է՝ զանազան ձեռագրերի քննությամբ ու համեմատությամբ, և այդ առակների ու ընդհանրապես հայ միջնադարյան առակագրության հմտալից ուսումնասիրությունը: Առաջին մասը, որ երկրորդ ու երրորդից հետո է լույս տեսել, բուն ուսումնասիրությունն է, երկրորդ մասը՝ բնագիրն է, երրորդը՝ հավելվածներ (ձեռագրերի նկարագրություն, արաբերեն ու հայերեն լրացուցիչ բնագրեր են): Ուսումնասիրությունը ներկայացված է իբրև մագիստրական դիսերտացիա. Բացառիկ հմտությամբ կատարված աշխատանք է և այդ բնագավառում լավագույն գործերից մեկն է հայագիտության մեջ: Չնայած որ որոշ դրույթներ արդեն հնացած են, իսկ առանձին հարցերի մեկնաբանությունը՝

սխալ, բայց և այնպես աշխատությունն այժմ էլ պահպանում է իր արժեքը, որպես հայ հին գրականության լավագույն ուսումնասիրություններից մեկը:

2) Грамматика древнеармянского языка (СПб, 1903): Գրաբարի ձևաբանությունն է, որ հեղինակը կազմել է յուր ուսումնասիրությունների հիման վրա. գրել է այն շրջանում, երբ դեռ ընդունում էր լեզուների ցեղակցությունը և հաստատում էր հաբեթական լեզուների ցեղակցությունը սեմականների հետ՝ մի կողմից, ու հայերենի ցեղակցությունը վրացերենի հետ՝ մյուս կողմից. այդ ոգով էլ կազմված է ամբողջ աշխատությունը, որ, սակայն, աչքի է ընկնում յուր բարձր մակարդակով. հեղինակի հետազոտությունները դուրս են գալիս հայերենի ուսումնասիրության ավանդական սահմաններից և ընդգրկում շատ ավելի ընդարձակ շրջանակներ: Գիրքը մեծ արժեք ունի և այսօր էլ գրաբարի լավագույն քերականություններից մեկն է, իսկ ռուսաց լեզվով՝ միակը:

3) Яфетический элемент в языках Армении (ИАН, I, II, 1911, III, IV, 1912, V, VI, 1913, VII, VIII, 1914, IX, 1916, X, 1918, XI, 1919): Յուր տեսության համաձայն քննության է առել հայերենի բազմաթիվ երևույթները և «հայտաբերիլ» հաբեթական տարրերը հայոց լեզվի մեջ՝ հատկապես բազմաթիվ հայերեն բառերի ստուգաբանությամբ: Նրա հայագիտական և առհասարակ լեզվաբանական հետազոտությունների ամենաթույլ բնագավառն է. ստուգաբանությունները կատարված են խիստ կամայական համեմատությունների հիման վրա և կանխակալ դիտավորությամբ՝ իր տեսությանը հարմարեցնելու և այդ տեսությունը հիմնավորելու նպատակով: Հարյուրավոր ստուգաբանություններից ընդունելի են միայն մի քանիսը, որոնցից էլ լավագույնն է հյ. աստուած քառի համեմատությունը փոյուզիական Տաթևուց -ի հետ:

4) Ани. Книжная история города и раскопки на месте городища (М.—Л., 1934, Р հրատ., Երևան, 1939): Իր երկարամյա պեղումների արդյունքներն են՝ ամփոփված այս մեծարժեք աշխատության մեջ և ուսումնասիրված: Անիի հնագիտական ուսումնասիրությունները Մառն սկսել է 1892 թ. և շարունակել մինչև 1917 թ.՝ որոշ ընդհատումներով: Անիի հնագիտական պեղումներն իրենց մասշտաբներով ու գիտական նշանակությամբ ոչ միայն մինչսովետական Հայաստանի, այլև ցարական Ռուսաստանի ամենամեծ հնագիտական ձեռնարկումներից մեկն էին և պսակվել են հայագիտության համար խոշորագույն հայտնագործումներով: Կա-

քելի է ասել, որ Մառի շուրջ 16 տարվա հնագիտական աշխատանքներին շնորհիվ է, որ գիտության համար վերածնվեց Անին՝ իր կուլտուրայով, հույակապ նախադասական կարողներով, գրավոր հուշարձաններով և դրա հետ միասին՝ իր ներքին կյանքով¹: Այս տեսակետից էլ անգնահատելի են Ն. Յա. Մառի վաստակները: Եվ եթե իր այս աշխատության, ինչպես և այլ հետազոտությունների մեջ կան ինչ-ինչ տեսակետներ ու մեկնություններ, որոնք այժմ մերժված են, ապա դրանք մազաշուփ անգամ չեն կարող ստվեր ձգել հայ հնագիտության բնագավառում թողած այն մեծահարուստ ժառանգության վրա, որ ամբողջությամբ վերցրած, դրական է:

Սակայն այդ աշխատանքների թվարկումը մեզ շատ հեռուն կտաներ. Մառի հայագիտական ուսումնասիրությունների լրիվ ցանկը տրված է «Հանդէս Ամսօրեայ»-ում (1935)² հեղինակի կենսագրության հետ: Իհարկե, միայն մասնավորապես հայագիտական աշխատությունների մեջ չէ, որ Մառը խոսել է հայերի ու հայերենի մասին. ընդհանուր բնույթ կրող յուր բազմաթիվ աշխատությունների մեջ էլ նա միշտ հատուկ ուշադրություն է դարձրել հայոց լեզվի վրա: Այդ հատուկ ուշադրությունը բացատրվում է ոչ միայն նրանով, որ նա առանձնապես հայերենի մասնագետ էր, այլև նրանով, որ յուր տեսության համար իսկ նա հայերենից խիստ շատ

¹ Անիի պեղումները այնքան մեծ արդյունք են տվել, որ արդեն 1915 թ. (դեկտեմբերի 29-ին) Ռուսական հնագիտական ընկերությունը Ն. Յա. Մառին շնորհեց Ուվարովի անվան ոսկե մեծ մեդալ՝ հետևյալ գնահատությամբ. «За ту четверть века, которая отделяет нас от первого знакомства Н. Я. с развалинами Ани, имя его связалось с ними вечной и неразрывной цепью, сковавшей из 15-кратного пребывания там, из 14 кампаний раскопок, из ряда научных докладов и лекций, посвященных Ани, из целой серии печатных трудов, из непрерывных археологических и исторических изысканий, из учреждения на самом городище двух музеев, из установления действительной охраны развалин, из предохранения многих памятников от грозящего им разрушения и, наконец, из создания, если еще не de jure, то de facto, научного института специально для изучения древностей Ани и окрестной области древнего Ширака» (ЗВО. т. XXIII, էջ 381):

² Ուշադրով է նաև Գ. Ն. Չուբինաշվիլու հետևյալ գնահատությունը.

«Нельзя не сказать, что из всего сделанного Н. Я. Марром на протяжении его долгой, бурной, все равнявшейся дальше и дальше научной деятельности — это именно Ани неразрывно связано и останется связанным и при всех дальнейших переворотах и изменениях, навеки, так сказать, с его именем» (Г. Н. Чубинашвили, Рецензия на работу: Ани. Ars georgica, № 2, 1948, Тбилиси, էջ 161):

նյութ էր քաղում, և մասնավորապես խառնածին լեզուների տեսությունները հանգելու մեջ հայերենին առաջնակարգ դեր էր խաղացել: Իսկ այդ տեսությանը նա հանգել է դեռևս յուր լեզվաբանական գործունեության շատ վաղ շրջանում: Այսպես, վերը հիշված «Գրաբարի քերականության» առաջաբանում Մառն արդեն խիստ կերպով հարձակվում էր հնդեվրոպական լեզվաբանության մեջ հաստատված այն տեսակետի վրա, որի համաձայն հայերենը դիտվում էր որպես բուն հնդեվրոպական լեզու. «Չպետք է կրկնել այն մեծ սխալը, որի մեջ ընկել են լեզվաբանները, որոնք ուսումնասիրել են հայերեն լեզուն բացառապես հնդեվրոպական լեզվաբանական հայեցակետով: Միայն այն է, որ նրանք հայերեն լեզվի մասին (իրենց) տեսությունը դարձրել են դոգմա՝ առանց նախապես ուսումնասիրելու այն՝ յուր խորությամբ ու ընդարձակությամբ» (Грамматика древнеарм. яз., էջ XXXII): Այնուհետև՝ շարունակելով յուր կշտամբանքները և արտահայտելով իր տեսակետները հայոց լեզվի ուսումնասիրության ու հայերենի գիտական քերականության մասին, գտնում է, որ հայերենի գիտական քերականությունը կազմելու համար նախապես պետք է ամբողջությամբ ուսումնասիրել հայերենը՝ յուր բոլոր շրջաններով ու բարբառներով հանդերձ. «Հայերեն լեզվի իսկական քերականությունը կարող է ըստ եղծվել միայն իրենց իսկ՝ հայկական նյութերի հնարավորին շափ խոր ուսումնասիրությամբ՝ իրենց ամբողջ բովանդակությամբ: Եվ այստեղ տեղական հայկական՝ տվյալ դեպքում լեզվաբանական՝ միջավայրը պետք է լուսավորվի յուր ներքին լույսով, և միայն այն ժամանակ հայերեն լեզվի համեմատական ուսումնասիրությունը՝ այս կամ այն, թեկուզ և, անկասկած, նրա հետ ցեղակից լեզուների կապի մեջ, — կդադարի հիշեցնել խավարի մեջ խաբխափելը...: Հայկական լեզվաբանական նյութերի անմիջական ուսումնասիրությունը, ձգտումը՝ իր իսկ հայկական հողի վրա գտնել ցեղակցական երևույթների փոխհարաբերությունները և վերահասու լինել, եթե կարելի է այսպես արտահայտվել, հայերի քերականական ինքնագիտակցությանը, որ գտնվում է նրանց ժողովրդական հոգեբանության կապի մեջ, — ահա, թե ինչն ամենից առաջ պետք է ոգեշնչի հայոց լեզուն ուսումնասիրողին» (անդ, էջ XXXII—XXXIII): Մառը միանգամայն արդարացի կերպով նշում է, որ մինչև այդ եղած հայերենի քերականությունները միակողմանի են, որ նրանք հիմնված են նախապես արդեն լեզվաբանական գիտության մեջ հաստատված միակողմանի տեսության վրա: Հենց այստեղ էլ նա քննադատում

է հայոց լեզվի ծագման վերաբերյալ ընդունված ու տիրապետող դարձած տեսությունը, որի վրա հիմնվելով էլ ուսումնասիրողները կամենում են հայերենն ամբողջապես կապել հնդեվրոպական լեզուների հետ. «Ընդհանուր լեզվաբանության տեսական հարցերով հափշտակվելը օժանդակել է համեմատական մեթոդի շարաշահմանը: Բուրիին գրավել, ավելի ճիշտ՝ զբաղեցրել է ամբողջի կամ մասնավորությունների ծագման հարցը՝ նրանց առկա որակի և առանձնահատկությունների նկատմամբ եղած անտարբերությունը: Առաջացավ պատրաստի նյութի վրա հիմնված հեմեմատական աշխատությունների արհեստական արտադրություն: Այս պատճառով էլ հայերեն լեզուն այժմ ևս գիտունների համար շուծված առեղծված է» (անդ, էջ XXX): Ապա՝ շարունակելով այդ քննադատությունը՝ հեղինակն արդեն որոշակի կերպով հայտնում է, որ հայոց լեզվի ամբողջական կազմը, հայերենի ամբողջ էությունը չի ընդգրկվում հնդեվրոպական լեզուների հետ կապվող երևույթով, որ հայերենի մեջ բացի հնդեվրոպականից, կա նաև ուրիշ լեզվական տարր. «Հնդեվրոպական կամ արիական տարրով չի սպառվում հայերենի բնությունը: Հայերենում հնդեվրոպականի հետ անբաժանելիորեն ձուլված է ինչ-որ անծանոթ լեզվաբանական ընտանիքի նստվածքը» (անդ, էջ XXX): Այսպես, ահա, դիտելով հայերենը ոչ թե որպես անխառն մաքուր հնդեվրոպական լեզու, այլ որպես յուր մեջ նաև այլ լեզվական տարրեր մարմնացնող մի լեզու՝ Մառը եզրակացնում է, թե հայոց լեզուն երկակի բնույթ ունի, որ նա տարբեր լեզվական միավորների խառնուրդով կազմված մի լեզու է. «Պարզ կերպով երևում է մի բան. նա խառնուրդ լեզվի խիստ բնորոշ նմուշն է: Խոսքըս, իհարկե, նրա մեջ եղած հայտնապես փոխառյալ բառերի հարուստ խառնուրդի մասին չէ, որը հեշտ է առանձնացնել և նշանակալից չափով առանձնացված է արդեն: Ես նկատի ունեմ պատմական Հայաստանի հողի վրա առաջացած իրական (ոեալ) հայերեն լեզվի կորիզը: Ինքը կորիզն է երկսեռ» (անդ): Զարգացնելով յուր այդ դրույթը, իհարկե, որ չափով այդ կարելի էր կատարել մի ոչ այնքան ընդարձակ առաջաբանում, Մառը հայտնում է, որ ուսումնասիրությունների ընթացքում նա հայտաբերել է հայերենի մեջ մի քանի կարևոր երևույթներ, որոնք կապվում են հարևան վրացերենի հետ. «Ինձ համար պարզ դարձավ, որ յուր բնության մի քանի էական կողմերով հայերեն լեզուն ցեղակցության մեջ է գտնվում վրացերենի հետ» (անդ, էջ XXX—XXXI): Ինչպես տեսնում ենք, Մառը՝ յուր սկզբնական շրջանի սկզբունքներին համապատասխան՝ դեռևս

ընդունում է ինչպես լեզուների ծննդաբանական ցեղակցությունն ընդհանրապես, այնպես էլ հայերենի ցեղակցությունը հնդեվրոպական լեզուների հետ. բայց հենց այդ շրջանում էլ նա արդեն դուրս է գալիս հնդեվրոպաբանության շրջանակներից և գտնում է, որ հայերենի մեջ, իբրև բաղկացուցիչ տարր, գոյություն ունի կովկասյան լեզվական շերտը, իսկ դրանից ելնելով էլ նա հայերենը համարում է երկսեռ կամ խառնուրդ լեզու: Այս սկզբունքը հետագայում յուր ընդհանուր լեզվաբանական հայացքների փոփոխման համաձայն աստիճանաբար փոխեց և ինչպես որ լեզվի փիլիսոփայության մեջ նա աստիճանական զարգացումով հասավ իր՝ վերը շարադրված դրույթներին ու հիմնադրեց լեզվի «նոր ուսմունքը», այնպես էլ առանձինն հայերենի մասին յուր տեսությունը հանգեցրեց այն տեսակետին, թե հայերենն անցման վիճակում գտնվող լեզու է: Մեր նպատակից դուրս է, իհարկե, թվել այստեղ տարբեր շրջաններում հայերենի մասին արտահայտած նրա կարծիքները, և այդ ավելորդ էլ է. վերը ցույց ենք տվել արդեն, թե ինչպես նա սկսում է յուր ուսումնասիրությունները հնդեվրոպաբանության ոգով և քայլ առ քայլ հեռանում նրանից. այն շրջանները, որ նշեցինք լեզվաբանական հայացքների զարգացման մեջ, հավասարապես վերաբերում են նաև նրա հայագիտական սկզբունքներին: Սկսելով հայերենի և վրացերենի միջև եղած կապերը որոնելուց, ընդունելով դեռևս հայերենի ցեղակցությունը հնդեվրոպական լեզուների հետ,—նա «հայտնաբերեց» այսպես կոչված «հաբեթական շերտ» հայերենի մեջ, ապա՝ այն ժամանակ, երբ մերժեց լեզուների ծնունդաբանական դասակարգումը և հիմնեց իր ստադիալ դասակարգումը, հերքեց նաև հայերենի ծննդաբանական ցեղակցությունը հնդեվրոպական լեզուների հետ: Թե ինչպես յուր հայացքների զարգացման մի աստիճանից մյուսին է անցել, և թե ինչով է բնորոշվում այդ շրջաններից յուրաքանչյուրը, տեսանք արդեն: Ուստի և կրկնություններ շանելու համար բավականանում ենք նրա՝ հայերենի մասին արտահայտած վերջին շրջանի սկզբունքների համառոտ ամփոփումով: Իր վերջին եզրակացություններով Մառը հայտնում է, որ իրապես Հայաստանում գոյություն ունի ոչ թե մեկ, այլ երկու լեզու. այդ երկու լեզուները ժառանգներն են պատմական Հայաստանի տերիտորիայում եղած բազմաթիվ լեզուների, որոնք անհետացել են՝ թողնելով իրենց վերապրուկներն այդ երկուսի մեջ. այդ երկու լեզուները, որոնք նա անվանում է «Բեալկան և Բեալկան»՝ ըստ հոգնակիի կազմության,

իրարից տարբեր «ձևաբանական-ձևական» հատկանիշներ ունեն. «Հաբեթա-պրոմեթեիդյան քերականությունը, որի մշակումն սկսված էր բավական վաղ, սկզբում առաջ տարավ հայերենի հարցը, որովհետև վաղուց սկսվել էր պարզվել, որ Հայաստանում շատ լեզուներ են եղել, որոնք իբրև վերապրուկներ այժմ մնում են մի երկայն շարք բարբառների մեջ, որոնց թվում մինչև այսօր մի քանիսը, ինչպես՝ զոկերենը, իսկապես ինքնուրույն լեզու են, և այժմ Հայաստանում ունենք ոչ թե մեկ, այլ՝ ըստ հոգնակիի կազմության՝ երկու լեզու. Քեական (ք), այսինքն՝ հին գրականը, Ֆեոդալականը, և Բեական (ր)՝ նոր գրականը» (Яфетическая теория, ИР, II, էջ 125): Ուսումնասիրելով այդ «երկու լեզուների» առանձնահատկությունները՝ Մառը գալիս է այն եզրակացություն, թե նրանցից յուրաքանչյուրը՝ ըստ յուր քերականության՝ պատկանում է մի լեզվական-ձևաբանական սիստեմի՝ մեկը թեքականին, մյուսը կցականին. «Հայաստանի այս երկու լեզուներից յուրաքանչյուրը, ըստ ձևաբանական-ձևական հատկանիշների, պատկանում է առանձին սիստեմի, մեկը՝ Քեականը—թեքականին, մյուսը՝ Բեականը—կցականին: Ընդհանրապես... դրանք հաբեթական սիստեմից պրոմեթեիդյան հնդեվրոպական սիստեմին անցման լեզուներ են» (անդ): Հայերեն այս երկու լեզուների փոխադարձ կապը քննության առնելով՝ հեղինակը կրկին արտահայտում է արդեն վերը հիշված այն դրույթը, որ հայերենը խառնածին լեզու է, և որ այդ երկու լեզուները մեծապես փոխազդել են իրար վրա ու խաչավորվել. «Բոլորովին շեր բացավում դրանցից յուրաքանչյուրի խաչավորվածության հնարավորությունն ու իրականությունը: Նրանց խաչավորվածությունը տարբեր է. մեկը տեղի է ունեցել մինչև երկու տիպի լեզուներից յուրաքանչյուրի էացումը, մյուսը՝ էացումից հետո... արդեն կազմված տիպերը,—Քեական հայերենը, այսինքն գրականը, սկզբից և երկար ժամանակ սրբազան-գրավորը, և Բեականը, «ժողովրդական», ռամկական, համարյա մինչև XIX դարը անգիր—բայց աշխատավոր դասակարգերի, գյուղացիության ու բանվորարհեստավորների, ընդհանուր առմամբ արտադրական կոլեկտիվների լեզուն, նույնպես ազդել են միմյանց՝ վրա և խաչավորվել մեկը մյուսի հետ» (անդ): Քննելով այնուհետև «երկու լեզուների» սիստեմն ու դրա զարգացման աստիճանը՝ նա գտնում է, որ հայերենը, որպես խառնված լեզու, չի ներկայացնում հնդեվրոպական և հաբեթական լեզուների խառնուրդ,—մի բան, որ ինքն է երբեմն ասել,—այլ գտնվում է հաբեթական ստադիայից հնդեվրոպականին

անցման վիճակում, այսինքն՝ հեռացել է հաբեթականից, բայց լիովին չի հասել հնդեվրոպականին: «Այնպիսի առավել ակնառու խառնածինները (ГНДРИДЫ), ինչպես, օրինակ, Հայաստանի լեզուները... ոչ թե հաբեթական լեզուների հետ հնդեվրոպականների անագանագույն խաչավորման մարմնացումն են, այլ անցման վիճակի ներկայացուցիչներն են՝ մաքուր հաբեթական ու կատարյալ հնդեվրոպական լեզուների միջև միջնական վիճակում. դրանք հաբեթական ընտանիքի նախապատմական վիճակից հեռացած և լրիվ հնդեվրոպականության չհասած լեզուներ են (անդ, էջ 18): «Թեքականությունը, որին բոլորովին մոտեցել է վրացերեն լեզուն, ոչ թե պրոմեթեիդյան («հնդեվրոպական») կարգի է, այլ սեմական, մինչդեռ, ընդհակառակն, հայերեն լեզվի թեքականությունը պրոմեթեիդյան («հնդեվրոպական») կարգի է: Իրոք, ոչ միայն հայերենը, այլև վրացերենը, կցական սիստեմից թեքականին անցման լեզուներ են, որոնցից հայերենը հենվում է պրոմեթեիդյան («հնդեվրոպական») սիստեմին, վրացերենը՝ սեմականին» (անդ, էջ 67): Այսպիսով, Մառը ինչպես վերը ժխտում էր լեզուների ծննդաբանական ընտանիքները, այնպես էլ այստեղ ժխտում է հայերենի ծննդաբանական կապը հնդեվրոպական լեզուների հետ և հայտարարում, թե հայերենի և հնդեվրոպական լեզուների միջև եղած կապը նրանց ստադիալ զարգացմամբ է պայմանավորված: Ի վերջո նա պնդում է նաև, որ հայերեն «երկու լեզուները», թեպետ և երկուսն էլ «հաբեթական սիստեմից հեռացած», տարբեր ուղղություններով են զարգացել և, երկուսն էլ անցման վիճակում գտնվելով՝ յուրաքանչյուրը տարբեր տիպի է մոտենում. մինչդեռ գրաբարը հաբեթականից հնդեվրոպականին է անցնում, աշխարհաբարը նույն հաբեթական սիստեմից թեքականին է անցնում. «Հատուկ տեղ պետք է հատկացնել շորս լեզուների. 1) երկու խառնվածո, կամ ավելի ճիշտ, հիմքով՝ հաբեթականությունից հնդեվրոպականության անցման տիպերին, Հայաստանի երկու լեզուներից մեկին՝ Կովկասում և մեկ արևանականին՝ Բալկաններում և 2) հաբեթականությունից թեքականին անցման երկու տիպերի. Հայաստանի զույգ լեզուներից ժողովրդականին՝ Կովկասում և առանձին մնացած շուրս վաշերենին՝ Վոլգայի վրա» (О происхождении языка, անդ, էջ 196, հմմտ. նաև էջ 42): Այսպես են բնութագրվում հայերենի գոյացման, նրա բաղկացուցիչ տարրերի ու նրա ստադիալ զարգացման մասին Մառի վերջին շրջանի հիմնական սկզբունքները: Սակայն անհրաժեշտ է այստեղ ամփոփ վերադառնալ ներկայացնել նաև

նրա հայացքները գրաբարի վերաբերյալ. ամենից առաջ պետք է շեշտել, որ Մառը, ելնելով լեզուների դասակարգայնության իր տեսությունից, այն տեսակետն է առաջ քաշում, որի համաձայն գրաբարը հայ ֆեոդալիզմի լեզուն է, որը յուր դասակարգային էությունամբ հակադրության մեջ է եղել «աշխատավոր դասակարգի, արտադրող կուլեկտիվների» լեզվի հետ: Այս հարցում էլ նրա տեսակետը զգալի էվոլյուցիա է ապրել: Գեռես 1903 թ., գրաբարի քերականության մեջ նա ասում է. «Դիտվում են փաստեր հօգուտ այն բանի, որ նա (գրաբարը) առաջ ծառայում էր որպես քաղաքականապես տիրապետող նահանգում մշակված հաղորդակցության միջոց, որպես հայկական արքունիքի, քուրմերի ու Հայաստանի տեղական իշխանների՝ հեթանոսաբար կրթված նախարարների դասի քաղաքակիրթ, ընտիր լեզուն» (Грамматика, էջ XXVIII—XXIX): Վերն էլ տեսանք, որ հետագայում նա ընդունում է երկու հայերեն լեզուների գոյությունը, որոնցից մեկը՝ գրաբարը (Քեականը) համարում է հայ ֆեոդալիզմի լեզուն, իսկ աշխարհաբարը (Քեականը)՝ աշխատավոր ժողովրդի: Այդ սկզբունքի հետ կապված է նրա մի այլ դրույթը: Հայաստանում եղել են բազմաթիվ լեզուներ, որոնք ժամանակի ընթացքում անհետացել են, թողնելով, սակայն, իբրև ժառանգներ այն բազմաթիվ բարբառները, որոնք այժմ էլ գոյություն ունեն: Այստեղից էլ բխում է այն, որ հինգերորդ դարում և նրանից էլ առաջ եղել են հայերեն բարբառներ: Գրաբարը հնագույն ժամանակներում սերտորեն կապված է եղել որևէ բարբառի հետ, սակայն գրերի գյուտի ժամանակ նա արդեն բավականաչափ հեռացել էր ժողովրդյան խոսակցական լեզվից. «Առաջին շրջանում նա, ամենայն հավանականությամբ, հատկապես սերտ մերձավորության մեջ էր գտնվում ժամանակակից կենդանի բարբառներից մեկի հետ. բայց կասկածելի է, որ նույնիսկ այն ժամանակ հին-հայերեն գրային լեզուն նույն էր հասարակ բարբառի հետ՝ նրա նախնական վիճակում» (անդ, էջ XXXVIII): Ի վերջո, խոսելով գրաբարի պատմական զարգացման մասին, Մառը գտնում է, որ գրաբարը յուր պատմության ընթացքում անցել է երեք վիճակ. «Մի բան անվիճելի է. հին հայերեն լեզուն անցել է զարգացման մի քանի մեծ շրջաններ. հնագույն (մինչ-դասական), դասական, հետ-դասական: Մինչև հայկական քրիստոնեական գրականության առաջացումը նույն լեզուն գտնվում էր, իհարկե, զարգացման հատուկ աստիճանի վրա: Ապահովաբար կարելի է ասել, որ նա արդեն այդ ժամանակ դուրս էր եկել նախնական վիճակից և բարձրացել քաղաքակիրթ

լեզվի աստիճանին, քանի որ դիտելի է նրա կապը հեթանոսական և ապա՝ նորադարձ Հայաստանի կուլտուրական-քաղաքական լեզվի հետ» (անդ, էջ XXXVIII—XXXIX): Այսպես, ահա, Մառը գտնում է, որ գրաբարը գրերի գյուտի ժամանակ, արդեն, իր զարգացման առաջին (մինչ-դասական) շրջանից դուրս նկատ ու դասական շրջանը թևակոխած լեզու էր:

Սրանք են, ահա, այն հիմնական դրույթները, որոնք բնորոշում են Ն. Յա. Մառի տեսությունը հայերենի մասին: Նրա ընդհանուր լեզվաբանական տեսակետներին, լեզվի «նոր ուսմունքի» հիմքը կազմող սկզբունքներին վերը անդրադարձանք արդեն և դրանից ելնելով էլ հեշտ է եզրակացնել, որ հայերենի մասին արտահայտած այս դրույթները ևս հիմնովին սխալ են, ըստ որում դրանք անմիջականորեն բխում են հենց «նոր ուսմունքի» ընդհանուր սխ. մայից (ստադիալ դասակարգում, դասակարգային լեզուներ և այլն, և այլն): Այստեղ, սակայն, անհրաժեշտ ենք համարում կանգ առնել մի հարցի վրա. իր կյանքի վերջին շրջանում հայերենը խաշավորված, խառնածին լեզու համարելով, նա հիմնական շեշտը դնում էր երկու «դասակարգային լեզուների» (Քեական և Քեական) խաշավորման, նրանց ներթափանցումների վրա. այս տեսակետն, իհարկե, գիտական ոչ մի հիմք չունի և արժանի էլ չէ քննության: Բայց մենք ասացինք, որ իր գիտական գործունեության առաջին շրջանում նա դեռևս լեզուների ծագումաբանական ցեղակցությունը ընդունելով, գտնում էր, որ հայերենը իրկցեղ (երկսեռ, երկբնույթ), խաշավորված լեզու է, որ նա իր մեջ ունի հնդեվրոպական և տեղական՝ կովկասյան (իր տերմինով՝ հարեթական) քաղաղրիչները կամ շերտերը: Այս դրույթը մենք նույնպես հիմնովին սխալ ենք համարում, ինչպես մասնավորապես հայերենի վերաբերյալ, այնպես էլ, առհասարակ, ընդհանուր լեզվաբանական տեսակետից: Եվ չնայած դրան, մենք գտնում ենք, որ Ն. Յա. Մառի այդ մոտեցումը պատմականորեն որոշ դրական դեր կատարել է հայերենի ուսումնասիրության գործում: Իր այդ դրույթով նա հակադրվեց հնդեվրոպական լեզվաբանության որոշ սահմանափակությանը և ցույց տվեց հայերենի ու տեղական, ոչ հնդեվրոպական լեզուների առնչությունների ուսումնասիրության անհրաժեշտությունը: Եվ թե՛ այդ խնդիրն առաջ քաշելով նա տեսականորեն սխալ դիրքերի վրա կանգնեց, այնուամենայնիվ, գործնականում մեծապես նպաստեց հայերենի ուսումնասիրության շրջանակների հետագա ընդարձակմանը: Պատահական չէ, այս տեսակետից, որ հնդեվրոպական լեզվաբանու-

թյան մի քանի նշանավոր լեզվաբաններ էլ ստիպված եղան այդ խնդրով հատկապես զբաղվելու: Դրանցից կարելի է հիշել Հուլգեր Պեդերսընին, Հանս Ֆոգտին և առանձնապես Հրաչյա Աճառյանին, որոնք շատ մեծ գործ են կատարել հայերենի և կովկասյան լեզուների, հատկապես վրացերենի, միջև եղած լեզվական առնչությունները վեր հանելու ուղղությամբ¹: Իր մի զեկուցման մեջ («Индоевропейские языки Средиземноморья») Մառն ասում է, թե «Միասնական նախալեզուն իր ծառայությունը մատուցած գիտական պատրանք է» (ИР, I, էջ 185): Մենք ժխտում ենք նրա՝ հայերենի խաչավորված լեզու լինելու տեսակետը, որպես ոչ գիտական, պատմական հիմքից զուրկ վարկած, բայց միևնույն ժամանակ գտնում ենք, որ նրա այդ դրույթն այնուամենայնիվ հայերենի պատմական ուսումնասիրությունը նպաստել է, ուշադրությունն ուղղելով դեպի հայերենի և տեղական լեզուների կապերի բացահայտումը: Եվ այսօր, երբ այդ ուղղությամբ անհրաժեշտ աշխատանք կատարվել է և, կարելի է ասել, մեզ ավանդված լեզվական նյութի քննությունն, այս տեսակետից, հիմնականում ավարտվել է, մենք, Մառի արտահայտությունից օգտվելով, կարող ենք հենց իր իսկ այդ տեսության մասին ասել, որ նա իր ծառայությունը մատուցած գիտական պատրանք է, որից, բարեբախտաբար, հայ լեզվաբանությունն այժմ ազատվել է: Մինչդեռ առանձին լեզվական ընտանիքների նախալեզուների տեսությունը, ինչպես գիտենք, պատմական իրողություն է և ոչ պատրանք: Այդպես և՛ հայերենի ցեղակցությունը՝ հնդեվրոպական լեզուներին:

Վերջապես, գիտական ոչ մի հիմք չունի նաև հայերենի բաժանումը երկու լեզուների՝ Քեականի և Ռեականի, որոնք իբրև թե զուգահեռաբար գոյություն են ունեցել: Նրա կոչած Ռեական հայերենը և Քեականը՝ իրարից անկախ, զուգահեռ լեզուներ չեն, այլ պատմականորեն զոյացած տարբեր վիճակները հայոց լեզվի, ըստ որում Քեական հայերեն կոչվածը, այսինքն հին հայերենը, որ իր ժամանակի համաժողովրդական լեզուն է եղել և որ իր գրական արտահայտությունն է ստացել V դարի սկզբից, այն հիմքն է, որի վրա զարգացել են և՛ միջին հայերենը, և՛ բարբառները, և՛ վերջիններին միջնորդությամբ՝ ժամանակակից հայերենը:

¹ Տե՛ս Հ. Պեդերսըն, Հայերեն, դրացի լեզուները, Վիեննա, 1907, H. Vogt, Arménien et caucasique du Sud, NTS, IX, Oslo, 1938, էջ 377, Հ. Աճառյան, Հայոց լեզվի պատմություն, հ. 1, էջ 202—218, հ. 2, էջ 218—220:

Այս բոլորից հետո մեզ մնում է ամփոփել վերը շարադրվածները և, դրա վրա հենվելով, գնահատել Ն. Յա. Մառի թե՛ գիտական գործունեությունը և թե՛ գիտական ծառանգությունը:

1930 թ., Մոսկվայում տեղի ունեցած՝ Մարքսիստ-պատմաբանների համամիութենական առաջին կոնֆերանսում կարդացած զեկուցման մեջ («К вопросу об историческом процессе в освещении яфетической теории»), Մառն ասում է. «...Մի քանի տարի առաջ ես ասել եմ, որ մեր աշխատանքի վերջը եկել է, որ մենք այլևս շարունակել չենք կարող: Սա տպագրված է: Ես, դիմելով աշակերտներին, ասացի. եթե նրանք այս գործը դեպի սոցիոլոգիական ու մարքսիստական կողմը շարունակեն, ապա՝ վերջ մեր գործին: Կարելի է սպասել, որ մարքսիստները իրենց ձեռքը կվերցնեն այն և ձեզ, ձեր ուսուցչի հետ միասին, դուրս կքշեն (ВЫГОНЯТ ВОН): Սա տպագրված է: Եվ այն ժամանակ մառիզմը կմահանա, և կլինի մարքսիզմը: Ես չեմ ուզում, որ ինքը Մառը մահանա: Բայց մառիզմը թող մեռնի: Ասենք, ես չեմ էլ ենթադրել, թե սա մառիզմ է: Ես երբեք սա մառիզմ չեմ համարել, որովհետև սա որոշ, իհարկե, ինձ համար դժվար է ասել, թե ինչպիսի, հասարակական պայմանների գործն է» (ИР, III, 173): Մարգարեական խոսքեր էին սրանք և հանձարեղ ինքնագնահատում: Մենք վերը շեշտել ենք, որ թե՛ Մառի գործունեությունը և թե՛ նրա ուսմունքը պայմանավորված էին որոշակի պատմահասարակական գործոններով. նա ձգտում էր ստեղծել մարքսիստական ուսմունք, մարքսիզմը արմատավորել լեզվաբանության մեջ. նա ինքն էլ զգում էր, որ իր ուսմունքի հիմքը կազմող ամենազիխավոր հարցերը կարոտ են մարքսիստական լուսաբանման և շատ հաճախ ինքն իսկ պահանջում էր, որ մարքսիստ տեսաբաններն զբաղվեն այդ հարցերով: «Այս հարցերը կարող են լուծվել միայն մարքսիստների կողմից»,—ասում է նա նույն զեկուցման մեջ (անդ, էջ 173), խոսելով նախնադարյան հասարակության մասին: Նա անընդհատ փոփոխում էր իր ձևակերպումները և նույնիսկ շատ էական սկզբունքները՝ աշխատելով մոտեցնել դրանք մարքսիզմին: Բայց այդպես էլ նա չկարողացավ ազատվել գեոհիկ մատերիալիզմից և իդեալիզմից: Նա ինքն էլ կարծես գիտակցել է այդ, պահանջելով իր աշակերտներից, որ աշխատանքը դեպի մարքսիզմի դիրքերը ուղղեն: Բայց նրա աշակերտներն էլ չկարողացան այդ անել, ըստ որում նրանցից շատերը ավելի հեռու էին մարքսիզմից, քան իրենց ուսուցիչը: Ավելին, նրանք ծառանգեցին իրենց ուսուցչից հենց այն, ինչ որ արատավոր էր և

կարող էր դրսևորվել միայն պատմական որոշ, արդեն գոյություն չունեցող պայմաններում (նիհիլիզմը անցյալի ժառանգության նկատմամբ, անհանդուրժողականությունը քննադատության հանդեպ, լեզվական իրողությունները ոչ թե խոր իմացումով՝ իրական վերլուծություններ, այլ հայեցողական սխեմաներ ու ֆանտաստիկ մեկնաբանություններ և այլն, և այլն), և հրաժարվեցին նրա ստեղծագործական ոգուց՝ «նոր ուսմունքն» անվերապահորեն մարքսիստական տեսություն համարելով, պաշտամունք դարձնելով ու դուգմայի վերածելով: Սա հանգեցրեց լեզվաբանության լճացման ու արակշեկյան ռեժիմի ստեղծմանը, հայտնի պայմաններում: Եկավ մարքսիզմը, դեն նետեց «նոր ուսմունքը» և մտորվեց մեռավ: Սա էլ, ահա, նրա լեզվաբանական ուսմունքի գնահատականն էր: Մենք, հետևաբար, նրա լեզվաբանական տեսության բացասումը թե՛ ընդհանուր լեզվաբանության և թե՛, մասնավորապես, հայ լեզվաբանության մեջ, միանգամայն նիշտ ենք համարում: Այսօր նրա տեսության մասին: Իսկ գիտական գործունեությունը, իսկ նրա գիտական հարուստ ժառանգությունը: Չէ՞ որ շատ դեպքեր կարելի է հիշել, երբ այս կամ այն գիտնականը տեսական սխալ դրույթներից է ելել, բայց իր հետազոտություններով ոչ միայն հարստացրել է գիտությունը, այլև զգալիորեն առաջ է մղել այն: Չինք կարող արդյոք այդպես գնահատել նաև Մառի գործունեությունն ու ժառանգությունը: Մեր կարծիքով՝ այդպիսի գնահատումը միանգամայն արդարացի կլիներ: Վերը, խոսելով հայագիտական առանձին աշխատանքների մասին, դրանցից մի քանիսը մենք արդեն շատ բարձր գնահատեցինք: Հասկանալի է, որ այդ աշխատությունները Ն. Յա. Մառի ներդրումներն են և այն էլ ծանրակշիռ ներդրումներ՝ հայագիտության զանազանում: Այդպիսի մեծարժեք ուսումնասիրություններ նա իբրև ավանդ է թողել նաև վրացագիտության և, առհասարակ, կովկասագիտության բնագավառում: Պետք է նկատել, որ այնտեղ, ուր կոնկրետ ուսումնասիրություններ է կատարել առանց իր «նոր ուսմունքի» դրույթները բռնազրոսիկ կերպով կիրառելու, նա հասել է գիտական լուրջ արդյունքների: Այս պատճառով է, որ նրա մինչև 1920 թ. գրած աշխատություններն ավելի արժեքավոր են, քան հետաքայի գործերը, որոնք արդեն գրեթե առանց բացառության հիմնված են «նոր ուսմունքի» վրա: Սրանից հեշտ է եզրակացնել, որ Ն. Յա. Մառի գիտական ամբողջ ժառանգությունը չի կարելի նայնացնել նրա լեզվաբանական ուսմունքի հետևանք այս կամ այն աշխատությունը գնահատելիս, պետք է ելնել

հենց այդ աշխատության արժանիքներից, առանց կանխակալորեն «նոր ուսմունքի» հետ կապելու այն:

Սակայն Ն. Յա. Մառը միայն հետազոտող չէր և միայն աշխատություններով չէ, որ պետք է գնահատել նրա գործունեությունը: Նա մեծ գործիչ էր, կազմակերպիչ: Արտակարգ կերպով նա կարողանում էր գտնել գիտության համար տվյալ շրջանում առավել կարևոր խնդիրները, առաջ քաշել դրանք և գիտնականների ջանքերն ուղղել դրանց լուծմանը: Նա կարողանում էր նորանոր բնագավառներ ստեղծել գիտության մեջ, և կադրեր ստեղծել այդ բնագավառում աշխատելու համար: Դրանցից կարելի էր հիշել, օրինակ, հայագիտության համար խիստ կարևոր՝ հայ-վրացական բանասիրության հիմնադրումը նրա կողմից: Նա էր, որ ամբողջ խրությունամբ կարողացավ ըմբռնել հայ-վրացական բանասիրության կարևորությունը՝ երկու ժողովուրդների պատմության, կուլտուրայի, լեզվի ուսումնասիրության համար, նա էր, որ իր շուրջը համախմբեց բազմաթիվ մասնագետների և մեծ աշխատանք ծավալեց այդ ուղղությամբ: Ցավոք սրտի, նրա մահվանից հետո, և առանձնապես 1950 թ. հետո, այդ բնագավառում աշխատանքները խիստ սեղմ շրջանակների մեջ են դրված: Մեր եղբայրական Վրաստանում դեռ զգալի գործ է կատարվում հայ-վրացական բանասիրության բնագավառում, և կան այդ գործին նվիրված ու մեծամեծ վաստակներ ունեցող լավ մասնագետներ (Ա. Գ. Շանիձե, Լ. Մ. Մելիքսեթ-Բեկ, Ի. Վ. Աբուլաձե և այլք): Մեզ մոտ, սակայն, այդպես չէ. մինչև 1950 թ. մի երկու խղճուկ գիտաշխատողներ զբաղվում էին հայ-վրացական լեզվական առնչությունների խնդրով և անհաջող կերպով կրկնում էին Մառի առանց այն էլ ձախողված տեսակետները: Իսկ 1950 թ. հետո դրանք էլ հեռացան այդ ասպարեզից: Այժմ կան, իհարկե, առանձին գիտնականներ, որոնք երբեմն-երբեմն, առիթից-առիթ զբաղվում են հայ-վրաց գրական կապերի, պատմական ընդհանուր հարցերի լուսաբանությամբ, բայց դա շատ քիչ է: Հայ-վրացական բանասիրությունը, որի հիմնադիրն է Մառը, պետք է դառնա թե՛ հայագիտության և թե՛ վրացագիտության ամենակենսունակ նյութերից մեկը, իր մեջ առնելով պատմությունը, լեզվաբանությունը, ազգագրությունը և այլն:

Հայագիտության բնագավառում առաջ քաշած նրա խնդիրները խիստ բազմազան են և անհնարին է դրանց թեկուզ և մի փոքրիկ մասը թվարկել այստեղ: Բայց մենք կողմնինք հիշել հատկապես նրա առաջադրած կարևոր խնդիրներից երկուսը: Դեռևս անցյալ

դարի վերջում, 1899 թ. մայիսի 25-ին,՝ իր մագիստրական դիսերտացիայի («Сборники притч Вардана») պաշտպանության ժամանակ արտասանած ներածական ճառում («К вопросу о задачах арменоведения») ն. Յա. Մառը կշտամբում է հայագետներին այն բանի համար, որ նրանք միակողմանի կերպով են ուսումնասիրում հայկական կուլտուրան, այն չափով, որ չափով դա կապվում է հընդ-եվրոպական լեզվաբանության հետ, կամ, որոշ չափով էլ, հայկական աղբյուրներով նոր նյութ է մատակարարում պատմաբաններին: Հայագիտությունը հնդեվրոպաբանությունից կախյալ գիտություն է: Դատապարտելով այսպիսի սահմանափակ մոտեցումը, նա ասում է. «Հայագիտությունը չի կարող հիմնվել միայն բանասիրության վրա, այս բառի նեղ իմաստով: Հնագիտությունն իր օժանդակ ճյուղերով և ազգագրությունը՝ ժողովրդական բանահյուսության հետ բուրրովին էլ պակաս չպետք է հետաքրքրեն հայագետին, քան լեզվաբանությունն ու գրականությունը: ...Պատմական երկե-ի, ինչպես և հայ մատենագրության մյուս յուրահատուկ տեսակների ուսումնասիրությունը պետք է դրված լինի նրանց փոխադարձ գրական հարաբերությունների հողի վրա և ենթարկված հայագիտական հայեցակետին» (ԻՐ, I, էջ 18, 19): Նույն տեղում էլ նա շատ որոշակի կերպով առաջ է քաշում հայ միջնադարյան աշխարհիկ գրականության ուսումնասիրության կարևորությունը թե՛ հայագիտության և թե՛ առհասարակ արևելագիտության համար. «Նոր ընթերցողների ավելի ընդարձակ շրջանակը իր հատուկ պահանջ՝ քնն էր ներկայացնում գրականությանը, և երևան եկան այդ պահանջները բավարարող նոր հուշարձաններ կամ հին հուշարձանների նոր խմբագրություններ: Հայերի մտավոր կյանքի այս և նման երևույթները հին հայ մատենագրության հարուցած հարցերից անկախ արժեքավորում են տալիս նրան: Միջնադարյան հայ գրականությունը ինքնուրույն հետաքրքրության առարկա է» (ԻՐ, I, էջ 22. Ընդգծումը մերն է—է. Ա.): Հենց այդպիսի մոտեցումն էր մղել նրան ուսումնասիրելու հայ միջնադարյան գրականության կարևորագույն հուշարձաններից մեկը՝ Վարդանի առակները: Այժմ, երբ Մառի այդ երկու ցանկություններն էլ իրագործված են, այդպիսի հարցադրումը, թվում է թե, առանձին մի բան չէ: Բայց նա, առաջիններից մեկը լինելով, այդ խնդիրներն ամենայն սրությամբ առաջ է քաշել 63 տարի առաջ և ինքն էլ այդ բնագավառի առաջին անխոնջ մշակներից մեկը եղել:

Լեզվաբանության բնագավառում ն. Յա. Մառի առաջ քաշած

ամենակարևոր պրոբլեմներից կարելի էր հիշել առաջին հերթին լեզվի ու մտածողության կապի պրոբլեմը: Ինչպես ինքն էլ շատ հաճախ շեշտել է, «Նոր ուսմունքի» ամենակարևոր խնդիրներից մեկը լեզվի ու մտածողության, խնդիրն է: Եվ իսկապես, գործնականում էլ այդպես էր. նրա նախաձեռնությամբ էր, որ լույս տեսան «Язык и мышление» ժողովածուի վեց հատորները, նրա նախաձեռնությամբ էր, որ կազմակերպվեց լեզվի և մտածողության ինստիտուտը և այլն, և այլն: Ճիշտ է, այս պրոբլեմի մշակումը նրա մոտ սխալ ուղղությամբ ընթացավ, բայց դա չի նշանակում, թե հարցադրումը ինքնին սխալ էր: Ցավալի է, ուրեմն, որ վերջին տարիներում այդ խնդրով սովետական լեզվաբաններն ու փիլիսոփաները շատ քիչ են զբաղվում: Մինչդեռ հենց վերջին երկու տասնամյակներում, հատկապես Սեպիրի-Ուտրֆի-Կորժիբսկու հիպոթեզի (լեզվաբանական հարաբերականության տեսության) կապակցությամբ այդ պրոբլեմը առանձնակի կարևորություն է ներկայացնում: Լեզվի ու մտածողության հարցը սովետական տեսական լեզվաբանության կարևորագույն պրոբլեմներից մեկն է:

Նույնպիսի կարևորություն է ներկայացնում նաև «լեզու և հասարակություն» պրոբլեմը: ն. Յա. Մառը միանգամայն ճիշտ կերպով էր շեշտում այդ խնդրի հսկայական նշանակությունը թե՛ լեզվաբանության և թե՛ պատմության ու փիլիսոփայության համար: Բայց նա և իր հետևորդները դրան մոտենում էին գոհճիկ մատերիալիզմի դիրքերից: Ժխտելով Մառի ու նրա հետևորդների սխալ տեսակետները այդ բնագավառում, չի կարելի ժխտել նաև պրոբլեմի կարևորությունը: Սովետական լեզվաբանության կարևորագույն խնդիրներից մեկն էլ պետք է լինի «լեզու և հասարակություն» պրոբլեմը:

Դժվար է թվարկել Մառի առաջ քաշած բոլոր, իսկապես որ խիստ կարևոր պրոբլեմները: Նա արտակարգ ունակություն ուներ կռահելու այդ կարևոր խնդիրները և գիտական միտքը դեպի այդ խնդիրներն ուղղելու: Եվ սա նրա գիտական գործունեության ամենադրական մոմենտներից մեկն է:

«Մարդը, ծնված կոլեկտիվ աշխատանքով, անհատապես, մարմնական մահով մեռնելով, իր վարքով՝ կոլեկտիվի կազմին, և ստեղծագործությամբ կենդանի շրջապատին՝ հասարակայնությանն է ներհյուսվում ու չի մեռնում հասարակայնորեն: Նա շարունակում է ապրել նրանց մեջ, ովքեր կենդանի են մնում, եթե նա ապրել է իր կենդանության ժամանակ և ո՛չ թե մեռած է եղել»: Այսպես է գրեց

Նիկողայոս Մառը յուր «Անի» աշխատության առաջաբանում: Այդ խոսքերը լիովին վերաբերում են և իրեն. նա մեկն է այն մարդկանցից, որոնք, «ծնված կոլեկտիվ աշխատանքով», լիարժեք կյանքով են ապրել հասարակության մեջ, ապրել են հասարակության համար ու նրա հետ, և մեռնելով անհատապես, վերապրում են իրենց թողած մեծ ժառանգությամբ:

Եվ այսպես, մառիզմը մեռավ, բայց ն. Յա. Մառի գիտական ժառանգությունը ապրում է, նրա առաջադրած պրոբլեմները զբաղեցնում են և դեռ շատ պիտի զբաղեցնեն գիտության մշակներին:

Ռուսահայ իրականության մեջ մեծագույն

Մ. Գուկ
Խոսչանուրի
Աբեղյան

հայագետներից է Մանուկ Աբեղյանը. յուր բազմակողմանի զարգացմամբ, յուր խորաթափանց, քննադատող մտքով, տրամաբանական դատողությունների հզոր ուժով ու գիտնականին հատուկ աշխատասիրությամբ նա բացառիկ դեմքերից մեկն է արևելահայ բանասեր-գիտնականների մեջ: Իր ուսումնասիրությունների նյութի դարձնելով հայ հին ու միջին մատենագրությունը, հայ ժողովրդական բանահյուսությունը, հայոց լեզուն, առանձնապես ժամանակակից գրական/լեզուն, նա տվել է այնպիսի աշխատություններ, որոնք հայագիտության մեջ ունեն և միշտ էլ կունենան իրենց պատվավոր տեղը:

Մանուկ Աբեղյանը ծնվել է 1865 թ., Հին Նախիջևանի Աստապատ գյուղում: Դպրոցական կրթությունն ստացել է Գևորգյան ճեմարանում, որը ավարտել է 1885 թ.: Այնուհետև գնացել է Եվրոպա և սովորել մի քանի համալսարաններում: 1898 թ. ավարտել է Ենայի համալսարանը և ստացել փիլիսոփայության դոկտորի աստիճան: Համալսարանական բազմակողմանի կրթություն ստացած, հարուստ ու խոր գիտելիքներով նա եկել է Հայաստան և այդ ժամանակից ի վեր յուր ամբողջ կյանքը նվիրել է գիտությանն ու մանկավարժական աշխատանքին: Իբրև հայոց լեզվի և գրականության ուսուցիչ, ապա՝ դասախոս, պաշտոնավարել է էջմիածնի ճեմարանում, Շուշիի թեմական դպրոցում, Թիֆլիսի Ներսիսյան և Հովհանյան դպրոցներում, Կովկասյան համալսարանում, հետագայում՝ սովետական կարգերի հաստատումից հետո, Երևանի Պետական համալսարանում, — որի հիմնադիրներից մեկն է եղել ինքը, — և ուրիշ բուհերում: Հայաստանի կառավարությունը ըստ արժանվույն գնահատելով մեծ հայագետի բեղմնավոր գիտական գործունեությունը, շնորհել է նրան գիտության վաստակավոր գործչի կոչում, բանասիրական գիտությունների դոկտորի աստիճան (honoris causa) և

պրոֆեսորի կոչում: 1943 թ., ՀՍՍՄ Գիտությունների ակադեմիայի հիմնադրման օրից, ընտրված է ակադեմիայի հիմնադիր կազմի իսկական անդամ: Գիտնականի փառավոր պատվի արժանացած, իր հարուստ և մեծարժեք գրական ժառանգությունը սերունդներին թողնելով՝ վախճանվել է Աբեղյանը 1944 թ. սեպտեմբերի 25-ին:

Մանուկ Աբեղյանը բեղմնավոր գիտական կյանք է ունեցել. բազմաթիվ են նրա մեծարժեք աշխատությունները, որոնց զգալի մասը, սակայն, ոչ թե լեզվաբանական, այլ բանասիրական ու գրականագիտական ուսումնասիրություններ են, ինչպես՝

1. Հայ ժողովրդական առասպելներ՝ Մ. Խոբեմացու Հայոց պատմության մեջ (Վաղ-պատ, 1899);
2. Համառոտություն հայ ժողովրդական վեպի (Երևան, 1923);
3. Հայոց լեզվի տաղաչափություն (Երևան, 1933);
4. «Վթշապներ» կոչված կոթողներն իբրև Աստղիկ—Գերկետա դիցունու արձաններ (Երևան, 1941):

5. Հայոց հին գրականության պատմություն (Երևան, գիրք առաջին, 1944, գիրք երկրորդ, 1946) և այլն: Վերջինս, որ լույս տեսավ հեղինակի մահվանից հետո (առաջին գիրքը՝ 1944 թ. նոյեմբերին, հեղինակի մահվանից ընդամենը երկու ամիս հետո), ընդգրկում է հայ հին գրականության պատմությունն սկզբից մինչև նոր շրջանը: Ըստ ամենայնի այս աշխատությունը հեղինակի մինչև այդ կատարած ուսումնասիրությունների ամփոփումը, հանրագումարն է, ինչպես հայտնում է ինքը («Առաջաբանում») և, իբրև այդպիսին՝ յուր զուխգործոցը. այդ գործի գերազանց արժեքն անուրանալի է:

Հայոց լեզվի վերաբերյալ նույնպես շատ հողվածներ և աշխատություններ ունի նա, որոնք, ըստ մեծի մասին, աշխարհաբարի քերականության, ուղղագրության և այդպիսի գործնական ուսուցողական խնդիրների են վերաբերում: Այսպես, նա հեղինակն է «Աշխարհաբարի քերականութիւն» (Թիֆլիս, 1907, ք. տպ. 1910), «Աշխարհաբարի շարահիւսութիւն» (Վաղ-պատ, 1912), «Գրաբարի կամառօտ քերականութիւն» (Վաղ-պատ, 1907—8, ք. տպ. 1936) դասագրքերի: Տեսական բնույթ ունեցող գործերից կարևորներն են.

1. «Աշխարհաբարի հոլովները» (Վաղ-պատ, 1908), որի մեջ քննության է առնում աշխարհաբար հայերենի հոլովները և պաշտպանում հենց իր առաջ քաշած այն դրույթը, թե արդի հայերենն ունի հինգ հոլով:
2. «Հայցական հոլովը մեր աշխարհաբարում» (Վաղ-պատ, 1909). նախորդի մասին Ստ. Մալխասյանցի գրած քննադատության

(«Նոր դարոց», 1908) պատասխանն է, որի մեջ հեղինակը դարձյալ այն տեսակետն է պաշտպանում, թե աշխարհաբարում հայցական հոլով չկա:

Թե՛ այս երկու և թե՛ ուրիշ փոքրիկ հետազոտություններն ամփոփված են յուր արժեքավոր, հմուտ ուսումնասիրության մեջ, որ է «Հայոց լեզվի տեսություն» (Երևան, 1931): Սա է Աբեղյանի գլխավոր ուսումնասիրությունը հայոց լեզվի վերաբերյալ, որի մեջ նա ամբողջական կերպով տվել է յուր տեսակետները հայոց լեզվի մասին, հատկապես քերականագիտական հարցերի նկատմամբ՝ մանրազնին քննության ենթարկելով ժամանակակից հայերենի հնչյունաբանությունը, իմաստաբանությունը, բառակազմությունն ու ձևաբանությունը. այստեղ էլ ամփոփել է նա յուր տեսակետները ընդհանուր լեզվաբանական-տեսական հարցերի մասին, ուստի և թե՛ նրա լեզվաբանական ուղղությանը և թե՛ հայերենի մասին ունեցած հայացքներին ամբողջապես կարող ենք ծանոթանալ այս աշխատության վերլուծությանը:

Գիրքը բաղկացած է վեց մասից (ներածություն, հնչյունաբանություն, իմաստաբանություն, բառակազմություն, ձևաբանություն). վեցերորդ մասը, որ միայն հինգ էջ է գրավում (362—366), շարահյուսությունն է. այդ մասի համար հեղինակը հանձնարարում է յուր «Աշխարհաբարի շարահյուսություն»-ը: Ամբողջ գրքից մեր ուսումնասիրության անմիջական նյութն է կազմում ներածությունը, որի մեջ հեղինակն արտահայտել է յուր լեզվաբանական-տեսական սկզբունքները. այդ սկզբունքների համառոտ ամփոփումը հետևյալն է:

Հայտնի է, որ Մանուկ Աբեղյանն իր լեզվաբանական ուղղությանը հետևել է երիտերակամների դպրոցին, որ անցյալ դարի երկրորդ կեսում տիրապետող ուղղությունն էր լեզվաբանության բնագավառում, և որ մեծ դեր է կատարել պատմական լեզվաբանության զարգացման մեջ: Առաջին և կարևորագույն հարցը, որի լուծմամբ նա կապվում է այդ դպրոցի հետ, լեզվի բնորոշումն է: Ինչպես երիտերակամները, այնպես էլ Աբեղյանը ելնում է այն հիմնական սկզբունքից, որ իրականում գոյություն ունեն միայն անհատների լեզուներ: Հիմնվելով այն փաստի վրա, որ տվյալ լեզվով խոսող հանրության անդամները երբեք էլ ճիշտ ու ճիշտ իրար նման չեն խոսում, որ «նույնիսկ միևնույն լեզվական շրջանին պատկանող անհատները միմյանց բոլորովին նման չեն խոսում, այլ յուրաքանչյուրն ունի իր ուրույն անհատական լեզուն» (էջ 40), նա եզ-

բակացնում է, թե «ինչպես առանձին բառերի նյութական նշանակությունները տարբեր են զանազան անհատների համար, նույնպես տարբեր են նաև բառերի ձևական նշանակությունները, հաճախ և բառերի կապակցության ձևերի նշանակությունները» (էջ 43): Հաղորդակցման պրոցեսում դրսևորվող անհատական տարբերությունների վրա էլ, ահա, հիմնվելով՝ նա եզրակացնում է. «Քանի որ ամեն առանձին անհատ խոսելիս գործածում է այն լեզվական պատկերացումները, որոնք որևէ կերպով ավելի սերտ են զուգորդված իր մտքի մեջ, դրանից առաջանում է այն, որ մեկ անհատ ավելի այս ու այն բառերն ու կապակցության ձևերն է գործածում խոսելիս ու գրելիս, իսկ մի ուրիշ անհատ՝ ուրիշները: Հետևաբար և անհատների լեզուները, լեզվական զուգորդությունների սերտ կամ թույլ լինելու պատճառով ևս տարբերվում են միմյանցից, երբեմն նույնիսկ խիստ կերպով, այնպես որ կարելի է ասել, որ կան միայն անհատական լեզուներ» (էջ 41): Ելնելով այս հիմնական սկզբունքից, Աբեղյանը դիտում է լեզուն լոկ անհատական գործադրության մեջ և քննում այն իբրև անհատի մեջ կատարվող հոգեբանական երևույթների արդյունք: Մարդկային լեզուն, նրա ըմբռնումով, անհատի մեջ կատարվող հոգեկան գործողությունների արդյունքն է. արտաքին աշխարհից մարդն իր զգայարանների միջոցով ստանում է այս կամ այն տպավորությունը, որ նյարդային համակարգության միջոցով հաղորդվում է ուղեղին. «Այս բնախոսական երևույթին—գրգիռներին իբրև հետևանք մեր մեջ տեղի է ունենում ամենապարզ հոգեկան երևույթը կամ գործողությունը, այն է՝ զգայելը, այսինքն ունենում ենք զանազան զգայություններ» (էջ 14): Այդ զգայությունների արդյունքն այն է լինում որ «մենք իմանում կամ ճանաչում ենք արտաքին առարկան կամ նրա գոյությունը» (էջ 14): Այսպիսի «ճանաչման» հետևանքով մարդու գիտակցության մեջ մնում է առարկայից ստացած «զգայությունը կամ ըմբռնումը», որ կարող է վերարտադրվել նաև այն ժամանակ, երբ չկա զգայության աղբյուրը հանդիսացող առարկան. «Զգայության կամ ըմբռնումի այսպիսի նորոգումը մեր մեջ՝ կոչվում է մտապատկեր կամ պատկերացում» (էջ 15): Այսպիսի պատկերացումների վրա է հիմնված, ըստ Մանուկ Աբեղյանի, մարդկային մտածողությունը. մարդն իր ունեցած պատկերացումները զուգորդելով միմյանց հետ՝ առաջ է բերում «հոգեբանական դատողությունը», որ բաղկացած է լինում «հոգեբանական (դատողության) ենթակայից» և «հոգեբանական ստորոգյալից». այս հոգեբանական դատողության

արտահայտումը բառերի միջոցով՝ խոսքն է. «Մենք մտածում ենք, երբ իրար հետ զուգորդվող պատկերացումների շարքից անշատելիով երկու պատկերացում՝ միացնում ենք միմյանց հետ, միաժամանակ և գիտակցում ենք նրանց մեջ եղած հարաբերությունը: Պատկերացումների այսպիսի միացումը հոգեբանության մեջ կոչվում է հոգեբանական դատողություն» (էջ 23): «Նուսբը կամ նախադասությունն, ուրեմն, հոգեբանական դատողության (մտածության) արտահայտությունն է բառերով» (էջ 25): Եթե խոսքը կամ նախադասությունը անհատի մեջ կատարվող պատկերացումների զուգորդությունների կամ հոգեբանական դատողության արտահայտությունն է բառերով, ապա՝ լեզուն այդ առանձին հոգեբանական դատողությունների ամբողջությունն է. «Այսպիսով, ուրեմն, լեզուն դառնում է ամբողջապես բազմաթիվ և զանազան պատկերացումների զուգորդությունների մի ցանց» (էջ 37): Այսպես ուրեմն, Աբեդյանն ընդունում է լեզուն իբրև հոգեբանական երևույթի, բնական է արդեն, լեզվական երևույթներն էլ ուսումնասիրում ու բացատրում է անհատական հոգեբանության երևույթներով: Եվ չնայած դրան, նա լիովին ընդունում է, որ լեզուն պատմական երևույթ է, որ լեզուն, չնայած յուր անհատական բնույթին, սերտ կերպով կապված է նույն լեզվով խոսող հանրության հետ, և սրանով էլ, բնականաբար, հակասում է իրեն: Մի կողմից՝ գտնելով, որ լեզուն անհատական երևույթ է, անհատի սեփականությունը և արդյունք անհատի հոգեկան գործունեության, մյուս կողմից՝ նա ճիշտ կերպով գտնում է, որ լեզուն յուր զարգացմամբ, յուր անընդհատ փոփոխություններով ուղեկցում է ցեղի (ազգի) պատմությանը՝ «Մի լեզվի պատմությունը սերտ կապված է նույն լեզվով խոսող ազգի պատմության հետ» յուրաքանչյուր հնչյուն ազգի պատմությամբ բացատրվում է շատ բան լեզվի մեջ, այնպես և ինքը լեզվաբանությունը բացատրում է շատ պատմական իրողություններ...: Լեզվաբանության օգնությամբ լուծվում են և ուրիշ շատ պատմական հարցեր, առանձնապես նախապատմական շրջանների վերաբերյալ, որոնցից չեն մնացել ոչ մի ուրիշ հիշատակներ, բացի լեզվից» (էջ 68): Լեզվի այդ պատմական ընթացքը, լեզվի զարգացումը, նրա կրած փոփոխությունները հեղինակը դիտում է, ինչպես և բոլոր երիտօրեականները, որպես լեզվաբանական անընդհատականություն. լեզուն ինքն իրեն պատմական երկար ժամանակների ընթացքում ներքին զարգացմամբ կրում է այս կամ այն փոփոխությունները: Այդ զարգացումը, որ կատարվում է դանդաղ ու աստիճանաբար, ունի յուր

ներքին օրենքները, որոնք խոսողների կամքից ու գիտակցությունից անկախ են. «Ամեն լեզվի մեջ լեզվական բոլոր իրակությունները (ֆակտերը), այսինքն հնչյունները, բառերի նշանակությունները և բառերի կապակցության, բառակազմության ու բառափոխության ձևերը, որոշ օրենքներով միշտ և անընդհատ փոփոխվում են խոսողների բերանին խոսողների կամքից բոլորովին անկախ (էջ 12): «Լեզվաբանության կարևոր սկզբունքներից մեկն այն է, որ ամեն լեզու միշտ և անընդհատ փոփոխվում է: Այս փոփոխության մեջ է լեզվի կյանքը կամ պատմությունը» (էջ 66): Լեզվի այս էվոլյուցիոն զարգացման մեջ հեղինակը տեսնում է երեք գործոնի առկայությունը. առաջինը՝ և հեղինակի տեսակետով ամենագլխավորը՝ համաբանությունն է: Մարդիկ իրենց ունեցած լեզվական ձևերի նմանությամբ կազմում են նորանոր ձևեր. եթե խոսելիս մենք վերարտադրում ենք ուրիշներից շարունակ լսած ու մեր գիտակցության մեջ պահած ձևերը, ապա երբեմն էլ առանց ուրիշից լսած լինելու մեր գիտակցության մեջ եղած ձևերի նմանությամբ կազմում ենք այնպիսի բառեր, քերականական ձևեր ու կապակցություններ, որ երբեք չինք լսել ուրիշից և, առհասարակ, լեզվի մեջ գոյություն էլ չեն ունեցել: Որպես առանձին ձևեր նրանք չեն եղել լեզվում, բայց իբրև ընդօրինակումներ կամ պատճենումներ, նրանք գալիս են լեզվի տվյալ համակարգից: Այսպիսով, իբրև նորակազմություններ կամ նորաձևություններ նրանք իսկապես նորամուծություններ են լեզվի մեջ, մինչդեռ այդ նորամուծությունները առաջ բերող համակարգը, դրանց առաջացումը պայմանավորող կաղապարը նոր չէ: Այս նոր ձևերն էլ, ահա, քիչ-քիչ ընդհանրանալով և իրենց հերթին հետագա համաբանական (անալոգիական) կազմությունների օրինակ դառնալով, լեզվի մեջ առաջ են բերում անզգալի, դանդաղընթաց փոփոխությունը, որ երկար ժամանակից հետո միայն ներկայանում է որպես արդեն կատարված փաստ. «Անալոգիական կազմությունը խոսվածքի գործունեության համար ամենամեծ գործոններից մեկն է» (էջ 38): «Մարդս... վերարտադրում է իր սովորած լեզվական իրակությունները, և ապա անալոգիական կազմությամբ արտադրում է այնպիսի ձևեր, որ ինքը չի սովորել, բայց լեզվի մեջ կան: Սակայն խոսելիս երբեմն էլ նա ճշտությամբ չի վերարտադրում իր սովորածը և անալոգիալով ստեղծում է նաև այնպիսի բառեր, բառերի այնպիսի նոր նշանակություններ ու բառաձևեր կամ կապակցության ձևեր, որոնք ոչ միայն դրսից չեն մտել իր գիտակցության մեջ, այլև երբեք գոյություն չեն ունե-

ցել լեզվի մեջ» (էջ 44): «Այսպիսի նոր կազմութիւններով սկիզբն է գրվում լեզվի փոփոխութեանը» (էջ 46): Այս անալոգիական կազմութիւնների հեղինակն, իհարկե, անհատներն են, հետևաբար և զարգացման ընթացքում լեզվի կրած փոփոխութիւնների հեղինակն էլ անհատն է. անհատներն են, որոնք իրենց կամքից անկախ, առանց նույնիսկ գիտակցելու, առաջ են բերում լեզվի մեջ նորանոր ձևեր և այդպիսով փոփոխութիւնների ենթարկում լեզուն: Այստեղից էլ հեղինակը հետևցնում է, որ լեզվի զարգացման երկրորդ գործոնն է անհատական լեզվի փոփոխութիւնը: Անհատների լեզուն միշտ էլ փոփոխվում է, և քանի որ ամեն մի անհատի մեջ այդ փոփոխութիւնը յուրահատուկ ընթացք է ունենում, քանի որ յուրաքանչյուր անհատ տարբեր ձևով է փոխում լեզուն, ուստի և լեզվի մեջ շարունակ գոյութիւն են ունենում տարբերութիւններ. «...Շարունակ փոփոխվում է ամեն անհատի լեզու, և այս փոփոխութիւնն առանձին անհատների համար տարբեր ուղղութիւններով է լինում, որով և նորանոր տարբերութիւններ են երևան գալիս անհատական լեզուների մեջ» (էջ 44): Սակայն անհատները փոխադարձաբար ազդում են միմյանց վրա, ուստի և այդ փոփոխութիւններն էլ անհատից ծագելով ու հենց այդ անհատի ազդեցությամբ տարածվում են և՛ աստիճանաբար ընդունելութիւն գտնելով նաև ուրիշների մոտ՝ ընդհանրութիւն են ստանում. «Նոր կազմութեան ձևը մի անհատից սկսվելով՝ սկզբում ընդունվում է, հարկավ, մի շատ նեղ շրջանում. բայց հետզհետե շատերը լսելով այդ՝ յուրացնում են» (էջ՝ 48): «...Որովհետև անհատն ազդում է իր շրջապատողների լեզվական զուգորդութիւնների վրա, նրանք էլ երբ հասկանում են մեկ ուրիշի պատահական նշանակութեամբ գործածութիւնը, ընդունում են այդ, մանավանդ եթե իրենք էլ նույն վիճակի մեջ են գտնվում, այսինքն կարիք են զգում իրենց պատկերացումն արտահայտելու և ուրիշ հարմար բառ չեն գտնում, քան իրենց լսածը» (էջ 49): Թե՛ նոր բառաձևերի, թե՛ բառերի նոր իմաստների և թե՛ առհասարակ բոլոր լեզվական նորութիւնների ընդհանրացման համար Մ. Աբեղյանը նշում է երկու նախապայման. առաջինն այն է, որ անհատի առաջ բերած փոփոխութիւնն այնքան շուտ և հեշտութեամբ կարող է ընդհանրանալ, որքանով որ նա նպատակահարմար է լինում խոսողների համար. «Լեզվի... սովորական կիրառութեան, սովորական կենդանի խոսվածքի ժամանակ, ահա, ծագում են լեզվական նոր ձևերը, և ինչպես օրգանական բնութեան զարգացման, նույնպես և լեզվի զարգացման մեջ ծագած նոր լեզվա-

կան իրակութիւնների պելլի կամ պակաս նպատակահարմարութեամբ որոշվում է նրանց պահպանութիւնը լեզվի մեջ կամ կորուստը» (էջ 12): Եթե նոր ձևը նպատակահարմարութեան հիմամբ մնում և ընդհանրանում է, ապա մի առ ժամանակ նա գոյակից է լինում հին ձևին, երկուսի միջև մրցում է ստեղծվում, և այդ մրցմանը վերջ է տալիս նոր սերունդը, որ երկուսն էլ նոր սովորած լինելով, առանց գիտենալու, թե նրանցից ո՛րն է հինը, և որը՝ նոր, ընտրում է այն, որ իր լեզվի զարգացման ընթացքին համապատասխան է. «Նոր սերունդը, որի համար հին ու նոր չկա,— քանի որ նա ամեն ինչ նոր է սովորում,— միակերպ ընդունում է թե հինը և թե նորը և երկուսն էլ անխտիր գործածում: Երբ նոր սերունդից բազմաթիվ անհատների մեջ լեզվի զարգացումն այն ուղղությամբ է ընթանում, որ պելլի նոր ձևն են գործածում, այն ժամանակ հին ձևը հետզհետե մնում է միայն հին սերնդի մեջ, որի հետ և վերջապես մեռնում է՝ բոլորովին մոռացության տրվելով» (էջ 48): Երկրորդ անհատի, ազդեցության աստիճանն ու մասշտաբն է: Տարբեր անհատներ հասարակութեան մեջ տարբեր շափով են ազդեցութիւն ունենում. մեկն ավելի ազդեցիկ է, մյուսը՝ պակաս, մեկի ազդեցութեան շրջանն ավելի ընդարձակ է, մյուսինը՝ սահմանափակ, և այդ ազդեցութեան աստիճանն ու ընդարձակութիւնն էլ, ահա, շափանիշ են նաև նրա լեզվական ազդեցութեան համար. «Որքան ավելի մեծ է անհատի լեզվական ազդեցութեան շրջանը, այնքան ավելի արագ են ընդհանրանում նրա գործածած պատահական նշանակութիւնների շնորհիվ է, ահա՛, որ լեզուն անընդհատ փոփոխութիւնների է ենթարկվում. «Նոր կազմութիւնը, որ սկսվելով մի անհատից՝ սկզբում անսովոր և նույնիսկ սխալ է համարվում, դառնում է կիրառութեան սովորական և «ուղիղ» ձև, որով և լեզուն փոխվում է: Բազմաթիվ այսպիսի փոփոխութիւնների հետևանքը լինում է արդեն ընդհանուր փոփոխութիւնը, որը, սակայն, տեղի է ունենում դարերի ընթացքում շատ դանդաղ և անզգալի» (էջ 48):

Լեզվի փոփոխութեան երրորդ գործոնը նա համարում է լեզուների փոխազդեցութիւնը. այս փոխազդեցութիւնների հեղինակներն էլ, ըստ Աբեղյանի, անհատներն են, բայց այն անհատները, որոնք իրենց լեզվի հետ գիտեն նաև ազդեցութիւն գործող լեզուն: Այդ անհատները կարող են օտար լեզվից բառեր կամ «կապակցական ձևեր» գործածել և, այդպիսով, մտցնել իրենց լեզվի մեջ կա-

անհրաժեշտութիւնն իր զգումը, երբ այդ բանը կամ «կապակցական ձևը» չեն գտնում իրենց լեզվում, կամ գիտակցաբար՝ երբ գերադասելով օտար լեզուն, բնիկ բաների ու «կապակցական ձևերի» փոխարեն գործածում են օտարը: «Լեզվի փոփոխութեան մեծ գործոններից մեկն է նաև ուրիշ լեզուների ազդեցութիւնը,—ասում է նա,—որին ենթակա է ամեն լեզու, քանի որ ազգերը միմյանցից կտրված չեն ապրում: Այս փոփոխութիւնը միևնույն եղանակով է առաջ գալիս, ինչ որ ընդհանրապես ամեն փոփոխութիւն լեզվի մեջ: Դրա սկզբնական աղբյուրն այնպիսի անհատներն են, որոնք խոսում են թե իրենց ազգային լեզվով և թե մի ուրիշ լեզվով, կամ թե հասկանում են մի ուրիշ լեզու և լսում են այլ լեզվով խոսողներին: Ուրիշ լեզուների ազդեցութիւնը երբեմն լինում է գիտակցաբար: Խոսողը բարձր գնահատելով օտար լեզուն, կամ կրթված մի հատկանիշ համարելով ուրիշ լեզվով խոսելը՝ իր համար պարծանք է կարծում այլ լեզվով խոսելը կամ իր ազգային լեզվի մեջ օտար բաներ, դարձվածներ և նույնիսկ ամբողջ ասացվածներ խառնելը» (էջ 51):

Լեզվի զարգացման այս բացատրութիւնը տալով՝ Արեղյանը անցնում է այնուհետև բարբառների առաջացմանը: Առաջինք արդեն, որ հեղինակը գտնում է, թե կան միայն անհատական լեզուներ, բայց այդ անհատական լեզուները միշտ և ամեն տեղ էլ տարբերվում են իրարից, ուստի և հենց այդ անհատական լեզուները բարբառներ են «տարրական ձևով»: Սակայն, սովորաբար բարբառներ կոչվում են ոչ թե այդ անհատական լեզուները, այլ նույն լեզվով խոսող ժողովրդի մի հատվածի տեղական խոսվածքը, որ մի այլ տեղի խոսվածքից տարբերվում է: Այստեղից էլ հետևում է, որ բարբառներն առաջանում են լեզվի մեջ անհատների կողմից կատարվող այնպիսի փոփոխութիւններով, որոնք ընդհանրանում են ոչ թե այդ լեզվով խոսող ամբողջ ժողովրդի, այլ միայն նրա մի հատվածի հանրութեան մոտ. «Բարբառները ծագում են, երբ լեզվի մեջ առաջ եկած փոփոխութիւնները սահմանափակվում են որոշ տեղում և չեն անցնում ուրիշ կողմեր, ուր կամ հին լեզվական ձևերն են պահպանվում, կամ առաջ են գալիս տարբեր փոփոխութիւններ» (էջ 54):

Այդ սկզբունքի վրա էլ, ահա, հիմնված է երկրորդ եզրակացութիւնը՝ քանի որ բարբառներն առաջանում են մի լեզվից՝ նրա կրած այլ և այլ փոփոխութիւնների հետևանքով, և քանի որ այդ բարբառները ժամանակի ընթացքում կարող են այն աստիճանի

նի հեռանալ իրարից, որ բոլորովին ուրույն լեզուներ դառնան, ուստի և ցեղակից լեզուները նույն ճանապարհով առաջացած՝ մի մայր լեզվի ժառանգներն են: «Երբ բարբառների տարբերութիւնները միմյանցից այնքան մեծանում են, որ մի բարբառով խոսող մարդն այլևս չի հասկանում մյուս բարբառով խոսողին, հետևաբար և այնպիսի երկու բարբառ այլևս չազդելով իրար վրա՝ մի ընդհանուր կյանքով չեն ապրում,—այն ժամանակ առաջ են գալիս նոր լեզուներ միևնույն մայր լեզվից» (էջ 63): «...Հենց որ նրանք (=բարբառները—է. Ա.) դադարում են... ընդհանուր կյանքով ապրելուց և մեկի կրած փոփոխութիւնն այլևս չի անցնում մյուսին, այն ժամանակ նրանք կազմում են երկու տարբեր, բայց ցեղակից լեզու: Բոլոր ցեղակից լեզուներն, ուրեմն, միևնույն ընդհանուր մայր լեզվի երբեմնի բարբառների շարունակութիւնն են միայն» (էջ 64): Այս տողերից պարզ կերպով երևում է արդեն, որ հեղինակը լիովին ընդունում է և՛ լեզուների ցեղակցութիւնը, և՛ երբեմնի գոյութիւնը նախնական այն մայր լեզվի, որից առաջացել են մեզ ծանոթ ցեղակից լեզուները, այսինքն՝ հեղինակը միանգամայն որոշակիորեն ընդունում է նախալեզվի գոյութիւնը. «Ցեղակից լեզուների մայր լեզուն, որից առաջացել են նրանք, կոչվում է նախալեզու, իսկ սրանից առաջացած լեզուների խումբն՝ «ընտանիք»» (էջ 64): Ընդունելով լեզուների ցեղակցութիւնն ու նախալեզվի գոյութիւնը, հեղինակը նույն անվերապահութեամբ ընդունում է նաև այն ցեղերի միասնութիւնը, որոնք խոսել են նախալեզվով և որոնցից առաջացել են ցեղակից լեզուներով խոսող տարբեր ժողովուրդները. «...Այս գիտութիւնը (=լեզվաբանութիւնը—է. Ա.) հայտաբերելով հնդեվրոպական նախալեզուն՝ դրա հետ միասին որոշ չափով երևան է բերում նաև այդ լեզվով խոսող ժողովրդի նախնական մշակույթը» (էջ 69): Այստեղից էլ, ահա, նա բնորոշում է համեմատական-պատմական քերականութիւնն ու սահմանում նրա նպատակը. այդ նպատակն է՝ վերականգնել նախալեզուն և ուսումնասիրել, թե ինչպիսի փոփոխութիւնների է ենթարկվել նա իրենից առաջացած ցեղակից լեզուների մեջ. «...Համեմատական քերականութեամբ աշխատում են վերաստեղծել իբրև ելակետ՝ լեզվի նախնական դրութիւնը, որոշել քերականական բառարանական կողմն այն դարաշրջանում, երբ դեռ մեկ ընդհանուր լեզու է եղել, այլև թե ինչպիսի ձևափոխութիւն է կրել այդ մեկ լեզուն իր ամեն առանձին ճյուղերի մեջ: Այսպես կա հնդեվրոպական լեզուների համեմատական քերականութիւն, որով վերաստեղծվում է հնդեվրոպական նախալեզուն» (էջ 68): Այսպես

ընդունելով լեզուների ցեղակցության հարցը՝ հեղինակը հաստատապես ընդունում է նաև հայերենի ցեղակցությունը հնդեվրոպական լեզուների հետ և այս հարցում լիովին հետևում է Հյուբերմանին. գրքի 64—65-րդ էջերում թվելով հնդեվրոպական ընտանիքի լեզվաճյուղերը, ասիական խմբի մեջ երրորդ համարով հիշում է հայերենը, «որ ինքը մենակ մի առանձին ճյուղ է կազմում» (համա. էջ 70):

Հետմահու լույս տեսած «Հայոց հին գրականության պատմություն» աշխատության մեջ հեղինակը առերևույթ մի փոքր փոխել է կարծես յուր տեսակետը հայերենի կազմի մասին. իհարկե այդ փոփոխությունը չի արտահայտված «Լեզուն և սկզբնական պատմությունը» հատվածում (էջ 7—9), ուր հեղինակը հիշում է միայն այդ մասին եղած երկու հիմնական տեսակետները. այդ հատվածում նա որոշակի ոչ մի բան չի ասում, թեև գրելու ձևից ու ոճից կարելի է մակաբերել, որ հակված է հայերենը հնդեվրոպական համարելու կողմը, մանավանդ որ այդ տեսակետն ու դրա հիմնավորող փաստերն իր խոսքերով է շարադրում, մինչդեռ երկրորդի՝ հաբեթական տեսության համար Մառից մի հատված է մեջ բերում միայն, առանց յուր խոսքն ասելու այդ տեսության վերաբերմամբ: Հաջորդ «Օտար ազդեցություններ» հատվածում է (էջ 9—11), որ հեղինակն արտահայտում է կարծես թե նոր տեսակետ. նա գտնում է, որ հայերենը հնդեվրոպական լեզու է իր ծագմամբ, բայց երկար ժամանակ սերտ շփման մեջ լինելով բազմաթիվ ուրիշ ցեղերի հետ, նրանցից շատ ազդեցություններ է կրել, և, այդպիսով, մի խառնածին լեզու դարձել. «Մի բան պարզ է հիմա, որ հայոց լեզվի միայն մի մասն է հնդեվրոպական: Բազմաթիվ բառեր ու մասնիկներ, անպայման նաև քերականական ձևեր, որոնք դեռ բացատրված չեն, հավանաբար գալիս են ոչ հնդեվրոպական լեզվով խոսող ցեղերից, որոնց հետ շփվել է հայ ցեղն արևմուտքում: Բացի այդ՝ հայերեն լեզուն իշխել է Հայաստանի հին ժողովուրդների վրա, բայց սրանց լեզուներն էլ տեղի չեն տվել առանց հայերենի վրա ազդելու (ընդգծումները մերն են—է. Ա.), այնպես որ հայերենը նույնիսկ մի խառնված լեզու է: Մյուս կողմից խառնուրդ է և հայ ցեղը, որ իր հետ ձուլել է ուրարտացիներին և ուրիշ շատ հարևաններ: Այսպես՝ Փոքր Ասիայում և Ուրարտական երկրում տեղի ունեցած խառնուրդներով կազմվել է հայ էթնոսը—հայ ժողովուրդը և իր լեզուն» (էջ 9—10): Այս է հեղինակի վերջին տեսակետը, որ թեև արտաբանաբար տարբերվում է նախորդ «Հայոց լեզվի տեսություն» աշխատության

մեջ որոշակիորեն և ամենայն հստակությամբ շարադրվածից, բայց ըստ էության նրանից սկզբունքորեն չի տարբերվում: Միակ զանազանությունը առաջինի հստակության և երկրորդի դիտավորյալ մանվածապատմության մեջ է, ինչպես և «խառնված լեզու» տերմինի գործածության մեջ: Բայց այս տերմինն էլ ոչինչ չի փոխում, որովհետև հենց այդ գրքում (իսկ նախորդների մեջ առավել ևս որոշակի կերպով) նա չի ընդունում լեզուների խառնվորման այն տեսությունը, որ Ն. Մառն էր առաջ քաշել: Հեղինակն այստեղ էլ ընդունում է հնդեվրոպականը, որին ավելացնում է նաև տեղական լեզուների տարրերը՝ հայերենի մեջ, ըստ որում՝ հակառակ իր գործածած «խառնված, խառնուրդ» բառերին՝ նա այդ տարրերը դիտում է իբրև ազդեցություններ, մի բան, որ երևում է թե հատվածի վերնագրից՝ «Օտար ազդեցություններ», և թե մեր մեջ բերած հատվածի այն տողերից, ուր ասում է, թե այդ ուրիշ լեզուներն էլ «տեղի չեն տվել առանց հայերենի վրա ազդելու»: Այնպես որ, կարող ենք ասել, թե այդ փոփոխությունն սկզբունքային չէ. նորությունն այն է այստեղ, որ հայերենի մեջ տեսնում է նաև տեղական լեզուների տարրերը՝ իբրև ազդեցություններ. ըստ որում, օտար ազդեցությունների նրա գնահատման մասին վերը խոսեցինք արդեն: Ասենք նաև, որ «խառնված լեզու» տերմինի գործածությունը, ինչպես և մեջբերված հատվածն ամբողջությամբ, անհրաժեշտ, անխուսափելի և հարկադրական տուրքն էր այն ժամանակ՝ հայտնի պայմաններում իշխող մառականությունը՝ վերջո, հեղինակը խոսում է նաև գրաբար հայերենի մասին և գտնում է, որ նա հայերեն բարբառներից մեկը՝ Այրարատի բարբառն է եղել, որ գրերի գյուտով գրական կիրառություն է ստացել ու դարձել ընդհանուր գրական լեզու. «...Հինգերորդ դարում մեր քաղաքական՝ միաժամանակ և կրոնական կենտրոնի՝ Այրարատի բարբառը, որ հին վիպասաններն էլ գործածել են, Սահակ Պարթևի ու Մեսրոպ Մաշտոցի և նրանց աշակերտների ձեռքով դառնում է գրական լեզու, որ հետագայում բանեցնում են ամենքը, և որ մնում է իբրև ընդհանուր գրական լեզու մինչև 19-րդ դարի կեսերը»¹ (Հայոց լեզվի տեսություն, էջ 57):

Սրանք են, ահա, այն հիմնական սկզբունքները, որոնք արտահայտում է Աբեղյանը յուր գրքի ներածության մեջ (էջ 5—70) և որոնց հիմամբ էլ նա կատարել է յուր ուսումնասիրությունը հայոց լեզվի վերաբերյալ ու կազմել գրքի մյուս մասերը: Այդ մասերն,

¹ Համա. նաև «Հայոց հին գրակ. պատմ.», հ. Ա, էջ 85—87:

առանց վերապահության կարող ենք ասել, ժամանակակից հայերենի լավագույն ուսումնասիրությունն են կազմում. հեղինակը մեծ հմտությամբ հավաքել, դասդասել ու սիստեմի է վերածել ժամանակակից լեզվի բոլոր երևույթները և այդպիսով իսկ տվել մեր լեզվի իսկապես գիտական քերականությունը. այդ ուսումնասիրությունն է՝ ավելի արժեքավոր է դառնում նրանով, որ լեզվական երևույթները քննում է պատմական մոտեցմամբ, աշխատելով գրտնել ժամանակակից լեզվի այս կամ այն երևույթի պատմական արմատը, այս կամ այն ձևի նախատիպը և այլն: Այս բոլոր հարցերի քննարկման մեջ նա հաստատուն կերպով կանգնած է պատմականության սկզբունքի վրա և հմտորեն կիրառում է պատմա-համեմատական մեթոդը հայերենի նկատմամբ: Մանուկ Աբեղյանը իր ամբողջ գիտական գործունեության ընթացքում կանգնած է եղել պատմական լեզվաբանության դիրքերում, և մեր իրականության մեջ պատմա-համեմատական լեզվաբանության ամենակարկառուն ներկայացուցիչներից մեկն է եղել: Սակայն, այստեղ անհրաժեշտ է հիշել հեղինակի մի ուրիշ տեսակետը, որ երկար ժամանակ մեր քերականության մեջ վիճարկվել է ու հերքվել, և որ, այնուամենայնիվ, հեղինակն իրեն հատուկ հաստատամտությամբ անփոփոխ է պահել մինչև իր կյանքի վերջը: Դա ժամանակակից հայերենի հոլովների խնդիրն է: Վերը հիշված «Աշխարհաբարի քերականութիւն» և առանձնապես «Աշխարհաբարի հոլովները» գրքերի մեջ հեղինակը գտնում է, որ աշխարհաբարում հայցական ու սեռական հոլովներ չկան: Այդ տեսակետի դեմ դուրս եկավ Ստ. Մալխասյանցը, որ չուր հոլովածում ապացուցում էր, թե կան այդ հոլովները: Աբեղյանն այդ հոլովածի դեմ գրեց յուր «Հայցական հոլովը մեր աշխարհաբարում» աշխատությունը, որի մեջ կամենում է հիմնավորել և ապացուցել իր տեսակետը: Այս տեսակետի հիմքն այն է, որ,—պընդում է հեղինակը,—աշխարհաբարում հայցական և սեռական հոլովներն իրենց առանձին, սեփական ձևը չունեն. նրանցից առաջինը նման է կամ ուղղականին, կամ տրականին, իսկ երկրորդը՝ տրականին. և քանի որ «ճուղով ստածը ոչ այլ ինչ է, եթե ոչ հոլովիլի բառերի զանազան ձևերը (Form), որ կազմվում են մեծ մասամբ հոլովական վերջավորություններով» (Աշխ. հոլ., էջ 4), իսկ «մեր անուններն ունեն միայն հինգ ձև և ոչ ավելի» (անդ. էջ 5), հետևաբար և՛ «հոլովները հինգն են, այսինքն ամեն անուն կարող է փոփոխվել հինգ ձևով, որ կոչվում են՝ ուղղական, տրական, բացառական, գործիական, ներգոյական» (անդ, էջ 5, հմմտ. Տարր. քեր.,

էջ 33—34): Այս սկզբունքով, շնայած հակառակ քննադատություններին ու ապացույցներին, երկար ժամանակ ուսուցվել է հայերենի քերականությունը հայկական դպրոցներում, գլխավորապես այն պատճառով, որ դպրոցական քերականության դասագրքերը կամ հենց իրենք՝ Աբեղյանին են եղել, կամ իր աշակերտներինը, որոնք, բնականաբար, հետևել են նրան: Այդ սկզբունքով է նա ուսումնասիրել ժամանակակից հայերենի հոլովները նաև «Հայոց լեզվի տեսություն» մեջ: Այդ հարցի վրա, սուկայն, մենք հանգամանորեն կանգ առնելը ավելորդ ենք համարում, քանի որ թե՛ գործնական-ուսուցողական և թե՛ գիտական տեսակետից այժմ արդեն առանձին կարևորություն չի ներկայացնում:

Այսպես ուրեմն, վերն ասվածներից պարզվեց, որ Աբեղյանը լիովին հետևում է երիտքերականներին. լեզվի պատմականությունը, նրա անընդհատ զարգացումը և նման սկզբունքային խնդիրների քննությունը, որ երիտքերականների արժանիքն է կազմում, նաև Աբեղյանի համար պատվաբեր է, բայց այդ ճիշտ տեսակետների հետ, ինչպես երիտքերականների, այնպես էլ, անտարակույս, Աբեղյանի սկզբունքներն ունեն իրենց խոցելի կողմերը: Այստեղ ամենից առաջ պետք է հիշել անհատական լեզունների հարցը: Որ նույն լեզվով խոսող անհատների խոսվածքները տարբերվում են իրարից, այդ, իհարկե, մարքսիստական լեզվաբանությունն էլ ընդունում է, բայց դրա հետ միաժամանակ մարքսիստական լեզվաբանությունն ընդունում է, որ անհատական լեզուններն այնքանով միայն գոյություն ունեն, որքանով նրանք ընդհանուրին չեն հակադրվում: Ուստի և այն տեսակետը, թե կան միայն անհատական լեզուններ, հիմնովին սխալ է. կա հանրության համար ընդհանուր լեզու, որ իր ընդհանուր օրենքներով պարտադիր է նույն լեզվով խոսող բոլոր անհատների համար. այդ ընդհանուրը դրսևորվում է անհատների միջոցով, որոնք կարող են այս կամ այն շափով տարբեր կերպով խոսել, սակայն այդ տարբերությունը չպետք է հասնի այն աստիճանին, որ խախտի ընդհանուրի կողմից ընդունվածը. հակառակ պարագայում կիսովի այդ մասնավորի և ընդհանուրի կապը, որով և գոյության նախապայմանից կզրկվի հենց այդ անհատականը: Այդպես և լեզվի բնորոշումն՝ իբրև հոգեբանական երևույթ՝ սխալ է: Որ լեզվական իրողությունների մեջ հոգեկան երևույթներն իրոք մեծ դեր են խաղում, այդ ճիշտ է, բայց որ լեզուն պատկերացումների գուգորդություններով կազմվող հոգեբանական դատողությունների ամբողջությունն է, սխալ է. ունենալ որևէ առարկայի պատկերա-

ինչու՞ հայրեր ավելի նպատակահարմար է, քան հաւր և այլն, և այլն: Բայց մենք դեռ բերում ենք որոշ համակարգի հետ կապվող երևույթներ. իսկ ի՞նչ կտեսնենք, եթե վերցնենք առանձին դեպքեր. գրաբարյան ֆեռ, տեառն սեռականներն, ասենք թե, նպատակահարմար չեն, որովհետև անկանոն և բացառիկ ձևեր են, և այդ պատճառով էլ դուրս եկան լեզվից, բայց ինչու՞ նրանք շփոխարինվեցին ֆույրի, տերի (կամ տիրի) ձևերով, առավել կենսունակ -ի հոլովումով, այլ ստացան ֆռոշ, տիրոշ ձևերը «վարակվելով» կնոջ ձևից, որ նույնքան «աննպատակահարմար» էր, որքան և ֆեռ, տեառն: Նշանակում է, լեզվի մեջ կատարվող փոփոխությունները բացատրելու համար պետք է հենվել հենց լեզվի մեջ գործող օրենքների վրա, որոնք նրանց պատճառները, ոչ թե անհատների հոգեկան գործունեության, այլ իր իսկ՝ լեզվի մեջ:

Ինչպես ասել ենք արդեն, Մ. Աբեղյանը շատ մեծ դեր է կատարել ժամանակակից հայերենի քերականական կառուցվածքի ուսումնասիրության բնագավառում, ըստ որում, քերականագիտության մեջ էլ նա ստեղծել էր իր ուղղությունը, այսպես կոչված ֆորմալիստական ուղղությունը: Նրա աշխատությունների մեջ այդ ֆորմալիզմը հիմնականում արտահայտվում է հետևյալում. բոլոր քերականական բնորոշումների հիմքում դնելով միայն ձևական առանձնահատկությունների սկզբունքը, նա խոսքի մասերի դասակարգման մեջ նույնացնում է. ա) գոյականներն ու դերանունները, բ) ածականները, մակբայները և դերբայները, որով և ընդունում է բառերի երեք խումբ (= երեք խոսքի մաս). գոյականներ, ածականներ, բայեր. միջարկությունը, իբրև խոսքի մեջ ոչ մի պաշտոն չկատարող բառեր, հանում է խոսքի մասերի շարքից: Նույն սկզբունքից ելնելով, ուղղական ու հայցական հոլովը նույնացնում է իրար և չի ընդունում առանձին հայցական հոլովի գոյությունը աշխարհաբարում, սեռականն էլ նույնացնում է տրականին: Բայը նույնացնում է ստորոգյալի հետ, որով և իբրև բայ, փաստորեն ընդունում է միայն դիմավոր ձևերը, իսկ դերբայները բաժանում է ածականի զանազան խմբերի միջև: Այս սկզբունքներով էլ, ահա, ուսումնասիրում է աշխարհաբարի քերականական կառուցվածքը, բառակազմությունը, հնչյունաբանությունը: Ֆորմալիստական այս ուղղությունը, ինչպես վերը նշել ենք, քննադատվեց առաջին շրջանի վերջում և հաղթահարվեց: Այդ քննադատությանը մենք անդրադառնալու ենք ստորև, ուստի և կրկնություններից խուսափելու համար այստեղ կանգ չենք առնի գրա վրա: Հիշելով, որ քերականագիտական այդ

ուղղությունը մերժելի է և մերժված է, մենք, այնուամենայնիվ, կուզեինք մի քանի խոսք ասել մեր նոր լեզվի քերականության ուսումնասիրության բնագավառում Մ. Աբեղյանի բերած նորություններին ու նրա խոշոր ավանդի մասին:

Արևելյան աշխարհաբարի քերականագիտական ուսումնասիրության պատմությունը շուրջ երկուսուկես դարի պատմությունն է: Համեմատելով աշխարհաբարի քերականություններն իրար հետ՝ ըստ հաջորդականության, տեսնում ենք մի շատ բնորոշ պատկեր: Առաջին քերականությունները դեռևս ուղղակի կախման մեջ են գրաբարի քերականական սխեմաներից: Նույնիսկ այնպիսի մեծարժեք ուսումնասիրություն, ինչպիսին է Ստ. Պալասանյանի «Ընդհանուր տեսություն արևելեան նոր գրաւոր լեզուի հայոց» աշխատությունը, որ ժամանակակից հայերենի գիտական ուսումնասիրության հիմքն է դնում, դարձյալ դեռևս լիովին չի ազատագրվել գրաբարի սխեմաներից: Մեր աշխատությանը չվերաբերող մանրամասնությունների մեջ շատնելով, առնենք միայն մի բնորոշ օրինակ. իր այդ աշխատության մեջ Պալասանյանը տարբերում է միայն չորս եղանակ՝ սահմանական, ստորադասական, հրամայական և դերբայ: Եթե հիշենք, որ դերբայը բայական եղանակ չէ, ապա կմնան երեք եղանակները. բայց դերբայը հենքի մոտ եղանակ էր համարվում նաև գրաբարի համար: Հետագայում, 1874 թ. հրատարակած իր «Քերականություն մայրենի լեզուի» աշխատության մեջ դրանց ավելացնում է ևս մի եղանակ՝ պայմանականը², բայց դա շատ բան չի փոխում խոնարհման սխեմայի մեջ, որի հիմքում ընկած է դեռևս գրաբարի սխեման: Դրությունը չփոխեցին նաև Պալասանյանի հետևորդները (Ա. Բահաթրյանց, Ն. Մելիք-Թանգյան, Ա. Արաբաջյան, Հար. Թումանյան, Ն. Տեր-Ղևոնդյան): Ծիշտ է, նրանք առանձին, մասնակի հարցերում որոշ առաջընթաց կատարեցին, բայց սիստեմն, իբրև ամբողջություն, մնաց անփոփոխ: Եվ, ահա, Մ. Աբեղյանն էր, որ խորապես ուսումնասիրելով աշխարհաբարը, կարողացավ հրաժարվել գրաբարյան կամ կիսագրաբարյան քերականական սխեմաներից, աշխարհաբարի քերականությունն ուսումնասիրել ինքն իրենով ու իր մեջ, որպես յուրահատուկ համակարգ, և ստեղծել այդ համակարգն արտացոլող քերականական

¹ Տե՛ս Մ. Պալասանեան, Ընդհանուր տեսություն արևելեան նոր գրաւոր լեզուի հայոց, Թիֆլիս, 1870, էջ 67—74:
² Տե՛ս Մ. Պալասանեան, Քերականութիւն մայրենի լիզուի, Թիֆլիս, 1874, էջ 54:

սխեման՝ անկախ գրաբարյան սխեմայից: Բայի խոնարհման համակարգում, օրինակ, նա տարբերում է արդեն հինգ եղանակ առանց դերբայի՝ իրականության կամ սահմանական եղանակ, անհրաժեշտության կամ հարկադրական եղանակ, կարելիության (հնարավորության) կամ ենթադրական եղանակ, հարկադրական եղանակ և ըղձական եղանակ: Այսպիսով, Մ. Արեղյանի ֆերականական ուսումնասիրությունների առաջին և մեծագույն արժեքն այն է, որ դրանց շնորհիվ մեր գրական լեզվի ֆերականական կառուցվածքի նկարագրությունը լիովին ու վերջնականապես ազատագրվեց գրաբարյան ֆերականական սխեմաներից և ունեցավ իւր ուրույն սխեմաները: Այդ սխեմաները վերջին երեսուն տարիներում, իհարկե, մասնակի փոփոխություններով զգալիորեն ճշգրտվել են, բայց և այնպես սխեման, ամբողջությամբ վերցրած, հիմնականում պահպանվել է և ընկած է բոլոր քերականական հետազոտությունների հիմքում:

Մինչև Մ. Արեղյանի քերականական ուսումնասիրությունների երևան գալը մենք շունեինք շարահյուսություն, որպես գիտական դիսցիպլին, բառիս բուն իմաստով: Շարահյուսական երևույթները քննարկվում էին քերականությունների «Համաձայնություն» բաժնում, որ ավելի շատ քերականական ձևերի կիրառությունների կանոններն էր տալիս, քան խոսքի նկարագրությունը և նրա միավորների վերլուծությունը: Մ. Արեղյանն առաջինն էր, որ բարձրացրեց շարահյուսական ուսումնասիրությունները մի նոր մակարդակի և դարձրեց ֆերականական ուսումնասիրության՝ ձևաբանության հետ իրավահավասար մի նյութ: Եվ թեպետ ժամանակակից շարահյուսական սխեմաներ, որպես սկզբունքների սխեման, արմատապես տարբերվում է նրա սխեմայից (մենք նկատի ունենք պրոֆ. Գ. Սեվակի «Շարահյուսության» դասագիրքը), բայց շարահյուսական վերլուծությունների սխեման հիմնականում այն է, ինչ որ ստեղծել է Մ. Արեղյանը:

Մինչև Մ. Արեղյանի քերականական ուսումնասիրությունների երևան գալը մենք շունեինք հնչյունաբանություն: Քերականությունների մեջ հաշվի էին առնվում գրի, ուղղագրության հետ կապված իրողությունները և, այդ պատճառով էլ, լեզվի հնչյունական կողմի վրա ոչ մի ուշադրություն չէր դարձվում: Նույնիսկ այնպիսի մի լեզվաբան, ինչպիսին է Արսեն Այտրնյանը, դեռևս հնչյունի ու տառի տարբերակումը չունի¹: Մ. Արեղյանը առաջինն էր, որ գիտական-

¹ Ստ. Պալասանյանն իր «Ընդհանուր տեսութիւն արևելեան նոր գրուտը լե-

րեն ուսումնասիրեց ժամանակակից հայերենի հնչյունական համակարգը և հայ ֆերականագիտության մեջ հիմնադրեց նաև այս նյութը: Մեր այժմյան հնչյունաբանական ուսումնասիրությունները հիմնականում դեռ այն մակարդակի վրա են գտնվում, ինչպիսին ներկայացնում է Մ. Արեղյանի «Հայոց լեզվի տեսություն» աշխատության «Բառերի հնչյունները (հնչյունաբանություն)» գլուխը (էջ 71—127):

Հայ քերականագիտական գրականության մեջ անուշադրության մատնված բնագավառներից մեկն է եղել բառագիտությունը: Մենք ունեցել ենք հիանալի բառարաններ, բայց չենք ունեցել բառագիտություն: Մ. Արեղյանն իր ուսումնասիրություններով հիմնադրեց բառագիտությունը որպես լեզվի գիտական ուսումնասիրության կարևորագույն նյութերից մեկը՝ իր երկու բաժիններով (իմաստաբանություն և բառակազմություն) և վերջին տարիներում այդ ուղղությամբ կատարված աշխատանքները դեռ հեռու են տեսական այն մակարդակին հասնելուց, որ ներկայացնում են «Հայոց լեզվի տեսություն» աշխատության «Բառերի նշանակությունը (իմաստաբանություն)» և «Բառակազմություն» գլուխները (էջ 128—304):

Այս բոլորից ելնելով, մենք առանց տատանվելու կարող ենք ասել, որ Մ. Արեղյանը աշխարհաբարի քերականական ուսումնասիրությունը բարձրացրեց գիտական մի այնպիսի բարձր աստիճանի, որ լիովին համապատասխանում է ժամանակակից լեզվաբանության մակարդակին: Ճիշտ է, նրա ուսումնասիրությունների հիմքում ընկած է հոգեբանական ինդիվիդուալիզմի իրեն հատուկ ֆորմալիզմով, բայց դա, այնուամենայնիվ, չի խանգարել, որ նա կարողանար խորապես ու բազմակողմանիորեն վերլուծել մեր լեզվի իրակությունները և բացահայտել նրա քերականական կառուցվածքի, որպես ինքնուրույն լեզվական համակարգի, հիմնական առանձնահատկությունները¹: Եվ եթե Ս. Պալասանյանը ժամանակակից հայերենի գիտական ուսումնասիրության հիմքը դրեց, ապա

գուրի հայոց» (1870) աշխատության մեջ դեռևս հնչյունը տառից չի տարբերում. «Քերականութիւն մայրենի լեզուի» (1874) գրքում հնչյունն ու տառը նույնացնելով, տարբերում է գրից հետևյալ ձևով. «Լեզվի յուրաքանչյուր հնչյունը կոչվում է տառ, որ եթե թղթի վրա ձևակերպենք գիր է անվում: Գրերը առանձին պայմանական նշաններ են, որ տեսնելով ենք որոշում միմյանցից, իսկ հնչյունները՝ լսելով» (էջ 85): Այս սահմանում անփոփոխ պահպանվում է նաև գրքի հետագա շորս հրատարակություններում (5-րդ հրատ., 1906):

¹ Նկատի պետք է ունենալ, որ մեքենական թարգմանության զարգացմամբ պայմանավորված՝ լեզվի կառուցվածքի ձևական (ֆորմալ) — ստրուկտուրալ վեր-

Մ. Աբեղյանը ստեղծեց ժամանակակից հայոց լեզվի գիտական ֆե-
 րականությունը: Այս նշանակում է, թե Մանուկ Աբեղյանը մեր
 գրական լեզվի ամենախոշոր ուսումնասիրողն է և ամենամեծ
 ավանդն ունի այդ բնագավառում: Եվ ինչպես որ չի կարելի զբաղ-
 վել հայոց լեզվի պատմության կամ հայ բարբառագիտության հար-
 ցերով, առանց Հ. Աճառյանի մեծահարուստ գիտական ժառանգու-
 թյան յուրացման, այնպես էլ անկարելի է զբաղվել ժամանակակից
 հայերենի ուսումնասիրությամբ, առանց խորապես յուրացնելու
 Մանուկ Աբեղյանի լեզվաբանական ժառանգությունը, որ մեր գրա-
 կան լեզվի գիտական ուսումնասիրության հաստատուն հիմքն է
 կազմում:

Վերջապես, ինչպես ասել ենք, Մ. Աբեղյանը գերազանցապես
 գրականության հարցերով է զբաղվել և, հետևաբար, չի կարելի նրա
 գիտական գործունեությունն ու ժառանգությունը գնահատել, ան-
 տեսելով այդ բնագավառը: Մենք, իհարկե, նրա գրականագիտա-
 կան ժառանգության բազմակողմանի ու հանգամանալից գնահա-
 տությունը տալու հավակնությունը չունենք. այդ պատվավոր գոր-
 ծը գրականագետ-մասնագետներին ենք թողնում: Այնուամենայ-
 նիվ, համարձակվում ենք ամենաընդհանուր ձևով մի երկու դատո-
 ղություն անել: Հայ հին մատենագրության ուսումնասիրությամբ
 զբաղվողներ են եղել նաև Մ. Աբեղյանից առաջ. բայց նրանք զբաղ-
 վել են հայ մատենագրությամբ ընդհանրապես: Աբեղյանն առա-
 ջինն էր, որ կարողացավ հայ մատենագրության մեջ տեսնել մի
 ինքնուրույն բաղադրիչ՝ հայ հին և միջնադարյան գեղարվեստական
 գրականությունը, և ուսումնասիրել այն: Իր բազմամյա խորհմուտ
 հետազոտություններով նա հիմնադրեց հայ հին և միջնադարյան
 գրականության պատմությունը, որպես հայագիտության մի ինք-
 նուրույն ճյուղ, և ինքն էլ գրեց զրա՝ հայ հին գրականության ամ-
 բողջական ուսումնասիրությունը, որ հայագիտության լավագույն
 գանձերից մեկն է:

Որպես գրականագետ և լեզվաբան, միաժամանակ, Մ. Աբեղ-
 յանը երկար տարիներ զբաղվել է հայկական տաղաչափության
 ուսումնասիրությամբ և իր հետազոտությունների արդյունքներն
 ամփոփել «Հայոց լեզվի տաղաչափություն» մենագրության մեջ,
 որը ևս հայագիտության ամենամեծ կոթողներից մեկն է:

լուծության անհրաժեշտությունը նոր կողմով է արծեքավորում Մ. Աբեղյանի քի-
 րականական վերլուծությունները:

Խորապես ուսումնասիրած լինելով ժամանակակից հայերենի
 բառաբանքը և, մանավանդ, բառակազմությունը, Մ. Աբեղյանն իր
 բացառիկ հմտությունն ու հարուստ գիտելիքներն ի սպաս դրեց մեր
 լեզվի գիտական ու տեխնիկական մասնագիտական տերմինաբա-
 նություն մշակման պատվավոր գործին և այդ բնագավառի ամենա-
 եռանդուն ու բեղմնավոր մշակներից մեկը եղավ: Քսանական-ե-
 րեսունական թվականներին լույս տեսած տերմինաբանական բառա-
 րանները կազմելուն նա գործուն մասնակցություն է ունեցել կամ
 որպես հեղինակակից, կամ որպես խմբագիր և մասնագետ-խորհրդ-
 դատու: Նա է կազմել «Ռուս-հայերեն ուղղմական տերմինների բա-
 րարանը» (Երևան, 1925), որ մեր լավագույն տերմինաբանական
 բառարաններից մեկն է:

Վերջապես, հսկայական է նրա ավանդը նաև հայ ժողովրդա-
 կան բանահյուսության ուսումնասիրության բնագավառում, որի ան-
 խոնջ և խորհմուտ մշակներից մեկն է եղել նա իր ամբողջ կյանքի
 ընթացքում:

Այս բոլորն, անհա, ինքնին բերում են այն անվերապահ եզրա-
 կացության, որ Մանուկ Աբեղյանը մեր ժամանակի ամենամեծ հա-
 յագետներից մեկն է եղել և նրա թողած գիտական հարուստ ժա-
 ղանգությունը հայագիտության ոսկե ֆոնդի մասն է կազմում:

Մեր ժամանակի ամենամեծ հայ լեզվա-
 նաբան Հակոբի Սեֆուլյանի
 բանն է Հրաչյա Հակոբի Աճառյանը, որի գի-
 տական խորհմուտ ուսումնասիրությունները
 համաշխարհային ճանաչում են գտել և հայ լեզ-
 վաբանության ամենաթանկագին գանձերն են կազմում: Նրա գրչին
 են պատկանում շուրջ երկու հարյուր գիտական մեծարժեք աշխա-
 տություններ: Նրա «Հայերեն արմատական բառարան», «Հայ բար-
 բառագիտություն», «Հայոց լեզվի պատմություն», «Հայոց անձնա-
 նունների բառարան», «Լիակատար քերականություն հայոց լեզվի»
 և այլ մենագրական սովորածավալ աշխատությունները մեծագույն
 ավանդներ են ոչ միայն հայագիտության, այլև սովետական լեզ-
 վաբանական գիտության բնագավառում:

Հրաչյա Աճառյանը ծնվել է 1876 թվականին, Կոստանդինո-
 պոլսում, արհեստավորի ընտանիքում: Սկզբնական կրթությունն
 ստացել է իր ծննդավայրում՝ սովորելով Պոլսի կենտրոնական վար-
 ժարանում, ապա՝ 1895 թ. մեկնել է Ֆրանսիա՝ բարձրագույն կրթու-
 թյուն ստանալու. այստեղնա սովորել է Սորբոնի համալսարանում:

աշակերտելով հատկապես Անտուան Մեյեին: 1897 թ. Փարիզի լեզվաբանական ընկերությանը (Société de linguistique de Paris) ներկայացնելով լազերենի ուսումնասիրությունը՝ ընտրվում է ընկերության անդամ: Նույն թվականին մասնակցում է արևելագետների տասներեքերորդ կոնգրեսին՝ Փարիզում: Այստեղ նա կարգում է երկու զեկուցում հայերենի մասին. հայագետ Հյուբերտանը, որ նիստի նախագահն էր, հավանելով զեկուցումները՝ հրավիրում է Աճառյանին իր մոտ՝ Ստրասբուրգ, իր դասախոսությունները լսելու: Ընդունելով այդ հրավերը՝ Հրաչյա Աճառյանը 1898 թ. գնում է Ստրասբուրգ և մեկ կիսամյակ ունկնդրում Հյուբերտանին:

Ավարտելով բարձրագույն կրթությունը և ստանալով լեզվաբանական մեծ պատրաստություն՝ Աճառյանը 1898 թ. գալիս է Անդրկովկաս և ամբողջությամբ նվիրվում գիտական-մանկավարժական գործունեության, իբրև ուսուցիչ աշխատելով էջմիածնում, Շուշում, Նոր Բայազետում և այլուր: Սակայն Աճառյանի բեղմնավոր գործունեությունն սկսվում է Հայաստանում սովետական կարգեր հաստատվելուց հետո: Հիմնադրվում է Երևանի Պետական համալսարանը. Աճառյանը հրավիրվում է որպես հայագիտական, լեզվաբանական ու արևելագիտական առարկաների դասախոս և անտիարակության պատվավոր գործին: Հենց այդ շրջանում էլ Աճառյանը մեկը մյուսի ետևից հրատարակում է իր խոշոր մենագրական աշխատությունները: Երեսուն տարի աշխատելով համալսարանում և վարելով հայոց լեզվի, ապա՝ արևելյան լեզուների ամբիոնը, նա դասախոսել է բազմաթիվ լեզվաբանական առարկաներ (ընդհանուր լեզվաբանություն, հայերենի համեմատական քերականություն, հայոց լեզվի պատմություն, հայ բարբառագիտություն, գրաբար, հունարեն, պարսկերեն, պարսից լեզվի պատմություն, սանսկրիտ և այլն) և պատրաստել է լեզվաբան-հայագետների բազմաթիվ երիտասարդ կադրեր, որոնք այժմ այդ դասընթացներն են կարգում համալսարանում և Հայաստանի մյուս բարձրագույն ուսումնական հաստատություններում:

Բարձր գնահատելով Հ. Աճառյանի գիտական վաստակները, ՀՍՍՌ կառավարությունը 1933 թ. շնորհել է նրան բանասիրական գիտությունների դոկտորի աստիճան՝ honoris causa և պրոֆեսորի կոչում, 1935 թ.՝ ՀՍՍՌ Գիտության վաստակավոր գործչի կոչում, իսկ 1943 թ. ընտրել ՀՍՍՌ Գիտությունների ակադեմիայի հիմնադիր կազմի ակադեմիկոս: Հ. Աճառյանը նաև Չեխոսլովակիայի Գի-

տությունների ակադեմիայի թղթակից անդամ էր (1937 թվականից): Վախճանվել է Հ. Աճառյանը 1953 թ. ապրիլի 16-ին:

Արտակարգ բեղմնավորության հասնող իր գիտական գործունեությամբ Հրաչյա Աճառյանն ընդգրկել է հայոց լեզվի ուսումնասիրության բոլոր բնագավառները՝ հիմնադիրը հանդիսանալով հայ լեզվաբանության մի քանի ճյուղերի: Անկարելի է, իհարկե, թվարկել Հ. Աճառյանի բազմաթիվ աշխատությունները, և դա մեր նպատակից էլ դուրս է. այստեղ պետք է հիշենք միայն ամենակարևորները, որոնցից յուրաքանչյուրը մի գլուխ գործոց է: Մյուս կողմից, քանի որ այդ աշխատություններից յուրաքանչյուրն ամփոփումը, կարելի է ասել, հանրագիտարանն է հայ լեզվաբանության մեկ ճյուղի, ապա ավելի հարմար ենք գտնում խոսել դրանցից յուրաքանչյուրի մասին՝ առանձին-առանձին բաժիններում, որոնց մեջ աշխատում ենք ցույց տալ Հ. Աճառյանի ներդրումը տվյալ բնագավառում, քննության առնել նրա տեսակետներն այդ բնագավառի ամենաէական հարցերի մասին և գնահատել նրա գիտական ժառանգությունը տվյալ բնագավառի շրջանակներում:

Ա. Ը ն դ հ ա ն ու ռ լ լ Ե Ղ Վ Պ Բ Ե Ա Ն Ո Ւ Ք Յ Ո Ւ Ն.— Իր բեղմնավոր գիտական գործունեության ընթացքում Հ. Աճառյանը զանազան առիթներով, թե՛ առանձին հոդվածների և թե՛ իր հայագիտական աշխատությունների մեջ՝ անդրադարձել է ընդհանուր լեզվաբանական, տեսական բազմաթիվ հարցերի, քննության նյութ դարձրել դրանք և արտահայտել իր տեսակետը դրանց մասին: Այդ բոլոր հարցերին էլ, հակառակ որոշ, ոչ մասնագիտական շրջաններում ստեղծված թյուր կարծիքին, նա մոտեցել է որպես մեծ ու բազմակողմանի պատրաստականությամբ օժտված տեսաբան:

Իր գիտական գործունեության առաջին շրջանում Հ. Աճառյանը սոցիոլոգիական ուղղության ներկայացուցիչն է եղել և մասնավորապես հետևել է այդ ուղղության խոշորագույն ներկայացուցիչ Անտուան Մեյեին, բայց հետագայում, Հայաստանում սովետական կարգերի հաստատումից հետո նա որոշ չափով հեռացել է այդ ուղղությունից և առանձին հարցերի մասին իր արտահայտած դրույթներով կանգնել սովետական լեզվաբանության դիրքերում: Այսպես է հատկապես լեզվի բնորոշման, լեզվի ծագման, լեզուների խաչավորման և մի քանի այլ հարցերի տեսական վերլուծությունների մեջ: Տարբեր ժամանակներում, առանձին հոդվածներով հրատարակած իր ընդհանուր լեզվաբանական հետազոտությունները Հ. Աճառյանն ամբողջացրել է մի սովորածավալ մենագրության մեջ, որ

ընդգրկում է ընդհանուր լեզվաբանության բոլոր խնդիրները: Այդ մենագրությունն է «Լիակատար քերականություն հայոց լեզվի» աշխատության «Ներածություն»-ը, որ լույս է տեսել հեղինակի մահ-վանից հետո, 1955 թ.¹: Մեծածավալ (633 էջ) և լեզվաբանական մեծահարուստ նյութ ընդգրկող այս հատորում էլ, ահա, իրենց ամբողջական արտահայտությունն են գտել Հ. Աճառյանի ընդհանուր լեզվաբանական սկզբունքները, որոնց քննությանն էլ անցնում ենք:

Ներածությունը բաղկացած է երկու մասից. 1. Լեզվաբանության ներածություն, 2. Լեզունների դասակարգումը: Առաջին մասում հեղինակը հանգամանորեն քննության է առնում այնպիսի կարևոր հարցեր, ինչպիսիք են լեզվի բնորոշումը, լեզվի, որպես հասարակական երևույթի, բնութագրումը, լեզվի ծագումը, լեզվի զարգացումը և այլն, և այլն: Բնորոշելով լեզվաբանությունը որպես գիտություն լեզվի մասին և ցույց տալով նրա տեղը հասարակագիտություն լեզվի մասին և ցույց տալով նրա տեղը հասարակական գիտությունների շարքում ու նրա կապը վերջիններիս հետ, Աճառյանը մանրամասնորեն խոսում է այն մասին, թե ինչ նշանակություն ունի հայերենի ուսումնասիրությունը ոչ միայն հայագիտության, այլև ընդհանուր լեզվաբանության համար և, իր իսկ հետազոտությունների փորձն օգտագործելով, ցույց է տալիս, որ հայերենի շատ տվյալներ կարող են օգտագործվել՝ ընդհանուր լեզվաբանության որոշ հարցերի լուսաբանման համար: Այդ տեսակետից հեղինակն առավել կարևոր է համարում բարբառների բազմազանությունը, հայերենի և ուրիշ լեզուների փոխազդեցությունները և այլն:

Ինչպես իր բազմաթիվ աշխատությունների մեջ, այնպես էլ այստեղ քննության նյութ դարձնելով լեզվի բնորոշման խնդիրը,

¹ Այդ «Ներածություն»-ը «Լիակատար քերականության» առաջին հատորն էր, որ հրատարակության էինք պատրաստել հեղինակի կենդանության օրոք և հանձնել տպագրության 1951 թ.: Անհատի պաշտամունքի հայտնի պայմաններում, հեղինակի հանձնարարությունը մեր կողմից որոշ հավելումներ էինք կատարել՝ հատորի հրատարակությունը հնարավոր դարձնելու համար: Թեև հեղինակը հավանություն էր տվել մեր հավելումներին, այնուամենայնիվ, մենք դրանք անկյունավոր փակագծերի մեջ էինք առել, հեղինակի սեփական գրածներից անջատելու նպատակով: Չնայած մեր բոլոր ջանքերին, հատորն, այնուամենայնիվ, իր այդ «պատվազրկած» վիճակով անգամ, լույս չտեսավ. տպագրված 33 մամուլներն այրվեցին, իսկ շարվածքը պահպանվեց: Դրա փոխարեն, որպես առաջին հատոր, լույս տեսավ ածականին ու թվականին նվիրված հատորը: Դրանով էլ խախտվեց հատորների հաջորդականությունը, իսկ «Ներածություն»-ը, որ հնարավոր եղավ հրատարակել միայն 1955 թ., այնպես, ինչպես նա ներկայացվել էր հեղինակի կենդանության օրոք, լույս տեսավ առանց հատորի համարը կրելու:

Հ. Աճառյանը հանգում է այն ճիշտ տեսակետին, որ լեզուն հասարակական երևույթ է, գոյություն ունի միայն հասարակության մեջ և ծառայում է հատարակությանը որպես հաղորդակցման միջոց: Այս ճիշտ գրույթն իբրև ելակետ ընդունելով, հեղինակը մանրամասնորեն քննության է առնում մի կողմից՝ մարդկային լեզվի ու կենդանական «լեզվի», մյուս կողմից՝ հնչյունական լեզվի ու «նշանացի լեզուների» տարբերությունների հարցը: Բազմաթիվ տվյալների օգտագործումով քննելով զանազան կենդանիների «լեզունները», հեղինակը ցույց է տալիս, որ կենդանիները չունեն այնպիսի լեզու, ինչպիսին է մարդկային լեզուն, որ նրանք ունեն միայն բնազդական ճիշեր, որոնք և կազմում են նրանց բնազդների ձայնական արտահայտությունը: Նույնպես և՛ զանազան նշանների «լեզունները» զուրկ են ինքնուրույն հաղորդակցման միջոցի վերածվելու հնարավորությունից, որովհետև նրանք բոլորն էլ հիմնված են հնչյունական լեզվի վրա, պայմանավորված են նրանով և առանց նրան գոյություն չեն կարող ունենալ: «Բոլոր տեսակի նշանացի լեզուները, — եզրակացնում է հեղինակը, — ինչպես շարժուձևերի, նույնպես և մեր կյանքում հնարված այլուբեն, թվանշան, հեռագրանիշներ, լապտերներով կամ դրոշակներով խոսակցություն, շեփոռներով հաղորդագրություն, կույրերի այբուբեն, գույների կամ ծաղիկների «լեզուն» և այլն, և այլն, ոչ մի ճիշտ հասկացողություն չպիտի տային, եթե չունենայինք նրանց հոդավոր թարգմանությունը» (Ներածություն, էջ 48): Այդ պատճառով էլ, ահա, «լեզու ասելով այսօր հասկանում ենք միայն ձայնական հոդավոր լեզուն»: Այսպես ճիշտ գնահատելով մարդկային լեզվի դերն ու էությունը՝ հեղինակն անցնում է լեզվի ծագման խնդրին: Այստեղ հեղինակը համառոտակի շարադրում է այդ հարցի մասին եղած տեսությունները, վեր հանում այդ տեսությունների սխալներն ու թերությունները և, հիմնվելով Ֆրիդրիխ Էնգելսի դրույթների վրա, հիմնականում ճիշտ կերպով լուսաբանում լեզվի առաջացման պատմական պրոցեսը: Պետք է նշել, առանձնապես, որ առաջին հայացքից թվում է, թե քննադատվող ոչ գիտական տեսությունները շարադրված են խիստ օբյեկտիվորեն, բայց իրականում այդ «օբյեկտիվիստական» շարադրանքը հեղինակը այնպիսի իրոնիայով է ներկայացնում, որ ինքն իսկ՝ շարադրանքը «տեսության» հերքումն է դառնում (տե՛ս հատկապես Գայգերի «տեսությանը» նվիրված հատվածը): Այս հարցի վերաբերյալ, այնուամենայնիվ, անհրաժեշտ ենք գտնում անել հետևյալ դիտողությունները: Շարադրելով Ռընանի և Մաքս

Մյուսների «տեսութունները» և ճիշտ կերպով հերքելով դրանք հեղինակն, այնուամենայնիվ, խիստ պարզունակ ձևով է ներկայացնում դրանք և ուշադրության չի առնում նրանց իսկական էությունը: Ռընանը լեզվի ծագման հարցում պարզապես կանգնած է աստվածաբանական, կրոնամիստիկական տեսակետի վրա: Գտնելով, որ լեզուն, լսողության ու տեսողության նման, մարդու բնածին որ կարողությունն է, Ռընանը հանգում է այն հակագիտական վարկածին, թե լեզուն, իբրև մարդու բնական կարողություն, աստվածային շնորհ է մարդուն: Նույնպես և Մաքս Մյուսլերը, որը, նատուրֆիլոզոֆի դիրքերից ելնելով, խոսելու կարողությունը համարում է մարդու բնական ունակությունը, որ հատուկ է մարդուն բնությունից, — անմիջապես ավելացնում է, թե բնությունից ասելով պետք է հասկանալ «աստվածային զորությունից»: Այսպիսով՝ թե՛ Ռընանը և թե՛ Մաքս Մյուսլերը լեզվի ծագման մասին արտահայտած իրենց կարծիքներով հանգում են աստվածաշնչի առասպելին ու գլորվում տերտերականության գիրկը, որ, սակայն, ցույց չի տրված հեղինակի կողմից: Համենայն դեպս, շարադրանքի պարզունակության մեջ էլ դրսևորվում է Հ. Աճառյանի հեգնական վերաբերմունքը, որից ընթերցողը հեշտությամբ կարող է անհրաժեշտ եզրակացության հանգել:

Ուշագրավ է հեղինակի քննությունը առարկայի և նրա բառային անվանման կապի հարցի վերաբերյալ: Հայտնի է, որ այդ հարցը շատ է զբաղեցրել հին հույն փիլիսոփաներին, ինչպես և նոր ժամանակների լեզվաբաններին: Բերելով բազմաթիվ փաստեր ու փաստարկներ՝ հեղինակը ճիշտ կերպով գտնում է, որ առարկայի ու նրա բառային անվանման մեջ բնական կապ չկա: Ճիշտ նույնպես բացատրում է նաև տրամաբանական կապի գոյությունը: Հիմնականում համաձայն լինելով այս վերջին դրույթին, անհրաժեշտ ենք համարում ասել հետևյալը. վերջին ժամանակներս այդ խնդիրը շոշափել են շատ լեզվաբաններ և, ընդհանուր առմամբ, ճիշտ կերպով են բացասել բառային անվանման և առարկայի միջև եղած տրամաբանական կապը, սակայն դրա հետ միաժամանակ, այդ գրույթը այժմ հասցված է այնպիսի բացարձակության, որ նույնքան սխալ է, որքան և հակառակ գրույթը: Այդ գրույթը գիտականորեն ճիշտ է այն դեպքում, երբ անհրաժեշտ վերապահում է արվում, այսինքն՝ երբ նա վերաբերում է ամենանախնական, լեզվի առաջացման պրոցեսում ստեղծված բառարմատներին. մյուս բոլոր բառերը իրենց իմաստով տրամաբանորեն կապված են իրենց նշած

առարկաների հետ, այսինքն՝ նրանք արտահայտում են առարկաների էությունը, գերը, հատկությունը կամ հատկանիշը և այլն, այնպես, ինչպես որ գիտակցվում են դրանք հասարակության կողմից: Իրբև օրինակ առենք մառդ և ինֆնաթիո բառերը. իհարկե, այդ բառերի կազմում եղած հնչյունները որևէ բնական կամ տրամաբանական կապ չունեն մարդ-էակի կամ ինքնաթիռ-առարկայի հետ. սակայն այդ բառերը, որպես անուններ, հատկացված են դրանց միանգամայն գիտակցաբար ու տրամաբանորեն և արտահայտում են այն, ինչ որ մարդկանց կողմից ըմբռնված է որպես դրանք բնորոշող հատկանիշներ. մառդ ստուգաբանորեն նշանակում է մահկանացու, իսկ ինքնաթիռ՝ ինքնին թռչող. հետևաբար՝ հասարակության կողմից դրանք գիտակցվել են այդպե՛ս և այդ պատճառով էլ ստացել են այդ անվանումները: Նշանակում է, երբ ասվում է, թե բառանվանման և նրա նշանակած առարկայի միջև տրամաբանական կապ գոյություն չունի, ապա՝ պետք է նկատի ունենալ ամենանախնական բառարմատները, որոնց ծագումը և նախնական իմաստները (բնիմաստները) դեռևս լուսաբանված էլ չեն:

Վերջապես՝ հնչյունային լեզվի առաջացման հարցը քննելիս հեղինակը նախ խոսում է այն մասին, թե ինչու մարդիկ սկսեցին խոսել հնչյունային լեզվով և ոչ թե շարժուձևերի լեզվով, և թվում է երկու պատճառ. ա) շարժուձևերի լեզուն կարելի էր օգտագործել որոշ տարածության վրա և տեսանելիության պայմաններ ունեցող վայրում, բ) նրանով կարելի էր հաղորդակցվել միայն ցերեկը: Այս երկու պատճառաբանություններն էլ, թեև ճշմարիտ, բայց երկրորդական են. հիմնական պատճառն այն է, որ շարժուձևերի «լեզուն» ինքնուրույն լեզու, հասարակական հաղորդակցման ինքնուրույն միջոց չէ, այլ հնչյունական լեզվին օժանդակ միջոց, որ գոյություն ունի միայն հնչյունային լեզվի հետ, և ոչ առանց նրան: Ուստի և շարժուձևերի լեզուն չի կարելի դիտել որպես նախնական հաղորդակցության միջոց, որը հետագայում փոխարինվեց հնչյունային լեզվով, այլ միայն՝ որպես հնչյունային լեզվի հետ առաջացած, նրան սպասարկող, նրան ենթարկվող և նրանով պայմանավորված մի միջոց: Այնուհետև, հեղինակը՝ թվելով շարժուձևերի «լեզվի» թերությունները՝ եզրակացնում է, թե այդ թերությունները տեսնելով մարդիկ մտածեցին օգտագործել ականջն ու ձայնը, խորհելով գտան հաղորդակցման հնչյունային միջոցը և հնարեցին լեզուն: Այսպիսի մոտեցումն, իհարկե, ճիշտ չէ. սրանից այն սխալ պատկերացումն է ստացվում, թե մարդը մարդ գարձավ, խոսելու՛ իր

և դրա դեմ առարկում են, ասելով թե «բառը գաղափարի նախապայման համարել այնպիսի անհեթեթություն է, ինչպես որ, ասենք՝ թե գրությունը գաղափարի նախապայմանն է: Բառ և գրություն իբր միևնույն բաներն են. առաջինը գաղափարի ձայնական պատկերացումն է, երկրորդը՝ նշաններով, որի լավագույն օրինակն է գաղափարագիրը, որը և հաճախ ավելի լավ է պատկերացնում գաղափարը, քան հնչական գրությունը» (էջ 88): Այս առարկությունը ոչ միայն սխալ է ինքնին, այլև լեզվի ու մտածողության միասնությունը տեսությունը միանգամայն աղավաղված ձևով է բացատրում: Ասել, թե առանց լեզվի չկա մտածողություն, առանց բառերի չի կարելի մտածել, չի նշանակում ասել, թե բառը գաղափարի նախապայմանն է: Իհարկե, միամտություն կլինեք կարծել, թե նախ ստեղծվում է բառը առանց որևէ գաղափարի, այսինքն՝ առանց իմաստի, և հետո նրա մեջ որևէ առարկայի, երևույթի և այլնի գաղափար է դրվում: Բայց նույն ձևով էլ չի կարելի կարծել, թե մարդկանց գլխում ստեղծվում է ինչ-որ գաղափար, ավելի ճիշտ՝ հասկացություն, առանց բառային ձև, առանց բառային անվանում ստանալու, աննյութ ու անձև մնում նրանց մտածողության մեջ և հետո միայն ստանում բառային անվանում: Իրականում «գաղափարը», այսինքն՝ առարկայի, երևույթի և այլնի հասկացությունը և նրա բառային անվանումը միաժամանակ են հանդես գալիս: Գիրն այս հարցում հակառակն ապացուցելու կովան չի կարող լինել, որովհետև նա պայմանական նշաններով հաղորդում է հոդավոր լեզուն, մինչդեռ բառերը պայմանական նշաններ չեն:

Ճիշտ կերպով եզրակացնելով, որ լեզուն և մտածողությունը միասնություն են կազմում, հեղինակը, այնուամենայնիվ, իր կողմից մի հարց է առաջադրում և անպատասխան թողնում այն. «Լինում է երբեմն,—ասում է հեղինակը,—որ մարդ զգում է մի բան, բայց չի գտնում բառ՝ արտահայտելու համար, և սկսում է երկար դարձվածքներով իր միտքը արտահայտել: Դիտեցե՛ք վերջալույսը, որտեղ կան հարյուրավոր երանգներ, գույների զանազան նրբություններ, այդ բոլորը մենք տեսնում, զանազանում և տարբերությունը ըմբռնում ենք, բայց անունը չգիտենք: Շատ անգամ մարդ զգում է մի բան, ասում է՝ «մի բան եմ լինում», բայց չգիտի բառը, որպեսզի արտասանե: Արդյոք դա նշանակո՞ւմ է, թե գաղափարը կա, բայց բառը չկա: Այսպես է լինում նաև բանաստեղծական ներշնչումների, երաժշտական մի գեղեցիկ հատվածի ունկնդրության ժամանակ, երբ մարդ զգում է հոգեկան զանազան զգացմունքներ, ապ-

րումներ, մինչև իսկ գրիչը ձեռքն է առնում թղթի վրա գրելու համար այն բոլորը, բայց անկարող է, բառերը իրեն պակասում են կամ շատ տկար կերպով են թարգմանում այդ բոլորը, ինչ որ ներսում զգում է: Արդյոք կա գաղափար կամ միտք, իսկ բառը կամ լեզուն չկա՞» (էջ 91):

Այս հարցադրումը, որ նա անպատասխան է թողել, ըստ էության կասկածի տակ է առնում իր իսկ ընդունած սկզբունքը՝ լեզվի ու մտածողության միասնության մասին և օբյեկտիվորեն դուռ բացում առանց լեզվի, մերկ մտքերի գոյության իդեալիստական տեսության առջև: Հիրավի, կարելի է կարծել, թե հեղինակի կողմից թվարկված դեպքերում կա միտքը, բայց լեզուն չկա: Ո՛չ, չի կարելի: Եթե մենք զգում ենք ինչ-որ բան, բայց չենք կարողանում ասել լեզվի օգնությամբ, այդ նրանից է, որ մենք մեր զգացումն իսկ որոշակիորեն չենք գիտակցում, և չգիտենք, թե պարզապես ի՞նչ ենք զգում: Երբ մենք տեսնում ենք նոր առարկա, թեև նրա անունը չգիտենք, բայց մեր լեզվական պաշարը մեզ հնարավորություն է տալիս բառերի օգնությամբ այն տարբերակել ուրիշ առարկաներից. մենք ասում ենք «այն նոր իրը, նոր մեքենան» և այլն, և այլն, որով տարբերում ենք այդ նորը մեր արդեն ճանաչած իրերից, որոնք այդպես չեն կոչվում, այլ իրենց անուններով: Երբ տեսնում ենք հրաշագեղ վերջալույսը և հիանում նրա բազմերանգ նրբություններով, մենք ընկալում ենք մեր տեսողությամբ, պատկերացում ստանում, բայց մենք չենք գիտակցում, թե որոշակիորեն ինչ երանգներ են դրանք, մեզ պակասում են այդ երանգների հասկացությունները և դրանց բառ-անվանումները, ուստի և չենք կարողանում խոսել նրանց մասին, իսկ այդ նշանակում է, թե չենք կարողանում նաև ամբողջական միտք կազմել, այլ միայն պատկերացնում ենք: Երբ, վերջապես, ներշնչված «բանաստեղծը» գրիչ է առնում ձեռքը և չի կարողանում արտահայտել իր հույզերը, այդ նրանից է, որ նա ինքն էլ որոշակիորեն չի գիտակցում իր հույզերը, որ այդ հույզերը միայն հոգեկան ապրումներ են, որոնք դեռ մտքերի չեն վերածվել: Հենց սրա համար է, որ ասում են, թե նա է լավ գրում, ով լավ գիտե, թե ինչ է գրում և ինչ է ուզում ասել: Հետևաբար, թվարկված դեպքերից ոչ մեկի ժամանակ էլ առկա չէ լեզվական թաղանթից զուրկ ինչ-որ միտք: Հենց այն հանգամանքը, որ նոր առարկա ստեղծելով, նրա անունը չիմանալու դեպքում մենք դիմում ենք լեզվական այլևայլ միջոցների, կամ զանազան բառերի, ապացուցում

է, որ նրանց մասին մտածում ենք դարձյալ լեզվի, մեր իմացած բառերի և լեզվի ունեցած միջոցների օգնությամբ:

Գիտական մեծ արժեք են ներկայացնում «Ներածութեան» այն գլուխները, որոնց մեջ քննության են առնվում՝ լեզուն որպես հասարակական երևույթ, լեզվի փոխանցումը, լեզվի էվոլյուցիան, լեզվի կենսաբանությունը: Հեղինակն իրեն հատուկ բարեխղճությամբ ու մանրակրկիտ պրպտումներով կուտակած հարուստ փաստերով քննության է առնում հիշյալ խնդիրները և հիմնականում ճիշտ եզրակացությունների հանգում: Բնորոշելով լեզուն որպես հասարակության հաղորդակցման միջոց՝ հեղինակը փաստերով ցուցադրում է լեզվի ընդհանրությունը, նրա համաժողովրդական բնույթի էությունը՝ հասարակական կյանքի տարբեր պայմաններում, ցույց տալիս այդ ընդհանրության աստիճանը՝ տարբեր հասարակական-քաղաքական հանգամանքներում: Ճիշտ կերպով վերլուծելով լեզվական փաստերը՝ հեղինակը լեզվական հարուստ տվյալներով հերքում է լեզվի դասակարգայնության ոչ մարքսիստական տեսությունը և կանգնում այն ճշմարիտ սկզբունքի վրա, որ դասակարգային լեզուներ գոյություն չունեն, որ լեզուն դասակարգային երևույթ չէ:

Անցնելով լեզվի՝ սերնդից սերունդ փոխանցվելու և լեզվի վարպացման հարցերին՝ Հ. Աճառյանը բազմաթիվ փաստերով ու խոր վերլուծություններով կարողանում է ճիշտ պատկերացում տալ այդ մասին: Այստեղ, սակայն, կարևոր է քննադատաբար մոտենալ լեզվի վարպացման մասին նրա ունեցած կոնցեպցիային: Վերը մենք ասացինք արդեն, որ Աճառյանը լեզվի վարպացման հարցում հետեւում է, այսպես կոչված, լեզվաբանական անընդհատականության տեսությանը: Այս տեսության էությունն այն է, որ ընդունելով լեզվի էվոլյուցիոն զարգացումը, բացասում է լեզվի որակական անցումները՝ Ստացվում է այնպես, որ լեզուն անընդհատ ձևափոխություններ է կրում, բայց երբեք որակական անցումներ չի կատարում. նոր լեզուն ոչ այլ ինչ է, եթե ոչ հին լեզուն՝ ձևափոխված վիճակում: Այսպես, օրինակ, այդ տեսության հիմնադիրներից մեկը՝ Անտուան Մեյեն, խոսելով իտալերեն և իսպաներեն լեզուների մասին, որոնք, ինչպես հայտնի է, առաջացել են ժողովրդական լատիներենից, եզրակացնում է, որ «երանջր լատիներեն լեզվի երկու ժամանակակից ձևերն են: Փրանսերենը թեև պակաս չափով է նրանց նման, ոչ այլ ինչ է, եթե ոչ լատիներեն լեզուն, միայն ավելի ևս փոփոխ-

ված»¹: Ճիշտ այդպես էլ Հ. Աճառյանը գտնում է, որ «լեզվի կյանքը լոկ բարեշրջական է», որ լեզուն գտնվում է անընդհատ էվոլյուցիայի պրոցեսում, առանց որակական անցումների: Այս տեսության սխալն այն է, որ նա, ժխտելով որակական անցումները լեզվի մեջ, կամա թե ակամա նույնացնում է որակապես իրարից տարբեր հին և նոր լեզուները, ասենք, լատիներենն ու իտալերենը կամ իսպաներենը, մինչդեռ դրանցից յուրաքանչյուրը իր քերականական կառուցվածքով ու բառային հիմնական ֆոնդով մի ինքնուրույն լեզու է, որակապես տարբեր մյուսից, չնայած այն բանին, որ վերջին երկուսն առաջացել են լատիներենից:

Մյուս կողմից՝ ամեն ինչ հանգեցնելով ձևերի փոփոխության, այդ տեսությունը, ըստ էության, հանգում է ֆորմալիզմին և անտեսում լեզվի զարգացման պրոցեսում բառային կազմի, բառերի իմաստների ու քերականական իմաստների փոփոխությունների, հսկայական դերը: Լեզվի մեջ կատարվող էվոլյուցիոն փոփոխություններով, նոր որակի տարրերի աստիճանական կուտակումով և հին որակի տարրերի աստիճանական մահացումով տեղի է ունենում լեզվի անցումը որակական մի վիճակից մի նոր որակական վիճակի, ըստ որում այդ փոփոխություններն ընդգրկում են ոչ միայն լեզվի ձևերը, այլև՝ բառերը, բառերի իմաստներն ու քերականական իմաստները, հնչյունները, շարահյուսությունը, մի խոսքով՝ լեզուն իր բոլոր մասերով:

Լեզվի զարգացման խնդրի հետ է կապվում նաև միասնական, համամարդկային լեզվի հարցը, որ, սակայն, քննության է առնվում լեզվի, որպես հասարակական երևույթի, ուսումնասիրությանը նվիրված գլխում: Հեղինակը հանգամանորեն խոսում է այդ հարցի մասին, հիշում գիտնականների ջանքերը՝ մի համաշխարհային լեզու ստեղծելու ուղղությամբ, ծանոթացնում արվեստական լեզուներից մի քանիսին, նույնիսկ տալիս էսպերանտոյի համառոտ քերականությունը և ճիշտ կերպով եզրակացնում, որ բուրժուական լեզվաբանության մեջ նշված միջոցներից ոչ մեկն էլ չի կարող ընդունվել միասնական համաշխարհային լեզուն ստեղծելու համար: Բայց հենց այստեղ էլ նա վերջակետ է դնում և փակում այդ հարցի քննությունը, առանց պատասխանը տալու: Այդպես էլ անհայտ է մնում, թե, վերջապես, պետք է ստեղծվի համամարդկային մի լեզու, թե ոչ, և եթե այո՝, ապա ինչպե՞ս, ի՞նչ միջոցով:

¹ А. Мейе, Введение в сравнительное изучение индоевропейских языков, М.—Л., 1938, էջ 50:

Մեծ հետաքրքրություն է ներկայացնում «Լեզվի կենսաբանությունը» գլուխը, որ նվիրված է լեզուների ձևաբանական դասակարգմանը, ձևաբանական տարբեր տիպերի քննությանը և յուրաքանչյուր տիպի համար որևէ բնորոշ լեզվի քերականության համառոտ նկարագրությանը: Այստեղ հեղինակը միանգամայն իրավացի կերպով քննադատության է ենթարկում այն տեսակետները, որոնց համաձայն լեզվի ձևաբանական տիպերը իբրև թե ներկայացնում են մտածողության, ժողովրդի կամ ազգի մտավոր զարգացման աստիճանը: Պետք է ավելացնել միայն, որ լեզուների ձևաբանական տարբեր տիպերը (անջատական, կցական և այլն) ոչ միայն մտածողության զարգացման աստիճանը չեն որոշում, այլև չափանիշ չեն նաև լեզվի զարգացած կամ «անզարգացած», «նախնական» լինելու: Ժամանակակից կյանքը ցույց է տալիս, որ յուրաքանչյուր լեզու էլ, լինի նա անջատական, կցական, թե թեքական, հնարավորություն ունի արտահայտելու այն ամենը, ինչ որ մտածում է նրանով խոսող ժողովուրդը: Ինքը հեղինակն էլ այս բանը հաստատում է հետևյալ համեմատության մեջ. «Եթե երեք հոգի ունենան հավասարապես հարյուրական ուրբի, մեկը ոսկով, մյուսը արծաթով, մյուսը պղնձով, չի կարելի ասել, թե մեկը մյուսից հարուստ է, երեքն էլ հավասար են, միայն թե մեկի բեռը ծանր է, մյուսինը՝ թեթև» (էջ 292): Իրոք, եթե մի լեզու կցական է, մյուսը՝ անջատական, երրորդը՝ թեքական, չի կարելի ասել, թե նրանցից մեկը զարգացած է, մյուսը՝ անզարգացած: Երեքն էլ կարող են հավասարապես զարգացած լինել, ինչպես, ասենք թե, անջատական չինարենը, կցական ֆրանսերենը և թեքական գերմաներենը: Այլ կերպ չի էլ կարելի մոտենալ հարցին, որովհետև լեզվի զարգացման աստիճանը որոշվում է ո՛չ թե ձևաբանական տիպով, այլ բառային կազմի հարստությամբ ու բազմակողմանիությամբ: Ի դեպ, մի այլ առիթով, խոսելով լեզվի հարստության մասին, հեղինակն այն կարծիքն է հայտնում, թե «լեզվի հարստությունը նրա բառերի քանակն է» (էջ 287): Այս մոտեցումը միակողմանի է. բառերի լոկ քանակային շատությունը դեռևս լեզվի հարստության չափանիշը չէ. հնարավոր է, որ հոմանիշների առատությամբ մեծանա բառերի քանակը, բայց դրա հետ միասին, բազմաթիվ երևույթների հասկացություններ արտահայտելու համար բառեր չլինեն: Այդ պատճառով էլ լեզվի հարստությունը որոշվում է բառային կազմի ոչ միայն քանակային կողմով, այլ, որ նույնքան կարևոր է, բազմակողմանիությամբ: Խոսելով անջատական լեզուների, առանձնապես՝ չինարենի մասին, հե-

ղինակը գտնում է, որ չինարենում «չկան նաև խոսքի մասեր. և միևնույն բառը միևնույն ձևով կարող է լինել գոյական, ածական և բայ, բայց նաև մասնիկ կամ վերջավորություն» (էջ 204): Այս տեսակետը ճիշտ չէ. հեղինակը տվյալ դեպքում հետևում է չինագետների այն ներկայացուցիչներին, որոնք ֆորմալիզմի դիրքերից ելնելով և խոսքի մասերի դասակարգումը բացառապես ձևական հատկանիշների վրա հիմնելով՝ ժխտում են խոսքի մասերի գոյությունն ու տարբերակումը չինարենում: Իրականում չինարենի մեջ խոսքի մասերի դասակարգումը հիմնված է ոչ թե բառերի ձևի, այլ ձևաբանական, շարահյուսական և իմաստային առանձնահատկությունների վրա:

Հետաքրքիր է այն հատվածը, որի մեջ քննության է ենթարկված լեզվի մաքրության հարցը. հեղինակը մեջ է բերում տարբեր լեզվաբանների կարծիքը այդ մասին և քննում այդ կարծիքները, մերժում կամ հաստատում դրանք լեզվական հարուստ փաստերով: Անցնելով այնուհետև հայերենի մաքրության հարցին, հեղինակը ընդհանուր առմամբ ճիշտ մոտեցում է ցուցաբերում բարբառային և նորամուտ փոխառյալ բառերի դերին: Սակայն մի կարևոր հարցում նա ոչ ճիշտ տեսակետ է պաշտպանում: Հեղինակի կարծիքով՝ «եթե մի օտար բառ գործածված է գրաբարի մեջ, նա այլևս օտար չէ. այսպես՝ պատկեր, սնտուկ և այլն» (էջ 359). սրա սխալն այն է, որ ժամանակակից հայերենի համար չափանիշ է դարձնում գրաբարը. որևէ բառի՝ գրաբարում գործածված լինելը դեռևս չի նշանակում, թե նա մեր ժամանակակից գրական լեզվի համար օտար չէ. օրինակ՝ ասպաստան, ատր, դեն և այլ պարսկերեն փոխառություններ գործածված են գրաբարում և այն էլ ոչ սակավ, բայց և այնպես նրանք օտար են մեր արդի գրական լեզվի համար: Ավելին: Նույնիսկ ոչ փոխառյալ «բնիկ» հայերեն բառերը, եթե պատմականորեն դուրս են եկել գործածությունից և չեն պահպանվել մեր լեզվում, դարձյալ օտար են ու խորթ մեր արդի գրական լեզվին (օրինակ՝ ագանիլ «գիշերել», ամալ «թափել», առն «խոյ» և այլն): Այսպիսով՝ գրաբարում գործածված լինելը չափանիշ չէ տվյալ բառի ոչ օտար, հայերենին հարազատ դարձած լինելու համար: Ժամանակակից հայերենին հարազատ են, օտար ու խորթ չեն այն բառերը, որոնք հաստատապես մտել են նրա բառային կազմի մեջ, գործածվում են խոսողների և գրողների գոնե մեծամասնության կողմից: Սա չի նշանակում, թե նոր փոխառված օտար բառերը չեն կարող այդպիսին դառնալ, քանի որ նրանք սկզբից գործածվում են

դեռևս նեղ շրջանակներում և ընդհանուր ճանաչում չեն գտել: Այդպիսի բառերը, ինչպես գիտենք, նորաբանությունների (նեոլոգիզմների) կարգին են պատկանում և ժամանակի ընթացքում կարող են ընդհանուրի ճանաչմանն արժանանալ և մտնել լեզվի ամենագործածական ու ամենակենսունակ բառերի շարքը:

Առանձնապես կարևոր են «Օտար ազդեցություններ» և «Անհատական կամքը լեզվի մեջ» գլուխները. հեղինակը հսկայական լեզվաբանական նյութի խոր ու մանրակրկիտ քննությամբ ցույց է տալիս, որ լեզուների խաչավորումից, նրանց փոխազդեցություններից, նրանց ձուլումից չի կարող առաջանալ ինչ-որ նոր, խառնածին լեզու: Նա լեզվական հարուստ փաստերով ցույց է տալիս, որ առհասարակ խառնածին լեզու չկա: Այս փաստը հատկապես կարևոր է հայազիտության համար, որովհետև, ինչպես տեսանք, ոմանք հայերենն էլ համարել են խառնածին լեզվի տիպար՝ Փաստերի խոր ու բազմակողմանի վերլուծությամբ հեղինակը մի անգամ ևս պացտուցում է, որ հայերենը խառնածին լեզու չէ, որ նա երկցեղ բնույթ չունի, այլ պարզապես հնդեվրոպական լեզու է, որ դարերի ընթացքում հարստացրել է իր բառային կազմը, մի կողմից՝ իր սեփական բառակազմություններով, մյուս կողմից՝ այլ լեզուներից կատարած փոխառություններով: Անդրադառնալով լեզվի զարգացման, մշակման ու հարստացման գործում անհատի ունեցած դերին, հեղինակը ճիշտ կերպով ցույց է տալիս, որ անհատների դերը սահմանափակվում է նորակերտ բառեր կազմելով և չի թափանցում լեզվի բերականության մեջ:

Հատորի երկրորդ մասը, ինչպես ասացինք, ընդգրկում է լեզուների դասակարգումը: Այստեղ հեղինակը նախ կանգ է առնում այն հարցի վրա, թե ինչ է լեզուների ցեղակցությունը և ինչպես է առաջացել այն: Բազմաթիվ օրինակներով ցույց տալով տարբեր լեզուների միջև եղած ընդհանրությունները՝ հեղինակը քննում է, թե ինչից կարող էին առաջանալ այդ ընդհանրությունները և հերքելով մի շարք վարկածներ, հանգում այն եզրակացության, որ այդ ընդհանրությունները հետևանք են ընդհանուր ծագման. այստեղից էլ, ահա, բխում է լեզուների ցեղակցության սահմանումը. «Յեղակից են կոչվում այն լեզուները, որոնք միևնույն ծագումն ունեն, ընդհակառակը՝ ցեղակից չեն այն լեզուները, որոնք տարբեր ծագում ունեն: Ավելի գիտական բացատրությամբ՝ լեզուների ցեղակցությունն ասելով հասկանում ենք այն պատմական իրողությունը, որով մի լեզու դարերի ընթացքում, աստիճանական փոփոխությամբ

հասել է մի վիճակից մի ուրիշ վիճակի» (էջ 451): Այսպես ճիշտ սահմանելով լեզուների ցեղակցությունը, հեղինակն, այնուամենայնիվ, այդ երևույթը բացատրում է նախալեզվի տեսության համաձայն: Նա այն տեսությանն է հետևում, որի համաձայն ցեղակից լեզուները երբեմնի նախալեզվի շարունակությունն ու ճյուղավորումներն են: Քիչ ատ այդ տեսության, նախնական ժամանակներում գոյություն է ունեցել, օրինակ՝ հնդեվրոպական միասնական մի ժողովուրդ, որ ապրել է մի որոշ տեղում, հեղինակի կարծիքով՝ այժմյան Ռուսաստանում, հետագայում այդ ժողովուրդը մասնատվել է, նրա հատվածները գաղթել, տարածվել, բնակություն են հաստատել Ասիայի ու Եվրոպայի զանազան մասերում՝ կազմելով առանձին ժողովուրդներ, որոնցից էլ հետագա մասնատումներով առաջացել են դարձյալ նորանոր ժողովուրդներ և այսպես գոյացել են «հնդեվրոպական ժողովուրդները»:

Սրան համապատասխան էլ այդ նախնական միասնական ժողովրդի լեզուն՝ հնդեվրոպական նախալեզուն՝ իր ճյուղավորումներն է առաջացրել, տարբեր տեղերում ու տարբեր հատվածների մոտ տարբեր ձևափոխությունների ենթարկվել և առաջ բերել հնդեվրոպական ցեղակից լեզուները, որոնք ըստ հեղինակի, ոչ այլ ինչ են, եթե ոչ հնդեվրոպական նախալեզվի տարբեր էվոլյուցիաները: «Ձանազան տվյալներից հասկացվում է, — ասում է հեղինակը, — որ հնդեվրոպական առաջին ժողովրդի գաղթականությունները ընդհանրապես եղել են ոչ թե ոստումներով կամ աշխարհակալական հեռազնաց արշավանքներով, այլ տարածմամբ ու հանդարտ առաջխառնումով: Ժողովրդի ու լեզվի այս հաջորդական տարածումը պատճառ է դարձել միությունը խախտելու և մի հնդեվրոպական ժողովրդից ու լեզվից նորանոր ժողովուրդներ ու լեզուներ դուրս բերելու» (էջ 466):

Հասկանալի է, որ ժողովուրդների ու նրանց լեզուների պատմական պրոցեսի այսպիսի պարզունակ ու միակողմանի բացատրությունը ընդունելի չէ: Իհարկե, չի կարելի ժխտել գաղթների դերը ժողովուրդների կազմավորման պրոցեսում, և մարքսիզմի կլասիկները շատ հաճախ են շեշտել պատմության ընթացքում տեղի ունեցած գաղթների հսկայական դերը: Սակայն, որքան էլ մեծ լինի այդ դերը, այնուամենայնիվ, չի կարելի ժողովուրդների ողջ պատմությունը վերածել գաղթների ու տեղափոխությունների պատմության՝ անտեսելով ժողովուրդների կազմավորման ներքին պրոցեսի պատմական օրինաչափությունները: Ժողովուրդների առաջացումը կա-

պելով «Տնդեվրոպական նախացեղի» մասնատման ու գաղթերի հետ՝ հեղինակն այդ ամբողջ պրոցեսը դիտում է որպես արդեն իսկ կազմավորված, մեկընդմիջտ պատրաստի ժողովրդի գաղթականություն և դրանով իսկ անտես անում յուրաքանչյուր առանձին ժողովրդի կազմավորման պատմությունը: Մինչդեռ իրականում յուրաքանչյուր ժողովրդի կազմավորումը մի կոնկրետ պատմական իրողություն է իր հատուկ պայմաններով, առանձնահատկություններով ու դրսևորումներով: Այսպես, օրինակ, ելնելով իր ընդհանուր դրույթից՝ հեղինակը գտնում է, որ հայ ժողովուրդն էլ «Տնդեվրոպացիներին» մի գաղթականությունն է, որն իբրև պատրաստի ժողովուրդ դուրս է եկել «Տնդեվրոպական նախահայրենիքից», ներգաղթել է Հայաստան և, իրեն ձուլելով տեղական ցեղերին ու տոհմերին, շարունակել իր գոյությունը յուր նոր հայրենիքում: Հայ ժողովրդի կազմավորման այսպիսի բացատրության հետ համաձայնել չի կարելի: Անշուշտ մենք չենք ժխտում այն փաստը, որ հայ ժողովրդի մեջ մտել են եկվոր Տնդեվրոպական ցեղեր և որ, նույնիսկ, այդ ցեղերը (կամ ցեղախումբը) կարող են նշանակալից դեր խաղացած լինել հայ ժողովրդի կազմավորման պրոցեսում, մասնավանդ, որ լեզվական տվյալներն էլ դրա օգտին են խոսում: Բայց այդ դեռ չի նշանակում, թե հայ ժողովուրդը, իբրև այդպիսին, եկել է ինչ-որ տեղից իբրև պատրաստի, կազմավորված ժողովուրդ: Որքան էլ շատ լինեն հայ ժողովրդի կազմի մեջ մտած եկվոր ցեղերը, և ինչպիսին էլ լինի նրանց խաղացած դերը, հայ ժողովուրդը, որպես այդպիսին, կազմավորվել է պատմական Հայաստանում, որ իր՝ հայ ժողովրդի և՛ նախահայրենիքն է, և՛ հայրենիքը: Ինչ վերաբերում է ցեղակից լեզուների առաջացմանը, ապա այդ էլ հեղինակը բացատրում է ելնելով լեզվաբանական անընդհատականության տեսությունից, որը, ինչպես վերը տեսանք, էվոլյուցիոնիզմի ցայտուն արտահայտությունն է լեզվաբանության մեջ: Անշուշտ մարքսիստական լեզվաբանությունը ընդունում է լեզուների ցեղակցությունը, դիտելով այն իբրև ցեղակից լեզուների մեկ ընդհանուր աղբյուրից (նախալեզվից կամ հիմնալեզվից) առաջացած լինելու արդյունք: Սակայն, ընդունելով ցեղակից լեզուների առաջացումը մեկ ընդհանուր աղբյուրից՝ մարքսիստական լեզվաբանությունը այդ երևույթը դիտում է իբրև պատմական իրողություն և լուսաբանում է այն պատմական մատերիալիզմի հիմունքներով: Մարքսիստական լեզվաբանությունը գտնում է, որ ցեղակից լեզուների հիմքում, իրոք, ընկած է մեկ ընդհանուր լեզու, որ լեզվաբանության մեջ կոչվում է նախալեզու

կամ հիմնալեզու: Այդ լեզուն տվյալ լեզվական ընտանիքի մեջ մտնող լեզուներին ծառայել է որպես հիմք, որի պատմական զարգացմամբ, ժողովուրդների կազմավորման պրոցեսին զուգընթաց կազմավորվել են առանձին ժողովուրդների լեզուները: Ցեղակից լեզուները, ունենալով մեկ ընդհանուր աղբյուրից՝ հիմնալեզվից ստացած հիմքը, զարգացրել, հարստացրել են այդ հիմքը յուրաքանչյուրն իր ուրույն ընթացքով, իր զարգացման ներքին օրինաչափություններին համապատասխան, իր ուրույն պատմական պայմաններում: Այդ ընդհանուրին նրանցից յուրաքանչյուրը ավելացրել է պատմական զարգացմամբ ստեղծած իր սեփականը, այդ ընդհանուրից կորցրել այն, ինչ որ պատմական զարգացման պրոցեսում կորցրել է իր անհրաժեշտությունը, որով և ստեղծվել են ցեղակից լեզուների միջև եղած տարբերությունները: Նշանակում է՝ ընդունելով լեզուների ցեղակցությունը և նրանց միջև եղած ընդհանրությունները մեկ ընդհանուր աղբյուրից դիտելով՝ չպետք է ցեղակից լեզուները այդ ընդհանուր աղբյուրի՝ մի նախնական լեզվի պարզ շարունակությունն ու ձևափոխությունները համարել, այլ ընդհանուր հիմքի վրա զարգացած ինքնուրույն որակներ՝ իրենց ընդհանրություններով ու տարբերություններով, իրենց զարգացման ներքին օրինաչափություններով:

Անցնելով աշխարհի լեզուների դասակարգմանը՝ հեղինակը Թի առ մի թվարկում է լեզվական ընտանիքները, դրանցից յուրաքանչյուրի մեջ մտնող լեզուները և համառոտ տեղեկություններ տալիս ինչպես այդ լեզուներով խոսող ժողովուրդների, այնպես էլ իրենց իսկ՝ լեզուների մասին: Այս մասի առավելությունն այն է, որ հեղինակը ամփոփում է աշխարհի լեզուների դասակարգման ուղղութայնամբ շուրջ մեկ և կես հարյուրամյակի ընթացքում կատարվածը: Ըստ որում, սովետական լեզվաբանական գրականության մեջ այսպիսի ընդարձակությամբ դեռևս ոչ ոքի կողմից չի գրված ու նկարագրված աշխարհի լեզուների դասակարգումը: Այստեղ էլ պետք է նկատի ունենալ, սակայն, որ որոշ լեզուների պատկանելությունը այս կամ այն ընտանիքին դեռևս վերջնականապես լուծված չէ, և հեղինակի կողմից ընդունված կարծիքները մի քանի առանձին լեզուների վերաբերյալ առայժմ վիճելի են: Այսպես, օրինակ, հեղինակը ընդունում է այն տեսակետը, թե ճապոնեերենն ու կորեերենը մեկ ընտանիքի մեջ են մտնում, մինչդեռ այդ հարցը առայժմ վերջնականապես ճշտված չէ, և արևմտաեվրոպական լեզվաբաններից

շատերը գտնում են այժմ, որ այդ երկու լեզուների միջև ցեղակցական կապեր գոյություն չունեն:

Խիստ հետաքրքիր է, առանձնապես հայ ընթերցողի համար, այն գլուխը, որը նվիրված է նախալեզվի վերականգնման հարցին: Այստեղ հեղինակը հանգամանորեն ու շատ մատչելի կերպով շարադրում է պատմա-համեմատական մեթոդի սկզբունքները և հատկապես կանգ է առնում այդ մեթոդի ռեկոնստրուկտիվ դերի վրա՝ բազմաթիվ օրինակներով ցուցադրելով ու բացատրելով այն: Նկատի ունենալով, որ հայերեն լեզվով պատմա-համեմատական մեթոդի վերաբերյալ այդպիսի աշխատություն չկա, այս գլուխը կարելի է դիտել որպես օժանդակ ձեռնարկ բոլոր նրանց համար, ովքեր ուզում են ծանոթանալ այդ մեթոդին:

Աշխատությունը վերջանում է «Ընդհանուր նախալեզու» խորագիրը կրող գլխով, որի մեջ հեղինակը քննության է առնում այն տեսությունները, որոնց համաձայն՝ բոլոր լեզվաընտանիքներն էլ, իբր թե, իրենց հերթին առաջացել են մի ընդհանուր նախալեզվից, այնպես, ինչպես ցեղակից լեզուները՝ մեկ նախալեզվից: Այս հարցը առանձնապես քննության է առնվել XX դարի մի շարք եվրոպական լեզվաբանների կողմից: Հեղինակը շարադրում է այդ լեզվաբանների կարծիքները, քննարկում նրանց փաստարկները, որոնք հեղինակի հմուտ վերլուծություններով գրեթե անխտիր հերքվում են, և հանգում այն եզրակացության, որ ընդհանուր նախալեզվի տեսությունը իրական հիմքերից զուրկ է: Հեղինակի այս եզրակացությունը ճիշտ է: Իհարկե, չի կարելի լիովին բացասել առանձին ընտանիքների երբեմնի միասնության հարցը. այսպես, օրինակ, այժմ շատերը ընդունում են ուգրոֆինական, թյուրքական ու տունգուս-մանջուրական ընտանիքների նախնական միասնությունը. էնգելսը խոսում է հնդեվրոպացիների ու սեմականների բաժանման մասին, որից կարելի է ենթադրել, թե նա ընդունում էր այդ երկու ընտանիքների նախնական միասնությունը, ինչպես ընդունում են նաև լեզվաբաններից շատերը: Բայց այս բոլորը վերաբերում են առանձին, կոնկրետ լեզվական ընտանիքների վաղեմի միասնությանը. ինչ վերաբերում է ընդհանուր, մեկ համամարդկային նախալեզվին, որ սույն գրքի հեղինակը իրոնիայով կոչում է «նախատատ», ապա դա միայն որոշ լեզվաբանների կողմից առաջ քաշված վարկած է, որ զուրկ է գիտական ու պատմական հիմքից՝ և հանգում է աստվածաշնչական առասպելին:

Ինչպես տեսնում ենք, Հ. Աճառյանն իր այս աշխատության

մեջ խորապես քննության է առել լեզվաբանության ամենակարևոր պրոբլեմները և հիմնականում ճիշտ դրույթների հանգել: Նույնիսկ այն դեպքերում, երբ այս կամ այն հարցի մասին նա տեսական ոչ ճիշտ դրույթ է պաշտպանում, իր ուսումնասիրությունների մեջ վերջին հաշվով հանգում է ճիշտ եզրակացության՝ լեզվական երևույթների պատմական վերլուծությամբ: Այս տեսակետից առանձնապես հատկանշական է լեզվի զարգացման պատմական պրոցեսի նրա բացատրությունը: Վերը մենք ասացինք, որ լեզվի զարգացման հարցում Հ. Աճառյանը կանգնած է լեզվաբանական անընդհատականության տեսության դիրքերում և ցույց տվինք այդ տեսության սխալը. սակայն, շնայած դրան, իր ուսումնասիրությունների մեջ, լեզվական փաստերի խոր և բազմակողմանի վերլուծությամբ նա, մի կողմ թողնելով այդ տեսական դրույթը, ցույց է տալիս, թե ինչպես երկար դարերի ընթացքում տեղի ունեցող փոփոխություններով աստիճանաբար մահանում է հին լեզուն և «ծնունդ առնում», ձևավորվում նորը¹: Այս տեսակետից առանձնապես բնորոշ է Հ. Աճառյանի տեսությունը գրաբարի մահացման և միջին հայերենի գոյացման մասին: Փաստերի օբյեկտիվ վերլուծությամբ ու հայերենի պատմության խոր ու բազմակողմանի ուսումնասիրությամբ՝ նա ցույց է տալիս, թե ինչպես աստիճանական փոփոխություններով դարերի ընթացքում առաջանում է նոր որակի մի լեզու՝ միջին հայերենը, և մահանում է հին որակը՝ գրաբարը: Այս կարգի ուրիշ օրինակներ էլ կարելի է բերել, ցույց տալու համար, որ Հ. Աճառյանը որպես ուսումնասիրող հաճախ օբյեկտիվորեն կանգնում էր ավելի ճիշտ դիրքերի վրա, հեռանալով իր որդեգրած տեսական դրույթներից և տարերայնորեն մոտենալով մարքսիզմին՝ լեզվաբանության բնագավառում: Անցնելով սոցիոլոգիական դպրոցի բովից, իր վրա կրելով այդ ուղղության խիստ ազդեցությունը և մի շարք հարցերում մինչև իր կյանքի վերջն էլ կանգնած մնալով այդ ուղղության դիրքերում, այնուամենայնիվ, Հ. Աճառյանը մի կողմից՝ սովետա-

¹ Հ. Աճառյանի «Ներածության» մասին մի աշխատություն է գրել ոմն Անուշավան վրդ. Զղաչեան, «Հրաչնայ Աճառեան և իր «Լիակատար քերականությունը»» (վերլուծական և քննական փորձ մը ներածական հատորին), Նրուսաղեմ, 1960: Վերաշարադրելով գրքի բովանդակությունը, վարդապետ Զղաչեանը, ի միջի այլոց, գտնում է, թե Աճառյանը չի հարել մարքսիզմին, և դա դիտում է որպես զրական մի բան: «Վերլուծական ու քննական փորձի» հեղինակը չի կարողացել խորամուխ լինել Աճառյանի քննարկած հարցերի մեջ և չի կարողացել տեսնել, որ Աճառյանը շատ խնդիրների լուծման մեջ ինքեին հանգել է այն դրույթներին, որոնք ընդունված են մարքսիստական լեզվաբանության մեջ:

կան կարգերի օրոք ապրած էվոլյուցիայի, մյուս կողմից՝ լեզվական երևույթների բազմակողմանի, խորահմուտ օբյեկտիվ վերլուծությունների շնորհիվ կարողացավ ազատագրվել այդ դպրոցի սահմանափակվածությունից ու շատ հարցերի լուսաբանությունը մոտեցավ մարքսիստական լեզվաբանության հիմնական սկզբունքներին։ Այս տեսակետից էլ, ահա, նրա «Ներածություն»-ը, շնայած որոշ վիճելի կարծիքներին, գիտական մեծ արժեք է ներկայացնում բազմաթիվ հարցերի բազմակողմանի, խոր ու նշգրիտ քննությամբ և մի խոշոր ներդրում է սովետական լեզվաբանության բնագավառում։

Բ. Հայոց լեզվի պատմություն և պատմա-համաձայնական ֆեռակալություն.— 2. Աճառյանի հայագիտական ուսումնասիրությունների կարևորագույն բնագավառներից մեկը, եթե ոչ ամենակարևորը, եղել է հայոց լեզվի պատմությունն ու պատմա-համեմատական քերականությունը։ Իր երկարամյա գիտական գործունեության ընթացքում նա միշտ էլ զբաղվել է հայոց լեզվի պատմության հարցերով և իր հմուտ ուսումնասիրություններով լուծել հայոց լեզվի պատմական զարգացմանը սիրություններով լուծել հայոց լեզվի պատմական զարգացմանը վերաբերող շատ հարցեր։ Այս ուղղությամբ կատարած իր հետազոտություններն ամփոփված են «Հայոց լեզվի պատմություն» երկ-հատոր աշխատության մեջ (Ա մաս, 1940, Բ մաս, 1951)։ Նոր ժամանակներում շատ են գրել ու գրում են ուրիշ լեզուների պատմություն, որոնք, սակայն, իրականում այս կամ այն լեզվի պատմա-համեմատական կամ միայն պատմական քերականությունն են հանդիսանում։ Աճառյանի այս աշխատությունը բոլորովին այլ բնույթ ունի. այստեղ տրվում է նախ լեզվի բառամթերքի պատմությունը (Ա մաս, Բ մասի որոշ գլուխներ), ապա՝ հայերենի կրած փոփոխությունները իր պատմական զարգացման տարբեր շրջաններում և այդ շրջանների (վիպասանական, դասական կամ մեսրոպյան, հետմեսրոպյան, հունաբան հայերեն, միջին հայերեն, լատի-նաբան հայերեն, աշխարհաբար՝ բազմաթիվ բարբառներով հանդերձ) լեզվի նկարագրությունը (Բ մաս)։

Բառամթերքի ուսումնասիրության տեսակետից այս աշխատությունը օրգանական շարունակությունն է կազմում «Արմատական բառարանի» եթե «Արմատական բառարանում» ամփոփված են հայերեն արմատները և նրանց ստուգաբանությունը, ապա այստեղ այդ ստուգաբանությունների հիման վրա խմբավորված են բոլոր բառերն՝ ամենից առաջ ըստ իրենց ծագման, որով և նախ՝ պարզված է, թե ինչն է «թնիկ-հնդեվրոպական», ապա՝ թե օտար լեզու-

ներից հայերենն ի՛նչ ազդեցություն է կրել բառամթերքի կողմից։ Դրանցից յուրաքանչյուրի մեջ էլ բառերը դարձյալ ըստ իրենց նշանակության տարբեր խմբավորումների ենթարկելով, հեղինակը ցույց է տալիս, թե ի՛նչ արժեք են ներկայացնում նրանք հայ ժողովրդի տնտեսական, քաղաքական կյանքի պատմության համար, թե յուրաքանչյուր լեզվից փոխառած բառերը, յուրաքանչյուր լեզվի ազդեցությունը հայերենի վրա՝ ի՛նչ նշանակություն է ունեցել հայ ժողովրդի համար՝ քաղաքակրթության տեսակետից։ Բնականաբար բառացանկերը տալուց առաջ հեղինակը լուսաբանում է պատմական այն հանգամանքները, այն պայմանները, որոնց մեջ այս կամ այն լեզվից հայերենը ազդեցություն է կրել։ Առաջին հերթին հայերի նախապատմության ու «հնդեվրոպական նախահայերենից» գաղթելու մասին խոսելով՝ նա նկարագրում է հնդեվրոպացիների, ապա՝ հայերի քաղաքակրթության աստիճանը նախնական շրջանում, այնուհետև տալիս հայերեն այն բոլոր բառերը, որոնք հնդեվրոպական ծագում ունեն, այսինքն՝ «թնիկ» հայերեն են. այստեղ յուրաքանչյուր բառի դիմաց տրված են հնդեվրոպական վերականգրված նախաձևը և ցեղակից լեզուների մեջ եղած համապատասխան ձևերը։ Այնուհետև հեղինակն անցնում է ուրիշ լեզուների ազդեցությանը։ Բառամթերքի պատմության տեսակետից գիրքն ամփոփում է այն ամենը, ինչ որ կատարված է այդ ուղղությամբ հայերենի ուսումնասիրության մեջ, անշուշտ, այդ բոլորը պատմա-համեմատական մեթոդով քննության ենթարկելով և ընդունելով այն, ինչ որ գիտական է։

Աճառյանը հայագիտության հիմնական հարցերում, հատկապես հայերենի ցեղակցության խնդրում, Հյուբշմանի դպրոցին է հետևում։ Իբրև այս դպրոցի վերջին և մեծագույն ներկայացուցիչ, իր աշխատությունների, հատկապես «Հայոց լեզվի պատմության» մեջ նա ամփոփել է այն բոլոր արդյունքները, որոնք ձեռք են բերված հայերենի ուսումնասիրության մեջ այս դպրոցի տարբեր ներկայացուցիչների կողմից՝ ավելացնելով իր ուսումնասիրությունների արդյունքները։

Ա. հատորի մեջ առանձնակի կարևորություն են ներկայացնում «Հնդեվրոպական նախաշրջան» և «Հնդեվրոպական բարբառները և հայերենի գիբբը նրանց մեջ» գլուխները, որտեղ հեղինակը բնութ- թյան է առնում լեզվի պատմական զարգացման, լեզուների ցեղակցության, հայերենի և հնդեվրոպական լեզուների ցեղակցության ու ցեղակից լեզուների շարքում նրա գրաված դիրքի և նրա կազմա-

բաղաբաղկաբաղկան նշանակութեան ունեն (մեծ մասամբ երկրագործական են), ուստի և ցույց են տալիս նույն լեզուներով խոսող ժողովուրդների առանձին զարգացումը:

2. Հնե. կոկորդալին կ' և կ² հնչյունների դիմաց իտալական, կելտական և գերմանական լեզուները, ինչպես և հաթերենն ու թոխարերենը ներկայացնում են կոկորդալին հնչյուններ, մինչդեռ արիական, բալթիկ-սլավական, հայերեն, ալբաներեն, փոյուգերեն ու թրակերեն լեզուները երկու հնչյունները զանազանում են իրարից: Առաջինի դիմաց դնում են շշական հնչյուններ, երկրորդը՝ պահում կոկորդալին:

3. Հնե. a և o ձայնավորներն անփոփոխ են մնում հունարեն, հայերեն, իտալական ու կելտական լեզուներում, իսկ արիական, բալթիկ, ալբանական ու գերմանական լեզուներում, այլև հաթերենում երկուսն էլ հավասարապես դառնում են a, «սլավական լեզուների մեջ՝ o, որ նշանակում է դարձյալ a»:

4. Արմատի վերջահանգ է-ի և նույն այդ հնչյունով սկսվող մասնիկի միացմամբ ստացված կրկնակի տ հնչյունով սկսվող մասնիկի մեջ՝ ժառանգ լեզուներում վերածվում է երկու ձևի. իտալական, կելտական ու գերմանական լեզուներում դառնում է ss, մյուսներում՝ st:

5. Բառի միջին վանկերում եղած նախալեզվյան ձայնավորը մնում է սանսկրիտ, հունարեն, իտալական, կելտական, ինչպես և թոխարերեն լեզուներում, իսկ իրանյան, գերմանական, բալթիկ-սլավոնական և հայերեն լեզուների մեջ ջնջվում է:

6. Հնե. շնչեղ պայթական ձայնեղները (bh, dh, g¹h, g²h) դանազան ժառանգ լեզուների մեջ տալիս են այլևայլ ձայնեղ բաղաձայններ և միայն հունական և իտալական լեզուներում դարձել են խուլ, ապա՝ վերածվել շփականի:

7. Հնե. շնչեղ խուլ բաղաձայնները (ph, th, kh) անփոփոխ են մնացել արիական ճյուղի և հայերենի մեջ. հունարենը մասամբ պահում է դրանք, իսկ մյուս բոլոր արևմտյան լեզուները «շփոթում են պարզ խուլների հետ»:

8. Հնե. s բառասկզբում դառնում է հ՝ հայերեն, հունարեն և իրանյան լեզուների մեջ, որոշ դեպքերում բառամիջում դառնում է ֆ արիական, մասամբ նաև բալթիկ-սլավոնական ու հայերեն լեզուներում, իսկ մյուս արևմտյան լեզուներում այդ կարգի փոփոխություններ չկան:

9. Հնե. բայերի կատարյալի նախահավելվածը գտնում ենք

միայն արիական, հայերեն ու հունարեն լեզուներում (օր., բերեմ, երբեր):

10. Բալթիկ-սլավոնական, գերմանական, կելտական և թերևս իտալական լեզուները կատարյալը կազմում են առանց կրկնության, իսկ արիական և հունական լեզուներում կատարյալը կրկնավոր է:

11. Ներկայի ye մասնիկը պահվում է հունական և արիական լեզուներում, բալթիկ-սլավոնական և հայերեն լեզուները պահում են անփոփոխ կամ i, գերմանական, կելտական, իտալական լեզուները ձգտում են ջնջման:

12. Արիական և հունական լեզուները ածականի համեմատական աստիճանը կազմում են Հնե. tero մասնիկով, իտալական, կելտական, գերմանական և բալթիկ-սլավոնական լեզուները՝ yes մասնիկով, իսկ հայերենը երկուսից էլ զուրկ է:

13. Իտալական, հայերեն և հունարեն լեզուները ունեն գոյականի o վերջավորությամբ իզականներ, որ հին հնդեվրոպական է, իսկ մյուս լեզուները կամ ջնջել են այն, կամ դարձրել են a:

14. Արիական, հունական, իտալական և կելտական լեզուների մեջ եղած գործիականի ըն մասնիկի դիմաց բալթիկ-սլավոնական և գերմանական լեզուները ունեն ընգային m, իսկ հայերենը՝ բ կամ ձայնավորից հետո՝ վ, ռ:

15. Հոգնակի ներգոյականի համար արիական և բալթիկ-սլավոնական լեզուներն ունեն su մասնիկը, հայերենը՝ s, հունարենը՝ si, իսկ մյուս լեզուները համապատասխան ձև չունեն:

14. Արիական, հունական, իտալական և կելտական լեզուները բայի արգելական ձևի համար ունեն Հնե. me մասնիկը, որ տվել է սանսկրիտ ma, հայերեն՝ մի, հունարեն՝ me, թոխարերեն՝ mā: Մյուս լեզուները ունեն ne, որ հաթերենն ունի le ձևով (անդ, էջ 24—27):

Այս բոլորը ձևավորել ու ցուցադրել է մի դիագրամայի մեջ, որը ցույց է տալիս, որ ոչ մի լեզու լիովին անկախ և անջատ չէ մյուսներից, նմանություններն անկանոն կերպով գտնվում են տարբեր լեզուներում, բայց և այնպես այդ նմանությունների ու տարբերությունների վրա հենվելով՝ ցեղակից լեզուները կարելի է բաժանել երկու բարբառի. «հակառակ այն բանին՝ որ լեզուները բնորոշ գծեր չունեն, այնուամենայնիվ, կարելի է բաժանել երկու գլխավոր հնդեվրոպական բարբառի՝ արևելյան և արևմտյան: Արևելյան ճյուղին են պատկանում արիական, բալթիկ-սլավոնական, հայկական (և ալբանական) լեզուները, արևմտյան ճյուղին են պատկանում

կան ուսումնասիրության է ենթարկել հայագիտության այս ճյուղը: Հայերենի պատմա-համեմատական ուսումնասիրությանն է նվիրված Հ. Աճառյանի «Լիակատար քերականություն հայոց լեզվի՝ համեմատությանը 562 լեզուների» մեծարժեք մենագրությունը, որ բաղկացած է տասը հատորից.

1. Ներածություն.
2. Չայնաբանություն.
3. Գոյական.
4. Ածական և թվական.
5. Դերանուն.
6. Բայ.
7. Դերբայ, նախադրություն, մակբայ, շաղկապ.
8. Շարահյուսություն.
9. Բառաքնություն.
10. Իմաստաբանություն:

Արանցից, հաջորդականության որոշ խախտումով, որի պատճառները բացատրեցինք վերը, առայժմ լույս են տեսել՝ հատոր Ա. Ածական և թվական (1952), հատոր Բ. Դերանուն (1954), Ներածություն (1955), հատոր Գ. Գոյական (1957), հատոր Դ. Բայ (գիրք 1-ին՝ 1959, գիրք 2-րդ՝ 1961): Հինգ հատորներից միայն առաջինն է լույս տեսել հեղինակի կենդանության օրոք, երկրորդը և ներածությունը հրատարակության հանձնվել են դարձյալ հեղինակի մահվանից առաջ, իսկ մյուսները պատրաստվել են հրատարակության ու լույս են տեսել նրա մահվանից հետո: Դեռ չտպագրված հատորներից վերջին երեքը (շարահյուսություն, բառաքնություն, իմաստաբանություն) ներկայացնում են անմշակ նյութեր, իսկ մյուսները հիմնականում ավարտված են և հրատարակության համար կարիք ունեն միայն մասնակի լրացումների: Խոսքի մասերից յուրաքանչյուրին նվիրված մասում նյութերի ուսումնասիրությունը հեղինակը կատարում է հետևյալ սկզբունքով. նախ քննության է առնում լեզվական տվյալ երևույթը համեմատով բազմաթիվ լեզուներում և դրանով իսկ ամբողջական գաղափար տալիս այն մասին, թե տվյալ երևույթը ինչ դրսևորումներ ունի աշխարհի լեզուներում. սա աշխատության ընդհանուր լեզվաբանական մասն է, որ յուրաքանչյուր բաժնի առաջին հատվածն է կազմում: Այդ ընդհանուր լեզվաբանական մասին հաջորդում է այն գլուխը, որի մեջ քննության է առնում տվյալ երևույթը հնդեվրոպական լեզուների մեջ՝ սկսած հնդեվրոպական նախալեզվից, որ և կազմում է հընդ-

եվրոպական լեզուների համեմատական քերականության բաժինը: Այնուհետև հեղինակն անցնում է հայերենին՝ քննության առնելով նույն երևույթը պատմա-համեմատական մոտեցմամբ, այսինքն՝ նախ հայերենի տվյալ երևույթը քննում է հնդեվրոպական լեզուների համեմատությանը, մեկնաբանում նրա առաջացումն ու նախնական շրջանում կրած փոփոխությունները և ցույց տալիս այդ կետում եղած ընդհանրություններն ու տարբերությունները հայերենի ու ցեղակից լեզուների միջև, ապա՝ ամենայն մանրամասնությամբ քննում է տվյալ երևույթը պատմականորեն՝ իր բոլոր դրսևորումներով՝ գրաբարում, միջին հայերենում, հայերեն բարբառներում և ժամանակակից հայերենում: Այսպիսով, աշխատության բոլոր հատորներում էլ, բացի «Ներածությունից», ուսումնասիրությունը ընդգրկում է երեքական մաս. ընդհանուր լեզվաբանություն, հնդեվրոպական լեզուների համեմատական քերականություն և հայերենի պատմա-համեմատական քերականություն: Նյութի այսպիսի բազմակողմանի ընդգրկումն այս աշխատությանը տալիս է լեզվաբանական հանրագիտարանի բնույթ: Եվ իրոք, ինչպես հաստատում են լույս տեսած հատորները, «Լիակատար քերականությունը» մի իսկական հանրագիտարան է, որի մեջ կարելի է բոլոր անհրաժեշտ տեղեկությունները գտնել աշխարհի բազմաթիվ լեզուների մասին և, մասնավոր, հայերենի քերականական կառուցվածքի ողջ պատմական ընթացքի մասին:

Ամփոփելով, հանրագումարի բերելով շուրջ մեկ հարյուրամյակի ընթացքում հայերենի համեմատական ու պատմական քերականությանը նվիրված ուսումնասիրությունները, որոնց մեջ առանձնակի կարևորություն են ներկայացնում Մեյի, Հյուբմանի, Աբեդյանի ու Այտրնյանի հետազոտությունները, մանրամասն ու գիտական խստագույն քննության ենթարկելով հայագետների արտահայտած կարծիքները քննարկվող հարցերի մասին, ամփոփելով նաև իր երկարամյա հետազոտությունների արդյունքները, Հ. Աճառյանն այս աշխատության մեջ իր վճռական, գիտականորեն հիմնավորված խոսքն է ասում քննության նյութ դարձած հարցերի մասին և, ընդհանուր առմամբ, սպառիչ կերպով լուծում դրանք: Դժվար է մի համառոտ ակնարկում անդրադառնալ այն բազմաթիվ, թեկուզ և ամենազիջավոր խնդիրներին, որոնք ուսումնասիրված ու լուսաբանված են այս աշխատության մեջ: Եվ դրա հետ միաժամանակ, դժվար է պատկերացնել, թե մի մարդ, որ բազմաթիվ ուրիշ սովորածավալ ու միջարժեք աշխատություններ է գրել, ժա-

մանակ, կարողություն և, որ կարևորն է, հմտություն է ունեցել այսպիսի մի ծովածավալ աշխատանք ստեղծելու: Բայց դա ստեղծված է արդեն: Տրանսիացի նշանավոր լեզվաբան Վանդրիեսը, իր «Լեզու» (Le langage) աշխատության մեջ գրում է. «Ուսումնասիրել լեզուն լեզվաբանական տեսանկյունով, նշանակում է հանգել ընդհանուր լեզվաբանության սիստեմի կառուցմանը: Ամենքին, ով քիչ թե շատ ծանոթ է լեզվաբանության վիճակին, բավականաչափ հայտնի է, որ չկա ավելի վտանգավոր խնդիր: Այդ խնդիրը հաշտության կատարել ցանկացող գիտնականը ի վիճակի պետք է լինի ընդգրկելու բոլոր հայտնի լեզուների բոլոր ձևերը... Կա՞ արդյոք այդպիսի իդեալական գիտնական: Հագիվ թե»: Բայց, ահա, նույն վանդրիեսի դասընկերը, թվով փոքր հայ ժողովրդի մեծ գիտնականը՝ Հրաչյա Աճառյանը ի վիճակի եղավ այդ գործին ձեռնարկել և իրականացնել այն:

Այսպիսով, հայոց լեզվի պատմա-համեմատական ֆեռակա-նության բնագավառում Հրաչյա Աճառյանը ամփոփել է այդ ուղղու-թյամբ կատարված բոլոր ուսումնասիրությունները, ավելացրել իր հետազոտությունների արդյունքները և ստեղծել այնպիսի մի աշխատություն, որը հիմնականում սպառում է հայերենի համեմատա-կան ու պատմական ուսումնասիրության բոլոր կարևորագույն խնդիրները: Այս տեսակետից մոտենալով հարցին, կարելի է ասել, որ, առանձնապես, հայերենի համեմատական քերականությունը հիմնականում ավարտված գիտություն է և այդ բնագավառում արդեն շատ անելիք չկա: Առանձին ճշտումներ որոշ հարցերի լուծման մեջ, քերականական առանձին երևույթների մեկնաբանություն ու նրանց առաջացման լուսաբանություն, անստույգ բառակազմական մասնիկների ստուգաբանություն, եթե դա հնարավոր կլինի եղած նյութի օգտագործումով և հնագույն փոքրասիական ու տեղական լեզուների նորահայտ տվյալների հիման վրա՝ այդ լեզուների ու հայերենի առնչությունների ուսումնասիրություն, — ահա այն ամենը, ինչ որ մնում է նոր ուսումնասիրողներին՝ հայերենի համեմատա-կան քերականության երիտասարդ մասնագետներին:

Գ. Բ ա ո ա գ ի տ ո թ յ ո Ւ Ն և Բ ա ո ա ր ա ն ա գ ր ո Վ թ յ ո Ւ Ն. — Հրաչյա Աճառյանի գիտական ուսումնասիրությունների կարևորագույն բնագավառներից մեկն էլ եղել է հայոց լեզվի բառագանձի քննությունը: Երկար տարիների ընթացքում զանազան առիթներով նա հրատարակել է բառագիտական հետազոտություններ, որոնց մեջ բացատրել է հին ձեռագրերում գործածված բառե-

րի իմաստը, ճշտել զանազան գրություններ ունեցող հին բառե-րի ձևը, քննել իր կողմից մատենագրության մեջ հայտնաբերված նորագյուտ բառերը և, վերջապես, ստուգաբանել շատ ու շատ բառեր: Բազմաթիվ հոդվածներով և առանձին գրքերով լույս տեսած իր բառագիտական ու ստուգաբանական հետազոտություններով նա շարունակեց անվանի հայագետների արդյունավետ աշխատանքը հայերենի բառագանձի ուսումնասիրության բնագավառում: Սակայն այդ ուղղությամբ կատարած նրա աշխատանքների մեջ որպես գլուխ գործոց է մնում շուրջ քառասուն տարիների աշխատանքի արգասիքը՝ «Հայերեն արմատական բառարանը» (Երևան, 1926—1932), վեց հատորից բաղկացած մի ծովածավալ աշխատություն, որին նայելն անգամ պատկառանք է ներշնչում: Յոթերորդ հատորն է կազմում հավելվածը, որ լույս է տեսել 1935 թ.¹: Համեստ վերնագիր կրող այս աշխատությունը լիակատար ցանկն է հայերեն լեզվի արմատների, նրանց բացատրությամբ, քերականական տեղեկու-թյուններով ու ստուգաբանությամբ հանդերձ: Բառարանում հերթականությամբ ամփոփված են բոլոր հայերեն արմատները. յուրաքանչյուր բառի մասին խոսված է հինգ բաժնով. 1) Բառագի-տություն, որտեղ տրվում են՝ արմատը (գլխատառով գրված), այդ արմատի հոլովական ու խոնարհման ձևերը, նշանակությունը, վկա-յություններ՝ բառի գործածության մասին, նրանից կազմված բառերը, և, վերջապես, տարբեր գրությունները: 2) Ստուգաբանու-թյուն, որ կազմում է բառարանի հիմնական, ամենակարևոր մասը. այստեղ հեղինակը բերում է արմատի ստուգաբանությունը, որ իր կողմից ճիշտ է համարված, բայց, որովհետև շատ բառերի համար բազմաթիվ հեղինակների կողմից շատ ու շատ ստուգաբանություն-ներ են առաջարկված, ուստի և հեղինակը միայն իր ընտրությամբ չի բավականացել. նա յուրաքանչյուր ստուգաբանություն ճիշտ կամ անճիշտ համարելու համար ստացել է Հյուբերմանի, իսկ նրա մաս-վանից հետո՝ Մեյերի հավանությունը. այնպես որ՝ «Այսքան զգու-շությունից հետո, կարծում եմ, որ իբր ուղիղ նշանակված ստուգա-բանությունները իրոք կարելի է ստույգ համարել» (հատ. 7, էջ 17): 3) Ստուգաբանությունների պատմություն. այս բաժնում հեղինակն ամփոփում է բոլոր այն բառագիտական քննությունները կամ՝ նույնիսկ դիտողությունները, որոնք կատարվել են V դարից մինչև բառարանի հրատարակությունը՝ հայ կամ օտար հեղինակ-

¹ Վեց հատոր բազմացված է ապակետիպով, որի բնագիրն ամբողջությամբ գրել է հեղինակը, իսկ յոթերորդ հատորը տպագրված է Պետհրատի տպարանում:

ների կողմից: Այստեղ հեղինակը բերում է տվյալ արմատի մասին եղած բոլոր ստուգաբանությունները, որոնք երկրորդ բաժնում տեղ չեն գտել իբրև անճիշտ, ինչպես և հայտնում, թե ով է առաջին անգամ առաջարկել ճիշտ ստուգաբանությունը. այսպիսով, տրվում է հայերեն բառերի ստուգաբանության կատարյալ պատմությունը:

4) Գավառական բառեր, որտեղ տրված են յուրաքանչյուր արմատի ստացած զանազան ձևերը հայերենի զանազան բարբառներում: Այս բաժինն առանձնապես մեծ կարևորություն ունի հայերեն բարբառների ուսումնասիրության համար. հեղինակը կազմել է 30 գավառականի (բարբառներ և ենթաբարբառներ) բառացանկը և ներմուծել բառարանի այս բաժնի մեջ: Այս մասի արժեքն է՛լ ավելի մեծանում է նրանով, որ շատ հայերեն բարբառներ այժմ անհետացել են, մանավանդ առաջին համաշխարհային պատերազմից հետո՝ հենց պատերազմի հետևանքով, ուստի և նրանցից գիտություն համար պահպանված նյութը միայն այստեղ եղածն է: 5) Հայերենից փոխառյալ բառեր, որի մեջ ցույց է տրվում, թե հայերեն այսինչ բառը որ լեզվի մեջ է մտել՝ իբրև փոխառություն. այս բաժինը նույնպես կարևոր է այն տեսակետով, որ ցույց է տալիս հայերենի ազդեցությունն ուրիշ լեզուների վրա, մի բան, որով առհասարակ լեզվաբանները քիչ են զբաղվել:

Բառարանի կառուցվածքի մասին ավելի շոշափելի պատկերացում տալու և բառարանի կազմության սկզբունքները քննելու համար բերում ենք միայն մեկ բառ-հոդված, որն ունի բոլոր հինգ բաժինները:

+ ՀՈՒՆ «Գետի մէջ ծանծաղ տեղ՝ որից կարող է մարդ անցնել, ելք, հնարք, ճամբայ» Մն. լր. 22. Յես. Բ. 7. Մծբ. Եւագր. «անցք, բացուածք, բաց մնացած տեղ» Բուզ. Գ. 1. (ՆՃԲ սխալմամբ գրում է հուն մի «մի քիչ, խուն մի»). «ծանծաղ, երեսկոնկ, սակաւաջուր» Արծր. որից ի հուն ելանել «գլուխ ելնել, հաջողիլ» Ոսկիփ. հունաւոր «սահմանաւոր» Ոսկիփ. անհուն «անվերջ, անանցանելի, ընդարձակ» (ետ) Եփր. ծն., (հեղեղ) Ամովս. Ծ, 24, (ծով) Եւ. քր., (բազմութիւն) Ագաթ. հունեւ «անցանել» Բո. Երեմ. էջ 85. ըստհուն «հմուտ» Երզն. քեր. ներհուն «հմուտ» Շնորհ. վիպ. կրպտ. ոտ:

= Բնիկ հայ բառ՝ հնխ. pont = ձևից. ցեղակիցներն են սանս. pánthās (սեռ. pathás) «ճամբայ», զնդ. pantā. panta (սեռ. paṅo) «ճամբայ», հպրս. paṅim (հյց). «ճամբայ», (պհլ. pand և պրսկ. پند, pand ստացել են «խրատ» իմաստը. Horn § 330). օսս. fāndag, fāndäg «ճամբայ, փողոց», յն. πόντος. «ծով»,

πόντος «շափղ», լատ. pons «կամուրջ, ճահիճի մէջ բացուած կածան» (որից ֆրանս. pont, իտալ. ponte «կամուրջ»), հւլ. panti և հպրոս. pintis «ճամբայ», սերբ. pút, ռուս. путь «ճամբայ». բոլորի արմատն է հնխ. pent- «գալ, երթալ» ինչպէս ցույց են տալիս հրգ. fendo «հետիոտն», funden «շտապել» են. այս pent- արմատի ձայնդարձն էր pont-, որ գտնում ենք յատկապէս յն. և լատ. ձևերում. հայերէնի մէջ վերջածայն t-ի անկումով և ռնգակաւնի մօտ o ըստ օրինի ու վերածուելով՝ յառաջացած է կանոնաւորապես հուն ձևը: Նշանակութեանց զարգացման համար հմմտ. զնդ. pəṛətu «կամուրջ» և pəšu- «հուն», յն. πόντος «հուն. ճամբայ, շափղ» են հնխ. per- «անցնիլ» արմատից (Walde 598, Boisacq 803, Trautmann 205, Pokorny 2, 26):—Հիւբշ. 468:

Brosset, IAs, 1834, 369—405 վրաց. փոնի ձևի հետ: Հիւբշ. հուն և անհուն զնում է ունիւ բայից. անհուն համարում է ունայն բառի երկրորդ ձևը: Ուղիղ մեկնեց Meillet MSL 7, 161. Tomaschek, Dent. Litttrtz. 1883, էջ 1254 վրաց. փոնի (իբրև կովկասեան բառ): Karst, Յուշարձան 401, 404 սումեր. gina «փոքր, քիչ» (իբր հուն մի, խուն), 426 ֆրգ. son «վերջ» (իբր ի հուն ելանել):

ԳիՌ.— Անկախ գործածութիւն ունի միայն Բլ. Մշ. հուն: Բայց կան նաև հետևեալ ձևերը. Ակն. Եւր. Մշ. Չն. հուն ելնել, Եւր. հու-նաւորիլ, Սեբ. հնաւորիլ «մէկի հետ մաքառելով գլուխ ելնել, յաղթել» (տե՛ս նաև հնաւ բառի տակ).— հունաւորուիլ Վն. «բնակութիւն հաստատել», անհուն խրբ. «անհուն» (ծով), Ապ. Բլ. «անսահման» (Աստուած).—կայ նաև ուն-բուն Վն., ունուրունք Երև. Ղզ., հունք ու բունք Ծփ. «մի գործի բոլոր մանրամասները, մէկի ամբողջ գերդաստանը և ծագումը», որ կարծեմ հուն և բուն բառերի կրկնութեամբ է ձևացած:

ՓՈՆ.—վրաց. ფონი փոնի, ფონი ֆոնի, մինգր. ფონი փոնի, ფონი ֆոնի, սվան, fon, lafan արխազ. afan «գետի հուէնը», վրաց. უფონო ուփոնո «հուն ջունեցող» (գետ). այս բառերը կարող են ներկայացնել հայերէնի հնագոյն ձևը (տե՛ս Չուբ.² 1312), իսկ ըստ. Հիւբշ. 397 պատահական նմանութիւն ունին:

(Հայերէն արմատական բառարան, հ. Դ, էջ 395—397):

Ինչպես կարելի է հեշտութեամբ նկատել, բառահոդվածի յուրաքանչյուր բաժինը ներկայացնում է յուրահատուկ բառարանի տեսակ և դրան համապատասխան էլ ամեն մի բաժինը կազմված է յարմար սկզբունքով: Առաջին բաժինը ներկայացնում է բացատրական բառարանը. այդ բաժնի նպատակն է ներկայացնել հին հայե-

րենում գործածված արմատական բառերը՝ նրանց իմաստների բացատրությունները: Սրանից էլ բխում է հենց այն, որ այս բաժինը որոշ չափով կրում է սինխրոնիկ բնույթ: Այս բաժինը, սակայն, ունի մեկ հիմնական նպատակ՝ բազմաթիվ ուղղակի և կողմնակի տվյալների օգնությամբ ճշտել արմատների հնագույն ձևերը, վեր հանել նրանց առավել հին իմաստները, գտնել քերականական (հոլովման, խոնարհման, բառակազմական) ավելի նախնական ձևերը: Այս տեսակետից առաջին բաժինն ստանում է բառագիտական ուսումնասիրության բնույթ և այս չափով էլ ամփոփում է իր մեջ պատմականության սկզբունքը: Եվ որովհետև հաջորդ բաժիններից առանձնապես ստուգաբանության համար առավել կարևորն է այս երկրորդը՝ պատմական բառագիտությունը, հեղինակը միանգամայն ճիշտ կերպով այս բաժինը կոչել է բառագիտություն: Ամբողջ բառարանի կերպով այս բաժինը կոչել է տալիս, որ հեղինակը հետևողականորեն կիրառել է պատմական բառագիտության սկզբունքն այս բաժնում և դրանով իսկ գիտական անխախտ ահմաբ ստեղծել ստուգաբանությունների համար:

Երկրորդ և շորրորդ բաժինները ներկայացնում են ստուգաբանությունը, երկրորդը՝ հայերեն (բնիկ և փոխառյալ) բառերի, իսկ շորրորդը՝ այլ լեզուների՝ հայերենից փոխառյալ բառերի: Երկու բաժիններն էլ կառուցված են ստուգաբանական (կամ համեմատական) բառարանի սկզբունքով և հիմնված են պատմա-համեմատական մեթոդի վրա:

Երրորդ բաժինն է ստուգաբանությունների պատմությունը, որ ըստ էության ոչ թե բառարանային որևէ տիպն է ներկայացնում, այլ լեզվաբանության մեկ ճյուղի՝ բառագիտության (ստուգաբանություն, պատմական իմաստաբանություն, բառակազմություն) պատմությունը:

* Վերջապես, հինգերորդ բաժինը բարբառների համեմատական բառարանի տիպարն է ներկայացնում. այս բաժնում հեղինակը նպատակ է դրել պարզել, թե հին հայերենի ո՞ր բառը ո՞ր բարբառում և ի՞նչ ձևով ու հիմնական իմաստով է պահպանվել: Այս բաժինն էլ, ուրեմն, համեմատական բարբառագիտության սկզբունքով է կառուցված:

Այսպիսով, Հ. Աճառյանը միանգամայն հստակորեն որոշել է իր բառարանի հինգ բաժիններից յուրաքանչյուրի բառարանագիտական սկզբունքները և այդ սկզբունքների համապատասխան էլ մշակել ամեն մի բառահոգված: Եվ հենց այդ էլ հնարավորություն

է տվել գիտական սպառիչ վերլուծություններով բազմաթիվ բառերի նախնական ձևը, իմաստն ու քերականական-բառակազմական յուրահատկությունները վեր հանել, իսկ դրա օգնությամբ էլ որոշել, թե առաջարկված բազմաթիվ ստուգաբանություններից ո՞րն է ճիշտ, կամ առավել հավանական: Հենվելով պատմա-համեմատական մեթոդի հիմնական սկզբունքների վրա, Հ. Աճառյանը դիտում է յուրաքանչյուր բառ իր իրական պատմության մեջ, առանց ընդհանուր սխեմաների հետևելու, որով և յուրաքանչյուր բառահոգվածը դառնում է տվյալ բառի գիտական ուսումնասիրությունն իր բոլոր մանրամասնություններով: Իսկ այս բոլորն էլ, միասին վերցրած, ապահովում են «Արմատական բառարանի» գիտական բացառիկ բարձր մակարդակը: Հ. Աճառյանի «Արմատական բառարան»-ը իր կատարելությամբ օրինակ կարող է ծառայել ուրիշ լեզուների ստուգաբանական բառարաններ կազմելու համար:

Այս համառոտ նկարագրությունը արդեն բավական է գաղափար կազմելու համար այն ապշեցուցիչ աշխատանքի մասին, որ կատարել է հեղինակը: Դժվար է հավատալ, թե մի մարդ կարող է այդքան բան անել. և, սակայն, արված է և այն էլ ինչպիսի՜ հրմտությամբ, ինչպիսի՜ բարեխղճությամբ: Հեղինակը կատարյալ հաջողությամբ իրականացրել է այդ զգալի ծրագիրը՝ ստեղծելով մի անզերազանցելի գործ: Արմատական բառարանը ամփոփումն է հայ լեզվաբանության մի ճյուղի, այն է՝ ստուգաբանության. նրա մեջ ամփոփված է այն ամենը, ինչ որ որևէ ժամանակ, որևէ մեկի կողմից, որևէ հայերեն բառի մասին ասված է. դրա շնորհիվ է, ահա, որ դարագլուխ կազմող այս աշխատությունը դարձել է հայագիտության ամենամեծարժեք գործերից մեկը: Արմատական բառարանն իր տեսակի մեջ բացառիկ երևույթ է լեզվաբանական գրականության մեջ: Հեղինակը բացի հայագետներից, ստուգաբանություններից, բազմաթիվ բառեր էլ ինքն է ստուգաբանել. դրանց մասին ավելի հարմար ենք գտնում բերել հեղինակի խոսքերը, որոնց մեջ լիովին պարզաբանված են իր ստուգաբանությունների բնույթն ու արժեքը. «Գիտունների առաջարկած ստուգաբանություններից դուրս, ինքս էլ ունեմ բազմաթիվ ստուգաբանություններ, մի մասը արդեն հրատարակված զանազան տեղեր, մի մասը անտիպ: Այն ստուգաբանությունները, որոնք այժմ անճիշտ եմ համարում, գրված են պատմականի շարքում, իսկ այն ստուգաբանությունները, որոնք ենթարկվել են Հյուրըմանի և Մեյբի հավանության, և կամ քննության խիստ բովից անցկացնելով, կարծում եմ, թե համա-

պատասխան են գիտութեան պահանջներին, համարձակվել են դնել ուղիղ ստուգաբանութեանց շարքը, բայց նշանակելով միշտ Աճ. ստորագրութեամբ, առ ի զգուշութիւն ընթերցողներին: Այս ստուգաբանութիւնների թիվն է 1604 (մեծ թիվ, բայց դրանցից միայն 130-ը բնիկ հայ, իսկ մնացյալը փոխառյալ կամ բնաձայն լինելով, քանակը մեծապես փոքրանում է): Ապագան ցույց պիտի տա, թե սրանցից որքանն է ընդունելի» (անդ, էջ 17): Մեր կողմից կարող ենք ավելացնել, որ այդ ստուգաբանութիւնների նկատմամբ հեղինակը միանգամայն խստապահանջ է եղել, որով և նրանց ճշտութիւնը երաշխավորվում է:

«Արմատական բառարանի» լրացումը կարելի է համարել «Հայոց անձնանունների բառարանը», հինգ հատորից բաղկացած մի մեծածավալ աշխատութիւն, որի 5-րդ հատորը վերջերս է հրատարակված (Երևան, 1942—1962): Այս աշխատութեան մեջ հեղինակը հավաքել, դասավորել և ուսումնասիրել է հայոց մեջ գործածված բոլոր անձնանունները՝ սկսած հնագույն ժամանակներից մինչև XV դարը. 1500 թ. հետո միայն գրականութեան ու պատմութեան մեջ նշանավոր անձերի անուններն է հավաքել: Յուրաքանչյուր անվան մասին խոսում է երկու հատվածում. առաջինում բերում է անունը՝ տալով նրա ծագումը կամ ստուգաբանութեանը և հիշելով նրա փառաբանումն ու ժողովրդական ձևերը: Երկրորդ հատվածում պատմական հաջորդականութեամբ հիշում է նույն անունը կրող բոլոր անձերին՝ տալով նրանց մասին կենսագրական համառոտ տեղեկութիւններ (եթե կան), ապա և՛ այն բոլոր տեղերը, ուր հիշատակված է այդ անձը ամբողջ հայ հին մատենագրութեան, վիճակական արձանագրութիւնների, ձեռագրաց ցուցակների և հեղինակի կողմից առանձնապէս կարևոր համարված նոր աղբյուրների մեջ: Այդ ընդարձակ ծրագիրը ևս հեղինակն ի կատար է ածել բացառիկ բարեխղճութեամբ և ուշադրութեամբ և այսպիսով իսկ տվել մի աշխատութիւն, որ չափազանց մեծ արժեք է ներկայացնում թե՛ հայ լեզվաբանութեան, թե՛ հայոց պատմութեան և թե՛ հայ բանասիրութեան համար: Այսուհետև, եթե որևէ մեկը կամենա մի անձնավորութեան, որևէ հայ գործիչի մասին բիրիոգրաֆիա կազմել, պետք չունի այլևս մեր ահոնի հին մատենագրութիւնը ծայրից ծայր կարդալու. այստեղ բոլորը հավաքված են ու նշված յուրաքանչյուր անձնանվան տակ: Այս տեսակետից ճիշտ ենք համարում մեր ընկերներից մեկի այն խոսքերը, թե՛ Անձնանունների բառարանը նույն նշանակութիւնն ունի հայոց պատմութեան համար, ինչ որ Հայկազյան բառարանը՝ հայոց լեզվի համար:

Հայոց լեզվի բառային կազմի կարևոր մասն են կազմում այն բազմաթիվ հայերեն բառերը, որոնք գործածվում են բարբառներում և որոնք մուտք չեն գործել գրականութեան մեջ: Ուստի և հայերենի բառային կազմի ամբողջական ուսումնասիրութիւնը պահանջում է նաև մեր բարբառների հարուստ ու բազմակողմանի բառամթերքի հավաքումն ու քննութիւնը: Եվ այս գործում էլ, ահա, Հ. Աճառյանն առաջին մշակներից մեկն էր. նրան է պատկանում հայերեն բարբառների բառարանը, որ լույս է տեսել 1913 թ., «Հայերեն գավառական բառարան» խորագրով: Այստեղ ամփոփված են ավելի քան 40 բարբառների ու ենթաբարբառների մոտ 30000 բառ: Բառարանի մեջ մտել են այն բառերը, որոնք ոչ օտար փոխառութիւններ են (նոր ժամանակի) և ոչ էլ գրաբար մատենագրութեամբ են ավանդված, այսինքն՝ միայն բարբառային հայերեն բառերը: Եթե իր բարբառագիտական ուսումնասիրութիւնների մեջ Աճառյանը տվել է հայ բարբառների ընդհանուր տեսութիւնը, նրանց դասակարգումը, քննութեան առել նրանց հնչյունական համակարգն ու քերականութիւնը, ապա՝ այստեղ նա հավաքել է բարբառային բառերը: Այս տեսակետից էլ այս բառարանը օրգանական շարունակութիւնն է կազմում, մի կողմից՝ նրա բարբառագիտական հետազոտութիւնների, մյուս կողմից՝ բառագիտական-բառարանագրական աշխատանքի, հատկապէս Արմատական բառարանի: Թեև, ինչպես հեղինակն է խոստովանում, այս բառարանի հրատարակութիւնը կատարված է հակառակ իր կամքի և իր բացակայութեամբ, որի պատճառով էլ հնարավորութիւն չի ունեցել վերանայելու և անհրաժեշտ լրացումներ ու փոփոխութիւններ կատարելու, բայց և այնպէս, այդ վիճակում էլ հայերեն բարբառների լավագույն բառարանն է, թեև միակը չէ (իբրև մրցակից ունի Ամատունու «Բառ ու բանը», որ պարունակում է 16000 բառ և ոճ):

Վերջապէս, Աճառյանի բառաքննական-բառարանագրական աշխատանքների թվին է պատկանում նաև «Թուրքերէնի ազդեցութիւնը հայերէնի վրայ և թուրքերէնէ փոխառեալ բառերը Պոլսի հայ ժողովրդական լեզուին մէջ համեմատութեամբ վաճի, Ղարաբաղի և Նոր-Նախիջևանի բարբառներում» աշխատութիւնը, որ հրատարակվել է 1902 թ. և ընդգրկում է թուրքերենից հայերեն բարբառներին անցած բառերը. հեղինակը որպէս հիմնական աղբյուր վերցրել է Պոլսի հայերեն բարբառը, որ ամենից ավելի շատ փոխառութիւններ ունի թուրքերենից:

Այսպիսով, Հրաչյա Աճառյանը իր բառարաններով ու բառա-

ճյուղավորումներն են, նա գտնում էր, որ հայերեն բարբառները ներկայացնում են ձևափոխությունները հին հայերենի, որի հնագույն գրավոր արտահայտությունն է գրաբարը: Այս դրույթն իր ուսումնասիրությունների հիմքում դնելով, նա հայերեն բարբառների բառային, քերականական ու հնչյունական միավորների համեմատության եզրը և, հետևաբար, այդ միավորների ընդհանուր աղբյուրն է համարում գրաբարյան բառերը, քերականական միավորներն ու հնչյունները: Այս պատմական մոտեցումը նրան հնարավորություն է տալիս պարզելու հին հայերենի կրած ձևափոխությունները պատմական ժամանակաշրջանում հայ ժողովրդի տարբեր տեղական հատվածների մոտ և դրանով իսկ պարզելու հայերենի զարգացման պատմական ընթացքը: Մյուս կողմից, համեմատությունների այդ մեթոդով հնարավորություն է ստանում վեր հանել նախ՝ հայերեն բարբառների բառային կազմի, քերականության ու հնչյունաբանության մեջ եղած այն ամենը, ինչ-որ ուղղակի կերպով ծագում է հին հայերենից, երկրորդ՝ այն ամենը, ինչ որ պահպանվել է հայ բարբառների մեջ նախահայերենի շրջանից, և երրորդ՝ այն ամենը, ինչ որ ձեռք են բերել կամ ստեղծել բարբառներն իրենք, անկախ հին հայերենից, իրենց զարգացման պրոցեսում: Մի քանի բառերի օրինակով պարզենք այս բանը. հայերեն բարբառներում ունենք մէր, մար, հէր, հար, խէր, բան, պան, բէն, կար, կախց. մօտիլ «կոծել», դուշման, դուշման, դանաւն «փռնջ, տրցակ» և այլն: Հմուտ քննության միջոցով Հ. Աճառյանը ցույց է տալիս, որ մէր, մար, հէր, հար, խէր, պան, բէն բառերը ծագում են ուղղակի գրաբարից և ներկայացնում են այս կամ այն բարբառին հատուկ հնչյունական օրենքներին համաձայն կատարված փոփոխություններ. բարբառային կախց <կաղց <կաղթ (= kalt) իր ձևով ավելի մոտ է հնդեվրոպական նախաձևին (*galakt), քան գրաբարյան կաքն ձևը, ուստի և նա ծագում է ոչ թե գրաբարից, այլ նրանից անկախ կերպով՝ նախահայերենից. Ղարաբաղի բարբառի մօտիլ «կոծել» բառը չի ավանդված գրաբարից և չկա ուրիշ բարբառներում. բայց քանի որ հնդեվրոպական բառ է, ուստի և Ղարաբաղում պահպանվել է գրաբարից անկախ և ինքնուրույն կերպով՝ նախահայերենի շրջանից: Վերջապես, երրորդ կարգին են պատկանում դուշման, դանաւն բառերը, որոնք բարբառները իրենք են փոխ առել այլ լեզուներից՝ ուշ շրջանում, գրաբարից անկախ:

Բարբառների քերականական միավորների, բառերի ու հնչյունների այսպիսի ուսումնասիրությունն ու դասդասումը մեծ կարևորություն ունի հայ բարբառների պատմության, մասնավորապես նրանց առաջացման խնդիրը պարզելու համար: Եվ Հ. Աճառյանը այդ բոլոր տվյալներն օգտագործում է հենց հայերեն բարբառների առաջացման ժամանակը որոշելու համար. այդ ուղղությամբ նրա կատարած քննությունների վերջնական եզրակացությունները հետևյալներն են. ա) V դարում հայերենը բարբառներ չի ունեցել. եղել են միայն ենթաբարբառներ, բ) ժամանակակից բարբառների մեծագույն մասն առաջացել է VI—IX դարերում, իսկ մի քանիսը՝ I—IV դարերում: Այս եզրակացությունները հիմնականում ճիշտ լինելով, կարիք ունեն որոշ բացատրության: Այն արտահայտությունը, թե V դարում եղել են միայն ենթաբարբառներ, պետք է հասկանալ փոխաբերաբար, այսինքն՝ V դարում եղել են բարբառներ, բայց նրանց միջև եղած տարբերություններն այնքան խոր չեն եղել. այդ տարբերությունները մոտավորապես այնքան են եղել, որքան այժմյան ենթաբարբառների միջև եղած տարբերություններն են. այս պատճառով էլ V դարի բարբառները ենթաբարբառներ կոչվել խիստ պայմանական է: Հենց այդպես էլ բացատրում է նա իր միտքը, տեսելով, թե «1. Հինգերորդ դարում հիշատակված են Վերին և Ստորին Հայաստանի բարբառներ, որոնց վրա կարող ենք դեռ ավելացնել այսպես կոչված արևելյան և արևմտյան բարբառներ: 2. Այս բարբառները սակայն շունեին իրենց անշրպետող խոշոր տարբերություններ և բոլոր հայերը հեշտությամբ նույնպես են իրար» (Հայոց լեզվի պատմութ., Բ մաս, էջ 184):

Ինչ վերաբերում է բարբառների միջև եղած տարբերությունների հետագա խորացմանն ու նորանոր բարբառների առաջացմանը, ապա դա մի տևական պրոցես է, որ չի կարելի սահմանափակել մի երկու-երեք դարով. հայերենի ժամանակակից բարբառների առաջացման սաղմերը եղել են դեռ V դարից էլ առաջ, իսկ գրանցված ձևերը և մինչև միջին դարերը, իսկ որոշ դեպքերում՝ նաև ավելի հետո:

Իր բարբառագիտական հետազոտություններով Հ. Աճառյանը մշակեց նաև բարբառների ուսումնասիրության մի սխեմա, որ անխախտ կերպով պահպանված է հայերեն առանձին բարբառներին նվիրված նրա բոլոր մենագրություններում: Այս սխեմայի համաձայն մանրամասն քննության են առնվում ուսումնասիրվող բարբառի հնչյունական համակարգը, հնչյունափոխությունները, ձևաբանությունը, ինչպես և շարահյուսական այն առանձին երևույթները, որոնք տվյալ բարբառի յուրահատկությունն են կազմում: Այս

սխտեմը, սակայն, որոշ շափով թերի է. բարբառի ուսումնասիրությունն ամբողջական կլինի միայն այն դեպքում, երբ նույնպիսի խորություններ քննության ենթարկվի նաև բառային կազմը: Իր հիշյալ սխտեմով Հ. Աճառյանը ուսումնասիրել է հայերեն բազմաթիվ բարբառներ. այդ ուսումնասիրություններից լույս են տեսել Մարաղայի, Ազուլիսի, Նոր-Ջուլայի, Նոր-Նախիջևանի, Ղարաբալի, Համշենի, Առտիալի, Պոլսի, Վանի բարբառներին նվիրված մենագրությունները, ինչպես և Ասլանբեգի և Սուլավայի բարբառներին նվիրված հոդվածաշարը՝ «Բազմավէպ» հանդեսում (1898—1899 թթ.): Ձեռագիր վիճակում են մնում Կիլիկիայի և Սվեդիայի բարբառներին նվիրված մենագրությունները:

Այսպես, ուրեմն, շուրջ 60 տարվա իր գիտական գործունեության ընթացքում Հրաչյա Աճառյանը իրեն հատուկ բարեխղճությամբ ու գիտնականի մեծագույն հմտությամբ ուսումնասիրել է հայերենի բարբառները, նրանց պատմությունն ու արդի վիճակը և իր հետազոտություններով հիմնադրել ու զարգացրել հայագիտության ճյուղերից մեկը ևս՝ հայ բարբառագիտությունը:

* * *

Մենք փորձեցինք համառոտակի բնութագրել Հրաչյա Աճառյանի հայագիտական ու ընդհանուր լեզվաբանական ամենազիտավոր գործերը: Դրանցով, սակայն, չին սպառվում ոչ միայն նրա աշխատությունները, այլև հայագիտության այն ճյուղերը, որոնցով նա վրադվել է իր բեղմնավոր գիտական գործունեության ընթացքում և որոնք հարստացրել է նույնպես ոչ նվազ արժեքավոր աշխատություններով: Նրա գրչին են պատկանում հայ գրերի գյուտին և նրանց զարգացման պատմությանը, հայ հին մատենագրության բազմազան հարցերի, հայ նոր գրականությանը, հայ ժողովրդի պատմության զանազան խնդիրներին նվիրված բազմաթիվ մենագրություններ և գիտական առանձին հոդվածներ, որոնց մասին հանգամանորեն խոսել այս ակնարկի մեջ հնարավոր չէ: Անհնարին է նաև անդրադառնալ ձեռագիր վիճակում մնացած աշխատություններին, որոնց ցուցակը տրված է Հ. Աճառյանի աշխատությունների բիբլիոգրաֆիայի վերջում¹:

¹ Հրաչյա Հակոբի Աճառյան, Երևան, 1956, էջ 87:

Այսպես, ուրեմն, Հրաչյա Աճառյանը մեր ժամանակի ամենաբեղմնավոր և ամենամեծ հայագետ-լեզվաբանն է, որի բազմաթիվ գիտական աշխատություններից յուրաքանչյուրը մի կոթող է հայոց լեզվի ուսումնասիրության բնագավառում: Իր գիտական գործունեությանը նա միշտ էլ ղուգակցել է մանկավարժական աշխատանքը և մինչև իր կյանքի վերջին օրն էլ ամենազործուն մասնակցություն ունեցել երիտասարդ հայագետների պատրաստման գործին: Մեծ հայրենասեր, խորհմուտ գիտնական, գիտության մեղվաջան, խանդավառ ու երբեք հոգնություն չի մացող մշակ, հայրական հոգատարությամբ տոգորված ուսուցիչ ու դաստիարակ էր նա: Երկար տարիների տեղաշունտ աշխատանքով նա գիտական այնպիսի մեծարժեք ուսումնասիրություններ է գրել, այնպիսի բարձր մակարդակի հասցրել հայերենի պատմության, համեմատական ֆեռականության, ստուգաբանության ու հայ բարբառագիտության ուսումնասիրությունը, այնպիսի ամփոփող ու ընդհանրացնող աշխատություններ տվել, որ առանց այդ հարուստ ժառանգության խորագես յուրացման անկարելի է լեզվաբան-հայագետ դառնալ և հայագիտական հետազոտություններով զբաղվել¹: Նրա աշխատություններն իրենց պարունակած համապարփակ փաստական նյութով ու դրա գիտական խորհմուտ մշակումով հայոց լեզվի ուսումնասիրության մեջ դարագլուխ կազմող գործեր են: Եթե Հյուրըմանի դպրոցը պատկերացնենք որպես մի սյուն, որի պատվանդանն են կազմում Հյուրըմանի ուսումնասիրությունները, ապա Աճառյանի աշխատություններն այդ սյունի խոյակներն են հանդիսանում: Այս էլ, ահա, մեզ իրավունք է տալիս հայերենի համեմատական ուսումնասիրության ճյուղում Հյուրըմանի հիմնադրած դպրոցը այժմ վերակոչել Հյուրըման-Աճառյանի դպրոց, որին հետևում են Սովետական Հայաստանի այժմյան գրեթե բոլոր լեզվաբանները:

¹ Մեր այդ միտքը լավագույնս հաստատվում է հետևյալ փաստով. ժամանակակից եվրոպական հայագետներից ոմանք, ծանոթ չլինելով «Արմատական բառարան»-ին և, ըստ երևույթին նրա գոյության մասին էլ զաղափար շունենալով, առաջարկել են այնպիսի ստուգաբանություններ, որոնք ուրիշներն էլ առաջարկած են եղել և հերքվել են «Արմատական բառարան»-ում, կամ էլ իրրև նորություն ստուգաբանել են այնպիսի հայերեն բառեր, որոնք նույն ձևով, բայց շատ ավելի հիմնավորված, արդեն ստուգաբանվել են «Արմատական բառարան»-ում:

Գրիգոր Պավազի Ղափանցյան

Մեր ժամանակի նշանավոր հայագետներից մեկն է Գրիգոր Այվազի Ղափանցյանը: Աշակերտելով անվանի լեզվաբան Բոգոլեն դե Կուրտենին և հայագետ Ն. Յա. Մառին, նա ընդհանուր լեզվաբանական կրթություն է ստացել և երկար տարիներ զբաղվել է հենց ընդհանուր լեզվաբանությամբ: Միևնույն ժամանակ նա իր հայագիտական ուսումնասիրությունների մեջ մեծ տեղ է տվել պատմա-հասարակական հարցերի լուսաբանությանն ու դրանց օգտագործմանը, որ նրան շատ հաճախ տարել է դեպի պատմագիտությունը: Մասնավորապես իր գիտական գործունեության վերջին երկու տասնամյակներում նա գրել է հայերենի ու հայ ժողովրդի կազմավորման շրջանի վերաբերյալ մի շարք հետազոտություններ, որոնք մեծ արժեք են ներկայացնում հայագիտության համար:

Գրիգոր Ղափանցյանը ծնվել է 1887 թ. Աշտարակում: Նախնական կրթությունն ստանալով տեղի տարրական դպրոցում (ուսսական), գնացել է Պետերբուրգ և սովորել գիմնազիայում, ապա՝ տեղի համալսարանում: 1913 թ. ավարտելով համալսարանը, վերադարձել է Հայաստան և մինչև 1918 թ. դասավանդել է իջմիածնի ձեմարանում, ապա տեղափոխվել Երևան և շարունակել մանկավարժական աշխատանքն այստեղ: 1920 թվականից Երևանի Պետական համալսարանում դասախոսում է զանազան մասնագիտական առարկաներ: Երկար տարիներ եղել է համալսարանի բանասիրական ֆակուլտետի ընդհանուր լեզվաբանության ամբիոնի վարիչը: 1942 թ. ստացել է բանասիրական գիտությունների դոկտորի տիտղոս՝ honoris causa: Հայաստանի կառավարությունը 1943 թ. շնորհել է նրան գիտության վաստակավոր գործչի կոչում: Նույն թվականին ընտրվել է ՀՍՍՌ Գիտությունների ակադեմիայի հիմնադիր կազմի իսկական անդամ և ակադեմիայի հասարակական գիտությունների բաժնի դիրեկտոր. ազատվել է այդ պաշտոնից 1949 թ.: 1950 թվականից մինչև 1955 թ. վարել է ՀՍՍՌ ԳԱ լեզվի ինստիտուտի դիրեկտորի պաշտոնը: Վախճանվել է 1956 թ. մայիսի 4-ին:

Գրիգոր Ղափանցյանը լեզվաբանական գիտա-հետազոտական աշխատանքներով զբաղվել է տակավին երիտասարդ հասակից, սակայն նրա բեղմնավոր շրջանն սկսվում է 1930-ական թվականներից, երբ կարծես ընդհանուր հայտարարի բերելով մինչև այդ կատարած առանձին հետազոտությունները, իրար ետևից հրատարակում է բազմաթիվ աշխատություններ: Այդ աշխատություններից պիտի հիշատակենք հետևյալը (հատոր 1, Երևան, 1939). այս գրքի մի հատվածը՝ ներածական-ընդհանուր մասը և հնչյունաբանությունը՝ նախապես հրատարակված է առանձին՝ 1937 թ.: Այս հրատարակության մեջ ավելացրել է ձևաբանությունն ու բառագիտությունը՝ իմաստաբանությամբ հանդերձ: Հեղինակը, օգտագործելով ընդհանուր լեզվաբանական հարուստ գրականությունը և վերանայելով այս գիտության մեջ եղած հիմնական սկզբբունքները մարքս-լենինյան դիալեկտիկական մատերիալիզմի հիմունքներով՝ աշխատել է տալ մարդկային լեզվի ու լեզվական բարդ երևույթների տեսական վերլուծությունը: Առանձին գլուխներում խոսելով լեզվական տարբեր երևույթների մասին՝ նա բացատրում է այդ երևույթներն իրենց պատմա-հասարակական բարդ իրողությունների մեջ, ցույց տալիս այդ երևույթների անխզելի կապը հասարակական գոյի հետ: Այս գիրքը մեր ժամանակի տեսական լեզվաբանության բնագավառի լավագույն գործերից մեկն է:

րակում է բազմաթիվ աշխատություններ: Այդ աշխատություններից պիտի հիշատակենք հետևյալը (Երևան, 1940). ընդարձակ և արժեքավոր ուսումնասիրություն է Ուրարտուի ներքին արտաքին քաղաքական անցյալի մասին՝ հիմնված արձանագրությունների ու նյութական կուլտուրայի մնացորդների քննության վրա: Գիրքը բաղկացած է չորս մասից. առաջին մասը նվիրված է Ուրարտուի նախապատմությանը. այստեղ հեղինակը նախ համատարակի խոսում է Ուրարտուի, ուրարտացիների ու նրանց ծագման մասին, ապա՝ տալիս ուրարտերեն լեզվի համեմատական քերականությունը: Երկրորդ մասն են կազմում պատմականորեն կազմավորված Ուրարտուի ներքին կյանքը, տնտեսական, հասարակական, պետական ու վարչական կառուցվածքը, քաղաքական վիճակը՝ հիմնված արձանագրությունների մատակարարած նյութերի վրա: Երրորդ մասում հեղինակն ուսումնասիրում է Ուրարտուի արտաքին-քաղաքական պատմությունը, որ, ըստ հեղինակի, յուր հետադուր հիմնական նյութն է կազմում: Վերջապես, չորրորդ մասը, որ ըստ էության հավելված է միայն, ամփոփում է պեղումների շնորհիվ հայտնաբերված՝ Ուրարտուի նյութական կուլտուրայի մնացորդների նկարագրությունը և մի քանի բնորոշ առարկաների նկարները (Մուսասիրի խալդական տաճարը, բրոնզե կաթսայի կանթը ևն): Գիրքը, որպես լուրջ ուսումնասիրություն Ուրարտուի պատմության վերաբերյալ, մեծարժեք ավանդ է ուրարտագիտության բնա-

գավառում, որոշակի արժեք է ներկայացնում նաև հայերի ու հայերենի նախապատմության համար:

3. Историко-лингвистическое значение топонимики древней Армении (Յրևան, 1940): Ուսումնասիրության նյութն է կազմում լեզվաբանական-պատմական քննությունը Հայաստանի այն տեղանունների, որոնք պահպանված են խալդական արձանագրություններում, հայկական գրավոր և այլ կարգի հուշարձաններում: Գիրքը բաժանված է հինգ գլխի, որոնցից առաջինում քննության են առնվում խալդական շրջանի ցեղային տեղանունները, որ հեղինակը դիտում, ուսումնասիրում և բացատրում է իբրև Հայաստանի հնագույն պատմության աղբյուրներ: Այնուհետև առանձին գլուխներում հաջորդաբար քննության է առնում ցեղային շրջանի հայկական տեղանունները, կուլտային շրջանի (культного периода) տեղանունները, շինարարական և այլ տերմիններից ստացված տեղանունները և վերջապես՝ տեղանվանական նորակազմությունները, որ հանդիսանում է հայկական հողի վրա կազմված տեղանունների լեզվաբանական-ձևաբանական ուսումնասիրությունը: Այս բոլոր հարցերը հեղինակը հետազոտում է պատմա-հասարակական ու լեզվաբանական մոտեցմամբ և փորձում է ցույց տալ նրանց նշանակությունը հայ ժողովրդի կազմավորման խնդրի լուսաբանման համար:

4. Արա գեղեցիկի պաշտամունքը (Յրևան, 1945). Արա գեղեցիկի պաշտամունքի ուսումնասիրությունն է, որ բաղկացած է երեք մասից: Առաջին մասում, որը վերնագրված է «Արա և Շամիրամ առասպելը», քննության է առնվում Արայի պաշտամունքի զարգացման վերջին փուլը, որ ժամանակագրորեն մեզ ավելի մոտ և իր բովանդակությամբ առավել ծանոթ լինելով, համեմատաբար, հեշտ է վերլուծել: Այստեղ նախ՝ պատմվում է առասպելի բովանդակությունը, ինչպես որ նա պահպանված է հայ մատենագիրների մոտ, ապա՝ տրվում է այդ առասպելի գիտական ուսումնասիրության համառոտ պատմական տեսությունը, այնուհետև՝ Միջագետքի ազդեցությունը հայկական առասպելաբանության վրա: Դրանցից հետո, առանձին հատվածներում ուսումնասիրում է հայկական առասպելի երեք կերպարների (Արա, Շամիրամ, արալեզ) ծագումը՝ լեզվաբանական-ստուգաբանական մոտեցումով, քննության նյութ է դարձնում այդ առասպելին նման հույների մոտ պահպանված՝ Նինոսի դեպի Հայաստան կատարած արշավանքի մասին եղած զրույցը, ընդհանուր գծերով նկարագր-

վում են մեռնող ու հարություն առնող ուրիշ աստվածությունները, որոնք իրենց արտահայտությունն են գտել այլ ժողովուրդների առասպելների մեջ (Քամուզ և Իշտար, Ադոնիս (Էշմոնի) և Ափրոդիտե (Աստրոնո), Ատտիս և Կիրեյա) և դրանց հետ համեմատության է դրվում մեր Արա և Շամիրամ առասպելը: Այս գլխի վերջում հեղինակը քննության է առնում այն հարցը, թե այդ առասպելի ընդհանուր մտայնությունը որչափով է ազդել հետագայի հայ սրբերի ու քրիստոնեական գործիչների կերպարների վրա և թե ինչպիսի՞ արտահայտություն է գտել այդ մտայնությունը վերջիններիս հետ կապված ավանդությունների մեջ:

Երկրորդ գլխում հեղինակը քննության առարկա է դարձնում Արայի պաշտամունքը, որպես ավելի վաղ շրջանի երևույթ, աշխատելով վեր հանել նրա նախնական «վեգետացիոն» և երկրագործական բնույթը: Այստեղ, օգտագործելով համեմատական դիցաբանության ու առասպելաբանության տվյալները, «միևնույն ստադիայի մտածողության և աշխարհայացքի» տարբեր ժողովուրդների մոտ ունեցած արտահայտությունն ու դրսևորումները հետազոտելով, հեղինակը փորձում է ցույց տալ հայերի կամ նախահայերի «մեծ կուլտուրական դերը մեր էրայից առաջ, ինչպես նմանը տեսնում ենք հետագայում և քրիստոնեական որոշ աղանդների մեջ, որպես հայկական ներդրում» (էջ 4):

Երրորդ մասում հեղինակը ուսումնասիրում է Արայի պաշտամունքի հետ կապված նյութական մնացորդները, ինչպիսիք են համարում է քարակոթողները: Դրանցից մի քանիսի նկարները բերում է գրքի վերջում:

Այս ուսումնասիրությունը հայկական առասպելաբանությանը նվիրված արժեքավոր մի գործ է. պետք է նկատի ունենալ, սակայն, որ լեզվաբանական-ստուգաբանական նյութը, որի վրա հենվում է հեղինակը, խիստ խախտ է և չի դիմանում քննադատության:

5. Хайаса — колыбель армян (Ереван, 1947). Этногенез армян и их начальная история. «Հայասա-Ազգի» ցեղերի ու նրանց լեզվական որոշ տվյալների պատմական ու լեզվաբանական ուսումնասիրությունն է, որ տարվում է երկու ուղղությամբ. հեղինակը, մի կողմից՝ քննության է առնում «Հայասա-Ազգի» պետության, որպես քաղաքական միավորի, քաղաքական ու կուլտուրական փոխհարաբերությունները հին փոքրասիական պետությունների ու ժողովուրդների հետ, փորձելով որոշել նրա պատմական տեղն ու դերը այդ պետությունների շարքում, մյուս կողմից՝ ձրգ-

տում է որոշել հայասա և ազգի ցեղախմբերի ու նրանց լեզուների դերը հայ ժողովրդի ու հայոց լեզվի կազմավորման պրոցեսում: Աշխատությունը բաժանված է երեք մասի: Առաջին մասում (էջ 9—123), որ կրում է «Հայասա-Ազգի» վերնագիրը, հեղինակը քննությունն նյութ է դարձնում այն ամենը, ինչ որ կապված է հայասանության նյութ է դարձնում այն ամենը, ինչ որ կապված է հայասանների հետ, երբ նրանք իրենց նախնական օրրանից (Եփրատի և Ճորոխի հովիտներից) դեռ չէին շարժվել դեպի հարավ: Այստեղ հատկապես ուսումնասիրվում են. 1) Հայասա-Ազգի անվան և այդ երկրի տեղադրության մեկնաբանության պատմությունը (էջ 9—27), 2) հեթանոսական արձանագրությունների տվյալները Հայասա-Ազգի երկրի մասին և դրա տեղադրության որոշումը (էջ 27—64), 3) Թագավորը և արք (цари и мужи) Հայասա-Ազգիի և նրանց անունների ստուգաբանությունը (էջ 64—78), 4) Հայ լեզվի և պատմության փաստերը՝ Հայասա-Ազգիի տեղադրության համար (էջ 78—99) և 5) Հայասա-Ազգի երկրի կուլտուր-պատմական դրությունը (էջ 99—123): Երկրորդ մասում (էջ 124—147), որ վերաբերում է Haj-kh-Armina, քննության են առնվում հետևյալ արդյունքները. 1) Անդրեփրատյան մի քանի ցեղերի կամ ժողովուրդների մասին՝ կապված հայերի էթնոգենեզի հետ (էջ 124—147), 2) Կիմեր-սկյութացիների ազդեցությունը Փոքր Ասիայի քաղաքական դրության վրա մեր թ.ա. VII դարում (էջ 147—154), 3) Հայերի խաղացումը դեպի Ուրատու (էջ 154—163), 4) Հայերի ծագման հնդեվրոպական կոնցեպցիան (էջ 163—171), 5) Armina անվան ծագման շուրջը (էջ 172—188), 6) Arime-Supria շրջանների սուբարո-խուռիական էթնո-լեզվաբանական աշխարհում արմինների՝ տեղադրության ճշգրտման շուրջը (էջ 188—209), 7) Հայերենի ուրարտաբանություններն ու խուռիաբանությունները (էջ 209—234), 8) Փոքր Հայքի դերը (էջ 234—239): Երրորդ մասը (էջ 293—358) ներկայացնում է ամբողջ հետազոտության ամփոփումն ու եզրակացությունը:

Այս աշխատության մեջ Գ. Ղափանցյանը շոշափում է հայերի ու հայերենի կազմավորման պրոցեսի հետ կապված խիստ կարևոր հարցեր, հենվելով հատկապես լեզվաբանական տվյալների վրա: Նրա հայտնած եզրակացությունները մենք ստորև հատուկ քննության նյութ ենք դարձնելու, ուստի և այստեղ դրանց չենք անդրադառնում:

6. Историко-лингвистические работы. К начальной истории армян. Древняя Малая азия (Ереван, 1956). նախկինում

տպագրված ուսումնասիրությունների միհատորյա ժողովածու է, որի մեջ մտել են. 1) Хайаса—колыбель армян (5—265), 2) Малоазийские (азианические) боги у армян (266—327), 3) Общие элементы между хеттским и армянским языками (329—408), 4) Суффиксы и суффиксированные слова в топонимике древней Малой Азии (409—462), 5) О двух социально-политических терминах древнего Ближнего Востока (463—470):

7. Հայոց լեզվի պատմություն. հիմն շրջան (Երևան, 1961. հետմահվան հրատարակություն). այս աշխատության մեջ Գ. Ղափանցյանն ամփոփում է իր զանազան հետազոտությունների արդյունքները և փորձում լուսաբանել հայերենի կազմավորման պատմական պրոցեսն ու հայերենի «աղերսները» զանազան լեզուների հետ: Համառոտ ներածականում շարադրում է իր մի քանի դրույթները էթնիկական լեզուների կազմավորման մասին և շատ հակիրճ, մանավանդ խիստ մակերեսորեն ու ոչ միշտ փաստերի ճշտությամբ, տալիս է որոշ տեղեկություններ հայոց լեզվի պատմության ուսումնասիրության վերաբերյալ:

Բուն աշխատությունը բաղկացած է երկու մասից: Առաջին մասը բաղկացած է վեց գլխից: Առաջին գլխում («Հայ ժողովրդի և լեզվի կազմավորումը», էջ 33—61) հեղինակը համառոտակի ներկայացնում է հայերի ու հայերենի կազմավորման պատմությունը՝ հիմնվելով իր նախորդ աշխատությունների վրա:

Երկրորդ գլխում («Հայասայի լեզվի աղերսը հարևան խեթերենի և արևմտյան վրացերենի հետ», էջ 62—68) աշխատում է բացահայտել Հայասայի լեզվի կապերը՝ մի կողմից, խեթերենի, մյուս կողմից՝ արևմտյան վրացականի հետ, օգտագործելով հայասական մի քանի հատուկ անուններ: Այս գլխում հեղինակն իր այն կարծիքն է ուղում հիմնավորել, որ իբր Հայասայի լեզուն ցեղակից է եղել, մի կողմից՝ խեթականին ու խուռիականին, մյուս կողմից՝ կովկասյանին, հատկապես արևմտյան վրացականին:

Հաջորդ գլխում («Հայասայի լեզվի, այլ կերպ՝ հայերենի աղերսը վրաց լեզվախմբի հետ», էջ 69—101), հեղինակն զբաղվում է հայերենի և կովկասյան լեզուների ընդհանրությունների քննությամբ: Այստեղ նա, ապրիորի կերպով Հայասայի լեզուն նույնացնելով հայերենի հետ, թվում է հայերենի ու լազո-մեգրելական լեզուների մի շարք ընդհանրություններ, որոնց մեծագույն մասը ըն-

* Հեղինակը մտադրություն ուներ հրատարակել իր բոլոր աշխատությունները «Երկրի ժողովածուի» մի քանի հատորով:

դոնեւի չէ, և այն եզրակացութիւնը հայտնում, թե «Փաստ է հայոց լեզվի, թե՛ գրաբարի և թե՛ բարբառների, սերտ առնչակցութիւնը յազո-մեզերելական լեզվախմբի հետ, և այդ արտացոլում է թե՛ տարբեր ժամանակաշրջաններ, որ պետք է ավելի կոնկրետավորվի. և թե՛ ապացուցում է, որ հայացման պրոցեսում, ինչպես մասամբ և հետո, հայկական ցեղաֆերմենտները (haia, azzi, bala...) հիմնական կերպով սահմանակցվել են և խառնվել ու ներթափանցվել են վրացական այդ արևմտյան ցեղերի ու լեզուների հետ» (էջ 101): Հիշենք, որ այդպիսի եզրակացութիւն է հանգում մի քանի տասնյակ բառերի քննութեամբ:

Չորրորդ գլխում («Հայերենի աղերսը խուռի և ուրարտական լեզուների հետ», էջ 102—146) հեղինակը քննութեան է առնում խուռիերենի կապը հայերենի հետ (էջ 104—129), ստուգաբանելով քսան բառ և 14 հատուկ անուն, ապա՝ անցնում է ուրարտերենի ու հայերենի առնչութիւններին: Նա հիշում է քսան բառ, որ, իր կարծիքով, ուրարտական ծագում ունի, ինչպես և մի քանի բառակազմական ածանցներ ու հատուկ անուններ:

Հինգերորդ գլխուր («Ընդհանուր լեզվատարբեր խեթերենի և հայոց լեզվի մեջ», էջ 147—219) նվիրված է հայերենի և խեթերենի ընդհանրութիւնների ուսումնասիրութեանը: Այստեղ հեղինակն իբրև ելակետ է ընդունում այն դրույթը, որ խեթերենը հնդեվրոպական լեզու չէ: Սրանից էլ ինքնին բխում է այն, որ եթե հայերենն ու խեթերենը ցեղակցական կապեր ունեն, ապա՝ դրանով հայերենը կարող է բնորոշվել կամ որպես ասիանիկ լեզու (ոչ հնդեվրոպական) և՛ կամ, գոնե, որպես խաչավորված (երկբնույթ) լեզու: Հայ-խեթական բառային ընդհանրութիւնները հեղինակը բաժանում է երեք կարգի. ա) խեթերենից հայերենին անցած փոխառութիւններ, բ) «Հայասայի և նման ցեղերից» խեթերենին անցած փոխառութիւններ և գ) «Այդ բառերը կարող են եղած լինել թե՛ խեթական նախկին ցեղերի լեզուներում կամ բարբառներում, և թե՛ նրանց սահմանակից կամ շփվող պալայցիների, հայասացիների, մոսխերի և մյուսների լեզուներում» (էջ 148): Մանրամասնորեն քննելով այն բոլոր բառերը, բառակազմական մասնիկներն ու քերականական ձևերը, որոնք, իր կարծիքով, ընդհանուր են հայերենին և խեթերենին, նա գալիս է այն եզրակացութեան, որ «հայերենի դիրքը այդ լեզվածագման և կազմավորման տեսակետից ավելի խառն և բարդ է, քան այն նշել է Չրիդրիսը խեթերենի մասին» (էջ 219): Երկրորդ մասը, որ անավարտ է մնացել, ամբողջապես նվիր-

ված է հայերենի հնդեվրոպական «նստվածքի (բաղկացութեան)» քննութեանը: Այստեղ հեղինակը նկարագրում է հնչյունական համակարգի, քերականական կառուցվածքի և բառապաշարի այն ընդհանրութիւնները, որոնք համեմատական քերականութիւնը վեր է հանել: Հեղինակը բերում է 297 հայկական բառարմատներ, որոնք ինքն էլ ընդունում է որպես հնդեվրոպական, ապա հիշում է շորս բառ (արգանդ, արտոյտ, մոր, մուգ), որոնք ստուգաբանում է դարձյալ իբրև հնդեվրոպական արմատներ: Գրքի 358-րդ էջում գրում է. «Մենք այժմ այստեղ կմատնանշենք 4—5 հնդեվ. արմատներ, հետո մանրամասն կվերլուծենք Հ. Աճառյանի «Արմ. բառ»-ում բերվածները, որոնք մեծ մասամբ քննադատութեան շեն դիմանում...»: Բայց ինչպես հայտնում է խմբագիրը տողատակի ծանոթութեան մեջ, նրա արխիվում այդպիսի բան չի գտնվել. պետք է ենթադրել, որ իր այդ մտադրութիւնը չի կարողացել իրականացնել:

Գիրքը, ամբողջութեամբ վերցրած, կարևոր նպաստ է հայոց լեզվի պատմութեան ուսումնասիրութեանը:

Սրանք են, ահա, Ղափանցյանի գլխավոր աշխատութիւնները, որոնցից հատկապես առաջինը հայ լեզվաբանութեան պատմութեան մեջ մի նշանավոր երևույթ կարելի է համարել, մասնավանդ՝ եթե նկատի ունենանք, որ այդ կարգի աշխատութիւններով հայ լեզվաբանական գրականութիւնը շափազանց աղքատ է եղել: Ղափանցյանն ունի բազմաթիվ այլ փոքր ու մեծ աշխատութիւններ ու հոդվածներ՝ թվով մոտ երեք տասնյակ, որոնք վերաբերում են կամ ընդհանուր լեզվաբանական հարցերի, կամ հայերենի մասնավոր խնդիրների:

Այժմ ծանոթանանք Ղափանցյանի լեզվաբանական հայացքներին:

Նախապես պետք է ասենք, որ Ղափանցյանը երկար ստեղծագործական ուղի է անցել: Սկսելով յուր լեզվաբանական գործունեութիւնը երիտքերականների դպրոցի, մասնավորապես Բողուն դե Կուրտենեի հետևողութեամբ, նա շուտով հեռացել է այդ դպրոցից և շատ խնդիրներում հարել Մառի տեսութեանը, որին, սակայն, որոշ հարցերում հակադրվում է. կամենալով յուրովի լուսաբանել դրանք մարքսիզմ-լենինիզմի հիմունքներով:

Այսպես, դեռևս 1914 թ. հրատարակած յուր «Լեզվաբանական դիպիլոմներ և լեզու» գրքույկի մեջ, խոսելով լեզվաբանութեան տարբեր ճյուղերի, ապա՝ լեզվի ու լեզվական երևույթների մասին, հեղինակը երիտքերականների նման, լեզվական բոլոր իրողու-

թյունների հիմքում տեսնում է մարդկային հոգեկան աշխարհի գործունեությունը, ամբողջ լեզվական երևույթների բովանդակում է համարում մարդկային հոգին. «Բոլոր լեզվային սիստեմները մարդկության հոգեկանության արտաքին արտացոլման որոշ ձևերն են: ...Այլ տարբեր «լեզվային սիստեմները», որոնց գոյանալը մարդկության կենդանական կացությունից այս կողմը պետք է անցնի, ստեղծում են հատուկ, ուրույն («ազգային, ցեղային...») հոգեկան աշխարհներ» (էջ 8): Լեզվական բոլոր երևույթներն, ըստ հեղինակի, գոյություն են ստանում, երևան են գալիս մարդկանց «հոգեկանության» միջոցով, իբրև հենց այդ իսկ «հոգեկանության», մարդկանց պատկերացումների արտահայտությունը, իբրև նրանց դրսևորումը: Յուրաքանչյուր լեզվական երևույթ «մկրտվում է» և ձևապես կազմվում մարդու հոգեկան աշխարհում. «Բոլոր վերոհիշյալ «լեզվային» երևույթները, ինչ պատճառից էլ առաջացած լինեն, միայն մի շավղով են իսկապես երևան գալիս լեզվի մեջ,—այդ մեր հոգեկանության միջնորդությունն է... այդ լեզվական երևույթները... իրենց իսկական «մկրտումը» և ձևավորումը ստանում են մեր հոգեկան բովանդակում» (էջ 6): Այնուհետև հեղինակը գտնում է, որ այդ լեզվային երևույթներն իրենց գոյությունն են ստանում անհատների մեջ՝ որպես մտապատկերների հարակցման մի եղանակ. այդ անհատական մտապատկերները նախապես շատ ավելի մոտ են եղել արտաքին աշխարհին, շատ ավելի կոնկրետ կերպով են արտացոլել արտաքին աշխարհի երևույթները, իսկ հետագայում դրանց հիման վրա էլ առաջացել են վերացական գաղափարները. «Լեզուները, «լեզվային սիստեմները», գոյություն ունենալով որոշ անհատների հոգեկանության մեջ, ներկայացնում են իրենցից մեր մտապատկերների հարակցման ուրույն եղանակները. իսկ մտապատկերների առարկաները սկզբում եղել են ավելի հարողը արտաքին աշխարհին, և հետո են առաջացել վերացական գաղափարները» (էջ 10): Հեղինակը, մի կողմից՝ լեզուն մարդկային «հոգեկանության» արտացոլումը համարելով, մյուս կողմից՝ դիտում է այն իբրև անհատների մեջ գոյություն ունեցող, անհատների մոտ ձևավորվող երևույթ: Բայց հենց այստեղ էլ նա որոշ շափով հեռանում է երիտքերականներից, դառնելով, որ այդ անհատականը միայն ընդհանուրի դրսևորումն է, նրա գործադրությունը. լեզուն ամփոփում է յուր մեջ ազգի հոգեբանությունը և ինքն էլ, այդպիսով, դառնում է ազգի համար մի ընդհանուր երևույթ. «լեզվային երևույթների այլազան պատկերները բնորոշվում են որակապես և թե քանակապես ազգե-

րի այսպես ասած «լեզվային հոգեկանության» տարբեր ձևավորումները ամփոփելով» (էջ 6): Լեզուն, իբրև մի ամբողջական երևույթ, գոյություն ունի միայն վերացական ձևով. յուրաքանչյուր անհատ յուր մեջ ունի այդ ընդհանուրը, որպես լեզվական ունակություն, բայց իրականում ամեն մի դեպքում դրսևորվում են միայն այդ ընդհանուրի մասերը: Կյանքում գործնականորեն գոյություն ունի այդ ընդհանուրի մասնավոր գործադրությունը միայն. «Գոյություն ունեն իհարկե այդ լեզվային երևույթների միայն գաղափարները, այն ինչ կյանքի մեջ, լեզվային միավորների («լեզուների») հոգեկանության մեջ գոյություն ունի, գիտակցաբար թե անգիտակցաբար, միայն յուրաքանչյուր լեզվային երևույթի մասնավոր ձևը» (էջ 6): Ինչպես տեսնում ենք, հեղինակը հետևում է երիտքերականներին, թեև որոշ խնդիրներում (ընդհանուրի և մասնավորի հարցում առանձնապես) արդեն հեռանում է նրանցից, մոտենալով սոցիոլոգիային:

Այս հետևումը սակայն երկար ժամանակ չի տևում: Ն. Մառի ազդեցությամբ սկսելով ուսումնասիրել հայերենը հնէաբանական մոտեցումով, նա աստիճանաբար հեռանում է երիտքերականներից ու հարում Մառին. բայց նույնիսկ այս շրջանում էլ նա լիովին չի ընդունել Մառի բոլոր սկզբունքները և որոշ հարցերում դեռևս կապվում է, մի կողմից՝ երիտքերականների, մյուս կողմից՝ սոցիոլոգիական դպրոցի հետ: Յուր լեզվաբանական հիմնական սկզբունքները նա արտահայտել է «Ընդհանուր լեզվաբանություն» աշխատության մեջ: Այստեղ հեղինակը նախ և առաջ տալիս է լեզվի բնորոշումը. լեզուն, ինչպես ասում է հեղինակը, պատմա-հասարակական երևույթ է. լեզուն ստեղծված է մարդկային արտադրական կոլեկտիվի կողմից, նա իր ծագմամբ, զարգացմամբ և իր էության մեջ իսկ պայմանավորված է հասարակական գոյով. հետևաբար, լեզուն, «իբրև վերնաշենքային երևույթ», արտացոլում է յուր մեջ հասարակության արտադրական հարաբերությունները, հասարակության զարգացումը նախնական վիճակում: Անդասակարգ հասարակության շրջանում լեզուն էլ զուրկ լինելով դասակարգային բնույթից, հետագայում, դասակարգերի առաջացման հետ ինքը ևս դասակարգային է դարձել. «Լեզուն միշտ չի եղել. նա յուր ծնունդն առնում է մարդուս դեռ կիսավայրենի վիճակում, հետագայում կազմակերպվելով հասարակական աշխատանքի պրոցեսից կամ պրոցեսի հետ: Հետևապես լեզուն պատմական կատեգորիա է

¹ Բոլոր ընդգծումները մերն են — է. Ա.:

կան դպրոցի ականավոր ներկայացուցիչ, ֆրանսիացի լեզվաբան Ժորժ Վանդրիենն էլ շարունակելով Սոսյուրի ու Մեյեի տեսակետը, ճիշտ այդ ձևով է արտահայտվում «Տնչունական օրենք»-ի մասին¹: Այնուհետև, անցնելով այդ Տնչունափոխական երևույթների պատճառներին, հեղինակը ժխտում է մի քանի տեսակետներ այդ մասին և առաջադրում իր կարծիքը, որով գտնում է, թե Տնչունական փոփոխություններն արդյունք են հասարակության մեջ առաջ եկած արտասանական նոր տրամադրության. «Տնչունափոխության բուն ազդակը, կապված լեզվական իրակությունների (Տնչուններ, ձևեր, բառեր, իմաստներ) ընդհանրապես փոփոխելիության անհրաժեշտության և բնականության հետ, համարում ենք արտասանական նոր տրամադրությունը, որը իբրև անհրաժեշտություն ի հայտ է գալիս հասարակայնորեն, և այն էլ լեզվի կոնկրետ մոմենտում, ամփոփում յուր կազմավորման մեջ թե՛ լեզվական իմանենտը, սպիցիֆիկ արտահայտությունը և թե՛ լեզվի պատմա-հասարակական զարգացման իմպերատիվը, կապված հասարակական մտայնության և լեզվի զարգացման պահանջի միասնականության հետ» (անդ, էջ 138—139): Այս դիրքերից ելնելով, Գ. Ղափանցյանը միանգամայն ճիշտ կերպով քննադատում է Մառի տեսությունը լեզվի Տնչունական համակարգի զարգացման մասին. «Միայն է ն. Յա. Մառի այն տեսակետը, թե բարդ (դիֆուզոնիդ) Տնչունները նորաստադիալ լեզուներում ստացվել և պահվել են հին ստադիալ վիճակներից («հաբեթական» և նախորդ ստադիաներից), իբրև այդ նախորդ ստադիաների հատկանիշներից մեկը» (անդ, էջ 130): Ի դեպ, Տնչունական օրինաչափությունների հարցում Ղափանցյանը Մառին քննադատել է նաև իր այլ գործերում, հատկապես՝ «Հաբեթական լեզվաբանությունն ու տեսությունը» հոդվածի մեջ (ԵՊՁԳՏ, № 2—3, 1927, էջ 374—397):

Ինչ վերաբերում է լեզուների ցեղակցության հարցին, ապա այստեղ հեղինակը նույնպես հակադրվում է Մառի ուսմունքին: Զիտսելով առհասարակ «նախալեզվի» մասին, Ղափանցյանն, այնուամենայնիվ, լիովին ընդունում է լեզուների ծննդաբանական դասակարգումը: Ընդունելով լեզուների ցեղակցությունը, նա ընդունում է նաև, որ այդ լեզուների այլևայլ տարրերի համեմատությամբ պետք է վերականգնել ավելի նախնական վիճակը, այն վիճակը, որից մեզ չեն հասել արձանագրված տեղեկություններ. «Հա-

¹ Տե՛ս Ж. Вандриес, Язык, էջ 44—59, հատկապես՝ 51—55:

մեմատելով պատմական այդ լեզվի ձևերն ազգակից այլ լեզուներին ման ձևերի հետ, կարող ենք մոտավորապես վերականգնել ավելի հին տեսակները: Օրինակ, մեր ժողովրդական «ախպեր» (= брат) ձևն ստացվել է «աղփեր», սա էլ «աղբայր» Տնագույն պատմական ժողովրդական ձևից (համտ. գրաբարի «եղբայր» ձևը): Բայց մյուս ազգակից լեզուների օգնությամբ մենք այդ «եղբայր»-ը ձևափոխված ենք համարում «bayer», սա էլ «blayr»//«brayr» իսկ վերջինս՝ bhrater (= брат) նախնական և հին ձևից: Այսպես կարող ենք անել ոչ միայն մի բառի նկատմամբ, ոչ միայն կոնկրետ լեզվի բառամթերքի՝ լեքսիկոնի, այլև լեզվի մյուս բոլոր տարրերի նկատմամբ» (անդ, էջ 12): Ցեղակից լեզուների այլևայլ տարրերի համեմատությունների միջոցով երևան են հանվում այդ լեզուների միջև եղած համապատասխանությունները. այսպես, օրինակ, ցեղակից լեզուների Տնչունաբանության մեջ հաստատված Տնչունական օրենքները բացահայտում են հենց այդ համապատասխանությունները. «Ազգակից լեզուների համեմատական ուսումնասիրության մեջ ևս գոյություն ունի «Տնչունական օրենք», որը ոչ այլ ինչ է, քան եթե այդ լեզուների մեջ եղած Տնչունական համապատասխանությունների (звуковые корреспонденции) որոշ ձևակերպումը, ֆորմուլիրովկան» (անդ, էջ 127): Այստեղ էլ, ինչպես տեսնում ենք, նա ճիշտ դիրքերի վրա է կանգնած և հենց այդ դիրքերից ելնելով, առանձնապես մեծ արժեք չի տալիս լեզուների ձևաբանական դասակարգմանը և գտնում է, որ այն շատ նյութ չի կարող մատակարարել լեզվական սիստեմների բացատրության համար. «Մեր կարծիքով, ձևաբանական կլասիֆիկացիան առայժմ հեռուները չի կարող գնալ և՛ դրանց տիպերի ճիշտ սահմանման, և՛ բացատրության մեջ, թեպետ և լեզվատիպերի այդ ձևաբանական իմամանենտը բնորոշվում է վերջին հաշվով հասարակականով: Լեզուների ձևաբանական տիպերի փնտհատականը (եթե ընդհանրապես այդ հնարավոր է անել) առայժմ սոսկ նկարագրականից չի անցնում» (անդ, էջ 281): Ինչպես գիտենք, Մառը այդ ձևաբանական դասակարգմանը ոչ միայն մեծ կարևորություն էր տալիս, այլև ձևաբանական տարրեր սիստեմները դիտում էր իբրև լեզվի ստադիալ զարգացման այս կամ այն աստիճանի յուրահատուկ վիճակը: Ղափանցյանը հակադրվում է նաև այս դրույթին, որը, ինչպես գիտենք, Մառի ուսմունքի հիմնական սկզբունքներից մեկն է: Շեշտելով, որ լեզուները սովորաբար լիովին չեն սպառվում այս կամ այն ձևաբանական տիպով, այլ հիմնականում կամ գերազանցապես մեկ

ձևաբանական տիպի պատկանելով, իրենց մեջ կրում են այլ ձև-վաբանական տիպի շատ երևույթներ, և որ լեզվի ձևաբանական կառուցվածքը պատմական զարգացման ընթացքում մի տիպից մյուսին է անցնում, նա գտնում է, որ այդ սխտեմների զարգացման անխախտ հաջորդականությունն գոյություն չունի, ուստի և դրանցով բացատրել լեզուների զարգացման աստիճանը հնարա-վոր չէ. «Իսկ ի՞նչ էր ասում Ն. Մառը լեզվի այդ երեք (չորս) ձևաբանական տիպերի մասին: Նա ոչ միայն դրանց հաջորդակա-նությունն մեջ չէր երկմտում, ոչ միայն չէր խոսում շատ լեզուների այդ տիպերի մեջ դժվարություններ ընդգրկվելու մասին և ընդհանրա-պես այդ ձևաբանական սահմանման սոսկ տեսական բնույթի մասին, այլ որպես կատարյալ ճշմարտություն ընդունելով, նա անմիջապես ցանկանում էր տնտեսապես այդ հիմնավորել և ապացուցել,—մի փորձ, որ մեր կարծիքով միանգամայն հնայիվ է և մեխանիկական» (անդ, էջ 379—280):

Անցնելով բառագիտությանը և պարզաբանելով լեզուների բա-ռամթերքի զարգացման ընթացքը, հեղինակը հատուկ ուշադրու-թյուն է նվիրում իմաստաբանությանը: Բառիմաստի զարգացման տարբեր երևույթների ուսումնասիրության և բացատրության մեջ հեղինակը ընդունում է Մառի մի քանի դրույթները: Քննության առնելով բառիմաստի փոփոխության առանձին երևույթները (բա-ռիմաստի նեղացում, լայնացում, շրջում), հեղինակը ցույց է տա-լիս, որ այդ իմաստափոխությունները սերտորեն կապված են դի-տակցության հետ և արտահայտում են հասարակության կամ նրա մի մասի մտայնության այս կամ այն ընթացքը: Այս տեսանկյու-նով էլ քննելով մի խումբ բառերի կրած իմաստային փոփոխու-թյունները, նա հաստատում է, որ այդ փոփոխությունները ար-գյունք են հասարակության սոցիալ-տնտեսական զարգացման և արտահայտում են այդ զարգացման այս կամ այն աստիճանը. ահա թե ինչ է ասում տուն, ազգ, ցեղ բառերի մասին. «Շատ լեզուներում «տուն» սոսկական հասկացողությունը, կապված հասարակական-տնտեսական զարգացման հետ, դառնում է տոհմ, ցեղ, ազգություն, հասարակություն. այդպես և ազգ, քով և նման բառերը» (անդ, էջ 331): Հեղինակը հատկապես շեշտում է ֆոնկցիոնալ իմաստա-փոխությունը (էջ 333), որ, ինչպես գիտենք, Մառի ուսմունքի հիմ-նական դրույթներից մեկն է կազմում: Հայտնի է, սակայն, որ թե՛ այդ և թե՛ ուրիշ իմաստափոխական երևույթներ, որոնք Ն. Մառը բացարձակ օրինաչափությունների էր վերածում սխալ կերպով, լեզ-

վաբանության մեջ վաղուց հայտնի էին, այնպես որ դրանց վրա հենվելով ասել, թե Գ. Ղափանցյանը «նոր ուսմունքի» հետևորդն էր, ճիշտ չէր լինի:

Վերջապես, կարևոր է նաև հեղինակի վերաբերմունքը համե-մատական մեթոդի նկատմամբ. ընդունելով համեմատական մե-թոդը և գործադրելով այն իր ուսումնասիրությունների մեջ, Ղա-փանցյանը միաժամանակ քննադատում է բուրժուական լեզվաբան-ների միակողմանիությունը և հենց այդ իսկ համեմատական մեթո-դի «պակասավորությունը» լեզվի ամբողջական ուսումնասիրության գործում: Նա գտնում է, որ այդ մեթոդով երևան են հանվում լեզու-ների նմանությունները, միջնորդ տարբերությունները, որ նույնչափ կարևոր են, անտես են առնվում. «Համեմատական մեթոդը (կոմ-պարատիվիզմը) ոչ միայն թերի է, ձևական է, չի պայմանավորվում լեզվի պատմա-հասարակական ֆակտորներով և դրանցով բացա-տրվում, այլև միայն նպատակադրված է ընդհանրությունների տե-սական վերականգնումով վերականգնել նաև սկզբնական դրանց աղբյուրը—մայր լեզուն: Լեզուների տարբերությամբ այդ մեթոդը գրեթե չէր զբաղվում, որովհետև իրեն նպատակին խանգարում էր: Իսկ ընդհանրությունների այլ բացատրություն նրանք ի վիճակի չեն տալու, ինչպես և տարբերությունների բացատրությունը» (անդ, էջ 14, ծան.): Այս, իհարկե, չի նշանակում, թե նա բոլորովին ժխտում է համեմատական մեթոդը. ո՛չ, նա այդ ընդունում է և ինքն էլ գոր-ծադրում է: Բայց ձգտելով հաղթահարել այդ «միակողմանիու-թյունն» ու «սահմանափակությունը», նա շատ հաճախ հեռանում է պատմա-համեմատական մեթոդի հիմնական սկզբունքներից, որ, ինչպես կտեսնենք, սխալների դուռ է բացում նրա առջև:

Ի մի բերելով վերը շարադրվածը, կարող ենք Գ. Ղափանցյա-նի տեսությունը ամփոփել հետևյալ հիմնական դրույթների մեջ: Լեզուն հասարակական երևույթ է. որպես այդպիսին նա անմիջա-կանորեն կապված է հասարակության կեցության հետ, նրա բաղի-սի հետ, որի վրա բարձրանում է իբրև «վերնաշենքային կուլտու-րա»: Լեզվի և հասարակության արտադրական գործունեության կապն անմիջական է նախնական շրջանում, իսկ հետագայում հան-դես են գալիս բազմաթիվ ու բազմապիսի միջնորդավորող օղակ-ներ, որոնք մթազնում են այդ կապը. ավելին, լեզուն ակտիվ գոր-ծոն է դառնում բաղիսի նկատմամբ, «հասարակական-տնտեսական զարգացման բարդ սխտեմի վրա՝ յուր մտածողությամբ և աշխար-հայացքով»: Լեզուն դասակարգային է դասակարգային հասարա-

կուսիցունների մեջ: Լեզվի փոփոխությունները, հատկապես հնչյունական օրենքները, ծագում են լեզվական իրակությունների «ընդհանրապես փոփոխելիության անհրաժեշտության և բնականության» և հասարակության մեջ ստեղծված նոր տրամադրության պահանջով: Բառիմաստի փոփոխություններն արտահայտում են հասարակության կամ նրա մի մասի մտայնությունը: Լեզուների դասակարգման ծագումաբանական սկզբունքը գիտական է և երևան է հանում լեզուների միջև եղած պատմական կապերը. ձևաբանական դասակարգումը գիտական մեծ արժեք ներկայացնել չի կարող:

Այս սկզբունքներից մի քանիսը, որոնք կապված են Ն. Յա. Մառի ուսմունքի հետ (լեզուն իբրև վերնաշենք, լեզվի դասակարգայնություն և այլն), իր ժամանակին ընդունված էին սովետական լեզվաբանության մեջ գրեթե բոլորի կողմից, թեև մեկնաբանությունների որոշ տարբերություններով: Այդ դրույթների մասին մենք այստեղ չենք խոսի, քանի որ վերը դրանց մանրամասն քննադատությունը տրված է: Համենայն դեպս, այստեղ անհրաժեշտ ենք համարում նշել, որ այդ դրույթներն ընդունելով հանդերձ, Գ. Ղափանցյանն աշխատում է ինքնուրույն մոտեցում ցուցաբերել, և որոշ շահով խմբագրում է Մառի ուսմունքը՝ ճիշտ դիրքերից: Չի կարելի շնորհակալություններ ասել, որ լեզվի և հասարակական կյանքի կապը նախնադարյան հասարակության մեջ համեմատաբար ավելի անմիջական է, քան զարգացման հետագա շրջաններում: Իհարկե, այդ նախնական ժամանակներում էլ այդ կապը անմիջական և ուղղակի կերպով չի արտահայտվում քերականական կառուցվածքի մեջ, բայց բառային կազմի, իմաստաբանության, ինչպես և լեզվի զանազան տիպի ճյուղավորումների մեջ նա ավելի անմիջականորեն է դրսևորվում: Ճիշտ է, որ հնչյունական օրենքները լեզվի զարգացման մեջ կարևոր դեր են խաղում: Բայց նրանց առաջացումը չի կարելի բացատրել ո՛չ լեզվի փոփոխելիության անհրաժեշտությամբ ու բնականության մեջ, ո՛չ էլ հասարակության տրամադրությամբ, ըստ որում ստեղծված տրամադրությունն ինքն էլ հետևանք է և ոչ թե պատճառ: Անշուշտ, բառերի իմաստափոխության մեջ դեր կատարում են և հասարակության տնտեսական-արտադրական գործոնելության հետ կապված երևույթները, և՛ հասարակայնության մտայնությունը: Բայց ո՛չ միայն դրանք. բառիմաստի փոփոխությունները կարող են պայմանավորվել և՛ հոգեբանական գործոններով, և՛ կենցաղային սովորությունների փոփոխություններով, և՛ բազմաթիվ ու բազմա-

պիսի երևույթներով: Այդ է պատճառը, որ հնարավոր չի լինում իմաստափոխությունը որոշակի սխեմաների տակ դնել կամ գտնել իմաստափոխական համընդհանուր օրինաչափություններ: Մառն էր, որ այդպիսի փորձ արեց և ստեղծեց իր սխեման, բայց ինչպես դիտենք, դա ոչ մի գիտական հիմք չունի: Իմաստաբանության բնագավառում, առհասարակ, Մառի ազդեցությունը Գ. Ղափանցյանի վրա զգացվում է թե՛ «Ընդհանուր լեզվաբանություն», թե՛ ուրիշ աշխատությունների մեջ:

Այս բոլոր քննադատելի կետերի հետ միասին, Գ. Ղափանցյանի լեզվաբանական կոնցեպցիայի մեջ գտնում ենք շատ ճիշտ դրույթներ. այստեղ կարելի էր հիշել ստադիալականության տեսության քննադատությունը, որ գտնում ենք նրա գրեթե բոլոր աշխատություններում, պատմա-համեմատական մեթոդի ընդունումն ու գործադրումը, լեզուների ցեղակցությունն իբրև պատմական իրողություն ընդունելը և այլն, և այլն: Հենց այս դիրքերից էր, որ նա քննադատում էր Մառի ուսմունքը դեռևս քսան-երեսունական թվականներին և նրանից հետո: Այս բոլորը արժեքավորում են Գ. Ղափանցյանի ընդհանուր լեզվաբանական տեսությունը միանգամայն դրական կողմից:

Հայ լեզվաբանական մտքի զարգացման պատմության մեջ Գ. Ղափանցյանի «Ընդհանուր լեզվաբանություն» աշխատությունն անշուշտ նշանավորում է մի նոր էտապ: Նրա բերած նորություններից հատկապես պետք է նշել ձևույթի, որպես լեզվաբանական կատեգորիայի, ըմբռնումը: Գ. Ղափանցյանն առաջինն էր, որ հայ լեզվաբանական գրականության մեջ որոշակիորեն տարբերակում է մտցնում ընդհանրապես լեզվական ձևի և ձևույթի միջև. ճիշտ է, նա հայերեն առանձին տերմին դեռ չի ստեղծում և գերադասում է գործածել մորֆեմա միջազգային տերմինը, բայց կարևորն այստեղ տերմինի ստեղծումը չէ, այլ տարբեր կատեգորիաների սահմանազատումը: Դեռևս 1937 թվականին հրատարակած իր «Ընդհանուր լեզվաբանություն» առաջին պրակի ներածական մասում, արտասանվածքի վերլուծությանը նվիրված հատվածում, ձևաբանական վերլուծության ամփոփման մեջ նա գրում է. «Ամենավերջին բաժանելի միավորը մենք քերականորեն կոչում ենք մորֆեմա (морфема), որոնցից հիմնական միտք ցույց տվողը կոչվում է արմատ, այդ ընդհանուրը կոնկրետացնող կամ սահմանագծող ձևական մասերը՝ ածանցներ..., իսկ կապակցող՝ ֆունկցիոնալ տարրը կոչում ենք վերջավորություն» (էջ 40): Ինչպես տեսնում ենք, այստեղ ձև-

վույթի ըմբռնումը, ինչպես և նրա երկու տեսակների տարբերակումն է տրվում, թեև դեռևս ոչ շատ հստակ կերպով: 1939 թ. «Ընդհանուր լեզվաբանության» I հատորի մեջ Գ. Ղափանցյանն ավելի հանգամանորեն է խոսում «մորֆեմայի» մասին. այստեղ քննության առնելով հիմնական և երկրորդական ձևությունները, որպես լեզվաբանական կատեգորիաներ, իրենց իմաստային ու ֆունկցիոնալ առանձնահատկություններով, տալիս է հետևյալ ընդհանուր բնորոշումը. «Այսպիսով մենք տեսնում ենք, որ կան հիմնական և երկրորդական ձևեր, իսկ երկրորդականների մեջ՝ երկու տեսակ ձևալմաստավոր մասեր, առաջինը ցույց է տալիս որոշ սահմանագծում այդ հիմնական գաղափարի համար, նրա սահմանորոշումը կամ կոնկրետավորումը ըստ նոր իմաստի, և դրանք կոչվում են «բառաստեղծական» կամ «բառակազմույթի» երկրորդական ձևեր... իսկ երկրորդը ցույց է տալիս բառի հարաբերությունը կամ կապը նախադասության մեջ այս կամ այն բառի հետ, մատնանշում է բառի, այսպես ասած, շարահյուսական դերը (ֆունկցիան), բառի կապական հարաբերությունները: Այդ իսկ պատճառներով էլ պիտի սահմանենք երեք «ձև» կամ «մորֆեմ», մեկը հիմնական կամ արմատական, իսկ մյուսները երկրորդական՝ բառաստեղծական երկրորդական ձև և բառահարաբերության երկրորդական ձև» (էջ 211): Ինչպես տեսնում ենք, այստեղ արդեն միանգամայն ճիշտ կերպով են սահմանված թե ձևույթը (մորֆեմ), ընդհանրապես, և թե նրա տեսակները (հիմնական և երկրորդական, իսկ վերջիններս էլ՝ բառաստեղծական ու բառահարաբերական): Գ. Ղափանցյանի այս սահմանումը, տերմինների մեջ եղած շփոթի վերացումով, գրեթե անփոփոխ ընդունված է մեր լեզվաբանական գրականության մեջ:

Վերջապես, առանձին ուղադրության է արժանի նրա տեսակետը լեզվի հնչյունների մասին: Ինչպես հայտնի է, լեզվաբանության մեջ Բոդուեն դե Կուրտենեն առաջինն էր, որ մտցրեց հնչյունի և հնչույթի տարբերակումը: Բոդուեն դե Կուրտենեի տեսությունը հետագայում շատ հետևորդներ ունեցավ թե՛ մեզ մոտ, թե՛ արտասահմանում: Հատկապես Պրագայի լեզվաբանական դպրոցը զարգացրեց հնչույթի տեսությունը ֆունկցիոնալ մոտեցումով և հիմք դրեց ժամանակակից հնչույթաբանության (ֆոնոլոգիայի), որ արդի լեզվաբանության կարևոր ճյուղերից մեկն է դարձել: Մեր իրականության մեջ, Հայաստանում, Գ. Ղափանցյանն առաջինն էր, որ անդրադարձավ հնչույթի, որպես լեզվական միավորի, տեսությանը. նա, ճիշտ է, ուղղակի որդեգրեց իր ուսուցչի տեսությունը,

բայց այդ էլ նորություն էր հայ լեզվաբանության մեջ: Հնչույթի մասին նա խոսում է արդեն 1937 թ. լույս տեսած իր ընդհանուր լեզվաբանության առաջին պրակում, իսկ «Ընդհանուր լեզվաբանություն» աշխատության մեջ ավելի հանգամանորեն է կանգ առնում այդ հարցի վրա. «Հնչյունն առանձին վերցրած այն շարքով մեզ համար նշանակություն ունի, իբրև վերլուծելի առարկա («օբյեկտ»),— ասում է Ղափանցյանը, որքանով նա կազմում է լեզվի հասարակական գիտակցման մեջ անհրաժեշտ և նշանակալի տարր և մեր հոգեկանության մեջ մի ամբողջություն, այսինքն՝ որչափով մենք ունենք նրա ամբողջական պարտադիր պատկերացումը—հիշողությունը: Հետևապես այդ հնչյունն իբրև «ֆոնեմա» է հանդես գալիս մեր մեջ և իբրև այդպիսին կազմում լեզվի հիմնական ատաղձը, շինանյութը: Ակուստիկական, հոգեկան և պատմա-հասարակական յուրացման մեջ ֆոնեման անբախտելի որակ է» (էջ 43): Ինչպես տեսնում ենք, այստեղ նա հնչույթը դիտում է որպես հոգեբանական երևույթ, որպես «պատկերացում-հիշողություն» կոնկրետ հնչյունների, այսինքն՝ այնպես, ինչպես սահմանում էր Բոդուեն Գե Կուրտենեն: Նույն աշխատության մեջ մի այլ տեղում, սակայն, դարձյալ անդրադառնալով լեզվի հնչյունական կողմին, Գ. Ղափանցյանը նշում է նաև հնչույթի, որպես բովանդակառիչ միավորի, ֆունկցիոնալ նշանակությունը լեզվի մեջ. «...Բառի ձևավորող հանգամանքը,— գրում է նա,— հանդիսանում է նրա հնչյունական արտաքինը, որպես բովանդակառիչ կամ ֆունկցիանիչ էլեմենտ, նայած, իհարկե, ինքնուրույն, թե օժանդակ՝ սպասարկու լինելուն» (էջ 287): Այստեղ, իհարկե, որոշ շարքով Գ. Ղափանցյանը մոտենում է լեզվի նվազագույն միավորի՝ հնչույթի ֆունկցիոնալ սահմանումին, բայց շատ հեռավոր, կարելի է ասել, դեռևս լիովին չգիտակցված կերպով: Ինչ էլ որ լինի, Գ. Ղափանցյանն, այնուամենայնիվ, առաջին լեզվաբանն է, որ հայ լեզվաբանության մեջ մրտցրեց հնչյունի, որպես ֆիզիկո-ֆիզիոլոգիական միավորի, և հնչույթի, իբրև սոցիալական միավորի, տարբերակումը:

Այսպիսով, Գ. Ղափանցյանի «Ընդհանուր լեզվաբանություն» աշխատությունը, որի մեջ ամբողջական կերպով արտահայտված են հեղինակի տեսական դրույթները լեզվի մասին, մի լուրջ ներդրում է սովետական լեզվաբանության մեջ: Ճիշտ է, նա իր մեջ կրում է նաև ժամանակի ընդհանուր սխալները, բայց դրա հետ միասին դրսևորում է հեղինակի ձգտումը ինքնուրույն մոտեցում ցուցաբերելու քննարկվող հարցերի նկատմամբ և լուծելու այդ հարցերը:

մարքսիզմի դիրքերից: Իսկ սա արդեն շատ բան է նշանակում: Ամբողջութեամբ վերցրած, Գ. Ղափանցյանի «Ընդհանուր լեզվաբանությունը» ներկայացնում է իր ժամանակի սովետական լեզվաբանության ամենաբարձր մակարդակը:

Այժմ ծանոթանանք Գ. Ղափանցյանի տեսությանը՝ հայերենի մասին: Ինչպես ընդհանուր լեզվաբանական խնդիրների, այնպես էլ հայոց լեզվի ուսումնասիրության մեջ նա որոնումների երկար շրջան է ապրել. ընդունելով պատմա-համեմատական լեզվաբանության հիմնական դրույթները և, դրան համապատասխան, հայերենը հնդեվրոպական լեզու համարելով, նա, այնուամենայնիվ, իր գիտական գործունեության հենց սկզբից էլ որոշ հարցերում հակադրվում է դասական հնդեվրոպաբանությանը: Այդ հակադրությունը, որ Ն. Յա. Մառի ազդեցությունից էր գալիս, արտահայտվում էր ամենից առաջ հայերենի ցեղակցության հարցում: Գ. Ղափանցյանը իր ուսուցչի նման, գտնում էր, որ հայերենը կազմավորվել է զանազան ցեղային լեզուների խաչավորմամբ ու ձուլումով, որի հետևանքով էլ հայերենը դարձել է երկբնույթ խառնվածո լեզու: Այս տեսակետը արդեն պաշտպանում է իր վաղ շրջանում գրած, «Հայ-արմենական լեզվախմբի ազգակցական բովանդակությունը» հոդվածում (Արտ., 1917, էջ 205—231): Մառի ազդեցությունն է երևում նաև նրա վաղ շրջանի ստուգաբանական-բառագիտական վերլուծությունների մեջ, երբ փորձում էր բառերի իմաստաբանական ու ձևաբանական առանձին երևույթների քննությամբ վեր հանել «հնէաբանական մնացորդները» հայերենում և դրանով իսկ գտնել հաբեթական լեզվաշերտը հայոց լեզվի բառամթերքի, հընչյունաբանության ու քերականական կառուցվածքի մեջ: Այս տեսակետից հատկանշական է նրա «Հնէաբանական մի քանի մնացորդները հայերենում» (ԳԱՄԻՏ, 1927, № 2, արտատպություն առանձին գրքուկով, Երևան, 1927) հոդվածը: Այստեղ, քննության առնելով ւ ձայնորդի ներմուծումը մատ, աղաչ, հանաչ (> մատ, աղաթ, ծանաթ) և այլ բառերում, ան- «վրա, վրայով, դեպի» նախածանցը, շշականների հերթագայությունը բառակազմում (§// ի, յ, չ//յ, չ(c)//յ...), ռ//յ և ռ//ո հերթագայությունը երկբարբառների մեջ և նոր ո, ր, դ, չ հնչյունների հավելումը բաղաձայնի ու ձայնավորի միջև (օր., դինդ-դրինդ!), այն եզրակացությանն է հանգում, թե «դրանցից երկուսը հնդեվրոպական ծագում ունեն, իսկ մյուս երեքը՝ հաբեթական («խաղա-ուրարտական»),—մի երևույթ, որ գալիս է ավելի ևս պնդելու մեր լեզվի «խառն» (Missprache) լինելը» (Ա-

ռանձնատիպ, էջ 1): Այս հիմնական սկզբունքով էլ Գ. Ղափանցյանը շարունակել է յուր ուսումնասիրությունները: Նրա ուշադրության կենտրոնն է կազմում հայերենի կազմավորումը՝ այլևայլ լեզուների խաչավորմամբ. ուստի և ուսումնասիրելով հայերենը զանազան լեզուների համեմատությամբ, ձգտում է երևան հանել հայերենի «բաղկացուցիչ» տարրերը: Այսպես՝ նա 1931 թվականից ի վեր իրար ետևից հրատարակեց մի քանի աշխատություններ, որոնց մեջ քննում է հայերենի կապը հաթերենի, ուրարտերենի և այլ լեզուների հետ: «Այդ առանձին ուսումնասիրություններից էլ քաղելով իր համար անհրաժեշտ տվյալները, նա արդեն 1944 թ. հանրագումարի բերելով դրանք, հայտնեց յուր տեսակետը հայերենի կազմավորման մասին՝ «Հայերենի ծագումը» թեմայով կարդացած զեկուցման մեջ»¹ Այդ զեկուցման մեջ Գ. Ղափանցյանը հայտնում էր, որ ինքը չի մխտում հայերենի ցեղակցությունը հնդեվրոպական լեզուների հետ, որտ արում՝ հայերենի և ցեղակից ուրիշ լեզուների կապը համարում է ոչ թե ստադիալ զարգացման արդյունք, այլ դիտում է որպես ծննդաբանական ցեղակցություն: Դրա հետ, սակայն, նա գտնում է, որ հնդեվրոպաբանությունը միակողմանի կերպով է ուսումնասիրել հայոց լեզուն և երևան է հանել միայն հայերենի ու ցեղակից լեզուների ընդհանրությունները, անտեսելով այն բազմաթիվ և կարևոր տարբերությունները, որոնցով երևան են գալիս հայերենի մեջ եղած այլևայլ լեզվական բաղկացուցիչ տարրերը: Հայերենը բազմաթիվ ցեղային լեզուների խաչավորմամբ կազմված լեզու է: Հնդեվրոպական տարրը հայերենի մեջ մի շերտ է կազմում միայն, և դրանով չի սպառվում հայոց լեզվի ամբողջական նյութը: Հայերենի մեջ ավելի մեծ մասն են կազմում տեղական-փոքրասիական տարրերը, որոնց ուսումնասիրությամբ էլ զբաղվում է ինքը: Այդ ուսումնասիրություններից հանած եզրակացությունն այն է, որ «Հայերենը գերազանցապես փոքր-ասիական լեզու է. իր ամբողջ կազմության երեք քառորդով նա պատկանում է փոքր-ասիական լեզուներին, մեկ քառորդը միայն հնդեվրոպական է»: Իր այս տեսակետը հիմնավորելու համար նա իբրև փաստարկ հիշում է այն շատուգաբանված հայերեն բառերը, որոնց թիվը հասնում է հինգ

¹ Քաղաքից բացակայելու պատճառով չենք լսել այդ զեկուցումը. ուստի և տրված եղանք անձամբ դիմել զեկուցողին ու համատարիվ, բանավոր գրույցի միջոցով ծանոթանալ նրա վերջնական տեսակետին՝ հայերենի կազմավորման ու ցեղակցության մասին: Ամենայն հարագատությամբ շարադրում ենք այդ դրույցի ընթացքում նրա ասածները:

դիպլ-գաղափարախոսական շատ դրսևորումներով ու հատկություններով անկասկած ցեղակից է հին փոքրասիական (ասիանական), քան քե հնդեվրոպական լեզուներին» (էջ 14, ընդգծումն իրենն է— է. Ա.):

Քննության երկրորդ բաժինն է կազմում բառակազմության ու բառահարաբերության տեխնիկան. այստեղ էլ, ելնելով այն փաստից, որ հայերենը՝ 1) ներկայացնում է խիստ բազմազանություն, 2) կրկնության եղանակների բազմազանությամբ ու քանակով «ակներևաբար հակվում է դեպի ասիանական լեզուները» (էջ 17), 3) մասնիկները, ինչպես հոլովման ու խոնարհման, այնպես էլ դերանվանական, կցականության իրենց եղանակով ավելի մոտենում են խեթականին և ուրարտականին, 4) բառակազմական մասնիկները գերազանցապես վերջածանցներ են, որի մեջ, ըստ հեղինակի, արտահայտվում է ասիանական լեզուների ազդեցությունը, նա եզրակացնում է. «Ծթե հանրագումարի բերենք հայերենի բառակազմության ու բառահարաբերության (այսինքն՝ բառի քերականական ֆունկցիաների արտահայտության) տեխնիկայի տվյալները, ապա պետք է ասել, որ այս ձևական հնարավորությունները կամ միջոցները՝ իրենց տարատեսակություններով ու բազմատեսակ դրսևորումներով կրում են հայտնապես խառնվածո բնույթ իրենց ծագումաբանական բովանդակության ու աղբյուրների մեջ: Իսկ այս բոլորը, որիչ այդպիսի տվյալների հետ միասին մի անգամ ևս վկայում են հայոց լեզվում ասիանական լեզվաբանական ենթաշերտի գերակշռության մասին» (էջ 19—20, ընդգծումները հեղինակինն են— է. Ա.):

Վերջապես, քննության երրորդ մասն է կազմում լեզվական ատաղձը (հնչյուններ, արմատներ, մասնիկներ): Հայերենի հնչյունական համակարգի տվյալներից դատելով՝ Գ. Ղափանցյանը գտնում է, որ հայոց լեզուն հնչյունական իրողություններով ավելի մոտ է ասիանական լեզուներին: Թվելով հայերենի՝ հնդեվրոպական ծագում ունեցող 22 մասնիկներ (վերջավորություններ ու ածանցներ), և գտնելով, որ դրանց թիվը չի անցնում 30-ից, պնդում է, թե կարելի է գտնել այդքան էլ, եթե ոչ ավելի ասիանական ծագումով, մասնիկներ և հիշում է 29 մասնիկ, որ ինքը կապում է ասիանական լեզուների հետ: Ի վերջո, անդրադառնալով հայերենի բառանական լեզուների հետ: Ի վերջո, անդրադառնալով հայերենի բառապաշարին, այն կարծիքն է հայտնում, թե «ստուգապես իրև հրնդեվրոպական ճանաչված բառերի քանակը կազմում է տասը տոկոսից ոչ ավելին: Հետևաբար, մնացած ամբողջ զանգվածը, ոչ փոխառ-

յալ բառերի, որոնք անկասկած (sic!) մեծ մասամբ բնիկ հայկական են, ըստ ծագման պետք է համարվի տեղական ասիանական» (էջ 31, ընդգծումն իրենն է— է. Ա.):

Այս բոլոր դատողությունների վրա հիմնվելով էլ, ահա, Գ. Ղափանցյանը հետևյալ ընդհանուր եզրակացությունն է հանգում: «Հայոց լեզուն դուրս է եկել փոքրասիական («ասիանական» ըստ Պ. Կրեյմերի տերմինաբանության) լեզվական ենթաշերտից, նախնական գոյությամբ, ուր-որ խերական, խուռա-ուրարտական ու վրացական էթնիկական աշխարհի ու լեզուների միջև: Իսկ հայերենի հնդեվրոպական շերտը, որ առաջ է եկել առավելապես գուցե կիմերա-սկյութական, կելտական (գաղաթական), աֆեական (հունական) ներխուժումների հետևանքով, կողմնակի, քեև կարևոր, ծագումաբանական ներդրում է, որ, իհարկե, չի բացառում նաև ուրիշ հնդեվրոպացիների (արիացիների, փոյուզացիների և այլն) ազդեցությունը» (էջ 40—41, ընդգծումն իրենն է— է. Ա.):

Մի կողմ թողնելով ընդհանուր սկզբունքները, որոնց անդրադառնալու ենք ստորև, անհրաժեշտ ենք համարում առայժմ կանգ առնել գրքում հայտնված մի քանի կարծիքների վրա, որոնք, թյուրիմացություններից խուսափելու համար, մանրամասնորեն շարադրեցինք վերը հենց հեղինակի խոսքերով, միանգամայն օբյեկտիվորեն ու նկարագրական եղանակով: Գ. Ղափանցյանը գտնում է, որ երկակի թիվը հայերենում գոյություն չունի, իսկ դա մոտեցնում է նրան ասիանական ու կովկասյան լեզուներին: Հայտնի է, որ միջին հայերենում երկակին կա, ինչպես և բարբառներում (այդ փաստը հիշում է նաև ինքը). գրաբարում կան առանձին քարացած ձևեր, որոնց մեջ գտնում ենք հնդեվրոպականի երկակիի հետքերը (օր., երկու): Վերջահար դերանվանական հոդերի կիրառության շատ մեծ գործածություն գտնում ենք հնդեվրոպական լեզուներում, հատկապես իրանական ձյուղում (օր., gof-tam-aš «ասացի նրան»): սեռականի փոխարինումը գործիականով (սրտի բարկությամբ) հնդեվրոպական լեզուների համար ոչ անսովոր և քերականությունների մեջ էլ իր հատուկ անվանումն ու ճանաչումն ստացած (հոլովական ձգողություն = attractio casibus) երևույթ է: Հայերենը թեև մեզ ավանդված վիճակում քերականական սեռ չունի, բայց հոլովման համակարգում, ինչպես ցույց են տվել Ա. Մեյեն և Հ. Աճառյանը, կան երևույթներ, որոնք ներկայացնում են սեռի մնացորդները: Այսպիսով, հայերենի և ասիանական ու կովկասյան լե-

զուտների «ստադիալ-գաղափարախոսական ադիբուսակցութեան» այս «հիմքերը» կորցնում են իրենց զորութիւնը:

Բառակազմութեան ու բառահարաբերութեան եղանակների բազմազանութիւնը ոչինչ չի կարող ասել լեզուների ցեղակցութեան մասին: Դա վերաբերում է նաև կրկնութեան «տիպերին ու քանամասին»: Հայտնի է, որ կրկնութիւնը, որպես բառազգծական միջոց, թյուրքական լեզուների բնորոշ երևույթներից մեկն է, և հայերենն թյուրքական լեզուների բնորոշ երևույթներից մեկն է, և հայերենն այս տեսակետից խիստ նման է այդ լեզուներին: Եթե բառակազմութեան ու կրկնութեան տեխնիկայի նմանութիւնը լեզուների ցեղակցութեան հիմքը համարենք, ապա հայերենը ցեղակից պետք է համարենք թյուրքական լեզուներին:

Մասնիկների քննութեան մեջ Գ. Ղափանցյանը, ամենից առաջ, հաշվի չի առնում մի շատ էական հանգամանք. հնդեվրոպական ծագումով մասնիկների զգալի մասը թեքական վերջավորութիւններն են, իսկ իր թված ասիանական-կովկասյան ծագումով մասնիկները (եթե նույնիսկ ընդունենք դրանց ճշտութիւնը) ածանցների են: Ի դեպ, ինքը՝ Գ. Ղափանցյանն էլ իր ուրիշ աշխատութիւնների մեջ նշում է, որ հայերենի թեքման վերջավորութիւնների մեծագույն մասը հնդեվրոպական է: Իսկ դա շատ կարևոր է լեզուների ցեղակցական կապերը որոշելու համար. բառակազմական մասնիկները կարող են փոխառվել լեզվից լեզու և փոխառվում են, բայց բառահարաբերական վերջավորութիւնները չեն փոխառվում: Եվ դա հասկանալի է: Բառի փոխառութեամբ կամ լրացվում է տվյալ բառի պակասը փոխառու լեզվի մեջ, կամ ունեցած որևէ բառ փոխարինվում է նորով: Երկու դեպքում էլ փոխառութիւնը վերաբերում է առանձին, անկախ լեզվական միավորի, թեև առաջին դեպքում լեզվի մեջ ոչ մի միավոր չի փոփոխվում, այլ միայն պակաս է լրացվում, իսկ երկրորդ դեպքում՝ մեկ անկախ միավորը (բառը) փոխարինվում է մի ուրիշով: Ինչ էլ որ լինի, այնուամենայնիվ, բառի փոխառութիւնը չի հանգեցնում որևէ սիստեմի փոխառութեան՝ տվյալ լեզվի կառուցվածքի մեջ: Մինչդեռ քերականական ձևերի փոխառութիւնը, նույնիսկ մի առանձին վերջավորութեան, անկախ փոխառութիւնը, փոփոխութիւն կմտցներ ո՛չ կարգի մեջ: Եթե, ասենք, սովխոզ բառի փոխառութիւնը ուսերեկարգի մեջ: Եթե, ասենք, սովխոզ բառի փոխառութիւնը հայերենում, նից առաջ չի բերել որևէ համակարգի փոփոխութիւն հայերենում, նույնիսկ բառային կազմի մեջ, ապա, օրինակ, ուսերեկարգի հոգնակի ու (печ-и) վերջավորութեան փոխառութիւնը կհանգեցնէր հոգ-

նակի կազմութեան փոփոխութեանը հայերենում և, դրա հետ միասին, նաև ամբողջ հոլովման համակարգի փոփոխութեանը: Բացի դրանից, թեպետ և՛ բառը, և՛ քերականական վերջավորութիւնները արտակցիայի արդունք են, այնուամենայնիվ, բառային արտահայտման շրջանակները շատ ավելի սահմանափակ են, քան քերականական արտակցիայինը: Այսպես, յուրաքանչյուր բառ ենթադրում է վերացում բազմաթիվ առանձին առարկաներից, երևույթներից կամ հատկանիշներից, որոնք ընդհանրացվում են տվյալ բառի արտահայտած հասկացութեան մեջ: Դրան համապատասխան էլ բառերը կապի մեջ են միատեսակ կամ միանման (թեև բազմաթիվ) առարկաների, հատկանիշների որոշ խմբերի հետ, մինչդեռ քերականական վերջավորութիւնները արտահայտում են առարկաների, երևույթների, հատկանիշների վերացարկված հարաբերութիւններ ո՛չ թե առանձնակի առարկաներից, երևույթներից ու դրանց հատկանիշներից, այլ բառերից ու նախադասութիւններից արտահայտման շնորհիվ: Այլ կերպ ասած, քերականական վերջավորութիւնների մեջ մենք ունենք առավել բարձր և անսահմանափակ ընդհանրացում: Այնուհետև, բառը թեև արտահայտում է առանձինից ու իրականից, այնուամենայնիվ, նա բնորոշվում է հասկացութեան առարկայնութեամբ, որակայնութեամբ և այլն, նա արտահայտում է առարկաների, հատկանիշների առարկայնացած կամ որակայնացած հասկացութիւն, մինչդեռ քերականական վերջավորութիւնները զուրկ են առարկայնութիւնից, որակայնութիւնից և այլն, և արտահայտում են լոկ նյութական աշխարհի առարկաների, երևույթների, հատկանիշների հարաբերութիւնները՝ բառերի միջև ստեղծվող հարաբերութիւնների միջոցով և իբրև բառերի ու նախադասութիւնների հարաբերութիւններ: Մրանից բխում է այն, որ քանի որ բառակազմական մասնիկները ևս արտահայտում են առարկայնութիւն, որակայնութիւն և այլն, ապա, բառերից բացի, հնարավոր է նաև բառակազմական մասնիկների փոխառութիւնը, թեև ոչ այն մասշտաբներով, ինչ որ բառերի փոխառութիւնը:

Վերջապես, փոխառութիւնները, որքան էլ նրանք շատ լինեն, որևէ ամբողջական համակարգ չեն ներկայացնում. եթե, օրինակ, հայերենը փոխառել է պարսկերենից աշխարհ բառը, դա բոլորովին էլ չի նշանակում, թե պետք է փոխառած լինի նաև բառերի այն ամբողջ խումբը, որ պարսկերենում կապված է աշխարհ բառի հետ: Ընդհակառակն, ինչպես հայտնի է, նույնիսկ այդ բառի ածանցավոր ձևերը չի վերցրել և կազմել է իր ներքին բառակազմական միջոց-

ներով (աշխարհային, աշխարհական, համաշխարհային և այլն)-
ավելին, հենց այն բառային խմբերը, որոնք ներկայացնում են որոշ
սիստեմ, սովորաբար շեն փոխառվում կամ փոխառվում են հազվա-
գյուտ դեպքերում. այդպես են, օրինակ, դերանունները և թվական-
ները՝ մեկից մինչև տասը: Եթե որոշ դեպքերում էլ փոխառված
բառերը փոխատու լեզվում կազմում են որոշ սիստեմ, ապա այդ
դեպքում էլ սիստեմը չէ, որ փոխառված է ամբողջությամբ, այլ նրա
առանձին տարրերը (որոշ թվով բառեր), որպես իրարից անկախ
միավորներ: Այսպիսով, լեզուների ցեղակցությունը որոշելու համար
էական է քերականական վերջավորությունների ընդհանրությունը: Ի
դեպ, Գ. Ղափանցյանը ստուգաբանում է նաև մի քանի բառահա-
րաբերական ձևույթներ՝ որպես ասիանիկ-կովկասյան՝ հենվելով
այս դեպքում Ն. Մառի վրա: Այսպես, օրինակ, միջին հայերենի և
բարբառների երկակիի -ուի մասնիկը կապում է վրաց. -ebi հոգ-
նակերտ մասնիկի հետ, գրաբարյան հոգնակի սեռ., տր. հոլովների
ց վերջավորությունը, ինչպես և աշխարհաբարի բացառականի ց-ն
կապում է վրացերենի գործիականի -ն վերջավորության հետ և
այլն: Բայց այս ստուգաբանություններից ո՛չ մեկն էլ ընդունելի
համարել չի կարելի. օրինակ, -ebi մասնիկից առաջացած է համա-
րում -ուի (-wi): Ինչպես տեսնում ենք, վրացական Ե հնչյունը
այստեղ դարձել է Վ (w), ինչ որ չի հաստատվում պատմական
շրջանում կատարված փոխառություններով: Առհասարակ, հայերե-
նը որոշ դարաշրջանում Ե հնչյունը ձայնավորներից հետո դարձրել
է Վ թե՛ բնիկ և թե՛ փոխառյալ բառերում. ընդունված է, որ այդ
փոխառությունը տեղի է ունեցել մեր թ. ա. III դարից էլ շուտ:
Ուրեմն, եթե վրացական այդ մասնիկից ստացվել է հայերեն -ուի
(-wi), ապա նա պետք է փոխառված լիներ այդ վաղնջական ժամա-
նակներում: Դա հնարավոր է, իհարկե: Բայց այդ դեպքում պետք է
մասնիկը ենթարկված լիներ նաև մյուս հնչյունական օրենքներին,
որոնք գործում էին այն ժամանակ. օրինակ, պետք է ընկած լիներ
վերջին ձայնավորը (i), իսկ e ձայնավորը պետք է պահված լիներ
անփոփոխ, այլ կերպ ասած, պետք է ունենայինք եւ (ew) մասնիկը
և ոչ -ուի (wi), այսինքն՝ աշ-եւ, ոտ-եւ ևն, փխ. աշուի, ոտուի ևն,
ինչպես որ ունենք: Հոգնակիի -ց վերջավորությունը վրաց -ն-ից
չէր կարող առաջանալ, որովհետև վրաց. ն-ն հայերենում տալիս է
ք (հմմտ. թոկ < վրաց. թոկի, անթեղ < վրաց. անթերա ևն), ըստ
որում հայերենի այդ ց վերջավորությունն ստուգաբանված է որպես
հնդեվրոպական, և բոլոր հայագետներն էլ այդ ստուգաբանությունն

ընդունում են: Այսպես է նաև մյուս ստուգաբանությունների մեծա-
գույն մասը:

Այսպիսով, լեզվաբանական հիմքից զուրկ են առաջին երկու
բաժնի բոլոր դրույթները. ինչ վերաբերում է բառային կազմի մա-
սին հայտնված կարծիքին, ապա այն էլ չի արդարանում (տե՛ս
ստորև): Իսկ եթե ճիշտ չեն որևէ տեսություն իբրև հիմունք ծառա-
յող տվյալներն ու դրույթները՝ առանձին-առանձին, ապա ճիշտ չէ
նաև տեսությունը՝ ամբողջությամբ վերցրած:

Ինչպես ասել ենք, իր հետագա ուսումնասիրությունների մեջ
Գ. Ղափանցյանն առաջնորդվում էր հենց այն տեսությամբ, որ
առաջարկել էր 1944 թ. հատուկ զեկուցմամբ և որ ավելի մանրա-
մասնորեն շարադրել է հիշյալ գրքույկում, ուստի և մենք տնհրա-
ծեշտ չենք համարում մանրամասնորեն խոսել հետագայում լույս
տեսած նրա աշխատությունների մասին: Դրանց ընդարձակ բովան-
դակությունը վերը շարադրել ենք արդեն և այստեղ բավականանում
ենք միայն մի քանի մեջբերումներ կատարելով, ցույց տալու հա-
մար, որ նա մինչև իր կյանքի վերջն էլ այդ տեսության վրա կանգ-
նած մնաց:

Իր «Хайаса—колыбель армян» աշխատության մեջ Գ. Ղա-
փանցյանը, հենվելով իր լեզվաբանական վերլուծությունների,
առանձնապես հատուկ անունների (տեղանուններ, անձնանուններ,
տոհմանուններ ևն) ստուգաբանությունների վրա, որոնց մեծա-
գույն մասը վստահելի չէ, այն եզրակացությունն է հայտնում, որ
«հայոց լեզուն կենդանի զավակն է իր ժողովրդի կազմավորման
պրոցեսի և իր սաղմնավորման հնագույն ստադիայում անկասկած
ծագում է նախախեթականին (протохетский) և խեթականին, այդ
թվում նաև հիբրոգլիֆների խեթականին, ապա բալայերենին, դա-
տելով հայասա-բալայական քաղաքական վիճակից, և վերջապես
վրացերենին, առանձնապես նրա հարավային ներկայացուցիչնե-
րին՝ միգրելա-ճանական բարբառներին, ցեղակից՝ Հայասայի ցե-
ղերի լեզվից: ...Միայն մեր թվ. V դարում պատմական ասպարեզ
իշած հայոց լեզվում, նրա հնդեվրոպական շերտի քանակական ու
որակական տեսակետից ոչ միայն գերակշռություն չկա, այլև չկա
նրա հավասարակշռությունը տեղական ասիանական-խուռոտական
հիմնական միջուկի, ինչպես այդ կարելի էր հասկանալ Ն. Մառի
առաջին բնորոշումից՝ հայոց լեզվի «արիո-հաբեթական» խառնը-
վածո «երկցեղ միջուկի» մասին (տե՛ս նրա «Грам. др.-арм. язы-
ка», (СП, 1903) գրքի առաջաբանը): Այս դրույթն, իհարկե, ավելի

ճիշտ էր, քան հնդեվրոպաբան-հայագետներինը, բայց և այնպես կրում էր մի քիչ ընդհանուր բնույթ, իր հիմնավորման համար օգտագործելով միմիայն վրաց լեզվի տվյալները» (Хайаса, էջ 247—248): Հիրավի, Ն. Յա. Մառը իր գիտական գործունեության առաջին շրջանում, երբ դեռ լեզուների ցեղակցությունն ընդունում էր, համարում էր հայերենը խաչավորված լեզու, բայց շատ սեղմ շրջանակների մեջ մնալով: Գ. Ղափանցյանը բացեց այդ շրջանակները և հայերենը ցեղակից հայտարարեց խեթա-խուռա-ուրարտա-վրացա-ճանա-մեգրելական և հնդեվրոպական լեզուներին: Այդ նույն սկզբունքն է ընկած նաև նրա վերջին, հետմահու լույս տեսած, «Հայոց լեզվի պատմություն» աշխատության մեջ, որտեղ ասում է. «Հայերենը ունի ուժեղ շափով շեշտված հնդեվրոպական նկարագիր, որը նստել է տեղական (ասիանիկ) լեզուների վրա, այդպիսով կազմելով մի յուրատեսակ խաչավորված նոր լեզու: Հայերենը հետաքրքրական է ոչ միայն այդ երկու հիմնարար կոմպոնենտների գենեզիսով, որ առանձին տեղ է գրավում լեզուների պատմության մեջ, այլև հարևան վրաց, ուրարտախուռիտական և սեմական լեզուների «ազդեցությամբ», թեպետ այստեղ ևս չի բացառվում այդ որոշ տարրերի «հարազատ» լինելը» (էջ 12): Այս աշխատության մեջ նա փորձում է նաև տեսականորեն հիմնավորել լեզուների խաչավորման տեսությունը: Նա գտնում է, որ «տոհմացեղային հասարակարգում, երբ մոտավոր քանակի և կուլտուրայի ցեղեր են խաչավորվում և դրանց տարբեր լեզուները իրենց ընդհանուր կառուցվածքով շատ էլ չեն հակասում իրար, թեպետ և ազգակից չեն, կարող է տեղի ունենալ այդ ցեղային տարբեր լեզուների խաչավորում իրենց թե՛ բառամթերքով և թե՛ քերականական տարրերով: Հայոց լեզվի կազմությունը զգալի կերպով հենց այդպիսի պրոցեսի (կամ պրոցեսների) հետևանք է» (էջ 13): Գրքի հետագա ամբողջ շարադրանքը հիմնված է նախորդ աշխատությունների տվյալների վրա և որևէ նոր բան չի բերում: Այսպես, ուրեմն Գ. Ղափանցյանի կարծիքով, հայոց լեզուն խաչավորված ասիանական-կովկասյան-հնդեվրոպական լեզու է:

Քննենք այդ տեսությունը, սկսելով հենց վերջին մեջբերումից: Ի՞նչ բան է լեզուների խաչավորումը և ի՞նչ հետևանք է ունենում նա խաչավորվող լեզուների կյանքում: Լեզուների խաչավորում ասելով հասկանում ենք երկու կամ ավելի այլալեզու ցեղերի (տոհմերի, ժողովուրդների) խառնվելու, իրար ձուլվելու պրոցեսում նրանց բոլորի համար մեկ ընդհանուր լեզվի գոյացումը: Ն. Մառը և իր

հետևորդները, ինչպես և արտասահմանյան մի քանի լեզվաբաններ, գտնում են, որ այդ պրոցեսում իրար ձուլվող ցեղերի լեզուները նույնպես ձուլվում են իրար, խառնվում, խաչավորվում իրար հետ և դրա հետևանքով առաջանում է մի նոր լեզու, որ դրանցից ոչ մեկը չէ, բայց բոլորից էլ ինչ-որ բան վերցրել է: Ն. Մառը, ինչպես տեսանք, խաչավորումը հետագայում կապեց իր ստադիալականության տեսության հետ. այստեղ մեզ դա չի զբաղեցնի, քանի որ վերը խոսել ենք այդ մասին, մանավանդ որ Գ. Ղափանցյանն այդ չի ընդունում: Պատմությունը ցույց է տալիս, որ արդեն կազմավորված ժողովուրդների լեզուները խաչավորման չեն ենթարկվում: Պատմությունից գիտենք, որ արդեն կազմավորված ժողովուրդը կարող է ձուլվել մի այլ ժողովուրդի մեջ և հենց դրանով էլ, իբրև առանձին ժողովուրդ, դադարել գոյություն ունենալուց. դրա հետ միասին կարող է մահանալ նաև նրա լեզուն, մինչդեռ այն լեզուն, որով խոսող ժողովուրդն իրեն է ձուլել, ասիմիլյացիայի ենթարկել մյուսին (կամ մյուսներին), պահպանվում է հիմնականում, առանց իր քերականական կառուցվածքը փոխելու, առանց իր ինքնատիպությունը կորցնելու: Լեզուների խաչավորման այսպիսի բացատրությունն ընդունված է սովետական լեզվաբանության մեջ: Եվ չնայած դրան, Գ. Ղափանցյանը մինչև իր կյանքի վերջն էլ կանգնած մնաց այն տեսակետի վրա, որ լեզուները կարող են խաչավորվել, առաջ բերելով մի նոր, խառնված լեզու: Դիմենք, ուրեմն, պատմական հայտնի տվյալների քննության: Գիտենք, օրինակ, որ աղվանները պատմականորեն կազմավորվել էին որպես ժողովուրդ. նրանք ունեին իրենց լեզուն, աղվաններն, որ ընդունված է կովկասյան լեզուների ընտանիքի մեջ մտցնել: Թուրք-թարական արշավանքների հետևանքով պատմական Աղվանքն ընկավ Թուրքական տիրապետության տակ: Ժամանակի ընթացքում այդ տերիտորիայում կազմավորվեց նոր ժողովուրդ, ազրբեջանական ժողովուրդը: Որպես այդպիսին ազրբեջանական ժողովուրդը կազմավորվել է այդտեղ, իրեն ձուլելով աղվաններին և այլ փոքր ժողովուրդների: Պատմական այդ պրոցեսում ասիմիլյացիայի ենթարկված աղվանների լեզուն մահացել է, «խաչավորվելով» ազրբեջաներենի հետ. բայց ի՞նչ է այդ խաչավորման հետևանքը. պարզապես ոչինչ: Ազրբեջանները պահպանվեց, առանց իր քերականական կառուցվածքը փոխելու, պահպանվեց որպես մենաբնույթ թյուրքական լեզու, վերցնելով աղվաներենից թերևս որոշ քանակով բառեր, որոնք լիովին վեր հանել դեռ հնարավոր չի եղել՝ աղվանե-

րենից մեզ ավանդված տվյալներ շունենալու պատճառով: Համե-
նայն դեպս, որքան էլ մեծ լինի այդ բառերի քանակը, նրանք փո-
խառություններ են աղվաներենից և ուրիշ ոչինչ: Ուրիշ օրինակ
առնենք. այժմյան Ադրբեջանի տերիտորիայում ապրում են ուտի-
ներ (երկու գյուղում). գիտենք, որ ուտիներն ունեին իրենց թագա-
վորութունը, թեև մեծ մասամբ հայերի կամ պարսիկների թևար-
կության տակ էին լինում. մոտ երկու հազարամյակ նրանք ապրե-
ցին հայերի մեջ և վերջիվերջո ձուլվեցին հայերին, մասամբ էլ
ադրբեջանցիներին: Ի՞նչ եղավ արդյունքը. փոխվե՞ց հայերենն
այդ «խաշավորումից». ոչ. գուցե ուտիերե՞նը դարձավ խաշավոր-
ված, խառնված լեզու. այդ էլ չէ. ուտիերենը դեռ մինչև այժմ էլ
կա, ըստ որում նա խառնուրդ լեզու չի ներկայացնում. նա, իհարկե,
ունի հայերենից և ադրբեջաներենից կատարած բառային փոխա-
ռություններ, բայց միայն փոխառություններ: Կարելի է այսպիսի
բազմաթիվ օրինակներ բերել. բայց այդ էլ բավական է համոզվելու
համար, որ ժողովուրդների լեզուները խաշավորվելով առաջ չեն
բերում ինչ-որ նոր, խառնածին լեզու: Բայց Գ. Ղափանցյանը, Ն.
Մառի նման, խուսափելով պատմության՝ մեզ հայտնի և պատմա-
կան ստույգ տվյալներով լուսավորված ասպարեզից, ապավինում
է նախապատմությանը. նրա կարծիքով՝ լեզուների խաշավորում
է կարող է տեղի ունենալ տոհմատիրական հասարակարգում, «երբ
մոտավոր քանակի և կուլտուրայի ցեղեր են խաշավորվում և դրանց
լեզուները իրենց ընդհանուր կառուցվածքով շատ էլ չեն հակասում
իրար» (Հայոց լեզվի պատմ., էջ 13): Այսպիսի հարցադրումը զուրկ
է պատմական հիմքից. Այդ բացատրությունը հանգում է այն դրույ-
թին, թե տոհմատիրական հասարակության մեջ ցեղերի ու տոհմե-
րի խաշավորումը տեղի է ունենում խաղաղ ճանապարհով, ոչ ազ-
գակից ցեղերի ու տոհմերի համերաշխ գոյակցության պայմաննե-
րում: Մինչդեռ դա բոլորովին էլ այդպես չէ: Ց. Էնգելսը իր «Ընտա-
նիքի, մասնավոր սեփականության և պետության ծագումը» աշխա-
տության մեջ ցույց է տալիս, որ միայն արյունակից ցեղերը, որոնք
մեկ ընդհանուր տերիտորիայի վրա են ապրում, դեռ չեն կորցրել
իրենց նախնական միասնության գիտակցությունը և խոսում են
միևնույն լեզվի բարբառներով, կարող են վերստին միանալ, ցե-
ղային միություններ կազմել ու հիմք դնել ժողովուրդների կազմա-
վորման: «Ամերիկայի հնդկացիների մեծամասնությունը ցեղային
միություն սահմաններից այն կողմ չանցավ: Միմյանցից լայնար-
ձակ սահմանաշերտերով բաժանված, հավիտենական պատերազմ-

ների շնորհիվ թուլացած՝ նրանց փոքրաթիվ ցեղերը սակավաթիվ
մարդկանցով հսկայական տարածություններ էին բռնում: Ազգակից
ցեղերի մեջ տեղ-տեղ դաշինքներ կնքվում էին ժամանակավոր կա-
րիքի դեպքում և իսկույն էլ, այդ կարիքը վերացվելուց հետո, ցր-
վում էին: Սակայն որոշ վայրերում սկզբնապես ազգակից, բայց
իրարից բաժան-բաժան եղած ցեղերը կրկին միանում և տևական
դաշինք էին կնքում և դրանով առաջին քայլն անում դեպի ազգու-
թյունների կազմավորումը¹: Բայց նույնիսկ այս դեպքում էլ միշտ
չէ, որ ամեն ինչ խաղաղ է ընթանում: Արյունակից ցեղերի ու ցե-
ղախմբերի միջև էլ շատ հաճախ պատերազմներ են լինում, մասնա-
վանդ միասնական ժողովրդի կազմավորման շրջանում, երբ նրան-
ցից յուրաքանչյուրը ձգտում է գերիշխանություն՝ մյուսների նկատ-
մամբ: Այսպիսի շատ փաստեր հայտնի են թե՛ հույների, թե՛ հռո-
մեացիների և թե՛ ուրիշ ժողովուրդների պատմությունից: Ինչ վե-
րաբերում է ոչ արենակից ցեղերին ու տոհմերին, ապա նրանց
խաղաղ ու համերաշխ ձուլման մասին խոսք անգամ լինել չի կա-
րող: Այդ միավորումը տեղի է ունենում սրով ու հրով, արյան
սպանդի մեջ, երբ պարտված ցեղի անդամներին պարզապես ոչըն-
չացնում են կամ կենդանի պահելով՝ ստրկացնում: Նույն աշխա-
տության մեջ Ց. Էնգելսը ցույց է տալիս, որ նույնիսկ մինչև
ժողովուրդների կազմավորման շրջանում էլ, պատերազմող ցեղե-
րից կամ տոհմերից հաղթողը կամ գլխովին ոչնչացնում է պարտ-
վողներին, կամ գերի է վերցնում՝ ստրկացնելով նրանց և կամ, եթե
իր տոհմի (ցեղի) անդամների թիվը զգալիորեն պակասել է, որդե-
գրում է նրանց՝ իր տոհմի (ցեղի) անդամ դարձնելով: Ինքնին հաս-
կանալի է, որ այդպիսի պատմա-հասարակական պայմաններում
չի կարող լինել նաև ոչ ազգակից (ինչպես և ազգակից) լեզուների
համամասն խաշավորում: Այսպես կոչված լեզուների խաշավորումը
պայքար է ձուլողների և ձուլվողների լեզուների միջև, որի հետևան-
քը լինում է մեկի հաղթանակը, իսկ մյուսի՝ պարտությունը: Հնարա-
վոր է, որ տվյալ դեպքում պարտված լեզուն պահպանվի իրենով
խոսող հանրության մի ուրիշ հատվածի մոտ, որ չի ձուլվում ուրիշ-
ներին: Հնարավոր է նաև, որ պատմական որոշ պայմաններում,
նվաճողները իրենք ձուլվեն տվյալ ժողովրդին և կորցնեն իրենց
լեզուն: Բայց այստեղ մեզ համար կարևորն այն չէ, թե ինչ էլք է

¹ Ց. Էնգելս, Ընտանիքի, մասնավոր սեփականության և պետության ծագումը, Երևան, 1948, էջ 123:

ունենում այդ պայքարը այս կամ այն կոնկրետ դեպքում և ինչու՞, այլ այն, որ ոչ մի դեպքում էլ «խաչավորումը» խառնածին լեզուառաջ չի բերում: Խաչավորումը ոչ այլ ինչ է, եթե ոչ լեզվական ազդեցությունների մի տեսակը միայն, և եթե նա այլ տերմինով են կոչում, քան սովորական փոխառությունները, ապա դա արդարանում է ոչ թե իր հետևանքի ինչ-որ ուրույն բնույթով, այլ միայն պատմա-հասարակական պայմանների առանձնահատկությամբ: սովորական փոխառությունները կարող են տեղի ունենալ սովորական հարևանական հարաբերությունների, կուլտուրական ազդեցության, քաղաքական ազդեցությունների հետևանքով, առանց տարբեր ցեղերի կամ ժողովուրդների ասիմիլյացիայի էլ, մինչդեռ «խաչավորում» տերմինով հասկանում են հենց ժողովուրդների կազմավորման ժամանակ կամ նրանց հետագա պատմության ընթացքում ասիմիլյացիայի պրոցեսում պարտվող լեզվի թողած ազդեցությունը հաղթող լեզվի վրա: Իսկ այդ ազդեցությունը, ինչպես վերը ցույց տվինք, չի կարող տարածվել քերականական կառուցվածքի վրա: Այս ընդհանուր սկզբունքից ելնելով, այժմ անցնենք հայերենին և քննության առնենք այն փաստարկները, որոնցով Գ. Ղափանցյանն ուզում է հիմնավորել իր տեսությունը: Իր վերջին աշխատությունների մեջ նա հատուկ ուսումնասիրության առարկա դարձրեց Հայաստանի լեզուն: Այդ լեզվից մեզ ոչինչ չի ավանդված, այդ պատճառով էլ նա դիմում է հատուկ անունների (տեղանուններ, անձնանուններ, տոհմանուններ ևն) քննությանը: Այդ քննության վրա հենվելով, նա գալիս է այն եզրակացության, թե Հայասան գտնվել է պատմական Հայաստանում, Եփրատ, Ճորոխ և Արաքս գետերի վերին հոսանքի շրջանում. հենվելով այնուհետև դարձյալ տեղանունների վերլուծության վրա, նա դիտում է Հայաստանի լեզուն որպես հայերեն: Հասկանալի է, որ այսպիսի նույնացումը սոսկ ենթադրության արժեք կարող է ունենալ: Այն հանգամանքը, որ հին Հայաստանի տեղանունների մեջ որոշ հնչյունախմբեր համընկնում են հայերենի այս կամ այն բառին, ածանցին և այլն, դեռ ոչինչ չի կարող ասել հայերենի և այն լեզուների կապի մասին, որոնք խոսվել են Հայաստանի տերիտորիայում: Կասկածից վեր է, որ եթե հաստատված է այս կամ այն ցեղի (ժողովրդի, էթնիկական միավորման) գոյությունն այդ տերիտորիայում հայ ժողովրդի կազմավորման շրջանում, ապա նա՝ այդ ցեղը, մտել է հայ ժողովրդի կազմի մեջ. բայց դա չի կարող նշանակել, թե նրա լեզուն էլ անպայման հայ էթնիկական լեզվի բաղադրիչն է դարձել, կամ

հենց հայոց լեզուն է: Այդպիսի ծանրակշիռ եզրակացության համար պետք է իմանալ այդ լեզուն և նրա քերականական կառուցվածքի ու բառապաշարի ուսումնասիրությամբ լուծել հարցը: Հակառակ պարագայում ոչ մի կարծիք լուրջ արժեք ունենալ չի կարող: Նույն հաշտության մենք կարող ենք հայերենը համարել աղվաներեն կամ ինչ-որ մի այլ լեզու, որ, սակայն, գիտական ոչ մի հիմք չի ունենա: Մենք չենք բացառում, իհարկե, որ հայերենը կարող է հենց Հայաստանի լեզուն լինել. տեսականորեն դա անկարելի չէ: Բայց այդ դեպքում ամենից առաջ պետք է ապացուցվի, որ այդ լեզուն հնդեվրոպական լեզու է եղել, իսկ դրա համար էլ անհրաժեշտ է այդ լեզուն իմանալ:

Հայաստանի լեզուն նույնացնելով հայերենին, մյուս կողմից՝ Գ. Ղափանցյանը կապեր է որոնում այդ լեզվի ու ասիանական լեզուների միջև և զանազան ստուգաբանությունների վրա հենվելով՝ եզրակացնում, թե քանի որ Հայաստանի լեզուն ցեղակից է խեթերենին, ապա դա վկայում է նրա տեղական բնույթի մասին: Ի դեպ, Գ. Ղափանցյանը ելնում է այն դրույթից, թե խեթերենը հնդեվրոպական լեզու չէ, բայց, ինչպես հայտնի է, այժմ (և իր ժամանակ էլ) արդեն հաստատված է, որ խեթերենը, նեսիտերենը, հիերոգլիֆային խեթերենը պատկանում են հնդեվրոպական ընտանիքին: Այդ կարծիքը կա նաև լուվիերենի, լիկիերենի, լյուդիերենի մասին¹: Միայն նախախեթերենն է, որ անշատվում է հնդեվրոպականից և հարում կովկասյան ընտանիքին: Իսկ սրանից պետք է համապատասխան մեթոդաբանական եզրակացություն հանել. նախքան հայերենի և խեթերենի ցեղակցության մասին այս կամ այն կարծիքին հանգելը, պետք է որոշակիորեն զատել լեզվական նյութի երկու կարգ հայերենում: Դրանցից մի կարգի մեջ պետք է մտցնել այն բոլոր ընդհանրությունները, որոնք կան հայերենի ու նախախեթերենի միջև: Եթե այդ ընդհանրություններն ընդգրկում են հայերենի քերականական կառուցվածքը կամ գոնե դրա էական տարրերը, և բառապաշարի կարևորագույն բառերը, ապա հնարավոր կլինի եզրակացնել, թե հայերենը ցեղակից է նախախեթերենին, իսկ դրանից էլ կբխեր այն, որ հայերենը ևս, ինչպես նախախեթերենը, հնդեվրոպական լեզու չէ: Ի հակառակն դատելով, կարող ենք ասել. քանի որ հայերենը հայտնապես հնդեվրոպական լեզու է, ապա նրա և նախա-

¹ Տե՛ս, օրինակ, И. М. Дунаевская, О характере и о связях языков древней Малой Азии, ВЯ, 1954, № 6:

խեթերենի միջև ծագումաբանական ընդհանրություններ լինել չեն կարող: Դրանց մեջ եղած ընդհանրություններն, այսպիսով, հնարավոր է դիտել միայն ու միայն որպես ազդեցությունների (ուղղակի կամ անուղղակի) հետևանք:

Երկրորդ կարգի մեջ պետք է մտցնել այն ընդհանրությունները, որոնք կան խեթերենի, հիերոգլիֆյան խեթերենի ու նեսիտերենի և հայերենի միջև. այս ընդհանրություններն էլ, իրենց հերթին, անհրաժեշտ է երկու խմբի բաժանել: Մի խմբի մեջ պիտի մտցնել այն ընդհանրությունները, որոնք փոխազդեցությունների հետևանքով են առաջացել, իսկ մյուս խմբի մեջ՝ նրանք, որ այդ ճանապարհով չեն առաջացել, այստեղ էլ, ուրեմն, պետք է կատարել այնպիսի աշխատանք, ինչպիսին կատարել է Հ. Հյուբշմանը հայ-իրանական ընդհանրությունների նկատմամբ: Իհարկե, այդպիսի խմբավորումը անհրաժեշտ չէ կատարել պարզելու համար՝ հայերենն ու խեթերենը ցեղակից են, թե ոչ: Եթե ընդունվում է, որ հայերենն էլ, խեթերենն էլ հնդեվրոպական լեզուներ են, ապա դա ինքնին արդեն նշանակում է, թե նրանք ցեղակից են: Այդ խմբավորումը անհրաժեշտ կլինի այն բանի համար, որպեսզի պարզենք, թե հնդեվրոպական լեզուների շարքում հայերենն ու խեթերենը ինչպիսի՞ հարաբերության մեջ են՝ հեռավոր, թե՞ մերձավոր:

Գ. Ղափանցյանն այդպիսի տարբերակումներ չի կատարում, այլ բոլոր ընդհանրությունները միևնույն մակարդակի վրա է դնում և դրա հիման վրա իր ենթադրություններն անում: Այդ նշանակում է, թե նրա մոտեցումն արդեն մեթոդաբանորեն սխալ է, իսկ սխալ մեթոդաբանական հիմքի վրա կառուցված տեսությունը ճիշտ լինել չի կարող:

Վերջապես, մեթոդաբանական տեսակետից կարևոր նշանակություն ունի նաև մի այլ հարց՝ Գ. Ղափանցյանը հիմնվում է այն դրույթի վրա, որ այսպես կոչված ասիանական լեզուները (բոլոր խեթերենները, լուվիերենը, լիկիերենը են) ցեղակից են կովկասյան լեզուներին: Այս դրույթը ինքնին արդեն բերում է մի շատ տրամաբանական և խիստ ծանրակշիռ եզրակացության: Այսպես՝ գիտենք, որ, օրինակ, հայերեն, հունարեն, կելտական, սլավոնական, հնդկական, իտալական և մի շարք այլ լեզուներ ցեղակից են իրար և կազմում են լեզուների հնդեվրոպական ընտանիքը: Քանի որ այդպես է, ապա մենք կարող էինք հայերենն ու բրետոներենը, առանձին վերցրած էլ, ցեղակից համարել նույնիսկ այն դեպքում, եթե նրանց միջև անմիջական ընդհանրություններ բերականական կառուցված-

քի մեջ չգտնեինք. այդպիսի եզրակացության մենք կարող էինք հանգել, հենվելով այն փաստի վրա, որ ծագումաբանական ընդհանրություններ կան, մի կողմից՝ հայերեն, սլավոնական, իտալական, հունարեն, հնդ-իրանական լեզուների, մյուս կողմից՝ այս վերջինների ու կելտականի միջև: Ընդունելով, այսպիսով, հայերեն և բրետոներեն լեզուների ցեղակցությունը, մենք, այնուհետև, կնշեինք նաև, որ այդ երկու լեզուները հեռավոր կապերի մեջ են միմյանց հետ, մինչդեռ, ասենք, հայերենն ու սլավոնական լեզուները սերտ կապի մեջ են: Հայերենի համեմատական ուսումնասիրությունն, իրոք, հաստատում է այդ. ըստ Հ. Աճառյանի հաշվումների, հնդեվրոպական լեզուների ցեղակցական մերձավորության աստիճանը որոշող 16 հատկանշական կետերից 10-ում հայերենը կապվում է հնդ-իրանական լեզուների հետ, մինչդեռ կելտական լեզուների հետ շփման մեջ է մտնում միայն երկուսում, այն էլ ոչ թե առանձնացած կերպով, այլ մյուս լեզուների հետ: Ահա այսպիսի տրամաբանական եզրակացության կարելի է հանգել նաև հայերենի, ասիանական ու կովկասյան լեզուների մասին, եթե այս վերջին երկուսը ցեղակից են իրար: Այստեղ ֆիզիկայի հայտնի բանաձևի նմանությամբ կարելի է կիրառել հետևյալ սահմանումը. Եթե երկու լեզու (A և B) առանձին-առանձին ցեղակից են մի երրորդ (C) լեզվի, ապա երանձ ևս (A և B) ցեղակից են իրար: Այս նշանակում է. եթե հայերենը և վրացերենը առանձին-առանձին ցեղակից են խեթերենին, ապա հայերենն ու վրացերենն էլ ցեղակից են իրար, եթե նույնիսկ նրանց միջև եղած ընդհանրությունները խիստ սահմանափակ լինեն: Հետևաբար, նախքան որևէ կարծիք հայտնելը, պետք է որոշել, թե ասիանիկ կոչված լեզուները ցեղակից են կովկասյաններին, թե ոչ: Պետք է ասել, որ լեզվաբանության մեջ այդ կարծիքը կա. կա նաև այն կարծիքը, որ դրանց միջև ցեղակցական հարաբերություններ չկան: Առայժմ հնարավոր չէ, իհարկե, լուծված համարել այդ հարցը, ըստ որում լեզվական նյութի սահմանափակությունը մեծապես բարդացնում է խնդիրը: Այնուամենայնիվ, դրա լուծման ուղղությամբ բավականաչափ գործ կատարված է. այս տեսակետից հիշատակման արժանի է «Вопросы Языкознания» ժուռնալում տեղի ունեցած դիսկուսիան 1954—1955 թվականներին (Գ. Ղափանցյանի կենդանության օրոք), որին մասնակցեցին բազմաթիվ մասնագետներ: Թեև դիսկուսիային մասնակ-

¹ Տե՛ս Հ. Աճառյան, Հայոց լեզվի պատմություն, Ա մաս, Երևան, 1940, էջ 24—31.

ցածների ճնշող մեծամասնությունը այն կարծիքն է պաշտպանում, թե փոքրասիական լեզուները, բացի նախախեթերենից և ուրարտերենից, ցեղակից չեն կովկասյաններին, այնուամենայնիվ, բոլորն էլ գտնում են, որ առայժմ այդ հարցը սպառիչ կերպով լուծել հնարավոր չէ լեզվական անհրաժեշտ նյութի սահմանափակության պատճառով: Գրեթե այդպես է դրվում հարցը նաև «К итогам дискуссии о «хетто-иберийском языковом единстве» (ВЯ, 1956, № 1) խմբագրական-ամփոփիչ հոդվածում. խմբագրությունը՝ արձանագրելով, որ «խեթա-իբերական լեզվական ընտանիքի գոյությունն ապացուցված չի կարելի համարել», և որ «կովկասյան լեզուների և Փոքր Ասիայի ու միջերկրական հին լեզուների ծագումաբանական ցեղակցության դրույթը դիսկուսիայի ընթացքում չի հաստատվել լեզվաբանական նյութերով» (ВЯ, 1956, № 1, քում չի հաստատվել լեզվաբանական նյութերով» (ВЯ, 1956, № 1, էջ 69, 71), նշում է նաև, որ այդ ուղղությամբ տարվող աշխատանք էջ 69, 71), նշում է նաև, որ այդ ուղղությամբ տարվող աշխատանքները պետք է շարունակվեն ավելի եռանդուն կերպով: Այս հանգամանքը հաշվի չառնելով, Գ. Ղափանցյանը նախատրամադրված կերպով ասիանական ու կովկասյան լեզուները ծագումաբանորեն ցեղակից է համարում և իր բոլոր եզրակացությունները հիմնում դրա վրա: Ինչպես տեսնում ենք, այստեղ ևս նա մեթոդաբանական ճիշտ դիրքերում չի կանգնած: Պետք է նկատի ունենալ, որ բոլոր նրանք, ովքեր փոքրասիական լեզուները ցեղակից են համարում կովկասյաններին, հայերենը ցեղակից չեն համարում ո՛չ խեթերենին, ո՛չ էլ քարթվելական լեզուներին: Հետևողական լինելու դեպքում Գ. Ղափանցյանն էլ այս սկզբունքը որպես ելակետ պետք է ընդուներ իր համար և կամ, ընդհակառակն, հայերենը հաներ հընդեվրոպական լեզուների շարքից ու մտցներ «խեթա-իբերական» ենթադրվող ընտանիքի մեջ: Սակայն հայերենի և հնդեվրոպական լեզուների ցեղակցությունը չափազանց ակնհայտ է, որպեսզի կարելի լիներ ժխտել այն, և դա է պատճառը, որ Գ. Ղափանցյանն

1 Ե. Ա. Бокарев, Задачи сравнительно-исторического изучения кавказских языков, ВЯ, 1954, № 3; В. Георгиев, Вопросы родства средиземноморских языков, ВЯ, 1954, № 4; И. М. Дьяконов, О языках древней Передней Азии, ВЯ, 1954, № 5; И. М. Дунаевская, О характере и связях языков древней Малой Азии, ВЯ, 1954, № 6; С. С. Какабадзе, О так называемых «хеттско-иберийских» языках, ВЯ, 1955, № 4; К. В. Ломтатидзе, Некоторые вопросы иберийско-кавказского языкознания, ВЯ, 1955, № 4; Ю. В. Зыцарь, О родстве баскского языка с кавказскими, ВЯ, 1955, № 5; А. С. Чикобава, О двух основных вопросах изучения иберийско-кавказских языков, ВЯ, 1955, № 6.

ստիպված էր միջին ճանապարհը բռնել ու կանգնել լեզուների խավորման այն տեսության դիրքերում, որի մասին վերը խոսեցինք: Անցնենք, ի վերջո, Գ. Ղափանցյանի լեզվաբանական այն փաստարկներին, որոնցով նա ուզում է հիմնավորել իր տեսակետը: Ինչպես հայտնի է, լեզուների ծագումաբանական ցեղակցությունը որոշելու առաջին և վճռական կովանը քերականական կառուցվածքի նյութական միավորների (բառահարաբերական ձևույթների) ընդհանրությունն է: Ուր որ այդ ընդհանրությունը գոյություն չունի, չկա նաև լեզուների ցեղակցություն: Արդ, հայերենի քերականական կառուցվածքի նյութական միավորները հնդեվրոպական են, ուստի և հայերենը իր քերականական կառուցվածքով հնդեվրոպական լեզու է: Այս բանն այնքան ճշգրտորեն հաստատված է, որ Գ. Ղափանցյանն էլ շատ անգամ ստիպված է եղել խոստովանել. իր վերջին աշխատության մեջ էլ նա գրում է. «Հայերենը իր քերականական մասով ավելի է հնդեվրոպական» (Հայոց լեզվի պատմություն, էջ 31): Այսքանը բավական էր արդեն, որ խնդիրը լուծված համարվեր. և շնայած դրան, հենց նույն տեղում նա ավելացնում է. «Սուբստրատի (ուրեմն և սուպերստրատի) թե ազստրատի խնդիրը կորոշվի ուսումնասիրության վերջնական տվյալներով, թեպետ նախկին իմ ուսումնասիրությունների տվյալներով, որոնք լրիվ չէին և թերևս սխեմատիկ, գերակշռում է ասիանիկ (իմա՛ որ հնդեվրոպական— է. Ա.) լեզուների բաղկացական բովանդակությունը» (անդ, էջ 31): Իսկ ինչո՞ւ էր հիմնավորում այդ. նա գտնում էր, որ հայերենի քերականության մեջ էլ կան ինչ-որ ոչ հնդեվրոպական տարրեր. դրանցից վերը հիշեցինք -ց հոլովական վերջավորությունը, որ կապում էր վրացական -էի վերջավորության հետ. կարելի է այստեղ ավելացնել բայի հոգն. 3-րդ դեմքի -ն վերջավորությունը, որ դարձյալ կապում է վրացերենի հետ, համեմատելով агіаи «են» ձևի վերջահանգ և-ի հետ և այլն: Բայց այս համեմատություններից ոչ մեկն էլ ճիշտ չէ. այդ երկուսն էլ ստուգաբանված են որպես հնդեվրոպական մասնիկներ և այդ ստուգաբանություններն այնքան հիմնավորված են, որ կազած չեն հարուցում: Մինչդեռ Գ. Ղափանցյանը, ն. Մառին հետևելով և այս դեպքում նրա ստուգաբանությանը հավատալով, դրանք համարում է կովկասյան տարրեր, որովհետև հարկավոր է հայերենի մեջ գտնել ոչ հնդեվրոպական, խեթա-կովկասյան «բաղկացական բովանդակություն»:

Իր տեսության համար նա ավելի զորավոր կովան էր համարում

բառապաշարի տվյալները, իհարկե, իր մեկնաբանությունում: Նա գրեթե ամեն առիթով հայտարարում էր, թե հայերենի հնդեվրոպական ծագումով բառերի թիվը շորս հարյուրից չի անցնում, մինչդեռ կան մոտ հինգ հազար շատուգաբանված արմատական բառեր: որոնք տեղական ասիանական են: Հստ որում, իր այդ հայտարարությունն ավելի հեղինակություն տալու համար, նա միշտ կրկնում էր, թե Հ. Հյուբշմանը միայն այդքանն էր ընդունում: Ամենից առաջ, այստեղ հասարակ թվաբանական անճշտություն կա: Հյուբշմանը մեկ թվահամարի տակ բերում է հնչյուն. տվյալ արմատից ծագած բոլոր բառերը. օրինակ, գաղտ և գող բառերը ծագում են միևնույն հնդեվրոպական արմատից, ուստի և մեկ թվահամարի տակ են դրված: Հ. Աճառյանի «Արմատական բառարանը» կազմված է հայերենի տվյալներով, այսինքն՝ յուրաքանչյուր բառ, որ հայերենի բառակազմական օրենքներով չի կարող մասնատվել (բաղադրիչների բաժանվել) և կամ նույնացվել մի այլ արմատի հետ, համարված է առանձին արմատական բառ. այսպես, հիշյալ գող և գաղտ բառերը հայերենի ո՛չ քերականական, ո՛չ էլ բառակազմական օրենքներով նույնացվել չեն կարող, ուստի և նրանցից յուրաքանչյուրը մեկ արմատական բառ է, որ Հյուբշմանի կողմից իսկ ընդունված ստուգաբանություններով բնիկ հայերեն բառերի թիվը կրկնապատկում է. բավական է հիշել, օրինակ, որ դալար, դեղ, դեղձ. դեղձանիկ, դաղձն, դեղին բառերը հնչյուն. մեկ արմատից են ծագում: Գ. Ղափանցյանը հաշվի չի առնում այս և մոռանում է, որ որքանով դրանք ավելացնում են հնդեվրոպական բառերի քանակը, նույնքանով էլ մեծացնում են հայերեն արմատների ընդհանուր թիվը:

Այնուհետև, Գ. Ղափանցյանը գտնում է, որ շատուգաբանված հինգ հազար արմատները «տեղական, ասիանական» լեզուների բառերն են: Այստեղ էլ նախ պետք է կիսել այդ թիվը, որովհետև այդ թվից մոտ երկու հազար հինգ հարյուրը, այսպես կոչված, սուտ բառերն են, այսինքն՝ բառեր, որոնք հայ մատենագրության մեջ չեն գործածված, այլ կան միայն նոր շրջանի այս կամ այն բառարանում, հատկապես Երեմիայի բառարանում: Իհարկե, դրանից հետո դարձյալ կմնա շուրջ երկուսուկես հազար բառ, բայց ո՛վ է ասել, և ինչի՞ց գիտենք, որ դրանք անպայման ասիանական լեզուներից են գալիս. իսկ եթե դրանցից են գալիս, ապա որի՞ց հատկապես. նախախեթերենի՞ց, ուրարտերենի՞ց, թե՞ խեթերենից, նեսիտերենից, լուվերենից և այլն: Այս հարցին պատասխան չի տրվում, և առայ-

ծում չի էլ տրվի, քանի դեռ այդ լեզուների բառապաշարը մեզ լրիվ հայտնի չէ: Կարելի է նաև մի ուրիշ դիտողություն անել. Հ. Աճառյանի «Արմատական բառարան»-ը լույս տեսնելուց հետո հայ և օտար լեզվաբաններ ստուգաբանել են մոտ երկու հարյուր բառ, որի մեծագույն մասը (մոտ 140) հնդեվրոպական է, մյուսների էլ զգալի մասը՝ իրանական. ի՞նչ երաշխիք ունենք, որ այդպես չէ նաև մնացած 2300-ի մեծագույն մասը: Սրանք հարցեր են, որոնց առայժմ ոչ մի վճռական պատասխան տալ չի կարելի, բայց որոնք անպայման պետք է նկատի ունենալ, նախքան հայերենի բառապաշարի մասին որևէ եզրակացություն հանելը:

Վերջապես, ընդունենք մի պահ, որ այդ երկու հազար, նույնիսկ հինգ հազար բառերը միայն ուրարտական են. իսկ ի՞նչ կփոխի դա: Լեզվի ցեղակցությունը որոշելու համար էականը քերականությունն է. իսկ քերականությունը հայոց լեզուն հնդեվրոպական է: Բառային կազմի կողմից լեզվի ցեղակցության համար կարևորը բառերի քանակը չէ, այլ որակը, այսինքն՝ այն, թե ինչպիսի՞ բառեր կան, որոնք փոխառյալ չեն: Այն կարգի բառերը, ինչպիսիք են՝ թագավոր, իշխան, սեպուհ և այլն, կարող են հարյուրներով փոխառված լինել, և դա ոչ մի էական նշանակություն չի ունենա հնդեվրոպական լեզուների բառային ընդհանրությունների համար: Այդպիսի բառերը կարող էին լեզվի մեջ առաջ գալ միայն պետության ծագման դարաշրջանում, իսկ հնդեվրոպական լեզուները բաժանվել են իրարից տոհմատիրական հասարակարգի դարաշրջանում: Պատահական չէ, հետևաբար, որ այդ լեզուները ընդհանուր բառ չունեն, օրինակ, թագավորի համար: Մեր կյանքից օրինակ վերցնելով, կարող էինք հարց տալ, թե ի՞նչ նշանակություն ունեն հայերենի ցեղակցությունը որոշելու համար այնպիսի բառերը, ինչպիսիք են հեռագիր, հեռախոս, սավառակ, սավառնօրդ, հեռուտատես, գյուղատեսես, պատմաբան, երկրաբան և այլն, և այլն, կամ հազարավոր այնպիսի փոխառություններ, ինչպիսիք են կոմունիստ, կոմունիզմ, սոցիալիզմ, տրակտոր, կոմբայն, սովխոզ, ռադիո, իդեալիզմ, ֆիմիա, ֆիզիկա և այլն, և այլն: Այդ բառերի արտահայտած հասկացությունները չկային և չէին կարող լինել այն դարաշրջանում, երբ հնդեվրոպական լեզուները դեռևս բաժանված չէին իրարից, իսկ այդ նշանակում է, թե բառերն էլ չէին կարող լինել: Սրան կարելի էր գուցե առարկել, ասելով թե՛ այս բառերը վերջին հարյուրամյակում են մտել հայերենի մեջ, իսկ այն շատուգաբանված հինգ հազար բառերը հայերենում կային արդեն հինգերորդ

ըբ: Դեռևս 1927 թ. նա առաջարկում է հայերեն անօժ բառը կապել լատիներեն rex (սեռ. regis) «թագավոր» բառի հետ, գտնելով, որ «հայկական (ա) ռեծ-ը նախնականում նշանակել է «իշխող, թագավորող, ղեկավարող», այդ մենք կարող ենք տեսնել նաև պարսկերեն شیر (šēr) «առյուծ» բառից, որը առաջացել է հին իրանական xšāy- արմատից «կարող լինել, vermögen «նշանակություն» (ԳԱՐԻՏ, 1927, № 2, առանձնատիպ, էջ 30): Արտաբուստ այս ստուգաբանությունը հավանական է թվում, բայց հարկավոր է մի փոքր ուշադիր քննության առնել այն, և կպարզվի, որ բացահայտորեն սխալ է: Իհարկե, հնարավոր է, որ առյուծ կենդանու անունը ստացվի թագավոր նշանակող բառից, որովհետև ժողովուրդը հենց այդպես էլ առյուծին կենդանիների թագավորն է համարում: Բայց այս հնարավորությունը կարող է վերաբերել միայն որոշ դարաշրջանի. այդպիսի կապ կարող է ստեղծվել միայն այն դարաշրջանում, երբ կա պետություն, կա նաև թագավոր: Նախքան պետության առաջ գալը չկա բառ թագավոր իմաստով, որովհետև չկա նաև թագավոր: Պարսկերեն šēr բառը, եթե նույնիսկ ճիշտ լիներ Գ. Ղափանցյանի տված բացատրությունը¹, տվյալ դեպքում ոչ թե նպաստում, այլ վնասում է ստուգաբանությանը, որովհետև նա, ըստ այդ բացատրության, ծագել է «կարող, զորեղ, հզոր» իմաստից և ոչ թե թագավոր իմաստից, ըստ որում այս վերջինն էլ հենց «հզոր» իմաստից է ծագում: Լատիներեն rex (սեռ. regis) բառը ծագում է հնիս. *reg- արմատից, որ նշանակել է «ուղղել, շտկել» (հմմտ. Լատ. rectum «ուղիղ»): հետևաբար, մինչև թագավոր իմաստն ստանալը նա նախ ստացել է «վարել, կառավարել» իմաստները և հետո միայն՝ կառավարող, թագավոր, այն էլ այն ժամանակ, երբ արդեն ծագել էր պետությունը: Արդ, հայտնի է, որ հայերը թրակիայում հանդիպեցին առյուծին, այսինքն՝ այն դարաշրջանում, երբ դեռ նրանք տոհմատիրական հասարակարգում էին ապրում. ուրեմն, այդպիսի իմաստային զուգորդություն չէր կարող լինել: Այնուհետև, այդ ստուգաբանությամբ *reg հնդեվրոպական արմատից ստացվել է ռեծ > առեծ և ապա՝ w-ի ներմուծումով՝ առեծ. բայց հայտնի է, որ w ներմուծվելու դեպքում պայթաշփականները վերածվում են պայթականի, կորցնելով իրենց շփական տարրը. այս երևույթի վրա հենց ինքը՝ Գ. Ղափանցյանն է ուշադրություն դարձ-

¹ Խ. Բարթոլոմեի մոտ (Altiranisches Wörterbuch, էջ 551—553) այդպիսի ստուգաբանություն չկա:

րել նույն հոդվածում (հմմտ. արած—արատ, զգած—իմ—գատիկ են): Նշանակում է, այստեղ էլ պետք է ունենայինք առեծ > առեա, իսկ այդպիսի բան չունենք: Այսպիսով, ո՛չ պատմականորեն, ո՛չ էլ հնչյունաբանորեն այդ ստուգաբանությունը չի արդարանում:

Արարկիբի բարբառում կա խոխո բառը, որ գործածում են երիտասարդները վախեցնելու համար. Գ. Ղափանցյանն այդ բառն ստուգաբանում է այսպես. «Արարկիբի (Թյուրքիայում) հայերի մոտ կա խոխո բառը, որով վախեցնում են երեխաներին (խոխոն կուգա), որ հավանաբար հայաստանի կարխոխո (karhuhu) աստծու անվան կրճատումն է» (Xaňaca, էջ 96): Հետագայում այդ «հավանաբար»-ը դուրս է գալիս. «Հայաստանի karhuhu աստվածանունը լրիվ չի կարդացվում, եղծված են «kar» (կամ «ka-er») նշանակող բևեռագրերը, բայց կարգեմիշի հիերոգլիֆ-խեթական մի արձանագրության մեջ կա լրիվ գրությունը այդ աստվածանունը, որը, ինչպես տեսնում ենք, միայն Հայաստանի չէր պատկանում: Բառը բարդ է, կազմված է kar և bubu մասերից (ճ ուղղ. հոլ. վերջավորություն է): Վերջին մասը կարելի է համեմատել խեթական (թե՛ բևեռագիր և թե՛ հիերոգլիֆ արձանագրություններում) bubu «պապ» բառի հետ, որը տեսնում ենք և խուրխուերեն հատուկ այբանունների մեջ՝ luhu, Huban, Nišbuba, šubišbaba, A ibubua («նվեր պապի») և այլն: Հայոց մեջ նա կհամեմատել արարկիրցոց «խոխո» բառը (խոխոն կուգա), որով վախեցնում են երեխաներին: Պետք է ասել, որ բևեռագիրը չունի հատուկ «o» հնչման համար նշանագիր և այդ արտահայտում է «u» նշանով, այնպես որ Karbubu գրությունը տվյալ դեպքում հնչվել է karxoxo (կարխոխո): Այնուհետև, հիշելով Հ. Աճառյանի «Գավառական բառարանում» բերված խոխո (Մանիսա և Երզնկա) «երևակայական էակ մը, որով մանուկները կվախեցնեն», խոխոն (Մանիսայում) = պրսկ. kux «կնյուն», Չ. «նույն կնյունով շինված տգեղ և ահռելի կերպարան, որով տղաքը կվախեցրնեն» բառերը, եզրակացնում է. «Ըստ իս, այդ խոխո կամ խոխո բառը, ինչպես ցույց է տալիս և արարկիրցոց նման բառը, իրոք որ երևակայական էակ է և ոչ մի կապ չունի պարսկական kux «ձիու կամ շան ճանճ» բառի հետ (որից մենք կունենայինք «կոխ» կամ «քոխ» փոխառությունը) և հնագույն տեղական, այսինքն՝ Հայաստանի և շրջակա երկրների թանկագին մի մնացորդ է» (Հայոց լեզվի պատմ., էջ 63—64): Այս ստուգաբանությունը մի քանի դիտելի կետեր ունի. նախ՝ Հ. Աճառյանը Մանիսայի խոխոն բառն է կապում պարսկերենի, և այն էլ ոչ թե kux «ձիու կամ շան ճանճ»,

այլ՝ kux «կնյուն» բառի հետ, որ իմաստով նույնական է: Երկրորդ՝ Մանխայում այդ խոխոն բառը, երկրորդ իմաստով, տարբեր է խոխո բառից, որ կա նաև Երզնկայում: Երրորդ, ի՞նչ հիմունքով կարելի է խեթական bubu-ն միացնել հայաստական huhu-ի հետ. չե՞ որ ուրիշ խեթերում խեթական b-ն համապատասխանում է, ըստ Գ. Ղազեպեցիում խեթական b-ն համապատասխանում է, ըստ Գ. Ղազեպեցիում, հայաստական բ-ին: Չորրորդ՝ ի՞նչ հիմունքով կարելի փանցյանի, հայաստական բ-ին: Չորրորդ՝ ի՞նչ հիմունքով կարելի է միացնել խուռիտական Huhu, Huban և bubu (Nišbuba ևն) բառերը իրար հետ: Այս բոլորի պատասխանը չկա և չի էլ կարող լինել, որովհետև նրանք նույնական չեն: Վերջապես, արաբկիրցոց (և ոչ միայն արաբկիրցոց) խոխո-ն ոչ մի կապ չունի դրանց հետ. (և ոչ միայն արաբկիրցոց) խոխո-ն ոչ մի կապ չունի դրանց հետ. հայտնի է, որ նույն իմաստով (երեխաներին վախեցնելու համար) մեր բարբառներում գործածում են նաև բոբո, բուբու, հուհու, տուտու, փուփու և նման բառեր, բայց այդ բոլորն էլ ձայնարկությամբ ստացված բառեր են, ինչպես և հու՛, խու՛, խո՛ և այլն, որոնք բոլորն էլ երեխաներին վախեցնելու համար են գործածվում: Կապի այդ խոխո-ն կամ բոբո-ն (հմմտ. Բոբոն կկծի), որ շատ ավելի նման է, karbubu-ին, նշանակում է անտեսել բառերի իրական նման է, karbubu-ին, նշանակում է անտեսել բառերի իրական պատմությունը և ն. Յա. Մառի վերլուծությունների մեթոդին հետևել:

Կամենալով հաստատել, որ -բիր/-բեր խեթական բառը նշանակել է «տուն > տոհմ» և կապելով դրանք մեր Տուրուբերան, Առբերան և այլ հատուկ անունների հետ, ավելացնում է. «Բացի վերոհիշյալ վկայություններից, ber «տոհմ—ցեղ» բառը գործ էածվել և նախարարական հետևյալ տոհմանունների մեջ՝ Տարբերունի, որը նշանակում է Տարուբերանի հետ, Տամբեր «տամ տոհմ» և Քաջբերունի, որը հավանորեն ստացվել է Քաջբրունի ձևից, նշանակելով kaš (= kaška կամ gašga) ցեղից. համեմատել Սյունիքի «Քաշաբաղ գաւառ», «քաշի մարգ», «Քաշունիք»: ...Սյունիքում կար և առանձին գյուղ Բերան անունով, որ կարող է նշանակել «տոհմեր», ինչպես և Ուբբուն գյուղը նույն տեղում թերևս «ութ տոհմ» նշանակությամբ» (անդ, էջ 51): Այստեղ արդեն ստուգաբանական ոչ մի սկզբունք գոյություն չունի. Քաջբերունի-ն չէր կարող ստացվել Քաջբերունի-ից, որովհետև հայերենում շ-ն, այն էլ պայթականից առաջ, չ չի դառնում: Քաշաբաղ գաւառ, Քաշի մարգ, Քաշունիք ոչ մի կապ չունեն կաշկա կամ գաշգա ցեղանվան հետ. Ղարաբաղի, Մեղրու և այլ բարբառներում կան քաշ «ներքև, ցած» և քաշ «ագ-ռավ» բառերը. Քաշի մարգ նշանակում է ներքևի, ցածի մարգ, Քաշունիք և Քաշաբաղ կապվում են կամ մեկի (քաշ «ագռավ») կամ

մյուսի հետ (ստուգաբանելու համար անհրաժեշտ են պատմական ու աշխարհագրական տեղեկություններ): Ուբբուն ոչ մի կապ չունի ոչ ուք թվականի, ոչ էլ ber «տոհմ» (?) բառի հետ. այդ, ինչպես և՛ Դաշբուն (= Դաշբուն), Կարաբուն և այլ -բուն-ները թուրքական են:

Արտոյտ բառը ստուգաբանում է, կապելով լիտ. strāzdas, րուս. дрозд, հին իսլ. drosstr, լատ. turdus բառերի հետ: Այդ բառերի նախաձևն է *trod, որ Գ. Ղազեպեցի կարծիքով, դարձել է *rtod (>rtut) > artoyt. ըստ որում, որպեսզի հնխ. u > հյ. ոյ տարապայման հնչյունափոխության հարցն էլ վերանա, նա գտնում է, որ բարբառների արտոյտ, առտոյտ ձևերը՝ ու ձայնավորով, ավելի հին են, քան գրաբարյան արտոյտը (Հայոց լեզվի պատմ., էջ 359): Այս ստուգաբանությունը ևս ընդունելի չէ: Նախ՝ բարբառային արտոյտ ձևը նախնական չէ. նա նույն հարաբերության մեջ է հին արտոյտ ձևի հետ, ինչպես՝ բուն-ը՝ բոյն-ի, բու-ը բոյս-ի, լու-ը՝ լոյս-ի հետ և այլն: Դրա լավագույն ապացույցն է բարբառների արտուտիկ (արդուդիգ, արդուդիկ) ձևը, որ կարող էր ստացվել միայն արտոյտ-ից, հակառակ պարագայում պետք է լիներ արտըտիկ: Երկրորդ՝ հնխ. *trōd ձևից հայերենում կարող էր լինել երտ/երուտ, կամ, եթե ընդունենք, որ նախաձևը tr > rt տեղափոխությամբ դարձել էր rtōd, պետք է ունենայինք արդուտ/արդուտ, որովհետև հնդեվրոպական պարզ խուլ պայթականները ռնգայիններից ու նայերից հետո վերածվում են ձայնեղ պայթականների (հմմտ. լատ. ante «առջև» = հյ. (դր) — առդ, հնխ. *penk^{we} > հյ. հինգ, հն. 'apcā = հյ. (գ) առդ և այլն): Ինչպես տեսնում ենք, հնչյունական օրենքներից և ո՛չ մեկն էլ հաշվի չի առնված, իսկ առանց դրան ստուգաբանությունը զրկվում է իրական հիմքից:

Մենք ավելորդ ենք համարում բազմաթիվ էջեր լցնել այդ կարգի ստուգաբանությունների քննությամբ. օրինակներն անսպառ են և մեկը՝ մյուսից ցայտուն: Այս շորս օրինակներով բավականանալով և վերը՝ մեթոդաբանական հիմունքների մասին մեր արած դիտողությունների վրա հիմնվելով, կարող ենք հետևյալ ընդհանուր եզրակացությունը հանգել. Գ. Ղազեպեցի ստուգաբանությունների ճշող մեծամասնությունը չի դիմանում քննադատության. թեև նա ինքը հաճախ շեշտում է, թե ստուգաբանությունների և, առհասարակ, լեզվաբանական ուսումնասիրությունների մեջ պետք է հենվել առաջին հերթին պատմական տվյալների վրա, նկատի ունենալ յուրաքանչյուր բառի իրական պատմությունն ու խստորեն հե-

տեւել հնչյունական օրենքներին, բայց ինքն այդ ճիշտ սկզբունքին չի հետևում: Նրա ստուգաբանությունները մեծ մասամբ հիմնված են պատահական ձևային նմանությունների վրա, իսկ դա գիտական լուրջ արժեք ունենալ չի կարող:

Մենք կանգ չենք առնում նաև ավելի մասնավոր բնույթ կրող հարցերի վրա, որոնք կարող են քննարկման նյութ դառնալ (և դարձել են) առանձին գրախոսականներում:

Ինչպես կարելի է հեշտությամբ նկատել, մենք դրականորեն գնահատեցինք Գ. Ղափանցյանի ընդհանուր լեզվաբանական հայացքները, առանձնապես նկատի ունենալով այն, որ շատ էական սկզբունքներով նա ավելի ճիշտ էր կիրառում մարքսիզմը լեզվաբանության մեջ և ճիշտ կերպով էլ քննադատում էր Ն. Մառի «նոր ուսմունքի» հիմնական դրույթներից շատերը: Դրանով նա արժանացավ բարձր գնահատականի: Այդ գնահատումն, առաջին հայացքից, պետք է թելադրեր մեզ նրան ոչ թե Ն. Մառի հետևորդների, այլ հակառակորդների շարքում դասել: Հիրավի, մի կողմից՝ մենք ընդունում ենք, որ նա «նոր ուսմունքի» հիմնական դրույթները քննադատել է, իսկ մյուս կողմից՝ Ն. Մառի հետևորդն ենք համարում: Տարօրինակ չէ՞ սա, արդյոք: Տարօրինակ է թվում, բայց այդպես է իրողությունը: Գ. Ղափանցյանը միակն էր, որ իր ամբողջ գիտական գործունեության ընթացքում հարազատ մնաց Ն. Մառի տեսությանը՝ հայերենի մասին, բայց ոչ թե 20—30-ական թվականների, այլ 1903—1916 թվականների տեսությանը: Այն հակասությունն ու հակադրությունը, որ կար նրա և Ն. Մառի հայացքների միջև, ըստ էության երկու տարբեր շրջանի Մառի ներքին հակադրությունն էր. Ն. Մառը հրաժարվեց այն տեսությունից, որ պաշտպանում էր մինչև 1916 թ. և հիմնադրեց «նոր ուսմունքը», Գ. Ղափանցյանը կանգնած մնաց Ն. Մառի մինչև 1916 թ. տեսության դիրքերում, հատկապես հայերենի ցեղակցություն հարցում, և հակադրվեց «նոր ուսմունքին»: Եվ բոլորովին պատահական չէ, որ իր «К происхождению армянского языка» աշխատության մեջ, թվելով հայերենի ծագման մասին արտահայտված տեսակետները, պարզորոշ կերպով ասում է. «Наконец, новую установку генезиса армянского языка, которая по характеру приближается к первой концепции Н. Марра, предлагаю я» (էջ 9, ընդգծումը մերն է—է. Ա.): Մենք հանգամանորեն շարադրեցինք այդ տեսությունը և ցույց տվինք, որ Ն. Մառի և Գ. Ղափանցյանի տեսակետների տարբերությունն այն է միայն, որ առաջինը հայերենը

խաչավորված հնդեվրոպական-հաբեթական լեզու էր համարում, իսկ Գ. Ղափանցյանը, գտնելով, որ այդ շրջանակները շատ սեղմ են, ավելացնում է նաև ասիանականը: Բայց այս էլ, ըստ էության, ոչինչ չի փոխում, եթե նկատի ունենանք, որ Գ. Ղափանցյանը ասիանական լեզուներն էլ ցեղակից է համարում կովկասյաններին: Եվ այս է, որ մեզ հիմք է տալիս նրան Ն. Մառի հետևորդը համարելու: Այդ համերաշխությունը Ն. Մառի առաջին տեսակետի հետ, ինչպես տեսանք, պայմանավորված էր մի ընդհանուր սկզբունքով, այն է՝ լեզուների խաչավորման մառյան սկզբունքով, որ Գ. Ղափանցյանը մինչև իր կյանքի վերջն էլ պաշտպանում էր: Այդ սկզբունքն էր նաև, որ նրան շատ հարցերում մղեց դեպի պատմականության անտեսումը, պատմա-համեմատական մեթոդի հիմնական սկզբունքներից հրաժարումը և Ն. Մառի վաղ շրջանի ստուգաբանական մեթոդի որդեգրումը: Այս բոլորից էլնելով, մենք կարող ենք նրա գիտական ժառանգությունը գնահատել հետևյալ ձևով. անպայմանորեն մեծ ավանդ է նրա «Ընդհանուր լեզվաբանություն» աշխատությունը սովետական լեզվաբանության մեջ, եթե նկատի չունենանք մի քանի հնացած և մեծ մասամբ դեկլարատիվ սահմանումները (լեզուն՝ վերնաշենք, լեզվի դասակարգայնություն ևն), մասնավորապես, որ դրանք հավուր պատշաճի սահմանումներ էին իր ժամանակի ոգուն համապատասխան:

Գ. Ղափանցյանի հայագիտական աշխատությունների ամենամեծ արժանիքն այն է, որ դրանց մեջ նա առաջ է քաշում հայերենի ամբողջ նյութի ֆենարկման անհրաժեշտությունը՝ զանազան հին լեզուների հետ ունեցած ընդհանրությունները վեր հանելու համար և դրանով իսկ մեծապես ընդարձակում է հայերենի ուսումնասիրության շրջանակները: Դրական է և այն, որ նա հայերենի գոյացման ու հայ ժողովրդի կազմավորման հարցերը ֆենում է իրենց սերտ կապի մեջ: Բայց հենց որ նա ժողովրդի կազմավորման պրոցեսի բնորոշ գծերը մեխանիկորեն տարածում է նաև լեզվի կազմավորման պրոցեսի վրա, այստեղ նա կանգնում է վուլգար սոցիոլոգիզմի դիրքերում: Վերջապես, երբ իր տեսությունը լեզվական փաստերով հիմնավորելու համար դիմում է բնազոտիկ ստուգաբանությունների, նա հեռանում է պատմա-համեմատական լեզվաբանությունից և հենվում լեզվական իրակությունների կամայական վերլուծությունների մեթոդի վրա: Անշուշտ, սա չի նշանակում, թե նրա աշխատությունների մեջ մենք ոչ մի իրական ստուգաբանություն կամ ճիշտ կարծիքներ չենք գտնում: Այդպես չէ,

իհարկեմ, Գ. Ղափանցյանի հետազոտութիւնների մեջ կան և՛ ճիշտ ստուգարանութիւններ, և՛, մանավանդ, խորաթափանց դիտողութիւններ ու կռահումներ, բայց հենց այդ ճշմարիտը գտնելու և օգտագործելու համար անհրաժեշտ է խիստ զգուշավորութեամբ քնննութեան առնել այն հսկայական փաստական նյութը, որ նա բերում է իր աշխատութիւնների մեջ: Այս բոլորը հաշվի առնելով միայն և քննադատաբար մոտենալով նրա լեզվաբանական վերլուծութիւններին, պետք է օգտագործել նրա աշխատութիւնները, որոնք անպայմանորեն գիտական արժեք ունեն և մեծ նյութ են տալիս հայերենի բազմակողմանի ուսումնասիրութեան համար:

**Հովսեփ
Կարապետի
Կուսիկյան**

Ռուսական հայագիտական դպրոցի սովետական շրջանի լավագույն ներկայացուցիչներից մեկն է Հովսեփ Կարապետի Կուսիկյանը, որ իր շուրջ կես դարու գործունեութեամբ ոչ միայն

անմիջականորեն նպաստել է հայ լեզվաբանութեան զարգացմանը, այլև վառ է պահել հայագիտութեան շահը Ռուսաստանում, համախմբելով իր շուրջը երիտասարդ կադրեր՝ այդ բնագավառում աշխատելու համար:

Մնվել է Հ. Կուսիկյանը 1891 թ., Մոսկվայում: 1900 թվականից սկսել է սովորել Մոսկվայի Լազարյան ճեմարանի գիմնազիական դասարաններում. այստեղ նա հատուկ սեր է ցուցաբերում պատմութեան և հին լեզուների (հայերենի, հունարենի, լատիներենի) նկատմամբ: Այդ առանձնահատուկ սերը նրա մեջ ծագել էր, ինչպես ինքն է գրում իր ինքնակենսագրութեան մեջ, մասնավորապես իր հոր՝ Լազարյան ճեմարանի ուսուցիչ Կարապետ Կուսիկյանի, և նույն ճեմարանի պրոֆեսոր Գրիգոր Խալաթյանցի ազդեցութեամբ. վերջինս պատմութիւն էր դասավանդում նրան գիմնազիայի երրորդ դասարանում: Ոսկե մեդալով ավարտելով գիմնազիական դասարանները 1909 թ., Կուսիկյանն ընդունվում է Մոսկվայի համալսարանի պատմա-բանասիրական ֆակուլտետը. այստեղ նա կենտրոնացնում է իր ուշադրութիւնը հին աշխարհի և մասնավորապես Բյուզանդիայի պատմութեան վրա. նա կանոնավոր կերպով մասնակցում է պրոֆեսորներ Ռ. Յու. Վիպպերի և Ն. Գ. Պոպովի սեմինարներին և Թուկիդիդեսին նվիրված իր ուսումնասիրութեան համար պարգևատրվում ֆակուլտետի կողմից: Նույն ժամանակամիջոցում նա մասնակցում է նաև սանսկրիտի սեմինարներին, որի ղեկավարն էր պրոֆ. Վ. Կ. Պորժեպինսկին և, իբրև ազատ ունկնդիր, Լազարյան ճեմարանի լիցեռում սովորում է արաբերեն, գրաբար և պարսկերեն լեզուները:

1913 թ. ավարտում է համալսարանը առաջին կարգի դիպլոմով: Դեռևս համալսարանում սովորելու միջոցին Հ. Կուսիկյանն ուսումնասիրում էր հոմեական իրավանքը, և, առհասարակ, իրավագիտութիւնը. ավարտելով համալսարանը, նա շարունակեց դարձյալ զբաղվել դրանով և 1916 թ. պետական քննութիւնները հանձնելով, ավարտեց նաև իրավաբանական ֆակուլտետը:

1915 թ. Հ. Կուսիկյանը նշանակվում է փիլիսոփայական նախակրթութեան ու տնտեսական աշխարհագրութեան ուսուցիչ՝ Լազարյան ճեմարանի գիմնազիական կուրսերի բարձր դասարաններում և հայոց ու ռուսաց լեզուների դասատու՝ ցածր դասարաններում: Թեև իր ամբողջ ուսումնառութեան ընթացքում նա հետապնդել էր մի նպատակ՝ դառնալ հայ ժողովրդի պատմութեան ու հայոց լեզվի պատմութեան մասնագետ՝ բազմակողմանի գիտելիքներով և ուսումն ավարտելուց հետո զբաղվել գիտական ուսումնասիրութիւններով, սակայն ուսուցչական աշխատանքն այնքան է ծանրաբեռնում նրան, որ նա ստիպված է լինում ժամանակավորապես հրաժարվել գիտական որոնումներից: 1917 թ. ռևոլյուցիան էլ ավելի հեռացրեց նրան գիտութիւնից. 1918 թ. նա սկսում է համատեղութեամբ աշխատել Ազգային Գործերի Ժողովրդական Կոմիսարիատում՝ հայկական գործերի բաժնում: Գիտական աշխատանքով վերստին սկսում է զբաղվել 1920 թվականից, երբ նա Կենդանի արևելյան լեզուների կենտրոնական ինստիտուտում (նախկին Լազարյան ճեմարանում) ստանում է դիրեկցիայի անդամի և հայոց լեզվի ամբիոնի վարիչի պաշտոնն ու դասախոսում է հայոց լեզուն 1921 թվականից համատեղութեամբ աշխատում է Սմոլենսկի համալսարանում, կարդալով «XVII—XVIII դարերի հեղափոխական շարժումները Արևմուտքում» դասընթացը: 1923 թ. նշանակվում է «ՍՍՌՄ Կենտգործկոմի, Ժողկոմխորհի և ԱՊՈՒ-ի տեղեկագրի», իսկ 1924 թ.՝ «ՍՍՌՄ օրենքների ժողովածուի» խմբագիր: 1923 թ. վերացվում է հայոց լեզվի ամբիոնը Կենդանի արևելյան լեզուների կենտրոնական ինստիտուտում: 1924 թ. Հ. Կուսիկյանը հրաժարվում է Սմոլենսկի համալսարանում դասախոսելուց, որովհետև խմբագրական աշխատանքն ամբողջապես կլանել էր նրան: Նույն թվականին Ն. Յա. Մառի հրավերով նա աշխատանքի է անցնում ՍՍՌՄ ժողովուրդների էթնիկական ու ազգային կուլտուրաների գիտահետազոտական ինստիտուտում, որպես ավագ գիտական աշխատող: Այստեղ նա վերստին շարունակում է զբաղվել հայոց լեզվի պատմութեամբ: 1930 թ. հրաժարվում է խմբագրական աշխատանքից:

քից և ամբողջապես նվիրվում գիտությունը: Երեսունական թվականներին նա կարդում է «Ընդհանուր լեզվաբանություն» ու «Բյուզանդանդիայի պատմություն» գասընթացները Մոսկվայի Չերնիշևսկու անվան փիլիսոփայության, պատմության և գրականության ինստիտուտում և մանկավարժական ինստիտուտներում: 1935 թվականից սկսում է կարդալ ընդհանուր լեզվաբանություն, Բյուզանդիայի, Հռոմի, սլավոնների և Կիևյան Ռուսիայի պատմության գասընթացները նաև Երևանի համալսարանում ու Մանկավարժական ինստիտուտում:

Ազգային ու էթնիկական կուլտուրաների գիտա-հետազոտական ինստիտուտը իր գոյության շուրջ 40 տարիների ընթացքում մի քանի անգամ վերակառուցվել ու վերանվանվել է. այժմ նա դարձել է ՍՍՌՄ Գիտությունների ակադեմիայի լեզվաբանության ինստիտուտ. Հ. Կուսիկյանն այդ բոլոր վերակառուցումների ժամանակ էլ մնացել է նույն ինստիտուտում և այժմ էլ վարում է ավագ գիտական աշխատակցի պաշտոնը: 1961 թ. Բարձրագույն ատեստացիոն հանձնաժողովը, լեզվաբանության ինստիտուտի միջնորդությամբ, շնորհել է նրան ֆիլոլոգիական գիտությունների դոկտորի աստիճան՝ honoris causa: Չնայած իր պատկառելի տարիքին, Հ. Կուսիկյանը դեռևս երիտասարդի ավյունով շարունակում է իր եռանդուն գիտական գործունեությունը:

Ինչպես այս համառոտ կենսագրականն է ցույց տալիս, Հ. Կուսիկյանը խիստ բազմակողմանի գործունեություն է ունեցել թե՛ գիտության և թե՛ պետական-պաշտոնական բնագավառներում: Փվ, չնայած այն բանին, որ նա հաճախ ստիպված է եղել միաժամանակ վարել մի քանի պաշտոններ (ավագ գիտ. աշխատակից, դասախոս մի քանի բարձրագույն ուսումնական հաստատություններում, խրմբագիր, Բարձրագույն ատեստացիոն հանձնաժողովի պաշտոնական ռեգիստրատիվ և էքսպերտային հանձնաժողովի անդամ են), միշտ էլ աչքի է ընկել իր պարտաճանաչությամբ, բարեխղճությամբ ու աշխատանքային մեծ եռանդով: Խիստ լայն են եղել նրա գիտական հետաքրքրությունների ու զբաղմունքի շրջանակները: Դեռևս վաղ հասակից, ինչպես ասել ենք, նա առանձնակի սեր է ցուցաբերել պատմության նկատմամբ և մասնագիտացել է հայ ժողովրդի պատմության ու Բյուզանդիայի պատմության ճյուղերում: Այս բնագավառներում նրա երկարամյա ուսումնասիրությունների արգասիքն են այն բազմաթիվ աշխատությունները, որոնք նվիրված են Բյուզանդիայի պատմության, հայ ժողովրդի պատմության հին շրջանին, հին Հա-

յաստանի ու Հռոմի հարաբերություններին և նման բազմաթիվ հարցերի: Այդ աշխատություններից առավել կարևորները հետևյալներն են.

1. «История Византии» (ապակետիպ МИФЛИ, 1936). Երկար տարիների ընթացքում կարդացած իր դասախոսությունների համառոտ շարադրանքն է, որ ներկայացնում է Բյուզանդիայի ամփոփ պատմությունը:

2. Պատմագրություն (ապակետիպ. Երևան, 1938), Երևանի Պետական համալսարանում կարդացած դասախոսությունների սղագրությունն է, որ աչքի է ընկնում շարադրանքի սխտեմայնությունամբ ու հարուստ նյութի ընդգրկումով:

3. История борьбы Тиграна II с Римом (ВДИ, 1940, № 3—4):

4. Тигран II и Рим (ИЖ, № 10): Քննարկում է Տիգրան II-ի և Հռոմի հարաբերությունները, իր կարծիքը հայտնելով մի քանի հարցերի մասին և փորձելով լուսաբանել այդ խնդրում եղած մի քանի մուտք կետեր:

Ինչպես այս, այնպես էլ իր մյուս պատմագիտական ուսումնասիրությունների մեջ, որոնց լիակատար ցանկը տալ մեր նպատակից դուրս է, Հ. Կուսիկյանը ցուցաբերում է պատմական երևույթների խոր ըմբռնում, բազմակողմանի գիտելիքներ և քննական ոգի:

Լինելով հայագետ՝ բառիս ամենալայն առումով, Հ. Կուսիկյանը զբաղվել է հայ գրականության պատմության, հայ ազգագրության հարցերով: Առանձնապես մեծ է նրա վաստակը հայ գրողներին ու ընթերցողներին ծանոթացնելու գործում. զանազան պարբերականներում, հանրագիտարաններում նա ունի բազմաթիվ հոդվածներ, ինչպես և առանձին գրքերի առաջաբաններ, որոնք նվիրված են Րաֆֆու, Մ. Նալբանդյանի, Հ. Հովհաննիսյանի, Հ. Պարոնյանի, Շ. Կուրղինյանի, Դ. Դեմիրճյանի, Վ. Փափազյանի, Նար-Դոսի, Պեշիկթաշլյանի, Մուրացանի, Ռ. Պատկանյանի ստեղծագործություններին: Նա առանձնապես մեծ թափով սկսեց զբաղվել հայ գրականության հարցերով 1941—1945 թթ. պատերազմի տարիներին, երբ մեկը մյուսի ետևից հրատարակում էր հայ գրականության պատմության հարցերին նվիրված հոդվածներ, թարգմանում հայ դասական գրողների երկերը ռուսերեն, կամ խմբագրում, առաջաբաններ գրում և այլն, և այլն: Այդ ժամանակ է հրատարակել նա

նաև իր «Հայրենիքի պաշտպանության գաղափարը հայ գրականության մեջ» (Երևան, 1941) արժեքավոր աշխատությունը:

Մեր նպատակից դուրս է թվել Հ. Կուսիկյանի ոչ լեզվաբանական, թեկուզ և կարևորագույն աշխատությունները և բնութագրել դրանք: Մենք կամեցանք ցույց տալ միայն, թե որքան ընդարձակ են եղել նրա գիտա-հետազոտական աշխատանքի շրջանակները և համառոտ ծանոթություն տալ նրա գիտական հետաքրքրությունը ներկայացնող բնագավառներին:

Իր մոտ հիսունամյա գիտական ու մանկավարժական գործունեության ընթացքում Հ. Կուսիկյանը միշտ էլ ուշադրության կենտրոնում է ունեցել լեզվաբանության հարցերը և մասնավորապես հայոց լեզուն: Երկար տարիների ընթացքում նա գրել է բազմաթիվ աշխատություններ, որոնք նվիրված են լեզվաբանության կարևորագույն հարցերին, ուսումնասիրել հայոց լեզվի, հատկապես նրա շարահյուսական կառուցվածքի պատմությունը, ժամանակակից գրական հայերենը, անդրադարձել հայագիտության զանազան հարցերի՝ իր գրախոսությունների ու հոդվածների մեջ: Աշխատելով անմիջականորեն Ն. Յա. Մառի ղեկավարած ինստիտուտում և լծվելով մարքսիստական լեզվաբանության մշակման գործին, Հ. Կուսիկյանն իր տեսական ծավալուն հոդվածների մեջ անդրադարձել է լեզվի փիլիսոփայության բազմաթիվ հարցերի և աշխատել գտնել դրանց մարքսիստական լուծումը: Մինչև 1950 թ. նա հիմնականում հետևել է Ն. Մառի ուսմունքին և տեսական խնդիրների լուծման մեջ առաջնորդվել այդ ուսմունքի դրույթներով: Աշխատելով Ն. Յա. Մառի հետ, նրա գլխավորած ինստիտուտում, Հ. Կուսիկյանը դեռևս քսանական թվականների վերջերից հարում է նրա ուսմունքին և հանդես գալիս այդ ուսմունքի դրույթների պաշտպանությամբ ու աշխատում է մասսայականացնել դրանք: Այսպես, դեռևս 1929 թ. տպագրված իր «Հարեթական տեսություն» ծավալուն հոդվածում (Բիլոտուսերեն լեզվով. УЗВЫШША, 1929, № 4) նա տալիս է «նոր ուսմունքի» հիմնական դրույթների մատչելի շարադրանքը, բնութագրելով դրանք որպես մարքսիստական դրույթներ: Հաջորդ տարում նա հանդես է գալիս «Задачи материалистического языкознания» հոդվածով (Просв. Нац., 1930, № 6), որի մեջ արժարժում է այն միտքը, թե մատերիալիստական լեզվաբանությունը պետք է զարգանա Ն. Յա. Մառի ուղիով, քննադատելով բուրժուական իդեալիստական լեզվաբանական ուղղությունները և հենվելով պատմական մատերիալիզմի վրա: Այնուհետև նա հա-

ջորդաբար անդրադառնում է կրկին այդ հարցերին, մասնակցում սովետական լեզվաբանության մեջ ծավալված պայքարին՝ իր բազմաթիվ հոդվածներում. դրանցից առավել բնորոշներն են հետևյալները. В чем значение Яфетической теории (ПН, 1931, № 7), Индоевропеистика в действии (ПН, 1931, № 1), Против буржуазного кавказоведения (ПН, 1932, № 1), Марр и его Учение (ПН, 1933, № 8), Яфетическая теория и индоевропеистика (ВЦКНА Марру, 1936) և այլն: Այս, ինչպես և շատ ուրիշ հոդվածների մեջ Հ. Կուսիկյանը քննադատում է իդեալիստական լեզվաբանական ուղղությունները, բացասում նաև պատմա-համեմատական մեթոդի օգտակարությունը սովետական լեզվաբանության համար, ժխտում լեզուների ցեղակցության այն ըմբռնումը, որ հաստատված է պատմական լեզվաբանության մեջ և պաշտպանում հարեթաբանության դրույթները: Ինքնին հասկանալի է, որ այս շրջանում նա գտնում էր, որ «նոր ուսմունքը» մարքսիստական լեզվաբանական տեսություն է, և ընդունում էր նրա հիմնական սկզբունքները լեզվի դասակարգայնության, լեզուների խաչավորման, լեզվի ստադիալականության և լեզվաստեղծական պրոցեսի միասնության կամ այլ կերպ՝ լեզվի պատմության մոնիզմի (МОНИЗМ ЯЗЫКОВОЙ ИСТОРИИ) մասին, ինչպես դրանք տրված էին Ն. Յա. Մառի աշխատությունների մեջ: Այդ դիրքերից ելնելով էլ, նա իր հոդվածներում քննադատում էր «նոր ուսմունքի» հակառակորդների տեսակետները լեզվի պատմության զանազան հարցերի մասին: Այս շրջանում նա հայոց լեզվի պատմության հարցերին անդրադարձել է իր ընդհանուր բնույթ կրող հոդվածների, ինչպես և հայագիտական առանձին աշխատություններին նվիրված գրախոսականների մեջ (օրինակ՝ О книге Гарибяна «Введение в изучение армянского языка», КН. и П. Р., 1939, № 5—6, О книге Капанцяна Chetto-armeniaca, ПИДО, 1935, № 9—10 ևն): Ինչպես ընդհանուր հարցերին նվիրված հոդվածների, այնպես էլ գրախոսականների մեջ նա պաշտպանում է Մառի տեսակետները հայերենի մասին և այդ մոտեցումով քննադատում հայագետների կարծիքներն ու փնտրում նրանց աշխատությունները, թեև երբեք էլ չի հասնում այն ծայրահեղությանը, որ հատուկ էր առավել ուղղափառ ու մարտնչող մտավորականներին: Հ. Կուսիկյանի՝ մինչև 1950 թ. դիսկուսիան լույս տեսած լեզվաբանական-հայագիտական ուսումնասիրություններից ամենակարևորն է «Грамматика современного литературного армянского языка» (М, 1950)

մենագրությունը, որ ժամանակակից հայոց լեզվի գիտական հիմունքներով տրված նկարագրությունն է ուսեբեն լեզվով: Աշխատության ներածական մասում, ընդհանուր ծանոթություն տալով հայերենի մասին, հեղինակը բնականաբար, տուրք է տալիս իր ժամանակի տիրապետող մտականությանը և հայերենը համարում է խաչավորված հաբեթական պրոմեթեոսյան միջակա լեզու, գրաբարը դիտում որպես հայ ֆեոդալականության, իսկ աշխարհաբարը՝ աշխատավորության լեզու ևն: Այդ դրույթները, սակայն, ընդհանուր, վերացական հայտարարությունների բնույթ են կրում և, բարեբախտաբար չեն անդրադառնում բուն աշխատության վրա¹: Հեղինակը առանձին գլուխներում հանգամանորեն նկարագրում է ժամանակակից հայերենի հնչյունաբանությունը, բառակազմությունը, ձևաբանությունն ու շարահյուսությունը: Ամբողջությամբ վերցրած՝ գիրքը գիտական լուրջ արժեք է ներկայացնում ժամանակակից հայոց լեզվի ուսումնասիրության տեսակետից և ցավալ կարելի է միայն, որ նա լրիվ տպաբանակով լույս չի ընծայվել: Նրա արժանիքն է՝ ավելի մեծանում է նրանով, որ նա ժամանակակից հայերենին նվիրված միակ ամբողջական ու գիտական բարձր մակարդակով գրված ուսումնասիրությունն է ուսեբեն լեզվով:

1950 թ. դիսկուսիայից հետո Հ. Կուսիկյանը, բնականաբար, հրաժարվեց Ն. Մառի ուսմանքի սխալ դրույթներից և շարունակեց իր ուսումնասիրություններն ավելի արդյունավետ կերպով: Հենց նույն 1950 թ. լույս տեսած «Большая советская энциклопедия»-ի III հատորում, հայոց լեզվին նվիրված իր հոդվածում Հ. Կուսիկյանն արդեն գրում է, որ հայերենը ներկայացնում է հնդեվրոպական լեզուների մի խնջուրույն ճյուղը (էջ 107): Այնուհետև նա հանդես է գալիս Ն. Մառի՝ հայերենի մասին արտահայտած սխալ տեսակետների քննադատությամբ իր «Армянский язык и ошибки Н. Я. Марра» (ПВМЯ. т. II) հոդվածով և իր սխալների քննադատությամբ՝ «О моих ошибках, связанных с «новым учением» о языке». (ДСИЯАН, т. V, 1953) հոդվածով: Այս երկու հոդվածներում էլ հեղինակը քննադատում է Ն. Մառի սխալ դրույթները հայերենի մասին, ցույց տալիս որ ինքն էլ երկար ժամանակ առաջնորդվել է այդ սխալ դրույթներով և վճռաբար հրաժարվում

դրանցից: Հետագայի իր հոդվածների և ուսումնասիրությունների մեջ Հ. Կուսիկյանը քննության է առնում հայերենը, պատմա-համեմատական լեզվաբանության դիրքերից ելնելով: Այս շրջանի նրա գլխավոր աշխատությունն է «Очерки исторического синтаксиса литературного армянского языка» (М. 1959) մենագրությունը: Համառոտ առաջաբանի մեջ հեղինակը խոսում է հայոց լեզվի պատմական շարահյուսություն ստեղծելու անհրաժեշտության ու դժվարությունների մասին, ապա, շեշտելով, որ հայերենի շարահյուսության պատմական զարգացմանը նվիրված որևէ քիչ թե շատ ծավալուն հետազոտություն դեռևս չունենք, բնորոշում է իր աշխատանքը որպես մի փորձ այդ ուղղությամբ: Այնուհետև, առանձին գլխում հեղինակը կանգ է առնում հայոց լեզվի շարահյուսության պատմական ուսումնասիրության խնդիրների ու մեթոդների վրա: Շեշտելով, որ լեզվի մեջ պատմական փոփոխությունները տեղի են ունենում աննկատելիորեն, երկար դարերի ընթացքում, հեղինակը ճիշտ կերպով գտնում է, որ այդ բանն առավել ևս վերաբերում է շարահյուսությանը և եզրակացնում, որ պատմական շարահյուսության առաջնահերթ խնդիրն է. «ցույց տալ, թե լեզվի հատկապես որ կողմերն են մի շարք դարաշրջանների ընթացքում առավել կայուն, նվազ փոփոխված մնացել և, ընդհակառակն, շարահյուսական ինչ իրողություններ են այս կամ այն չափով փոփոխության ենթարկվել» (էջ 6): Հեղինակը միանգամայն իրավացի կերպով հիշեցնում է, որ առանձնապես հայերենի շարահյուսության պատմական ուսումնասիրությունը պահանջում է հաշվի առնել ոչ միայն քննության նյութ մատակարարող աղբյուրների ժամանակագրական հաջորդականությունը, այլև նրանց բնույթը, բովանդակությունը, հաճախ նաև հեղինակի ապրած միջավայրը, տեղը և այլն, և այլն, որոնք այս կամ այն չափով կարող են պայմանավորել երկի շարահյուսական որոշ առանձնահատկություններ: Ընդհանուր առմամբ այս գրվածքում պրոֆ. Հ. Կուսիկյանը ճիշտ կերպով բնորոշում է և այն խնդիրները, որոնք ծառանում են պատմական շարահյուսության առջև, և այն մեթոդներն ու եղանակները, որոնք պետք է կիրառել հայերենի շարահյուսության պատմական ուսումնասիրության մեջ: Տարակուսանք է հարուցում միայն հայերենի պատմության շրջանաբաժանման այն թուուցիկ տեղեկությունը, որ տալիս է հեղինակը գրքի 6-րդ

¹ Աշխատությունը տպագրված էր արդեն, բայց դեռ վաճառքի չէր հանվել, և րբ սկսվեց լեզվաբանական դիսկուսիան: Դիսկուսիայից հետո ամբողջ տպաբանակը ոչնչացվեց, և միայն 15 օրինակ պահպանվեց:

նախադասութիւնը չէր կարելի հասկանալ: Հետեւաբար, ունէր կատարում է հանգույցի դեր: ...Այսպիսով, հիշված անվանական նախադասութիւնների մեջ հանգույցները ներկայացված են մերթ անվանը միացած (երկն+էր), մերթ էական բայի արմատի ձևով՝ հանգույցի հետ միացած (ուն+էր), մերթ ինքնուրույն (էր և էին): Նախադասութիւնն անվանական տիպը՝ հանգույցի առկայութեամբ կարելի է համարել պարզ նախադասութիւնն առավել հնագույն տեսակը» (էջ 26): Այս հատվածի բոլոր վերլուծութիւնները զուրկ են իրական հիմքից: Երկնէր երկին չի նշանակում «երկունքի ցավեր էին երկնքին», այլ պարզապես՝ երկինքը երկնում էր, նույնպես և՛ երկնէր երկիր = «Երկիրը երկնում էր»: աշխարհաբարի ավելի հարմար թվացող թարգմանութիւնը՝ «Երկինքը երկունքի մեջ էր, երկիրը երկունքի մեջ էր» չի կարող որոշիչ փնել այդ նախադասութիւնների բնույթը սահմանելու համար: Հին հայերենի կառուցվածքում երկնէր պարզ ստորոգյալ է և ոչ թե բաղադրյալ կազմված անվան ու հանգույցի միացումով: Այդ սխալ բնորոշումից ելնելով, հեղինակը գտնում է, որ ունիմ բայի գրաբարյան (V դարի) իմաստով չի կարելի հասկանալ «Երկն ի ծովուն ունէր» նախադասութիւնը, որ, իր կարծիքով, պետք է թարգմանել «Ծովի երկունքի ցավեր»: այդ է պատճառն, ահա, որ ամբողջ նախադասութիւնն էլ սխալ է թարգմանում: Երկն ի ծովուն ունէր և զկարմրիկն նախադասութիւնը պետք է թարգմանել՝ «Երկունքը ծովի մեջ բռնել էր (= պատել էր) և (= նաև) կարմրիկ եղեգնիկին», մինչդեռ թարգմանում է. «Մովը երկունքի ցավերի մեջ էր կարմրիկ եղեգնիկին ծնելիս. было море в муках родин, рождая красненький тростничок (էջ 17). ստացվում է այնպես, որ ծովը ծնել է եղեգնիկ, մինչդեռ վահագնի երգի մեջ ասվում է, թե երկունքի մեջ էին, երկունքի ցավերով էին բռնված ու երկնում էին երկինքն ու երկիրը, ծիրանի ծովը և նույնիսկ՝ եղեգնիկը ծովի մեջ: Այս բոլոր անճշտութիւնները, բնականաբար, անընդունելի էլ եզրակացութեան են հանգեցնում. հեղինակի կարծիքով, վիպասանական հատվածների տվյալները մտածել են տալիս, թե նախադասութիւնն անվանական կառուցվածքը պարզ նախադասութիւնն առավել հնագույն տեսակն է: Մենք շնք առարկում այդ սկզբունքի դեմ ընդհանրապես. բայց վիպասանական հատվածների մեջ ոչ մի հիմք չկա այդ

1 Հմտ. Մովսես Խորենացի, Հայոց պատմութիւն, թարգմ. Ստ. Մալխասյանի, Երևան, 1961, էջ 135:

եզրակացութեան համար. մենք վիպասանական 14 հատվածների մեջ գտանք միայն մեկ անվանական նախադասութիւն, որ է՝ Սեաչլունէն էին արեգակունէն:

Հաջորդ գլուխը (էջ 35—92) ամբողջութեամբ նվիրված է V դարի մատենագրութեան լեզվի շարահյուսութեան ուսումնասիրութեանը: Հայոց լեզվի զարգացման՝ V դարի պատմա-հասարակական պայմանների համառոտ ակնարկից և շարահյուսութեան ուսումնասիրութեան աղբյուրների տեսութեանից հետո, հեղինակը անցնում է պարզ նախադասութեան մանրամասն վերլուծութեանը: Այստեղ քննութեան են առնվում այնպիսի կարևոր հարցեր, ինչպիսիք են՝ ենթական ու ստորոգյալը, հոլովների կիրառութեանը, դիմորոշ հոդերը, զ նախդրի կիրառութիւնները, բայի կիրառութիւնները, որոշիչն ու նրա տեսակները, պարագաները և այլն: Այս բոլոր հարցերը հեղինակը ուսումնասիրում է փաստական հարուստ նյութի վերլուծութեամբ և, ընդհանուր առմամբ, ճիշտ եզրակացութիւնների հանգում: Հ. Կուսիկյանն առանձին հատված է նվիրում V դարի մատենագրութեան լեզվի մեջ բարբառային երևույթների թափանցման վրա, առանձնապես նկատի ունենալով շարահյուսական տվյալները: Հեղինակի կարծիքով, Կորյունի զբարոցը ներկայացնում է յուրահատուկ լեզու ոչ թե ռճաբանական տեսակետից, ինչպես կարծում են հայագետներից ոմանք, այլ բարբառային-ժողովրդական լեզվի իրակութիւնների լայնորեն օգտագործման տեսակետից: Ցավոք սրտի, հեղինակն իր դատողութիւնները հիմնավորում է միայն մի երկու դարձվածքների օրինակով (որոյ անուն ճանաչէր..., իբրև տեսեալ...), մինչդեռ անհրաժեշտ էր ավելի շատ տվյալներ օգտագործել այդպիսի ծանրակշիռ եզրակացութեան համար: Վերջապես, առանձին հատվածներում համառոտակի խոստում է նաև հունարան դպրոցի և V դարի երկրորդ կեսի մատենագրութեան լեզվի շարահյուսական երևույթների մասին: Այս գլխի մեջ հեղինակը առանձին քննութեան առարկա չի դարձրել բարդ նախադասութեան շարահյուսութեանը, թեկուզ և ընդհանուր գծերով, որ, իհարկե, անհրաժեշտ էր: Առանձին հարցերի վերաբերյալ արտահայտած կարծիքներից մենք քննութեան կառնենք հետևյալը. խոսելով որոշիչ ու որոշյալի շարահյուսութեան մասին, հեղինակը գրում է. «Գրավոր հուշարձանների մեջ կարելի է նկատել, սկսած V դարից, որոշիչը որոշյալից հետո դնելու ձգտում: Այդ ձրգտումն աստիճանաբար վեր է ածվել նորմայի այն շրջաններում, երբ հին հայերեն գրական լեզուն սկսեց ետ մնալ կենդանի լեզվից»

(էջ 68): Իր ասածը հաստատելու համար հեղինակը բերում է երկու նախադասություն Նզնիկից, որոնցից առաջինում բոլոր որոշիչները հտադաս են, իսկ երկրորդում՝ նախադաս, և եզրակացնում, թե նույն V դարում որոշիչը նախորդում է որոշյալին որպես ընդհանուր կանոն, որպես նորմա: Այս տեսակետին, իհարկե, դժվար է համաձայնել. բանն այն է, որ V դարում, հատկապես առաջին կեսի մատենագրության մեջ ավելի գերակշռողը և որպես ընդհանուր օրինաչափություն հանդես եկողը որոշիչ հտադաս գործածությունն է: Նախադաս գործածությունը V դարի լեզվում թեև բավականաչափ արդեն ծավալված, բայց դեռ տիրապետող շղարձած երևույթ էր. նա սաղմնավորվել էր շատ վաղուց, և վիպասանական հատվածներում արդեն գտել էր իր արտահայտությունը (օր. զկարմրիկն եղեգունիկ, խարտեաշ պատանեկիկ, հուր հեր են): Հետագայում անշուշտ աստիճանաբար նա զարգացել, ծավալվել էր, այնպես որ V դարում արդեն որոշակիորեն հանդես էր գալիս իբրև ձևավորվող օրինաչափություն: Տվյալ դեպքում մենք վկա ենք երկու իրար հակադիր միմյանց բացասող, բայց դեռևս իրար կողք կողքի գոյություն ունեցող ու իրար բախվող օրինաչափությունների պայթարին: Մեկը հին, իր դարն ապրած, դեպի մահացում գնացող օրինաչափությունն է, մյուսը՝ նոր, զարգացող, աստիճանաբար ավելի ու ավելի ծավալվող ու հետագայում արդեն ընդհանրացող օրինաչափությունը: Սրանից ինքնին բխում է այն, որ V դարի հեղինակների մոտ ոչ թե հետագայում ընդհանրացած ձգտում կա որոշիչ հետադաս գործածության, այլ լեզվի մեջ ավանդաբար գործող ու դեռևս բավականաչափ կենսունակ օրինաչափության դրսևորում: Ինչ վերաբերում է հետագա դարերին, երբ գրաբարի ու կենդանի խոսակցական լեզվի միջև անջրպետը բավականաչափ խորացել էր, ապա այդ շրջանի հեղինակները ձգտում էին գրել նախնիների նման, ընդօրինակել V դարի հեղինակների լեզուն և նրանց հետևողությամբ էլ գերադասում էին որոշիչ հտադաս գործածությունը: Սրանց մոտ մենք ունենք արհեստականորեն ստեղծված երևույթ, մինչդեռ առաջինների՝ V դարի հեղինակների մոտ, այսպես ասած՝ բնական վիճակ: Տարբեր դարաշրջաններ՝ տարբեր էլ երևույթներ:

Հաջորդ երեք գլուխներում հեղինակը քննության է առնում գրաբարի շարահյուսության մեջ տեղի ունեցած փոփոխությունները VI—XII դարերում, միջին հայերենի շարահյուսական կառուցվածքի հիմնական գծերը, ապա՝ ժամանակակից հայերենի (արևելահայ գրական լեզվի) շարահյուսության կարևորագույն օրինաչափու-

թյունները: Այս բոլոր խնդիրներն էլ հեղինակն ուսումնասիրում է գրավոր հուշարձանների լեզվական հարուստ նյութի վերլուծությամբ, պատմական պրոցեսի բազմակողմանի հաշվառումով: Պետք է շեշտել հատկապես, որ հայոց լեզվի պատմության այս կամ այն փուլի լեզվական իրողությունների քննությանն անցնելուց առաջ, պրոֆ. Հ. Կուսիկյանը համառոտակի բնութագրում է սոցիալ-պատմական այն գործոնները, որոնք հիմք են հանդիսացել կենդանի ժողովրդական լեզվի իրողությունների՝ գրական լեզվի մեջ թափանցելուն, ժողովրդական լեզվով գրելուն, կամ, ընդհակառակն, դրանցից խոտափելուն և այլն: Այս բոլորը հնարավորություն են տալիս ընդհանուր գծերով ճիշտ բնորոշելու հայոց լեզվի զարգացման պատմական պրոցեսը և ճիշտ կերպով գնահատելու այս կամ այն շրջանի լեզվական երևույթները: Վերջին զլխում, որ վերնագրված է «Մի քանի ընդհանուր դատողություններ հայոց լեզվի շարահյուսության զարգացման պրոցեսի վերաբերյալ», հեղինակն ամփոփում է իր ուսումնասիրության արդյունքները և տալիս հայոց լեզվի շարահյուսական կառուցվածքի պատմական զարգացման պրոցեսի ընդհանուր բնութագիրը: Հեղինակը ճիշտ կերպով գտնում է, որ հայոց լեզվի շարահյուսության զարգացման պրոցեսը կարելի է բնութագրել ինչպես պարզ, այնպես էլ բարդ նախադասությունների կառուցման ավելի ու ավելի ճկունացման, առավել կատարելագործման ընդհանուր տենդենցով:

Պրոֆ. Հ. Կուսիկյանի այս մենագրությունը ճիշտ գնահատելու համար պետք է նկատի ունենալ, որ դա միակն է իր տեսակի մեջ, առաջին փորձը՝ հայերենի պատմական շարահյուսությունն ստեղծելու ուղղությամբ: Սա բնականաբար խիստ դժվարացնում է գործը, և հենց այդ է պատճառը, որ հեղինակը շատ համեստ խնդիր է դրել իր առջև՝ փորձել «հայերենի շարահյուսության զարգացման ուրվագծերը նշել, նրա առանձին կողմերն ուրվագծել պատմական ասպեկտով» (էջ 3): Եվ չնայած այս համեստ բնութագրին, աշխատությունը հայերենի պատմական շարահյուսության համառոտ, բայց հաջողված ուսումնասիրությունն է: Իր այս մենագրությամբ պրոֆ. Հ. Կուսիկյանը հայոց լեզվի պատմության մի ճյուղի գիտական մշակման հաստատուն հիմքն է դնում: Այս տեսակետից, այլև նյութի գիտական մշակման տեսակետից «Очерки исторического синтаксиса литературного армянского языка» մենագրությունը լուրջ ներդրում է հայերենի պատմության ուսումնասիրության բնագավառում: Բայց նրա արժեքը միայն դրանով չի սպառվում. մեկուկես

հազարամյակի հարուստ գրական հուշարձաններով ավանդած հայոց լեզվի պատմական շարահյուսութեան ամբողջական ու սպառիչ ուսումնասիրությունը վեր է մեկ մարդու ուժերից. դրանով դեռ շատ ու շատ մասնագետներ պետք է զբաղվեն: Պրոֆ. Հ. Կուսիկյանն այս աշխատությանը, ահա, ոչ միայն կարևոր նյութ է տալիս դրա համար, այլև բնորոշում այն հիմնական մեթոդներն ու եղանակները, որոնք պետք է գործադրվեն այդ առարկայի ուսումնասիրության մեջ, առաջադրում այն հիմնական խնդիրները, որոնցով պետք է զբաղվեն մասնագետները և նշում այն հիմնական ուղիները, որոնցով պետք է ընթանան առաջիկա ուսումնասիրությունները: Այս տեսակետից այս մենագրությունը ոչ միայն հայոց լեզվի պատմական շարահյուսության ամփոփ ուրվագիծն է, այլև այդ կարգի ուսումնասիրությունների ծրագիրն ու ուղեցույցը: Բնական է, որ այսպիսի մի գործի մեջ կարող են լինել նաև որոշ վրիպումներ, անճշտություններ ու վիճելի կարծիքներ, որոնցից մի քանիսի վրա կանգ առանք, բայց դրանք երկրորդական նշանակություն ունեն և ընդհանուր գնահատականը չեն կարող փոխել:

Ինչպես ասել ենք, 1950 թվականից հետո Հ. Կուսիկյանը ծավալել է ավելի եռանդուն և արգասավոր գիտա-հետազոտական աշխատանք: Դրա արդյունքն այն է, որ նա, արդեն լույս տեսած հիշյալ մենագրությունից բացի, ավարտել ու հրատարակչական մարմիններին է հանձնել ևս երկու մենագրություն («Изменения в словарном составе современного армянского языка», «Восточный и западный варианты современного литературного языка»), որոնք քննությանը սակայն չենք անդրադառնում, հարազատ մնալով մեր ընդունած սկզբունքին՝ քննարկման նյութ դարձնել միայն հրատարակված աշխատությունները: Մնում է ավելացնել միայն, որ Հ. Կուսիկյանը մեծ վաստակ ունի նաև սովետահայ բառարանագրության բնագավառում. նա մեկն է ուսու-հայերեն քառահատոր բառարանի հեղինակներից և լուրջ աշխատանք է կատարել այդ բառարանը կազմելու ուղղությամբ ոչ միայն իբրև հեղինակ, այլև իբրև գիտական խորհրդատու:

Ամփոփելով վերը շարադրվածը, գալիս ենք այն եզրակացության, որ Հ. Կուսիկյանը իր երկարամյա գիտական գործունեությանը նշանակալից դեր է խաղացել սովետական հայագիտության ու բյուզանդագիտության մեջ: Իր բազմակողմանի գիտական հետաքրքրություններով, իր հարուստ գիտելիքներով ու մեծ եռանդով, անմիջական մասնակցությամբ նա մեծապես նպաստել է սովետա-

կան գիտության առջև դրված գործնական խնդիրների լուծմանը, իր ուսումնասիրություններով հարստացրել հայագիտությունը արժեքավոր աշխատություններով, իր գիտա-մանկավարժական գործունեությամբ վառ պահել հայագիտության շահը Ռուսաստանում: Թեև մշտապես հաստատված Մոսկվայում, բայց շուրջ քսան տարիների ընթացքում գրեթե ամեն տարի եղել է Հայաստանում, դասախոսել Երևանի համալսարանում ու Մանկավարժական ինստիտուտում, օգնել երիտասարդ գիտական աշխատողներին, սատար ու զորավիգ եղել նրանց: Այս բոլորն, ահա, մեզ իրավունք են տալիս շատ բարձր գնահատելու Հ. Կուսիկյանի գիտական գործունեությունը և համարելու նրան Սովետական Միության անվանի հայագետ-լեզվաբաններից մեկը:

**Շարահյուսության
Ստեղծող
Ղարիբյան**

Սովետական կարգերի օրոք աճած լեզվաբան է Արարատ Ղարիբյանը, որի անունն անխրդելիորեն կապված է 1930—1950 թվականների սովետահայ լեզվաբանության կյանքում տեղի ունեցած բոլոր իրադարձությունների հետ:

Արարատ Ղարիբյանը ծնվել է 1899 թվին, Արտաշատի շրջանի Գինեվետ (Դարդալու) գյուղում. սկզբնական կրթությունն ստացել է գյուղի երկդասյան հայկական դպրոցում, ապա՝ Արտաշատի երկդասյան ուսական դպրոցում: Այնուհետև շարունակել է ուսումը Երևանի պրոգիմնազիայում և գիմնազիայում, որը և ավարտել է 1919 թ.: 1922 թ. սկսել է աշակերտել Հրաչյա Աճառյանին, 1923 թ. ընդունվել է Երևանի Պետական համալսարանը և 1927 թ. ավարտելով, 1928—30 թթ. սովորել է համալսարանի ասպիրանտուրայում. այդ ժամանակամիջոցում ութ ամիս եղել է Մառի մոտ և աշակերտել նրան: 1931 թվականից սկսել է դասախոսել համալսարանում, ապա և՛ ուրիշ ինստիտուտներում: 1937 թ. դիսերտացիայի պաշտպանությանը ստացել է բանասիրական գիտությունների թեկնածուի աստիճան: 1940 թ. պաշտպանել է երկրորդ դիսերտացիան և ստացել դոկտորի աստիճան ու պրոֆեսորի կոչում: 1943—1950 թթ. եղել է ՀՍՍՌ Գիտությունների ակադեմիայի լեզվի ինստիտուտի դիրեկտոր: 1956—1962 թ. թ. վերստին վարել է այդ պաշտոնը. 1949 թ. ընտրվել է ՀՍՍՌ Գիտությունների ակադեմիայի թղթակից անդամ, իսկ 1959 թ.՝ իսկական անդամ:

Ինչպես վերն ասել ենք, արդեն, Ա. Ղարիբյանն իր գիտական գործունեության հենց սկզբից հանդես է եկել որպես Ն. Մառի «նոր ուսմունքի» ուղղափառ հետևորդներից մեկը: Թե՛ իր գիտական աշ-

խատուութիւնների մեջ և թե՛ իր գործունեութեամբ նա ակտիվորեն պայքարել է հանուն «նոր ուսմունքի» հաղթանակի, նրա լիակատար տիրապետութեան՝ ոչ միայն սովետահայ, այլև ամբողջ սովետական լեզվաբանութեան մեջ: Իբրև «նոր ուսմունքի» հետևորդ, նա մեկն է եղել այն մարդկանցից, որոնք այդ ուսմունքը դոգմայի վերածեցին և այդ դոգմայից կատարվող որևէ շեղում հայտարարեցին մարքսիզմի (!) աղավաղում: Դեռ ավելին. այդ դոգմային հարազատ մնալու մոլուցումը հանգեցրեց նրան այն բանին, որ շատ հարցերում մարքսիզմի հիմնադիրների այս կամ այն դրույթն աղավաղելով՝ հարմարեցնում էր «նոր ուսմունքի» սկզբունքներին: Այդ դոգմատիկ ուղղափառութիւնը նկատի ունի Զ. Աճառյանը, որ լատինական հայտնի արտահայտութիւնը փոխելով, Ա. Ղարիբջանին համարում էր «բան զՄատն մառական»: Վերջապես, Ա. Ղարիբջանի գործունեութեան հետեանքն էր այն, որ Հայաստանում, ավելի քան որևէ ուրիշ ռեսպուբլիկայում, մոլեգնեց արակչեկյան ռեժիմը, և հալածանքի ենթարկվեցին այնպիսի հայագետներ, ինչպիսիք էին Մ. Արեղյանը, Զ. Աճառյանը և, նույնիսկ, Գ. Ղափանցյանը:

1950 թ. դիսկուսիայից հետո Ա. Ղարիբջանը, հրաժարվելով «նոր ուսմունքի» դրույթներից և սովետական լեզվաբանութեան հիմնական սկզբունքներն ընդունելով, աշխատում է կիրառել պատմա-համեմատական մեթոդն իր ուսումնասիրութիւնների մեջ:

Այսպիսով, Ա. Ղարիբջանի գիտական գործունեութիւնը որոշակիորեն բաժանվում է երկու շրջանի՝ 1930—1950 թթ., և 1950 թվականից հետո: Մենք էլ, ուրեմն, այդ շրջաններից յուրաքանչյուրի մասին կխոսենք առանձին-առանձին:

Արարատ Ղարիբջանը բեղմնավոր գիտա-հետազոտական աշխատանքներ է կատարել ու հրատարակել բազմաթիվ ուսումնասիրութիւններ. դրանց մեծագույն մասը լույս է տեսել մինչև 1950 թ. լեզվաբանական դիսկուսիան և իր տեսական դրույթներով ամբողջապես հիմնված է «նոր ուսմունքի» սկզբունքների վրա: Այդ շրջանի աշխատութիւններից գլխավորներն են.

1. Հայոց լեզվի պատմութեան ուսումնասիրութեան ներածութիւն (Երևան, 1937). համալսարանում և մանկավարժական ինստիտուտում հեղինակի դասավանդած «հայոց լեզվի պատմութիւն» առարկայի դասագիրքն է: Հեղինակը ամփոփ կերպով տվել է հայոց լեզվի պատմութիւնը, որի մեջ բավականաչափ հանգամանորեն քննութեան է առել հայերի ու հայերենի գոյացման խնդիրը՝ հետևելով Մառին, ապա՝ գրաբարի կազ-

մավորումն ու գրաբարի կառուցվածքը (բառապաշար, հնչյունաբանութիւն, ձևաբանութիւն ևն), այնուհետև՝ հունաբան դպրոցը, միջին հայերենը, հայերեն բարբառները, մինչև սովետական շրջանի աշխարհաբար գրական լեզուն և «սոցիալիզմի դարաշրջանի գրական հայերենը»: Այս աշխատութիւնը հայոց լեզվի պատմութիւնը «նոր ուսմունքի» հիմունքներով շարադրելու մի փորձ է և, իբրև այդպիսին, կրում է իր մեջ այն բոլոր արատներն ու սխալները, որոնք հատուկ են «նոր ուսմունքին»:

2. Հայերեն բարբառների մի նաբնյուղ (Պետ. համալսարանի գիտ. աշխատութիւններ, 1939, հատոր XI, էջ՝ 23—187): Հեղինակի դիսերտացիոն աշխատանքն է, որի պաշտպանութեամբ ստացավ դոկտորի աստիճան: Աշխատութեան մեջ, քննութեան առնելով հայերեն վեց բարբառներ (Արթվինի, Շագախի, Կարճեանի, Մեղրիի, Հաղութի, Ուրմիայի), հեղինակը փորձում է ապացուցել, որ գոյութիւն ունի հայերեն բարբառների մի շրրորդ ճյուղ, որ ինքը կոչում է «Ս» ճյուղ: Թեև առանձին բարբառների նկարագրութիւնները ջափազանց համառոտ են, բայց և այնպես ընդհանուր գաղափար են տալիս յուրաքանչյուրի մասին. ավելի մեծ տեղ է հատկացված յուր տեսակետի հիմնավորմանը: Այդ հարցը, այսինքն հայերեն բարբառները երեքի փոխարեն չորս ճյուղի բաժանելը, քննութեան է առել դեռևս Զ. Աճառյանը, որ գտնում է, թե հնարավոր է «էլ» ճյուղից առանձնացնել մի ճյուղ ևս՝ ըստ բայերի ներկա ժամանակի կազմութեան: Բայց քանի որ ես կամ — ս վերջավորութիւնը —ելիս-ի զարգացումն ու կրճատումն է, ուստի և Զ. Աճառյանը հարմար է գտնում մի ճյուղի մեջ ամփոփել բայի ներկա ժամանակ «—էլ» կամ «—ելիս», «էս» վերջավորութիւններով կազմող բարբառները: Ղարիբջանն իր այս աշխատութեան մեջ պնդում է, որ պետք է «էլ» ճյուղից առանձնացնել «Ս» ճյուղը, որպես հայերեն բարբառների շրրորդ ճյուղ: Այս խնդիրը վերստին քննարկման առարկա է դարձել վերջին տարիներում, ըստ որում շատերը գտնում են, որ Ա. Ղարիբջանի պնդումը գիտական հիմքերից զուրկ է: 1960 թ., Երևանի, Թբիլիսիի և Բաքվի համալսարանների Միացյալ գիտական սեսիայում կարդացած զեկուցման մեջ տողերիս գրողը պաշտպանեց Զ. Աճառյանի դասակարգումը, ցույց տալով, որ Ա. Ղարիբջանի պնդումն ընդունելի չէ¹:

¹ Տե՛ս Проф. Э. Б. Агаян, К вопросу о классификации современных армянских диалектов, «Третья объединенная научная сессия Тбилисского».

3. Համառոտություն հայ բարբառագիտության (Երևան, 1941): Օգտագործելով հայերեն բարբառների մասին եղած ուսումնասիրությունները, որոնց մեջ հատուկ տեղ են գրավում Աճառյանի աշխատությունները, և ավելացնելով յուր հետազոտություններով ձեռք բերած տվյալները, հեղինակը տվել է հայ բարբառագիտության մի ամբողջական դասագիրք: Ի տարբերություն Աճառյանի «Հայ բարբառագիտութիւն» գրքի, այստեղ հայերեն բարբառներն ըստ ձևաբանական գլխավոր հատկանիշների բաժանված են չորս ճյուղի, ինչպես որ առաջարկված է նախորդ աշխատության մեջ: Բացի ձևաբանական դասակարգումից, բարբառները խմբավորված են նաև ըստ բաղաձայնական սխտեմի՝ հիմնրված պայթականների «տեղաշարժի» վրա: Այս աշխատությունը հայ բարբառագիտության բնագավառում մինչև իր հրատարակության ժամանակը կատարվածի ամփոփումն է, և իբրև այդպիսին՝ ամենից ամբողջականը:

Մրանցով, իհարկե, չի վերջանում Ա. Ղարիբյանի՝ մինչև 1950 թ. հրատարակած աշխատությունների ցանկը. նա ուրիշ գրքեր էլ ունի, որոնք մեր ուսումնասիրությանը չեն վերաբերում. դրանցից կարելի է հիշել, օրինակ, «Հայոց լեզվի մեթոդիկան» (Երևան, 1938):

Նույն շրջանում Ա. Ղարիբյանը հրատարակել է բազմաթիվ հոդվածներ՝ նվիրված զանազան հարցերի, որոնց մեջ պրոպագանդում է լեզվի «նոր ուսմունքի» դրույթները. դրանց մեծագույն մասը հրապարակախոսական բնույթ է կրում:

Վերը հիշատակված աշխատություններն ինքնին ցույց են տալիս արդեն, որ Արարատ Ղարիբյանի ուսումնասիրությունների հատուկ նյութն են կազմում հայոց լեզվի պատմությունը և հայերեն բարբառները: Ընդհանուր լեզվաբանական խնդիրներին նա հենց այդ աշխատությունների մեջ է անդրադարձել, և այն չափով միայն, որչափով դրանք կապվում են իր ուսումնասիրած նյութի հետ: Թե՛ ընդհանուր լեզվաբանական և թե՛ մասնավորապես հայագիտական հարցերում նա հետևում է Մատի «նոր ուսմունքին». այդ ուսմունքի հետևողությամբ է գրված հատկապես վերը հիշված հայոց լեզվի պատմությունը, որ և դրա հետևանքով ուրիշ հեղինակների բոլոր այդ կարգի ուսումնասիրություններից որոշակիորեն տարբերվում է: Այս գրքում հեղինակին առաջին հերթին զբաղեցնում է հայերի ու

հայերենի գոյացման խնդիրը, որ նա աշխատում է լուծել պատմական ու հասարակական գործոնների քննությամբ, երևելով Մատի տեսությունից: Այսպես, հայտարարելով, թե լեզուն պատմա-հասարակական երևույթ է, նա ամեն մի ժողովրդի (ապա և՛ ազգի) լեզվի գոյացումը կապում է ժողովրդի գոյացման հետ, իսկ սրանից էլ անմիջապես բխեցնում այն դրույթը, թե լեզուն յուր բաղադրիչ մասերով դրսևորում է հենց այդ իսկ ժողովուրդը կազմող այլ և այլ ցեղերի լեզվական տարրերը: Մյուս կողմից՝ նա ճիշտ կերպով շեշտում է, որ ժողովուրդներն ու ազգերը իրենց պատմական գոյության ընթացքում մեկուսացած չեն. նրանք փոխադարձ սոցիալ-բաղաբական շփման միջոցով ազդում են միմյանց վրա ոչ միայն կուլտուրական, տնտեսական ու քաղաքական կողմերով, այլև՝ լեզվով: Հետևաբար, եզրակացնում է նա, յուրաքանչյուր լեզվի պատմությունն ուսումնասիրելիս անհրաժեշտ է պարզել՝ մի կողմից՝ նրա բաղադրիչ տարրերի աղբյուրները և այդպիսով իսկ լուծել նրա գոյացման խնդիրը յուր պատմա-հասարակական էությունը ու պատմականորեն կազմավորվելու պրոցեսի քննությամբ, մյուս կողմից՝ լուսաբանել լեզվի զարգացման ընթացքում տեղի ունեցած զանազան լեզվական փոխազդեցությունները. «Յուրաքանչյուր էթնիկական լեզու արտացոլում է տվյալ էթնոսի և ազգի պատմությունն իր գոյացման օրից մինչև մեր օրերը: Այդ պատմությունն անպայմանորեն հանդիսանում է տվյալ ժողովրդի և ազգի, որպես մի միասնություն կազմող դասակարգային հասարակության պատմությունը. ...էթնիկական լեզուների գոյացումը՝ արտացոլում է ժողովրդի (էթնոսի) գոյացման ամբողջ պրոցեսը: Ուստի, հնարավոր է և պետք է մեկը կապել մյուսի հետ և մեկը բացատրել մյուսով: Էթնիկական և հետագայում ազգային լեզուն իր պատմության պրոցեսում արտացոլում է նաև զանազան ժողովուրդների ու ազգերի սոցիալ-քաղաքական գործունեության հետևանքով տեղի ունեցող շփման ու մոտեցման մոմենտները՝ փոխառած լեզվաձևերով, Ուստի, անհրաժեշտ է լեզվի պատմության մեջ այս խնդիրն իր արտահայտման տարրեր բնույթով ու եղանակներով նույնպես ի հայտ բերել» (Հայոց լեզվի պատմ. ևն, էջ 5): Այս սկզբունքից էլ ելնելով, նա առաջին հերթին քննության է առնում հայ ժողովրդի գոյացման խնդիրը՝ մատչելի նա հիշում, քննադատում ու հերքում է հայերի, իբրև պատմականորեն կազմավորված ժողովրդի, գոյացման մասին արտահայտված կարծիքները՝ սկսած հույն պատմիչներից ու հայ մատենագիրներից, մինչև մեր օրերի գիտնականները, բացա-

ուելով միայն Ն. Մառին: Այնուհետև քննութեան է առնում Նաիրի, Ուրարտու, Խալդիա, Արմենիա պատմական անունները և ընդունում, որ դրանցից յուրաքանչյուրը կամ մի աշխարհագրական անուն է (Նաիրի, Ուրարտու), իսկ այդ անունը կրող վայրում եղել են բազմաթիվ ցեղեր, և կամ մի ժողովրդի անուն (Խալդ, Արմեն), ժողովուրդ, որ բաղկացած է եղել բազմաթիվ ցեղերից: Քննելով նաև Հայերի պատմականորեն երևան գալը և հայկական ֆեոդալական պետականութեան կազմվելը, հեղինակը եզրակացնում է, թե պատմական Հայաստանում եղած այլ և այլ տոհմերի միացմամբ կազմավորվել է հայ ժողովուրդը, որ և ստեղծել է յուր պետականությունը: Հայ ժողովուրդը կազմող այդ բազմաթիվ տոհմերի հետ կապելով Հայաստանի աշխարհագրական և նախարարական տների անունները, նա գտնում է, որ դրանք նախապես եղել են զանազան տոհմանուններ, որոնք, այդ տոհմերի միացման ու հայ ժողովրդի գոյացման հետևանքով, մտել են հայերենի մեջ: Այդ անունների քննութեամբ նա եզրակացնում է նաև, որ հայ ժողովուրդը կազմող տոհմերի թիվը շուրջ երկու հարյուր պիտի լիներ. իբրև հայկական ֆեոդալական հասարակության կազմության արդյունք դրանց միացմամբ կազմվել է հայ ժողովուրդը. տոհմերի ղեկավարները դարձել են իշխաններ, հայ տոհմական նախարարներ, իսկ աշխատավոր ժողովուրդը՝ ճորտ գյուղացիություն. «Շատ և շատ տոհմեր, առնվազն երկու հարյուրի սահմաններում, միանալով՝ ֆեոդալական հասարակության կազմության և այդ պրոցեսի ավարտման հիման վրա՝ գոյացրել են հայկական էթնոսը: Այդ տոհմերի ղեկավար խմբերը դարձել են հայ էթնոսի ֆեոդալներ, տերեր, տանուտերեր (հայ տոհմական նախարարներ), իսկ ստորագաս՝ հողին կապած մասը դարձել է, լեզվաբանորեն ասած, բարբառախոս ժողովուրդ, որ դարձել է նորտ գյուղացի» (անդ, էջ 68—69): Վերջապես, անցնելով հայերենի գոյացման հարցին, հեղինակը քննութեան է առնում նրա բաղկացուցիչ տարրերը, դիտելով դրանք որպես այլ և այլ տոհմային ու ցեղային լեզուների խաշավորման արդյունք: Հետևելով Ն. Մառին, նա պնդում է, որ տարբեր լեզուների խաշավորմամբ ու ներթափանցմամբ հայ ժողովրդի կազմավորման հետ միասին գոյացել է նաև հայերեն լեզուն՝ իբրև մի ընդհանրություն այլ և այլ լեզվական տարրերի: «Հայերեն լեզուն գոյացավ, որպես արդյունք ցեղերի և տոհմերի խաշավորման (ինչպես անգլերեն լեզուն), գաճազան տոհմական լեզուների և նախաբարբառների կոնցենտրացիայից» (էջ 78):

Այսպես բացատրելով հայերենի գոյացումը, հեղինակն անցնում է գրաբարի և նրան գոյակից ժողովրդական բարբառների, կամ, ինչպես ինքն է ասում, նախաբարբառների քննութեանը: Այստեղ հեղինակը, որդեգրելով Մառի տեսակետը, պնդում է, թե իբր գրաբարը եղել է հայ ֆեոդալիզմի դասակարգային լեզուն, որին հակադրվել է հայ ժողովրդի նույնպես դասակարգային լեզուն, որ սակայն, Հայաստանի բոլոր գավառներում միևնույնը չի եղել. տարբեր գավառների գյուղացիությունն ունեցել է յուր տեղական լեզուն, որով խոսել են այդ տեղերի տոհմերը՝ հայ ժողովրդի կազմավորումից առաջ: Այնուամենայնիվ, այդ տեղական խոսվածքների միջև, մի կողմից, և դրանց ու գրաբարի միջև, մյուս կողմից, ստեղծվել են ընդհանրություններ և, այդպիսով, բաղադրվել է հայ էթնիկական լեզուն. «Գրաբարով խոսել է միմիայն հայ ֆեոդալականությունը, իսկ զանազան գավառների ճորտ հայ գյուղացիներն ունեցել են իրենց տեղական լեզուն, որ գրաբարին ավելի հեռավոր նմանություն է ունեցել, քան նախահեղափոխական շրջանի բարբառները՝ բուրժուական տեղական (?) լեզվին: Այդ տեղական լեզուների և գրաբարի միասնությունը մենք կոչում ենք հայ էթնիկական լեզու, որի բաղադրիչ մասերը (գրաբար և նախաբարբառներ) հանդիսանում են դասակարգային լեզուներ: Նախաբարբառները շարունակությունն են հանդիսացել այն լեզուների, որոնցով խոսել են հայ էթնոսի մեջ մտած զանազան տոհմեր» (անդ, էջ 85—86): Հեղինակի այս տեսակետի համաձայն, հայ ժողովրդի կազմավորման հետ ֆեոդալական հասարակության ստեղծումը մի կողմից՝ դասակարգայնորեն տրոհեց տոհմային լեզուները, մյուս կողմից՝ ընդհանրություններ առաջ բերեց տարբեր տոհմային լեզուների միջև: Հայ էթնոսը կազմող տոհմերի ղեկավարող խավի, հետագայում արդեն ֆեոդալների, լեզուն հակադրվեց նույն տոհմերի աշխատավոր խավի լեզվին. սակայն այդ զանազան տոհմերի գլխավորների, հետագայի ֆեոդալների, տարբեր լեզուների միջև ընդհանրություններ ստեղծվեցին այն բանի շնորհիվ, որ նրանք դասակարգայնորեն միացան, համախմբվեցին մի ֆեոդալական պետության շուրջը: Երկար դարերի ընթացքում կատարվող այդ ընդհանրացումը, հայ ֆեոդալիզմի լեզվի՝ գրաբարի կազմավորումը վերջնականապես ձևավորվեց առաջին դարում, հատկապես Տիգրան Մեծի օրոք. «Տիգրան Մեծի խմբի լեզուն կազմակերպող և ընդհանրությունը շատացնող դեր կատարեց, և ահա ստացված նոր լեզուն իր բազմաթիվ տարրերով՝ այն է, ընդհանուր բառապաշարով, ընդ-

հանուր լեզվաձևերով և այլն, ձևակերպվեց որպես իշխող դասակարգի լեզու, որ մենք անվանում ենք գրաբար, իսկ հին քերականները՝ Ոստանիկ լեզու» (անդ, էջ 87):

Խոսելով հայերենի մեջ եղած հնդերոպական տարրի մասին, հեղինակը գտնում է, որ այդ ոչ թե մի ընդհանուր նախալեզվից է գալիս, այլ պատմական որոշ շրջանում ցեղերի փոխադարձ շփման ու խաչավորման հետևանքով առաջացած ընդհանրությունների արտահայտությունն է: Հնչյունային լեզուն Եվրոպայում և Ասիայում գոյություն է ունեցել շատ վաղ ժամանակներից. այդ հնչյունային լեզվի «ստեղծագործությունը սոցիալ-տնտեսական և այլ հարաբերությունների հետևանքով տոտեմից տոտեմ (sic!), տոհմից տոհմ անցնելով, հեշտությամբ կարող էր ընդհանրանալ» (անդ, էջ 152), որի շնորհիվ էլ այլ և այլ տոհմերի լեզուների մեջ գոյություն կառնեին ընդհանուր բառեր ու լեզվաձևեր: Ինչ վերաբերում է առանձնապես հայերենի մեջ եղած հնդեվրոպական տարրին, ապա դրա գոյությունը բացատրվում է երկու հանգամանքով: Նախ՝ հայ ժողովրդի կազմավորումից առաջ էլ պատմական Հայաստանի վայրում՝ «նախահայաստանում» գտնված զանազան ցեղերի մեջ կարող էին արդեն իսկ գոյություն ունենալ ընդհանուր հնդեվրոպական բառեր. հատկապես հիթիթերեն լեզվի գոյությունը ցույց է տալիս, որ իրոք Փոքր Ասիայում եղել են ցեղեր, որոնց լեզուն որոշ ընդհանրություններ է ունեցել եվրոպական այլ և այլ ցեղային լեզուների հետ: Հիթիթերին հարևան են եղել Արմենները, որոնք բազմաթիվ արմատներ կարող էին ստացած լինել հիթիթներից: Եվ ահա, այն ժամանակ, երբ կազմավորվեց հայ ժողովուրդը և դրա հետ էլ՝ հայերեն էթնիկական լեզուն, այդ ընդհանրությունները բնականաբար մուտք գործեցին հայերենի մեջ՝ շնորհիվ այն ցեղերի, որոնք կազմավորվող հայ ժողովրդի մեջ մտան և որոնք նախքան այդ ունեին արդեն այդպիսի ընդհանրություններ: Այսպիսով, հեղինակի կարծիքով, հայերենի մեջ եղած հնդեվրոպական արմատների ու լեզվաձևերի մի մասը գալիս է հայ էթնոսի մեջ մտած ցեղերի լեզուներից, հատկապես արմենների լեզվից, արմենների, որոնք հիթիթերենից որպես փոխառություն հայերենի մեջ են մտցրել այդ տարրը. «Հայկական լեզվի հնդեվրոպական կոլոն արմատների մի մասը վերագրելի է հիթիթների արևելյան հարևան բնիկ արմեններին, որոնք փոխառության կարգով հիթիթերենից մտցրել են հայերենի մեջ, երբ իրենք մտել են կազմավորվող հայկական էթնոսի մեջ» (անդ, էջ 153): Հայերենի մեջ եղած հնդեվ-

րոպական տարրի գոյությունը բացատրող երկրորդ հանգամանքն այն է, որ հայ ժողովրդի մեջ կարող են մտած լինել Եվրոպայից եկած այլ և այլ տոհմեր: Նրանք Եվրոպայից «նախահայաստան» պետք է եկած լինեն նախքան հայ ժողովրդի կազմավորումը. և քանի որ նրանց ու եվրոպական զանազան տոհմերի լեզուների միջև ընդհանրություններ կարող էին գոյացած լինել դեռևս առն ժամանակ, երբ դեռ գտնվում էին Եվրոպայում, ուստի և հայ էթնոսի մեջ մտնելու պահին նրանք հայկական էթնիկական լեզվի մեջ մտցրին այդ ընդհանրությունները: Այսպիսով, հայերենի մեջ եղած հնդեվրոպական տարրը ոչ թե նախալեզվից է գալիս, այլ զանազան ցեղերի խաչավորումից ու ձուլումից: Նախալեզու գոյություն էլ չի ունեցել. հնդեվրոպական լեզուների միջև եղած նմանություններն արդյունք են պատմական որոշ ժամանակաշրջանում և զանազան հանգամանքների շնորհիվ տարբեր ցեղային ու տոհմային լեզուների մեջ՝ համակեցություն, խաչավորման, փոխադարձ ազդեցությունների հետևանքով ստեղծված ընդհանրությունների. «Այդ ընդհանրությունները, ինչպես և ողջ հնդեվրոպական լեզվախմբի նմանությունները, առաջ էին եկել ցեղերի և տոհմերի փոխադարձ ներթափանցմամբ, երկարատև համակեցությամբ, բախման ու հակադրման շնորհիվ: Նշանակում է հնդեվրոպական լեզվախումբը ոչ թե ծնունդի հետևանք է, այլ պատմության» (անդ, էջ 154): Անցնելով այնուհետև գրաբարի քերականության ուսումնասիրությանը, հեղինակը հանգամանորեն քննության է առնում հոլովումը (գոյականների, դերանունների և այլն) ու խոնարհումը և դրանց հիման վրա հանգում այն եզրակացության, թե գրաբարը յուր քերականական կազմությամբ ցույց է տալիս, որ գոյացել է բազմաթիվ լեզուների խաչավորմամբ: Հատկապես հոգնակերտ մասնիկների բազմազանությունն, ըստ Ա. Ղարիբջանի, ապացույց է այն բանի, որ հայ էթնոսի մեջ մտած զանազան ցեղերը հայերենի մեջ են մտցրել իրենց հոգնակիի մասնիկները, որոնց մի մասը հետագայում շատ գործածություն է ստացել և ընդհանրացել, իսկ մյուս մասը սահմանափակ բառերի մեջ է մնացել միայն: Սրանով էլ հենց նա հակադրվում է հնդեվրոպաբանության այն սկզբունքին, թե հայերեն բոլոր հոգնակերտ մասնիկները հնդեվրոպական են (տե՛ս հատկապես Պեդերսըն) և կապ չունեն կովկասյան լեզուների հետ. «Հոգնակիների այս առատությունը հայերենում ապացույց է, որ էթնիկական հայերենը կազմվել է բազմաթիվ լեզուներից, այդ լեզուներով խոսող «ժողովուրդների խաչավորման և խառնվելու շնորհիվ»

(Մարքոս): Հայ էթնիկական լեզվի գոյացման պրոցեսում զանազան լեզուների հոգնակիները մերվել են նրա մեջ որպես լեզվական այս կամ այն երևույթ, որ մերթ նույնն են մնացել, ինչ որ էին նախորդ լեզվի մեջ, մերթ էլ փոխել իրենց որակը, վերածվելով ածանցի կամ թեքական մասնիկի» (անդ, էջ 104): Քննություն առնելով գրաբարի, ժողովրդական բարբառների և աշխարհաբարի քերականական-ձևաբանական կառուցվածքը Մառի տեսության համաձայն, նա գտնում է, որ հայերենը յուր ստադիալ վիճակով ներկայացնում է հաբեթական ստադիայից պրոմեթեիդական («հնդեվրոպական») ստադիային անցման վիճակը, ըստ որում գրաբարը յուր քերականական-ձևաբանական սիստեմով գլխավորապես թեքական տիպին է պատկանում, իսկ ժողովրդական բարբառներն ու աշխարհաբարը՝ կցականին: Ժողովրդական բարբառներն էլ, սակայն, ձևաբանական զարգացման միևնույն աստիճանի վրա չեն գտնվում, թեև նրանց մեծագույն մասը ներկայացնում է կցական տիպը, բայց կան նաև բարբառներ, որոնք կցականից թեքականին են անցնում. «Հայերենը իր ստադիալ վիճակով ապրում է հաբեթականից դեպի պրոմեթեիդական սիստեմն անցնելու շրջանը, ըստ որում գրաբարը գերազանցապես թեքական տիպի է, իսկ ժողովրդական լեզուները՝ կցական տիպի, որտեղ նկատվում են կցականից թեքականին անցնելու երեվույթներ» (անդ, էջ 104—105): Երկարատև համակեցության ընթացքում գրաբարն ու ժողովրդական բարբառները բնականաբար փոխազդել են միմյանց վրա. շատ լեզվական երևույթներ մեկից մյուսին են անցել, բայց և այնպես այդ ներթափանցումները չեն հասել այնպիսի չափի կամ այնպիսի որակ չեն կազմել, որ տիպականորեն փոխեն գրաբարը կամ բարբառները: Այդ ներթափանցումներով ու փոխազդեցություններով հանդերձ գրաբարը մնացել է որպես թեքական լեզու, իսկ ժողովրդականը՝ կցական. «Գրաբարն ու աշխարհաբարը (ժողովրդական լեզուները՝ բարբառները) փոխադարձաբար ներթափանցվել են ու խաչավորվել, բայց յուրաքանչյուրը հանդիսացել է կազմակերպված լեզվական առանձին տիպ» (անդ, էջ 105): Բարբառների ծագման հարցում Ա. Ղարիբյանը վիճում է հետևում է Մառին և ուղղակի կերպով հակադրվում պատմական լեզվաբանությանը. ինչպես գիտենք, պատմական լեզվաբանությունը գտնում է, որ բարբառները սվյալ լեզվի ճյուղավորումներն են. դրան հակառակ, Ղարիբյանը, Մառի նման, գտնում է, որ ոչ թե մի լեզվից ստացվում են զանազան «բույր լեզուներ» ու բարբառներ, այլ բազմաթիվ տոհմային լեզուների խաչավոր-

մամբ կազմվում է մի լեզու, իսկ այդ տոհմային լեզուները, եթե շարունակում են գոյություն ունենալ, դառնում են այդ կազմավորված լեզվի բարբառները: Այդպես էլ ստացվել են հայերեն բարբառները. բազմաթիվ տոհմային ու ցեղային լեզուների խաչավորմամբ կազմավորվել է հայերեն էթնիկական լեզուն, իսկ այդ տոհմային լեզուները շարունակել են իրենց գոյությունը որպես այդ էթնիկական հայոց լեզվի բարբառներ: Այստեղից էլ հետևում է, որ հակառակ բոլոր հնդեվրոպաբանների կնդումներին, V դարում, ըստ Ղարիբյանի, գոյություն են ունեցել իրարից շատ ավելի տարբեր և ավելի մեծ քանակությամբ բարբառներ: Չայաստանում ֆեոդալական հասարակության կազմավորման հետ միասին գոյացավ նաև հայ ֆեոդալիզմի դասակարգային լեզուն, իսկ աշխատավոր խավերի տոհմային լեզուները խաչավորվելով և որոշ ընդհանրություններ ստեղծելով միմյանց միջև՝ մնացին իբրև ժողովրդի տեղային լեզուներ, որոնցից էլ առաջացան բարբառները. «Տոհմական այն լեզուները, որոնք մնացին նախկին տոհմի իշխվող և հետո ճորտ գյուղացի դարձած խավի հաղորդակցության միջոց, էթնիկական լեզվի մեջ ստացան բարբառային երանգ, ավելի ճիշտ նախաբարբառային երանգ: Նախաբարբառ ասում ենք, որովհետև այսօրվա «բարբառ» գաղափարը չի արտահայտում գյուղացիական լեզուների այն տարբերությունը, որ կար նրանց մեջ ֆեոդալիզմի շրջանում (անդ, էջ 188): ...Մեր յուրաքանչյուր բարբառ հանդիսանում է երբեմնի անկախ տոհմական լեզվի նորորակ շարունակությունը իր նոր որակի, հայերեն լեզվի գերազանց ընդհանրության կողքին պահպանելով իր երբեմնի ինքնուրույն եղած լինելու հատկանիշների մնացորդները» (անդ, էջ 105): Վերջապես, հակադրվելով հայերենի պատմությունը երեք շրջանների բաժանելու վաղուց ի վեր ընդունված տեսությանը, Ա. Ղարիբյանը հայերենը բաժանում է չորս շրջանի. առաջին շրջանի լեզուն է գրաբարը, որպես հայկական ֆեոդալիզմի դասակարգային լեզու: Երկրորդ շրջանի լեզուն է միջին հայերենը, որ հանդիսանում է միջնադարյան, «Միջին շրջանի ֆեոդալական հասարակության գրական լեզուն»: Երրորդ շրջանի լեզուն է աշխարհաբարը՝ յուր երկու գրական բարբառներով (արևմտյան և արևելյան)՝ որպես «հայ բուրժուական հասարակության գրական լեզու»: Վերջապես, չորրորդ շրջանի հայերենն է «Սոցիալիզմի դարաշրջանի գրական հայերենը», հայ գրական լեզվի զարգացման նոր էտապը, մեր օրերի հայերեն լեզուն: Այս հիմնական, տեսական սկզբունքներից ելնելով էլ, ահա,

նա անցնում է լեզվական նյութի վերլուծությանը և, բնականաբար, այդ վերլուծությունը ոչ թե լեզվական երևույթների իրական պատմության վրա է հիմնում, այլ, ընդհակառակն, լեզվական նյութը, ոչ գիտական ու ոչ պատմական մեկնաբանություններով, ճգնում է հարմարեցնել իր տեսական դրույթներին: Շատ փաստերից, իբրև օրինակ, հիշենք միայն մեկը: «Հայոց լեզվի պատմության...» մեջ (էջ 129—148), նկարագրելով գրաբարի խոնարհման համակարգը, միաժամանակ փորձում է պարզել այդ համակարգի առաջացումը և գալիս է այն եզրակացության, որ «...հայերենի խոնարհումը կազմվել է բայահիմքի, էական բայի և «ես» ու «ինքն» անձնական դերանունների սեռական հոլովածների գումարով, այսինքն՝ դերանունների կցումով (դերանվանական խոնարհում): Եվ քանի որ վերջավորությունների լրիվ ձևերը պահվել են կրավորական խոնարհման մեջ, ուստի իրավունք ունենք ենթադրելու, որ նախահայերեն լեզուների մեջ խոնարհումը գիտակցվել է կրավորական կառուցվածքով» (էջ 147): Ինչպես տեսնում ենք, անտես առնելով հայերենի խոնարհման համակարգի առաջացման իրական պատմությունը, Ա. Ղարիբջանը, պատահական նմանություններից ելնելով, միանգամայն սխալ վերլուծություններ է կատարում և հակապատմական եզրակացության հանգում: Հայերենի խոնարհման վերջավորությունները ո՛չ մի կապ չունեն ես և ինքն դերանունների սեռական հոլովի հետ, հայերենի խոնարհման համակարգը կրավորական խոնարհումից չի՝ առաջացել, հայերենի խոնարհման համակարգը գործ չունի՝ դերանվանական խոնարհման հետ: Վերը մենք տեսանք, որ հոգնակերտ մասնիկների, իսկ ավելի ճիշտ՝ հավաքական կազմող մասնիկների բազմազանությունը կապում է նախահայերեն ցեղային լեզուների հետ և այդ մասնիկների վրա հենվելով, գտնում, որ հայերենը բաղադրվել է շուրջ երկու հարյուր լեզուներից: Այստեղ էլ, իհարկե, լեզվական փաստերը բռնազրոսիկ կերպով ենթարկվում, հարմարեցվում են «նոր ուսմունքի» դրույթներին:

Մենք ավելորդ ենք համարում ավելի մանրամասնորեն կանգ առնել Ա. Ղարիբջանի այս շրջանի աշխատությունների վրա, նախ՝ այն պատճառով, որ դրանց մեջ արտահայտած բոլոր դրույթներից նա հրապարակորեն հրաժարվել է, հայտարարելով դրանք հակագիտական, ապա՝ այն պատճառով, որ այդ դրույթների մասին հանգամանորեն խոսել ենք Ն. Յա. Մառին նվիրված հատվածում, և անհրաժեշտ չենք համարում դրանց կրկնությունը: Ինչ վերաբերում է Ա. Ղարիբջանի այդ շրջանի ուսումնասիրությունների ընդհանուր

գնահատականին, ապա ավելի նպատակահարմար ենք գտնում բերել իր իսկ գնահատումները: 1952 թ. «Սովետական Հայաստան» թերթում (5/VI, № 132) տպագրված հոդվածում Ա. Ղարիբջանը գրում է. «Իմ որդեգրած կոնցեպցիան հայերենի առաջացման մասին արմատապես սխալ է և ոչ մարքսիստական: ...Իմ զարգացրած տեսությունը գրաբարի և բարբառների դասակարգային լեզուներ լինելու մասին՝ արմատապես սխալ է և ոչ մարքսիստական: ...Իմ զարգացրած տեսակետը՝ բարբառների մասին արմատապես սխալ է և ոչ մարքսիստական: ...Իմ աշխատությունների տեսական բոլոր դրույթները ոչ մարքսիստական դրույթներ են»: Այնուհետև, 1953 թ. հրատարակած «Հայ բարբառագիտություն» աշխատության մեջ Ա. Ղարիբջանը գնահատում է իր այդ շրջանի գիտական գործունեությունն այսպես. «Ընդունելով Ն. Մառի ուսմունքն իբրև մարքսիստական, ես նրա հետևորդը դարձա 1931 թվին: Այդ ժամանակվանից փորձեցի անքննադատաբար կիրառել Ն. Մառի «տեսակետները» լեզվաբանության և բարբառագիտության տեսության բնագավառում: Ելնելով լեզվի «դասակարգայնության» մատչյան սխալ ֆորմուլայից և ընդունելով Ն. Մառի այն կարծիքը, թե գրաբարը ազնրվական դասակարգի լեզուն էր, իսկ բարբառները գյուղացիական դասակարգի լեզուները, ես փորձում էի շարադրել հայոց լեզվի պատմությունը որպես դասակարգային լեզուների պայքարի պատմություն: Հայերեն լեզվի տարբեր ժամանակների որակական փոփոխությունները բացատրում էի որպես դասակարգային պայքարի արդյունք: ...Լեզվի պատմության այս ձևի մեխանիստական պատկերացումը մարքսիզմը չհասկանալու արդյունք էր: ...Ելնելով մառյան ստադիալականության սկզբունքից և լեզուների խաչավորման տեսությունից, ես արժարժում էի այն միտքը, թե հայերենն առաջացել է Հայաստանի բնիկների բազմաթիվ լեզուների համադրական խաչավորման հետևանքով, որը տվել է հաբեթականից դեպի հընդեվրոպականն անցնող մեկ հայերեն լեզու իր բոլոր բարբառներով: ...Առաջնորդվելով Ն. Մառի լեզվական խաչավորումների տեսությունով՝ մեր բարբառների առաջացումը ես բացատրում էի իբրև Հայաստանի բնիկների լեզուների ստադիալ փոփոխության արդյունք, պնդելով, որ այդ լեզուների խաչավորման պրոցեսում նրանց բնականություններն ու բառապաշարը փոխադարձաբար ներթափանցվում էին և աստիճանաբար նմանվում միմյանց՝ վերածվելով մի լեզվի բարբառների: Դիֆերենցման պրոցես բոլորովին չէի ընդունում: Բայց երբ ուսումնասիրում էի բարբառների փաստական մա-

տերիալը, պարզվում էր, որ դրանք հայերեն լեզվի այլափոխութիւններն են, և չկան բարբառների մեջ հատկապես քերականական այնպիսի ձևեր, որոնք հաստատեին բարբառների՝ առաջներում ինքնուրույն լեզու լինելու հանգամանքը: ...Տեսական սկզբունքի և նյութի այդ կտրվածությունը առաջանում էր մարքսիզմի սկզբունքները չըմբռնելուց և Ն. Մառի աղավաղված «գրույթները» ճշմարտութեան տեղ ընդունելուց: ...Տեսականում ընդունելով Ն. Մառի վուլգարիզատորական «գրույթները», գործնականում ուսումնասիրում էի բարբառների փաստական նյութը և հայտնաբերում բարբառների նոր ճյուղավորումներ: Երբ քառասնական թվականներին լեզվաբանական նոր անած կադրերը նկատեցին այդ խզումը իմ աշխատանքների մեջ, իրավացիորեն բացահայտեցին և քննադատության ենթարկեցին (ընդգծումը մերն է—է. Ա.): Դա ինձ ստիպեց դադարեցնել հայերեն լեզվի փաստերի ուսումնասիրությունը և զբաղվել միայն Ն. Մառի «տեսությունների» պրոպագանդայով, ցուցադրելով դրանք որպես մարքսիզմի նվաճումներ: Իմ հետազոտական աշխատանքների փակուղին էր դա, որ հանգեցրեց իմ հետազոտական աշխատանքների ամուլթյան: Ավելին՝ իբրև Հայկ. ՍՍԻ ԳԱ Ն. Մառի անվան լեզվի ինստիտուտի դիրեկտոր, ես ուղղություն էի տալիս նաև երիտասարդ կադրերի գիտա-հետազոտական աշխատանքներին, վարելով նրանց դեպի այն փակուղին, որի մեջ էի ես ինքս: Մառականությունը Հայաստանում, շտալով որևէ արդյունք, խանգարում էր նաև այնպիսի արդյունավետ և մեծ հեղինակի աշխատանքներին, ինչպիսին Հ. Աճառյանն էր» (էջ 33—35): Այս գնահատումներն, ընդհանուր առմամբ, ճիշտ են և ցույց են տալիս, որ Ա. Ղարիբյանը լիովին գիտակցել է ողջ սնանկութիւնը այն բոլոր տեսական լեզվաբանական գրույթների, որոնց ջատագովում ու պրոպագանդիստն է եղել ինքը շուրջ քսան տարվա ընթացքում: Մեզ մնում է կանգ առնել միայն երկու խնդրի վրա: Խոսելով իր ուսումնասիրությունների տեսական ու գործնական (փաստական) կողմերի մասին, Ա. Ղարիբյանը գրում է. «Սակայն ուսումնասիրելով հայերեն լեզվի փաստական նյութը, երևում էր նրա որոշակի հնդեվրոպական լեզվախմբին պատկանելու հանգամանքը, ուստի իմ կարծիքը հայերենի առաջացման մասին նույնպես մնում էր փաստերով չհիմնավորված և այնպիսի անհիմն հայտարարություն, ինչպես Ն. Մառի լեզվաբանական տեսական բազմաթիվ «գրույթները»: ...Երբ ուսումնասիրում էի բարբառների փաստական մատերիալը, պարզվում էր, որ դրանք հայերեն լեզվի

այլափոխություններն են, և չկան բարբառների մեջ հատկապես քերականական այնպիսի ձևեր, որոնք հաստատեին բարբառների՝ առաջներում ինքնուրույն լեզու լինելու հանգամանքը» (անդ, էջ 34): Սակայն այդպիսի խզում չի եղել: Մենք արդեն ասացինք, թե ինչպես է նա վերլուծում ու մեկնաբանում լեզվական փաստերը, որպես օրինակ բերելով միայն խոնարհման համակարգի վերլուծությունը. նույն օրինակն էլ կօգտագործենք այստեղ՝ մեր ասածը հիմնավորելու և բացատրելու համար: Գրաբարում բայի սահմանական եղանակի առաջին դեմքի վերջավորությունն է -մ (աղա-մ, գրե-մ և այլն). այս ընդունում էին և՛ Ն. Մառի ուսմունքի հակառակորդները (օր. Մ. Աբեղյան, Հ. Աճառյան և այլք) և՛ Ն. Մառն ու ինքը՝ Ա. Ղարիբյանը: Առաջիններն այդ վերջավորությունը ճիշտ կերպով կապում էին հնդեվրոպական — Mi նախածեի հետ և դրանով իսկ երևան հանում հայերենի և հնդեվրոպական լեզուների ցեղակցությունը հաստատող մի կարևոր տվյալ: Մինչդեռ Ա. Ղարիբյանը ժխտում էր այդ վերջավորության կապը ցեղակից լեզուների նույն վերջավորության հետ: Այստեղ փաստական նյութը ո՛չ հակադրված է տեսությանը, ո՛չ էլ խզված նրանից, այլ՝ պարզապես սխալ մեկնաբանված՝ հենց տեսությանը հարմարեցնելու և այն հիմնավորելու համար: Այդպես էլ, երբ վերցնելով գրաբարյան բերելի և մի քանի բարբառների բերելիմ ձևերը, երկրորդը նախնական էր համարում և բացատրում բեր-ե-իմ (բայարմատ կամ բայահիմք + օժանդակ բայ + իմ ստացական դերանուն), ապա այստեղ ո՛չ թե տեսականի ու գործնականի խզում կար, այլ փաստերի աղավաղում (բերելիմ ձևը որպես նախնական ներկայացնելը) և դրանց ոչ գիտական վերլուծություն ու մեկնաբանություն: Եվ եթե «քառասնական թվականներին լեզվաբանական նոր անած կադրերը» քննադատել են, ապա քննադատել են ոչ թե տեսականի ու գործնականի խզումն ընդհանրապես, այլ լեզվական փաստերի աղավաղումն ու սխալ մեկնաբանությունները:

Երկրորդ հարցը, որին անհրաժեշտ ենք համարում անդրադառնալ, պատմա-համեմատական լեզվաբանության և առհասարակ անցյալի գիտական ժառանգության գնահատման խնդիրն է: Իր առաջին երկու տասնամյակների թե՛ մենագրական ուսումնասիրությունների և թե՛ մանավանդ, հոդվածների մեջ Ա. Ղարիբյանը շատ է անդրադարձել այդ հարցին և պատմա-համեմատական լեզվաբանությունը հայտարարել բուրժուական ռեակցիոն գիտություն, որ մեր ժամանակում անմիջականորեն ծառայում է ֆաշիզմին՝ ռասա-

յական տեսությունը հիմնավորելու համար: Ահա թե ինչպես է գնահատում պատմա-համեմատական լեզվաբանությունը և դրա ներկայացուցիչներին, օրինակ, իր «Հայոց լեզվի պատմության ուսումնասիրության ներածություն» գրքում. «Վերջապես հայերի ծագման մասին խոսել են պատմա-համեմատական լեզվաբանության բոլոր ներկայացուցիչները, հիմնադիրներից սկսած մինչև մեր օրերի հնդեվրոպաբանները» (էջ 9): Ծարագրելով այնուհետև հայերի կազմավորման և, առհասարակ «հնդեվրոպացիների» գաղթների մասին եղած կարծիքները՝ 10—14-րդ էջերում, նա հասնում է այնտեղ, որ գրում է. «Որքան հակադիտական է այդ տեսությունը և փաստերից զուրկ, այնքան էլ դասակարգային, բուրժուական և այժմ արդեն ֆաշիստական» (էջ 14): Այսպիսի որակումները, որ շատ կան նրա թե՛ մենագրությունների և թե՛ հոդվածների մեջ, անցյալի ժառանգություն, պատմա-համեմատական ուսումնասիրությունների սովորական ժխտում չեն, այլ բացահայտ քաղաքական մեղադրանք: Սա պարզապես նշանակում էր, թե ով որ պատմա-համեմատական լեզվաբանությունն է հետևում, ռասայական տեսություն է քարոզում ու կանգնում է ֆաշիզմի դիրքերում: Որ ն. Մառի ուսմունքի դրույթները կրկնելով, իր աշխատությունների մեջ սխալ տեսակետներ է պաշտպանել և դա վնասակար է եղել գիտության համար, կասկածից վեր է, և ինքն էլ ճիշտ կերպով գնահատել է: Բայց որ այսպիսի մի հայտարարությունը կարող էր աղետավոր հետևանքներ ունենալ և ունեցել է, այս էլ հայտնի բան է: Նույն գրքում հեղինակը գրում է. «Հին հայագիտությունը խոշոր աշխատանք է կատարել հայերենի ուսումնասիրության գործում: Լեզվաբանության այնպիսի հեղինակներ, ինչպիսիք են Լագարդ, Հյուբշման, Մեյե, խոշոր ջանքեր թափեցին հայերենի մշակման գործում, և այդ բոլոր աշխատանքները պսակվեցին այնպիսի գործով, գիտության վաստակի ժրջան ու անձնվեր աշխատանքի այնպիսի կոթողով, ինչպիսին Պրոֆ. Հր. Աճառյանի «Արմատական բառարանն» է: Բայց հին հայագիտությունը զարգանում է մի կողմով, առաջնորդվում է բուրժուական գիտության գծած արահետով, որը տանում է դեպի փակուղի» (էջ 81): Ինչպես տեսնում ենք, կարծես թե զովասանական խոսքեր էլ են ասված «հին հայագիտության» և Հր. Աճառյանի հասցեին, բայց՝ այդ հայագիտությունը ռասայական ու ֆաշիստական հայտարարելուց հետո: Ա. Ղարիբյանը, իր գործունեությունը բնութագրելով, չի խոսում այդ մասին, չի ասում, թե ինչպես է գնահատել անցյալի ժառանգությունը և իր ժամանակի այն լեզվաբանների գործերը,

որոնք չէին ընդունում ն. Մառի ուսմունքը: Իսկ դա անհրաժեշտ էր:

Վերջապես, Ա. Ղարիբյանի այդ շրջանի գիտական գործունեության մեջ արդյոք ոչ մի դրական բան չի՞ կարելի գտնել: Մեր կարծիքով՝ կարելի է, և պետք է նշել այդ դրականը: Ամենից առաջ դրականորեն պետք է գնահատել նրա աշխատանքը մայրենի լեզվի դպրոցական դասագրքերի ստեղծման գործում: Նա հեղինակը կամ հեղինակակիցն է դպրոցական ութ դասագրքերի, որոնցից կարևորագույնն է «Հայոց լեզվի քերականությունը» (Երևան, 1934 և հետագա հրատարակություններ): Ինչպես «ներածության» մեջ ասել ենք, սովետական լեզվաբանության պատմության առաջին շրջանի վերջին տարիների կարևոր նվաճումներից մեկն այն էր, որ հիմնականում ավարտվեց մայրենի լեզվի դասագրքերի ստեղծման գործը: Ա. Ղարիբյանի հիշյալ դասագիրքն առաջին նոր տիպի դասագիրքն էր, որ իր սկզբունքներով հակադրվում էր մինչև այդ դրություններում օգտագործվող քերականական ձեռնարկներին: Առաջին հրատարակությունը, բնականաբար, դեռևս շատ անկատար էր, մակերեսային, շատ ու շատ սահմանումներ անճիշտ էին ու տարտամ, բայց հետագայում, պարբերական վերահրատարակությունների ժամանակ վերամշակվելով, դասագիրքը բարելավվեց: Ավելի քան քսանհինգ տարի է, որ այդ դասագիրքն օգտագործվում է մեր միջնակարգ դպրոցներում, իսկ դա գովելի վաստակ է:

Երկրորդ՝ դրական է բարբառագիտական այն եռանդուն գործունեությունը, որ նա ծավալել է երեսունական թվականներից սկսած: Թեև, ինչպես տեսանք, նրա բոլոր ուսումնասիրությունները, այդ թվում և բարբառագիտական աշխատությունները, բնորոշվում են լեզվական նյութի բնագրոսիկ, ոչ գիտական վերլուծություններով, իսկ հաճախ էլ՝ լեզվական տվյալների աղավաղումով՝ «նոր ուսմունքի» դրույթներին հարմարեցնելու և դրանք փաստական նյութով «հիմնավորելու» համար, այնուամենայնիվ, հենց այն, որ նա այս կամ այն չափով նկարագրել է հայերենի շատ քիչ հայտնի կամ բոլորովին անծանոթ բարբառներ, արդեն գովելի գործ է:

Վերջապես, հայ բարբառագիտության բնագավառում Ա. Ղարիբյանի բերած նորությունն է բարբառների դասակարգումն ըստ բաղաձայնական սխտեմի, որի մասին, սակայն, ավելի հանգամանորեն կխոսենք ստորև:

Հրաժարվելով «նոր ուսմունքի» դրույթներից, 1950 թվականից հետո պրոֆ. Ա. Ղարիբյանն սկսեց նոր սկզբունքների համաձայն վերանայել իր գիտական աշխատանքները և աշխատեց պատմա-

համեմատական մեթոդը կիրառել իր հետազոտությունների մեջ: ԾՔԵ մինչև 1950 թվականը նա հայերենը համարում էր բազմաթիվ լեզուներից ու բարբառներից գոյացած «մի մոզահիկա», ապա 1950 թվականից նրա բոլոր ուսումնասիրությունների հիմքում դրված է այն ելակետային դրույթը, որի համաձայն հայերենը հնդեվրոպական ընտանիքի լեզու է: Այս երկրորդ շրջանում նրա հրատարակած մենագրություններից ու հոդվածներից գլխավորներն են.

1. Հայ բարբառագիտություն (Երևան, 1953): Վերամշակված և խիստ ընդարձակված վերահրատարակությունն է «Համառոտություն հայ բարբառագիտության» աշխատության: Գիրքը բաղկացած է չորս գլխից: Առաջին գլխում, որ վերնագրված է «Ընդհանուր ներածություն» (էջ 5—40) հեղինակը բնութագրում է «մեծ բեկումը լեզվաբանության մեջ» և գնահատելով նախորդ քսան տարիների իր գիտական գործունեությունը, խոսում հայագիտության մեջ կատարված շրջադարձի մասին և, վերջապես, առանձին հատվածում շարադրում ընդհանուր լեզվի ու բարբառների համառոտ տեսությունը: Երկրորդ գլխում, որ կրում է «Ներածություն հայ բարբառագիտության» (էջ 41—106), հեղինակը համառոտակի շարադրում է հայ բարբառագիտության պատմությունը, տալիս մի քանի կանոններ հայ բարբառագրական աշխատանքների համար, հանգամանորեն շարադրում հայերեն բարբառների ձևաբանական ու հնչյունաբանական դասակարգման սկզբունքները, ապա՝ կանգ առնում հայ բարբառների պատմության մի քանի հարցերի վրա (հայերեն բարբառների ծագումը, զանազան բարբառների առաջացման մոտավոր ժամանակագրությունը և այլն) և, վերջապես, խոսում հայերեն բարբառների քանակի մասին, այստեղ էլ թվելով այն հիմնական հատկանիշները, որոնց վրա հենվելով պետք է որոշել, թե տվյալ խոսվածքը ենթաբարբառ է, թե՞՝ ինքնուրույն բարբառ: Երրորդ գլուխը վերնագրված է «Հայերենի համեմատական բարբառագիտություն» (էջ 107—136) և ընդգրկում է երկու բաժին՝ «Հայ բարբառների համեմատական հնչյունաբանություն» և «Հայ բարբառների համեմատական ձևաբանություն». հակառակ վերնագրին, այս ամբողջ գլուխն ըստ էության հայերեն բարբառների համադրական կամ նկարագրական հնչյունաբանությունն ու ձևաբանությունն է միայն: Չորրորդ գլուխը, որ «Հայ բարբառագիտություն» խորագիրն է կրում (էջ 215—457), աշխատության հիմնական մասն է. այստեղ նկարագրված են 21 հայերեն բարբառներ, որոնք բաժանված են վեց ճյուղի: Աշխատությունը, շնայած լուրջ

թերություններին ու սխալներին, որոշակի արժեք է ներկայացնում իր ընդգրկած փաստական նյութով: Գրքին կցված է, որպես հավելված, հայ բարբառների դասավորության սխեման:

2. Հայոց լեզվի դասավանդման մեթոդիկա (Երևան, 1952): Նույն վերնագիրը կրող աշխատության վերամշակումն ու վերահրատարակությունն է:

3. Հայերենի նորահայտ բարբառների մեկուսումը (Երևան, 1958): Արամյոյի, Քաբուսիեի և Եղեպի խոսվածքների ուսումնասիրությունն է: Հեղինակը դրանք առանձին բարբառներ է համարում, հատկացնելով առաջինն ու երրորդը՝ կարծեցյալ «հա» ճյուղին, իսկ երկրորդը՝ «կա» ճյուղին: Հեղինակն այդ երեք բարբառներն էլ համարում է նորահայտ և կարծում է, թե առաջին անգամ ինքն է նկարագրում: Մինչդեռ 1952—1953 թվականներին, «էջմիածին» ամսագրում հզանտիոս սարկավազ Մարտիրյանն ընդարձակորեն նկարագրել է Ջեբել-Մուսայի բարբառը¹, որի «ճյուղերն են», ըստ Մարտիրյանի, Քաբուսիեի և Քեսաբի խոսվածքները: Ա. Ղարիբյանը ոչ մի տեղ չի հիշում այդ ուսումնասիրության մասին և չի փորձում հերքել Մարտիրյանի այն կարծիքը, թե դրանք մեկ բարբառի ենթաբարբառներն են:

Բացի այս աշխատություններից, պրոֆ. Ա. Ղարիբյանը վերջին տասնամյակում հրատարակել է նաև շատ հոդվածներ, որոնցից մի երկուսին կանդիդատանք ստորև:

Ինչպես արդեն վերը ասել ենք, 1950 թ. դիսկուսիայից հետո պրոֆ. Ա. Ղարիբյանը հրաժարվեց իր նախկին սկզբունքներից և աշխատեց իր ուսումնասիրությունները կատարել պատմա-համեմատական մեթոդով՝ հիմնվելով սովետական լեզվաբանության մեջ ընդունված տեսական դրույթների վրա: Հայերենի պատմության ու տեսության բնագավառում դա նշանակում էր ընդունել, որ՝

ա) հայերենը խառնածին, «մոզահիկ» լեզու չէ, այլ հնդեվրոպական նախալեզվի հիմքի վրա ստաշացած ցեղակից լեզուներից մեկն է.

բ) հայերեն բարբառները նախահայկական ցեղային լեզուները չեն, ոչ էլ նրանց մնացորդները, այլ ընդհանուր հայերենի ճյուղավորումները,

¹ Իզնատիոս սարկավազ Մարտիրյան, Ջեբել Մուսայի բարբառը, «էջմիածին», 1952, № 3, էջ 33 և շար., 1953, № 2, էջ 33 և շար., № 6, էջ 27 և շար., № 7—8, էջ 33 և շար.:

գ) հայոց գրական լեզուները (գրաբար, միջին հայերեն, աշխարհաբար) ինչ-որ դասակարգերի լեզուներ չեն, այլ հայերենի պատմական զարգացման տարբեր փուլերի գրական աստիճանին բարձրացած վիճակները,

դ) ո՛չ հին հայերենը, ո՛չ բարբառները, ո՛չ էլ աշխարհաբարը ինչ-որ յուրահատուկ լեզվական ստադիա չեն ներկայացնում, ըստ որում, այդպիսի յուրահատուկ ստադիաներ գոյություն էլ չունեն,

ե) մարքսիստական լեզվաբանության դրույթներից ելնելով, հայերենի քերականական կառուցվածքի, բառապաշարի, հնչյունական համակարգի, ինչպես և հայ բարբառագիտության թե՛ ընդհանուր և թե՛ մասնավոր բնույթի հարցերը պետք է քննել ու լուսաբանել այդ սկզբունքների և պատմա-համեմատական լեզվաբանության դրույթների համապատասխան:

Տեսնենք, ուրեմն, թե ինչպես է լուծում այդ հարցերը վերջին տասնամյակում հրատարակած իր աշխատությունների մեջ պրոֆ. Ա. Ղարիբջանը: Այդ հարցերից շատերին նա անդրադարձել է իր «Հայ բարբառագիտություն» աշխատության մեջ, ուստի և մենք էլ առաջին հերթին կանդրադառնանք դրան:

Խոսելով հայերեն բարբառների պատմության հարցերի մասին, պրոֆ. Ա. Ղարիբջանը, որպես ելակետ, ընդունում է, որ հայերենը հնդեվրոպական լեզու է. բառակազմի հնագույն մասով ու քերականական կառուցվածքի տվյալներով այդ բանը հաստատվում է անվերապահորեն. «Զի կարելի չընդունել, որ իր պատմության հազարամյակների ընթացքում հայ տոհմը, ապա ցեղը և հետագայում՝ ժողովուրդը իր լեզվի նախնական բառային հիմնական ֆոնդից մի մասը կորցրած կլիներ: Հայերեն լեզվի հիմնական բառային ֆոնդը հետագայում համալրվել է նոր բառերով, կամ իր սեփական կազմով ստացված բառերով, կամ փոխառություններով: Բայց այդ ֆոնդի միջուկը, երևում է, որ հնդեվրոպական է: Կասկած չկա նաև այն մասին, որ հայերեն լեզվի քերականական կառուցվածքի հիմքերը նույնպես հնդեվրոպական են, բայց այնքան փոփոխված, որ բավական դժվար է լինում ճանաչել» («Հայ բարբառագիտություն, էջ 64): Այստեղից ելնելով էլ, ահա, նա փորձում է լուսաբանել հայերեն բարբառների առաջացման պատմական պրոցեսը: Խոսելով ընդհանրապես բարբառների առաջացման մասին, Ա. Ղարիբջանը այն դրույթն է առաջ քաշում, թե «բարբառներն ու ընդհանուր լեզուն միասին առաջացած, միմյանց ժամանակակից և միմյանցով պայմանավորված երևույթներ են» (անդ, էջ 38): Սա, իհարկե,

խիստ պարզունակ և սահմանափակ պատկերացում է բարբառների ու համաժողովրդական լեզվի փոխհարաբերությունների մասին: Կան դեպքեր, որ տվյալ ընդհանուր լեզուն եղել է իր բարբառներից առաջ, ըստ որում բարբառները ներկայացնում են այդ մեկ միասնական լեզվի հետագա ճյուղավորումները. այս երևույթը շատ բնորոշ է տոհմատիրական հասարակության դարաշրջանին: Կան դեպքեր, երբ բարբառները նախորդում են տվյալ ընդհանուր լեզվին, ըստ որում ընդհանուր լեզուն կազմավորվում, գոյանում է բարբառների համակենտրոնացման և կամ նրանցից մեկի կամ մի քանիսի հիմքի վրա: Այս ձևով են կազմավորվել հին հունական բարբառների հիման վրա՝ ընդհանուր հունարենը (կոյնե), Ում ճյուղի բարբառների (գլխավորապես արարատյան բարբառի) հիման վրա՝ ժամանակակից հայերենը և այլն, և այլն: Վերջապես, կան դեպքեր էլ, երբ բարբառներն ու տվյալ համաժողովրդական լեզուն տվյալ ժամանակաշրջանում համագոյակից են, ինչպես ժամանակակից հայերենը և արդի հայերեն բարբառները, ժամանակակից ռուսերենը և ռուսերեն բարբառները և այլն, և այլն: Իսկ այս նշանակում է, թե բարբառների ու համաժողովրդական լեզուների գոյակցության հարցը չի կարելի լուծել մի պարզունակ սխեմայի տակ դնելով պատմական բարդ ու բազմաբովանդակ պրոցեսը:

Հակառակ իր նախորդ շրջանի սկզբունքներին, Ա. Ղարիբջանը ճիշտ կերպով շեշտում է, որ բարբառներն ընդհանուր լեզվի ճյուղավորումներն են, և բացատրում է բարբառների առաջացման պրոցեսն այսպես. «Այդ ճյուղավորումները կարող են տեղի ունենալ երկու ճանապարհով: Բարբառների ճյուղավորման առաջին ճանապարհը դիֆերենցման ճանապարհն է: Տոհմական կարգերի ժամանակ անջատվելով մայր տոհմից և հեռանալով նրանից՝ տոհմի առանձին հատվածները տանում էին իրենց հետ նաև իրենց լեզուն, որն այդ հատվածների դարավոր անկախ գոյության հետևանքով կորցնում էր հին հատկանիշներից մի քանիսը և ձեռք բերում նոր հատկանիշներ: Դա առաջացնում էր բարբառ նույնիսկ այն ժամանակ, երբ կապը մայր տոհմի հետ կտրված չէր լինում: ... Բարբառների ճյուղավորման երկրորդ ճանապարհը լեզուների և հատկապես ցեղակից լեզուների միացումն է, նրանց խաչավորումը... Մահացող լեզուները փոխարինվել են հաղթող լեզվի ստորին ձևերով՝ բարբառներով, որ առաջացել են մահացած լեզուներով խոսողների կողմից հաղթող լեզուն սովորելու ընթացքում: Հաղթող լեզուն սովորելու ընթացքում առնվում է նրա բառային հիմնական ֆոնդը և

քերականական կառուցվածքի հիմքերը: Բառային կազմի զգալի մասը կարող է մնալ հին լեզվինը... Եթե պարտված լեզվի բառերը մտնում են հաղթող լեզվի բառային կազմի մեջ, ուրեմն ավելի ևս նրանք կպահպանվեն պարտված լեզվով խոսողների նոր յուրացրած լեզվի մեջ, որով և նրանք կտարբերվեն հաղթանակած լեզվից՝ դառնալով նրա բարբառը: Պարտված լեզվից պահպանվում են նաև հնչյունական որոշ օրենքներ, քերականական կառուցվածքից աննշան երևույթներ, որոնք կառաջացնեն հաղթանակած լեզվի երկրորդական երևույթների վարիացիան: Այդ ամենով բարբառը, այսինքն՝ պարտված լեզվով խոսողի կողմից յուրացված հաղթանակած լեզուն նրա բերանում կտարբերվի հիմնական լեզվից: Կառաջանան հաղթանակած լեզվի բարբառները» (անդ, էջ 39—40): Բարբառների առաջացման երկու ճանապարհի այս տեսությունն ընդունում են սովետական լեզվաբաններից շատերը. այդ տեսությունն առանձնապես շատ էին արժարժում 1950—1955 թթ., գրտնելով, որ դա բարբառների առաջացման պրոցեսը լուսաբանող միակ ճշմարիտ, մարքսիստական դրույթն է: Տողերիս գրողն այդ սկզբունքին հակադրվել է դեռևս 1952 թ., իր «Լեզվաբանության ներածություն» աշխատության մեջ¹ և այժմ էլ գտնում է, որ այդ դրույթը հիմնովին սխալ է: Բանն այն է, որ այդպիսի մեկնաբանությունը մի կողմից՝ նույնացնում է պատմա-հասարակական գործոններն ու պայմանները բարբառների առաջացման լեզվական երևույթի հետ, իսկ մյուս կողմից, և հենց դրա հետևանքով, մի խիստ պարզունակ սխեմայի տակ դնում լեզվի ճյուղավորումների բազմազան երևույթներն ու դրանք առաջ բերող պատմա-հասարակական գործոնները և մթազնում դրանց էական առանձնահատկությունները: Այսպես, առաջնորդվելով այդ դրույթով, Ա. Ղարիբջանը, ինչպես տեսանք, գտնում է, որ «անջատվելով մայր տոհմից և հեռանալով նրանից՝ տոհմի առանձին հատվածները տանում էին իրենց հետ նաև իրենց լեզուն, որն այդ հատվածների դարավոր անկախ գոյության հետևանքով կորցնում էր հին հատկանիշներից մի քանիսը և ձեռք բերում նոր հատկանիշներ: Դա առաջացնում էր բարբառ նույնիսկ այն ժամանակ, երբ կապը մայր տոհմի հետ կտրված չէր լինում» (անդ, էջ 39, ընդգծումները մերն են—է. Ա.): Դժվար չէ նկատել, որ այստեղ աղավաղված է բարբառների առա-

¹ Տե՛ս է. Աղայան, Լեզվաբանության ներածություն, Երևան, 1952, էջ 501—516:

ջացման պատմական պրոցեսը. ամենից առաջ, բարբառներն առաջանում են ոչ թե նույնիսկ այն ժամանակ, երբ տոհմի անջատված հատվածի կապը մայր տոհմի հետ կտրված չի լինում, այլ միայն այն դեպքում, երբ այդ կապը պահպանվում է, իսկ եթե այդ հատվածը դարավոր անկախ գոյություն է պահպանում, ապա այս դեպքում առաջանում է ոչ թե բարբառ, այլ ինքնուրույն լեզու: Բացատրենք ու հիմնավորենք մեր ասածը: Հայտնի է, որ տոհմատիրական հասարակությանը, մինչև ցեղային միությունների կազմավորման և, դրա հետ միասին, ժողովուրդների գոյացման սկզբնավորման շրջանը, հատուկ է մեկ նախնական տոհմից, նրա բազմացման ու մասնատումների հետևանքով, նորանոր տոհմների առաջացումը: Ենթադրենք, որ տվյալ մայր տոհմից (A) բաժանվեց նրա մի հատվածը և կազմեց մի ինքնուրույն տոհմ (B): Այդ տոհմը կարող է ապրել մայր տոհմի հարևանության մեջ, մշտապես կապված մնալով նրա հետ. տվյալ դեպքում այդ երկու տոհմերը, քանի որ պահպանում են իրենց միասնությունը, կազմում են մեկ ցեղ: Նոր կազմված տոհմի մոտ ընդհանուր լեզուն, ժամանակի ընթացքում զանազան փոփոխությունների ենթարկվելով, այս դեպքում հանդես է գալիս արպես ընդհանուր լեզվի բարբառ: Անջատված տոհմը կարող է մայր տոհմի հարևանության մեջ ապրել մի լայնածավալ տերիտորիայի վրա, բայց նրանից անկախ, որպես ինքնուրույն տոհմ: Այս դեպքում, մշտական հարևանությունը կարող է խոչընդոտ հանդիսանալ միասնական լեզվի արագ և խիստ զգալի փոփոխություններին՝ տարբեր տոհմերի մոտ, որի հետևանքով երկար ժամանակ այդ տոհմերից յուրաքանչյուրի խոսվածքը մյուսի հետ բարբառային հարաբերության մեջ կմնա: Եթե այդ տոհմերի ինքնուրույնությունը մշտական լինի, այդ բարբառներից յուրաքանչյուրը կզարգանա դեպի ինքնուրույն լեզու, իսկ եթե նրանք վերստին միավորվեն և մեկ ցեղ կամ ցեղային միություն կազմեն, ապա՝ բարբառային հարաբերությունը կարող է պահպանվել, կարող է և վերանալ՝ ընդհանուր լեզվի գոյացումով: Վերջապես, եթե անջատված տոհմը տերիտորիայով էլ անջատվում է մայր տոհմից, որի հետևանքով կտրվում է նրանց միջև հղած ամեն կապ, ապա այս դեպքում մեկ միասնական լեզվի ճյուղավորումը հանգեցնում է ոչ թե բարբառների, այլ ինքնուրույն լեզուների առաջացման: Այսքանը բավական է, համոզվելու համար, որ թե՛ տոհմերի անջատումը և թե՛ նրանցով պայմանավորված լեզվական երևույթները բազմազան են և շեն կարող մի պարզունակ սխեմայի վերածվել: Մինչդեռ տոհմերի բաժանման ու

դրա հետ կապված լեզվի ճյուղավորման զանազան հետևանքները թվածներով չեն վերջանում. անջատված տոհմը կարող է ձուլվել մի ուրիշ տոհմի մեջ և կորցնել իր լեզուն, և այս դեպքում ո՛չ բարբառ կառաջանա, ո՛չ էլ մի նոր լեզու. նա կարող է իր հերթին մասնատվել, հատվածների բաժանվել և միանալ արյունակից տոհմերին և այլն, և այլն: Այս բոլորը չի կարելի հաշվի շառնել, երբ խոսքը վերաբերում է լեզվի ճյուղավորումներն առաջ բերող հասարակական-պատմական գործոններին: Խոսելով միայն բարբառային ճյուղավորումներ առաջ բերող գործոնների մասին, կարելի է նշել հետևյալները. 1) տոհմերի ու ցեղերի բաժան-բաժան լինելը՝ մեկ միասնություն կազմելու և կամ սերտ հարևանության մեջ ապրելու պայմաններում, 2) ժողովրդի տերիտորիալ մասնատումները, որով նույն ժողովրդի տարբեր տերիտորիալ հատվածները մեկուսանում են իրարից, խախտվում է այդ հատվածների միջև եղած սերտ կապը, և լեզուն զարգացման տարբեր ընթացք է ստանում այդ հատվածներից յուրաքանչյուրի մոտ, 3) ոչ ազգակից ցեղերի ու տոհմերի ձուլումը մեկ ժողովրդի կազմում, մեկ ցեղի կամ ցեղախմբի գերիշխանության տակ, որ հանգեցնում է մյուսների ասիմիլյացիային: Այս բոլորը պատմա-հասարակական գործոններ են միայն և, ինչպես տեսնում ենք, միշտ չէ, որ լեզվի տերիտորիալ ճյուղավորումները պայմանավորված են կամ մեկ հասարակական միավորի (տոհմ, ցեղ, ժողովուրդ) բաժան-բաժան լինելով կամ, ընդհակառակն, զանազան տոհմերի ու ցեղերի միավորումով և դրա հետևանքով տեղի ունեցող ասիմիլյացիայով: Բարբառներ առաջանում են նաև այն դեպքում, երբ ժողովուրդը կամ ցեղը (առանձին դեպքերում նույնիսկ տոհմը) պահպանում է իր միասնությունը, իր ամբողջությունը, բայց զանազան հանգամանքների շնորհիվ նրա տարբեր հատվածների միջև սերտ շփում չի լինում:

Ինչ վերաբերում է լեզվի ճյուղավորումների պրոցեսին՝ որպես լեզվական երևույթի, ապա այդ գործոններից որի՞ հետևանքով էլ որ տեղի ունենան ճյուղավորումները, տեղի են ունենում մեկ ճանապարհով կամ մեկ եղանակով միայն: Այսպես՝ ենթադրենք, թե B տոհմը, A-ից բաժանվելուց հետո, ապրում է նրա հարևանության մեջ լաջնածավալ մի տերիտորիայի վրա. նրանց հարևանությունը, բնականաբար, լեզվի միասնությունը պահպանելուն է նպաստում. բայց, դրան հակառակ գործում է նաև տարբերակումների տենդենցը, Մարքսի խոսքերով ասած, «լեզվի մեջ տարբերություններ առաջացնելու տենդենցը»: Սրա հետևանքն այն է լինում, որ միաս-

նական լեզուն, դրսևորելով զարգացման ընդհանուր տենդենցներ, ունենում է նաև ուրույն փոփոխությունների տենդենցներ յուրաքանչյուրի մոտ. առաջինը պայմանավորում է լեզվի ընդհանրությունն ու միասնությունը, իսկ երկրորդը՝ լեզվի տարբերակումը, նրա ճյուղավորումը. ժամանակի ընթացքում միևնույն լեզուն տարբեր հատվածների (A և B տոհմերի) մոտ մասնավոր բնույթ կրող տարբեր փոփոխությունների է ենթարկվում, որով և մեկ միասնական լեզվից առաջանում են A և B բարբառները: Այստեղ, ինչպես հեշտ է նկատել, բարբառն առաջանում է ընդհանուր լեզվի կրած փոփոխություններով: Բայց այսպես է նաև մյուս գործոնների առկայության դեպքում: Ընդունենք, թե A և B ցեղերը խոսում են տարբեր, ոչ ցեղակից լեզուներով. ժողովրդի կազմավորման պրոցեսում B ցեղը ձուլվում է A-ին, կորցնում իր լեզուն: Ի՞նչ տեղի կունենա այդ դեպքում. յուրացնելով A-ի լեզուն, B ցեղի անդամները կարող են պահպանել իրենց լեզվի որոշ բառեր, այսինքն՝ A լեզվի բառապաշարը որոշ շափով փոխել. կարող են նաև յուրացման ընթացքում հնչյունական փոփոխություններ առաջացնել, փոխել յուրացվող լեզվի հնչյունական համակարգը. այդ փոփոխություններով էլ, ահա, կառաջանա մի նոր բարբառ. բայց չէ՞ որ նա առաջացավ ընդհանուր դարձած լեզվի փոփոխություններով: Ուրեմն կա բարբառների առաջացման մի հանապարհ կամ եղանակ՝ ընդհանուր լեզվի տարբեր փոփոխությունները՝ տարբեր տերիտորիալ հատվածների մոտ, թեև այդ փոփոխությունները կարող են պայմանավորված լինել պատմա-հասարակական տարբեր գործոններով: Ա. Ղարիբջանը հակառակ տեսակետին է կանգնած, որ և պայմանավորում է մի շարք սխալներ, ըստ որում, նա շատ ավելի սխեմատիկ ձևով է պատկերացնում պատմական պրոցեսը, քան նույն տեսակետը պաշտպանողներից որևէ մեկը: Թե ինչ հետևանքներ է ունենում այդպիսի պատկերացումը, կտեսնենք ստորև:

Վերջապես, մի այլ տեղ՝ իր «Հայ բարբառների ծագման հարցի շուրջը» հոդվածում, դարձյալ խոսելով բարբառների առաջացման մասին, պրոֆ. Ա. Ղարիբջանը գրում է. «Եթե ընդհանուր տեսություն լեզվաբանությունը մշակել է այն կարծիքը, թե բարբառները առաջանում են ընդհանուր լեզվի մահացման հետևանքով, ուր իրենքին տեղի է ունենում տվյալ լեզվով խոսող կոլեկտիվի փայլաման հետևանքով: Բաժանվելով հատվածների՝ կոլեկտիվը դադարում է գոյություն ունենալուց (sic!), դադարում են ներքին կապերը, դադարում է գոյություն ունենալուց նաև նրա լեզուն, իսկ բա-

ժանված հատվածներից յուրաքանչյուրը, հեռանալով մյուսներից, յուրովի փոխում է երբեմնի ընդհանուր լեզուն և առաջացնում բարբառ: Ըստ այդ տեսության, լինում են նաև դեպքեր, երբ ամբողջ ժողովուրդը, խոսելով մի լեզվով, ենթարկվում է կատաստրոֆայի. կորցնում է իր ընդհանուր լեզուն, և պատմական նոր իրադրություններին պայմաններում սկիզբ է տալիս մի շարք բարբառների» (ՊԲՀ, 1958, № 3, էջ 240): Հազիվ թե այս շարադրանքը կարելի լինի որևէ ձևով հաշտեցնել գիտական լեզվաբանության պատկերացումների հետ: Մենք ավելորդ ենք համարում կրկին խոսել բարբառների առաջացման ընդհանուր տեսության մասին. վերի մեկնաբանությունները բավական են արդեն: Այստեղ անհրաժեշտ ենք համարում կանգ առնել միայն մի արտառոց «գլուտի» վրա: Պրոֆ. Ա. Ղարիբյանի կարծիքով՝ բարբառներն առաջանում են կոլեկտիվի քայքայման հետևանքով. «Բաժանվելով հատվածների՝ կոլեկտիվը դադարում է գոյություն ունենալուց»,—ասում է նա: Ե՛րբ, ի՛նչ պայմաններում, ինչպե՛ս և ինչու՞: Ռուսերենը բարբառներ ունի. քայքայվե՞լ և դադարե՞լ է գոյություն ունենալուց ուս ժողովուրդը. կան հայերեն բարբառներ, դադարե՞լ է գոյություն ունենալուց հայ ժողովուրդը՝ նույնիսկ աշխարհով մեկ ցրվելուց հետո: Այդպիսի «մեկնաբանությունը» ինքնին հանգեցնում է այն հակապատմական դրույթին, որի համաձայն՝ ուր որ բարբառներ կան, կա նաև նրանց հիմք հանդիսացած միասնական լեզվով խոսող հանրության (ցեղի, ժողովրդի) քայքայում: Բնականաբար հարց է առաջանում, թե էլ ի՛նչ բարբառների մասին կարող է խոսք լինել, եթե չկա ընդհանուր լեզու և չկա, մանավանդ, միասնական հասարակություն (ցեղ, ժողովուրդ, ազգ): Գիտենք, որ բարբառները տվյալ հասարակության ընդհանուր լեզվի տերիտորյալ ճյուղավորումներն են այդ հասարակության զանազան տերիտորիալ հատվածների մեջ: Իսկ եթե հասարակությունը քայքայվում է, դադարում է գոյություն ունենալուց, ինչպես պրոֆ. Ա. Ղարիբյանն է կարծում, ապա բնականաբար բարբառ էլ չի կարող լինել:

Վերը շարադրված ընդհանուր սկզբունքներից ելնելով, Ա. Ղարիբյանն անցնում է հայերեն բարբառների առաջացման հարցին, և, հենվելով հայերեն բարբառների պայթականների համակարգի վրա, գտնում է, որ մեր բարբառների տարբեր խմբերն առաջացել են տարբեր դարաշրջաններում՝ և՛ գրաբարի կազմավորումից առաջ, և՛ գրաբարի կազմավորման հետ միաժամանակ, և՛ դրանից հետո: Ահա թե ինչպես է ներկայացնում նա այդ պրոցեսը. «Երբ քննում

ենք մեր բարբառների բաղաձայնական սիստեմը, նկատում ենք, որ մեր շատ բարբառներ այդ տեղաշարժը չեն կատարել մինչև վերջ. մի մասը տեղաշարժը կատարել է բոլորովին նման գրաբարին. այսպես են «Ս» ճյուղի հիմնական բարբառները (Մեղրի, Կարճեան, Ղարաղաղ, Ղզմար և Արդվին), «Ու» ճյուղից միայն Ագուլիսի բարբառը, որ երբեմնի «Ս» ճյուղի բարբառն է, և Թբիլիսիի բարբառը, որ ուշ առաջացած բարբառ է:

Այդ նշանակում է, թե այդ բարբառները առաջացել են ընդհանուր լեզվից այն ժամանակ, երբ մեր ընդհանուր լեզվի բաղաձայնական սիստեմը հնդեվրոպական վիճակից անցել էր գրաբարյան վիճակի:

Բարբառների մի մասը բաղաձայնների տեղաշարժը կատարել է մասնակի կերպով, այսինքն՝ հնդեվրոպական բաղաձայնական սիստեմի շնչեղ ձայնեղները պահպանել է անվթար, հնդեվրոպական ձայնեղները բառամիջում նույնպես պահպանել է, փոխել է, տեղաշարժել է միայն հնդեվրոպական բաղաձայնական սիստեմի ձայնեղները, որոնք բառասկզբին վերածել է խուլերի... Բարբառների մի զգալի խումբ հնդեվրոպական շնչեղ ձայնեղները պահպանել է, պահպանել է նաև հնդեվրոպական ձայնեղները, միայն հնդեվրոպական խուլ հնչյունները վերածել է շնչեղ խուլերի, ուստի դարձել է խլազուրկ» (անդ, էջ 66—67): Այս նկարագրությունից հետո նա եզրակացնում է. «Այսպիսով՝ բաղաձայնական սիստեմը հայ բարբառներում վկայում է, որ հայերեն լեզվի ճյուղավորումները, բարբառների առաջանալը, տեղի են ունեցել տեղական կերպով և աստիճանաբար, հնագույն շրջանից սկսած, և՛ ընդհանուր հայերենի գրաբար վիճակից առաջ, և՛ դրա գրաբար վիճակում, և՛ գրաբար վիճակից հետո» (անդ, էջ 68):

Կամենալով հիմնավորել իր այս վարկածը, Ա. Ղարիբյանը դիմում է նաև քերականական կառուցվածքին. նրա կարծիքով՝ քերականական կառուցվածքն էլ, իբր, հաստատում է այդ վարկածը. «Մեր բայերի քերականական կառուցվածքի կարևոր հիմքերից է նաև խոնարհման բաղադրյալ կառուցվածքը, այսինքն՝ դերբայով և օժանդակ բայով ժամանակ կազմելու հատկությունը: Այդ հատկությունն ուներ գրաբարը, թեև նկատվում է, որ այնտեղ այս հատկությունը գործում օրինաչափություն չէր: Ամեն ինչից երևում է, որ այդ հատկությունը գրաբարի անցյալի օրինաչափությունն էր ավելի վաղ ժամանակներում, քան V դարի մեզ ծանոթ գրաբարում: Այդ հատկությունը ուժեղ և շեշտված կերպով առկա է մեր բոլոր բար-

բառներում և նկատելի է, որ դա գործուն օրինաչափություն է, սրբ և հիմք է տալիս ընդունելու, որ բարբառներից գլխավորները հայերեն ընդհանուր լեզվից ճյուղավորվել են այն ժամանակ, երբ անալիտիկ սիստեմը ընդհանուր լեզվի մեջ գործուն օրինաչափություն էր, այսինքն՝ հայերեն լեզվի նախագրաբարյան վիճակի ժամանակ: Այսպիսով՝ մեր ընդհանուր լեզվի քերականության բոլոր հիմքերը մեր բարբառները պահպանել են, և դրանք թելադրում են այն միտքը, թե այդ հիմքերը գալիս են հայերենի նախագրաբարյան փուլից» (անդ, էջ 76): Այս փաստարկին ավելացնելով նաև այն, որ իբրև (ու > վ) մասնիկով կրավորական խոնարհումը գրաբարյան խոնարհման սիստեմից ավելի հին է, եզրակացնում է, թե «քերականական տվյալներն էլ ասում են այն մասին, որ հայերեն հիմնական բարբառների կազմավորումը, ընդհանուր լեզվից նրանց ճյուղավորվելը, տեղի է ունեցել նախքան գրաբարի շրջանը» (անդ, էջ 78): Ի դեպ, վերը, ընդհանրապես բարբառների առաջացման մասին շարադրված իր դրույթներից ելնելով, Ա. Ղարիբյանը այստեղ մի ուշադրավ «գլուտ» էլ է անում. խոսելով «հայերեն և բնիկ լեզուների» խաչավորման մասին, նա գրում է. «Հայերենը, լինելով ուժեղ լեզու մյուսների համեմատությամբ, առաջ է մղվել որպես ցնդերի կամ միջցեղային հարաբերությունների լեզու. այդ շրջանում բնիկ ցեղերը եղել են երկլեզվյան, մեկ՝ իրենց սեփական տեղական լեզվով են խոսել, երկրորդ՝ միջցեղային հարաբերությունների համար խոսել են հայերեն լեզվով: Միայն հայ ցեղական միությունը եղել է միալեզու: Եվ այդ պատճառով էլ հայերեն լեզուն պահպանել է իր հիմնական բառային ֆոնդը և քերականական կառուցվածքը ու դուրս է եկել հաղթող» (անդ, էջ 69: Ընդգծումը մերն է—է. Ա.): Ինչպես տեսնում ենք, Ա. Ղարիբյանն այստեղ հայերենի հաղթանակը բացատրում է նրանով, որ նա մյուսների համեմատությամբ ուժեղ է եղել: Իսկ սա խորապես սխալ է ու հակագիտական: Բնականորեն ոչ մի լեզու էլ մյուսներից թույլ կամ ուժեղ չէ, և որևէ լեզվի հաղթանակը նրա «ուժեղությունը» չի պայմանավորված, այլ պատմա-հասարակական որոշակի պայմաններով: Գտնել, թե որևէ լեզու ինքնին կարող է ուժեղ կամ թույլ լինել մի ուրիշ լեզվի համեմատությամբ, նշանակում է կանգնել շլայխերյան այն հայտնի դրույթի վրա, որի համաձայն «գոյություն պայքարում» լեզուների հաղթանակը կամ պարտությունը պայմանավորված է նրանց առավել կամ պակաս ուժեղությամբ ու նպատակահարմարությամբ:

Հայերեն բարբառների առաջացման այն վարկածի դեմ, որ

առաջ է քաշել Ա. Ղարիբյանը, ինչպես ասել ենք, հանդես եկավ տողերիս գրողը 1958 թ., իր «Նոր հայերեն բարբառների առաջացման մասին» հոդվածով (ՊԲՀ, 1958, № 2): Քննության առնելով այն բոլոր տվյալները, որոնց վրա հիմնվում է Ա. Ղարիբյանն իր վարկածը հիմնավորելու համար, հոդվածագիրը ցույց է տալիս, որ Ա. Ղարիբյանի մոտ պատմական պրոցեսը շրջված է գլխիվայր, որ լեզվական տվյալների մեկնաբանությունը հիմնովին սխալ է, և եզրակացնում է. «Հայերեն բարբառներից և ո՛չ մեկն էլ գրաբարից հին չէ: Բոլոր հայերեն բարբառները ներկայացնում են գրաբարյան համակարգի հետագա զարգացումը՝ տարբեր ուղղություններով ու ձևափոխություններով» (ՊԲՀ, 1958, № 2, էջ 225): Մեր այդ քննադատությանը պատասխանեց Ա. Ղարիբյանն իր «Հայ բարբառների ծագման հարցի շուրջը» հոդվածով (ՊԲՀ, 1958, № 3, էջ 240 և շար.)՝ որին հաջորդեցին պրոֆեսորներ Գ. Սեվակի «Հայ բարբառների ծագման հարցի շուրջը» (ՊԲՀ, 1959, № 1, էջ 244 և շար.), Գ. Զահովյանի «Հայ բարբառագիտության և հայերեն բարբառների ծագման հարցը» (ՊԲՀ, 1959, № 2, էջ 305 և շար.), Ս. Ղազարյանի «Հայերեն բարբառների և նրանց ծագման հարցի շուրջը» (ՊԲՀ, 1960, № 3, էջ 172 և շար.) հոդվածները: Այս երեք հոդվածների մեջ էլ խստագույն քննադատության են ենթարկվում Ա. Ղարիբյանի թե՛ տեսական դրույթները, թե՛ լեզվական փաստերի վերլուծություններն ու մեկնաբանությունները, և մերժվում նրա առաջ քաշած վարկածը, որպես պատմական պրոցեսին հակասող ենթադրություն: Իր կարծիքները պաշտպանելու համար Ա. Ղարիբյանը հանդես եկավ «Вопросы языкознания» ժուռնալում «Об армянском консонантизме» հոդվածով (ВЯ, 1959, № 5), որին և հաջորդեց այն դիսկուսիան, որի մասին խոսեցինք վերը: Իր այդ երկու հոդվածներում, հատկապես առաջինում, նա խտացած կերպով արտահայտել է և՛ իր տեսական դրույթները, և՛ իր կիրառած «պատմահամեմատական» մեթոդի ու հետազոտական եղանակների գրեթե բոլոր էական գծերը, ուստի և դրանց վերլուծությամբ էլ կաշխատենք գաղափար տալ նրա լեզվաբանական-հայագիտական աշխատությունների հիմունքների մասին: Մեր վերլուծություններն ավելի պարզ ու մատչելի դարձնելու համար, մենք կբնենք առանձին-առանձին հետևյալ կետերը. ա) տեսական դրույթները, բ) մեթոդը և լեզվական նյութի վերլուծությունը, գ) փաստարկների ճշգրտությունն ու գիտական բարեխղճությունը:

Ա. Ղարիբյանի 1950 թ. հետո արտահայտած տեսական դրույթ-

ներից մի քանիսին արդեն անդրադարձանք և ցույց տվեցինք, որ դրանք սխալ են: Անցնենք հիշյալ հոդվածների մեջ շոշափած խընդիրներին:

Ինչպես «Հայ բարբառագիտության» մեջ, այնպես էլ այս հոդվածներում Ա. Ղարիբյանը գտնում է, որ շնչեղացած ձայնեղներ ունեցող (Տնդեվրոպական բաղաձայնական սիստեմին հարազատ կամ նրան առավել մոտ) բարբառներն առաջացել են գրաբարյան համակարգից առաջ, գրաբարյան բաղաձայնական համակարգն ունեցող բարբառները՝ գրաբարի կազմավորման հետ միաժամանակ, և վերջապես՝ գրաբարի բաղաձայնական համակարգից էլ հեռացած բարբառներն առաջացել են գրաբարից հետո: Այսպիսի պատկերացումն առաջ է բերում մի քանի կարևոր հարցեր: Նախ այն, թե ի՞նչ էր գրաբարը, գրականության աստիճանին բարձրացած ընդհանուր խոսակցական հայերեն, թե՞ որևէ բարբառ կամ, ինչ-որ երկնքից իջած լեզու: Այնուհետև, եթե հայերեն բարբառները ճյուղավորվում էին ընդհանուր հայերեն լեզվից, ապա, ինչի՞ էր հանգեցնում դա: Եվ, վերջապես, ինչպիսի՞ պրոցեսներ են տեղի ունեցել բարբառների և ընդհանուր լեզվի միջև տարբեր դարաշրջաններում: Գրաբարը նա բնորոշում է այսպես. «Գրաբարն իբրև ընդհանուր պետական լեզու, բարբառներն իբրև տեղական լեզուներ ապրում էին կողք-կողքի հայ պետականության ամբողջ շրջանում, երբ գրաբարը այդ շրջանում համեմատաբար ավելի ուժեղ ազդեցություն ուներ բարբառների վրա, քան բարբառները գրաբարի վրա, որովհետև նա ընդհանուր պետական լեզու էր, ուստի և ավելի հեղինակավոր. այդ պատճառով նրա նորմաները խանդազին կերպով պահպանվում էին (ՊԲՀ, 1958, № 3, էջ 263, ընդգծումները մերն են—է. Ա.): Այսպես, ուրեմն, գրաբարը ընդհանուր պետական լեզու է եղել: Բայց ի՞նչ է նշանակում ընդհանուր պետական լեզու արտահայտությունը: Եթե այստեղ ընդհանուր պետական հորջորջումը նշանակում է համապետական, ապա դա բացահայտում է գրաբարի հասարակական դերն ու դիրքը, բայց ոչինչ չի ասում նրա էության մասին, որովհետև պետական կամ համապետական լեզուն կարող է նաև ո՛չ խոսակցական լինել, ո՛չ էլ ընդհանուր: Արաբական տիրապետության շրջանում, հատկապես VII—VIII դարերում արաբերենը Իրանում պետական և գրական լեզու էր, որպես խալիֆաթի և Իսլամի պաշտոնական լեզուն, բայց նա պարսիկների ընդհանուր, համաժողովրդական լեզուն չէր, պարսիկներն իրենց խոսակցական ընդհանուր լեզուն ունեին, որ իններորդ դարում գրա-

կանության աստիճանին բարձրացած նոր պարսկերենի հիմքը հանդիսացավ: Ցարական Ռուսաստանի ընդհանուր պետական լեզուն էր ռուսերենը, բայց նա ուկրաինացիների, վրացիների, հայերի և այլ ժողովուրդների լեզուն չէր. դրանցից յուրաքանչյուրն ուներ իր ընդհանուր մայրենի լեզուն: Արդ, գրաբարը միայն պետակա՞ն լեզու էր, թե՞ նաև հայ ժողովրդի ընդհանուր, իսկ այդ նշանակում է՝ նաև խոսակցական լեզուն էր: Հիշելով Ստրաբոնի խոսքերը հայերի միալեզու լինելու մասին, Ա. Ղարիբյանն ասում է. «Միալեզվությունը արտահայտվում էր նրանով, որ բոլորը հասկանում էին միջցեղային լեզուն, իսկ իրենք խոսում էին հայերենի այս կամ այն տարբերակով կամ բարբառով: Ահա այդ պետականությունը հաստատվելուց հետո միջցեղային լեզուն դարձավ պետական լեզու, որը մշակվեց բանավոր կերպով և հինգերորդ դարում վերածվեց գրական լեզվի» (անդ, էջ 263): Այստեղ արդեն ավելի պարզ է ասված. գրաբարը V դարում գրական լեզվի վերածված այն բանավոր լեզուն էր, որ հանդես էր եկել որպես միջցեղային լեզու և աստիճանաբար յուրացվել ոչ հայկական ցեղերի կողմից. այդ միջցեղային լեզուն էլ եղել է հենց հայերենը. «Տեղական ցեղերը, խոսելով հայերեն, աստիճանաբար ֆիզիկապես էլ ձուլվում էին հայերի հետ, հայանում էին, կորցնելով իրենց լեզուն: Այդ տեղի էր ունենում հետևյալ կերպ. դրսի հարաբերությունների համար նրանք օգտագործում էին հայերեն լեզուն, որպես միջցեղային լեզու, իսկ ընտանեկան ներքին կյանքում խոսում էին հին լեզվով...» (անդ, էջ 262): Այստեղ մեզ համար կարևոր է այն, որ այդ միջցեղային լեզուն խոսակցական լեզու էր, դրանով խոսում էին ոչ միայն հայերը, այլ նաև հայացող ցեղերը: Բայց սա արդեն իր վարկածի հերքումն է: Եթե գրաբարը խոսակցական լեզու եղել է, ապա նա բնականաբար պետք է, իբրև ընդհանուր լեզու, ունենար հենց այն քերականական կառուցվածքը, ինչ որ ունեին նրա հետ զուգահեռաբար գոյություն ունեցող բարբառները. եթե այժմյան բարբառներից գլխավորներն իրենց վերլուծական կառուցվածքով կային արդեն գրաբարից էլ առաջ, ապա գրաբարը նույնպես պետք է այդ կառուցվածքն ունենար: Հնարավոր է, որ գրաբարը ն՛րկայացնի հին բարբառների քերականական կառուցվածքի զարգացման հետագա վիճակը. բայց այդ դեպքում էլ նա պետք է արտացոլեր համակարգը այն բարբառի (կամ բարբառների), որի հիմքի վրա նա գոյացել է: Հայտնի է, որ հայերենի բարբառներից ոչ մեկն էլ թեքական-համադրական կառուցվածք չունի, իսկ այդ նշանակում է, թե դրանցից

ոչ մեկն էլ գրաբարի հիմքը լինել չէր կարող: Բացի դրանից, ընդհանուր լեզուն և բարբառները անխախտելի միասնություն են կազմում, որ արտահայտվում է նրանց քերականական կառուցվածքի հիմնական գծերի և բառապաշարի հիմնական մասի ընդհանրությամբ. գրաբարի ու մեր բարբառների քերականական համակարգերը իրենց էական գծերով խորապես տարբեր են իրարից, նրանք հակադիր կառուցվածքներ են ներկայացնում, ուստի և գրաբարը չէր կարող բարբառների ընդհանրությունը դրսևորող լեզու լինել: Մեր բարբառների հիմքի վրա և նրանց զուգահեռ որպես ընդհանուր լեզու գոյացող լեզուն կարող էր միայն կցական լեզու լինել: Հիշենք, որ այդպիսին է աշխարհաբարը: Վերջապես, ընդունենք, որ գրաբարն ավելի ուշ շրջանի հայերենի համակարգ է ներկայացնում, քան այն բարբառները, որոնք, Ա. Ղարիբյանի կարծիքով, առաջացել էին մինչև մեր թվականության VII դարը: Դրանից ինքնին բխում է այն, որ եթե այդ բարբառներից մի քանիսը պահպանեցին իրենց քերականական կառուցվածքը, ապա մի քանիսն էլ փոփոխեցին այն, և այդ փոփոխությունը հանգեցրեց գրաբարյան քերականական կառուցվածքի առաջացմանը: Հարց է առաջանում. իսկ ի՞նչ եղան այդ բարբառները: Ա. Ղարիբյանի կարծիքով՝ գրաբարի հետ զուգահեռաբար առաջացած բարբառներն են Մեղրու, Կարճևանի, Ագուլիսի և մի քանի այլ բարբառներ: Բայց այդ բարբառներից ոչ մեկն էլ թեքական սխտեմ չունի, ուրեմն գրաբարը դրանցից կամ դրանց հետ էլ գոյացած լինել չի կարող: Ինչպես տեսնում ենք, Ա. Ղարիբյանն ինքն իրեն հերքում է և դա պատահական չէ. թեև նա խոսում է «ընդհանուր», «միջցեղային» խոսակցական ընդհանուր հայերենի մասին, բայց ոչ մի պարզ պատկերացում չունի այդ բոլորի վերաբերյալ: Ավելին, նա այդ բոլորից հետո վճռաբար հերքում է իր այդ բնորոշումները հետևյալ դրույթով. «Գրաբարն իբրև ընդհանուր պետական լեզու, բարբառներն իբրև տեղական լեզուներ, ապրում էին իրար կողմ-կողմի հայ պետականության ամբողջ շրջանում» (անդ, էջ 263, ընդգծումը մերն է—է. Ա.): Այժմ ամեն ինչ պարզ է, և դժվար չէ նկատել, որ հին երգն է երգվում: Վերը մենք տեսանք, որ մինչև 1950 թ. Ա. Ղարիբյանն այն դրույթն էր պաշտպանում, որ իբր հայերեն բարբառները տեղական ցեղային ու տոհմային լեզուներն են, որոնք խաչավորման պրոցեսում բարբառի աստիճանին են իջել: Այս վերջին մեջբերումը ցույց է տալիս, որ 1950 թվականից հետո էլ այդ դրույթն է նրա ելակետը: Իսկ այդ ելակետային սկզբունքից բխում են անխուսափելի սխալներ: Այս-

պես, եթե գրաբարը բարբառների, որպես տեղական լեզուների, կողքին ապրող պետական լեզու է համարվում, ապա բնականաբար նրա պատմական ճակատագիրն էլ կապվում է բացառապես պետության լախտի հետ: Եվ Ա. Ղարիբյանը կարծես թե ուզում է այդպես էլ բացատրել, բայց ավելի հեռուն է գնում. «Տարօրինակ է թվում, թե ինչու գրավոր լեզու դառնալուց հետո գրաբարն ավելի արագորեն ենթարկվեց փոփոխման, քան երբ նա բանավոր էր: Այդ պատճառ է բացատրել նրանով, որ քայքայվեց գրաբարով խոսող հասարակությունը» (անդ, էջ 263: Ընդգծումը մերն է—է. Ա.): Ամենից առաջ այստեղ պատմության ահավոր խեղաթյուրում կա. գրաբարով խոսող հասարակությունը եղել է հայ ժողովուրդը, իսկ հայ ժողովուրդը, որպես այդպիսին, չի քայքայվել: Չնայած գաղթերին ու կոտորածներին, մասնատումներին ու հալածանքներին, հայ ժողովուրդը պահպանվել է, զարգացել ու ձևավորվել որպես ազգ: Գուցե Ա. Ղարիբյանը հասարակություն ասելով հասկանում է ֆեոդալական հասարակությունը: Բայց այս դեպքում էլ պատմությունն աղավաղվում է, որովհետև Հայաստանում ֆեոդալական հասարակությունը քայքայվել է շատ ավելի ուշ՝ բուրժուական հասարակության գոյացումով: Ըստ որում, գրաբարի մահացումը համընկնում է ոչ թե ֆեոդալական հասարակության քայքայման դարաշրջանի, այլ զարգացած ֆեոդալիզմի դարաշրջանի հետ: Ինչպես տեսնում ենք, Ա. Ղարիբյանի բացատրությունը ոչ մի գիտական ու պատմական հիմք չունի: Շարունակելով իր դատողությունները, նա գրում է. «Հայաստանի մայրաքաղաքները քանդվեցին, բնակչությունը ցրվեց, առանձին նոր ուստաններ կազմվեցին, որոնք և փոքր լինելով, և ընդհանուր կապերից զուրկ լինելով՝ իրենց լեզվով ենթարկվում էին բարբառների խիստ ազդեցության» (անդ, էջ 263): Այստեղ էլ նույն սխալ պատկերացումն է արտահայտվում. Ա. Ղարիբյանը կարծում է, թե ուստաններն ունենին իրենց ուրույն լեզուն, որ հակադրվում էր բարբառներին, իսկ այս դարձյալ նույն դրույթն է՝ գրաբարի միայն պետական լեզու լինելու մասին: Բայց այս դեպքում էլ օրինական հարց է առաջանում. եթե գրաբարը պետական լեզու էր և նրա մահացումը պայմանավորված էր հայ պետականության կործանումով, ապա ինչու՞ նա չմահացավ այն ժամանակ, երբ Հայաստանը զրկվեց միասնական ինքնուրույն պետականությունից և բաժանվեց Բյուզանդիոսի ու Իրանի միջև (IV—VI դարերի ընթացքում), այլ այն ժամանակ, երբ Հայաստանը վերըստին ուներ իր պետականությունը, ի դեմս Բագրատունյաց թագա-

վորության (առանձնապես X—XI դարերում): Եվ այսպես, սխալ ելակետն անխուսափելիորեն հանգեցնում է Ա. Ղարիբյանին նույնքան սխալ ու հակասական բացատրությունների: Այսպես, խոսելով բարբառների և ընդհանուր լեզվի, հատկապես հայերեն բարբառների և ընդհանուր հայերենի միջև եղած հարաբերությունների մասին, նա 1953 թ. գրում է. «Քարբառների զարգացման ամբողջ պրոցեսը եղել է բնդիանուր լեզվին մոտենալու պրոցես» (Հայ բարբառագիտություն, էջ 76): Ստացվում է պատմական պրոցեսի այսպիսի պատկեր. սկզբից՝ բարբառներ, նրանցից հետո կամ նրանց զուգահեռ՝ ընդհանուր հայերեն, և բարբառների ու ընդհանուր լեզվի մերձեցման պրոցես՝ բոլոր դարաշրջաններում: 1958 թ. իր այդ վճռական ձևակերպումին նա հակադրում է նույնքան վճռական, բայց տրամաբանորեն բոլորովին հակադիր մի այլ ձևակերպում: Խոսելով բարբառների առաջացման մասին և նշելով նաև՝ արտագաղթների դերը, Ա. Ղարիբյանը եզրափակում է. «Այսպես է ընթացել հայ բարբառների պատմությունը: Նրանց զարգացման պատմությունը եղել է անընդհատ տարբերակման պրոցես, համեմատաբար ավելի քիչ շահով՝ ինտեգրացման պրոցես» (ՊՔՀ, 1958, № 3, էջ 264, ընդգծումները մերն են—է. Ա.): Ահա երկու ֆորմուլա, որոնցից մեկը մյուսի հերքումն է, ըստ որում թե՛ մեկը և թե՛ մյուսը, առանձին վերցրած, խորապես սխալ է: Չի կարելի լեզվի ճյուղավորումների պատմական պրոցեսը դիտել որպես միայն տարբերակման (դիֆերենցման) կամ միայն որպես ընդհանրացման, մերձեցման (ինտեգրացման) պրոցես բոլոր դարաշրջաններում, մինչև ազգի երևան գալը: Ոչինչ չի փոխում նաև այն կեսբերան վերապահությունը, թե տարբերակման պրոցեսին զուգընթաց նկատվել է նաև մերձեցում, կամ ընդհակառակը, մերձեցման պրոցեսում եղել են նաև որոշ տարբերակումներ: Ա. Ղարիբյանն իրեն հատուկ դոգմատիզմով մեկ բացարձակ, համապարփակ սխեմայի տակ է դնում ամբողջ պատմությունը, և դրանով իսկ աղավաղում պատմական պրոցեսը: Հայտնի բան է, որ հասարակության պատմության տարբեր դարաշրջաններում տարբեր էլ պրոցեսներ են տեղի ունենում լեզվի մեջ: Ստրկատիրության առաջացման ժամանակ առավել բնորոշ է բարբառների միասնացման պրոցեսը և, դրան զուգընթաց, էթնիկական ընդհանուր լեզվի գոյացումը, իսկ ֆեոդալիզմի, հատկապես զարգացած ֆեոդալիզմի, դարաշրջանում իբրև ընդհանուր երևույթ տեղի է ունենում լեզվի նորանոր ճյուղավորումների, նորանոր տեղական բարբառների առաջացման պրոցես

որ շատ հաճախ հանգեցնում է նախկին ընդհանուր լեզվի մահացմանը և նոր ընդհանուր լեզվի գոյացմանը: Միայն այս երկու օրինակը բավական է ցույց տալու համար, որ հասարակության զարգացման տարբեր ֆորմացիաներում լեզվի մեջ տեղի են ունենում տարբեր պրոցեսներ, և չի կարելի այդ պրոցեսներից մեկն ու մեկը վերցնել ու տարածել բոլոր դարաշրջանների վրա: Դեռ ավելին. նույն ֆորմացիայի պատմության տարբեր շրջաններում և տարբեր պայմաններում կարող են դարձյալ հակադիր պրոցեսներ տեղի ունենալ: Չտեսնել այդ տարբեր պրոցեսները, մեկ տիեզերական սխեմայի տակ դնել լեզվի զարգացման ամբողջ պատմական պրոցեսը, նշանակում է հրաժարվել լեզվի պատմության դիալեկտիկական ըմբռնումից, հրաժարվել լեզվի նկատմամբ պատմական հայեցակետից: Իսկ որ Ա. Ղարիբյանը իսկապես էլ հրաժարվում է լեզվի պատմությունից, դա արտահայտվում է ոչ միայն վերը շուշափած հարցերի լուսաբանության, այլև շատ ուրիշ կարծիքների մեջ: Այսպես, օրինակ, խոսելով հայերեն բարբառների աշխարհագրական դասավորության մասին, նա գրում է. «Այդ ամբողջ պրոցեսում առաջացել են հայերեն բարբառները երկու ճանապարհով՝ հայերենի ներքին բաժանման և օտար ցեղերի կողմից հայերենը յուրացնելու ճանապարհով: Այդ պատճառով էլ հայերեն տեղական, տերիտորիալ բարբառները բռնում են այն տերիտորիաները, որտեղ ապրում էին հայերեն բարբառներով կամ օտար լեզվով խոսող ցեղեր, ուստի ամեն մի բարբառի սահմանը բուն հայ ցեղերի կամ հայ դարձած նախկին բնիկ ցեղերի բնակության սահմանն է, դրա հետևանքով հայ կամ հայացած նախկին ցեղն ու այժմյան բարբառը տերիտորիայով զուգադիպում են միմյանց» (Հայ բարբառագիտություն, էջ 65): Նույն միտքն է արտահայտում նաև 1958 թ. Շնկատելի է, որ մեր բարբառաճյուղերը ներկայացնում են ցեղախմբերի հին դասավորության աշխարհագրական վիճակը» (ՊՔՀ, 1958, № 3, էջ 269): Այն միտքը, թե հայերեն բարբառները բռնում են այն տերիտորիաները, որտեղ ապրել են հայեր, կամ հայացած օտարալեզու ցեղեր, պարզապես նշանակում է, թե հայերեն բարբառները տարածվում են հայ ժողովրդի գրաված պատմական տերիտորիայում, կամ այլ կերպ՝ պատմական Հայաստանում: Այս մտքերը նորություն չեն. ո՞ւմ չէ հայտնի, որ հայերեն բարբառներ չէին կարող առաջանալ Իտալիայում, Միջին Ասիայում, Ամերիկայում, կամ այլուր, որ նրանք կարող էին առաջանալ միայն այն վայրերում, որտեղ ապրել են հայ ժողովրդի հատվածները: Ինչ

վերաբերում է այն պնդումին, թե նախկին ցեղերի և այժմյան բարբառների կամ բարբառաճյուղերի գրաված տերիտորիաները համընկնում են իրար, ապա սա բացահայտ թյուրիմացություն է: Տրիդրիխ էնգելսը իր «Տրանկյան բարբառ» աշխատության մեջ ասում է, թե ցեղն ու բարբառը համընկնում են՝ նկատի ունենալով ֆրանկյան բարբառն ու նրանով խոսող ցեղը, պատմական որոշ դարաշրջանի սահմաններում: Ա. Ղարիբյանը Ֆ. էնգելսի այդ ասույթը թյուր մեկնաբանությունը ուզում է կիրառել հայերեն բարբառների ուսումնասիրության մեջ, առանց նկատի ունենալու դարաշրջանների տարբերությունը: Որ տոհմատիրական հասարակարգում տոհմը և բարբառը, կամ ցեղը և բարբառը նույնանում են տերիտորիալ տեսակետից, սա միանգամայն հասկանալի է և պատմականորեն օրինաչափ: Բայց երբ այժմյան բարբառների կամ թեկուզ զարգացած ֆեոդալիզմի դարաշրջանի բարբառների գրաված տերիտորիաները նույնացվում են մինչէթնիկական դարաշրջանի ցեղերի տերիտորիաների հետ, ապա սա ոչ մի ընդհանուր բան չունի Ֆ. էնգելսի ասույթի հետ և աղավաղում է պատմական իրողությունը: Հայտնի է, որ ժողովրդի կազմավորումը խախտում է ցեղային կազմակերպության հիմքերը, խառնում ու խաչավորում ցեղերը, վերացնում տերիտորիաների ցեղային ու տոհմային սահմանները: Տրիդրիխ էնգելսը հիանալի կերպով լուսաբանում է այդ պրոցեսը այսպես. «Ինչպես որ ամերիկացիների մոտ էր, ֆրատրիան մի քանի դուստր տոհմերի բաժանված և նրանց միացնող սկզբնական մի տոհմ էր և հաճախ նրանց բոլորին դեռ սերում էր մի ընդհանուր նախահորից: ...Մի քանի ազգակից ֆրատրիաներ կազմում են ցեղ: Ատտիկայում կար շորս ցեղ, յուրաքանչյուրը երեք ֆրատրիայից, որոնցից ամեն մեկը երեսուն տոհմից էր բաղկացած: ...Բարբառի տարբերություններն ավելի քիչ էին զարգացած համեմատաբար փոքրիկ երկրամասի վրա խիտ տեղավորված հույների մեջ, քան թե ամերիկյան լայնատարած անտառներում, սակայն այստեղ էլ մենք տեսնում ենք, որ միայն միևնույն հիմնական բարբառով խոսող ցեղերն են, որ ավելի մեծ միություն են կազմում, և մինչև անգամ փոքրիկ Ատտիկայում մենք հանդիպում ենք առանձին բարբառի, որ հետագայում տիրապետող դարձավ իբրև հունական ամբողջ արձակի լեզու: ...Հերոսական դարաշրջանում աթենացիների շորս ցեղերն ապրում էին Ատտիկայում դեռևս միմյանցից բաժանված երկրամասերում. մինչև անգամ, ըստ երևույթին, այդ շորս ցեղերը կազմող տասներկու ֆրատրիաները դեռևս տեղավորված էին ջոկ-

ջոկ կիրոպսի տասներկու քաղաքներում... Հողատիրությունների գեման ու վաճառման շնորհիվ, աշխատանքի հետզհետե աճող բաժանման շնորհիվ երկրագործության ու արհեստի, առևտրի ու ճավագնացության միջև՝ պետք է շատ շուտով իրար խառնվեին տոհմերի, ֆրատրիաների և ցեղերի անդամները. ֆրատրիայի ու ցեղի բնակավայրում բնակվեցին այնպիսի մարդիկ, որոնք հայրենակիցներ էին, բայց այս կազմակերպություններին չէին պատկանում, հետեվաբար՝ իրենց սեփական բնակավայրում օտար էին: Չէ՞ որ յուրաքանչյուր ֆրատրիա և յուրաքանչյուր ցեղ խաղաղ ժամանակ ինքն էր կառավարում իր գործերը՝ առանց Աթենքի ժողովրդական խորհրդին կամ Բասիլևսին դիմելու: Իսկ ով որ ապրում էր ֆրատրիայի կամ ցեղի բնակավայրում, բայց չէր պատկանում նրան, վերջինս կառավարելու գործում նա իհարկե չէր կարող մասնակցություն ունենալ: Այդ բանն այնպես խանգարեց տոհմական հասարակարգի մարմինների կանոնավոր գործունեությունը, որ արդեն հեցոսական շրջանում դրա առաջն առնելու կարիք զգացվեց: Մտցվեց Թեսեսին վերագրվող կոնստիտուցիան: Փոփոխությունն ամենից առաջ այն էր, որ Աթենքում մի կենտրոնական վարչություն հաստատվեց, այսինքն՝ գործերի մի մասը, որ մինչև այն ժամանակ ինքնուրույնաբար տնօրինում էին ցեղերը, հայտարարվեց համաժողովրդական նշանակություն ունեցող և հանձնարարվեց Աթենքում նստող ընդհանրական խորհրդին: Սրա շնորհիվ աթենացիներն իրենց զարգացման մեջ ավելի առաջ գնացին, քան բնիկ ժողովուրդներից որևէ մեկն Ամերիկայում. լոկ իրար կողմի ապրող ցեղերի միության փոխարեն առաջ եկավ նրանց միաձուլումը, որպես մի միասնական ժողովուրդ»¹: Ինչպես տեսնում ենք, այստեղ ժողովրդի կազմավորումը տեղի է ունենում տոհմերի ու ցեղերի ձուլման, իրար խառնվելու պրոցեսով, որ պայմանավորված էր աշխատանքի բաժանման հետ: Բայց հույն ժողովրդի կազմավորումը հիմնականում արենակից ցեղերի միաձուլում էր. իսկ եթե արենակից ցեղերը ձուլվում ու խառնվում են ժողովրդի կազմավորման ժամանակ, ապա այդ խառնվելն ու խաչավորվելն է՛լ ավելի ուժեղ կերպով է տեղի ունենում այն ժամանակ, երբ դրանց հետ միասին նույն ժողովրդի կազմի մեջ մտնում են նաև օտար, ոչ արենակից այլալեզու տոհմեր: Ընթացիկ, թե Արարատյան դաշտավայրում մինչև

¹ Ֆ. էնգելս, Բնտանիքի, մասնավոր սեփականության և պետության ծագումը, Երևան, 1948, էջ 136—137, 144—145 (ընդգծումները մերն են—Է. Ա.):

հայ ժողովրդի կազմավորվելն ապրում էին մի քանի ցեղեր. հայ ժողովրդի կազմավորման ժամանակ, երբ հայերը ներթափանցեցին այդ տերիտորիան, բնականաբար այդ ցեղերի մի մասը ուղնշացավ, իսկ մյուս մասը խառնվեց հայերին, իսկ սա էլ հենց վերացրեց ցեղային բաժանումներին համապատասխանող տերիտորիալ սահմանազատումները և հիմք դրեց նոր, ստրկատիրական հասարակարգի հարաբերություններով պայմանավորված տերիտորիալ բաժանումների: Ֆեոդալիզմի դարաշրջանում էլ նոր կարգի բաժանումներ ստեղծվեցին: Հասկանալի է, որ այս բոլոր պրոցեսներն իրենց արտահայտությունն են գտել լեզվի ճյուղավորման կամ միասնականացման մեջ, և այժմյան բարբառներն ուղղակի կերպով նույնացնել նախահայկական ցեղերի տերիտորիալ բաժանումների հետ, նշանակում է անտեսել այդ բոլորը: Շոշափելի փաստերով խոսելու համար բերենք հետևյալ օրինակները. Արարատյան ընդարձակածավալ դաշտավայրում տարածված է մեկ բարբառ, Մեղրիում և նրանից յոթ կիլոմետր հեռավորության վրա գտնվող Կարձևանում խոսում են երկու տարբեր բարբառներով, որոնք միևնույն ճյուղին են պատկանում, Մեղրիից նույնպես յոթ կիլոմետր հեռավորության վրա գտնվող Շվանիձորում խոսում են Ղարաբաղի բարբառի մի խոսվածքով, իսկ Ղարաբաղի բարբառը պատկանում է Ում ճյուղին: Եթե հավատանք Ա. Ղարիբյանին, պետք է մտածենք, որ այդ երեք գյուղերից ամեն մեկում մի տարբեր ցեղ է ապրելիս եղել, իսկ Արարատյան լայնածավալ դաշտավայրում՝ միայն մեկ ցեղ: Եթե մինչև 1950 թ. Ա. Ղարիբյանը գտնում էր, որ «Բարբառների դասակարգման ձևաբանական սխտեմը գիտական է նաև այն պատճառով, որ նա զուգահեռաբար է բարբառների աշխարհագրական դասավորության» (Համառոտություն հայ բարբառագիտության, էջ 47), որովհետև «Ամեն մի բարբառ երբեմնի անկախ լեզու է» (անդ, էջ 47), ապա դա միանգամայն հասկանալի էր, բայց եթե այժմ էլ այդ նույն դրույթն է պաշտպանում, ապա դա ցույց է տալիս, որ նա դարձյալ այն սկզբունքներով է առաջնորդվում, որոնք հակադիտական է համարում իր վերը բերված հայտարարությունների մեջ: Եվ իրոք էլ այդպես է. նա բերում է սովետական լեզվաբանության ընդունած դրույթները որպես ֆորմուլաներ, բայց հենց որ դրանց լուսաբանությանն է անցնում, դիմում է իր երբեմնի դրույթներին ու մեկնաբանություններին: Ահա դրա ապացույցներից մեկը ևս. խոսելով այն մասին, որ բարբառների վերացումը հնարավոր է միայն սոցիալիստական հասարակարգում, Ա. Ղարիբյանը գրում է. «Ընդ-

ճանուր ազգային լեզուն չի մնում միայն մի խավի սեփականություն, ինչպես բուրժուական հասարակարգում, այլ դառնում է համաժողովրդական, խոսակցական լեզու» (ՊԲՀ, 1958, № 3, էջ 243): Սրանից ինքնին բխում է, թե բուրժուական հասարակության մեջ «ընդհանուր ազգային լեզուն» միայն մի խավի սեփականությունն է, իսկ սա արդեն իսկ հին ֆորմուլայի անսքող կրկնությունն է: Ա. Ղարիբյանը չի ուզում տեսնել, որ բուրժուական հասարակության մեջ լեզուն ընդհանուր ազգային լեզու է, ինչպես ինքն էլ հորջորջում է, հենց այն բանի շնորհիվ, որ նա մեկ խավի սեփականությունը չէ միայն, այլ ամբողջ ազգի:

Այսքանը բավական ենք համարում, որպեսզի ապացուցված համարենք, որ Ա. Ղարիբյանը, շնայած իր հայտարարություններին, կանգնած է մնում իր նախկին տեսակետների վրա, հրաժարվում է հասարակության ու լեզվի զարգացման պատմա-մատերիալիստական ըմբռնումներից և կանգնում պատմության մետաֆիզիկական ըմբռնման դիրքերում: Միայն այդպիսի դիրքավորումը կարող է հանգեցնել այն հակապատմական վարկածին, թե այսօրվա մեր բարբառները կոնսերվացված ձևով ներկայացնում են մեր թվականությանից առաջ XV—VII դարերի համակարգը: Ինչպես ճիշտ կերպով նկատել է Հանս Ֆոգտը, «պատմական հեռանկարի այդ խախտումն էլ հենց հանգեցրել է Ղարիբյանին այն բանին, որ նա ըստ ժամանակի առաջնային է համարում բարբառները, և ոչ դասական հայերենը, և նույնիսկ հին բարբառների բաղաձայնական սխտեմի մեջ է տեսնում ժամանակակից բարբառների դասակարգման հիմքերը»: Հասկանալի է, որ սխալ տեսական հիմքերից ելնելով չի կարելի ճիշտ ընդհանրացումների հանգել և հակապատմական դրույթների վրա հենվելով չի կարելի պատմական պրոցեսի ճիշտ լուսաբանություն տալ: Այս է պատճառն ահա, որ Ա. Ղարիբյանը միանգամայն սխալ վարկած է առաջ բաշում հայերեն բարբառների առաջացման մասին և գլխիվայր շրջված է ներկայացնում այդ պրոցեսը:

Այժմ անցնենք նրա լեզվաբանական վերլուծությունների մեթոդին: Պատմա-համեմատական լեզվաբանության կարևոր սկզբունքներից մեկն այն է, որ որքան ավելի մոտ են լեզվական միավորները ընդհանուր նախածին, այնքան էլ նրանք հնատիպ են. օրինակ, ունենք հայերեն բարբառային մէր, գրաբարյան մայր և

1 Г. Фогт, Заметки об армянском консонантизме, ВЯ, 1961, № 3, էջ 43:

լատիններեն mater ձևերը. այս վերջինը հարազատորեն ներկայացնում է հնիս. mater ձևը, գրաբարյան մայր-ը ներկայացնում է այդ նախածակի փոփոխությունը որոշ օրինաչափությամբ (ter > jr), իսկ բարբառային մէջ ձևն էլ ներկայացնում է մայր-ը, այլ է փոփոխությամբ. նշանակում է, մայր ձևն ավելի հնատիպ է և հին, քան մէջ ձևը: Առանձին օրինակից ընդհանուրին անցնելով, կարելի է հետևել ընդհանուր դրույթին հանգել. որքան տվյալ լեզվական համակարգը մոտ է նախալեզվի համակարգին, այնքան հնատիպ է, և որքան ավելի տարբեր է, այնքան ավելի նորատիպ է: Այս դրույթից հինքին բխում է այն, որ եթե գրաբարյան համակարգն է մոտ. հընդհարուպական նախալեզվին, ապա նա ավելի հնատիպ է, իսկ եթե բարբառների քերականական համակարգն է ավելի մոտ, ապա նրանք են հնատիպ: Իհարկե, հնարավոր է, որ առանձին դեպքերում այս ընդհանուր կանոնը խախտվի մասնավոր, առանձին իրողության ընդհանուր կանոնը խախտում էլ պատմա-համեմատական մեթոդներին մեջ, բայց այդ դեպքում էլ պատմա-համեմատական մեթոդը ձգտում է պարզել խախտման պատճառներն ու դարձյալ տարբերել նորը հնից: Ա. Ղարիբյանը թեև փորձում է կիրառել պատմա-համեմատական մեթոդը, բայց հաշվի չի առնում այդ կարևոր սկզբունքը և, բնականորեն, սխալ վերլուծությունների ուղին է բռնում: Այսպես, ելնելով այն փաստից, որ մեր բարբառների խոնարհման հոլովման համակարգը գերազանցապես կցական է, իսկ գրաբարինը՝ թեքական, նա եզրակացնում է, թե բարբառների համակարգն ավելի հնատիպ է ու հին, քան գրաբարինը: Սրան համապատասխան էլ նա կատարում է լեզվական իրակությունների վերլուծությունը, երբեմն կանգ չառնելով նույնիսկ տվյալների աղավաղման առջև: Այսպես, խոսելով քերականական կառուցվածքի մասին, նա գրում է. «Հնդկերեն, հունարեն, լատիններեն և, հատկապես, գրաբար լեզուներն իրենց առաջանալու պրոցեսում հնդեվրոպական բարձր ամբողջ կազմությունը վերախմաստավորեցին, երկձևությամբ կառուցվածքը վերածելով եռաձևությամբ կառուցվածքի, ըստ որում հիմքի վերջի ձայնավորը վերախմաստավորեցին որպես քերականական անկախ ձևությամբ, դարձնելով նրան հոլովման և խոնարհման նշան կամ թեքման նշան: Օրինակ՝ հնդեվր. vedo-bis > գրբ. գետ-ո-ով» (ՊԲՀ, 1958, № 3, էջ 255): Նախ, հնդեվրոպական vedo-bis ձևը, որ մի քանի անգամ է հիշվում, պարզապես աղավաղված է. հնիս. գործիականի եզակիի վերականգնվող ձևն է՝ *vedo-bhi: Աղավաղված է նաև հայերեն ձևը, մի հավելյալ ա-ի ներմուծումով, իր պնդումին հարմարացնելու միտումով. բայց ո՞ւմ չէ հայտնի, որ գրաբարում

գետ-ո-ով ձև չկա. կա միայն գետով: Վերջապես, այն պնդումը, թե, իբր, հնդեվրոպական լեզուն երկձևությամբ էր, չի համապատասխանում իրականության. հնդեվրոպական հոլովման և խոնարհման մեջ ունենք և՛ երկձևությամբ, և՛ եռաձևությամբ, և՛ նույնիսկ քառաձևությամբ կազմություններ. գրաբարում հնդեվրոպական թեմատիկ ձայնավորը կամ վերածվեց ուղղակի վերջավորության, ինչպես, օրինակ, սեռականում, կամ միացյալ վերջավորությանն ու նրա անբաժան մասը դարձավ (հմմտ. ով, իւ, -աց, -ից, է և այլն): Ուտի և հնիս. *ved-o-bhi եռաձևությամբ կազմությունից ունեցանք գետ-ով երկձևությամբ կազմությունը: Ինչպես տեսնում ենք, փաստերի վերլուծությունը կատարված է կամայական կերպով, առանց համեմատական քերականության տվյալները հաշվի առնելու:

Խոսելով խոնարհման երևույթների մասին, Ա. Ղարիբյանը իր կարծիքն ապացուցելու համար գրում է հետևյալը. «Մեր բարբառների մի որոշ մասը (Մեղրի, Կարճևան, Շաղախ, Ղարադաղ և այլն) անցյալ կատարյալի համադրական ձևերը չունի, դրա փոխարեն գործ է ածում վաղակատար դերբայով կազմվող վերլուծական ձև (ՂՂ. վարալ ըմ > վարեցի, Կարճև. գյիրէլ ըմ > գրեցի, Ագուլիս՝ թակալ ըմ > թակեցի, Ատտիալ՝ սիրէլ իմ > սիրեցի և այլն): Այդ վերլուծական ձևերը նույնն են սլավոնական լեզուների պերֆեկտի և պլուսկվամպերֆեկտի հետ (писал есмь..., писал былъ): Պարզ է, որ այդ ձևերը գալիս են հնդեվրոպական նախամայր լեզվի վիճակից» (անդ, էջ 259): Ա. Ղարիբյանը չի էլ նկատում, թե ինչպես է ինքն իրեն հերքում. թե՛ սլավ. писал есмь..., писал былъ և այլն և թե՛ մեր բարբառների վառալ ըմ, թակալ ըմ և այլ ձևերը վերլուծական են, այո՛, բայց նրանք կազմված են դերբայից ու օժանդակ բայից, իսկ օժանդակ բայի есмь, был, ըմ (= եմ) ձևերը, որ հնդեվրոպականից են գալիս, արդեն համադրական ձևեր են: Որպեսզի առաջանար վառալ ըմ < գրբ. վարեալ եմ ձևը, պետք էր ունենալ եմ օժանդակ բայը, ուրեմն եմ-ը նախորդել է վարեալ եմ կազմությանը, իսկ այդ նշանակում է, թե համադրական սիստեմն ավելի հին է, քան վերլուծականը: Մենք այս առթիվ երկար խոսելն ավելորդ ենք համարում, որովհետև հնդեվրոպական լեզվաբանությանը քիչ թե շատ ծանոթ ամեն ոք գիտե, որ բոլոր հնդեվրոպական հին լեզուները թեքական կառուցվածք ունեն և միայն նոր լեզուների մի մասն է, որ անցել է կցականության: Հայերենը այդ պրոցեսից բացառություն չի կազմել: Այստեղ մի հակասության մասին ենք ուզում խոսել միայն. Ա. Ղարիբյանը գտնում է, որ վերլուծա-

կան կառուցվածքն ավելի հին է, քան՝ համադրականը և այդ ապացուցելու համար բերում է Կարճևանի, Ազուլիսի, Ղարաբաղի և մի քանի ուրիշ բարբառների տվյալները. բայց չէ՞ որ այդ բարբառները նա համարում է գրաբարին ժամանակակից կամ նրանից հետո առաջացած: Եթե վերլուծական կառուցվածքը նախնական համարեինք, ապա՝ հետևողական լինելու համար, բոլոր բարբառները գրաբարից հին պետք է համարեինք, որովհետև բոլորն էլ վերլուծական կառուցվածք ունեն: Ինչպես տեսնում ենք, Ա. Ղարիբյանը չի կիրառում պատմա-համեմատական մեթոդի ոչ մի կարևոր դրույթը, իր վերլուծությունների մեջ հաշվի չի առնում պատմական տրվյալները, իսկ դա հանգեցնում է անխուսափելի սխալների: Ի դեպ, մի տեղ նա շատ լավ բնորոշում է իր մեթոդը. «Մենք դասակարգումը կատարելիս, համեմատության ելակետը վերցրել ենք գրաբարի սխտեմը: Բայց չէ՞ որ հայտնի է, որ գրաբարի սխտեմն ինքն ստացվել է հնդեվրոպականից առաջին լրիվ տեղաշարժի միջոցով. հետևաբար, այդ սխտեմը իբրև համեմատության ելակետ վերցնելը սոսկ աշխատանքային պրիոմ է և բնավ չի արտացոլում բարբառների զարգացման իսկական պրոցեսը» (անդ, էջ 251): Այստեղ արդեն որոշակի կերպով ասված է ամեն ինչ. այն, որ գրաբարի ու բարբառների միավորները համեմատվում են իրար հետ որպես պատմականորեն իրար հաջորդած ձևեր, Ա. Ղարիբյանը դիտում է որպես սոսկ աշխատանքային պրիոմ, պայմանական մի բան, որ չի արտացոլում պատմական պրոցեսը: Միայն այդպիսի մոտեցումը կարող էր թույլ տալ բարբառային վառալ ըմ, գլիբլ ըմ, քակալ ըմ, սիրել ըմ ձևերից հանել գրաբարյան վառեցի, գրեցի, քակեցի, սիրեցի ձևերը (հմմտ. վարալ ըմ > վարեցի, սիրել ըմ > սիրեցի և այլն. անդ, էջ 259), կամ ջօնչ, իեօն, ֆօսօն, գաշքօմ ձևերից՝ նանն, իջան, ֆսան, կարդամ ձևերը (Հայ բարբառագիտություն, էջ 108) և այլն, և այլն: Հարց է առաջանում, ո՞ւմ է հարկավոր այն աշխատանքային պրիոմը, որ աղավաղում է պատմական իրողությունը: Պատմա-համեմատական մեթոդը լեզվաբանության մեջ ընդունված է հենց այն պատճառով, որ նա հնարավորություն է տալիս վեր հանելու պատմական պրոցեսը. Ա. Ղարիբյանը դիտում է այդ մեթոդը որպես պայմանական մի բան, քմահաճորեն շրջադրում պատմական տվյալները և, հրաժարվելով իսկական պատմա-համեմատական մեթոդից, կանգնում լեզվաբանական իրակությունների «վերլուծության» իր նախկին մեթոդի վրա:

Մենք չենք ուզում կանգ առնել հայերենի բաղաձայնական սխ-

տեմի մասին արտահայտած նրա վարկածի քննության վրա, որին հանգամանորեն անդրադարձել ենք մենք, պրոֆեսորներ Գ. Սևակը, Գ. Զահուկյանը և Ս. Ղազարյանը վերը հիշված հոդվածների մեջ: Այդ հարցը այժմ քննարկման առարկա է դարձել միջազգային մասշտաբով, և բնականաբար իր սպառիչ լուծումը կստանա շուտով: Կուզեինք միայն հետևյալ դիտողությունն անել. Ա. Ղարիբյանը մասնավոր երևույթներն ընդհանրացնելով, սովորաբար այնպիսի ընդհանուր եզրակացությունների է հանգում, որոնք զուրկ են որևէ հիմքից: Այսպես, օրինակ, խոսելով բայերի կրավորական խոնարհման մասին, նա գտնում է, որ ը մասնիկով կրավորականի կազմությունը ավելի հին է, քան գրաբարյան կրավորականի ձևը. որ դա ճիշտ չէ, բոլորին հայտնի է, և մենք չենք ուզում դրա քննությանն անդրադառնալ: Բայց նա այդքանով չի բավականանում. այդ մի տվյալը նա բավական է համարում, որպեսզի եզրակացնի, թե բարբառների քերականական կառուցվածքն ավելի հին է, քան գրաբարին: Այդպես էլ, խոսելով բարբառների բաղաձայնական համակարգի մասին, նա իսկույն եզրակացնում է, թե տարբեր բաղաձայնական սխտեմները համապատասխանում են հայերի պատմական Հայաստանում տարածվելու պրոցեսին, մինչդեռ պատմական տվյալները հերքում են այդ վարկածը:

Այս բոլորից կարելի է միայն մեկ եզրակացության հանգել. թեև իր վերջին շրջանի աշխատությունների մեջ Ա. Ղարիբյանը հայտարարում է, թե հրաժարվելով նախկին դրույթներից, նոր սկզբունքներով է առաջնորդվում, բայց ինչպես տեսնում ենք, իր լեզվաբանական վերլուծություններով նա հարազատ է մնում նախկինում որդեգրած մեթոդին: Իսկ դրա մեջ մենք չենք կարող շտեմել վնասակար հետևանքը այն բանի, որ նա իր նախկին աշխատությունների մեջ բերված փաստական նյութի վերլուծությունները ճիշտ է համարում:

Վերջապես, մեզ մնում է խոսել այն մասին, թե Ա. Ղարիբյանը ինչպիսի՞ բարեխղճությամբ է ուսումնասիրում լեզվական նյութը, ինչպիսի՞ գիտելիքների վրա է հենվում և գիտական պատասխանատվության ինչպիսի՞ զգացումով է ղեկավարվում: Ասել ենք, որ Ա. Ղարիբյանի գիտական հետազոտությունների հիմնական նյութն են կազմում հայերեն բարբառները: Բարբառների նկարագրությունը, բնականաբար, պահանջում է խիստ մանրակրկիտ աշխատանք. քերականական մի սխալ ձև, բառերի արտասանության մի սխալ գրություն, հնչյունական օրենքների շփոթություն և այլն, կարող են

բարբառագիտական աշխատանքների մեջ հսկայական թյուրիմացությունների տեղիք տալ: Այդ է պատճառը, որ բարբառագիտական աշխատությունների մեջ ամեն մի շեղում, ամեն մի բացառիկ ձև հատուկ քննության նյութ է դառնում, իսկ ամեն մի օրինաչափություն հիմնավորվում բազմաթիվ տվյալներով: Ա. Ղարիբյանի մոտ, ցավոք սրտի, բարբառների նկարագրության մեջ այս պահանջը սովորաբար չի բավարարվում. նրա ուսումնասիրությունների մեջ գրեթե չկա մի հնչյունական կանոն, որ հիմնավորված լինի բավականաչափ տվյալներով և զատված մասնակի երևույթներից: Այսպես, օրինակ, Կարճեանի բարբառի հնչյունաբանական երևույթների նկարագրության մեջ գրում է, թե գրաբարի քա ձայնավորի դիմաց ունենք ա, ւ, է, ի, օ ձայնավորները («Հայ բարբառագիտություն», էջ 305), մինչդեռ ա > օ, ա > ի փոփոխությունները ներկայացնում են առանձին, խիստ սահմանափակ դեպքեր, իսկ մյուսները՝ որոշակի օրինաչափություններ¹: Նույն բարբառի ձևաբանության նկարագրության մեջ հոգնակի թեք հոլովներում ր-ի փոխարեն դնում է ո (հարօռուն, քարօռուն և այլն), որ ճիշտ չէ: Նույն բարբառի հնչյունների նկարագրության մեջ գրում է. «Կարճեանի բարբառում կա կոշտ ք, որ նշանակում ենք ը՝ (ը^օ) գրով» (անդ, էջ 305): Կարճեանի բարբառում այդպիսի ք գոյություն չունի: Վերջապես, խոնարհման համակարգի նկարագրության մեջ սահմանական ներկայի համար բերում է մնայ յիմ, մնայ յիք, մնայ յին և նման ձևերը, որոնք պետք է լինեն մնայ իմ, մնայ իս ևն²: Այսքան անճշտություն մեկ բարբառի, ընդամենը 21 էջ գրավող նկարագրության մեջ, որի մեծ մասն էլ հոլովման ու խոնարհման տախտակներն են կազմում (18 էջ): Բայց դա այդպես է ոչ միայն մեկ բարբառի վերաբերյալ. ահա և «Հայերենի նորահայտ բարբառների մի նոր խումբ» աշխատությունը: Խոսելով Արամոյի բարբառում ձայնավորների կրած փոփոխությունների մասին, մոտավոր կերպով սահմանած զանազան կանոնների տակ բերում է հետևյալ օրինակները. ամիս > ամայս, բակլա > պազլո, երկաթ > րզաթ և այլն, և այլն, որոնք, սակայն բառարանում ունեն բոլորովին ուրիշ ձև (ամիս — ամայս, բակլա > պազլո¹⁰, երկաթ > րզաթ ևն, տե՛ս էջ 17—19 և 57—61). բայց այդ կարգի օրինակները բազմաթիվ են,

¹ Մանրամասնություններ տե՛ս 2. Գ. Մուրադյան, Կարճեանի բարբառը, Երևան, 1960, էջ 16—26:
² Տե՛ս 2. Գ. Մուրադյան, Կարճեանի բարբառը

որոնք բերել ավելորդ ենք համարում: Խոսելով այն մասին, որ Արամոյի բարբառը գրք. ծ-ի փոխարեն ունենում է գ, գրում է. «Հայտնի է, որ հայերենի ծ-ն առաջացել է հնդեվրոպական ետնալեզվային ց² հնչյունից, որը հայերեն լեզվում պետք է տար «ձ» աֆրիկատը, սակայն առաջին տեղաշարժի ենթարկվելով՝ վերածվում է գրաբարի «ծ» աֆրիկատի: Արամոյի բարբառը այդ տեղաշարժը չի կատարում, այլ հնդեվրոպական հնչյունը վերածում է «գ» ձայնեղի, ինչպես սլավոնական լեզուները: Օրինակ՝ հնդ.-ելք. ց²en, սլավ. շձե, հայեր. ծին — ծնանել — Արամոյի բարբառ դնանել» (էջ 11): Այս մի փոքրիկ մեջբերումն ունի հետևյալ անճշտությունները. հայերեն ծ-ն առաջացել է ոչ թե հնդեվրոպական ետնալեզվային ց² հնչյունից, այլ քիմքային կամ միջնալեզվային ց¹-ից. հնդեվրոպական ց²-ն սլավոնականում դառնում է ոչ թե գ, այլ զ կամ ժ (հնդ. ց ից և ի-ից առաջ), օրինակ՝ հնդ. ց²iya, ավեստ. gayō «կյանք», հու. ЖИВЪ, հայ. կեամ ևն: Այնուհետև. ինչպես ցույց են տալիս իր իսկ կազմած բառացանկի տվյալները, գրաբարյան ծ-ի դիմաց Արամոյի բարբառը գ ունի միայն բառասկզբում և այն էլ ոչ թե միայն հնդեվրոպական, այլև փոխառյալ բառերում, որ նշանակում է, թե շատ ուշ տեղի ունեցած երևույթ է. օրինակ, գրք. ծանք բառի դիմաց Արամոյի բարբառն ունի զուևզուր ձևը (էջ 64). արդ, հայ. ծանք բառը փոխառյալ է վրացերենից, և որպեսզի նրա ծ հնչյունը վերածվեր գ-ի, պետք է նախ դառնար ձ: Ուրիշ դիրքերում ծ > ձ փոփոխությունը (օր. այծ > ւձ, ածել > աձձէլլ ևն) հաստատում է այս բացատրությունը: Այսպիսի անճիշտ դատողությունները հետևանք են հապճեպ, ոչ գիտական բարեխղճությանը կատարված աշխատանքի և անհրաժեշտ գիտելիքների պակասի: Ըստ որում, այս վերջինը իրեն զգալ է տալիս Ա. Ղարիբյանի գրեթե բոլոր աշխատությունների մեջ: Այսպես, օրինակ, նույն գրքում գրում է. «Այս բոլորից, սակայն ամենանշանավոր երևույթն այն է, որ Արամոյի բարբառը պահպանել է հնդեվրոպական նախալեզվի երկու դերանուն, որոնք կորած են հնդեվրոպական շատ լեզուների մեջ, այդ թվում նաև գրաբարում: Այս դերանուններն են «չի» հնդեվր. kʷi և «ի» հնդեվր. i-s: Արամոյի բարբառում kʷi դերանունը հարցական է և ունի «չա՞» տեսքը, որ առաջացել է «չի» ձևից, քանի որ բաց վանկում «ի»-ն արտասանվում է «այ»: Այս դերանունը կա հետևյալ լեզուներում. հնդեվրոպ. qʷi > kʷi = սանսկրիտ ki — m = իրան. ʕi-s = լատ. qui-s = հին սլավ. ѿi-to = Արամոյի բարբառ՝ չա: Երկրորդ դերանունը Արամոյի բարբառում գործ է ածվում որպես ցուցական-

անձնական դերանունն երկրորդ դեմքի համար, երբ կարիք է զգացվում գործածելու իբրև ուղիղ խնդիր («զնա» կամ «զայն» իմաստով).... Ըստ Արամոյի բարբառի օրենքների «զն» առաջացել է «զի» ձևից, որի «զ»-ն նախդիր է, մնում է «ի» որպես ցուցական դերանուն: Այդ դերանունը հնդեվրոպական լեզուների մեջ հետևյալ պատկերն ունի. հնդեվրոպ. նխլ. i-s = սանսկր. i-m, i-d = լատ. i-s, i-d = գոթ. i-s = լիթ. j-i-s = Արամոյի բարբառ գ-ի: Այս դերանունը պահպանվել է հին սլավոնական լեզվում и-же բառի մեջ, ապա նաև ածականների վերջավորությունների մեջ՝ «добры»-и: Այսպիսով, Արամոյի բարբառը ոչ միայն գրաբարին է մոտ, այլև պահպանել է հնդեվրոպական նախալեզվից այնպիսի լեզվական փաստեր, որոնք չկան այլ լեզուներում: Դա բարբառի լուրջ ներդրումն է պատմահամեմատական լեզվաբանության մեջ» (էջ 55): Քննենք ուրեմն այդ «ներդրումը». նախ՝ այն հայտարարությունը, թե Արամոյի բարբառը պահպանել է երկու դերանուն, որոնք «չկան այլ լեզուներում», բացահայտ թյուրիմացություն է, որ հերքվում է հենց հեղինակի հիշած տվյալներով. հնխ. i-s դերանունը պահպանված է սանսկրիտ, լատիններեն, գոթերեն, լիտվաներեն և այլ լեզուներում: Երկրորդ, հնխ. qui > k²i դերանվան երկու ձևերից (o և i ձայնավորներով) ստացվել են հայերենի a (ով) և ի (իբ, զի ևն) դերանունները, մինչդեռ Ա. Ղարիբյանը գրում է, թե գրաբարը չի պահպանել դրանք: Այնուհետև Արամոյի «ա հարցականը կապ չունի հնխ. qui-ի հետ, այլ կամ հայերեն ինչի (=ինչու) հարցականի կրճատումով է ստացվել («ինչի» > ընչի > չի > չն) կամ էլ պարզապես փոխառություն է (հմմտ. պրսկ. չի «ինչ»): Վերջապես, զն ցուցական դերանունը նույն ի դերանունն է զ որոշիչի հետ, որով և անորոշից վերածվել է ցուցականի: Ի դեպ, Ա. Ղարիբյանը գրում է, թե դա երկրորդ դեմքի դերանունն է, բայց թարգմանում է «զնա», «զայն». ո՞րն է ձիշտը: Մի այլ տեղ, խոսելով այն կարծիքի մասին, թե մեր բարբառների շնչեղ ձայնեղները հնխ. համապատասխան հնչյունների շարունակությունը չեն, այլ նրանց վերածումը գրաբարյան պարզ ձայնեղների, ապա կրկին՝ շնչեղացումը, նա գրում է. «տեղի է ունեցել մի տեսակ հնչյունական ատավիզմ: Սովորաբար ընդունված է ատավիզմը համարել այլասերման երևույթ: Իհարկե, այդպիսի ատավիզմ լեզվի մեջ չի լինում, և հայերենի մեջ էլ չի եղել» (ՊՔԶ, 1958, № 3, էջ 245): Ակներևաբար Ա. Ղարիբյանին ծանոթ չէ այն փաստը, որ լեզվաբանության մեջ շատ հայտնի երևույթ է լեզվական երևույթների հետագարձ շարժումը, որ ունի հատուկ ան-

վանում էլ՝ ռեգրես (հնչյունական ռեգրես, ձևաբանական ռեգրես և այլն), հայերեն՝ հետադարձ (հնչյունական հետադարձ, ձևաբանական հետադարձ և այլն), հավանաբար նա այդ տերմինին էլ ծանոթ չէ և այդ պատճառով էլ ստիպված է իրեն՝ հարմար թվացող տերմին ստեղծել (ատավիզմ): Ուրիշ լեզուները մի կողմ թողնելով, դիմենք հայերենին. հնխ. e ձայնավորը ռեգայիններից առաջ դառնում է ի (օր. seno > հին). Մեղրու բարբառում այդ ի-ն վերստին դարձել է է (հին > հէն). հնխ. o-ն ռեգայիններից առաջ դառնում է ու, իսկ Մեղրու բարբառում վերստին վերածվում է օ-ի (հում > հօմ) և այլն: Սրանք լեզվական հայտնի փաստեր են: Նույն «Հայ բարբառների ծագման հարցի շուրջը» հոդվածում նա գրում է. «Ընդ պրն-դում ենք, որ հայ բարբառներում գոյություն ունեցող շնչեղ ձայնեղների համակարգը ժառանգված է նախամայր լեզվից, որը միակ լեզուն է աշխարհում, որ ունեցել է այդ համակարգը» (ՊՔԶ, 1958, № 3, էջ 249): Կատեգորիկ այս պնդումը պարզապես անտեղյակություն արդյունք է: Հնդեվրոպական նախալեզուն, որ Ա. Ղարիբյանը «նախամայր լեզու» է կոչում, միակ լեզուն է աշխարհում, որ ունեցել է շնչեղ ձայնեղների համակարգը. իսկ բիրմանական, մուսուլմանական լեզուները. իսկ հնագույն չինարենը: Ծնչեղացած ձայնեղների գոյությունը ենթադրվում է ոմանց կողմից նույնիսկ գիլակերենում, աֆրիկյան լեզուներում, դրավիդյան լեզուներում և այլն¹: Տեղուգու լեզուն, օրինակ, ունի շնչեղացած ձայնեղների հետևյալ հինգ շարքը՝ bh, dh, dh, jh, gh, որ հնչույթային արժեք ունի²: Դեռ ավելին. հնդեվրոպաբաններից ոմանք այն տեսակետն են պաշտպանում, թե հնդկական լեզուների շնչեղացած ձայնեղները Հնդկաստանի նախաբնիկների լեզուներից են մնացել: Այս բոլորին անտեղյակ լինելով՝ այդպիսի վճռական հայտարարություն անելը խի՛ստ մեծ «խիզախություն» է:

Վերջապես, չի կարելի չհիշել, որ Ա. Ղարիբյանն իր այս կամ այն տեսակետը հիմնավորելու համար կանգ չի առնում նաև բացահայտ խեղաթյուրումների առջև: Այսպես, օրինակ, ապացուցելու համար, որ հայերեն բարբառները գոյություն են ունեցել շատ վաղ ժամանակներում, նա վկայակոչում է Ստ. Սյունեցուն. «Որ հայ

¹ S⁶ Les langues du monde, par un groupe de linguistes sous la direction de A. Meillet et Marcel Cohen, nouvelle édition, Paris, 1952.

² Bhadrirayu Krischnamurti, Telugu verbal Basis, Berkeley and Los Angeles, 1961.

բարբառները առաջացել են շատ վաղ ժամանակներում, այդ մասին ճիշտ կոահել է մեր XI դարի հեղինակը: Նա ասում է. «Եւ եղև թիրութիւն խաւսիցն այսպէս. զնշուք և թոթովատք եղեալ յազգէն, որ յառաջ քան զմեզ, որք ոչ կարէին զընտրութիւն առնել լծորդացն ի խաւսս իրեանց յաղագս մերձատրութեան լծորդացն առ միմեանքս, որպէս բեն՝ մենի, պէի և փիւրի և որք մի ըստ միոչէքն. ավանդեցաւ թիրութիւն խաւսից նոցա որոց իրեանց որպէս զուղղութիւն յաղագս միայն բնակելոյն և ոչ ումեք զոլոյ մերձատր առ նոսա: Եւ էին նոքա նահապետք իւրաքանչիւր գաւառաց յորժամ էին տակաւին նոսազութիւն մարդկան: Իսկ սովորութիւն վարժեալ պահեցաւ իբրև զարէնս յիւրաքանչիւր գաւառի եւ եղեալ անուանակոչութիւն անմարմնոց եւ մարմնոց, աճականացն եւ անաճից» (անդ էջ 243): Տողատակի ծանոթութեան մեջ նշված է. «Н. Адоиц, Дионисий Фракийский и армянские толкователи, էջ 224. մեջբերումն առաջին անգամ բերված է մեր «Հայ բարբառագիտություն» գրքում» (անդ, ծան. 2): Քանի՛-քանի՛ անճշտություն այս մի քանի տողի մեջ. մեջբերված հատվածի հեղինակը XI դարի քերական չէ, այլ VIII դարի նշանավոր քերական Ստեփաննոս Սյունեցին. հատվածը Աղոնցի հիշյալ գրքի 224-րդ էջում չէ, այլ՝ 188 էջում. այդ հատվածն առաջին անգամ իր «Հայ բարբառագիտության» մեջ չի բերված. մինչև այդ էլ շատերն են հիշել այդ, օրինակ՝ Հ. Աճառյանը՝ իր «Հայոց լեզվի պատմության» երկրորդ հատորում (էջ 136): Բայց այս բոլորից ավելի կարևորը հիշյալ հատվածի թարգմանությունն է: Ահա թե ինչպես է թարգմանում Ա. Ղարիբյանը. [«Բարբառների թյուրությունը (ծագումը, աղավաղումը) եղավ այսպես. թվատներ և թոթովախոսներ կային մեզնից առաջ (Հայաստանում—Ա. Ղ.) եղած ազգից (ցեղերից), որոնք իրենց խոսքի մեջ չէին կարողանում լծորդների տարբերություն դնել լծորդների միմյանց մերձավոր լինելու պատճառով, ինչպես բեն՝ (բ) մենին (մ. օրինակ՝ բակմակ—Ա. Ղ.), այսպես նաև այն հնչյունների վերաբերյալ, որոնք միմյանց հետևից էին (այսինքն՝ գ, կ, ք, դ, տ, թ—Ա. Ղ.): Նրանց խոսքն ավանդից նրանց որդիներին որպես ճշտություն այն պատճառով, որ նրանք մենակ էին բնակվում և նրանց մոտ մարդ չկար (այսինքն՝ հայ չկար—Ա. Ղ.): Եվ դրանք յուրաքանչյուրը մի գավառի նահապետներ էին, երբ դեռ մարդկանց քչություն կար (այսինքն՝ տոհմական կարգերի ժամանակ, երբ մարդկային հասարակությունները փոքրաթիվ էին—Ա. Ղ.): Իսկ այս սովորությունը վարժություն դարձավ և պահվեց որպես յուրաքանչյուր գավառի

օրենք (կանոն—Ա. Ղ.) և եղավ (այդպես) անվանադրություն անմարմինների և մարմնավորների, աճականների» (անդ, էջ 243—244): Զարմանալի չէ, իհարկե, որ այդ թարգմանությունից հետո ավելացնում է. «Ինչպես տեսնում ենք, այս հեղինակը գտնում է, որ հայ բարբառները առաջացել են հայ ժողովրդի կազմավորման ժամանակ և, ճիշտ կերպով բացատրելով, ասում է, թե բարբառները առաջացել են, երբ օտարները սովորել են հայերեն լեզուն» (անդ, էջ 244): Անդրադառնալով հիշյալ մեջբերումին և այդ թարգմանությանը, պրոֆ. Գ. Սևակը մանրամասն քննության է առնում Ստ. Սյունեցու հիշյալ հատվածը, տալիս նրա ճիշտ թարգմանությունը և պարզում, «թե ինչ գործողություններ է կատարել պրոֆ. Ղարիբյանը այս «թարգմանության» ընթացքում» (ՊՔՀ, 1959, № 1, էջ 231): Այդ մանրազնի վերլուծության մեջ պրոֆ. Գ. Սևակը ցույց է տալիս բոլոր այն աղճատումները և այն կամայական, սխալ մեկնաբանությունները, որոնք տեղ են գտել վերը բերված թարգմանության մեջ: Ահա այդ քննության համառոտությունը. «1. Բնագրում ունենք «թիրութիւն խաւսիցն» (լեզվի կամ լեզուների աղավաղում), նա դարձրել է «բարբառների թյուրությունը (ծագումը, աղավաղումը)». նախ՝ Ստ. Սյունեցին ոչ մի նպատակ չունի բարբառների մասին խոսելու, որպեսզի խոսեր նրանց աղավաղումների շուրջը, իսկ երկրորդ՝ եթե նա, ինչպես պրոֆ. Ղարիբյանն է կարծում, ենթադրում էր, թե հայ բարբառները ծագել են հայ լեզվի աղճատումով այս կամ այն գավառում, այս կամ այն օտար ցեղի բերանում, ապա տարրական տրամաբանության իսկ պահանջով այստեղ պետք է թարգմանել ոչ թե բարբառների աղավաղում, այլ լեզվի աղավաղում: 2. Ստ. Սյունեցին խոսում է բայի խոնարհման լծորդությունների մասին (բ//մ//պ//փ), ենթադրելով, թե իր գրածը կարդացողը ծանոթ է Դիոնիսիոս Թրակացու բերականությանը, որի մեկնաբանությունն է հենց իր գրածը, մինչդեռ Ա. Ղարիբյանը միանգամայն անտեսելով Թրակացու բերականությունը՝ իրենից մեկնաբանում է, թե այդ լծորդությունները վերաբերում են հայերենի բարբառային բաղաձայնական համակարգին և նույնիսկ բերում է բարբառային օրինակներ «բան-ման», «բան-պան», ըստ որում «բան-ման»-ը ոչ մի կապ էլ չունի «բան-պան» հնչյունափոխությունների այս կամ այն առանձին բարբառի, կամ նույնիսկ բարբառախմբերի հետ... Մի՛թե XX դարի գիտնականը իրավունք ունի այդքան ազատ մեկնաբանություններ անելու՝ առանց խորանալու հինավուրց հեղինակի տեքստի բովանդակության մեջ: 3. Ստ.

Սյունեցիին, նկատի ունենալով լեզուների բաժանման ժամանակ-
 ներում մեկուսացած սակավամարդ ապրող տոհմերի ու ցեղերի վի-
 ճակը՝ գրում է, թե նրանց նահապետների «լեզվի թյուրությունը
 ավանդվեց իրենց որդիներին որպես ճշտություն, քանի որ նրանք
 միայնակ էին ապրում և մոտերքում մարդ չկար»—պրոֆ. Ղարիբ-
 յանը կամայականորեն խմբագրում է. «Նրանց խոսքն ավանդվեց
 նրանց որդիներին որպես ճշտություն այն պատճառով, որ նրանք
 մենակ էին և նրանց մոտ մարդ չկար (այսինքն՝ հայ չկար)»: Դարձ-
 յալ ոչ միայն սխալ թարգմանություն, այլև տարրական տրամա-
 բանության ոտնահարում. եթե այդ նահապետներն ու նրանց որդի-
 ները հայ չէին, ապա նրանց լեզուն ի՞նչ կապ ուներ հայերենի հետ
 և ինչո՞ւ պիտի նրանք աղավաղեին հայերեն բառերը (բան-ման-
 պան-փան), իսկ եթե նրանք հայ էին, ապա ինչպես կարող էր Սյու-
 նեցիին ասել, թե նրանց մոտ ճայ չկար: Այս աղճատ թարգմանու-
 թյունը հար և նման է և մեջբերման սկզբում եղած մի արտահայ-
 տություն թարգմանությանը: Այդ հետևյալն է. 4. Ստ. Սյունեցիին
 Թրակացու և անտիկ լեզվաբանության հասկացողությանը ներդաշ-
 նակ՝ նկատի ունենալով լեզուների բաժանման առասպելը՝ գրում է.
 «մեզնից առաջ եղած ազգի (ժողովրդի, ցեղի—Գ. Ս.) մեջ կային
 թլվատներ և թոթովախոսներ, որոնք չէին կարողանում լծորդները
 տարբերել իրարից» և այլափոխում էին լեզուն և այլն,—պրոֆ. Ղա-
 րիբյանը դարձյալ կամայականորեն աղճատում է այդ միտքը՝ իրե-
 նից ավելացնելով «Հայաստանում» բառը և ազգը (ցեղ, ժողովուրդ)
 թարգմանելով ցեղեր...»¹: Մանրամասնորեն քննության առնելով
 ամբողջ թարգմանությունը և վեր հանելով բոլոր աղճատումներն
 ու սխալները, պրոֆ. Գ. Սեվակը եզրակացնում է. «Ավելորդ է ասել,
 որ, ինչպես մենք պարզեցինք, Սյունեցու այդ մեջբերումը ոչ մի
 խոսք չի ասում— ոչ հայ բարբառների ծագման, ոչ հայոց լեզուն
 օտարների կողմից յուրացնելու, ոչ Հայաստանի ու նրա գավառների
 և ոչ էլ մեր հնչյունական համակարգի տեղաշարժների մասին, հե-
 տեաբար որևէ հիմքից զուրկ են պրոֆ. Ղարիբյանի վերոհիշյալ
 եզրակացությունները, որքանով դրանք բխեցվում են Ստ. Սյունե-
 ցու աշխատությունից, հետեաբար նաև վաղաժամ է այն պնդումը,
 թե «այլ վկայի կարիք չունենք»: Ո՛ր, վկայի կարիք ունենք, բայց
 եթե վկա չենք գտնում, այդ դեռ չի նշանակում, թե մենք իրավունք

¹ Գուրգեն Սեվակ, Հայ բարբառների ծագման հարցի շուրջը, ՊՐԶ, 1959, Մ 1, էջ 231—234:

ունենք որևէ մեկի միանգամայն այլ հարցի մասին տված վկայու-
 թյունը կամայականորեն խմբագրելու ու մեկնաբանելու՝ հարմա-
 րեցնելով մեր պահանջին: Ընկեր Ղարիբյանը, դժբախտաբար, հենց
 այդպես է վարվել տվյալ դեպքում...» (անդ, էջ 234): Մենք ավե-
 րորդ ենք համարում մեր կողմից որևէ բան ավելացնել:

Իր նույն-հողվածի մեջ, խոսելով Հ. Աճառյանի տեսության մա-
 սին, բերում է նրա հետևյալ խոսքերը. «Երբ սկսեց հայերի մեծ ար-
 տագաղթը դեպի զանազան կողմեր, հատկապես դեպի հյուսիս և
 արևմուտք, հաղորդակցության կապը ներքին և արտաքին հայու-
 թյան միջև կտրվեց: Ավելացնենք սրա վրա հայ պետական կյանքի
 շնչումը, մի քաղաքական կենտրոնի բացակայությունը, տարբեր
 տիպի օտար ազդեցություններ զանազան երկրների հայ գաղութնե-
 րում և վերջապես կրթության պակասը,— ահա այն պատճառները,
 որոնք առաջ բերին փոքրաթիվ հայ ժողովրդի մեջ համեմատաբար
 մեծաթիվ բարբառները»¹: Այս մեջբերումը «մեկնաբանելով», պրոֆ.
 Ղարիբյանը եզրակացնում է. «Ասել է թե՛ հայ ժողովուրդը մի ան-
 բաժան լեզվով է խոսել 3500 տարվա ընթացքում, շունենալով ոչ մի
 բարբառ, և միայն վերջին հազարամյակի սկզբին առաջացրել է
 բարբառներ» (ՊՐԶ, 1958, № 3, էջ 241): Դիմենք Հ. Աճառյանին. իր
 «Հայոց լեզվի պատմության» երկրորդ հատորում հայերենի բար-
 բառների ծագման հարցին Հ. Աճառյանը նվիրում է մի հատուկ
 գլուխ (գլուխ ԻԷ. Հայ բարբառների ծագման ժամանակը), որ գրա-
 վում է 78 էջ (362—440): Բազմաթիվ լեզվական տվյալների խորա-
 հմուտ քննությամբ ցույց տալով, որ մի քանի գլխավոր բարբառներ
 (Ազուլիսի, Ղարաբաղի և այլն) արդեն ձևավորվել էին XII դարում,
 իսկ հայ գաղութների բարբառները (շուրջ 20) ձևավորվել են ավելի
 ուշ, եզրափակում է այսպես. «Եթե քսանից ավելի բարբառներ
 ձևացել են վեց դարում, եթե նույնիսկ Նոր-Ջուղայի բարբառը
 ձևակերպվել է երեք դարում, ինչ զարմանք, որ բուն Հայաստանի
 16 բարբառներն էլ կազմված լինեին Ե դարից հետո, 1500 տարվա
 ընթացքում»²: Ինչպես տեսնում ենք, Հ. Աճառյանը գտնում է, որ
 հայերեն բարբառների առաջացումը տեղի է ունեցել սկսած V դա-
 րից, և շատ բարբառներ արդեն ձևավորվել էին մինչև XII դարը:
 Պրոֆ. Ղարիբյանը, սակայն, այնպես է մեկնաբանում, թե իբր, Հ.
 Աճառյանի կարծիքով, հայերեն բարբառներն առաջացել են միայն

¹ Հ. Աճառյան, Հայոց լեզվի պատմություն, Բ մաս, 1951, էջ 324:
² Հ. Աճառյան, անդ, էջ 439:

XI դարից հետո, որպեսզի հետո հայտարարի, թե «ըստ Հ. Աճառյանի, հայերեն լեզուն 3500 տարվա ընթացքում ոչ մի բարբառ չի ունեցել» (անդ, էջ 241):

Խոսելով մեր առաջ քաշած տեսակետի մասին և բերելով մի քանի բարբառների (Ուրմիա, Ղարաբաղ, Մարաղա) տվյալները թուրք-թաթարական փոխառությունների վերաբերյալ, պրոֆ. Ղարիբջանը եզրակացնում է. «Նշանակում է այս բարբառները իրենց բարբառային որակը սկսել են կորցնել (sic) X—XII դարերում, այսինքն՝ ճիշտ այն ժամանակ, երբ ընկեր էղ. Աղայանը ենթադրում է դրանց առաջացումը» (անդ, էջ 248): Նույնպիսի ձևով է ներկայացնում նա իր կողմից «ավանդական» հորոշորչված հայագիտության կարծիքը նաև «Вопросы языкознания» հանդեսում տպագրված հոդվածի հետևյալ հատվածում, որ մենք բերում ենք առանց թարգմանելու. «Традиционная арменистика утверждала также, что армянские диалекты образовались в процессе разложения древнеармянского языка, т. е. образование армянских диалектов явилось результатом перерождения древнеармянского языка, которое выразилось будто бы в постепенном угасании древнеармянского языка к XI в. н. э. и сложении армянских диалектов, начиная с XI—XII вв.» (ВЯ, 1959, № 5, стр. 81—82). Թե ինչ է ասում Ա. Ղարիբջանի կողմից «ավանդական» հորոշորչված դասական հայագիտության խոշորագույն ներկայացուցիչ Հ. Աճառյանը հայերեն բարբառների ծագման ժամանակի մասին, արդեն տեսանք: Այժմ դիմենք այս հարցում նույն հայագիտության հետևորդներից մեկին. Խոսելով նույն հարցի մասին, տողերիս գրողն իր «Նոր հայերեն բարբառների առաջացման հարցի մասին» հոդվածում գրում է. «Այսպես, ուրեմն, եղել են հին հայերեն բարբառներ, որոնք միաձուլվելով տվել են հին հայերեն լեզուն կամ որոնցից մեկը հայ ժողովրդի կազմավորման պրոցեսում ընդհանրացել է, դարձել ընդհանուր լեզուն՝ հին հայերեն համաժողովրդական լեզուն, և կան նոր հայերեն բարբառներ, որոնք առաջացել են հին հայերենից, որ նույնն է թե գրաբարից՝ սաղմնավորվելով II—IV դարերում և զարգանալով հատկապես VII—XII դարերում»¹: Բերենք նաև նույնի ուսանողի շարադրանքը նույն հոդվածի ամփոփումից. «Постепенное развитие этих элементов

приводит к тому, что в V в. мы уже имеем новые диалекты, хотя расхождения между ними не так сильны и выражаются, в основном, в консонантизме (оглушение звонких — в одних, оглушение — аспирирование — в других, и сохранение без изменения — в третьих). Интенсивный процесс дифференциации новых диалектов происходит в последующих веках, в особенности в VII—XII вв., что объясняется ходом истории армянского народа (арабское завоевание, нашествие тюрков - татар и т. д.). Этой же эпохой датируется отмирание древнеармянского языка»¹.

Խոսելով մեր այն դրույթի մասին, որ եղել են հին հայերեն բարբառներ, որոնց մնացորդներից մի քանիսը պահպանվել են նույնիսկ ժամանակակից բարբառների մեջ, պրոֆ. Ա. Ղարիբջանը գրում է. «Բացի ընդհանուրից, բարբառները նախագրաբարյան հայերենի վիճակից սկսած կազմել են նաև ինքնուրույն ձևեր: Ինքը պրոֆ. Աղայանը փորձում է գտնել այդ ինքնուրույն ձևերը, որ նա անվանում է հին բարբառների մնացորդներ: Բայց նա դժբախտաբար այդ որոնում է միայն գրաբարի մեջ, որտեղ համարյա ոչինչ չի գտնի, եթե այդ նույն որոնումը նա կատարեր բարբառներում, ապա ավելին կգտներ» (անդ, էջ 256, ընդգծումը մերն է—է. Ա.): Բայց ահա թե ինչ է ասում Աղայանը՝ «Հայերենում և նույնիսկ ժամանակակից բարբառներում ունենք հին հայերեն բարբառների մնացորդներ»²: Այդ հետքերը քիչ են ուսումնասիրված և դեռևս քիչ են տվյալները, բայց և այնպես դրանք էլ ապացուցում են, որ եղել են հին բարբառներ»³: Մեր մի այլ ուսումնասիրությունից մեջ, որ լույս է տեսել այդ հոդվածից առաջ, ավելի հանգամանորեն քննության անելով հին բարբառների մնացորդները, եզրակացնում ենք. «Դա նշանակում է, որ ժամանակակից հայերեն բարբառները հին հայերեն բարբառների ուղղակի շարունակությունը չեն, այլ նրանց մահացումից հետո՝ հին հայերենից (գրաբարից) առաջացած նոր բարբառներ, որոնք (իմա՝ բարբառները և ո՛չ թե՝ գրաբարը—է. Ա.) վերապրուկային ձևով պահպանել են հին հայերեն բարբառների առանձին տարրերը, և այն էլ ոչ թե օրինաչափ կերպով, իբրև համակարգ (սխտեմ), այլ առանձին հետքերի ձևով»³: Ինչպես պարզ կերպով երևում է, մենք

¹ Անդ, էջ 233:

² էղ. Աղայան, անդ, էջ 229:

³ էղ. Աղայան, Բարբառային հնագույն տարբերություններ հայերենում, ԳԱՏ, 1958, № 5, էջ 80:

¹ էղ. Աղայան, Նոր հայերեն բարբառների առաջացման մասին, ՊՔՀ, 1959, № 2, էջ 229—230:

հնագույն բարբառային երևույթներ ենք փնտրում ո՛չ թե միայն գրաբարում, այլ մեր բարբառների մեջ և, առհասարակ, հայերենում:

Մենք ավելորդ ենք համարում շարունակել այդ կարգի աղաղակող փաստերի թվարկումն ու մեջբերումը. ավելորդ ենք համարում նաև ասել, թե, պրոֆ. Գ. Սեվակի դիպուկ արտահայտություններ, «ինչպիսի գործողություններ է կատարել» պրոֆ. Ա. Ղարիբջանը:

Այսպես, ուրեմն, 1950 թվականից հետո պրոֆ. Ա. Ղարիբջանի հրատարակած աշխատությունների քննությունը մեզ բերում է այն եզրակացության, որ անընդունելի են այն դրույթները, որոնցով նա առաջնորդվում է իր ուսումնասիրությունների մեջ, արատավոր է այն մեթոդը, որ կիրառում է իր լեզվաբանական վերլուծությունների մեջ, վստահության արժանի չեն այն տվյալները, որոնք նա բերում է իր աշխատությունների մեջ:

Վերը մենք ասացինք, որ Ա. Ղարիբջանի բարբառագիտական գործունեության մեջ ուշադրության արժանի է նրա փորձը՝ դասակարգելու հայերեն բարբառներն ըստ բաղաձայնական համակարգի: Հիրավի, այդ մտահղացումն իսկ կարևոր նորություն էր հայ բարբառագիտության համար. բայց պրոֆ. Ղարիբջանը ոչ միայն հղացել է այդ միտքը, այլև իր ամբողջ գիտական գործունեության ընթացքում աշխատել է ճշտել ու կատարելագործել իր առաջարկած դասակարգումը և, անկախ այն բանից՝ նրա դասակարգումն ընդունելի է իր ամբողջության մեջ և մանրամասնորով, թե ոչ, դա նրա անկապտելի ավանդը կմնա հայ բարբառագիտության մեջ: Այս գնահատումը չի խանգարում, իհարկե, քննության առնելու այդ դասակարգումը և վեր հանելու այն թերությունները, որոնք կան Ա. Ղարիբջանի դասակարգման մեջ և որոնցից անհրաժեշտ է խուսափել: Հայերեն բարբառների՝ ըստ բաղաձայնական համակարգի դասակարգումը առավել ամբողջական ձևով պրոֆ. Ա. Ղարիբջանը տվել է «Вопросы языкознания» հանդեսում տպագրված իր հոդվածի մեջ, ուստի մենք էլ բերում ենք այդ դասակարգումը: Հայերեն բարբառների, այլև գրաբարի, միջին հայերենի ու ժամանակակից հայերենի, ըստ բաղաձայնական սիստեմի դասակարգման համար պրոֆ. Ղարիբջանը հենվում է պայթականների համակարգի վրա, մի կողմից՝ ելակետ ունենալով հնդեվրոպական նախալեզուն, մյուս կողմից՝ բարբառների այժմյան համակարգը: Այդ մոտեցու-

մով նա բոլոր բարբառները բաժանում է յոթ խմբի, հետևյալ հաջորդականությամբ.

I խումբ.— եռաստիճան խլազուրկ բաղաձայնական սիստեմ (բ, բ, փ)

II խումբ.— քառաստիճան բաղաձայնական սիստեմ (բ, բ', պ, փ)

III խումբ.— երկաստիճան խլազուրկ բաղաձայնական սիստեմ (բ, փ)

IV խումբ.— միջին հայերենի բաղաձայնական սիստեմ (բ, պ, փ)

V խումբ.— երկաստիճան խլազուրկ բաղաձայնական սիստեմ (բ, փ)

VI խումբ.— գրաբարյան բաղաձայնական սիստեմ (բ, պ, փ)

VII խումբ.— երկաստիճան ձայնեղազուրկ բաղաձայնական սիստեմ (պ, փ):

Այս խմբերի հաջորդականությունն, ըստ պրոֆ. Ղարիբջանի, պայմանավորված է նրանց առավել կամ նվազ «հարազատություններ» հնդեվրոպական նախալեզվի բաղաձայնական համակարգին: Դրա վրա էլ հենվելով, նա հետևյալ ընդհանուր եզրակացությունն է հանգում. «հնդեվրոպական բաղաձայնական համակարգի «տեղաշարժը» հայերեն բարբառներում արտացոլում է հայկական ցեղերի առաջխաղացումը արևմուտքից, իսկ «հայերեն բարբառների դասակարգումն ըստ բաղաձայնական համակարգի արտացոլում է հայոց լեզվի տարածման պրոցեսը պատմական Հայաստանի տերիտորիայում» (ԲՂ, 1959, № 5, էջ 90): Քննության առնենք և՛ դասակարգումը, և՛ այդ եզրակացությունը: Ըստ Ա. Ղարիբջանի՝ ստացվում է հայերեն բարբառների տեղադրության հետևյալ պատկերը.

I խումբ.— պատմական Փոքր Հայք.

II խումբ.— պատմական Հայաստանի կենտրոնական գավառները.

III խումբ.— պատմական Փոքր Հայքից արևմուտք և հյուսիս.

IV խումբ.— Կիլիկիայի և Հյուսիսային Սիրիայի շրջանը.

V խումբ.— Հյուսիսային Մեսոպոտամիա և հարավ-արևմուտյան Հայաստան.

VI խումբ.— Արաքս գետի Միջին հոսանքը (պատմական Գողթըն, Ատրպատական).

VII խումբ.— պատմական Հայաստանի արևելյան ծայրագու-

վառները, «այսինքն՝ հայոց լեզվի տարածվելու ելման կետի» Փոքր Հայքի հակառակ կողմը» (անդ, էջ 88):

Այս սխեման ոչինչ չի ասում իրերի իսկական վիճակի մասին: Այսպես, օրինակ, վանի բարբառը, որ հատկացվում է «հայոց լեզվի տարածվելու ելման կետի» հակառակ կողմում դասավորված հայերեն բարբառների յոթերորդ խմբին, գտնվել է Մուշի բարբառի (առաջին խումբ) հարևանության մեջ. վանի և Ղարաբաղի միջև տերիտորիալ ոչ մի շփում չկա, բայց նրանք մեկ խմբի մեջ են մտնում: Երրորդ խմբի բարբառները, Ա. Ղարիբջանի ասելով, «զբլխավորապես տարածված են Փոքր Հայքից արևմուտք և հյուսիս (բացառություս է կազմում Մարաշի բարբառը, որ գտնվում է Կիլիկիայի շրջանում)» (անդ, էջ 85): Այդ խմբի մեջ են մտնում Պուլսի (Բոսֆորի ափերին), Ն. Նախիջևանի (այժմ՝ Արիմում և Կուբանում), Տրապիզոնի (Աև ծովի ափերին) բարբառները, վերջինս՝ առաջին խմբին պատկանող Համշենի բարբառի հետ կողք-կողքի: Մեղրու, Կարճևանի և Ազուլիսի բարբառները ոչ մի տերիտորիալ շփում չունեն Արդվիխի ու Թբիլիսիի բարբառների հետ, բայց նրանց հետ միասին միևնույն վեցերորդ խմբին են պատկանում: Նրանք անմիջական հարևանության մեջ են գտնվել Զուլայի (երկրորդ խումբ), Ն. Նախիջևանի (երրորդ խումբ) և Ղարաբաղի (յոթերորդ խումբ) բարբառների հետ, որոնցից միանգամայն տարբերվում են իրենց բաղաձայնական համակարգով:

Պետք է հաշվի առնել նաև, որ միևնույն տերիտորիալ հատվածում, միևնույն բարբառի գրաված տերիտորիայում գտնում ենք բաղաձայնական տարբեր համակարգեր: Համշենի բարբառում ունենք երեք խոսվածքների երեք տարբեր բաղաձայնական համակարգ, այն է՝ Մալայի (հայ բարբառների առաջին խմբի համակարգ), Ճանիկի (հայ բարբառների չորրորդ խմբի համակարգ) և Տրապիզոնի (հայ բարբառների յոթերորդ խմբի համակարգ), Նոր Նախիջևանի բարբառը, որ հատկացվում է երրորդ խմբին, ներկայացնում է երկու ճյուղ, որոնցից մեկը երրորդ խմբի, իսկ երկրորդը հինգերորդ խմբի համակարգն ունի: Այդպիսի օրինակներ կարելի է բերել նաև ուրիշ բարբառներից (օրինակ՝ Արարատյան բարբառից):

Կարևոր է և այն, որ իր առաջարկած դասակարգման մեջ էլ, որ մեզ համար ընդունելի չէ, Ա. Ղարիբջանը հետևողականորեն չի կիրառում մի որոշակի սկզբունք: Նրա դասակարգմանը ծանոթանալուց անխուսափելիորեն այն եզրակացությունը կարելի է հանգել, թե հայ բարբառների նրա առաջարկած խմբավորումը հիմնված է

նրանց բաղաձայնական համակարգի՝ հնդեվրոպական համակարգին մոտ լինելու աստիճանի վրա: Սրանից բխում է այն, որ, օրինակ, առաջին խումբը պետք է կազմեն այն բարբառները, որոնք «պահպանել» են հնդեվրոպական բաղաձայնական համակարգ՝ առանց փոփոխության կամ աննշան փոփոխություններով, երկրորդ խումբը՝ նրանք, որ մասնակիորեն են փոխել այդ համակարգը և այլն, և այլն: Ուրիշ խոսքով՝ առաջին խմբի բաղաձայնական համակարգն ավելի մոտ է հնդեվրոպականին, քան երկրորդինը, երկրորդ խմբինն ավելի մոտ է, քան երրորդինը և այլն: Այսպիսի մոտեցումը, անկախ ընդունելի կամ անընդունելի լինելուց, գոնե մի որոշակի, հետևողականորեն կիրառված սկզբունք կներկայացնե: Իսկ Ա. Ղարիբջանի մոտ այդ էլ չկա: Այսպես՝ ըստ Ա. Ղարիբջանի, «բաղաձայնների հնդեվրոպական համակարգի համեմատությամբ առաջին խմբի բարբառները զուրկ են միայն մեկ շարքից, այն է՝ պարզ խուլերի շարքից» (անդ, էջ 82), մինչդեռ երկրորդ խմբի բարբառների բաղաձայնական համակարգում «լիովին պահպանված են չորս շարքերը» (անդ, էջ 83), այսպես՝

Հնիս.	bh, gh, dh	b, g, d	p, k, t	ph, kh, th
հայ բբբ. I խումբ	bh, gh, dh	b, g, d	—	ph, kh, th
» » II խումբ	bh, gh, dh	b, g, d	p, k, t	ph, kh, th

ինչպես տեսնում ենք, հենց իր իսկ՝ պրոֆ. Ա. Ղարիբջանի բնորոշման համաձայն, երկրորդ խմբի պայթականների համակարգն ավելի մոտ է հնդեվրոպական նախալեզվի համակարգին, քան առաջին խմբինը: Հետևաբար, երկրորդ խումբը պետք է առաջին համարվեր, իսկ առաջինը՝ երկրորդ: Որպես առաջին խումբ ներկայացված բարբառների մեծ մասը «գտնվում է պատմական Փոքր Հայքի շրջանում, որը համարվում է հայ ժողովրդի «բնօրրանը» (անդ, էջ 83), իսկ երկրորդ խմբով ներկայացրած բարբառներն են պատմական Հայաստանի կենտրոնական գավառների բարբառները... բնական է ենթադրել, որ այդ խումբը ձևավորվել է Արևմուտքից՝ Փոքր Հայքից, այսինքն՝ անդրեփրատյան նահանգներից, դեպի պատմական Հայաստան գաղթելուց հետո... Հետևաբար, կենտրոնական գավառների բարբառների բաղաձայնական համակարգի բնության շնորհիվ մենք ստանում ենք ուղղակի տվյալներ հայերի գաղթի մասին Փոքր Հայքից, այսինքն՝ Արևմուտքից» (անդ, էջ 84. ընդգծումը մերն է—է. Ա.): Եթե այժմ, ելնելով պրոֆ. Ղարիբջանի սկզբունքից և հենվելով երկրորդ խմբի բարբառների և

հնդեվրոպական բաղաձայնական համակարգի նույնության վրա. երկրորդ խումբն առաջին համարենք, իսկ առաջինը՝ երկրորդ, ապա սրանից ինքնին կստացվեր այն, որ հնիս. պայթականների համակարգն ավելի լավ է «պահպանվել» պատմական Հայաստանի կենտրոնական գավառներում, քան Փոքր Հայքի բարբառներում, այլոնական գավառներում: Իսկ սա հիմնովին հակասում է սինքն՝ հայ ժողովրդի բնօրրանում: Իսկ սա հիմնովին հակասում է խմբավորումն ըստ բաղաձայնների հայոց լեզվի տարածպատմական Հայաստանի տերիտորիայում հայոց լեզվի տարածման պրոցեսը» (անդ, էջ 50): Դրա համար էլ, ահա, նա ստիպված է երկրորդ խումբ համարել քառաստիճան համակարգ ունեցող բարբառները, իսկ առաջին՝ եռաստիճան համակարգով բարբառները, այսինքն՝ նրանք, որոնք հնիս. չորս շարքից մեկը չունեն:

Վերջապես, պրոֆ. Ա. Ղարիբջանի այդ խմբավորումը հակասում է իր կոնցեպցիային հենց իր իսկ սկզբունքով: Նրա դասում է իր կոնցեպցիային հենց իր իսկ սկզբունքով: Նրա դասակարգումը կամ խմբավորումը, ըստ բաղաձայնական համակարգի, հիմնված է մեր բարբառների արդի հնչյունական համակարգի վրա, իսկ ենթադրություններով ու եզրակացություններով՝ բաղաձայնական համակարգի զարգացման պրոցեսը բացատրելու հավակնություն ունի: Ա. Ղարիբջանը փորձում է լուսաբանել լեզվի պատմությունը ո՛չ թե պատմական պրոցեսի հաշվառումով, այլ հենվելով միայն տվյալ ստատիկ վիճակի վրա, իսկ սրանից ստացվում է «պատմական մոտեցում» առանց պատմության: Բայց նույնիսկ այդ ստատիկ (սինխրոնիկ) դասակարգումն էլ լի է հակասություններով. ամենից առաջ, Ա. Ղարիբջանը բացարձակապես աչքաթող է անում հնչյութաբանական համակարգը, որ սինխրոնիկ մոտեցման տեսակետից առաջնահերթ նշանակություն ունի. երկրորդ՝ նա, միայն հնչյունական կողմը նկատի ունենալով, բոլորովին անուշամիտ է մատնում քմայնացած պայթականները, մինչդեռ ե՛րրություն է մատնում քմայնացած պայթական տեսակետից նրանք հնչյունաբանական, և՛ հնչյութաբանական տեսակետից նրանք նույն դիրքն են զբաղում բաղաձայնական համակարգի մեջ, ինչ-որ, օրինակ, շնչեղացած ձայնեղները կարինի կամ Երևանի բարբառներում (երկրորդ խմբում): Ի վերջո, իր դասակարգման մեջ նա մոծում է պատմական հնչյունաբանության տարրեր, որոնք տեղապետք է գտնեն սինխրոնիկ դասակարգման մեջ, և կամ, ընդհակառակն, դասակարգման ամբողջ հիմքը պետք է կազմի պատմական մոտեցումը և ոչ թե դրա ինչ-որ տարրերը: Այսպես, միջին հայերենի կամ, ավելի ճիշտ, կիրիկյան բաղաձայնական համակարգը նրա

մոտ ներկայացվում է շորրորդ խմբով. բայց այդպիսի առանձնացումը կարող է արդարանալ միայն պատմական մոտեցման դեպքում, հակառակ պարագայում, այսինքն՝ սինխրոնիկ մոտեցման համար, նա նույն համակարգն է ներկայացնում, ինչ-որ գրաբարը: Իսկ եթե մի դեպքում, մի խմբի համար պատմական մոտեցումն է հիմք ընդունվում, ապա՝ այդպես պետք է լինի նաև բոլոր մյուս դեպքերում: Այս կամ այն խմբի բաղաձայնական համակարգի սոսկ համադրությունը հնդեվրոպական համակարգի հետ, բնականաբար, դեռևս պատմականության սկզբունքի կիրառում չէ: Այս բոլորն, ահա, հիմք են տալիս մեզ ասելու, որ թեև դասակարգման մտահղացումն ինքնին մեծ նորություն է հայ բարբառագիտության պատմության մեջ, և դա Ա. Ղարիբջանի անսովորալ ծառայությունն է հայագիտությանը, բայց այդ մտահղացման գործնական կիրառումը դեռևս շատ թերի է: Այդ է պատճառը, որ է. Բենվենիստը և Հ. Տոգտը, անկախ միմյանցից և Ա. Ղարիբջանից, առաջարկեցին իրենց դասակարգումը՝ դարձյալ ըստ բաղաձայնական համակարգի, բայց շատ ավելի ճիշտ մոտեցումով:

Ա. Ղարիբջանի աշխատություններից դրական խոսքի արժանի է ժամանակակից հայերենի դպրոցական քերականությունը, որի նշանակությունը մեծ է պատմական տեսակետից: Նրա գիտական գործունեության միանգամայն դրական ու խրախուսելի կողմն է բարբառագիտական այն մեծ աշխատանքը, որ նա ծավալել է շուրջ 30 տարիների ընթացքում, որի արդյունքն է եղել մի շարք բարբառների հայտնաբերումն ու դրանց համառոտ, ցավոք սրտի, ոչ այնքան վստահելի նկարագրությունը, և այն մեծ հետաքրքրությունը, որ առաջացրել է երիտասարդ կադրերի մեջ. այս բոլորին պետք է ավելացնել նաև այն, ինչ որ ասացինք հայ բարբառների ըստ բաղաձայնական սիստեմի դասակարգման մասին: Վերջապես, պետք է հիշել նաև, որ Ա. Ղարիբջանը հեղինակը կամ հեղինակակիցն է մի քանի բառարանների (Ուղղագրական բառարան, Ռուս հայերեն բառարան ևն), ինչպես և՛ ուղղագրական-քերականական ձեռնարկի: Այս բոլորի մեջ էլ, սակայն, ինչպես ցույց է տվել մամուլում ծավալված քննադատությունը, կան բազմաթիվ թերություններ ու արատավոր կողմեր:

1 Ոմանք, ընդունելով դրանց մեջ եղած լուրջ թերություններն ու արատավոր կողմերը, հայտարարում են, թե այնուամենայնիվ, դրանք օգտագործվում են որոշ շահով օգտակար դեր են կատարում: Այո՛, օգտագործվում են, բայց 21—285

են նաև նախորդները, բացի 3-րդից: Ինչպես հայտնվում է առաջաբանում, ամբողջ աշխատությունը բաղկացած է լինելու երեք գրքից: Առաջին գրքում ընդգրկված են ամբողջ աշխատության հետևյալ հատվածները՝ նախաշավիղ, ժամանակակից հայոց լեզվի կազմավորումը, Հնչյունաբանություն և Ձևաբանություն: Նախաշավիղի մեջ հեղինակը քննության է առնում լեզվաբանական-տեսական մի քանի հիմնական խնդիրներ (լեզու և լեզվաբանություն, դասակարգային լեզու, ձև և բովանդակություն ևն)՝ աշխատելով կիրառել մարքս-լենինյան դիալեկտիկական մատերիալիզմի հիմունքները: Հաջորդ հատվածը նվիրված է ժամանակակից հայերենի կազմավորմանն ու զարգացմանը: Հեղինակը համառոտակի ներկայացնում է մեր ժամանակակից լեզվի կազմավորման ու զարգացման երկարատև պրոցեսը մինչև մեր օրերը: Հաջորդ հատվածներում տրված է ժամանակակից հայերենի հնչյունաբանության ու ձևաբանության տեսական ուսումնասիրությունը: Երկրորդ գրքի առաջին պրակը նվիրված է ժամանակակից հայերենի բառագիտությանը և բաղկացած է երկու գլխից. 1. Հայոց լեզվի բառազանձը, 2. Բառակազմություն (տե՛ս նաև ստորև, № 6):

5. Ժ ա մ ա ն ա կ ա կ ի գ հ ա յ ե Ր Ե Ն Ի հ ա մ ա ռ ո ա պ ա տ մ ու թ յ ու ն, Երևան, 1948: Արևելահայ գրական աշխարհաբարի պատմության զանազան հարցերին նվիրված առանձին ուսումնասիրություններ են, որոնց մի մասը նախապես հրատարակված է եղել առանձին հոդվածներով: Ավելի շուտ ժամանակակից հայոց լեզվի պատմության դրվագներն է ներկայացնում, քան ամբողջ պատմական պրոցեսը: Չնայած մի շարք, այժմ արդեն հեղինակի համար էլ անընդունելի և սխալ դրույթների առկայությունը, աշխատությունը կարևոր նպաստ է ժամանակակից հայերենի պատմության ուսումնասիրությանը:

6. Ժ ա մ ա ն ա կ ա կ ի գ հ ա յ ո գ լ Ե Ղ Վ Ի դ ա ս Ը Ն Ք ա ց. Երևան, 1955: «Ժամանակակից հայոց լեզվի տեսության» երկու գրքերի վերամշակված հրատարակությունն է: Գ. Սեվակի այս աշխատությունը Մ. Արեղյանի «Հայոց լեզվի տեսություն» մենագրությունից հետո մեր գրական լեզվի ամենալուրջ ուսումնասիրությունն է և խոշոր ներդրում է հայերենագիտության բնագավառում:

Վերը թվարկված աշխատություններից պարզորեն երևում է, արդեն, որ Գուրգեն Սեվակը գերազանցապես զբաղվել է ժամանակակից հայոց լեզվի ուսումնասիրությամբ և լեզվի տեսական-փիլիսոփայական հարցերով, աշխատելով տալ այդ հարցերի մարքսիս-

տական լուսաբանումը: Յուր տեսական աշխատանքները նա սկսել է՝ քննադատության ենթարկելով մի կողմից՝ հնդեվրոպաբանությունը, մյուս կողմից՝ հաբեթաբանությունը, այսպես ասած՝ պայքար ծավալելով երկու ֆրոնտում: Հնդեվրոպաբանությունը, որպես բուրժուական գիտություն, նա քննադատել է յուր «Հաբեթաբանություն և մարքսիզմ» հոդվածում («Նոր-Ուղի», 1930, № 6—7, էջ 184—197): Այդտեղ հեղինակը համառոտակի ներկայացնելով հնդեվրոպաբանության անցած ուղին, գտնում է, որ այդ լեզվաբանությունը, իր ողջ դրական կողմերով հանդերձ, չի դարձել լեզվի իսկական, ճշմարիտ գիտություն: Հնդեվրոպաբանությունը լեզվի ծագման, նրա զարգացման, լեզվական էվոլյուցիաների ու ռեցուցիաների գիտությունը չի դարձել, այլ հիմնվելով միակողմանի համեմատությունների վրա, լուսաբանել է մի հանգամանք միայն՝ լեզուների ցեղակցությունը, որ և մեկնաբանված է իդեալիստորեն. «Իր հետազոտությունների նյութը դարձնելով պատմականորեն առաջ եկած և կատարելագործված մի խումբ կուլտուրական, գլխավորապես գրական լեզուներ և նրանց կառուցած մնալով՝ հնդեվրոպական լեզվաբանությունն իր իդեալիստական, ձևական-տրամաբանական մեթոդով այնպես էլ չկարողացավ դառնալ իսկական գիտություն» (անդ, էջ 185): Այնուհետև հեղինակը ցույց է տալիս, որ հնդեվրոպական լեզվաբանությունը ծայրահեղության է հասցվել որոշ բուրժուական ռեակցիոն գիտնականների կողմից և հիմք հանդիսացել ռասայական տեսության, բաժանելով աշխարհիս լեզուները և, դրա հիմամբ էլ՝ բոլոր ժողովուրդները, տարբեր ցեղերի, որոնցից իբրև թե ամենակատարյալներն են հնդեվրոպականները. «գրանով այդ լեզվաբանությունը կատարել է իմպերիալիզմի պատվերը» (անդ, էջ 186): Այսպես գնահատելով անցյալի և ներկայի բուրժուական լեզվաբանությունը, Սեվակը հակադրում է նրան մարքսիստական-մատերիալիստական լեզվաբանությունը, որի հիմնադիրն է Մառը, ըստ որում, քննադատելով նախորդը, նա արտահայտում է այն ճիշտ դրույթը, որ մարքսիստական-մատերիալիստական լեզվաբանությունը շատ բան պետք է վերցնի նախորդից, պետք է օգտագործի նրանից այն ամենը, ինչ որ դրական է: Ինքը, Սեվակը փորձում է այդպես էլ վարվել, համադրելով այդ դրականը նոր, մարքսիստական լեզվաբանության նվաճումների հետ: Մյուս կողմից՝ ընդունելով, որ Մառը յուր տեսությամբ՝ հաբեթաբանությամբ, հիմնադրեց մարքսիստական լեզվաբանությունը, Սեվակը գտնում է, որ հաբեթական տեսությունն էլ ունի յուր սխալ-

ները, որոնց դեմ էլ պայքարի է ելել ինքը: Այսպես, յուր «Հանուն մարքս-լենինյան լեզվաբանության» հոդվածում (Գրական թերթ, 1932, № 8) նա ուղղակի քննադատում է Մառի ուսմունքը. հեղինակը գտնում է, որ Մառը, քննադատելով բուրժուական լեզվաբանությունը, չի ստեղծել դեռևս մատերիալիստական լեզվաբանություն, որ նրա ուսմունքը հանգում է իդեալիստական դիալեկտիկային. «Մարքսիստական կոչումը հաբեթաբանությունն ստացավ ի տրիտուր այն պայքարի, որ նա մղեց բուրժուական լեզվաբանության դեմ, շախչախելով այն և վարկարեկելով ԽՍՀՄ-ում: Սակայն այն դիրքը, որից ակադ. Մառը հրետանու կրակ բացեց համեմատական լեզվաբանության վրա՝ տարբերային մատերիալիզմի և իդեալիստական դիալեկտիկայի դիրքն էր» (Գթ, 1932, № 8): Քննության անելով Մառի ուսմունքի հիմնական հարցերը, հեղինակն առաջին հերթին ցույց է տալիս, որ Մառի մոտ տեսականը խզված է գործնականից. «Առաջին հիմնական բացը, որ մենք տեսնում ենք ակադ. Մառի նույնիսկ ամենավերջին աշխատությունների մեջ՝ տեսության և գործնականի խզումն է, եթերային տրամաբան կառուցումների ետևից ընկնելը» (անդ): Ապա հեղինակն անցնում է հաբեթաբանության տեսական մի քանի դրույթների քննությանը. նա ցույց է տալիս, որ Մառը յուր ուսմունքի մեջ մի կողմ է թողնում առանձին լեզուների տարբերությունները, նրանց յուրահատուկ օրինաչափությունները և, ելնելով լեզուների զարգացման ընդհանուր օրինաչափություններից, ամեն լեզվի մեջ որոնում հինը, նախապատմականը. այդ «որոնումների» հիմամբ Մառի հայտնաբերած շորս էլեմենտները Սեվակը վճռաբար ժխտում է. «Ակ. Մառը չի տեսնում կոնկրետ լեզուների տարբերությունները, օրինաչափությունները. այսօրվա բոլոր լեզուների մեջ նա որոնում է միայն հինը, նախապատմականը, այն շարաբաստիկ շորս էլեմենտ բառերը (սալ, բեր, յոն, ոռշ), որոնցից ըստ Մառի առաջացել են աշխարհի բոլոր լեզուները... Այդ շորս էլեմենտներին է հանգեցնում Մառն բոլոր լեզուները... Այդ շորս էլեմենտներին է հանգեցնում Մառն աշխարհի բոլոր լեզուների ամբողջ բառապաշարը՝ կանգ չառնելով բռնազբոսիկ ստուգաբանությունների առաջ և մեկը՝ բարձրագույն բռնազբոսիկ ստուգաբանությունների առաջ և մեկը՝ բարձրագույն որակը մեխանիստորեն նույնացնելով ցածր որակին» (անդ): Մառը գտնում է, որ լեզուներն իրենց ձևաբանական «կառուցման ստրուկտուրայում» արտահայտում են «հասարակական ձևերի ստրուկտուրան». Սեվակը ցույց է տալիս, որ այդ մոտեցումը մեխանիստական է. «Մեխանիստական կառուցումները հաբեթաբանության օրգանական բաղկացուցիչ մասն են կազմում: Ակ. Մառի համար

«իրենց ձևաբանական կառուցումների ստրուկտուրայի մեջ լեզուներն արտահայտում են հասարակական ձևերի ստրուկտուրան» (անդ): Նա չի տեսնում քանակի և որակի դիալեկտիկական փոխանցումը և բարդ ստադիայի առանձնահատկությունները դիտում է սոսկ որպես ժառանգություն՝ մնացած նախորդ ստադիայից: «Ինչպես որ լեզուները մեխանիկորեն արտահայտում են հասարակարգը, այնպես էլ լեզվի գիտությունը մեխանիկորեն արտահայտում է լեզվի պատմությունը» (անդ): Վերջապես հեղինակը հերքում է նաև Մառի մի տեսակետը հայերենի վերաբերյալ. «Մառի պատմազանցությունը և մեխանիցիզմը շատ ավելի հեռու է գնում: Նա նույնիսկ մեր գրաբարի հոլովական վերջավորությունները համարում է ոչ հոլովական վերջավորություն, որովհետև ուրիշ, ավելի ցածր ստադիայի վրա գտնվող լեզուների մեջ (օրինակ՝ արխազերենի, որը չունի հոլովներ) նրանք գործ են ածվում խելացի և անբան էականների հոգնակի թիվ կազմելու համար և ահա նա գրում է. «...Պարզվեց, որ հոգնակի թվի այդ երկու ձևերի մեջ (գրաբարի ուղղական «ք» և սեռական-տրական «ց» — Գ. Սեվակ) հոլովական ոչինչ չկա, հոլովական վերջավորությունները միայն հոգնակիության ցուցիչներ են» (անդ):

Այսպես, ահա, Սեվակը քննադատելով հաբեթաբանության սխալները դիալեկտիկական մատերիալիզմի դիրքերից, յուր աշխատությունների մեջ ուսումնասիրում է լեզուն մարքսիզմ-լենինիզմի հիմունքներով և լուսաբանում լեզվի բարդ իրողությունները մատերիալիստորեն: Յուր տեսական քննությունների մեջ առաջնակարգ տեղն է զբաղում մարդկային լեզվի բնորոշումը: Քննության աննելով լեզուն երեք հասարակական ֆունկցիաներով, Սեվակը տալիս է լեզվի իր բնորոշումը. լեզուն հաղորդակցման միջոց է, լեզուն մտածողության միջոց է, լեզուն «առարկայացած գիտակցություն» (Մարքս և էնգելս). ավելորդ շենք համարում քաղվածորեն մեջ բերել այդ ամբողջ հատվածը, որը լիովին գաղափար է տալիս Գ. Սեվակի այն ժամանակ պաշտպանած սկզբունքների մասին. «Լեզվի ծավալուն հասկացողությունը, մեր կարծիքով, պետք է կազմվի երեք տարբեր, դիալեկտիկորեն իրար կապված և իրարից բխող մոմենտներից, որոնք լեզվի հասարակական երեք տարբեր ֆունկցիաներն են բացահայտում:

ա) Լեզուն հաղորդակցման առաջնային և կարևորագույն միջոցն է, այսինքն մարդիկ իրար հետ խոսում, իրար հաղորդակցում են լեզվի միջոցով, և լեզուն էլ հենց առաջ է «եկել իրար մի բան

ասելու կարիքից» (Էնգելս): Լեզվի այս ֆունկցիան չափազանց ակնհայտ է և մանրամասն բացատրություն տալն ավելորդ ենք համարում:

բ) Լեզուն հանդիսանում է տարբերակված, կազմակերպված մտածողության միջոցը. մարդիկ ոչ միայն խոսում, հաղորդակցում են լեզվի միջոցով, այլև մտածում են դարձյալ լեզվի միջոցով: Մարդը նախքան մի բան իրականության մեջ կառուցելը, — ասում է Մարքսը, — այդ բանը կառուցում է իր գլխի մեջ, իր ուղեղում: Պարզ է, որ այդ կարելի է անել միայն լեզվի կամ «բառերի» միջոցով, քանի որ գլխի մեջ կան միայն առարկաների և առարկայական հարաբերությունների հասկացությունները՝ հանձինս լեզվական տարրերի՝ բառերի, որոնց միջոցով էլ կարելի է մի բան իրականության մեջ կառուցելուց առաջ՝ կառուցել գլխի մեջ:

գ) Լեզուն հանդիսանում է գործնական և առարկայական գիտակցություն (Մարքս և Էնգելս): Լեզվի միջոցով ոչ միայն մեր միտքը, մտածողությունն է ընթանում, այլև մտքի իրողությունները մերձավորագույնս արտահայտվում և արտացոլվում են լեզվի մեջ» (Լենին):

«Լեզվի հնչյունական կողմը՝ հնչյունները, դատարկ մատերիս չեն, այլ այն մատերիան են, հանձինս որոնց հանդես են գալիս «ոգու», մտքի, գիտակցության գոյը: Լեզուն գիտակցության մարմինն է, գիտակցությունը՝ լեզվի «Տոգին» կամ «ոգին» (Խոսքի մասերի ուսմունքը, ԵՊՀ ԳԱ, էջ 211—212): Այս բոլորից հետևում է, որ «Լեզուն պետք է դիտել իբրև վերնաշենքային բարդ արտահայտություն, իբրև գիտակցության հետ դիալեկտիկական հակադրամիասնություն կազմող երևույթ, իսկ լեզվի երեք տարբեր ֆունկցիաները... իբրև իրարից բխող, «իրարով պայմանավորված երեւույթներ» (Ժամանակակից հայոց լեզվի տեսություն, էջ 13): Լեզվի այս բնորոշման հետ սերտորեն կապված է ազգային (ցեղային) լեզվի բնորոշումը: Ինչպես տեսել ենք, երիտօրբականները գտնում են, որ գոյություն ունեն միայն անհատական լեզուներ. Սեվակը ճիշտ կերպով քննադատում է այդ տեսությունը և պաշտպանում այն ճիշտ դրույթը, որ յուրաքանչյուր անհատական լեզու ընդհանուրի, վերացական ընդհանուրի, մասնավորն է միայն: Դրանից ելնելով, նա գտնում է, որ յուրաքանչյուր ազգային (ցեղային, տե՛ս մային) լեզու որպես այդ հանրության ընդհանուր հաղորդակցման միջոց պարտադիր է նույն ազգի (ցեղի, տոհմի) ամեն մի անդամի համար. սակայն այդ ընդհանուրը վերաբերում է միայն ձևին, մինչդեռ

բովանդակության մեջ միշտ էլ դրսևորվում է անհատականը. բառերը կարող են ընդհանուր լինել և են (չհաշված մասնավոր դեպքերը) հասարակության բոլոր անդամների համար, բայց նրանք տարբեր դասակարգերի կողմից տարբեր կերպով են ըմբռնվում, տարբեր դասակարգեր տարբեր վերաբերմունք են արտահայտում այս կամ այն բառի արտահայտած առարկայի, իրողության ևն. նկատմամբ. «Ազգային ընդհանուր ձևը տվյալ ազգի բոլոր անդամների համար գործածվում է նույն առարկայի, իրողության, երևույթի հետ միասին, նաև գործածողի սուբյեկտիվը, վերաբերմունքը ցույց տալու համար: Իմացությունն իր մեջ արտացոլում է և օբյեկտիվ իրը, առարկան, և սուբյեկտիվ վերաբերմունքը, և, այսպիսով, հանդիսանում է օբյեկտիվի իմացում սուբյեկտիվի անխուսափելի համակցությամբ» (Լենինը և դիալեկտիկ. օրին. լեզվի մեջ. ՄԼԻՏ, 1934, № 1, էջ 157—158): Այստեղից էլ, ահա, հեղինակը հանգում է լեզվի դասակարգայնության սկզբունքին. շնայած որ յուրաքանչյուր ազգային լեզու ընդհանուր է և պարտադիր այդ լեզվով խոսող բոլոր անհատների համար, այնուամենայնիվ, այդ ընդհանուրը յուր բովանդակությամբ դասակարգայնորեն երկատված է. նույն բառը, հնչյունը և այլն, մի՛ խոսքով՝ լեզվական միևնույն կատեգորիան ձևով ընդհանուր է այդ լեզվով խոսող հանրության բոլոր անդամների համար, իսկ բովանդակությամբ՝ տարբեր. «Միայն այս ձևով է, որ, օրինակ, գոյություն ունի վելիկոռուսական ազգային լեզուն անխտիր բոլոր վելիկոռուսների համար, միայն այս ձևով է, որ միևնույն ազգությունը կազմող տարբեր դասակարգերն ունեն անպայմանորեն մի ազգային լեզու՝ ըստ ձևի, բայց և անպայման դասակարգայնորեն տարբեր լեզուներ՝ ըստ բովանդակության: Ազգային լեզուն ազգի համար միասնական է ըստ ձևի, և այդ չափով տարբեր դասակարգերը հասկանում են իրար: Ազգային լեզուն երկփեղկված է դասակարգային տարբեր լեզուների ըստ բովանդակության, և այդ չափով միևնույն լեզուն կրող տարբեր դասակարգերը թերահասկանում են իրար» (անդ, էջ 159): Նա այն տեսակետն է արտահայտում, թե դասակարգային լեզուները միշտ գոյություն են ունենում ազգային լեզվի մեջ միասնաբար, որպես հակադրությունների դիալեկտիկական միասնություն, ինչպես ազգային հասարակության մեջ միասնաբար գոյություն ունեն տարբեր դասակարգերը: Սակայն այդ դասակարգային լեզուները իրենց միասնությամբ հանդերձ միշտ պայքարի մեջ են գտնվում. ազգային լեզուն ոչ միայն պասսիվ կերպով արտացոլում, դրսևորում է հասարակու-

թյան տարբեր դասակարգերի պայքարը, այլև ինքն իսկ դասակարգային պայքարի լծակներից մեկն է հանդիսանում: Ինչպես որ դասակարգային հասարակության մեջ մի դասակարգն է իշխում, մի դասակարգի պետությունն ամբողջ ազգը ենթարկում իրեն, այնպես էլ ազգային լեզվի մեջ իշխող է լինում մի դասակարգի՝ տիրապետող դասակարգի լեզուն, որ և այդպիսով «հանդես է գալիս իբրև առհասարակ ազգային լեզու՝ նսեմացնելով իր ախոյանին: Բուրժուազիայի տիրապետության օրոք իշխող է բուրժուական ըստ բովանդակության և ազգային ըստ ձևի լեզուն, իսկ պրոլետարիատի դիկտատուրայի շրջանում՝ պրոլետարական ըստ բովանդակության և ազգային ըստ ձևի լեզուն» (անդ): Այնուհետև հեղինակը քննում է լեզուն իբրև անընդհատաբար փոփոխվող ու զարգացող պրոցես և ցույց տալիս, որ լեզուն ամեն ռուպե դրսևորվում է կենդանի խոսքի միջոցով, ու դրանով իսկ երևան հանում իր օրինաչափությունները: Լեզվի յուրաքանչյուր միավորի մեջ արտահայտվում են դիալեկտիկայի տարրերը. քերականություններն ու բառարանները ներկայացնում են միայն լեզվի տարրերն անկենդան ձևով, խոսքից դուրս. մինչդեռ կենդանի լեզվի մեջ այդ բառերն իսկ կենդանություն են ստանում. «Լեզվի բնական գոյի, իսկական կենդանի լեզվի մեջ չկան առանձնացած բառեր և կանոններ, ավելին՝ նույնիսկ նախադասություններ: Լեզուն դրսևորվում, առարկայանում է ամեն ռուպե, ամեն վայրկյան որպես կենդանի խոսք (Речь, Rede) հանդես բերելով այն բոլոր օրինաչափությունները, որ հատուկ է տվյալ լեզվին» (Հայոց լեզվի տեսութ., էջ 28): Խոսելով լեզվի զարգացման մասին, պատմական այդ պրոցեսի մեջ հեղինակը տեսնում է երկու հիմնական երևույթի գործունեությունը. լեզուն իր գործադրության հիմնական երևույթի գործունեությունը. լեզուն իր գործադրության պրոցեսում, իր գոյության, իր կյանքի ընթացքում պահպանվում է ավանդության շնորհիվ. տվյալ լեզվով խոսող հանրության յուրաքանչյուր անդամ ավանդաբար ստանում է լեզվական տվյալ սիստեմը. ավանդության միջոցով լեզուն փոխանցվում է սերնդից սերունդ, բայց լեզվի հենց այդ ավանդական փոխանցման ժամանակ և, ընդհանրապես, լեզվի ամբողջ գոյության ընթացքում նորանոր երևույթներ կարող են առաջ գալ և առաջանում են. այդ նոր երևույթներն սկզբից հանդիպում են ավանդականին, մրցում նրանց հետ և եթե ժամանակի ընթացքում նրանք կարողանում են այնպիսի ուժ և ընդհանրություն ստանալ, որ հաղթեն ավանդականին, ապա՝ իրենք են դառնում լեզվի տվյալ շրջանի համար կենսունակ և այնուհետև իրենց հերթին դառնում ավանդություն: Նոր երևույթը

լեզվի մեջ կարող է իր ծագումով բուրժուական էլ նոր չլինել, նա գոյություն ունեցած կարող է լինել լեզվի մի անցած շրջանում և հետո դադարած, մեռած լինել: Բայց որոշ շրջանում այդ մեռածը կարող է վերականգնվել, վերստանալ իր գործածությունը և կրկին հանդես գալ իբրև ավանդություն: Լեզվական ավանդությունը պարտադիր է յուրաքանչյուր անհատի համար. բայց յուրաքանչյուր անհատ այդ պարտադիրը, այդ ավանդականը յուրացնում է ակտիվ կերպով և այդպիսով իսկ ներգործում իր ընդունածի վրա. այսպիսով լեզվի փոխանցման, նրա ավանդական յուրացման ընթացքում էլ առաջանում է նրա փոփոխությունը, սկիզբն է դրվում ավանդության խախտման, նրա բացասման. ավանդության այսպիսի բացասումը հեղինակը կոչում է ավանդախախտություն. «Մենք խոսում (և գրում) ենք այնպես և միաժամանակ ոչ այնպես, ինչպես խոսել են (և գրել) մեր հայրերը, ինչպես խոսում (և գրում) են ուրիշները: Այս «այնպես» հրամայականորեն պարտադիր է ավանդության անողոք օրենքի համաձայն, ժառանգության անխուսափելի օրենքի համաձայն, սակայն, այդ օրենքի կողքին, նրա հետ միասին և նրանից անանջատ, գոյություն ունի և մի ուրիշ օրենք, նույնպես անողոք, նույնքան պարտադիր և հրամայական: Այդ երկրորդ օրենքն առաջինի բացասումն է, նրա հակադրությունը, նրա խախտումը, որ մենք անվանում ենք ավանդախախտություն: Այս երկու տարամերժ օրենքները գործում են յուրաքանչյուր լեզվի մեջ և առաջ տանում նրա զարգացումը...: Ավանդությունը հրամայում է գործածել այսինչ ձևը, այսինչ բառը, այսինչ ոճը, և յուրաքանչյուր քաղաքացի ընդունում է այն, ինչ որ թելադրում է նրան ավանդությունը: Բայց քանի որ յուրաքանչյուր մարդ հասարակության անդամ է, որոշ դասակարգի խորհող անդամ, որոշ գոյի տեր և վերջապես քանի որ նա մարդ է և ոչ թե ձայնագիր գործիք, հասկանալի է, որ նա ընդունում է այն, ինչ նրան թելադրում է ավանդությունը, բայց ընդունում է այն ակտիվ կերպով, ընդունում է ներգործելով, իր լուսման մտցնելով այն բուրժի մեջ, ինչ որ ընդունում է նա ավանդությունից: Ավանդության թելադրած ընդհանուր ազգային լեզուն բեկվում, կոնկրետանում, անհատականանում է առանձին անհատների մոտ՝ վերջիններիս, գլխավորաբար և հիմնականում, դասակարգային գոյի և ապա երկրորդական զանազան գործոնների... բովի միջից անցնելով: Այսպիսով, տեղի է ունենում ավանդախախտում ավանդության ընդունման իսկ պրոցեսում...» (անդ, էջ 33—33): Լեզվի գոյության, նրա զարգացման ընթացքում այդ նոր ձևերը

(բառերը, ոճերը են), անտարակույս, միանգամից ընդհանրություն չեն ստանում. երկար ժամանակ նրանք ուղեկցում են տիրապետող ավանդական ձևերին, իբրև «շեղում, սխալ», իբրև ավանդախախտ ձևեր. սակայն աստիճանաբար նրանք տարածվում են, նվաճում ավանդականի տեղը, իրենք դառնում ավանդական, իսկ նախկին ավանդականը՝ դարձնում ավանդախախտություն. «Գործող քերականությունից սովորաբար դուրս մնացող, արհամարհված, բայց գոյություն իրավունքն իր իսկ ձեռքով կոող ավանդախախտությունը քանակական «ընդհատակյա» աճամբ վերածվում է որակի, դառնում ավանդություն և նախկին ավանդությունը դարձնում ավանդախախտություն: Այսպիսով, լեզվի մեջ տեղի է ունենում թոխչք, հեղաշրջում, կամ ավելի ճիշտ, օրինականացվում է արդեն կատարված փոփոխությունը...» (անդ, էջ 35):

Վերջապես, կարևոր, սկզբունքային խնդիրներից է նաև լեզուների ցեղակցության հարցը, որի մասին ևս Սեվակը չուր որոշակի տեսակետն է արտահայտել: Նա ընդունում է լեզուների ցեղակցությունը տարբեր լեզուների միջև եղած նմանությունների, համապատասխանությունների տեսակետից. «ցեղակից» լեզուների միջև իրոք գոյություն ունեն համապատասխանություններ, հատկանշական նմանություններ, սակայն, նրա կարծիքով, այդ համապատասխանություններն արդյունք են ոչ թե ընդհանուր ժագման, ոչ թե մի նախալեզվից սերած լինելու, այլ պատմական որոշ շրջանում տարբեր ցեղերի համակեցության և այդ համակեցության շնորհիվ տեղի ունեցած լեզվական փոխազդեցությունների. այդպիսով, լեզուների ցեղակցությունն, ինչպես ընդունում է Սեվակը, ոչ թե ծննդաբանական է, այլ տարբեր լեզուների միջև պատմականորեն գոյացած ընդհանրությունների արդյունք. «Կանգնած լինելով պատմության միակ ճիշտ մեթոդոլոգիայի՝ պատմական մատերիալիզմի գետնի վրա, մենք այս ցեղակցությունը դիտում և համարում ենք մարդկային խմբերի, ցեղերի պատմականորեն առաջ եկած հանրություն» (Առաջաբան 2. Աճառյանի «Հայոց լեզվի պատմության», հ. I, էջ 5): Հետևաբար, ցեղակցություն ասելով Սեվակը հասկանում է այն համապատասխանությունները, ընդհանրությունները, որոնք գոյություն ունեն տարբեր լեզուների միջև: Այդ ընդհանրություններն առաջացել են այն ժամանակ, երբ այժմյան ցեղակից լեզուների կրողների նախնիքներն ապրել են մի նախահայրենիքում ու փոխազդել իրար վրա: Առանձնապես հնդեվրո-

պական լեզվախմբի մասին խոսելով, նա գտնում է, որ այդ էլ ցույց է տալիս հնդեվրոպացիների համակեցությունը մի նախահայրենիքում. հնդեվրոպական լեզուների միջև եղած ընդհանրությունները՝ գալիս են այդ համակեցությունից, բայց այդ համակեցությունը դեռևս չի նշանակում, թե հնդեվրոպական ցեղերը նախահայրենիքում խոսել են մի ընդհանուր լեզվով. «Հնդեվրոպական լեզուների նմանությունները անշուշտ ապացուցում են այդ լեզուների ազգակցությունները, որը հետևանք է համապատասխան ցեղերի երկարատև համակեցության և փոխազդեցության, բայց այդ չի նշանակում, թե նրանք խոսել են մեկ ընդհանուր լեզվով» (անդ): Նախահայրենիքում բնակվող բազմաթիվ ցեղերի ու տոհմերի լեզուները, ըստ Գ. Սեվակի, բավականաչափ նմանվել էին իրար ու ստեղծել մի ընդհանրություն միմյանց մեջ, բայց նրանք լիովին չէին նույնացել, այլ յուրաքանչյուրն իր մեջ այդ ընդհանրությունների հետ պահել էր նաև իր մասնավորը, նախապես իրեն հատուկ տարրերից որոշ մաս. այդ բանի արդյունքն է այն, որ այժմյան ցեղակից հնդեվրոպական լեզուներն ընդհանրությունների հետ ունեն նաև տարբերություններ, որոնք ոչ թե ուշ շրջանի այլևայլ փոխազդեցությունների արդյունք են, այլ հնագույն առանձին լեզուների սեփական տարրերի մնացորդներ. «Հնդեվրոպական յուրաքանչյուր լեզու իր հերթին ունի տարբերիչ հատկանիշներ մյուս լեզուներից: Այդ տարբերությունների զգալի մասը գալիս է, անշուշտ, ենթադրյալ նախալեզվի շրջանից, երբ բազմաթիվ լեզուներ իրար արդեն նմանվել էին որոշ շափով, բայց դեռ պահել էին իրենց ցեղային, տոհմային տարբերությունները: Հետագայում այդ ցեղերը ցրվեցին՝ իրենց հետ տանելով նախահայրենիքում ձեռք բերած լեզվական ընդհանրությունները և միաժամանակ իրենց ցեղային—տոհմային առանձնահատկությունները» (անդ, էջ 6): Անցնելով, այնուհետև, հայոց լեզվի ցեղակցության խնդրին, հեղինակը որոշակի կերպով ընդունում է հայերենի ցեղակցությունը հնդեվրոպական լեզուների հետ, այն տեսանկյունով, իհարկե, որ վերը պարզեցինք. «Անառարկելի է, որ հայոց լեզուն ցեղակից է հնդեվրոպական կամ արիական անունը կրող լեզուների խմբին: Այդ ցեղակցությունն էր ակնարկում էնգելսը, երբ գրում էր. «Թվում է թե անասունների բնատրացումն ու բուծումը ինչպես և մեծ հոտեր կազմելն է առիթ հանդիսացել արիացիների և սեմիտների բաժանման՝ բարբարոսների մնացած զանգվածից: Եվրոպական և ասիական արիացիների համար անասունների անունները դեռևս ընդհանուր են, մինչդեռ կուպ-

լեզվի մեջ դրսևորվող այս երկու կարգի տարրերն ահա, քննության առնելով, Սեվակը հանգում է հետևյալ եզրակացությանը. «Անվիճելի է, որ մեր լեզվի ներքին բովանդակային կողմը, այն, ինչ կարելի է անվանել լեզվի ոգի, հիմնականում ժողովրդական է, և նրան մոտեցնում է բարբառներին: Նույնքան անվիճելի է, որ մեր լեզվի արտաքին՝ նյութական կողմը, կամ այն, ինչ կարելի է լեզվական ֆակտորա անվանել, գրաբարյան է, և դրանով հակադրում է մեր լեզուն բարբառներին» (անդ, էջ 76—77): Ժամանակակից հայոց լեզվի բառապաշարը, բառակազմությունը, հնչյունափոխության ավանդական օրենքները, գրությունը գերազանցապես գրաբարյան են, դրան հակառակ՝ ձևաբանությունը, շարահյուսությունը և շարահասությունը, ինչպես և իմաստաբանությունը, որ պարզապես այժմեական է, — ժողովրդական են: Սրանից էլ հետևում է, որ ժամանակակից հայոց լեզուն «ոչ գրաբար է, ոչ բարբառ, այլ գրաբարի ու բարբառների պատվանդանի վրա կանգնած մի համադրական (սինթետիկ) լեզու» (անդ, էջ 79): Այս պնդումը, մեր կարծիքով, վիճելի է, և մենք ստորև կանդրադառնանք դրան:

Երկրորդ խնդիրը ժամանակակից հայոց լեզվի հասարակական կշռի հարցն է և նրա ապագայի խնդիրը: Յուրջ տալով, որ սովետական կարգերի հաստատումից առաջ աշխարհաբարն արդեն իսկ դպրոցների, մամուլի, թատրոնի և գրականության լեզուն էր, նա պարզաբանում է նաև, որ այդ գրական լեզուն, այնուամենայնիվ, ժողովրդական չէր, որ նրանով չէր խոսում հայ ժողովրդի հոծ բազմությունը. նրանով գլխավորապես խոսում էր մտավորականությունը. մինչդեռ բուն ժողովրդը «մեծ մասամբ անգրագետ էր, դպրոցի երես չէր տեսել և դրա հետևանքով՝ էլ ոչ օգտվում էր գրական լեզվից... և ոչ էլ, մամուլանդ, նրա մշակմանը մասնակցում» (անդ, էջ 82): Ինքը գրական լեզուն էլ զուրկ էր իր ազատ զարգացման լայն հնարավորություններից, որովհետև ցարիզմի ազդեցին քաղաքականությունը կաշկանդում էր նրան: Բոլորովին ալ վիճակ է ստեղծվում սովետական կարգերի օրոք. պարտադիր ուսման, անգրագիտության վերացման, մասսայական մամուլի, գրականության, թատրոնի, ուղիղի շնորհիվ և այլ միջոցներով հայերեն գրական լեզուն դարձավ մասսաների սեփականությունը. «Լեզվի ժողովրդականացումը — ահա այն ամենահիմնականը, որ պետք է արձանագրել մեր լեզվի արդի փուլի՝ սոցիալիզմի փուլի պետք է արձանագրել մեր լեզվի արդի փուլի՝ սոցիալիզմի փուլի համար ամենից առաջ» (անդ, էջ 84): Մեր լեզվի երկրորդ նվաճումն այն է, որ նա շՄՍԻ պետական լեզու դարձավ և, վերջապես,

նա դարձավ բարձրագույն ուսումնական հաստատությունների, գիտության ու տեխնիկայի լեզու. նա էլ ավելի հարստացավ, մշակվեց ու դարձավ նաև փիլիսոփայության լեզու: Երկու պրոցեսներ անընդհատորեն շարունակվում են. դրանք են՝ մեր լեզվի մշակումն ու հարստացումը, և նրա ընդհանրացումը. մեր լեզուն մոտենում է արդեն բացարձակ համազգային լեզու լինելու աստիճանին. «Մեկ, առավել երկու, սերնդի փոփոխությամբ ռեալ իրականություն կդառնա համազգային միասնական լեզուն, որին մոտենում են Խորհրդային Միության մյուս բոլոր ժողովուրդներն էլ» (անդ, էջ 87):

Սրանք են, ահա, այն գլխավոր, տեսական սկզբունքները, որոնք արտահայտել է Գ. Սեվակն իր աշխատությունների մեջ՝ մինչև 1945—46 թթ.: Այդ բոլորը կարող ենք ամփոփել հետևյալ կերպ. իր գիտական գործունեության առաջին 15-ամյակում Գ. Սեվակը հանդես էր գալիս սովետական լեզվաբանության այն թևի հետ, որը գտնում էր, որ մարքսիստական լեզվաբանությունը պետք է ստեղծվի հենց մարքսիզմ-լենինիզմի վրա հենվելով և օգտագործելով թե՛ այն ամբողջ դրականը, որ ունի բուրժուական լեզվաբանությունը և թե՛ այն ճշմարիտը, որ պարունակում է իր մեջ Ն. Յա. Մառի ուսմունքը: Բնական է, որ այդ շրջանում արտահայտած նրա տեսակետներն էլ արտացոլում են այդ հոտանքի և՛ դրականը, և՛ բացասականը: Միանգամայն դրական է այն, որ նա հատկապես շեշտում է անցյալի ժառանգության օգտագործման անհրաժեշտությունը, ըստ որում ինքը իրոք օգտագործում է. առանձնապես նկատելի է Վիլհելմ Յոն Հոլբրուխտի և Ֆերդինանդ դը Սոսյուրի նպաստավոր ազդեցությունը: Միանգամայն ճիշտ է լուսաբանում Գ. Սեվակը լեզվի միասնության, լեզվի, որպես պատմականորեն զարգացող երևույթի, լեզվի ու խոսքի հարաբերության, ընդհանուր լեզվի ու «անհատական լեզվի» և շատ ուրիշ հարցեր: Ճիշտ կերպով է գնահատում նա նաև Ն. Յա. Մառի տեսությունը, ըստ որում ճիշտ դիրքերից էլ քննադատում է այդ տեսության մի շարք հիմնական դրույթները: Այդ բոլորի հետ միասին Գ. Սեվակի այդ տեսակետների մեջ իրենց արտահայտությունն են գտել այն ժամանակ սովետական լեզվաբանության մեջ ընդունված որոշ սխալ դրույթներ: Շեշտելով լեզվի, որպես ձևի, միասնականությունն ու ընդհանրությունը, նա գտնում է, որ լեզուն դասակարգանքներն երկփեղկված է իր բովանդակությամբ, իսկ սա էլ բխում է այն սխալից, որ նա լեզուն նույնացնում է հասարակական գիտակցության հետ (լեզվի երրորդ ֆունկցիան): Ճիշտ է, այստեղ էլ Գ. Սեվակը որոշակիորեն սահմա-

նազատվում է Ն. Յա. Մառից ու նրա ուղղափառ հետևորդներից՝ որոնք տարբեր դասակարգային լեզուներ էին տեսնում միևնույն ազգի կամ ժողովրդի հակամարտ դասակարգերի մոտ, բայց և այնպես, իր բնորոշումն էլ ընդունելի չէ: Անպայման որոշ քանակով բառերի բովանդակության մեջ արտահայտվում է դասակարգային վերաբերմունքը՝ գնահատությունը, բայց դա չի կարող երկփեղկել ամբողջ լեզուն: Գ. Սեվակը լեզվին դասակարգային բնույթ վերագրելու համար ելնում է ազգային կուլտուրաների մասին լենինյան հայտնի դրույթից (ձևով ազգային, բովանդակությամբ դասակարգային), բայց այդ դրույթը մեխանիկորեն լեզվի վրա տարածելը ճիշտ չէ: Վ. Ի. Լենինը խոսելով կուլտուրայի դասակարգային բովանդակության մասին, նկատի ունի դասակարգային գաղափարախոսությունը, իսկ լեզուն գաղափարախոսություն չէ: Իր այդ շՐՐ-ջանի աշխատությունների մեջ Գ. Սեվակը նույնպես լեզուն վերնաշենքային երևույթ է համարում, ինչպես որ ընդունված էր ամբողջ սովետական լեզվաբանության մեջ: Հայտնի է, որ Ստալինը այդ կարծիքը ոչ մարքսիստական համարեց. ելնելով այն փաստից, որ Ն. Յա. Մառը լեզուն նույնացնում էր հասարակության քաղաքական վերնաշենքի հետ, նա ժխտեց առհասարակ լեզուն վերնաշենքային երևույթների կազմին հատկացնելու հնարավորությունը, ըստ որում, այն «արմատական տարբերությունները», որոնք նա թվում է, վերաբերում են քաղաքական վերնաշենքին ու լեզվին: Այսպես, օրինակ, նա գտնում է, որ վերնաշենքը կործանվում, «լիկվիդացիայի է ենթարկվում» բազիսի կործանման հետ միասին. սա ճիշտ է քաղաքական վերնաշենքի վերաբերյալ, բայց ոչ՝ ընդհանրապես: Հայտնի է, որ կրոնը նույնպես վերնաշենքային կատեգորիա է. արդ, քրիստոնեական կրոնը գոյություն ունի ստրկատիրական հասարակարգում և մինչև այժմ էլ պահպանվել է առանց էական փոփոխությունների: Ուստի և՛ որքան որ գուհիկ էր Ն. Յա. Մառի մտեցումը, այնքան էլ միակողմանի ու սխեմատիկ է Ստալինի բնորոշումը: Հասարակության մեջ բազիսի ու վերնաշենքի միջև գտնվող ինչ-որ միջանկյալ կատեգորիաներ չկան. լեզուն հասարակական երևույթ է և անշուշտ իր տեղը պետք է գտնի: Այնպես որ, մեր կարծիքով, լեզվի ու վերնաշենքի փոխհարաբերության հարցը դեռևս լուծված չէ, և քանի որ Գ. Սեվակը լեզուն չի նույնացնում քա-

ղաքական վերնաշենքի հետ, ինչպես Մառն էր անում, ապա նրա այդ դրույթն էլ կարելի է միայն վիճելի համարել: Այնուհետև, հիմնականում ճիշտ բնորոշելով գրաբարի դերը, նրա գոյացման ու մշակման պրոցեսը, Գ. Սեվակը տուրք է տալիս այն սխալ տեսությունը, թե իբր բարբառները նախկին ցեղային լեզուներ են: Այդպես էլ, ճիշտ կերպով ընդունելով լեզուների ցեղակցությունը, նա սխալվում է, երբ ծագումաբանական ընդհանրությունները դիտում է որպես համակեցության հետևանքով տեղի ունեցած փոխազդեցությունների արդյունք: Այս սխալները, սակայն, ինչպես ասացինք, բնորոշ էին այն ժամանակվա սովետական լեզվաբանության ամբողջությամբ վերցրած, և Գ. Սեվակը, բնականաբար, բացառություն չէր կազմում: Այս բանը նկատի ունենալով է, որ մենք նրա այդ շրջանի դերը միանգամայն դրական ենք համարում, չնայած այդ և ուրիշ, մասնակի բնույթ կրող սխալներին. Գ. Սեվակը մարքսիզմի դիրքերից էր ելնում և նրա սխալները որոնումի անխուսափելի սխալներ էին:

Գուրգեն Սեվակի այս շրջանի գործունեության կարևոր դրույթներից մեկն այն պայքարն էր, որ նա ծավալեց ֆորմալիզմի դեմ՝ քերականագիտության բնագավառում: Այդ բանն ավելի լավ գնահատելու համար ավելորդ չենք համարում մի թոռացիկ հետադարձ հայացք ձգել աշխարհաբարի քերականության դասագրքերի պատմության վրա: Ինչպես գիտենք, արևելյան աշխարհաբարի քերականության գիտական ուսումնասիրության հիմնադիրն էր Ստ. Պալասանյանը: Աշխատությանս առաջին հատորում ընդհանուր գծերով բնութագրել ենք Ստ. Պալասանյանի լեզվաբանական-քերականագիտական հայացքները. այստեղ անհրաժեշտ ենք համարում վերհիշել, որ Պալասանյանի քերականական աշխատությունները կառուցված էին տրամաբանական սկզբունքներով. ինքը հեղինակն էլ այդ ուղղության ներկայացուցիչն էր քերականագիտության մեջ: Նրա գրքերն են օգտագործվել որպես հայոց լեզվի քերականության դասագրքեր հայկական դպրոցներում ավելի քան երեսուն տարի և այս բանով Պալասանյանը շատ մեծ ծառայություն է մատուցել հայոց լեզվի քերականության մշակմանը և ուսուցմանը:

Աշխարհաբարի քերականության մշակման երկրորդ շրջանն է սկսվում այս դարի առաջին տասնամյակից, երբ հրատարակվում է Մ. Աբեղյանի «Աշխարհաբարի քերականությունը»: Մանուկ Աբեղյանը, ինչպես տեսել ենք, ֆորմալիստական քերականության ներկայացուցիչն էր քերականագիտության մեջ. նա ունեցավ իր

1 Հարկ ենք համարում նշել, որ մենք էլ մինչև 1950 թ.՝ լեզվի դասակարգայնության այդ տեսակետն ենք պաշտպանել:

դրանք բոլորն էլ առաջացել են միևնույն՝ «ձեռք» նշանակող արմատից, զանազան հնչյունական անցումներով: Մենք այստեղ կանգ չենք առնում դրանց քննության վրա. հոգվածի վերջում գրված է՝ (1929 թ.), որից պետք է եզրակացնել, որ այդ հոգվածը գրված է եղել 1929 թ., այսինքն՝ այն ժամանակ, երբ Գ. Սեվակը դեռ նոր էր ավարտել համալսարանը և ընդունվել ասպիրանտուրա, ուստի և դա կարելի է դիտել լոկ որպես սկսնակի թոթովանք: Հիշենք, որ 1930 թ. նա արդեն հանդես է եկել հարեթաբանության քննադատությանը և քննադատել է հենց այն մեթոդը, որին նա հետևել է այդ հոգվածի մեջ: Սրանից պետք է այն հետևությունը հանգել, որ 1929 թ., երբ նա դեռ նոր էր ընդունվել ասպիրանտուրա, հավատում էր Ն. Մառի ուսմունքին ու նրա լեզվաբանական վերլուծություններին, բայց երբ խորացավ լեզվի տվյալների իրական քննության մեջ, համոզվեց, որ այդ վերլուծությունները ճիշտ չեն, ինչպես և տեսական շատ դրույթներ հիմնավորված չեն ու քննադատության չեն դիմանում: Սրանով էլ որոշվեց նրա ճիշտ դիրքավորումը «նոր ուսմունքի» նկատմամբ: Սակայն հետագայում, բառասունական թվականների երկրորդ կեսում, հայտնի իրադրությունների մեջ ուժեղացող ճնշման տակ նա, ինչպես և շատ ուրիշները ստիպված եղավ «անձնատուր լինել», հրաժարվել իր ճիշտ դիրքերից և որպես դրա ապացույց՝ տպագրել այն հոգվածը, որ երկար տարիներ ընթացքում անարժան էր համարել տպագրելու: Մենք էլ այդ հոգվածը հիշում ենք և նրանից մեջբերումներ ենք կատարում այն բանի համար միայն, որպեսզի մեր ասածը լոկ հայտարարություն չլինի: Այլապես, այդ հոգվածի մասին առանձնապես խոսելու կարիքը չէր լինի, որովհետև նա չի բնորոշում Գ. Սեվակի գիտական ուսումնասիրությունները:

Այսպես, ուրեմն, 1947 թվականից Գ. Սեվակը ևս հարկադրված եղավ ընդունելու «նոր ուսմունքն» ամբողջությամբ վերցրած: Այդ բանն իր արտահայտությունը գտավ նաև նրա՝ մինչև 1950 թ. հրատարակված ուրիշ աշխատությունների մեջ: Այսպես, նույն՝ 1941 թ. տպագրված «Ժամանակակից հայոց լեզվի տեսության» երկրորդ գրքում («Քառագիտություն») նա «նոր ուսմունքի» դրույթներից ելնելով, հայերենը համարում է «հնդեվրոպական-հարեթական երկացեղ» լեզու և այդ դրույթով էլ առաջնորդվում՝ հայերենի բառապաշարի բնութագրության մեջ: Պետք է նշել սակայն, որ ժամանակակից հայերենի բառապաշարի քննության մեջ, բարեբախտաբար, մոռանում է «նոր ուսմունքը» և, դրա շնորհիվ էլ, հասնում է

լուրջ արդյունքների: Այս գրքում Ն. Մառի մեթոդին տուրք է տալիս հայերենի բառակազմության քննության մեջ, որի մասին կխոսենք ստորև:

1948 թ., Գ. Սեվակը հրատարակեց իր «Ժամանակակից հայերենի համառոտ պատմություն» արժեքավոր աշխատությունը, որի մեջ նույնպես անհրաժեշտ տուրք է տալիս իշխող մառականությանը. դա արտահայտվում է հատկապես լեզվի ու գաղափարախոսության նույնացման («Լեզուն հասարակական գիտակցության ձևերից մեկն է՝ վերնաշենքային արտահայտություն, որը հաճախ այլ գաղափարախոսություններից շատ ավելի շուտ և զգայուն կերպով է արտահայտում բազիսում տեղի ունեցող փոփոխություններն ու տեղաշարժերը՝ վերջին հաշվով պայմանավորված լինելով նրանցով», էջ 10), լեզվական ստադիաների, կամ, ինչպես ինքը վերանվանում է դրանք՝ ֆորմացիաների ընդունումով («Հասարակական յուրաքանչյուր ֆորմացիայի օրինաչափորեն ուղեկցում է լեզվական համապատասխան «ֆորմացիա» կամ գոյավիճակ», էջ 10) և այլն, և այլն: Սակայն, ինչպես ուշադիր քննությունը ցույց է տալիս, դրանք առավելապես հավուր պատշաճի հայտարարություններ են, որոնք, բարեբախտաբար, չեն ազդում լեզվական նյութի ուսումնասիրության վրա, եթե ուշադրության չառնենք մի քանի շինծու օրինակներ, որոնք բերվում են այդ հայտարարությունները հիմնավորելու համար: Ինչ վերաբերում է աշխատությանը, ապա նա, չնայած որոշ առարկելի կամ սխալ դրույթների առկայության, հմուտ քննությունների արդյունք է և լուրջ ներդրում է մեր գրական լեզվի պատմության ուսումնասիրության մեջ: Աշխատությունը բաղկացած է ներածությունից և չորս բաժնից: Ներածության մեջ «Հայոց լեզունների զարգացման ակնարկ»-ից հետո, հեղինակը զբաղվում է արևելահայ գրական լեզվի պատմության շրջանաբաժանման (պերիոդիզացիայի) խնդրով և առաջարկում է հետևյալ շրջանաբաժանումը.

1. Կազմավորման կամ վաղ աշխարհաբարի շրջան (XVII—XVIII դարեր).
2. Ձևավորման կամ լուսավորական շրջան (XIX դարի սկզբից մինչև 70-ական թվականները).
3. Ժողովրդականացման կամ դասական աշխարհաբարի շրջան (70-ական թվականներից մինչև 1920 թ.).
4. Սովետական կամ համազգային լեզվի շրջան (1920 թվականից ի վեր):

Այս շրջանաբաժանումը աշխարհաբարի պատմության գարգացման տարբեր էտապների բնութագրման տեսակետից, մեր կարծիքով, ճիշտ է ընդհանուր առմամբ: Սակայն, դարաշրջանների որոշման տեսակետից անհրաժեշտ է հետևյալ հանգամանքները նկատի ունենալ. աշխարհաբարի կազմավորման կամ վաղ աշխարհաբարի շրջանը իրականում երկու տարբեր շրջաններ են ներկայացնում. աշխարհաբարի կազմավորման շրջանը կամ, այլ անվանումով՝ մինչև հայերենի աշխարհաբարացման շրջանն՝ սկսվում է XV դարից ու տևում է մինչև XVII դարը. XVII—XVIII դարերում աշխարհաբարը կար արդեն որպես ժողովրդական-խոսակցական լեզու և ձգտում էր գրականության լեզուն դառնալու. այդ շրջանը հարմար է կոչել վաղ աշխարհաբարի կամ մինչազգային աշխարհաբարի շրջան, ըստ որում դա տևում է ոչ թե մինչև XVIII դարի վերջը, այլ մինչև XIX դարի կեսը: Հաջորդ շրջանը կարելի է կոչել աշխարհաբարի գրականացման ու մշակման կամ այլ կերպ՝ ազգային երկճյուղ գրական լեզվի շրջան, որ իր հերթին բաժանվում է երկու ենթաշրջանի՝ գրականացման (XIX դարի կեսից մինչև 70-ական թվականները) և հետագա մշակման (XIX դարի 70-ական թվականներից մինչև սովետական կարգերի հաստատվելը Հայաստանում). այդ ենթաշրջանները կարելի է կոչել նաև լուսավորական և դասական աշխարհաբարի ենթաշրջաններ, օգտագործելով Գ. Սեվակի անվանումները:

Վիճելի է Գ. Սեվակի մի այլ տեսակետը ևս. խոսելով աշխարհաբարի համակարգի մասին, նա գրում է. «Մեր գրական աշխարհաբարը, որ մենք այս աշխատության մեջ ուղղակի կոչում ենք նաև աշխարհաբար, հանդիսանում է գրաբարի և բարբառների պատվանդանի վրա կառուցված մի համազիջական (կոմպրոմիսային), համադրական լեզու, որի նյութական մատերիական ինվենտարը առնված է գրաբարից, իսկ բովանդակային և քերականական կողմը՝ բարբառներից (ժողովրդից): Այսպիսով, աշխարհաբարի մարմինը գրաբարյան է, իսկ հոգին կամ ոգին՝ ժողովրդական» (էջ 26—27): Այս բնորոշումից այնպես է ստացվում, թե մեր աշխարհաբար լեզուն արհեստական լեզու է, բաղադրված գրաբարի «նյութական ինվենտարի» և բարբառների քերականության գումարով. մինչդեռ դա խորապես սխալ է: Աշխարհաբար լեզուն հին հայերեն ժողո-

վորդական լեզվի, կենդանի լեզվի պատմական զարգացումով գոյացած նոր որակ է. իբրև այդպիսին նա բնականաբար իր մեջ ունի և՛ գրաբարյան, և՛ բարբառների տարրեր: Առաջինից նա, եթե գրական փոխառությունները հանենք, տարրեր ունի այն շափով, որ շափով ներկայացնում է գրաբարի հիմքը հանդիսացած ժողովրդական կենդանի լեզվի հետագա զարգացումը, երկրորդներից՝ այն շափով, որ շափով ներկայացնում է նրանց ընդհանրությունը, կենդանի ժողովրդական լեզուն: Հետևաբար, աշխարհաբարը ո՛չ թե համադրական լեզու է, այլ համաժողովրդական լեզվի պատմական զարգացումով գոյացած նորորակ լեզու: Գրական լեզվի մեջ, գրական փոխառություններով մուտք գործած գրաբարյան և բարբառային տարրերը, բնականաբար, չեն փոխում նրա էությունը, թեև զգալի դեր են խաղում նրա մշակման ու հարստացման մեջ:

«Ներածության» երրորդ հատվածը, որ վերնագրված է «Լեզվի օբյեկտիվ ուսումնասիրության մեր մեթոդը», նվիրված է այն հարցին, թե ինչպե՞ս կարելի է որոշել տվյալ հեղինակի կամ աշխարհաբարի զարգացման տվյալ փուլի լեզվի բնույթը՝ բարբառայնության, գրաբարայնության կամ ժողովրդայնության տեսակետից. այստեղ հեղինակն առաջարկում է այսպես կոչված իր լեզվական սպեկտրի օգտագործումը. սպեկտրի համար նա առնում է մեր լեզվի հնչյունական, ուղղագրական, բառային և քերականական որոշ բաղադրիչներ (թվով 48) և դրանցով փորձում է բնորոշել տվյալ հեղինակի լեզվի բնույթը: Մանրամասնությունների մեջ ընկնելու, կարող ենք ասել, որ սպեկտրը կարելի կլինի օգտագործել, եթե որոշ ճշտումների ենթարկվի ու հարստացվի բաղադրիչների քանակով ու բազմազանությամբ՝ մեր հեղինակների լեզվի ու ոճի վիճակագրական ուսումնասիրության համար. ցավոք սրտի, հեղինակը չի օգտագործել լեզվաբանական վիճակագրության այն ժամանակ արդեն մեծ տարածում գտած մեթոդները:

Առաջին գլխում, որ վերնագրված է «Աշխարհաբարի կազմավորման կամ վաղ աշխարհաբարի շրջան» (էջ 35—52), երկու էջում ներկայացնելով այդ շրջանի շատ հակիրճ բնութագիրը, բերում է XVII—XVIII դարերի աշխարհաբարի նմուշներ, առանց դրանց լեզվաբանական վերլուծության:

Հաջորդ գլխում՝ «Աշխարհաբարի ձևավորման կամ լուսավորական շրջան» (էջ 53—116), հեղինակը տալիս է այդ շրջանի համառոտ բնութագիրը (էջ 55—56), բերում լեզվական նմուշներ (էջ 56—71), ապա կանգ առնում մի շարք խնդիրների վրա (աշխար-

1 Գ. Բ. Զահուկյան, Հայոց լեզվի պերիոդիզացիայի հարցերը, ԵՊՀԳԱ № 57, մաս 1, 1956, էջ 49—102:

հարարի հիմնադրի հարցը և խաշատուր Աբովյանը, Աբովյանի լեզվագիտական հայացքները, արևմտահայ և արևելահայ գրական լեզուներ, գրապայթար): Այդ խնդիրներից առավել հանգամանորեն քննարկված են Աբովյանի, որպես աշխարհաբարի հիմնադրի հարցը և գրապայթարի խնդիրը. հեղինակի գրույթները հիմնականում ընդունելի են:

Երրորդ գլուխը նվիրված է աշխարհաբարի ժողովրդականացման կամ դասական աշխարհաբարի շրջանին (էջ 117—146): Այստեղ էլ, շրջանի համառոտ բնութագրումից հետո, հեղինակը քննության նյութ է դարձնում «Հովհաննես Թումանյանի լեզուն և ժողովրդագյանության հարցը լեզվի մեջ», «Քարբառային սեպարատիզմի տեսությունը» և «Գրական աշխարհաբարի համակարգը», որին նվիրված է միայն երեք էջ և որի մեջ պաշտպանում է աշխարհաբարի մասին վերը մեր վիճարկած տեսակետը (աշխարհաբարի համարական բնույթը):

Վերջապես, վերջին գլուխը ներկայացնում է «Սովետական կամ համազգային լեզվի շրջանի» ուսումնասիրությունը (էջ 146—277): Այստեղ հեղինակը առանձին գլուխներում քննում է հետևյալ խնդիրները. 1. Հայոց լեզվի հասարակական դերը, 2. Բառապաշարի տեղաշարժները, 3. Նորագույն հսպավումները հայերենում, 4. «Սովետական Հայաստան» թերթի լեզուն, 5. Հայոց լեզվի ուղղախոսության շուրջը, 6. Հայոց լեզվի բառագանձը, 7. Հայոց լեզվի բառակազմությունը: Ի տարբերություն նախորդ երեք մասերի, այս մասում համեմատաբար ավելի ամբողջական գաղափար է տրվում տվյալ շրջանի լեզվական համակարգի մասին, թեև այստեղ էլ շեշտը դրվում է բառապաշարի ուսումնասիրության վրա: Այս ամբողջ մասի հիմնական գլուխները (2, 3, 6, 7) ներկայացնում են վերը հիշված «Ժամանակակից հայոց լեզվի տեսության» երկրորդ գրքի առաջին պրակի («Բառագիտություն») վերահրատարակությունը, և որովհետև դրանց մեջ արծարծված հարցերին անդրադառնալու ենք ստորև, այստեղ կանգ չենք առնի դրանց վրա:

Ամբողջ աշխատությունն, ինչպես արդեն ասել ենք, ներկայացնում է ոչ թե մեր լեզվի պատմության սիստեմատիկ ուսումնասիրությունը, այլ դրա հետ ուղղակի կամ անուղղակի կերպով կապված առանձին հարցերի հետազոտությունը: Այդ պատճառով էլ, ավելի հարմար կլինեք վերնագրել դրվագներ կամ ակնարկներ ժամանակակից հայոց լեզվի պատմության: Դա, իհարկե, որևէ շահով չի նսեմացնում գրքի արժեքը. ինչպես արդեն ասել ենք և ինչպես

ցույց է տալիս բովանդակության համառոտ շարադրանքը, նա արժեքավոր ներդրում է ժամանակակից հայերենի պատմության ուսումնասիրության բնագավառում:

Այս վերջին աշխատությունների մասին վերը շարադրվածից կարելի է հանգել հետևյալ ընդհանուր եզրակացության. 1947—50 թթ. մատականության բացարձակ տիրապետության շրջանում, Գ. Սեվակը նույնպես հարկադրված եղավ ընդունել «նոր ուսմունքի» բոլոր դրույթները և պաշտպանել դրանք իր աշխատությունների մեջ: Բայց միևնույն ժամանակ, ինչպես տեսանք, նա շարունակեց լեզվական իրողություններն ուսումնասիրել ընդհանուր առմամբ ճիշտ մոտեցումով, որոնելով նաև լեզվաբանական-հետազոտական նոր եղանակներ (օրինակ՝ լեզվական սպեկտրը), իսկ այդ նշանակում է, թե ն. Յա. Մառի բոլոր դրույթների ընդունումը՝ նրա մոտ ավելի դեկլարատիվ-ցուցադրական բնույթ էր կրում: Դրանով է պայմանավորված այն հանգամանքը, որ 1950 թ. դիսկուսիայից հետո Գ. Սեվակը հեշտությամբ ազատագրվեց այդ սխալ դրույթներից և շարունակեց իր ուսումնասիրությունները ճշմարիտ ուղիով:

1950 թվականից հետո Գ. Սեվակը տպագրել է «Ժամանակակից հայոց լեզվի դասընթացը»,—որ, ինչպես ասել ենք, «Ժամանակակից հայոց լեզվի տեսության» առաջին և երկրորդ գրքերի վերամշակված հրատարակությունն է,—այլև մի շարք հոդվածներ: Այդ բոլորից մենք կանգ կառնենք միայն «Ժամանակակից հայոց լեզվի դասընթացի» և հայերեն բարբառների ծագման հարցին նվիրված քանակիճական հոդվածի վրա:

«Ժամանակակից հայոց լեզվի դասընթացը» (1955 թ.) բաղկացած է հինգ մասից, այն է. 1. Ներածություն, 2. Ժամանակակից հայոց լեզվի կազմավորումը, 3. Հնչյունաբանություն, 4. Բառագիտություն, 5. Չևաբանություն: Կանգ շանելով նկարագրական-քերականական հարցերի վրա, մենք այստեղ կաշխատենք շոշափել մի քանի՝ տեսական կարևորություն ունեցող խնդիրներ և վեր հանել այն նորը և յրականը, որ պարունակում է այս աշխատությունը, համեմատության մեջ առնելով նաև դրա առաջին հրատարակությունը¹:

Ներածության մեջ հեղինակը համառոտակի խոսում է լեզվի բնորոշման, նրա հասարակական դերի, զարգացման յուրահատկությունների, ազգային ու գրական լեզուների և նման հարցերի մա-

¹ Հիշելու ենք ՀԽՍ համառոտագրությունը:

սին: Երբ այս հարցերի քննությունը համեմատում ենք գրքի առաջին հրատարակության («ժամանակակից հայոց լեզվի տեսություն») «Նախաշավիղի» նույն բաժինների հետ, ապա տեսնում ենք, որ շատ բնորոշումներ հիմնականում անփոփոխ են մնացել կամ մասնակիորեն են վերափոխվել: Սա, իհարկե, դրականորեն է բնութագրում Գ. Սեվակի լեզվաբանական զարգացումը, ըստ որում դա նշանակում է, թե դիսկուսիայից առաջ էլ, մինչև 1946—47 թթ. նա կանգնած է եղել հիմնականում ճիշտ դիրքերի վրա: Դրանցից կարելի է հիշել լեզվի հասարակական դերի՝ որպես հաղորդակցման միջոցի ճիշտ բնորոշումը, լեզվական էվոլյուցիայի և ուելյուցիայի ճիշտ լուսաբանությունը, գրական լեզվի և ազգային լեզվի ճիշտ տարբերակումը և այլն: Բայց դա նշանակում է նաև մի այլ բան. գրքի վերամշակման ընթացքում հեղինակը հրաժարվել է լեզվի մասին ունեցած այն ակնհայտորեն սխալ պատկերացումներից, որոնք տեղ են գտել առաջին հրատարակության մեջ (լեզուն որպես փաղափարախոսություն, որպես դասակարգային երևույթ և այլն), մինչդեռ որոշ սխալ ըմբռնումներ էլ պահել է: Անցյալում նրա արտահայտած ճիշտ դրույթների շարադրանքը տվել ենք վերևում, մի քանի դրույթներ էլ քննադատել ենք: Այստեղ, ուրեմն, կխոսենք միայն այն կարծիքների մասին, որոնք կամ բոլորովին չենք շոշափել, կամ էլ միայն շարադրել ենք, առանց քննական վերլուծության:

Խոսելով լեզվի ու մտածողության միասնության մասին և ընդհանուր առմամբ ճիշտ բնորոշելով այդ միասնությունը, Գ. Սեվակը մի այլ տեղ գրում է. «Այսպիսով, մտածողությունը մտածելու կարողությունն է պոտենցիալ վիճակում: Մտածությունն էլ այդ պոտենցիայի դրսևորումն է, նրա կիրառումը: ...Մտածողությունը և մտածությունը համապատասխանում են լեզուն և խոսքը իբրև նրանց դրսևորում, նյութական բազա: Լեզուն վերացական առումով ոչ այլ ինչ է, քան տվյալ ազգի (տոհմի) խոսելու կարողություն, որը տեղավորվում է բառարանի և քերականության մեջ՝ իհարկե, ոչ լրիվ կերպով և առանց կյանքի» (էջ 28, հմմտ. ՀԼՏ, էջ 26—27): Այս ձևակերպումը ճշտման կարիք ունի. հեղինակի կարծիքով՝ մտածողությունը մտածելու կարողությունն է, բայց դա միայն «մտածողություն» տերմինի մի իմաստն է, և այս դեպքում՝ «մտածողություն-մտածություն // լեզու-խոսք հարաբերության մեջ դա չէ էականը: Մտածողություն ասելով հասկանում ենք հրեք բան. ա) մտածողությունը որպես մտածելու կարողություն, որ հասա-

րակական մարդու կամ ավելի ճիշտ՝ բանական մարդու (homo sapiens) երևան գալուց ի վեր մարդու մոտ բնախոսական հատկությունն է, բ) մտածողությունն իբրև մտածելու պրոցես, մտածողական կարողության գործադրության կամ կիրառության պրոցես. գ) մտածողությունն իբրև այդ երկուսի արդյունք իր ամբողջությամբ վերցրած, այսինքն՝ մտածելու պրոցեսի արդյունքն իր ամբողջությամբ կամ այլ կերպ՝ բոլոր մտածողությունների ամբողջությունը՝ հանրագումարը: Լեզվի ու մտածողության միասնության տեսակետից հենց այս վերջինն է կարևոր. մտածողությունը, որպես բնախոսական երևույթ, հատուկ է մարդուն անկախ լեզվից. մտածողությունը, որպես մտածելու պրոցես, կարող է տեղի ունենալ նաև առանց լեզվի՝ պատկերացումների ու մտապատկերների հիման վրա, բայց մտածողությունը, որպես մտքերի ու մտածությունների ամբողջություն, չի կարող գոյություն ունենալ առանց նյութական թաղանթի՝ առանց լեզվի: Խոսելու համբերի մոտ այս դեպքում հնչյունային լեզվի միավորներին փոխարինում են առարկաների ու երևույթների հետուղակիորեն կամ պայմանականորեն կապված պատկերացումները: Այս մոտեցմամբ էլ պետք է որոշել լեզվի ու խոսքի հարաբերությունը: Լեզուն, իբրև խոսելու կարողություն, բնախոսական հատկություն է. լեզուն որպես հաղորդակցման միջոց ու մտածողության նյութական ձև, ոչ այլ ինչ է, եթե ոչ անվերջորեն դրսևորվող խոսքերի նյութական միավորների, խոսքային միջոցների ու երևույթների ընդհանրացված ու վերացարկված ամբողջությունը խոսողների գիտակցության մեջ: Տվյալ լեզվով խոսող հանրության ամեն մի անդամի գիտակցության մեջ է լեզուն՝ իր նյութական միավորներով (հնչույթներ, ձևույթներ, բառեր ևն), քերականական կատեգորիաներով ու միջոցներով, բոլոր հնարավոր խոսքերի ու նախադասությունների վերացարկված և ընդհանրացված կաղապարներով: Լեզվի այդ միավորներն ու քերականական կանոնները կարող են գրի առնված լինել, ամփոփվել բառարանների ու քերականությունների մեջ կամ չլինել. դա ոչ մի նշանակություն չունի լեզվի օբյեկտիվ գոյության համար: Մյուս կողմից, լեզուն որպես հաղորդակցության միջոց, ոչ այլ ինչ է, եթե ոչ անվերջորեն դրսևորվող խոսքերի, հազարավոր ու միլիոնավոր մարդկանց անընդհատորեն տեղի ունեցող հաղորդակցման պրոցեսում դրսևորվող խոսքերի ամբողջությունը կամ հանրագումարը: Այս տեսակետից լեզուն ընդհանուրն է, ամբողջականը, իսկ յուրաքանչյուր խոսք՝ նրա իրականում դրսևորվող մի մասնիկը, մի կողմը, մի օղակը միայն:

Վերը մենք խոսել ենք, արդեն, այն մասին, թե ինչպես է բացատրում Գ. Սեվակը լեզվի զարգացման, լեզվի աստիճանական փոփոխության պրոցեսը «ավանդության ու ավանդախախտության օրենքներով»: Սակայն, շարադրելով նրա այդ բացատրությունը, մենք քննության առարկա չենք դարձրել այն՝ երկու պատճառով: Ցանի որ այդ նույն բացատրությունը գրեթե անփոփոխ պահպանված է նաև գրքի այս նոր հրատարակության մեջ, ապա մենք հարմար գտանք այս առթիվ քննել այն. երկրորդ՝ այն գրքի հրատարակության ժամանակ այդ բացատրությունը որոշակիորեն հակադրվում էր լեզվի զարգացման մատչյան տեսությանը և հարցի լուսաբանության մի այլ ուղի էր նշում. պետք է նկատի ունենալ, որ այդ բացատրությամբ Գ. Սեվակը հարում էր այն ժամանակվա սովետական լեզվաբանության առավել առաջավոր թևին: Հայտնի է, որ 20—30-ական թվականների սովետական ուսուցիչական լեզվաբաններից շատերը, որոնք ոչ թե կուրորեն հետևում էին Ն. Յա. Մառին, այլ փորձում էին մարքսիզմ-լենինիզմի դիրքերից ելնելով լուսաբանել լեզվական երևույթները, առաջ էինք քաշել ավանդության և ավանդախախտության տեսակետը, որ ուսերենով կոչում էին տրադիցիայի և օպոզիցիայի օրենք¹: Գ. Սեվակը հետևում էր այդ տեսությանը, և այն ժամանակ դա միանգամայն դրական էր: Ինչ վերաբերում է գրքի վերահրատարակության ժամանակաշրջանին, ապա, ինչպես տեսել ենք, դա ներկայացնում է սովետական լեզվաբանության զարգացման մի նոր փուլ, և այս նոր փուլում այդ բացատրության անփոփոխ պահպանումը, բնականորեն, բերում է իր հետ անցած էտապների ոչ միայն դրականը, ճշմարիտը, այլև՝ սխալը: Պրոֆ. Գ. Սեվակն այս նոր հրատարակության մեջ ավանդությունը կոչում է «նյութի պահպանման օրենք», իսկ ավանդախախտությունը՝ «նյութի նորոգման օրենք» (էջ 33): Ֆիզիկայի այս տերմինների գործածությունն, իհարկե, որևէ բան չի փոխում, եթե շատենք, թե ավելի վնասում է, լեզվին վերագրելով բնական երևույթներին հատուկ օրենքներ, թեկուզ և փոխաբերաբար: Խնդիրն այն չէ, իհարկե, թե լեզվի զարգացման պրոցեսում գոյություն ունեն, արդյոք, ավանդությունն ու ավանդախախտությունը, թե ոչ: Վերջին հաշվով, այդ տերմինները ուրիշ բան չեն նշանակում, եթե ոչ՝ հնի ու նորի պայքարը՝ որպես զարգացման պրոցեսի էություն:

¹ Այդ տեսությունն ընդունել ենք և մենք, հետևելով մի շարք ուսուցիչական լեզվաբանների, բայց առանձնապես՝ Գ. Սեվակին, մեր «Ընդհանուր լեզվաբանության դասընթացի» մեջ (1947, էջ 212—213):

թյուն. պրոֆ. Գ. Սեվակը հենց այդպես էլ դիտում է այն և իբրև դրա հիմնավորում շատ տեղին բերում է լենինյան հետևյալ տահմանումը. «Ձարգացումը հակադրությունների պայքար է»²: Այդ տեսակետից, ավանդության և ավանդախախտության օրենքները նոր բան չեն ասում, և մեր առարկությունն էլ դրա մասին չէ, այլ ավանդախախտության առաջացման բացատրության մասին: Գ. Սեվակը հետևելով այն ժամանակ սովետական լեզվաբանության մեջ որոշ տարածում գտած տեսությանը², ավանդախախտությունը բացատրում է հետևյալ ձևով. «Ավանդությունը հրամայում է գործածել այսինչ ձևը, այսինչ բառը, այսինչ ոճը, և յուրաքանչյուր քաղաքացի ընդունում է այն, ինչ որ թելադրում է նրան ավանդությունը: Բայց քանի որ յուրաքանչյուր մարդ հասարակության անդամ է, որոշ գոյի տեր և վերջապես քանի որ նա մարդ է և ոչ թե ձայնագիր գործիք, հասկանալի է, որ նա ընդունում է այն, ինչ նրան թելադրում է ավանդությունը, բայց ընդունում է ակտիվ կերպով, ընդունում է ներգործելով, իր լուրջ մտքնելով այն բոլորի մեջ, ինչ որ ընդունում է ավանդությունից: Ավանդության թելադրած ընդհանուր ազգային լեզուն բեկվում, կոնկրետանում, անհատականանում է առանձին անհատների մեջ, և այսպիսով, տեղի է ունենում ավանդախախտում ավանդության ընդունման իսկ պրոցեսում» (էջ 32—33, հմտ. ՀԼՏ, էջ 32—33): Այս բացատրությունից այնպես է ստացվում, որ ավանդախախտությունն առաջ բերողները անհատներն են. գրքի առաջին հրատարակության մեջ հեղինակը խուսափել է այդ ինդիվիդուալիզմից, գտնելով, որ անհատների այդ նորարարությունն էլ պայմանավորված է նրանց դասակարգային գոյով, իսկ երկրորդ հրատարակության մեջ դեն նետելով այդ, ակամայից հանգել է ինդիվիդուալիզմին, թեև ինքը շատ ճիշտ կերպով քննադատում է այդ տեսությունը: Քանի որ այդ ինդիվիդուալիստական հայացքն ընդհանրապես խորթ է Գ. Սեվակին, ապա, բնականաբար, մենք հիշյալ բացատրության այդ կողմը նրա համար էական սխալ չենք համարի և կրավականանանք նշելով, որ անհրաժեշտ ճշտում պետք է մտցնել: Ավելի կարևոր ենք համարում խոսել այդ բացատրության մի այլ կողմի մասին. պրոֆ. Գ. Սեվակի այդ լուսաբանության համաձայն, ավանդախախտությունը տեղի է ունենում հենց

¹ Ленинский сборник, IX, էջ 165:
² Ավելորդ չենք համարում հիշել, որ այդ տեսությունն իր արտահայտությունն է գտել նաև պրոֆ. Գ. Ա. Ղափանցյանի «Ընդհանուր լեզվաբանության» մեջ (1937, 1939):

րեստ հնչյուններից, ելնելով նրանց ընդհանրություններից և տարբերություններից: Հանրորեն գիտակցված և արժեքավորված յուրաքանչյուր հնչյուն կամ հնչյունական հասկացությունը հնչույթ (ֆոնեմա) է» (ՀԼՏ, էջ 91—92, հմմտ. Դասընթաց, էջ 80—81): Այս բացատրությունն ու բնորոշումը, ինչպես տեսնում ենք, հիմնված է իմացաբանական մոտեցման վրա և այդ տեսակետից ճիշտ է, ըստ որում դա արտացոլում է 1930-ական թվականներին սովետական լեզվաբանության մեջ դրսևորված կենսունակ հնչույթաբանական ուղղությունը: Գ. Սեվակի դերն, այս տեսակետից, մեծ է սովետահայ լեզվաբանության մեջ հենց նրանով, որ նա բերում էր այդ առաջավորը՝ իր հստակ պատկերացումով: Ճիշտ է, հնչույթաբանության զարգացման արդի մակարդակից ելնելով այդ բնորոշումը կարելի է ոչ լրիվ համարել (չի բացահայտված հնչյունի, որպես խոսքի, իսկ հնչույթի որպես լեզվի միավորի բնույթը, նկատի չի առնված հընչույթի իմաստազատիչ դերը և այլն), բայց չպետք է մոռանալ, որ դա գրված է երեսունական թվականներին:

Նույնը պետք է ասել նաև ձևույթի տեսության մասին: Այստեղ էլ, ինչպես տեսել ենք, առաջին խոսքը Գ. Ղափանցյանն է ասել, ըստ որում ձևույթի սահմանումը նրա մոտ շատ ավելի ամբողջական է, քան հնչույթինը: Եվ այստեղ էլ, նրանից անմիջապես հետո, Գ. Սեվակն էր, որ առավել հստակությամբ շարադրեց ձևույթի տեսությունը: Խոսելով ձևի ու ձևույթի մասին, Գ. Սեվակը գրում է. «Ձև (ֆորմա) ասելով հասկանում ենք լեզվական յուրաքանչյուր իրողության կամ արտահայտության արտահայտչական կողմը, դրսևորման միջոցը, այն եղանակները, որոնց միջոցով դրսևորվում է լեզվական յուրաքանչյուր արտահայտություն, լինի նա խոսք, նախադասություն, բառ, ածանց և այլն: ...Ձևույթ (մորֆեմա) ասելով հասկանում ենք ոչ թե սոսկ ձև՝ վերացված, կտրված իր բովանդակությունից, այլ լեզվի նվազագույն այնպիսի միավոր, որը հանդիսանում է թե ձև, թե բովանդակություն: ...Ինչպես պարզ երևում է, ձևը և ձևույթը տարբեր բաներ են: Ձևույթները լեզվի ատաղձն են, շինանյութը՝ լեզվական նվազագույն այնպիսի միավորներ, որոնք անպայման ունեն որոշ իմաստ» (ՀԼՏ, էջ 117—118, Հայոց լեզվի դասընթաց, էջ 202—203): Գ. Սեվակը ոչ միայն ճիշտ կերպով բնորոշում է ձևույթը, այլև որոշակիորեն տարբերակում է ձևը և ձևույթը միմյանցից, թե՛ տերմինների տարբերակումով, թե՛ բնորոշումով: Այնուհետև, նշելով, որ ձևույթները կարող են լինել երկու տեսակ՝

հիմնական և երկրորդական, անցնում է դրանց մասնամասն քննությունը: Հիմնական ձևույթներ համարելով արմատները և մանրամասնորեն բացատրելով այդ, երկրորդական ձևույթներն էլ բաժանում է երկու տեսակի՝ իրահարաբերական և բառահարաբերական, որովհետև առաջինները «ցույց են տալիս առարկաների, իրերի, իրային հարաբերություններ», իսկ երկրորդները՝ ցույց են տալիս «հարաբերություններ, բայց ոչ իրերի, այլ բառերի միջև» (էջ 121)՝ Այսպիսով, Գ. Սեվակը դեռևս 1938 թ. հիմնականում ճիշտ կերպով հայ ընթերցողին ներկայացրել է ձևույթի տեսությունը այնպես, ինչպես նա ընդունված էր սովետական լեզվաբանության մեջ, բայց շատ ավելի հստակ ձևակերպումներով ու հետևողական սկզբունքներով: Դիտելի է միայն, որ նա բառ դարձած արմատները (քար, լույս ևն) ձևույթ չի համարում, իսկ Գ. Ղափանցյանի մոտ գործածված «բառակազմական» կամ «բառաստեղծական» անվանումը փոխարինում է «իրահարաբերական» տերմինով, գտնելով որ դրանք իրերի, առարկաների հարաբերություն են ցույց տալիս: Թե՛ առաջին կարծիքի և թե՛ այս բացատրության հետ դժվար է համաձայնել: Կար բառ է, բայց և ձևույթ է. ինչպես որ հաճախ արմատն ու բառը համընկնում են, այնպես էլ հիմնական ձևույթն ու բառը կարող են համընկնել¹. բառակազմական ձևույթների արտահայտած իրային հարաբերությունը այլ բան չէ, քան բառերի հարաբերությունը, ուստի և՛ դրանով տարբերակել երկրորդական ձևույթների երկու խմբերը՝ հազիվ թե ընդունելի լինի. անզուլխ ձիավոր և առանց զլխի բոլորովին նույն հարաբերությունն են արտահայտում, բայց մեկում ունենք բառակազմական, մյուսում՝ բառահարաբերական երկրորդական ձևույթ. այդ պատճառով էլ, ավելի հարմար է այդ երկու խմբերի տարբերակման հիմքում ֆունկցիոնալ տարբերությունը դնել:

Նույն աշխատության ուշագրավ բաժիններից են ժամանակակից հայերենի կազմավորման, խոսքի մասերի դասակարգման, ժամանակակից հայերենի բառապաշարի տարբեր շերտերի ու նման շատ հարցերի նվիրված հատվածները, որոնց մեջ Գ. Սեվակը ցույ-

¹ Պետք է նշել, որ ժամանակակից լեզվաբանության մեջ ձևույթի մասին զանազան տեսություններ կան, ոմանք նույնիսկ բառարմատները (իրև բառ չգործածողները) ձևույթ չեն համարում և այդ տերմինով հասկանում են միայն երկրորդական ձևույթները:

ցարեքում է ինքնուրույն մոտեցում և հմուտ քննություններով իր ծանրակշիռ խոսքն ասում:

Այս բոլորը մեզ բերում են այն եզրակացության, որ «ժամանակակից հայոց լեզվի դասընթացը» (կամ որ նույնն է՝ «ժամանակակից հայոց լեզվի տեսությունը»՝ վերամշակված) մի մոծարժեք ներդրում է ժամանակակից հայերենի ուսումնասիրության բնագավառում: Այն վիճելի կետերը, որոնց վրա կանգ առանք (լեզու և մտածողություն, լեզվի զարգացում և այլն) ժամանակակից լեզվաբանության մեջ դեռևս շատ վիճարկվող և իրարամերժ տեսություններ առաջ բերող հարցեր են, ուստի և որևէ չափով չեն կարող փոխել աշխատության այդ գնահատումը:

Ինչպես ասել ենք, վերջին տասը-տասնհինգ տարիներում (1947 թվականից հետո) Գ. Սեվակը որևէ նոր մենագրությամբ հանդես չի եկել. հիշյալ գրքի փնհատումը ինքնին արդեն թելադրում է այն միտքը, թե նրա երկրորդ մասը՝ շարահյուսությունը նույնքան արժեքավոր մի ավանդ կլինեն հայագիտության բնագավառում, և ցավով պետք է շեշտել, որ մինչև այժմ նա չի հրապարակվել: Անձնական զրույցից մեզ հայտնի է, որ այդ գիրքը գրեթե պատրաստ է. մնում է, ուրեմն, հուսալ և սպասել:

Վերջին տասնամյակում պրոֆ. Գ. Սեվակը տպագրել է նաև մի շարք հոդվածներ, որոնք գրեթե բոլորն էլ վերաբերում են ժամանակակից հայերենի մշակման, տերմինաբանության, ոճաբանության հարցերին. առանձին տեղ է գրավում հայերեն բարբառների ծագման խնդրին նվիրված հոդվածը, որ սերտորեն առնչվում է մեր աշխատության շրջանակների մեջ ընդգրկվող նյութի հետ: Այդ ծավալուն հոդվածում պրոֆ. Գ. Սեվակը նախ և առաջ համառոտակի կանգ է առնում հայ բարբառագիտության արդի վիճակի և խնդիրների վրա: Այդտեղ նա ճիշտ կերպով նշում է, որ զգալի աշխատանք է կատարված հայերեն բարբառների նկարագրության բնագավառում, իսկ այդ հնարավորություն է ստեղծում ավելի բարդ՝ պատմական ու համեմատական ուղիստանքներին անցնելու համար: Նա միանգամայն տեղին և հանգամանորեն քննության է առնում Ա. Ղարիբյանի «Հայ բարբառների ծագման հարցի շուրջը» (ՊԲՀ, 1958, № 3) հոդվածի դրույթներն ու դրանց լեզվաբանական «հիմնավորումները» և նշում, որ մինչև այժմյան նկարագրական բարբառագիտությանը պետք է փոխարինի պատմական բարբառագիտությունը, որի նպատակը պետք է լինի նորից դեպի հինը գնալով լուսաբանել բարբառների առաջացման ու զարգացման, նրանց տար-

բերակումների ու միավորումների բարդ պրոցեսը: «Այդ պետք է կատարվի պատմա-համեմատական մեթոդով,—գրում է պրոֆ. Գ. Սեվակը,—բարբառների համեմատական քերականության հարցերը մշակելով և ոչ թե բարբառների համադրական կամ հարադրական նկարագրությամբ, որպիսի աշխատանք որոշ չափով կատարել է պրոֆ. Ղարիբյանը իր «Հայ բարբառագիտության» սովոր հատորում, կարծելով թե տալիս է հայ բարբառների «համեմատական հնչյունաբանություն» և «համեմատական ձևաբանություն»: Հայ բարբառների համեմատական քերականությունը, եթե այդ ունենալինք, մեր «Լ» և «Ս» ճյուղերը ստորաբաժանելուց հետո կվերամիավորե՞ր վերականգնելով նրանց նախնական միությունը կամ գոնե մերձավորությունը «Ում» ճյուղի հետ, նույնը կաներ և «Կը», «Կա» և «Հա» ճյուղերի նկատմամբ, կվերհաներ նրանց հնազույն կապը կամ մերձավորությունը գրաբարի հետ և նրանց ու գրաբարի միջոցով կնպաստեր նախահայերենի որոշ տարրերի վերականգնմանը և միայն այնուհետև կարող էր փորձ անել օղակ գցելու դեպի հնդեվրոպական նախալեզուն» (ՊԲՀ, 1959, № 1, էջ 226): Գ. Սեվակի այս մոտեցումը միանգամայն ճիշտ է և որևէ առարկություն չի հարուցում. պետք է ավելացնել միայն, որ Հ. Աճառյանը զգալի աշխատանք կատարել է այդ ուղղությամբ: Այնուհետև հեղինակը հանգամանորեն քննության է առնում Ա. Ղարիբյանի «Հայ բարբառների ծագման հարցի շուրջը» (ՊԲՀ, 1958, № 3) հոդվածի մեջ առաջ քաշված դրույթներն ու դրանց լեզվաբանական «հիմնավորումները» և ցույց տալիս, որ այդ դրույթներից ոչ մեկն էլ քննադատության չի դիմանում: Վերը, Ա. Ղարիբյանին նվիրված հատվածում մենք Գ. Սեվակի այդ հոդվածից մի ընդարձակ մեջբերում ենք կատարել, ցույց տալու համար, թե Ա. Ղարիբյանն ինչպես է ազդադրում Սյունեցու խոսքերը. այստեղ մենք կանգ չենք առնի այն բոլոր մանրամասն քննությունների վրա, որոնցով Գ. Սեվակը ցույց է տալիս Ա. Ղարիբյանի տեսության անանկությունը և նրա փաստարկումների ոչ գիտական էությունը. բավականանում ենք բերելով միայն հետևյալ ընդհանուր եզրակացությունը. «...Պրոֆ. Ղարիբյանի և պրոֆ. Աղայանի այս տեսակետների միջև ոչ մի ընդհանրություն չկա, և մնում է միայն զարմանալ, թե ինչպե՞ս է, որ երկուսն էլ, այնուամենայնիվ, հանդես են գալիս միևնույն մեթոդաբանական քվզբուներով, երկուսն էլ գտնում են, որ իրենք առաջնորդվում են պատմա-համեմատական լեզվաբանության մեթոդով: Պետք է ենթադրել, որ այս դեպքում ամբողջ աշխարհում փորձված

և մեր երկրում էլ 1950 թ. լեզվաբանական դիսկուսիայից հետո օրինականացված պատմա-համեմատական մեթոդը չէ այս, մեզմասած՝ անհասկանալի հակասության պատճառը, այլ այդ մեթոդի սխալ կիրառումը, որ մեծ տեղ ունի պրոֆ. Ղարիբջանի հետազոտության ոճի և եզրակացությունների հանելու եղանակի մեջ» (անդ, էջ 235): Ցույց տալով այն հիմնական մեթոդական ու մեթոդաբանական սխալները, որ տեղ են գտել Ա. Ղարիբջանի հիշյալ հոդվածում և ջախջախիչ քննադատության ենթարկելով նրա տեսությունը, Գ. Սեվակը եզրափակում է այսպես. «Մեզ թվում է, թե ընկեր Ա. Ղարիբջանը, այնուամենայնիվ, վաղ թե ուշ, իր իսկ հայտնաբերած ու նկարագրած բարբառային հարուստ նյութի թելադրանքով կհանգի գիտական ճիշտ հետևությունների, կընդունի, որ ընկ. Աղայանի ասածների մեջ կան շատ ճշմարտություններ, որոնց հանգեցրել են լեզվական տվյալները և պատմա-համեմատական մեթոդի ճիշտ կիրառումը» (անդ, էջ 244): Այս մեջբերումը մեզ թելադրում է երկու վերապահություն անել, սխալ պատկերացում առաջ չբերելու համար. իր հոդվածի մեջ Գ. Սեվակը մեծ մասամբ հենվում է մեր «Նոր հայերեն բարբառների առաջացման հարցի մասին» (ՊԲՀ, 1958, №2) հոդվածում բերված տվյալների վրա, պաշտպանում դրանց վերլուծություններից բխեցրած մեր դրույթները և առարկում Ա. Ղարիբջանին. սակայն դրանից չի կարելի եզրակացնել, թե տրվյալ դեպքում նա հենվում է հենց մե՛ր դրույթների ու մե՛ր փաստարկումների վրա. դրանք նա մեջ է բերում, դիտելով որպես հայերենի պատմա-համեմատական ուսումնասիրության տվյալներ ու նվաճումներ, որոնք ձեռք են բերվել բազմաթիվ հայագետների հետազոտություններով: Այնուհետև, թեև շատ հարցերում Գ. Սեվակը համերաշխ է մեզ հետ, բայց մի կարևոր հարցում նա որոշակիորեն հակադրվում է մեզ. դա մեր տեսակետն է հիմն հայերեն բարբառների մասին, որի առթիվ Գ. Սեվակը գրում է. «Ծս բնավ չեմ պաշտպանում պրոֆ. Աղայանի առաջ քաշած այն նոր դրույթը, թե իբր հին հայերենի բարբառները աստիճանաբար մահացել են մինչև II—IV դարերը և լուծվել համաժողովրդական գրաբարի մեջ և նույն II—IV դարերում սաղմնավորվել են նոր հայերեն բարբառները՝ աստիճանաբար տարբերակվելով գրաբարից» (անդ, էջ 244): Մի այլ տեղ, էջատակի ծանոթության մեջ նա գրում է, որ մեր այդ դրույթը քննության առարկա չի դարձնում (անդ, էջ 235, ծանոթ. 3): Մենք անհրաժեշտ համարեցինք շեշտել այս երկու կետերը, որպեսզի այն տպավորությունը չստեղծվի, թե քննադատելով Ա. Ղա-

րիբջանին, Գ. Սեվակն անվերապահորեն պաշտպանում է մեր բոլոր դրույթները: Ինչ վերաբերում է արդի հայերեն բարբառների առաջացմանը, ապա այստեղ պրոֆ. Գ. Սեվակը միանգամայն որոշակիորեն պաշտպանում է հայագիտության մեջ ընդունված տեսակետը. «Ծս անհերքելի եմ համարում,—գրում է նա նույն հոդվածում,—բոլոր հնդեվրոպաբան հայագետների այն դրույթը, որ մեզ ծանոթ բոլոր հայ բարբառների հնչյունական և քերականական համակարգը հին հայերենի՝ գրաբարյան համակարգից է սերել և չի կարող ավելի հին լինել նրա համակարգից, ըստ որում ես տարբերում եմ գրաբար գրական լեզուն՝ գրաբարյան համակարգից, որ շատ ավելի հին է, քան մեզ ծանոթ գրաբար լեզուն» (անդ, էջ 244): Ինչպես տեսնում ենք, պրոֆ. Գ. Սեվակը տվյալ հարցում էլ հետևվում է ճիշտ ուղղության, որ պայմանավորված է լեզվի զարգացման պրոցեսի ըմբռնումով: Այս հոդվածը ևս գրված է գիտական բարձր մակարդակով:

Այսպես, ուրեմն, Գուրգեն Սեվակը սովետական շրջանում աճած և իր դերով առավել աչքի ընկած լեզվաբաններից մեկն է. նա մեծ վաստակ ունի ոչ միայն ժամանակակից հայոց լեզվի գիտական ուսումնասիրության մեջ, որի բնագավառում երկրորդ դեմքն է Մ. Աբեղյանից հետո, այլև մեզ մոտ տեսական-լեզվաբանական մտքի զարգացման ասպարեզում: Չի կարելի չնշել, որ մեր շատ լեզվաբաններ, այդ թվում և տողերիս գրողը, իրենց առաջին, անմիջական տեսական-լեզվաբանական դաստիարակությունն ստացել են Գ. Ղափանցյանի և Գ. Սեվակի մոտ: Դրան պետք է ավելացնել և այն, որ ժամանակակից հայերենի մեր երիտասարդ մասնագետներն էլ, մեծ մասամբ, նրա աշակերտներն են: Այս բոլորը մեզ իրավունք են տալիս բնորոշելու Գ. Սեվակի գիտական գործունեությունը միանգամայն դրականորեն և նրան սովետահայ լեզվաբանության նշանավոր ներկայացուցիչներից մեկը համարելու:

* *

Մինչև այժմ մենք փորձեցինք բնութագրել սովետական հայագետ-լեզվաբանների ավագագույն և ավագ սերունդի ներկայացուցիչների գիտական գործունեությունն ու գնահատել նրանց գիտական ժառանգությունը: Հաջորդ սերունդն են ներկայացնում տողերիս գրողը, պրոֆեսորներ Ս. Ղազարյանը, Գ. Զահուկյանը, Վ.

Առաքելյանը, դոցենտներ Ա. Աբրահամյանը, Հ. Բարսեղյանը, Ա. Գրիգորյանը և բազմաթիվ առավել երիտասարդ լեզվաբաններ: Հարազատ մնալով մեր այն սկզբունքին, որի համաձայն գրքիս մեջ մենք քննության առարկա ենք դարձնում միայն այն աշխատությունները, որոնցում արժարժվում են ընդհանուր լեզվաբանական խնդիրներ, կամ որոնք նվիրված են հայոց լեզվի պատմության ու համեմատական քերականության հարցերին, մենք համառոտակի կանգ կառնենք միայն երեք լեզվաբանների՝ Ս. Ղազարյանի, Գ. Զահուկյանի և Ա. Աբրահամյանի ուսումնասիրությունների վրա:

**Սերոբ
Ղազարի
Ղազարյան**

Մնվել է 1910 թ. Բիթլիսի նահանգում (Արևմտյան Հայաստան). առաջին պատերազմի սկսվելուց հետո գաղթել է Վան, ապա՝ Սալմաստ և այստեղից էլ՝ Միջագետք, ուր մնացել է մինչև 1921 թ. վերջերը: Հայ գաղթականության մի մեծ խմբի հետ 1922 թ. ներգաղթել է Սովետական Հայաստան և բնակություն հաստատել Արարատ (Դավալու) գյուղում: Սկզբնական կրթությունն ստացել է այդ գյուղում, իսկ միջնակարգ դպրոցն ավարտել է Երևանում 1929/30 ուս. տարում: 1931—34 թթ. ծառայել է Կարմիր Բանակի շարքերում, այնուհետև սովորել է Երևանի Պետական մանկավարժական ինստիտուտում, որ և ավարտել է 1939 թ.: Նույն թվականին ընդունվել է Երևանի Պետական համալսարանի ասպիրանտուրան և աշակերտել է Հր. Աճառյանին: 1941 թ. ավարտել է ասպիրանտուրան և 1942 թ. պաշտպանել դիսերտացիա՝ ստանալով բանասիրական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան, ապա և՛ դոցենտի կոչում: Դեռևս ասպիրանտական տարիներին սկսել է դասախոսել համալսարանում և այնուհետև էլ անընդհատ կարգում է «հայոց լեզվի պատմություն» և «գրաբար» դասընթացները: Երկար տարիներ միաժամանակ եղել է «Սովետական դրպրոց» թերթի խմբագիրը: 1944—1959 թթ. աշխատել է նաև ՀՍՍՌ Գիտությունների ակադեմիայի Լեզվի ինստիտուտում, նախ՝ որպես ինստիտուտի գիտնական քարտուղար, ապա՝ իբրև հայոց լեզվի պատմության ու բարբառագիտության սեկտորի վարիչ: 1953 թ., դիսերտացիայի պաշտպանությանը ստացել է դոկտորի աստիճան, իսկ 1954 թ.՝ պրոֆեսորի կոչում: Գնահատելով պրոֆ. Ա. Ղազարյանի մատուցած ծառայությունները գիտության ու կրթության բնագավառում, Հայաստանի կառավարությունը մի քանի անգամ պարգևատրել է նրան Գերագույն Սովետի պատվոգրով ու մեդալներով:

Ս. Ղազարյանը Սովետական Հայաստանի աչքի ընկնող լեզվաբաններից մեկն է. թե՛ լեզվաբանական իրադարձությունների նմեցած իր ակտիվ մասնակցությամբ և թե՛ իր բեղմնավոր գրչով նա նշանակալից դեր է խաղացել սովետահայ լեզվաբանության զարգացման մեջ: Նրա գրչին են պատկանում բազմաթիվ գիտական-լեզվաբանական հոդվածներ, մենագրական ուսումնասիրություններ ու դասագրքեր, որոնցից առավել կարևորները հետևյալներն են:

1. Գ ր ա բ ա ր ի դ ա ս ա գ ի ր է, Երևան, 1951: Գրաբարի բուհական դասագիրք է, որ բաղկացած է երկու մասից. առաջին մասում հեղինակը տալիս է գրաբար լեզվի համառոտ քերականությունը, որ գրքի բնույթին համապատասխան, բավականաչափ մատչելի ու պարզ շարադրանքով է ներկայացված: Երկրորդ մասն ընդգրկում է հատընտիր հատվածներ հայ հին մատենագիրներից, առավելապես V—VI դարերի հեղինակներից, ինչպես և, ուսանողությանն անհրաժեշտ ծանոթություն տալու համար, հունարան հեղինակների գործերից և Գ. Նարեկացուց ու Հովհաննես Սարկավազից: Գրքին կցված են ծանոթագրություններ հայ հին մատենագրությունից բերված հատվածների հեղինակների ու նրանց գործերի մասին և ընդարձակ բառարան՝ գրաբարից աշխարհաբար:

Հստ ամենայնի դասագիրքը կազմված է խելամիտ կերպով և օգտակար դեր է կատարում ուսանողությանը գրաբար սովորեցնելու գործում:

2. Հ ա յ ո յ լ Ե զ Վ ի հ ա մ ա ո ռ տ պ ա տ մ ու թ յ ու ն, Երևան, 1954: Երկար տարիների ընթացքում համալսարանի բանասիրական ֆակուլտետում կարդացած «Հայոց լեզվի պատմություն» դասընթացի ամփոփ շարադրանքն է: Բաղկացած է հինգ մասից. առաջին մասում քննության առնելով այնպիսի ընդհանուր հարցեր, ինչպիսիք են լեզվի պատմական ուսումնասիրության խնդիրները, պատմա-համեմատական մեթոդի դերը, լեզվի զարգացման պրոցեսի ընթացումն ու լեզուների տարբեր դրսևորումները հասարակության պատմության տարբեր շրջաններում, հեղինակն ամփոփ կերպով շարադրում է սովետական լեզվաբանության մեջ ընդունված հիմնական դրույթներն այդ հարցերի մասին և դրանով իսկ տեսական-մեթոդաբանական հիմք պատրաստում հաջորդ մասերի համար: Երկրորդ գլուխը նվիրված է հայոց լեզվի ծագման, ցեղակցության ու զարգացման նախնական շրջանի հարցերին: Այստեղ նա այն տեսակետն է պաշտպանում, որ հայոց լեզուն կազմավոր-

վել է հայ ժողովրդի կազմի մեջ մտած ցեղերից մեկի լեզվի հիման վրա, որ պատմականորեն տեղի ունեցած լեզուների խառնվորումը չի փոխել հայերենի բնույթը և չի դարձրել խառնածին լեզու։

Հայերենը, եզրակացնում է նա, հնդեվրոպական լեզու է։ Այնուհետև նա կանգ է առնում հայերենի հնդեվրոպական բնույթը որոշող տարրերի (բառեր, քերականություն) վրա և, վերջապես, վիպասանության հատվածների վերլուծությամբ համառոտակի բնութագրում մինչգրային հին հայերենի վիճակը։

Հաջորդ գլուխներում հերթականությամբ նկարագրվում են գրաբարը, միջին հայերենը և աշխարհաբարը, վեր հանվում դրանցից յուրաքանչյուրի քերականական կառուցվածքի, հնչյունական համակարգի ու բառապաշարի հիմնական առանձնահատկությունները, ցույց տալիս հատկապես գրաբարի փոփոխությունները, միջին հայերենի զոյացումը և այլն, և այլն։

Գրքի մեջ պատշաճ տեղ է հատկացված մեր գրական լեզուների ձևավորման ու զարգացման պատմա-հասարակական պայմանների լուսաբանմանը։ Պրոֆ. Ս. Ղազարյանի սույն աշխատությունը հայոց գրական լեզուների ամբողջական պատմությունն է և հիմնական գծերով ներկայացնում է մեր լեզվի զարգացման պատմական պրոցեսը։

3. Ժ ա մ ա ն ա կ ա կ ի ց հ ա յ ո յ յ լ ե զ ու ն և ո ու ս ե - ր ե ն ի դ ե բ ը ն ր ա հ ա ր ս տ ա ց մ ա ն ու զ ա ր գ ա ց մ ա ն մ ե շ, Երևան, 1955։

Աշխատությունը բաղկացած է չորս մասից, որոնցից առաջինը նվիրված է ընդհանուր հարցերի (ոտևերենի դերը ազգային լեզուների զարգացման մեջ, հայ-ուսական լեզվական և կուլտուրական կապերի հնագույն արտահայտությունները, ժամանակակից ոտևերենի և հայերենի պատմության մի քանի հարցեր, ոտևերենի և հայերենի մի քանի առանձնահատկություններ), երկրորդն ու երրորդը՝ մեր գրական լեզվի մշակման ու հարստացման մեջ ոտևերենի խաղացած դերի բազմակողմանի ուսումնասիրությունը, և, վերջապես, չորրորդը ներկայացնում է գանազան բառացանկեր և աշխատության ոտևերեն ամփոփումը։

Գրքի հեղինակը մեծ աշխատանք է կատարել, հավաքելով ոտևերենից հայերենին անցած ուղղակի ու միջնորդական փոխառությունները, նորակազմ բառապատճենումները, ոտևերենի ազդեցությամբ կատարված խմաստափոխությունները և այլն, և հանգամանորեն քննության առել դրանք։

Այս աշխատությունը ընդարձակ ուսումնասիրությունն է հայերենի վրա ոտևերենի գործած ազդեցության և այդ տեսակետից կարևոր նպատակ է հայոց լեզվի բառապաշարի պատ-

մության ուսումնասիրությանը։ Դիտելի է միայն, որ հեղինակը ոչ միշտ է բավականաչափ խստությամբ խոսում անհարկի փոխառությունների մասին։

4. Մ ի ջ ի ն հ ա յ ե ր ե ն. գիրք Ա, Երևան, 1960։

Հայոց լեզվի զարգացման միջին շրջանը ներկայացնող՝ միջին հայերենի ընդարձակ ուսումնասիրությունն է, որի այս առաջին հատորի հիմնական նյութն է հնչյունաբանությունը։

Ընդարձակ առաջաբանում հեղինակն արծարծում է միջին հայերենի բազմակողմանի ուսումնասիրության հարցերը, համառոտակի բնութագրում այդ ուղղությամբ կատարված հետազոտություններն ու գնահատում առանձին հայագետների վաստակներն այդ բնագավառում։

Բուն աշխատանքը բաղկացած է երկու մասից, որոնցից առաջինը՝ ներածական մասը, նվիրված է գրաբարի բնորոշ գծերի համառոտ նկարագրությանն ու նրա կառուցվածքի փոփոխություններին՝ V—X դարերում, իսկ երկրորդը, որ վերնագրված է «Միջին հայերեն», ներկայացնում է միջին հայերենի կազմավորման պատմա-հասարակական նախադրյալների, մշակույթի զարգացման մեջ դրսևորվող նոր երևույթների, միջին հայերենի կազմավորման, միջնադարյան հայ մատենագրության լեզվական առանձնահատկությունների և, վերջապես, միջին հայերենի հնչյունական համակարգի ընդարձակ ուսումնասիրությունը։

Այս մասի վերջին գլխում հեղինակն ամփոփում է տվյալ հատորում ընդգրկված իր քննությունների արդյունքները։

Սովետական շրջանում միջին հայերենով զբաղվողներ քիչ են եղել. բացի Հ. Աճառյանից, որ իր «Հայոց լեզվի պատմություն», «Արմատական բառարան» և «Լիակատար քերականություն հայոց լեզվի» աշխատությունների մեջ ընդգրկել է հարուստ փաստական նյութ միջին հայերենի վերաբերյալ և լեզվաբանական խոր վերլուծությունների ենթարկել այն, մեր լեզվաբաններն անդադարձել են միջին հայերենին մեծ մասամբ թուուցիկ կերպով ու կողմնակիորեն։

Պրոֆ. Ս. Ղազարյանը երկար տարիներ նվիրել է միջին հայերենի հատուկ ուսումնասիրությանը և, օգտագործելով այն ամբողջ նյութը, որ ամփոփված է հայագիտական գրականության մեջ՝ շուրջ մեկ հարյուրամյակի հետազոտություններով, ու ավելացնելով իր սեփական պրպտումներով ձեռք բերած տվյալները, տվել է միջին հայերենի հնչյունական համակարգի բազմակողմանի պատմական ու նկարագրական-համաժամանակյա գիտական բնութագրությունը։

Աշխատությունը հիմնված է տեսական ճիշտ սկզբունքների ու պատմական մոտեցման վրա, ուսումնասիրության մեթոդը պատ-

մա-համեմատականն է: Այդ բուրրով էլ պայմանավորված են ուսումնասիրության բարձր մակարդակը և արդյունքների լրջությունը: Չնայած մի քանի վիճելի կարծիքների ու մասնակի բնույթ կրող վրիպումների առկայությանը, պրոֆ. Ս. Ղազարյանի սույն մենագրությունը միջին հայերենի լուրջ ուսումնասիրությունն է և արժեքավոր ավանդ է հայերենագիտության բնագավառում:

Մենք հիշեցինք պրոֆ. Ս. Ղազարյանի առավել կարևոր գրքերը միայն. բայց, ինչպես ասել ենք, նա ունի բազմաթիվ այլ աշխատություններ¹, միջնակարգ դպրոցի դասագրքեր ու գիտական հոդվածներ, որոնք տպագրված են գիտական հանդեսներում ու տեղեկագրերում: Ինչպես արդեն վերը հիշված աշխատություններից էլ կարելի է եզրակացնել, պրոֆ. Ս. Ղազարյանի ուսումնասիրության հիմնական բնագավառն է հայոց լեզվի, մասնավորապես գրական լեզուների (գրաբար, միջին հայերեն, գրական աշխարհաբար) պատմությունը. իր բեղմնավորությամբ, այլև քննարկվող հարցերի հիմնականում ճիշտ լուծումով նա անկասկած սովետահայ լեզվաբանների կրտսեր սերնդի առավել աչքի ընկած ներկայացուցիչներից մեկն է:

Մնվել է ՀՍՍՌ Ստեփանավանի շրջանի Ծահնազար գյուղում, 1920 թ.: Սովորել է Ստեփանավանի, Բասարգեչարի, վերստին՝ Ստեփանավանի, միջնակարգ դպրոցում, ապա՝ 1935 թ.

փոխադրվելով Երևան, սովորել է Ծահույանի անվան դպրոցում և ավարտել այն 1937 թ., գերազանցիկի վկայականով: Նույն թվականին ընդունվել է Երևանի Պետական համալսարանի բանասիրական ֆակուլտետը և ավարտել է 1941 թ.՝ գերազանցության դիպլոմով: 1942—1943 թթ. եղել է Կարմիր Բանակում. 1943—1944 թթ. աշխատել է Հրազդանի (Ախտաշի) շրջանում, որպես միջնակարգ դպրոցի ուսուցիչ: 1944 թ. ընդունվել է Երևանի համալսարանի ասպիրանտուրան և աշակերտել է Հ. Աճառյանին: 1945 թվականից

¹ Ուղեցույց Տերմինաբանական կոմիտեի որոշումների, Երևան, 1945, Մայրենի լեզու (դասագիրք III դասարանի համար), Երևան, 1939 և հետագա հրատարակություններ. Մայրենի լեզու (դասագիրք IV դասարանի համար), Երևան, 1939 և հետագա հրատարակություններ. Ռուսերենի դերը արդի հայերենի զարգացման մեջ, ԼԽՍՖ, II, 1947, Ժամանակակից հայերենի զարգացումը սովետական իշխանության տարիներին, ԳԱՏ, 1947, № 2, Հին հայերենի բայի պարզ ժամանակների հիմնական գծերը, ՊՔՀ, 1959, № 3, Հայերեն բարբառների և նրանց ծագման հարցի շուրջը, ՊՔՀ, 1960, № 3 և այլն:

սկսել է դասախոսել նույն համալսարանում: 1947 թ. պաշտպանել է դիսերտացիա և ստացել բանասիրական գիտությունների թեկնածուի աստիճան, իսկ 1948 թ.՝ դոցենտի կոչում: Նույն թվականին ստանձնել է համալսարանի օտար լեզուների (հետագայում՝ ռոմանագերմանական ֆիլոլոգիայի) ամբիոնի վարիչի պաշտոնը, որ և վարում է մինչև այժմ: 1955 թ. պաշտպանել է դիսերտացիա դոկտորի աստիճանի համար, 1958 թ. ստացել է պրոֆեսորի կոչում:

Պրոֆ. Գ. Զահուկյանը Սովետական Հայաստանի կրտսեր սերունդի այն տաղանդավոր ներկայացուցիչներից մեկն է, որ իր բազմակողմանի գիտելիքներով, տեսական հիմնալի պատրաստությամբ ու հետազոտական մեծ եռանդով արդեն իր հեղինակավոր տեղն է գրավել սովետահայ լեզվաբանության մեջ: Նրա թե՛ գնահատան պարբերականներում տպագրված հոդվածները և թե՛ մենագրական աշխատություններն աչքի են ընկնում քննարկվող հարցերի ամբողջական ընդգրկումով, նյութի խոր վերլուծությամբ, մոտեցման թարմությամբ: Գիտական գործունեության համեմատաբար կարճ ժամանակում (ընդամենը 14 տարի) Գ. Զահուկյանը հրատարակել է մի շարք մենագրություններ ու ծավալուն հոդվածներ, որոնցից յուրաքանչյուրը մի լուրջ ներդրում է գիտության տվյալ բնագավառում: Նրա առանձին գրքերով հրատարակված ուսումնասիրությունները հետևյալներն են:

1. Փ եր ա կ ա ն ա կ ա ն և ու ղ ղ ա գ ր ա կ ա ն ա շ խ ա տ ու թ յ ու ն ն եր ր հ ի ն և մ ի ջ ն ա դ ա Ր Յ ա ն Հ ա յ ա ս տ ա ն ու մ, Երևան, 1954: Հայ քերականական մտքի զարգացման և հին ու միջնադարյան Հայաստանի թարգմանական ու ինքնուրույն քերականական աշխատությունների շատ լուրջ ու բարեխիղճ ուսումնասիրությունն է: Հեղինակը քննության առարկա է դարձրել ինչպես սուպադիր, այնպես էլ Մատենադարանում պահվող ձեռագիր աշխատությունները, վեր հանել յուրաքանչյուրի բնորոշ կողմերը և զրանով իսկ ամբողջական պատկերացում տվել հայ քերականագիտության պատմական զարգացման մասին, ընդգրկելով V դարից մինչև XV դարը:

2. Հ ի ն հ ա յ եր են ի հ ո լ ղ վ մ ա ն ս ի ս տ ե մ ր և ն ր ա ծ ա գ ու մ ր, Երևան, 1959: Հին հայերենի հոլովման համակարգի պատմա-համեմատական ուսումնասիրությունն է: Այդ նույն խընդրին է նվիրված մեծավաստակ հայագետ Հ. Աճառյանի «Լիակատար քերականություն հայոց լեզվի» բազմահատոր աշխատության 3-րդ հատորը, որ լույս է տեսել 1957 թ.: Սակայն Գ. Զահուկյանի

37

հուկյանի ուսումնասիրությունը միանգամայն անկախ է նրանից և հանձնված է եղել հրատարակության նախքան նրա լույս տեսնելը¹։ Գրքի առաջաբանում հեղինակը ամփոփ կերպով շարադրում է իր ուսումնասիրության նպատակն ու հիմնական գրույթները, որոնցով առաջնորդվել է նյութի հետազոտման մեջ։ Խոսելով հայերենի հոլովման համակարգի ուսումնասիրության բնագավառում դրսևորված միակողմանիության մասին, նա ճիշտ կերպով գտնում է, որ անհնարին է լրիվ պատկերացում կազմել հայերենի հոլովման համակարգի ձևավորման մասին և լուսաբանել այդ պրոցեսը, առանց բազմակողմանիորեն հաշվի առնելու այն հսկայական դերը, որ խաղացել են պատմական Հայաստանի ու նրա շրջապատի լեզուները։ Բուն ուսումնասիրությունը բաղկացած է վեց գլխից, որոնց մեջ հեղինակը հանգամանորեն քննության է առնում հարցի պատմությունը, հնդեվրոպական ձևաբանական տիպի փոփոխությունը հին հայերենում, հին հայերենի հոլովման սխեմները, հայերենի հոլովման քերականական կարգերի, հոլովման միջոցների և հոլովման հիմքերի ծագումը։ Այս գլուխների մեջ առանձնապես ուշագրավ են այն հատվածները, որոնց մեջ հեղինակը քննում է հայերենի հոլովման համակարգի առավել հնատիպ երևույթները, որոնք կապվում են նախահնդեվրոպական (պրոտոհնդեվրոպական) վիճակի հետ, հայերենի հոլովական հիմքերի դասակարգման հարցը, հին հայերենի հոլովման համակարգի առաջացման պրոցեսում գործած օրինաչափությունները և այլն, և այլն։ Գրքի հավելվածում գործած օրինաչափությունները և այլն, և այլն։ Առանձին ներքի, նշելով նաև հնդեվրոպական բառերի նախաձևերը։ Առանձին ցուցակով բերում է համանունների ցանկը, տալով նրանց հոլովումը, ինչպես և՛ ընդունված ստուգաբանությունը։ Այս ցանկերը ևս մեծ արժեք են ներկայացնում ինչպես գրաբարի հոլովման պատկերը պարզելու, այնպես էլ առանձին բառերի հոլովաձևերի ու նրանց զուգահեռների առաջացումը ցուցադրական նյութով հիմնավորելու տեսակետից։ Այդ ցանկերի խոր ու բազմակողմանի ուսումնասիրության վրա է հիմնված բուն աշխատությունը։

Պրոֆ. Գ. Զահուկյանի սույն աշխատությունը հին հայերենի հոլովման համակարգին նվիրված խորահմուտ ուսումնասիրություն է, Հեղինակը բազմակողմանի, հարուստ գիտելիքներով ու հետազո-

տական խորաթափանց քննություններով կարողացել է մի հայտարարի բերել, ամփոփել այն բոլոր հետազոտությունները, որոնք կատարվել են այդ բնագավառում շուրջ մեկ հարյուրամյակի ընթացքում, և շատ հարցերի մասին իր նոր ու հիմնավորված խոսքն է ասել։ Հեղինակը ցուցաբերել է քննադատական, բայց ոչ երբեք բացասական կամ ժխտողական վերաբերմունք՝ եղած մեծ ու փոքր ուսումնասիրությունների նկատմամբ։ Դա նրան հնարավորություն է տվել շկաշկանդվելու արդեն ընդունված կամ իբրև այդպիսին դիտվող կարծիքներով և նոր տվյալների քննությամբ, իսկ հաճախ էլ՝ նոր մոտեցմամբ ավելի հավանական կարծիքների հանգելու։ Այս բոլորից ելնելով, սույն մենագրությունը, առանց վերապահության կարող ենք ասել, մի լուրջ, մեծարժեք ներդրում է հայերենի պատմա-համեմատական ուսումնասիրության բնագավառում։

3. Լ Ե Ղ Վ Ք Ա Ն Ո Ւ Ք Յ Ա Ն պ ա տ մ ու թ յ ու ն, Երևան, հ. I, 1960, հ. II, 1962։ Այս սովորածավալ աշխատության մեջ հեղինակը շարադրել է լեզվաբանության պատմությունը հնագույն շրջաններից սկսած մինչև մեր օրերը։ Ընդգրկած հարուստ նյութի հմուտ վերլուծությամբ, տեսական հարցերի խոր քննությամբ, պատմական ընթացքի հստակ պատկերացմամբ այս աշխատության մեջ պրոֆ. Գ. Զահուկյանը կարողացել է ամբողջական կերպով ներկայացնել լեզվաբանության սաղմնավորման ու զարգացման պատմությունը, ճիշտ կերպով գնահատել զանազան լեզվաբանական տեսությունները, որոշել այդ գիտության ընդգրկած բնագավառները պատմական տարբեր դարաշրջաններում, նրա զարգացման մակարդակն ու յուրահատուկ ուղղությունն առանձին ժողովուրդների մոտ, բնութագրել լեզվաբանական տարբեր մեթոդները։ Գիտական իր բարձր մակարդակով այդ գիրքը կարող է բավարարել ամենախստապահանջ քննադատին։ Այս բոլորի հետ միասին պետք է նկատի ունենալ նաև, որ իր տեսակի մեջ այդ գիրքը միակն է ոչ միայն հայ, այլև սովետական լեզվաբանության մեջ։ Վստահորեն կարելի է ասել, որ պրոֆ. Գ. Զահուկյանի այս աշխատությունը կարող է դասվել այնպիսի դասական գործերի շարքին, ինչպիսիք են Թ. Բենֆայի, Հ. Շտայնթալի, Հ. Արենսի, Թ. Միլեկու նույն տիպի աշխատությունները, որոնցից, սակայն, ոչ մեկը նյութի այն ամբողջական ընդգրկումը չունի, ինչ որ սույն աշխատությունը, որ ոչ միայն հայ լեզվաբանության նվաճումներից մեկն է, այլև լուրջ ներդրում է լեզվաբանության պատմության ուսումնասիրության բնագավառում, ընդհանրապես։

¹ Գրքի վերջում նշված է, որ համալսարանի խմբագրական-հրատարակչական խորհուրդը մենագրությունը տպագրության հանձնելու որոշում է կայացրել 1957 թ. մայիսի 11-ին։

Այս առանձին գրքերով լույս տեսած ուսումնասիրություններից բացի, ինչպես ասել ենք, պրոֆ. Գ. Զահուկյանը տպագրել է մի շարք ծավալուն հոդվածներ, որոնք նույնպես գիտական մեծ արժեք են ներկայացնում և որոնցից մի քանիսի մասին անհրաժեշտ ենք համարում խոսել:

Դեռևս 1956 թ. հրատարակած իր «Հայոց լեզվի պերիոդիզացիայի հարցերը» հոդվածում (ԵՊՀԳԱ, 57, մաս I, 1956, էջ 49—102) մանրամասնորեն քննարկելով հայոց լեզվի պատմության մինչև այդ զանազան լեզվաբանների կողմից առաջարկված շրջանաբաժանումները, Գ. Զահուկյանը վեր է հանում դրանցից յուրաքանչյուրի թերությունները կամ սխալները, ապա՝ մեր լեզվի զարգացման թերությունները կամ սխալները, այլև՝ հայ ժողովրդի պատմության՝ լեզվի մեջ տեղի ունեցող տեղաշարժերի համար կարևոր իրողությունները հաշվի առնելով, առաջարկում է իր շրջանաբաժանումը: Նա գտնում է, որ մեր լեզվի գրային շրջանի շրջանաբաժանումը: Նա գտնում է, որ մեր լեզվի գրային շրջանի պատմությունը պետք է բաժանել երեք շրջանի՝ հին, միջին, նոր. այս շրջաններից առաջինը բաժանում է դասական գրաբարի, ետդասական գրաբարի և նախամիջինհայերենյան ենթաշրջանների, միջին շրջանը՝ կլիկյան նորմավորման և աշխարհաբարացման ենթաշրջանների, իսկ նոր շրջանը՝ վաղ աշխարհաբարի կամ աշխարհաբարի նախապատրաստման, երկճյուղ ազգային աշխարհաբարի և ժամանակակից ազգային հայերենի ենթաշրջանների, բնութագրելով այդ շրջաններից ու ենթաշրջաններից յուրաքանչյուրը լեզվի էական հատկանիշների հիման վրա և որոշելով դրանց ժամանակագրական սահմանները:

Թեև այդ հոդվածի մեջ շոշափված մի քանի մասնակի հարցեր կարոտ են ավելի հանգամանալից քննության, ինչպես և առանձին կետեր կարող են վիճարկվել, բայց այդ շրջանաբաժանումը, ամբողջությամբ վերցրած, ճիշտ է արտացոլում մեր գրական լեզուների պատմությունը և, մեր կարծիքով, հիմնականում ընդունելի է:

Իր «The Hayaša Language and its Relation to the Indo-European Languages» («Հայասայի լեզուն և նրա հարաբերությունները հնդեվրոպական լեզուներին») հոդվածում («Archiv orientální», 1961, № 3) Գ. Զահուկյանը, Հայասայի լեզվի մնացորդների՝ տեղանունների, անձնանունների և դիցանունների հիման վրա գալիս է հետևյալ եզրակացություններին.

1) Ինչպես ցույց է տալիս հայասական հատուկ անունների կազմությունը, հայասերենը չի կարող ցեղակցական կապեր ունենալ սեմական լեզուների, կովկասյան լեզուների և նախաինքերենի հետ, այլև մերձավոր ցեղակցական կապեր՝ խուտերենի և ուրարտերենի հետ, թեև անունների որոշ մասը պետք է փոխառյալ համարել: Հատուկ անունների վերլուծության հիման վրա կարելի է ասել, որ Հայասայի լեզուն հնդեվրոպական լեզու է, պատկանում է հնդեվրոպական լեզուների հին անատոլիական խմբին (ճյուղին) և ունի centum-ային բնույթ (ի տարբերություն հայերենի, որ satəm տիպի լեզու է):

նալ սեմական լեզուների, կովկասյան լեզուների և նախաինքերենի հետ, այլև մերձավոր ցեղակցական կապեր՝ խուտերենի և ուրարտերենի հետ, թեև անունների որոշ մասը պետք է փոխառյալ համարել: Հատուկ անունների վերլուծության հիման վրա կարելի է ասել, որ Հայասայի լեզուն հնդեվրոպական լեզու է, պատկանում է հնդեվրոպական լեզուների հին անատոլիական խմբին (ճյուղին) և ունի centum-ային բնույթ (ի տարբերություն հայերենի, որ satəm տիպի լեզու է):

2) Հայասայի լեզվի հնչյունական կառուցվածքի համեմատական բնութագրերը հետևյալն է. ա) հնդեվրոպական ձայնեղները մնում են ձայնեղներ, խուլերը՝ խուլեր, շնչեղ ձայնեղների փոփոխությունները պարզ շեն (պարզ ձայնեղներ), բ) հնդեվրոպական ետնաքմայինները մնում են որպես ետնալեզվայիններ, գ) հնդեվրոպական շրթնայնացված ետնալեզվայիններն ապաշրթնայնանում են, դ) հնդեվրոպական ձայնորդներն ընդհանրապես մնում են անփոփոխ, բայց ռնգայինները հակված են բառավերջում ընկնելու. ե) հնդեվրոպական a-ն, o-ն, կրեմն էլ e-ն ներկայացված են որպես a. զ) հնդեվրոպական ձայնավորների քանակական տարբերությունները հիմնականում պահպանվում են. է) հնդեվրոպական ձայնավոր ձայնորդները փոխվել են a+ ձայնորդ կապակցությունների. ը) հնդեվրոպական պայթականները i-ի մոտ փափկանում են, վերածվելով առաջնալեզվային կիսաշփականների և թերևս շփականների, թ) հնդեվրոպական u-ն և p-ն ներկայացված են որպես u: Հայասայի լեզուն պահպանել է զգալի թվով հնդեվրոպական արմատներ և ածանցներ, այլև հնդեվրոպական հիմքերի հիմնական տիպերը:

3) Հայերենի հիմքը կազմում է արմենների լեզուն: Մոտավորապես XII դ. մ. թ. ա. մոտերքը Փոքր Ասիայում փոշուզացիների հետ միասին երևացած արմենները, ձուլելով հայասցիներին ենթարկվել են վերջիններիս ուժեղ ազդեցությանը: Հայասայի լեզուն պահպանվել է հայերենում որպես սուբստրատ: Հայասերենի ազդեցության արդյունքն են հայերենի կենտումիզմները, հնդեվրոպական s-ի պահպանման, o-ի որպես u և u-ի որպես v (v) արտացոլվելու դեպքերը, «մաքուր» ա-ով և -ի/-եա-ով հիմքերի կազմավորումը, հոգնակիի որոշ տիպերը, հոլովման և խոնարհման որոշ առանձնահատկությունները և այլն:

4) Ուրարտերենի շատ հնդեվրոպաբանություններ բացահայտվում են հայասերենի ազդեցությամբ:

նա միջին դիրք է գրավել ուրարտերենի և հին անատոլիական հընդ-
եվրոպական լեզուների միջև. առանձնապես պետք է նշել երկար
ձայնավորների առկայությունը հայասերենում և նրանց կորուստը
ուրարտերենում (և խուտերենում):

5) Ուրարտերենը նշանակալից ազդեցություն է թողել հայերե-
նի վրա, որ արտահայտվել է ոչ միայն բառապաշարի, այլև քերա-
կանական կառուցվածքի և հնչյունական առանձնահատկություննե-
րի մեջ (սուբստրատ): Մեծ տեղ է բռնում, անշուշտ, ուրարտական
տարրը հայկական տեղանունների մեջ: Հայկական տեղանունների
հնդեվրոպական այն տարրերը, որոնք հայկական չեն, պետք է բա-
ցատրվեն հայասերենի, ուրարտերենի և սրանց ցեղակից լեզուներ
ի օգնությամբ: Հայերենը և ուրարտերենը մերձավոր ցեղակիցներ
չեն:

6) Ուրարտերենը պետք է մեծ ազդեցություն թողած լինի կով-
կասյան լեզուների վրա: Մի կողմ թողնելով ուրարտերենը վրացե-
րենի հիմք համարելու անհաշող փորձերը (Ջանաշիա), պետք է
ասել, որ վրացերենի բառապաշարի և տեղանունների «հնդեվրո-
պական» տարրերը պետք է բացատրվեն առաջին հերթին ուրար-
տական ազդեցությամբ:

Հնարավորություն չունենալով ավելի հանգամանորեն քննու-
թյան առնելու աշխատության մեջ արժարժված հարցերը և բավա-
կանանալով հիշյալ զեկուլցի հիմնական գրույթների շարադրանքով,
անհրաժեշտ ենք համարում նշել, որ այստեղ ևս պրոֆ. Գ. Զահուկ-
յանը ցուցաբերում է իր նոր մոտեցումը, որ, մեր կարծիքով, հղի է
շատ լուրջ հետևանքներով՝ հայերի ու հայերենի կազմավորման
պրոցեսի լուսաբանման համար:

Ամփոփելով պրոֆ. Գ. Զահուկյանի մասին մինչև այժմ աս-
վածները, գալիս ենք այն եզրակացության, որ իր արժեքավոր
ուսումնասիրություններով մեծ ավանդ է բերել հայերենագիտու-
թյանը: Գ. Զահուկյանն, անշուշտ, սովետական շրջանում աճած
հայ լեզվաբանների այն առավել տաղանդավոր ներկայացուցիչն
է, որ իր ուսումնասիրություններով արդեն ճանաչում է գտնում ոչ
միայն մեր Միության մեջ, այլև նրա սահմաններից դուրս:

Մնվել է 1918 թ. Սևանի շրջանի Գեղամա-
վան (Շահրիզ) գյուղում: Տարրական կրթու-
թյունն ստացել է ծննդավայրում, ապա՝ սովորել
է Սևանի դպրոցում և, վերջապես, Երևանում
ավարտել միջնակարգ դպրոցը: 1937 թվականից ուսուցչական աշ-

**Ս. Եսոս
Ա. Բահինի
Ս. Բերտիանյան**

խատանքի է անցել Հրազդանի (Ախտաչի) շրջանի դպրոցներում,
դասավանդելով հայոց լեզու և գրականություն, այնուհետև՝ վարել
դպրոցի ուսմասվարի, ապա՝ դիրեկտորի պաշտոնը: 1943 թ.
ավարտել է Երևանի հեռակա մանկավարժական ինստիտուտի լեզ-
վագրական ֆակուլտետը: 1944—1947 թթ. սովորել է Խ. Աբովյանի
անվան հայկական մանկավարժական ինստիտուտի ասպիրանտու-
րայում: 1948 թ. պաշտպանել է թեկնածուական դիսերտացիա,
1949 թ. ստացել դոցենտի կոչում: 1943/44 ուս. տարվանից դասա-
խոսական աշխատանքի է անցել նույն ինստիտուտում, դասավան-
դելով գրաբար, ժամանակակից հայերեն և լեզվաբանության ներա-
ծություն: Մինչև 1952 թ. դասախոսել է նաև Հեռակա մանկավար-
ժական ինստիտուտում: 1950—1959 թ. աշխատել է նաև ՀՍՄԻ ԳԱ
Լեզվի ինստիտուտում որպես ավագ գիտ. աշխատող և ժամանա-
կակից հայոց լեզվի սեկտորի վարիչ: Այժմ վարում է Խ. Աբովյանի
անվան մանկավարժական ինստիտուտի հայոց լեզվի ամբիոնը:

Ա. Աբրահամյանն իր ուսումնասիրություններով աչքի է ընկել
որպես հայոց լեզվի պատմական քերականության և գրաբարի խո-
րհամուտ երիտասարդ մասնագետ: Նրա գրչին են պատկանում այդ
բնագավառին վերաբերող մի շարք ուսումնասիրություններ, որոնք
իրենց գիտական արժեքով բարձր գնահատման են արժանացել:
Առանձին գրքերով հրատարակված նրա աշխատությունները հետև-
յալներն են:

1. Հայերենի դերբայները և նրանց ձևաբա-
նական նշանակությունը, Երևան, 1953: Հայերենի բո-
լոր գրսերումների (գրաբար, միջին հայերեն, աշխարհաբար, բար-
բառներ) դերբայների բազմակողմանի ու շատ լուրջ ուսումնասի-
րությունն է, որ բաղկացած է երեք մասից: Առաջին մասում հա-
մառոտակի շարադրելով հայ քերականագիտության պատմության
մեջ դերբայների մասին եղած տարբեր ըմբռնումները, սկսած V
դարից մինչև մեր օրերը, հեղինակն անցնում է դերբայի գիտական
քննորոշմանը: Նա այն ճիշտ գրույթն է պաշտպանում, որ «Դերբայը
ուրույն քերականական հասկացություն է, բայց ոչ ուրույն խոճքի
մաս, իսկ սրանից բնավ էլ չպետք է եզրակացնել, թե այն խոսքի
մասերից դուրս է առհասարակ: Որպես խոսքի մաս դերբայը նույն
բայն է: ...Բայը խոսքի մեջ գրսերվում է երկու ձևով՝ դիմավոր
և դերբայական: Ուրեմն՝ դերբայը բայի՝ խոսքի մեջ գրսերման
մի ձևն է» (էջ 41): Այս ճիշտ սկզբունքից էլ նկատվում է, ահա, հաջորդ
գլխում նա ուսումնասիրում է հայերենի բոլոր դերբայները, ցույց

տալիս նրանց հնազույն դրսևորումները, հենվելով հայ հին մատենագրության տվյալների վրա, նրանց պատմական փոփոխությունները, բարբառային ձևերը և այլն: Այս գլխի առանձնապես արժեքավոր կողմն այն է, որ այստեղ հեղինակը փաստական տվյալների վերլուծությամբ ցույց է տալիս մեր -ում, -լիս, -ած (-ուած) դերբայների հնազույն գործածությունները և հետագա զարգացումը՝ մինչև արդիական վիճակը: Նշելի է նաև զանազան բարբառների, միջին հայերենի և մեր գրավոր լեզվի տվյալների հիման վրա մի նոր դերբայի ընդունումը, որը մենք մեր «Մեղրու բարբառը» աշխատության մեջ կոչում ենք մակբայական դերբայ, իսկ ինքն ավելի հարմար է գտնում անվանել ընթացակցական դերբայ¹:

Երրորդ գլուխը նվիրված է դերբայների ձևաբանական դերի մանրազնին ուսումնասիրությանը: Հսկայական փաստական նյութի խորաթափանց վերլուծությամբ նա ցույց է տալիս, թե ո՞ր դերբայը ի՞նչ կիրառություն է ունեցել, ինչ դեր է խաղացել բայի եղանակային ձևերի կազմության մեջ գրաբարում ու միջին հայերենում, և ինչ կիրառություն ու դեր ունի ժամանակակից հայերենում ու բարբառներում: Թեև այս բաժինը վերնագրված է «Հայերենի դերբայների ձևաբանական նշանակությունը», բայց իր հարուստ բովանդակությամբ նա հայերենի բոլոր դրսևորումների բայի բազադրոյալ ձևերի լիակատար նկարագրական-համաժամանակյա և պատմական ուսումնասիրությունն է:

Պատմական սկզբունքի հետևողական կիրառումով, լեզվական տվյալների հսկայական ընդգրկումով ու վերլուծությունների գիտական խորությամբ այս աշխատությունը մի լուրջ ներդրում է հայերենի պատմական քերականության բնագավառում:

2. Գ ր ա բ ա ռ ի ձ ն ու ն ա ռ կ, Երևան, Ա. հրտ. 1952, Բ. հրտ. 1958: Բարձրագույն ուսումնական հաստատությունների ուսանողության համար կազմված դասագիրք է, որ պարունակում է գրաբարի հնչյունաբանությունը, քերականությունը և հատընտիր հատված-

ներ, որպես ընթերցանության նյութ: Գրքին կցված են գրաբարից—աշխարհաբար ընդարձակ բառարան և բացատրություններ ու ծանոթագրություններ, որոնց մեջ տրվում են որոշ ոճաբանական տեղեկություններ և անհրաժեշտ մեկնաբանություններ՝ հատընտիր հատվածների մեջ հանդիպող զանազան դարձվածների, բառակապակցությունների, իմաստային փոխանցումների և նման երևույթների մասին: Այս գիրքը, հատկապես գրաբարի քերականության ամբողջական և գիտական բարձր մակարդակով ներկայացված նկարագրությամբ, մեկն է գրաբարի լավագույն քերականություններից, և առանց վարանելու կարելի է դասել այնպիսի դասական աշխատության կոզբին, ինչպիսին է Չալրխյան-Այտընյանի քերականությունը:

Բացի այս գրքերից, Ա. Աբրահամյանը տպագրել է նաև բազմաթիվ հոդվածներ¹, որոնց մեջ քննության է առնում հայերենի պատմական հնչյունափոխության հետ կապված մի քանի հարցեր, ժամանակակից հայերենի բայական կրկնասեռությունը, բայական կրկնավոր բառերը, ստուգաբանում մի շարք հայերեն բառեր (արատ, աճուկ, արդար են), փոխառությունների հետ կապված բայակազմական որոշ իրողություններ և այլն, և այլն: Այս բոլորի մեջ էլ նա ցուցաբերում է հետազոտողի խորաթափանց միտք, գիտելիքների մեծ պաշար ու լեզվաբանական վերլուծությունների խոր հմտություն:

Այս բոլորը մեզ իրավունք են տալիս ասելու, որ Ա. Աբրահամյանը մեր օրերում աճած տաղանդավոր լեզվաբան-հայագետներից մեկն է: Եվ եթե վերջին տարիներում նա առանձին, մեծածավալ մենագրությամբ հանդես չի եկել, ապա դրա պատճառն այն է, որ նա զբաղված է եղել մի շատ ծավալուն նյութի՝ ժամանակակից հայերենի բայի ուսումնասիրությամբ: Այդ ուսումնասիրության առաջին հատորն արդեն մամուլի տակ է և, շնք կասկածում, որ դա էլ, նախորդների նման, մի մեծարժեք ներդրում կլինի հայերենագիտության գանձարանում:

¹ Այդ անվանումը մեզ այնքան էլ հարմար չի թվում. մեր դերբայների անվանումները հիմնված են նրանց արտահայտած վիճակային կողմի վրա: Եթե այս դեպքում նկատի է առնվում այն, որ այդ դերբայով արտահայտված գործողությունը ընթացակից է մի ուրիշ գործողության, ապա նույնը կարելի է ասել նաև -ելիս, -ալիս դերբայի մասին (հմտ. վաղելին եկավ, վաղելիս ընկավ): Երկուսի տարբերությունն այն է, որ մեկը ցույց է տալիս համաժամանակյա գործողություն, որոշելով ժամանակը (գնալիս), և ժամանակի պարագա է, մյուսը՝ հարակից գործողություն է ցույց տալիս, որոշելով վիճակը, ձևը, և ձևի պարագա է:

¹ Փաստեր հայերենի պատմական հնչյունափոխության վերաբերյալ, ԳԱՍ, 1957, № 4, ժամանակակից հայերենի բայական կրկնասեռության երևույթի շուրջը, ԳԱՍ, 1958, № 5, Բայական կրկնավոր բառերը ժամանակակից հայերենում, ԳԱՍ, 1959, № 4, Բառաբանական դիտողություններ, ԳԱՍ, 1958, № 3, Փոխառությունների հետ կապված բայակազմական մի քանի իրողություններ ժամանակակից հայերենում, ԳԱՍ, 1960 և այլն:

* * *

Մենք ներկայացրինք սովետական հայագետներին և նրանց գիտական ժառանգությունը, ընդգրկելով կրտսեր սերնդի ներկայացուցիչներից երեքին միայն. հասկանալի է, որ դրանք միայն այն առավել աչքի ընկած լեզվաբաններն են, որոնց ուսումնասիրությունները անմիջականորեն կապվում են մեր աշխատության հետ: Բայց դա չի նշանակում, իհարկե, թե մեր ռեսպուբլիկայում շկան կրտսեր սերունդի ուրիշ այնպիսի ներկայացուցիչներ, որոնք իրենց հետազոտություններով հարստացրել են հայերենագիտությունը և ճանաչվել որպես շնորհալի լեզվաբաններ: Դրանցից մի քանիսի անունները, ինչպես և նրանց աշխատությունները, հիշել ենք սույն հատորի ներածության մեջ՝ համառոտ բնութագրությամբ: Այստեղ մնում է ավելացնել, որ նրանց մեծագույն մասը աշխատում է ժամանակակից հայոց լեզվի ուսումնասիրության բնագավառում, մի մասը՝ բարբառագիտության և, ցավոք սրտի, մի երկու հոգի միայն հայոց լեզվի պատմության ու համեմատական քերականության բնագավառում: Այն մեծ հնարավորությունները, որոնք ստեղծված են մեր երկրում գիտության զարգացման համար, թույլ են տալիս սպասելու, որ այդ երիտասարդ, շնորհալի սերունդը նույնպես առաջիկա տարիներում արժեքավոր աշխատություններով կհարստացնի հայերենագիտությունը և մեծապես կնպաստի հայ լեզվաբանության հետագա զարգացմանը:

Գրքիս վերջում կուզեինք որոշ ընդհանուր հետևություններ անել և շոշափել այն հիմնական խնդիրները, որոնք, ինչպես մենք կարծում ենք, առաջիկա տարիներում հայ լեզվաբանության ուշադրության կենտրոնում պետք է լինեն, հայտնելով նաև մեր ուսումնասիրություններից բխեցրած նախնական եզրակացությունները դրանցից մի քանիսի մասին:

Մեր աշխատության մեջ մենք փորձել ենք ներկայացնել հայոց լեզվի ուսումնասիրության զարգացումը, հենվելով մի կողմից՝ ուսումնասիրությունների ընդգրկած խնդիրների, մյուս կողմից՝ տեսական ընդհանուր հիմունքների վրա: Ամփոփելով մեր աշխատության երկու հատորների շարադրանքը, հայերենագիտական ուսումնասիրությունների ընդհանուր բնույթը կարող ենք բնորոշել հետևյալ ձևով. առաջին շրջանը ներկայացնում է քերականական նկարագրական ուսումնասիրությունների փուլը, որ սաղմնավորվում է V դարի սկզբից, առանձնակի թափ ստանում Դիոնիսիոս Թրա-

կացու թարգամանությամբ ու նրա մեկնաբանություններով, ապա՝ հանգում ինքնուրույն քերականությունների ստեղծմանը: Երկրորդ շրջանը բնորոշվում է հայերենի պատմա-համեմատական ուսումնասիրությամբ ու դրա հետագա զարգացմամբ և ներկայացնում է պատմա-համեմատական լեզվաբանության դասական շրջանը: Երրորդ, սովետական շրջանը բնութագրվում է լեզվաբանական ուսումնասիրությունների պրոբլեմատիկայի անհամեմատ ընդարձակումով, տեսական հիմունքների առավել բարձր մակարդակով և վերջին տասնամյակում՝ լեզվաբանական նոր մեթոդների կիրառման փորձերով:

Ինչպես տեսել ենք, դասական շրջանի պատմա-համեմատական ուսումնասիրությունների մեջ կենտրոնական խնդիրն է եղել հայերենի ցեղակցության ու հնդեվրոպական լեզուների շարքում նրա գրաված դիրքի լուսաբանումը: Շուրջ մեկ հարյուրամյակի ընթացքում բազմաթիվ հայագետների կատարած հետազոտությունները պսակվեցին այդ խնդրի դրական լուծումով. այժմ այլևս անառարկելի է այն փաստը, որ հայերենը հնդեվրոպական լեզու է. հիմնական հատկանիշների հաշվառումով ճշգրտված է նաև հայերենի տեղը ցեղակից լեզուների շարքում: Այս բնագավառում, մեր կարծիքով, առաջիկայում աշխատանքները պետք է ընթանան երկու գլխավոր ուղղությամբ: Առաջին՝ ներքին վերականգնումների մեթոդի կիրառումով պետք է ձգտել վերականգնելու հայերենի եթե ոչ հեռավոր, գոնե մոտավոր նախավիճակը: Ելնելով մեր հետազոտությունների դեռևս ոչ լրիվ տվյալներից, կարող ենք ասել, որ այդ վերականգնումներով կարելի է հասնել մինչև մեր թ. ա. VII—VIII դարերը և ընդհանուր գծերով ներկայացնել այդ ժամանակների հայերենը: Մեր «Հայերենի հնչույթային համակարգի պատմությունից» հոդվածի մեջ (ՊԲՀ, 1960, № 2), չ և ղ-ի պատմական զարգացման մասին խոսելով, մենք հնդեվրոպական նախաշրջանից մինչև դասական գրաբարի շրջանը բաժանում ենք երկու էտապի՝ նախահայերենի էտապ և նախագրաբարյան հայերենի էտապ: Հիշյալ հնչույթների համար այդ էտապների տարբերակումը բավարարում է առաջադրված խնդրի լուծմանը. սակայն, ինչպես ցույց են տալիս մեր տվյալները, հայերենի ամբողջ կառուցվածքի պատմության համար այդպիսի շրջանաբաժանումը չի կարող բավարար համարվել: Մեր ուսումնասիրություններից ելնելով, մենք առայժմ հնարավոր ենք համարում հետևյալ շրջանաբաժանումը՝ մեր թ. IV դարից դեպի չեռ գնալով, ա) IV դարից մինչև I—II դարեր մեր

թ. ա., բ) II դարից մինչև VII—VIII դարեր մեր թ. ա. և գ) մեր թ. ա. VIII դարից այն կողմը: Այս շրջաններից առաջին երկուսը հիմնական գծերով, գոնե մոտավորապես, հնարավոր է դառնում վերականգնել. նախորդող շրջանը (ավելի քան երկու և կես հազարամյակ), եթե ոչ ավելին) անհայտ է մնում. դրանով էլ բացատրվում է այն, որ այդ ամբողջ ժամանակաշրջանն ստիպված ենք դիտել որպես մեկ էտապ, թեև, իհարկե, դա չի կարող ձիշտ լինել: Վեր հանելով առայժմ առաջին երկու էտապների հիմնական հատկանիշները, պետք է հիմք պատրաստել դեպի ավելի հին ժամանակները գնալու համար:

Երկրորդ ուղղությունը այս բնագավառում պետք է տանի դեպի հայերենի ու Հայաստանի, ինչպես և նրան հարող վայրերի, հին մեռած լեզուների միջև եղած կապերի առավել բազմակողմանի լուսաբանությունը: Այս բնագավառում կատարված հետազոտությունները, որոնց մեջ առանձնապես կարևոր տեղ են գրավում Գ. Ղափանցյանի ուսումնասիրությունները, դեռևս առաջին քայլերն են: Չկաշկանդվելով որևէ կանխակալ կարծիքով, որ ցավոք սրտի, բնորոշ է, դարձյալ, առանձնապես Գ. Ղափանցյանի հետազոտություններին, անհրաժեշտ է ավելի խորացնել այդ ուղղությամբ կատարվող ուսումնասիրությունները. այս տեսակետից, անպայմանորեն, նոր էտապ են նշանավորում պրոֆ. Գ. Զահուկյանի վերջին երկու աշխատությունները հայասերենի և ուրարտերենի վերաբերյալ: Մասնագիտորեն զբաղված չլինելով այդ լեզուներով, մենք առայժմ ձեռնպահ ենք մնում նրա հայտնած տեսակետների մասին վճռական կարծիք հայտնելուց և բավականանում ենք կրկին անգամ նշելով, որ նրա մեթոդաբանական ուղղությունը ձիշտ է: Եթե իրավ է, որ հայասերենը ցեղակցական հարաբերությունների մեջ է մի կողմից՝ հայերենի, մյուս կողմից՝ խեթերենի հետ, ապա այդ հարաբերությունները պետք է գոյություն ունենան նաև մյուս հընդ-եվրոպական լեզուների հետ, թեկուզ և հեռավոր կերպով: Հակառակ պարագայում, այսինքն՝ եթե հայասերենի ու հնդեվրոպական լեզուների ցեղակցական կապերը չեն հաստատվում, ապա պետք է բացառել նաև նրա ու հայերենի ցեղակցությունը, և այդ դեպքում հայասերենի հարաբերությունը հայերենի հետ դիտել որպես ենթաշերտային (սուբստրատային) հարաբերություն: Ինչ վերաբերում է ուրարտերենին, ապա պրոֆ. Գ. Զահուկյանի կարծիքը հավանական ենք գտնում. թվում է, թե հայերենի մինչդրաբարյան շրջանի վերը հիշված բ էտապի վերականգնումը հնարավորություն կտա ավելի

վճռական խոսք ասելու այդ մասին: Առայժմ, պատմական տվյալների ուսումնասիրության հիման վրա մենք հանդգնում ենք հետևյալ կարծիքը հայտնելու: Ուրարտերենը մինչև այժմ անվերապահորեն տեղական-կովկասյան լեզու է համարվել, իսկ ուրարտացիներն էլ՝ Հայաստանի նախաբնիկներ. վերջին ժամանակներում որոշ գիտնականներ ուրարտական ցեղերը համարում են եկվոր, բերելով նրանց միջազետքից: Մենք կարծում ենք հակառակը: Ամենից առաջ, մեզ ավանդված Ուրարտուն (Uruatri, Uratri) արձանագրությունների մեջ հանդես է գալիս որպես երկրի կամ էլ պետության անուն. Սալմանասար I-ի (—1266—1243) արձանագրության մեջ, որտեղ առաջին անգամ է հիշվում Ուրարտուի մասին, այդպես կոչվում է Կադմուխի երկրի հետ իր դեմ ապստամբած լեռնոտ երկիրը: Այս լեռնոտ երկրում է, որ բարձրանում է ուրարտական պետությունը, որի անկումով էլ պատմական ասպարեզից չբանում են ուրարտացիները՝ VI դարի սկզբներին, և նրանց անունը այլևս չի հիշվում: Այդպիսի մի հզոր ցեղային միություն կամ ցեղախմբի վերացումն ընդամենը մեկ-երկու հարյուրամյակում, նրանց իսպառ թնաջնջումն ու ձուլումը, մեզ անհավանական է թվում: Մենք կարծում ենք, որ մեզ հայտնի ուրարտացիները, որոնք ստեղծեցին XIII—VI դարերի պետությունը, դեռ շատ վաղուց այդ երկրում հաստատված հնդեվրոպական ցեղեր են եղել: Երկիրը կոչվել է այդտեղի նախաբնիկ ցեղերի անունով, որոնք եկվորների ճնշման ներքո գաղթել են դեպի միջազետք, որի հյուսիսում հիմնել են Սը-ը (Uru) և Eridu-ն: Ոմանք, ինչպես ասացինք, կարծում են, թե հենց այդտեղից են ներգաղթել մեզ հայտնի ուրարտացիները պատմական Ուրարտու. բայց հնագիտական ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ Ուր-ի ժողովուրդը ոչ մի տեղ էլ չի գաղթել, այլ ոչնչացել է շրհեղեղի հետևանքով: Հնագիտական տվյալների վրա հենվելով, Լ. Վուլլին գտնում է, որ Ուր-ի բնակիչները եկել են արևելքից. առանձնապես կարևոր են հետևյալ փաստերը. Ուր-ի բնակիչները եղել են հողագործներ, ունեցել են զարգացած բրուտագործություն: Գանգի կառուցվածքով ներկայացնում են այսպես կոչված մարդու «կովկասյան տիպը». նրանք եկել են լեռնոտ, բարձրադիր երկրից. «Այս բոլորը թույլ են տալիս ենթադրելու, որ էլ-Օբեյդի ցեղերը Եփրատի հովիտն են եկել արևելքից, այսինքն՝ լեռնոտ երկրից: Ինչպես և բոլոր լեռնցիների մոտ, սրբավայրի պատկերացումը նրանց մոտ, բնականաբար, պետք է կապվեր որևէ բարձրադիր տեղի հետ: Տեղափոխվելով Միջին Մեսոպոտա-

միա, երեկվա լեռնցիները հայտնվեցին հարթավայրում, որտեղ նույնիսկ բլուր չկա, որի վրա կարելի լիներ աստվածներին աղոթել: Եվ այն ժամանակ նրանք արհեստական կերպով լրացրին բնության այդ պակասը»¹: Թվում է, թե նախաբնիկ ուրարտացիներն են այդ ներգաղթողները, իսկ մեզ հայտնի ուրարտացիները՝ ներգաղթած ցեղեր, որոնց ճնշման տակ բնիկները հեռացել են իրենց երկրից: Հասկանալի է, որ նախաբնիկ ցեղերի մի մասը կարող է մնացած լինել տեղում և ձուլված՝ եկվորներին: Մեր այս կարծիքն առայժմ ստույգ գիտական հիպոթեզի արժեք ունի, իհարկե, բայց այդ ուղղությամբ տարվող ուսումնասիրությունները կարող են շատ բան ասել:

Հայոց լեզվի պատմության բնագավառում, ինչպես տեսել ենք, մեծ աշխատանք է կատարվել: Եվ, շնայած դրան, առայժմ որոշ չափով ամբողջական պատկերացում ունենք իրարից որոշակիորեն տարբերվող երեք շրջանների մասին (գրաբար, միջին հայերեն, աշխարհաբար) և այն էլ, գլխավորապես, գրական լեզուների վերաբերյալ: Այստեղ անհրաժեշտ է մանրակրկիտ հետազոտություններով լուսաբանել անցման էտապները, մի կողմից, և ավելի շատ զբաղվել կենդանի խոսակցական լեզվի տվյալների ուսումնասիրությամբ, մյուս կողմից:

Հայոց լեզվի պատմության հետ սերտորեն առնչվում է հայերեն բարբառների պատմա-համեմատական ուսումնասիրությունը: Բարբառների նկարագրության այժմյան վիճակն արդեն հնարավորություն է տալիս այդ կարգի առավել ամբողջական ուսումնասիրությունների համար: Այստեղ, մեր հետազոտություններից ելնելով, գտնում ենք, որ պետք է հիմնել հետևյալ հիմնական դրույթներին. ա) այսպես կոչված Ս և Ն ճյուղերը ներկայացնում են մեկ ճյուղ. բ) Ում և Սլ (ըստ Աճառյանի անվանման) ճյուղերի տարբերակումը համեմատաբար նոր երևույթ է. գ) Բոլոր հիմքերը կան ընդունելու, որ X—XII դարերում Կը և Ում ճյուղերն էլ դեռևս որոշակիորեն չէին տարբերակվել, կամ ավելի ճիշտ, դեռևս չէին տեղաշարժվել. դ) Արդի բարբառների մեջ պահպանված տվյալները հիմք են տալիս ենթադրելու, որ հնագույն շրջանում եղել են բարբառներ, որոնք մահացել են հայ էթնիկական լեզվի կազմավորման պրոցեսում:

Ժամանակակից հայոց լեզվի ուսումնասիրության բնագավառում

ուում, մեր կարծիքով, պետք է զբաղվել աշխարհաբարի, կազմավորման վաղ շրջանի հետազոտությամբ, առանձին ուշադրության առարկա դարձնելով Անիի լեզուն և, առահասարակ, XIV—XV դարերի «արևելահայ հատվածի» ընդհանուր խոսակցական լեզվի հարցը: Մեր լեզվի նկարագրական-համաժամանակյա ուսումնասիրության բնագավառում անհրաժեշտ է զարգացնել նորագույն մեթոդների վրա հիմնված հետազոտությունները. այդ ասպարեզում, ցավոք սրտի, հայերենագիտությունը բավականաչափ հետ է մնացել: Անհետաձգելի խնդիր է փորձառական հնչյունաբանության ու հնչյութաբանության զարգացումը, որ անհրաժեշտ է ինչպես համաժամանակյա, այնպես էլ պատմական ուսումնասիրությունների բարձր, արդիական մակարդակն ապահովելու համար: Պետք է նկատի ունենալ, որ միայն դրանց հիման վրա հնարավոր կլինի ստեղծել ժամանակակից հայերենի իսկապես գիտական քերականությունը, որ մեր լեզվաբանության կարևորագույն խնդիրներից մեկն է:

Առհասարակ, լեզվաբանական նոր ուղղություններն ու նոր ճյուղերը աններելի կերպով դանդաղ են մուտք գործում սովետական հայերենագիտության մեջ: Այդ վիճակը պետք է արմատապես փոխել:

Բառարանագրության բնագավառում առաջնահերթ խնդիր է ժամանակակից հայոց լեզվի ընդարձակ ու համառոտ բառարանների կազմումը, ուս-հայերեն և հայ-ռուսերեն միահատոր ընդարձակ բառարանների, ինչպես և օտար լեզուներից հայերեն երկլեզվյան բառարանների հրատարակությունը:

Սրանք են, ահա, մեր կարծիքով, սովետահայ լեզվաբանության այժմյան էտապի ամենահիմնական խնդիրները:

¹ Л. Вулла, Ур Халдеев, М., 1961, էջ 132:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Երկու խումբ	5
1. Ազգարանությունը Սովետական Միությունում	9
2. Հայ լեզվարանությունը Սովետական Միությունում	51
Ստեփան Սարգսի Մալխասյանց	69
Իփիղայոս Յակովլևիչ Մառ	85
Մանուկ Խաչատուրի Աբելյան	132
Հրաչյա Հակոբի Աճառյան	153
Գրիգոր Այվազի Ղափանցյան	196
Հովսեփ Կարապետի Կուսիկյան	248
Արարատ Սահակի Ղարիբջան	263
Իուրգեն Գրիգորի Սևակ	322
Իերոն Դազարի Դազարյան	354
Իևորգ Բեգլարի Զահեդկյան	363
Աշոտ Արսենի Աբրահամյան	376
Համառոտագրություններ	386

ՀԱՄԱՌՈՏԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- Արրտ.— Արարատ:
- ԳԱՏ.— ՀՍՍՌ Գիտությունների տեղեկագրի «Տեղեկագիր» (հասարակական գիտությունների սերիա):
- ԳԱՐԻՏ — ՀՍՍՌ Գիտության և արվեստի ինստիտուտի տեղեկագիր:
- ԳԹ — Գրական թերթ:
- ԵՊՀԳԱ — Երևանի Պետական համալսարանի գիտական աշխատություններ:
- ԵՊՀԳՏ — Երևանի Պետական համալսարանի գիտական տեղեկագիր:
- ԼԻԱԺ — ՀՍՍՌ ԳԱ Լեզվի ինստիտուտի աշխատությունների ժողովածու:
- ՄԼԻՏ — Մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտի տեղեկագիր:
- ՊՔՀ — Պատմա-բանասիրական հանդես:
- ՍՀ — Սովետական Հայաստան:
- ВДИ — Вестник древней истории.
- ВЦКНА — Всесоюзный центральный комитет научного алфавита прѣ
- ЦИК СССР.
- ВЯ — Вопросы языкознания.
- ДСИЯАН — Доклады и сообщения Института языкознания АН СССР.
- ЗВО — Записки Восточного отделения Имп. Русского Археологического общества.
- ИАН — Известия АН СССР.
- ИЖ — Исторический журнал.
- КН и П. Р. — Книга и пролетарская революция.
- ПВМЯ — Сборник «Против вульгаризации марксизма в языкознании».
- ПИДО — Проблемы истории докапиталистического общества.
- ПН — Просвещение национальностей.
- MSL — Mémoire de la Société de Linguistique de Paris.
- NTS — Norsk Tidsskrift for Sprogvidenskap.

Տպագրվում է
 Երևանի Պետական համալսարանի
 Խմբագրական-հրատարակչական խումբի որոշմամբ

ԷԳՈՒԱՐԴ ԲԱԳՐԱՏԻ ԱՂԱՅԱՆ
 ՀԱՅ ԼԵԶՎԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

(Սկզբից մինչև մեր օրերը)

Հատոր 2

Հրատ. խմբագիր՝ Արտ. Հ. Պապոյան
 Տեխն. խմբագիր՝ Հ. Ա. Հովասափյան
 Վերստուգող սրբագրիչ՝ Հ. Ա. Վարդանյան

ՆԱԿԱՏՎԱԾ ՎՐԻՊԱԿՆԵՐ

Էջ	Տող	Տպված է	Պետք է լինի
90	ն. 2	Invitation	Invitation
94	վ. 14	զյուրթն	դյուրթն
126	ն. 3	Հայերեն,	Հայերեն և
186	ն. 3	օճամբայ»	«ճամբայ»
308	վ. 15	Շաղախ	Շաղախ
307	ն. 5	չա՞	չա՞
317	վ. 4	(բ, բ, փ)	(բ', բ, փ)

ՎՅ 07078

Պատվեր 285

Տիրած 1000

Հանձնված է արտադրության 21.II 1962 թ.:
 Ստորագրված է տպագրության՝ 3.IX 1962 թ.: Թուղթ՝ 60×92¹/₁₆:
 Տպագր. 24,25 մամ., հրատ. 20,5 մամ.:
 Գինը՝ 1 ս. 63 կ.:

ՀՍՍՌ Կուլտուրայի մինիստրության Հրատարակչությունների և
 պոլիգրաֆարդյունաբերության Գլխավոր վարչության
 Գոլիգրաֆկոմբինատ, Երևան, Տերյան 91: